ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԱՔՈՂԱՔԱՎԱՆԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՐՔ 2

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – 2

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(XVIII դ. երկրորդ կես - 1980-ական թթ.)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 39(=19)
ԳՄԴ 63.5(5Հ)
Ն 251

Հրատարակվում է ԵՊՀ պատմության
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ **ՍՈՒՐԵՆ ՀՈՒՐՈՍՅԱՆ**
պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավանդական ազգաբանության բաժնի վարիչ

Գրախոսներ՝ **ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ**
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի կրոնի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ գիտաշխատող

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
պատմագիտության դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ն 251 Ազգաբանական ուսումնասիրություններ – 2: Հայ ազգագրության պատմություն (XVIII դ. երկրորդ կես - 1980-ական թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2019, 404 էջ:

Գրքում լուսաբանվում են հայ ազգագրական գիտության ձևավորման և կայացման հիմնական փուլերը: Ներկայացվում են ա) XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի 50-60-ական թթ. հայ ազգագրական գիտության ակունքներում Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի, Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի՝ որպես ազգագրական նյութերի բանահավաքչության նախաձեռնողների գործունեությունը, բ) ազգագրական գիտության կայացման երկրորդ փուլում՝ 1870-1880-ական թթ., մասնագիտական ծրագիր-հարցարաններ հիմնողներ Գ. Սրվանձտյանցի, Գ. Խալաթյանցի գործունեությունը, գ) հայ ազգագրական գիտության կայացման ավարտական փուլում՝ 1890-ական թթ. - XX դարասկզբին, Ե. Լալայանի, Ս. Լիսիցյանի, Խ. Սամուելյանի և այլոց գործունեությունը, «Ազգագրական հանդեսի» և «Էմինյան ազգագրական ժողովածուի» դերն ու նշանակությունը, դ) խորհրդային շրջանի (1920-1980-ական թթ.) ազգագրագետների և ազգագրական հաստատությունների ներդրումը ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում:

Սույն գիրքը կարող է օգտակար լինել բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների, ազգագրագետների, հայոց պատմության ու մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների համար:

ՀՏԴ 39(=19)
ԳՄԴ 63.5(5Հ)

ISBN 978-5-8084-2414-2

© ԵՊՀ հրատ., 2019
© Նահապետյան Ռ. Ա., 2019

ԱՌԱՋԱԲԱՆ

Անցյալ հարյուրամյակի մի շարք անվանի ազգագրագետներ՝ Վ. Բդոյանը, Դ. Վարդումյանը, Է. Կարապետյանը, Կ. Մելիք-Փաշայանը, Ա. Օդաբաշյանը հրատարակել են Ե. Լալայանի, Խ. Սամուելյանի, Ս. Լիսիցյանի, խորհրդահայ ազգագրական գիտության այս կամ այն պարբերաշրջանի վերաբերյալ ուշագրավ հոդվածներ: Սակայն նրանց ուսումնասիրությունները ակնարկային բնութագրություններ են միայն, բացի այդ՝ բազմաթիվ անվանի ազգագրագետների ու ազգագրական հաստատությունների գործունեության վերաբերյալ մինչև օրս համալիր հետազոտություններ չեն կատարվել:

Սույն գրքում զետեղված են հիմնականում XVIII դարի երկրորդ կեսից մինչև XX դարի վերջերի հայ ազգագրության պատմության երախտավորների գործունեության վերաբերյալ մեր կողմից հրատարակված ուսումնասիրությունները: Ըստ այդ ուսումնասիրությունների՝ հայ ազգագրությունը՝ որպես հայագիտության ուրույն ոլորտ, ձևավորվել է XVIII դարի երկրորդ կեսից ընդհուպ XX դարասկիզբը՝ ներառելով հետևյալ պարբերաշրջանները՝ 1) XVIII դարի երկրորդ կես - 1850-1860-ական թթ.՝ սեփական նախաձեռնությամբ, առանց համալիր ծրագիր-հարցարանների դաշտային ազգագրական բանահավաքչական նյութերի գրառման սկզբնավորման փուլ (Մ. Թաղիադյան, Խ. Աբովյան, Ղ. Ինճիճյան, Մ. Բժշկյան և այլք), 2) 1870-1880-ական թթ.՝ մասնագիտական ծրագիր-հարցարանների ստեղծման, ազգագրությունը տարերայնությունից գիտական հիմքերի վրա դնելու փուլ (Գ. Սրվանձտյանց, Գ. Խալաթյանց և նրանց հետևորդներ Ղ. Ալիշան, Խրիմյան Հայրիկ և ուրիշներ), 3) 1890-ական թթ. մինչև XX դարի սկզբները՝ հայ ազգագրության՝ իբրև գիտական ուրույն ոլորտի կայացման ավարտական փուլ (Ե. Լալայան, Խ. Սամուելյան, Ս. Լիսիցյան, Վարդան Հացունի և ուրիշներ): Գրքում առանձին բաժնով ներկայացվում է նաև հայ ազգագրական գիտության խորհրդային շրջանի ազգագրագետների և գիտակազմակերպչա-

կան, ցուցադրական և ուսումնական հաստատությունների, գործունեությունը՝ երկու շրջափուլով.

ա) 1920-1940-ական թթ., երբ տակավին գործում էին դեռևս նախահեղափոխական շրջանից հայտնի բազմավաստակ ազգագրագետներ և բանագետներ (Ե. Լալայան, Խ. Սամուելյան, Ս. Լիսիցյան, Մ. Աբեղյան, Հ. Օրբելի և այլք):

բ) 1950-1980-ական թթ., երբ ասպարեզ եկավ ազգագրագետների նոր սերունդ (Վ. Բդոյան, Դ. Վարդումյան, Է. Կարապետյան, Ա. Օդաբաշյան, Կ. Մելիք-Փաշայան, Յու. Մկրտումյան, Կ. Սեղբոսյան, Լ. Պետրոսյան, Զ. Խառատյան, Ս. Հարությունյան և ուրիշներ), որոնք ծավալեցին ազգագրական նյութերի բանահավաքչական և հետազոտական լայն գործունեություն, հիմնվեցին գիտահետազոտական, թանգարանային, ուսումնագիտական հաստատություններ:

Կարծում ենք՝ սույն գիրքը կարող է օգտակար լինել ինչպես հայ ազգագրությամբ, այնպես էլ պատմագիտությամբ ու մշակութաբանությամբ մասնագիտացող բակալավր ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնության համար: Հեղինակը սիրով հաշվի կառնի ընթերցողների նկատառումները, դիտողություններն ու առաջարկները:

Ռաֆիկ Նահապետյան
պատմագիտության դոկտոր,
ԵՊՀ հնագիտության և ազգագրության
ամբիոնի պրոֆեսոր

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) XVIII դարի երկրորդ կես - 1850-1860-ական թթ.՝ սեփական նախաձեռնությամբ, առանց համալիր ծրագիր-հարցարանների դաշտային ազգագրական նյութեր գրառելու,

բ) 1870-1880-ական թթ.՝ մասնագիտական ծրագիր հարցարանների հանդես գալու, ազգագրությունը սիրողականից գիտական հիմքերի վրա դնելու պարբերաշրջան (Գ. Սրվանձտյանց, Գ. Խալաթյանց և նրանց հետևորդները),

գ) 1890-ական թթ. մինչև XX դարի սկզբները՝ հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտական ոլորտի վերջնական կայացման շրջափուլեր

1. ՀԱՅ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Ազգաբանությունը որպես գիտություն Հայաստանում վերջնական տեսք ստացավ XIX դարի 80-90-ական թվականներին - XX դարի սկզբներին: Սակայն Հայաստանին ու հայերին վերաբերող ազգաբանական վկայությունները գալիս են խոր հնադարից և սփռված են տարածության ու ժամանակի մեջ: Ազգաբանությունը զգալի նյութեր է քաղում հնագիտությունից (Ք. ա. IX հազարամյակից մինչև միջնադարի վերջը), օտար և հայրենի գրավոր աղբյուրներից (Ք. ա. VI դարից մինչև XVIII դարի վերջերը):

Հնագիտական նյութերը լրացնում և ճշտում են հնագույն գրավոր տվյալները: Հայ ազգագրության հին շրջանի պատմության համար անչափ ուշագրավ են նաև սեպագրական շրջանի՝ շումերաակկադական, խեթական, ասորեստանյան, ուրարտական, հին պարսկական սկզբնաղբյուրները և Հայաստանի տարածքում գտնված Ք. ա. IV - մ. թ. III դարերի օտարալեզու արձանագրությունները: Զափազանց մեծ նշանակություն ունեն հին, անտիկ աշխարհի պատմագիրների և աշխարհագիրների տարերայնորեն գրի առնված ազգաբանական նյութերը: Արժեքավոր տեղեկություններ են հաղորդել Հերոդոտոսը, Քսենոփոնը, Ստրաբոնը, Տակիտոսը, Պրոկոպիոս Կեսարացին և ուրիշներ[1]: Խոստովանենք, որ Քսենոփոնի աշխատություններում նկարագրված ազգագրական թեմաները մինչև միջնադարի վերջը մնացին իբրև եզակի հաղորդումներ:

Տարերային բանահավաքներ կարելի է համարել նաև հայոց միջնադարյան պատմագիրներին, որոնց պատմագրական ուսումնասիրություններում մեծ քանակությամբ ազգագրական նյութ է կուտակված: Նրանք են՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Եղնիկ Կողբացին, Հովհան Մամիկոնյանը, Հովհան Մանդակունին, Թովմա Արծրունին, Արիստակես Լաստիվերցին, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Առաքել Դավրիժեցին, Զաքարիա Քանաքեռցին և ուրիշներ:

---

[1] Մանրամասն տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Հայ ազգագրության պատմություն, մաս 1. Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին, Երևան, 2010:

Առանձնապես ուշագրավ են միջնադարյան Հայաստանի ներքին կյանքին ու կենցաղին վերաբերող ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ, հայոց հին հավատալիքների ու աշխարհայեցողության հետաքրքիր տվյալները Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունն» և Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գրքերում: Մովսես Խորենացուն կարելի է համարել հայ առաջին բանահավաքն ու բանագետը: Իր «Հայոց պատմության» մեջ քերթողահայրը վերապատմել կամ բառացիորեն մեջբերել է հայոց հին առասպելներն ու վիպական զրույցները և մեկնաբանել դրանք:

Հայ մատենագրության մեջ կուտակված են նաև Հայաստանի հարևան ու այլ երկրների ժողովուրդների կենցաղի մասին արժեքավոր տեղեկություններ, որոնք նշանակալից նպաստ են բերում արևելագիտությանը (Հեթում պատմիչ, Կիրակոս Գանձակեցի, Աբրահամ Կրետացի և ուրիշներ): Ազգագրական նյութեր ենք գտնում նաև թարգմանական գրականության մեջ («Աստվածաշունչ», «Վաստակոց գիրք» և այլն), ուր թեև հայկական նյութեր չկան, սակայն ժամանակի հայկական կենցաղին ու մշակույթին քաջատեղյակ թարգմանիչները կատարել են վկայակոչումներ և անցկացրել զուգահեռներ: Հայոց միջնադարյան ազգագրության մասին այս կամ այն չափով տեղեկություններ ենք գտնում իրավական, կանոնական[2] ու փիլիսոփայական գրականության մեջ (Հովհան Օձնեցի, Մխիթար Գոշ, Սմբատ Գունդստաբլ, Գրիգոր Տաթևացի), միջնադարյան արվեստում (մանրանկարչություն, քանդակագործություն), վիմագիր արձանագրություններում և այլ սկզբնաղբյուրներում: Ժողովրդական բանահյուսությունը մեծ չափով ներթափանցում է միջնադարյան տաղերգուների և աոակագիրների ստեղծագործություններ (Ֆրիկ, Կոստանտին Երզնկացի, Հովհաննես Թլկուրանցի, Գրիգորիս Աղթամարցի, Մկրտիչ Նաղաշ, Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի և ուրիշներ):

Եթե ազգագրական ցիրուցան նյութերի այս գրառումները չլինեին, ապա այժմ խիստ դժվար կլիներ ամբողջական գաղափար կազմել միջին դարերի հայկական կենցաղի ու մշակույթի մասին: Ազգագրագետի խնդիրն է ի մի բերել դրանք, համադրել և հնարավորինս ամբողջացնել:

---

[2] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Ընտանեկան իրավունքը ըստ վաղմիջնադարյան եկեղեցական կանոնական և աշխարհիկ աղբյուրների // Գիտական հոդվածների ժողովածու (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ), Երևան, 1910, էջ 34-42:

Միջնադարյան հայ ազգագրությանը վերաբերող նյութեր ու տեղեկություններ կարելի է գտնել արաբական[3], եվրոպական և ռուսական ճանապարհորդների ուղեգրություններում ու նոթերում: Նրանք (Ուիլյամ Ռուբրուք, Մարկո Պոլո, Ռոյ Գոնցալեց, Դի Կլավիխո և ուրիշներ) տնտեսական ու քաղաքական նպատակներով Արևելքի երկրներն այցելելիս անցել են նաև Հայաստանով:

XVIII դարի վերջին և հատկապես XIX դարի սկզբներին Եվրոպայում ու Ռուսաստանում նշանակալից տեղաշարժեր են կատարվում, որոնք կապված էին բուրժուական հարաբերությունների առաջացման և ազգային ինքնագիտակցության աշխուժացման հետ, մի հանգամանք, որը խոշոր ազդակ էր ազգագրական ու բանահյուսական նյութերի նոր արժևորման համար[4]:

Հայ ազգագրության երախտավորներից մեկի՝ Դերենիկ Վարդումյանի համոզմամբ ազգագրությունը՝ որպես գիտության ուրույն ճյուղ, ձևավորվել է XVIII դարի երկրորդ կեսից ընդհուպ XX դարասկիզբը: Ըստ նրա՝ այս պարբերաշրջանը կարելի է բաժանել երեք շրջափուլի՝ ա) XVIII դարի երկրորդ կեսից մինչև 1850-1860 թթ.՝ նյութերի առավել արդյունավետ դրանցման, բ) 1870-1880-ական թթ.՝ նաև մասնագիտական հարցարանների հանդես գալու, գ) 1890-ականներից մինչև XX դարի սկզբները՝ որպես հայագիտության ուրույն բնագավառ կազմավորվելու և զարգանալու փուլեր[5]:

XIX դարի սկզբին եվրոպական գիտական միտքը հայկական միջավայր թափանցեց Եվրոպայում կրթություն ստացած հայորդիների միջոցով: Նշանակալից դեր խաղացին հայկական գաղթօջախները Եվրոպայում, որտեղ եվրոպական կրթություն ստացան

---

[3] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Արաբ մատենագիրների ազգագրական վկայությունները հայերի մասին (Թ-ԺԴ դդ.) // «Էջմիածին», 2009 Է, էջ 65-78:

[4] Մինչև XIX դարը տարերայնորեն գրառված բանահավաքչական նյութերը խոշոր ներդրում էին ազգագրության մեջ: Այդ նյութերի հիման վրա բացահայտվեցին գիտության համար անհայտ ցեղեր ու ժողովուրդներ և նկարագրվեցին նրանց կենցաղն ու մշակույթը: Բացասականն այդ ժողովուրդներին գաղութացնելն էր, նրանց տարածքային մշակույթների բնական զարգացումը խաթարելը կամ կասեցնելը: Այս տեսանկյունից նշանակալից էր Եվրոպան՝ իր ճանապարհորդներով ու միսիոներներով:

[5] Տե՛ս ***Վարդումյան Դ.,*** Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերի ընդհանուր բնութագրումը (XIX-XX դդ.) // ՊԲՀ, 2004, թիվ 2, էջ 48-64, նույնի՝ Հայ ազգագրության պատմության հակիրճ ուրվագիծ // «Հարք» (հայագիտական հանդես), Երևան, 2006, թիվ 1, էջ 4-5:

բազմաթիվ հայ գիտնականներ: Այդպիսին էր առանձնապես Վենետիկին մերձ Ս. Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանությունը: Այստեղ գիտական ազգագրությամբ առաջին զբաղվողը ականավոր հայագետ Ղուկաս Ինճիճյանն էր (1758-1833), որ XIX դարի սկզբին հրատարակած «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» ծավալուն աշխատությամբ ի մի բերեց մատենագրության մեջ հաստատագրված ազգագրական տվյալները, որոնք խմբավորվել են ըստ թեմաների: «Զինուորութիւն Հայաստանեայց» խորագրի տակ ներկայացրել է հայոց միջնադարի ռազմական մարտավարության պատկերը՝ զինվորների զգեստները, պաշտպանական զենքերի տեսակները, ամրոցները, պարսպաքանդ սարքերը, վրանները, ազդարարիչ եղջերափողերը, իսկ «Սովորութիւն Հայաստանեայց» բաժնում՝ արքունական կենցաղը, մասնավորապես թագավորների պաշտոնական տարազը, թագադրման արարողակարգը, պալատականների սովորույթները: Հատվածաբար տրված են միջնադարի հայոց ամուսնական սովորույթները, բարքերը, պետական, նախարարական իրավական նորմերը, հուղարկավորման ծեսերը: Ղ. Ինճիճյանն անդրադարձել է նաև զբաղմունքներին, ճարտարապետությանն ու երաժշտությանը, հեթանոսության ու քրիստոնեության հետ կապված հարցերին, հոգևորականների նիստուկացին, հագուկապին, ծիսական արարողակարգին:

XIX դարասկզբին գրական-բանասիրական ասպարեզ իջավ Մեսրոպ Թաղիադյանը (1803-1858) իր «Ճանապարհորդություն ի Հայս» և շարք այլ գործերով[6]: «Ճանապարհորդություն ի Հայս» գիրքը նշանակալից երևույթ էր հայ իրականության մեջ ոչ միայն որպես գրական գործ, այլև իբրև մի ուշագրավ աղբյուր ազգագրական տեսանկյունից:

Մ. Թաղիադյանն իր գործերով ուղի հարթեց հետագայում իրեն հաջորդող գրողների համար, մասնավորապես նշանավոր երկու ազգագրագետների՝ Խ. Աբովյանի և Մ. Բժշկյանի համար: Վերջիններս նշանակալի դեր խաղացին ազգագրական գիտությունը հունի մեջ դնելու, տարերքից դեպի գիտության ուղին մղելու տեսակետից:

Մինաս Բժշկյանը (1777-1851) առաջին ու խանդավառ հայ բանահավաքն էր, որ մեծ քանակությամբ նյութ է գրի առել XIX դարասկզբին: Ազգագրական լուրջ նշանակություն ունեցող նրա

[6] Տե՛ս Ճանապարհորդութիւն Մեսրովբա Դ. Թաղիադեանց վ. ա. սարկավագի սրբոյ Էջմիածնի ի Հայս, հ. առաջին, ի Կալկաթա, 1847:

գործերը երկուսն են՝ «Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով...» (Վենետիկ, 1819) և «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան...» (Վենետիկ, 1830): Ազգագրական նյութեր գրի առնելու նպատակով 1817-1819 թթ. նա ճանապարհորդել է Սև ծովի ափերով և տեղական ու Կովկասյան լեռներում ապրող ժողովուրդների՝ հայերի, հույների, թուրքերի, մեգրելների, վրացիների, աբխազների, աբազների, Դոնի կազակների, լազերի, աջարների, չերքեզների, օսերի, ինգուշների և այլոց վերաբերյալ գրի առել ինչպես քաղաքական կացության, այնպես էլ աշխարհագրական, պատմական, հնագիտական, ճարտարապետական և հատկապես ազգագրական տեղեկություններ, որոնց մեծ մասի հետ նա՝ իբրև բնիկ տրապիզոնցի, անձամբ ծանոթ է եղել[7]:

Հայաստանից Լեհաստան կատարած Մ. Բժշկյանի ուղևորության արդյունքը «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան...» աշխատությունն էր: Ճանապարհորդության ընթացքում նա եղել է Լեհաստանի, Բեսարաբիայի, Հունգարիայի, Բուլղարիայի, Ղրիմի և հայաբնակ այլ վայրերի քաղաքներում ու գյուղերում, ուր գրի է առել նաև հայերի ամուսնության ձևերի, ժառանգության կտակման կարգի, կրոնական համոզմունքների, արհեստների ու արհեստավորական միությունների, ժողովրդական տոների, զբաղմունքների, նյութական մշակույթի մասին տեղեկություններ, որոնք թեև մանրամասն և հանգամանալից չեն ներկայացված, բայց արժեքավոր են ու բացառիկ:

1815 թ. Վենետիկում հրատարակված «Ճեմարան գիտելեաց» ծավալուն դասագիրք-աշխատությունում շարադրված են հունահռոմեական դիցաբանությունը, ժողովուրդների ռասայական կապն ու քաղաքակրթական աստիճանները: 1818 թ. հրատարակված «Հմտություն մանկանց» աշխարհաբար գրված քառահատոր աշխատությունը յուրատեսակ ընդհանուր ազգագրության համառոտ ժողովածու է: Այստեղ ներկայացված են չինացիների, հնդիկների, հարավամերիկյան բնիկների, ճապոնացիների, նորզելանդացիների, աֆրիկացիների, արաբների, թուրքերի, պարսիկների, վրացիների և այլ ժողովուրդների կենցաղամշակութային սովորություններն ու կրոնական համոզմունքները:

---

[7] ***Բժշկյանի Մ.,*** «Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով...» աշխատության մեջ պահպանված բացառիկ արժեքավոր տեղեկությունները Լ. Մելիքսեթ-Բեկը քաղվածաբար թարգմանել և տպագրել է «Советская этнография» ամսագրի 1950 թ. № 2-ում:

Ուշագրավ է, որ Մ. Բժշկյանն իր հավաքած ազգագրական տվյալները և այլոց գրքերից մեջբերված տեղեկությունները ներկայացրել, ուսուցանել է հայ աշակերտությանը, որով ընդհանուր տեղեկություններ էին հաղորդվում աշխարհի ժողովուրդների մասին ազգագրական տեսնակյունից:

Արևելյան Հայաստանում Մ. Բժշկյանին զուգընթաց գործում էր մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը: Նրա երկերը և նպատակային ազգագրական հոդվածները մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Ինչպես Մ. Բժշկյանը, Խ. Աբովյանն էլ նպատակամիտված գրի էր առնում ազգագրական նյութերը և նույնիսկ հետազոտում[8]: Ժողովրդական բանահյուսությունը, ըստ նրա, հետազոտության հետաքրքիր նյութ կարող է տալ ազգագրագետ ուսանողին, քանի որ նրա մեջ առատորեն դրսևորված են ժողովրդի սովորությունները, հավատալիքները և այլն: Խ. Աբովյանի բանագիտական, բանահավաքչական գործունեության մասին ուշագրավ հետազոտություն է կատարել նշանավոր բանագետ Արամ Ղանալանյանը[9]:

Խ. Աբովյանն առաջինն էր, որ իր երկերի նյութը դարձրեց հայ գյուղաշխարհի, գեղջուկ հայի կենցաղը, XIX դարի սկզբներին հայությանը հուզող պատմական-քաղաքական և մշակութային խնդիրները: Նրանից սկսած՝ հայ աշխարհն իր սոցիալ-քաղաքական միջավայրով, ազգային կյանքի յուրահատկություններով դառնում է գրականությունը սնուցանող հիմնական աղբյուր: Աբովյանը նախանշեց հայ նոր գրականության ժողովրդական ուղղությունն ու ազգային բովանդակությունը: Այդ տեսանկյունից նրա «Վերք Հայաստանի» վեպը հայ ժողովրդական կենցաղի, ծեսերի, սովորույթների, բարքերի մի կենդանի հանրագիտարան է: Աբովյանի ազգագրական նյութերը մեզ են հասել երկու ճանապարհով՝ նյութեր, որ ցրված են գրական ստեղծագործությունների մեջ, և նյութեր, որ հատուկ ուսումնասիրել է: Վերջիններից կարելի է

[8] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում // Գիտական աշխատություններ, VIII, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2005, էջ 53-59, նույնի՝ Աբովյանը որպես ազգագրագետ // Աբովյանագիտական հոդվածների հատընտիր ժողովածու, Երևան, 2007, էջ 123-132, նույնի՝ Խ. Աբովյանի գրական ժառանգության շուրջ // «Էջմիածին», 2007, Ա., էջ 88-94, նույնի՝ Խ. Աբովյանը՝ քրդերի ազգագրության հետազոտող // «Էջմիածին», 2011, Ա., էջ 76-90:

[9] Տե՛ս ***Ղանալանյան Ա.,*** Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941:

առանձնացնել «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին»[10], «Գյուղական տների կառուցվածքը»[11], «Քրդեր և եզդիներ»[12], «Թիֆլիզու հայոց հանգստարանը»[13], «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին»[14], «Համառոտ ակնարկ հայերի մասին»[15] և այլն, որոնց մեծ մասը գրվել է եվրոպացի ճանապարհորդներ Հաքստհաուզենի, Պարրոտի, Վագների և այլոց խնդրանքով ու խորհրդով: Նկատենք, որ վերջիններիս աշխատություններում հայ ազգագրության և բանահյուսության վերաբերյալ ևս ուշագրավ նյութեր կան:

XIX դարի առաջին կեսը՝ մինչև 60-ական թվականները, հայ ազգագրության ու բանագիտության՝ որպես ինքնուրույն գիտության վերածվելու սաղմնավորման շրջանն էր, երբ հավաքվում և կուտակվում էին նյութեր, երևան էին գալիս քննական, հետազոտական աշխատություններ: Բուն, կենդանի կենցաղավարող բանահյուսության ստեղծագործությունները և ազգագրական երևույթները՝ բազմազանությամբ ու տարատեսակներով, դեռ չէին գտել իրենց հավաքողներին և ուսումնասիրողներին[16]:

Տարերային բանահավաքչության հաղթահարումը մասամբ գտնում ենք նաև XIX դարի առաջին կեսի մամուլում: Եթե մինչ այդ ազգագրական ու բանահյուսական երևույթները գրի էին առնվում իբրև օժանդակ նյութեր, ապա այս շրջանի մամուլում, հատկապես 40-50-ական թվականներին, սկզբնավորվեց նպատակային բանահավաքչությունը՝ ազգային ինքնագիտակցության արթնացման գաղափարական ազդեցությամբ պայմանավորված: Ազգագիր բանահավաքները մամուլում հանդես էին գալիս իբրև այդ գաղափարները կրողներ, հատուկ նպատակներով օգտագործում էին ազգագրության գեղեցիկ նմուշները: Դրանցից կարելի է

[10] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկերի լիակատար ժողովածու, ութ հատորով (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 8, Երևան, 1958, էջ 154-193:

[11] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 10 (լրացուցիչ), Երևան, 1961, էջ 53-93:

[12] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 243-285:

[13] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 4, Երևան, 1947, էջ 40-47:

[14] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 82-96:

[15] Նույն տեղում, էջ 32-42:

[16] Տե՛ս ***Ղանալանյան Ա.,*** Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, 1985, ***Հարությունյան Ս.***, Մանուկ Աբեղյան, Երևան, 1970, նույնի՝ Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010 և այլն:

առանձնացնել՝ «Ազդարար Բյուզանդյան» (շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1840-1841), «Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա, 1840-1887), «Հայրենասեր» (շաբաթաթերթ, Զմյուռնիա, 1843-1846, 1830-1842 թթ. հրատարակվել է «Ազգասեր» խորագրով), «Հայաստան» (շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1846-1852), «Եվրոպա» (շաբաթաթերթ, Վիեննա, 1847-1858), «Բանասեր» (տասնօրյա, Մադրաս 1848-1849), «Ուսումնասեր» (լրագիր, Սինգապուր, 1849-1853) և այլն: Սրանց հրապարակումներում ուղղակի կամ անուղղակի շատ անդրադարձներ կան ժողովուրդների սովորույթներին, վարքուբարքին, առանձնապես հասարակական կենցաղին և հոգևոր մշակույթին:

Տարերային բանահավաքչության հաղթահարումը հիմնականում պայմանավորված էր ազգագրական հարցարանի ստեղծման հանգամանքով, որը ժամանակին, իհարկե, նման ձևակերպում չուներ: Բայց XIX դարի երկրորդ կեսի սկզբներին առանձին անհատներ արդեն գիտակցում էին բանահավաքչության կարևորությունը:

1870-ական թվականներից սկսվում է հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում հավաքչական բուռն գործունեություն, որը ծավալվելով ընդգրկում է պատմական Հայաստանի ազգագրական հիմնական շրջանները:

Ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման վերելքի նախաձեռնողն ու կազմակերպիչը դարձավ հայ մշակույթի անխոնջ մշակ Գարեգին Սրվանձտյանցը (1840-1892): Նա առաջին խոշոր գործիչն էր, որը նախաձեռնեց ազգագրական հարցարանի ստեղծման գործը: Իր հայտնաբերած հայոց ազգային էպոսն էլ հենց միտք հղացրեց ազգագրական և բանահյուսական նյութերի գրանցման սկզբնապես տարերայնորեն, ապա համակարգված նախնական հարցարան հիմնելուն, որպիսին հանդիսացավ նրա «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գիրքը (Կ. Պոլիս, 1874): Վերջինս նրա կարևորագույն գործն էր, սովորական գիրք չէր, այլ, ինչպես դիպուկ նկատել է Վ. Բդոյանը, երկու կարևորագույն հայտնագործությունների ժողովածու է[17]:

Ազգագրության և բանահավաքչության գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար մեծ էր Սրվանձտյանցի մշակած ուղղության դերը: «Ծանի՛ր զքեզ» իմաստությունը ժողովրդին

[17] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 17:

հասցնելու խնդիրը XIX դարի հայ մտավոր գործիչների սրբազան պարտքն էր համարվում: Պ. Պռոշյանին[18] վիճակվեց կատարելու Աբովյանի կարգախոսը Արևելահայաստանում, իսկ Գ. Սրվանձտյանցին՝ Արևմտահայաստանում: Սակայն եթե Պռոշյանի մոտ ազգագրությունը ծառայում էր դեղագիտական նպատակներին, ուր տակավին բացակայում էր ազգագրագետ-բանահավաքի ինքնագիտակցությունը, Սրվանձտյանցի մոտ արդեն այն զգացվում էր:

Թուրքական հարստահարությունների և քաղաքական հալածանքների դեմ մաքառելու տարիներին Գ. Սրվանձտյանցն ազգագրությունն ու բանահյուսությունը պարզապես առաջադրեց որպես հոգևոր զենքեր ու դրանցով ազգային զարթոնքի քարոզչության գործը հասցրեց նոր մակարդակի: «Ծանի՛ր զքեզ»-ի գաղափարով էր տոգորված Սրվանձտյանցի յուրաքանչյուր տող: 1860-ին Վարագա ժառանգավորաց վարժարանի 20-ամյա սանը, ճանապարհորդելով Անդրկովկասում, գրեց և հրատարակեց «Երևան քաղաք», «Տփխիս քաղաք», «Սյունյաց աշխարհ և Շուշի քաղաք» հոդվածները: Վերջիններս հագեցած էին ազգագրական ուշագրավ տվյալներով: Արժանահիշատակ են հատկապես կրոնական ծեսերի, Թիֆլիսի հայ համքարությունների օրենքների, պատանեկան խաղերի, արհեստների ու առևտրի, տների կառուցվածքի, հայ, ռուս, պարսիկ և այլ ժողովուրդների կյանքից վերցված դրվագները:

«Գրոց ու բրոց» յուրօրինակ ծրագիրն իր «կառուցվածքով ու հարցերի առաջադրումներով, իհարկե, միանգամայն տարբերվում էր Եվրոպայում և այլուր կազմվող ծրագրերից, որովհետև հեղինակն անծանոթ էր դրանց: Նա իր ծրագիրը, դարի քաղաքական ու մշակութային պահանջների համաձայն, առաջադրել է բնատուր խելքի ու տաղանդի շնորհիվ: Այդ ծրագիրը՝ որպես հայ իրականության մեջ առաջին փորձ, ինչ խոսք, պարզ էր ու հասարակ, նախնական»[19]: Այն լեցուն էր հայրենաբաղձ Սրվանձտյանցի մեղրանուշ խոսքերով, որոնք օգտագործվեցին հետևորդների կողմից: Այդ են վկայում ժամանակակից գրական ու գիտական նշանավոր գործիչները, որոնք խոստովանել են «Գրոց ու բրոցի» թողած ազ-

[18] Պերճ Պռոշյանի՝ իբրև ազգագրական անբավ նյութերի գրառողի վերաբերյալ ուշագրավ ուսումնասիրություն է կատարել Ա. Պետրոսյանը (տե՛ս ***Պետրոսյան Ա.***, Ժողովրդական տվյալների արտացոլումը Պ. Պռոշյանի երկերում // ՊԲՀ, 2009, № 1, էջ 88-102):

[19] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), էջ 17:

դեցությունն իրենց վրա: «Գրոց ու բրոցին» հետևեց «Հնոց-նորոց» (1874), իսկ 1876 թ.՝ «Մանանա» ժողովածուն: Վերջինս ազգագրական ու բանահյուսական նյութի առավել լայն ընդգրկում ունի, որով Վան-Վասպուրականի ազգագրական մի շարք նյութերը փրկվում են անդարձ կորստից: Այս գրքում Սրվանձտյանցը զետեղել է նաև մի շարք նամակներ, որոնց հեղինակները ողջունել են «Գրոց ու բրոցը»: «Համով-Հոտովը» լույս է տեսնում 1884 թ. (Կ. Պոլիս): Նրա «Թորոս Աղբարի» (Կ. Պոլիս, հ. I, 1879, հ. II, 1884) ազգագրական-աշխարհագրական արժեքը բարձր է գնահատվում Ռուսաստանի աշխարհագրական ընկերության կողմից և համառոտված թարգմանվում ու տպագրվում է դրա II հատորը[20]:

Գ. Խալաթյանցը, սակայն, 1887 թ. հրատարակած իր «Ծրագիրը» համարում էր առաջին փորձ[21], որից երևում է, որ նա Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը» ծրագիր չի համարել: Այն ծրագիր չեն համարել նաև Ե. Լալայանը, Ս. Լիսիցյանը և հայ ազգագրության այլ երախտավորներ: Ինչո՞ւ, որովհետև հեղինակն իր ծրագիրն արդի իմաստով չի համակարգել, հարցերը թեմատիկ խմբավորման չի ենթարկել ու համարակալել, առաջադրված հարցերը շաղկապել է պատասխան նկարագրերի հետ: Ընթերցողները և գիտնականները բոլոր պարագաներում ընդունել են «Գրոց ու բրոցի» բարերար և վարակիչ ազդեցությունը, բայց չեն նկատել, որ հեղինակն այն ներկայացրել է իբրև ծրագիր: Չեն նկատել նույնիսկ ակնհայտ փաստերը, որ տեսնում ենք «Գրոց ու բրոցի» էջերում: Ուստի, հաստատելու համար, որ գրքի ամբողջ կեսը հայ ազգագրության ծրագիր է եղել, բերենք հեղինակի հետևյալ խոսքերը. «Եվ որովհետև այս իմ գրական գործս իբրև հուշարար և ծրագիր կուզեմ ներկայացնել, բավականեն ավելին չեմ ուզեր երկարել: ...Ուր տարավ և ուր բերավ զիս այս նկարագիրը, զոր միայն իբր ծրագիր կը գրեմ: Դառնամ պիտի, դադրիմ պիտի, քանզի անսահման են այսպիսի վայրերը և անսպառ՝ անոնց վրա խոս-

[20] Известия Кавказского отдела императорского Русского географического общества (приложение к 1-му выпуску IX тома «Известия Кавказского отдела императорского Русского географического общества»), Тифлис, 1887 г. Վերնագրված էր այսպես՝ Торос Ахпар, «Путеводитель по Армении...»:

[21] Տե՛ս Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, հավաքեց և կազմեց Գ. Խալաթյանց, Մոսկվա, 1887:

վածներն ու երևցածները»[22]: Կամ՝ «Իմ փափաքս եղած է, որ բանասերք ուշադրություն դարձնեն Հայաստանի մեջ բնակած հայոց ժողովրդական լեզվաց և այն լեզուներով հրատարակեն վեպեր, տրամախոսություններ և այլն և այսպիսով սիրելի և ծանոթ կացուցանեն զանոնք դրագիտաց...»[23]:

Կարևոր է հիշել, որ հեղինակը «Գրոց ու բրոցի» տիտղոսաթերթի վրա դրոշմել է՝ «Ծրագրեաց Գ. Վ. Սրվանձտեանց»: Վերոհիշյալ ուղերձի տակ նա ստորագրել է «Ծրագրող Սրվանձտյանց Գ. Վ.»: Իսկ 9-16-րդ էջերում ներկայացրած նախաբանի տակ գրել է՝ «Ծրագրողն»: Մակագրության այս ձևը չի կրկնվել հեղինակի մյուս գրքերից և ոչ մեկի վրա: Ինքնին շատ ուշագրավ է հենց «Գրոց ու բրոց» արտահայտությունը, որը «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքի միայն առաջին կեսին է վերաբերում: Ընդ որում՝ «Գրոցն» այն է, ինչը հեղինակը գրի է առել իբրև ազգագրական և բանահյուսական հում նյութեր, իսկ «բրոցն» ակնհայտորեն խորհրդանշական է՝ «բրել, պեղել, պատմել տալ և գրի առնել» նշանակությամբ[24]:

Գ. Սրվանձտյանցը բանահավաքներին հիշեցնում, հուշում է գրի առնել ընտանեկան կյանքի նկարագիրը, բնակավայրերի տեղագրությունը, շենքերի ձևերը, որոնք «լույս կու տան մեր հայկական լեզվին, մեր ազգային հնագիտության ու պատմության»[25]: Եվ քանի որ նա համեստորեն իրեն ձեռնհաս չի համարում զբաղվելու ծավալուն բանահավաքչական գործով, «Գրոց ու բրոցի» հետագա բազմաթիվ էջերում հարցեր է առաջադրում, որպեսզի ավելի կարող մարդիկ զբաղվեն ազգագրությամբ: Այդ հարցերի մեջ ընդգրկված են Վանա նավերի նկարագրերը և եզրույթները, գյուղատնտեսական գործիքները, փոխադրամիջոցները, աշխատանքային գործընթացները, տան շարժական գույքը, կահույքը, ամանները, ամբարները և փեթակները, հաց թխելու պարագաները, կաթի մշակման միջոցները, հատիկաչափերը, հացի տեսակները, լվացքի ամանները և այլն, ազգային տարազը, տարազի հետ կապ-

[22] ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 79 (մեջբերումները այս և հետագա ընդգծումները մերն են):

[23] Նույն տեղում, էջ 116:

[24] Այս մասին առավել հանգամանորեն տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը // «Էջմիածին», 2007, Ժ, էջ 110-122:

[25] Տե՛ս ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ. 1, էջ 38-39:

ված զարդերն ու հուռութները և այլն, դարբնոցներն ու դարբնությունը, հյուսնությունը, դերձակությունը, ոսկերչությունը, շինարարական տեխնիկան, ժողովրդական բժշկությունը, դեղագիտությունը և այլն, պտղաբուծությանը, բանջարաբուծությանը, կենդանիներին ու թռչուններին առնչվող եզրույթաբանությունը, ծաղիկների աշխարհը և բարբառային բառերի ցուցակներ կազմելը, դիցաբանությունը և առասպելաբանությունը:

«Գրոց ու բրոցի» առաջին կեսն ավարտելուց առաջ Գ. Սրվանձտյանցը, ուրիշներին բանահավաքության մղելով, գրում է. «Հիմա նորեն միտքս եկավ, քանի որ մեր մտադրությունն է ժողովրդական կյանքե ծանոթությունններ հիշել, որոնք լույս կարող են տալ ազգային պատմության և լեզվին կամ գրականության, ուշադրության առնելու է, ուրեմն, անոնց մեջ եղած տնտեսական, գեղջկական, քաղաքական և կրոնական արարողությունները, առածները, երդումները, անեծքները, օրհնանքները, երգերը, պարերը, տղայոց խաղերը, որոնք առհասարակ կյանքի և լեզվի պատմությունը կը կազմեն»[26]: Ապագա գրառողին իր միտքն ավելի լավ հաղորդելու համար նա թվարկում է գրի առնելիք թեմաները, ինչպիսիք են՝ ամուսնացող զույգին առնչվող ծեսերը, հարսանեկան խնջույքը, պսակը, պսակից տուն վերադարձի ճանապարհի ծեսերը և այլն: Աչքի անցկացնելով Գ. Սրվանձտյանցի ժողովածուները՝ մեր առաջ բացվում են ազգագրության գրեթե բոլոր հիմնական խնդիրները՝ երկրի տեղագրություն, բնության նկարագրություն, տնտեսական կենցաղ և նյութական մշակույթ, գյուղատնտեսական գործիքներ, փոխադրամիջոցներ, աշխատանքային գործընթացներ, տան կահ-կարասի, զբաղմունքներ՝ կաթնատնտեսություն, այգեգործություն, մեղվապահություն, արհեստներ, ժողովրդական բժշկություն, տարազ և այլն: Մեծ տեղ է հատկացված նաև ժողովրդի հոգևոր մշակույթին՝ ժողովրդական հավատալիքներին, պաշտամունքին, տոներին և այլն:

Հայ ազգագրության գրանցման ու մեկնաբանման սրվանձտյանական ուղղությանը հետևեցին նրան ժամանակակից և հետագա արևմտահայ բանահավաքները: Սփյուռքի հայության համար սրվանձտյանական գրանցման հայրենաբաղձ ոճն այժմ էլ իշխող ձև է, քանի որ ծառայում է ազգային ոգու պահպանմանը:

Այդ ուղղության մյուս կարևոր արժանիքն այն է, որ հայ ազգագրությունը 1870-ական թվականների սկզբին նոր հիմքի վրա

[26] Տե՛ս ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ. 1, էջ 81-82:

դրվեց: Սրվանձտյանցին հետևող բազմաթիվ բանահավաքներ նյութերի գրանցման առումով նշանակալից գործ են կատարել[27]:

Անկախ այն բանից, թե Գ. Սրվանձտյանցի «Գրոց և բրոց» աշխատությունը գիտնականներից շատերն են որպես հայ ազգագրության ծրագիր-հարցարան ընդունում, թե՝ ոչ[28], մի բան որոշակի է, որ այն, իրոք, գիտակցական բանահավաքչության առաջին օրինակն էր, որին հետևեց գավառաբնակ մտավորականության մի ամբողջ սերունդ: Հայ ազգագրական գիտության մեջ կան այլ տեսակետներ ևս: Այսպես, օրինակ, Ս. Վարդանյանը, Լ. Վարդանյանը Մ. Միանսարյանցի 1860-ական թվականներին լույս տեսած «Մտածողություն ազգային լուսավորության մասին» հոդվածը դիտել են որպես առաջին «ծրագիր-հարցարան»[29], իսկ ըստ Դ. Վարդումյանի՝ «արդեն բավականաչափ կուտակված նյութերի վրա կազմվեցին ազգագրական բնույթի առաջին հարցարանները (Մ. Միանսարյան՝ 1868, Ա. Երիցյան՝ 1874»)[30]: 1874 թ. Ա. Երիցյանը հրատարակում է «Ընդհանուր հարցեր հայոց բանանց և սովորութեաց» ծրագիրը (Թիֆլիս, 1874), որն ընդգրկում էր ազգագրության սոսկ սահմանափակ բնագավառներ և չունեցավ գործնական կիրառություն: Դ. Վարդումյանն իր մի քանի այլ հրատարակություններում Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը» համարել է

[27] Մեր այս մոտեցումներն առավել հանգամանորեն արտահայտվել են ավելի վաղ հրատարակված հոդվածում և գիտական զեկուցման մեջ, տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը, «Էջմիածին» 2007, Ժ, էջ 110-122, նույնի՝ Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական գործունեությունը // Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 85-ամյակին նվիրված ժողովածու, պր. 1, Երևան, 2008, էջ 217-219:

[28] Այս հարցին ազգագրագետ Ա. Պետրոսյանը նվիրել է մի ուշագրավ հոդված՝ «Հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարանի խնդրի շուրջ» վերտառությամբ (տե՛ս ՊԲՀ, 2008, № 2, էջ 230-243), որում հեղինակը փորձում է ժխտել «Գրոց ու բրոցի» ծրագիր-հարցարան լինելու գաղափարը, սակայն դրա կողքին հանգամանորեն անդրադառնում է Գ. Սրվանձտյանցի անուրանալի ներդրմանը հայ ազգագրությունը գիտության վերաճելու ճանապարհին:

[29] Տե՛ս ***Վարդանյան Ս.,*** Միքայել Միանսարյանց: Կյանքն ու գործը, Երևան, 2002, էջ 21, ***Варданян Л.,*** Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005, с. 307:

[30] ***Վարդումյան Դ.,*** Ազգագրություն // Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 926:

հայ ազգագրության առաջին հարցարանը. «Հայ իրականության մեջ ազգագրական առաջին համապարփակ հարցարանը կազմեց Գ. Սրվանձտյանցը: Այն զետեղված է նրա «Գրոց ու բրոցի» մեջ (Կ. Պոլիս, 1874)»[31]: Ավելի ուշ մեկ այլ հոդվածում գրում է. «Նրա երկերն իր ժամանակի հոգևոր ու նյութական անապակ, զուլալ գանձարան են՝ ազգագրական և բանահյուսական նյութերի միահյուս ընդգրկմամբ: «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի Դուռ» գրքով նա հայտնագործում էր հայ դյուցազնավեպը, ապա տալիս է հայ ազգագրական բանահավաքչական առաջին ծրագիրը»[32]: «Գրոց ու բրոցը» «անփույթ ու վայրիվերո» ծրագիր է համարել Ա. Շահնազարյանը[33], իսկ Վ. Բդոյանն էլ գրում է, թե «Գ. Սրվանձտյանցի ամենամեծ ծառայությունը բանահավաքչության գործի կազմակերպումն էր: Գ. Սրվանձտյանցին հետևեցին շատերը՝ ձեռքի տակ ունենալով նրա ծրագիրը՝ «Գրոց ու բրոցը»: Գ. Սրվանձտյանցի գրական հարուստ ժառանգության մասին Ա. Ղանալանյանը գրում է. «Սրվանձտյանցը բացեց մեր բազմադարյան բանարվեստի, ժողովրդական կյանքի, հայոց բնաշխարհի մինչ այդ փակ մնացած գաղտնարանների դռները և առաջին անգամ իր ամբողջ համ ու հոտով հայ հասարակայնությանը ծանոթացրեց այնտեղ եղած մեծագույն արժեքներին»[34], «Սրվանձըտյանցը առաջիններից մեկն էր մեզանում, որն իր հայտնաբերած հարուստ նյութերով մեծապես նպաստեց հայ բանագիտության, ազգագրության, գրականության ու հնագիտության զարգացմանը: Նա մի նոր աշխարհ բացեց հայ գիտնականների ու գրողների առջև՝ առատ նյութ մատակարարելով նրանց հետազոտությունների և գրական ստեղծագործությունների համար»[35]:

Ուսումնասիրողների մեծ մասը չի վիճարկել «Գրոց ու բրոցի» ծրագիր-հարցարան լինելու հանգամանքը, բայց միանշանակ բոլորն էլ պնդել են, թե Գ. Սրվանձտյանցի հրատարակած ժողովածուներն ինչ վիթխարի դեր են խաղացել ժողովրդագիտական

---

[31] Տե՛ս ***Վարդումյան Դ.,*** Ազգագրություն // ՊԲՀ, 1970, № 4, էջ 137, ծնթ. 9:

[32] ***Վարդումյան Դ.,*** Հայ ազգագրության պատմության հակիրճ ուրվագիծ, էջ 6:

[33] Տե՛ս ***Շահնազարյան Ա.,*** Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի երկերը // ԱՀ, գ. XXIV, Թիֆլիս, 1913, էջ 116:

[34] ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ. 1, էջ 8:

[35] Նույն տեղում, էջ 23:

նյութերի գրառման ու հրատարակման գործում[36]: Ըստ ականավոր բանագետ Ս. Հարությունյանի համոզման՝ «Գ. Սրվանձտյանցը դառնում է հայ բանահավաքչության ռահվիրան՝ ուղի հարթող առաջամարտիկը: Նրա հետևությամբ XIX դարի վերջին քսանամյակում հայ բանագիտության մեջ հանդես է գալիս բանահավաքների մի ամբողջ սերունդ, որի անդուլ ջանքերով գրառվում և տպագրվում է ժողովրդական կենդանի բանահյուսության մի պատկառելի ժառանգություն»[37]: Ի դեպ, Գ. Սրվանձտյանցի ժամանակ և հետագայում նրա գործունեության մասին կարելի է հանդիպել բազում հեղինակների դրվատալից գնահատականների[38]: Օրինակ՝ Հ. Թումանյանը նրան համարել է «Մեր անուշ, հայրենախոս բանաստեղծը», իսկ նրա գրքերն էլ համեմատել է բուրումնալի ծաղկեփնջերի հետ: «Մի Աբովյան կամ մի Սրվանձտյանց,– գրել է նա,– կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, որոնք, ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»[39]:

Գ. Սրվանձտյանցի երկերը մեծ ներգործություն ունեցան ժամանակի հայ գավառաբնակ մտավորականության շրջանում: Նրանց ջանքերով ազգագրության և բանահյուսության ասպարեզում հսկայական աշխատանք կատարվեց, մեծաքանակ նյութեր կուտակվեցին տարբեր գավառներից և բնակավայրերից՝ ընդգրկելով և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստանը, նաև հայկական գաղ-

---

[36] Տե՛ս, օրինակ, ***Հարությունյան Ս.,*** Բանագիտություն // Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 916-917:

[37] Նույն տեղում:

[38] Տե՛ս ***Մելիքզադե (Ռաֆֆի).*** Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցի» առթիվ (գրախոսություն) // «Մշակ», 1875, № 2, 3, ***Հայկունի Ս.,*** Գ. Սրվանձտյանցի մահվան 10-ամյակի առթիվ // ԱՀ, գ. IX, 1902, էջ 272-281, ***Երեմյան Հ. Ս.,*** Գ. Սրվանձտյանցի կյանքն ու գրական գործունեությունը // «Բազմավեպ», 1912, № 1, էջ 4-12, № 2, էջ 50-53, ***Շահնազարյան Ա.,*** Գարեգին Սրվանձտյանցի մահվան 20-ամյակի առթիվ // ԱՀ, գ. XXIV, № 1, Թիֆլիս, 1913, էջ 112-116, գ. XXV, № 2, Թիֆլիս, 1913, էջ 85-107, ***Բդոյան Վ.,*** Հայրենիքը և հայրենասիրությունը Գարեգին Սրվանձտյանցի երկերում // «Էջմիածին», 1944, Բ-Գ, էջ 38-46, Դ-Ե, էջ 27-36, ***Աճառյան Հ.,*** Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանց // «Էջմիածին», 1950, Ե-Զ, էջ 29-32, ***Ղանալանյան Ա.,*** Գարեգին Սրվանձտյանց // Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, Երևան, 1964, էջ 555-588, ***Կոստանդյան Է.,*** Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Երևան, 1979 և բազմաթիվ այլ հեղինակներ:

[39] Տե՛ս ***Թումանյան Հ.,*** Հայոց գետերը, Թիֆլիս, 1915, էջ 42, նույնի՝ Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 377-378:

թոջախները: Հենց Գ. Սրվանձտյանցի կենդանության տարիներին հրապարակ եկան բազմաթիվ բանահավաքներ, որոնք սկսեցին նկարագրել հայրենի բնակավայրերն ու գավառները[40]:

XIX դարի երկրորդ կեսին հանդես են գալիս մի շարք նոր թերթեր և ամսագրեր, որոնք ավելի, քան դարասկզբի մամուլը ուշադրություն են դարձնում ազգագրական թեմաներին[41]: Այ-

[40] Ներկայացնենք նրանցից մի քանիսին. Արիստակես վրդ. Սեդրակյանը հրատարակեց «Քնար մշեցվոց և վանեցվոց» (Վաղարշապատ, 1874), «Ամուսնական խնդիրներ» (Մոսկվա, 1891), Արիստակես վրդ. Սարգսենցը՝ «Պանդուխտ վանեցին» (Կ. Պոլիս, 1875), Պետրոս վրդ. Կալհոկեցին՝ «Ասիական ճանապարհորդություն ի Հայրենիս» (Կ. Պոլիս, 1881), Գևորգ Շերենցը՝ «Վանա սազ»՝ երկու պրակներով (Թիֆլիս, մ. Ա, 1885, մ. Բ, 1899), Մ. Կ. Միրախորյանը՝ «Նկարագրական ուղևորություն ի Հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի...» (Կ. Պոլիս, մ. Ա, 1884, մ. Բ, 1885, մ. Գ, 1886), Հակոբ Հ. Ալահվերդյանը՝ «Ուլնիա կամ Զեյթուն» (Կ. Պոլիս, 1884), Հովհաննես Նազարյանցը՝ «Նախապաշարմունք» (Թիֆլիս, հ. I, 1878), «Անեկդոտներ» (Թիֆլիս, հ. 1, 1876, հ. 2, 1877), Երեմիա եպ. Տեր-Սարգսենց Տևկանցը՝ «Տոհմային հիշատակարան» (գիրք Ա և Բ, Վարագ, 1881), Սիմոն Վ. Ճուլարտյանը՝ «Առածք ազգայինք» (Վենետիկ, 1880), Վահան վ. Տեր-Մինասյանը (Պարտիզակցի)՝ «Անգիր դպրություն (Կ. Պոլիս, հ. Ա, 1893, հ. Բ, 1893), Հ. Կ. Ճանիկյանը՝ «Հնություն Ակնա» (Թիֆլիս, 1895), Գևորգ Տեր-Աղեքսանդրյանը՝ «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» (Թիֆլիս, 1886):

[41] Այդ պարբերականներից էին՝ «Մասիս» օրաթերթը Կ. Պոլսում (1884-1908), «Արծիվ Վասպուրականի» ամսաթերթը նախ Կ. Պոլսում (1855-1856), ապա Վարագա վանքում (1858-1864, 1873-1874), «Հյուսիսափայլը» Մոսկվայում (1858-1864), «Կռունկ Հայոց աշխարհին» Թիֆլիսում (1860-1863), «Լրատար Արծուիկ Տարօնոյ» ամսագիրը Մշո Ս. Կարապետ վանքում (1863-1865), «Արարատ» ամսագիրը Էջմիածնում (1868-1919), «Արևելյան մամուլ» ամսագիրը Զմյուռնիայում (1871-1909), «Մշակ» օրաթերթը (1872-1920), «Փորձ» ամսագիրը՝ Թիֆլիսում (1876-1881), «Բիւրակն» ամսաթերթը Կ. Պոլսում (միայն նոր շրջանը՝ 1897-1900 թթ.), «Նոր դար» օրաթերթը Թիֆլիսում (1884-1908), «Արաքս» ամսագիրը Պետերբուրգում (1887-1898), «Հանդես ամսօրյա» ամսագիրը Վիեննայում (1887 թվականից մինչև այսօր): XIX դարի երկրորդ կեսին նշանակալից չափով ազգագրական նյութեր են տպագրվել նաև ռուսական մամուլում՝ «Кавказский календарь» (Тифлис, 1845-1917), «Материалы для описания местностей и племен Кавказа» (Тифлис, 1883-1903), «Свод материалов по изучению экономического края» [Тифлис, 1887-1889 (в 5 томах)], «Материалы дня изучения экономического быта государственных крестьян Закавказского края» [Тифлис, 1885-1887 (в 7 томах)]; «Известия Кавказского отдела Русского географического общества» (Тифлис, 1872-1917) և այլն:

նուամենայնիվ, Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը» չկարողացավ կատարել այն դերը, ինչ հետագայում վիճակվեց կատարել Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանցի (1858-1912) հարցարանին: Հենվելով Գ. Սրվանձտյանցի և վերոհիշյալ բանասերների ու բանահավաքների աշխատությունների վրա՝ եվրոպական և ռուսական ազգագրական գիտության սկզբունքներին քաջատեղյակ Գ. Խալաթյանցը կազմեց գիտական հիմունքներով համակողմանի շարադրված ազգագրական մի նոր հարցարան՝ «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» վերտառությամբ (Մոսկվա, 1887), որի բոլոր հարցերը համակարգվել են ըստ թեմաների ու ենթաթեմանների: Կուռ կառուցվածք ունեցող այս ծրագիրը հսկայական դեր խաղաց հայ բանահավաքչության կազմակերպման գործում, ուղենիշ հանդիսացավ հետնորդ բանահավաքների, բանագետների և ազգագրությամբ զբաղվողների համար[42]: Արժևորենք ծրագիրն հենց Գ. Խալաթյանցի տված գնահատականով. «Մեր ծրագիրն ունեցավ դրական նշանակություն, ոչ միայն ավելացավ բանասացների թիվը..., այլև... նրանց աշխատություններին որոշ սիստեմ և գիտական դասավորություն հաղորդվեց»[43]:

«Ծրագիրը» առաջին հերթին բարձր գնահատականի արժանացավ Գ. Սրվանձտյանցի կողմից. «Վրա հասավ Ձեր «Հայ ազգագրության ծրագիրը» ...Արդեն կանխավ ևս, թե՛ ի Տարոն և թե՛ այլուր պատահածս գավառները թելադրած էի այդպիսի բաները գրելուն: Նվիրեցի ծրագիրդ երեք անձանց, որոնց մեկն կգտնվի ի Ս. Կարապետ, մեկն՝ ի Մուշ, մյուսն ի Պուլանըխ, որքա՜ն մեծ բացվեցան անոնց աչքերը ծրագրիդ ճառագայթներով, որ կլուսավորեր, կառաջնորդեր և կցուցաներ ամեն բան պարզ ու կատարյալ: Մեծ գործ և պիտանի է ծրագիրդ»[44]:

Գ. Խալաթյանցի «Ծրագիրն» ընդգրկում էր 500 հարց և 10 բաժին, որոնք վերաբերում են կենցաղի ու մշակույթի ամենատարբեր բնագավառներին՝ 1) աշխարհագրական և պատմական տեղեկություններ, 2) մարդաբանական տեղեկություններ, 3) բնակարանը և իր պարագաները, 4) զգեստ և զարդ, 5) կերակուր և

[42] Տե՛ս ***Կոստանդյան Է.,*** նշվ. աշխ., էջ 9:

[43] ***Խալաթեանց Գ.,*** Նյութեր հայ ազգագրութեան պատմութեան համար // Էմինեան ազգագրական ժողովածու (այսուհետ՝ ԷԱԺ), հ. Է, Մոսկվա, 1908, էջ 48:

[44] ***Կոստանդյան Է.,*** նշվ. աշխ, էջ 9-10:

խմիչք, 6) կենցաղ և զբաղմունք, 7) ընտանեկան բարք ու սովորույթ, 8) հավատք, 9) լեզու, գիր, արվեստ, ձեռագիր, 10) ժողովրդական բանավոր գրականության տեսակները[45]: Ծրագրի երկրորդ բաժինը վերաբերում է իրավունքին և կազմված է երեք գլխից՝ 1) Հասարակական կացություն և վարչություն, դատ ու պատիժ, 2) Քաղաքացիական իրավունք, 3) Քրեական իրավունք: Խալաթյանցի սույն ծրագիրը լիովին բավարարում էր ժամանակի ազգագրության պահանջները: Նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինի (1815-1890) նյութական միջոցներով հիմնվեց և հիմնականում Գ. Խալաթյանցի խմբագրությամբ 1901-1913 թթ. 9 ծավալուն հատորներով հրատարակվեց «Էմինյան ազգագրական ժողովածուն»: 1-8-րդ հատորների անփոփոխ խմբագիրը Գ. Խալաթյանցն էր, իսկ 9-րդ հատորը (նրա մահից հետո) խմբագրել է հայագետ, Լազարյան ճեմարանի դասախոս Կ. Կոստանյանը: Ժողովածուի խնդիրն էր հայ ազգագրության և ժողովրդական գրականության վերաբերյալ ուշադրության արժանի հավաքածուներ, նյութեր և գիտական հետազոտություններ հրատարակելը: Գ. Խալաթյանցը մեծ աշխատանք է կատարել «Էմինյան ազգագրական ժողովածուն» (այսուհետ՝ ԷԱԺ) գիտական պատշաճ մակարդակով հրատարակելու համար: Այն ինչպես մի շարք այլ պարբերականներ («Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Մշակ», «Փորձ», «Մուրճ», «Նոր դար», «Արարատ», «Արևելյան մամուլ»), մեծապես նպաստել է հայ ազգագրական գիտության կայացմանն ու զարգացմանը:

Գ. Խալաթյանցը «Նյութեր հայ ազգագրության պատմության համար» շահեկան հոդվածում մատնանշում էր հայ ազգագրագետների անելիքներն ազգագրության՝ որպես գիտական առանձին ոլորտի բնագավառում՝ 1) դաշտային ազգագրական նյութեր հավաքել, 2) կազմել ազգագրական մատենախոսական լիակատար նկարագրություններ, 3) դրանց հիման վրա կատարել ուսումնասիրություն, հետազոտություն, վերլուծություն, 4) անհրաժեշտորեն աշխուժացնել ազգագրական գործունեությունը, 5) ձեռնարկել գիտական արշավախմբեր, գիտական համաժողովներ, 6) հիմնել ազգագրական թանգարաններ, համալսարանի հումանիտար ֆակուլտետներում դասավանդել կովկասյան և հայ ազգագրության վերաբերյալ առարկաներ[46]:

---

[45] Տե՛ս ***Խալաթեանց Գ.,*** Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների, Մոսկվա, 1887, էջ 44:

[46] Տե՛ս ԷԱԺ, հ. Է, էջ 57-58:

Այս նույն շրջանում ազգագրական նշանակալից գործ է կատարել մեծանուն գիտնական Ղևոնդ Ալիշանը (1820-1901): Իր պատմագիտական առանձին աշխատություններում հաճախ անդրադարձել է ազգային սովորությունների ու ծեսերի նկարագրությանն ու մեկնությանը: «Բազմավեպի» էջերում նրա հրատարակած ժողովրդական տոների և հավատալիքների վերաբերյալ հոդվածներն ամփոփվում են «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» (Վենետիկ, 1895) ազգագրական նշանավոր գործում: Ազգագրական առումով ուշագրավ են նաև Մ. Խրիմյանի «Պապիկ և թոռնիկ», «Դրախտի ընտանիք» գործերը:

Վաստակաշատ առաջին բանահավաքը, սակայն, եղավ Ե. Լալայանը (1864-1931), որը հենց Գ. Խալաթյանցի ծրագրով 1889 թ. շրջում է Ջավախքում և գրի առնում հայ բնակչության ազգագրությունը: Իր հավաքած նյութերի հիման վրա նա նախաձեռնում է «Ազգագրական հանդեսի» հրապարակումը, որի առաջին հատորը լույս է ընծայում Շուշիում 1896 թվականին: Այդ նույն թվականին Ե. Լալայանը հրատարակությունը տեղափոխում է Թիֆլիս, ուր մտադրվում էր հրապարակ հանել նաև 2-րդ գիրքը: Բայց, ըստ երևույթին, հենց այդ փոխադրության միջոցին էլ Էվլախ կայարանում կորցնում է (գողանում են) երկրորդ գրքի համար պատրաստված կաղապարները: Նյութական ու բարոյական զրկանքների գնով Լալայանին հաջողվում է հաստատվել Թիֆլիսում, ուր մինչև դարավերջ հրատարակում է հանդեսի վեց հատոր: Նրա գիտական ջանքերի և քարոզչական աշխատանքի շնորհիվ պարբերականի շուրջն են համախմբվում ականավոր մտավորականների և գավառական գրագետների լայն շրջանակ: Հանդեսի համարներում տպագրվում են ինչպես ազգագրական ու բանահյուսական հարուստ նյութեր, այնպես էլ տեսական աշխատություններ, հնագիտական ուսումնասիրություններ, մարդաբանությանը վերաբերող հետազոտություններ և այլն: Այս կարճ ժամանակաշրջանում՝ 1896-1900 թթ., գրի են առնվում Ջավախքի 1889), Վարանդայի (1897), Սիսիանի (1898), Սանահինի (1898), Լոռվա (1898), Զանգեզուրի (1898), Համշենի հայերի (1898), Շիրակի (1898), հայ բոշաների (1898), Հայաստանի քրդերի (1898), Բուլանըխ-Հարքի (1899), Ալաշկերտի (1899), Գանձակի (1899) ազգագրությունն ու բանահյուսությունը:

Ե. Լալայանի և նրա շուրջը համախմբված հայ մտավորականների խանդավառ գործունեության շնորհիվ, «Ազգագրական հանդեսից» բացի, ազգագրական և բանահյուսական մի շարք նյութեր

են լույս տեսնում «Բյուրակն», «Բազմավեպ», «Մուրճ», «Հանդես ամսօրյա» հանդեսներում, տարբեր օրաթերթերում: Ե. Լալայանի շուրջը համախմբված մտավորականությունը 1900 թ. հոկտեմբերի 21-ին կազմակերպում է «Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը»[47]:

Ընկերության հիմնական նպատակն էր դյուրացնել «Ազգագրական հանդեսի» և Լալայանի աշխատանքն ու տպագրել գրքեր, գրքույկներ, քարտեզներ, բացել տպարաններ, գրավաճառանոցներ: 1906 թ. ընկերությունը վերանվանվում է «Հայոց ազգագրական ընկերություն», որն ավելի է ընդլայնում գործունեության շրջանակները՝ ծավալելով նաև լուսավորչական-հասարակական գործունեություն: Ընկերությունը նպատակ էր դրել մասնավորապես ազգագրական և ընդհանրապես մարդաբանական գիտությունների տեսանկյունից ուսումնասիրելու Կովկասը, նրան կից երկրները և հայկական գաղթօջախները, հոգալու և միջնորդելու տեղական իշխանությունների առաջ պահպանել Կովկասի հնությունները, կատարել պեղումներ, բացել թանգարան, գրադարան, կազմակերպել դասախոսություններ և այլն:

«Ազգագրական հանդեսի» և առհասարակ Ե. Լալայանի գիտակազմակերպչական գործունեությունը բնութագրվում է նպատակասլացությամբ ու բազմաբովանդակությամբ: Ինչպես վերն ասվեց, հենց նրա անմիջական գործուն աշխատակցությամբ ազգագրական-բանահյուսական համակարգված նյութեր են հավաքվում պատմական Հայաստանի ազգագրական շրջանների մեծ մասում և պարբերաբար հրատարակվում հանդեսում, նաև՝ առանձնատիպերի ձևով: «Ազգագրական հանդեսի» տպագրությունը շարունակվեց մինչև 1916 թվականը, և 20 տարվա ընթացքում Ե. Լալայանը 26 հատորում ընդգրկեց պատմական Հայաստանի գավառների մեծ մասը:

Իր կյանքի շուրջ 46 տարիները Ե. Լալայանն անձնվիրաբար նվիրեց հայ ազգագրությանն ու բանահյուսությանը, գերազանցապես՝ նյութերի հավաքման ու հրատարակման գործին: «Մեր կոչումն,- գրում էր Լալայանը,- նյութեր հավաքելն է, որովհետև դրանց պակասության պատճառով գիտական ուսումնասիրությունները անհնարին են, և մեկ էլ դրանց համար ժամանակ չի

[47] ԱՀ-ի 1905 թ. XII գրքի էջ 307-ում նշված է, որ «Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը» հիմնվել է նոյեմբերի 21-ին:

պակսիլ: Մենք կկրենք քարերը, և երանի նրան, ով կգա այդ քարերով ազգային ինքնուրույնության շենքը կառուցանելու և համամարդկային էվոլյուսիոնի օրենքները գծելու»[48]: Իրավացի էր հայագետ Ն. Ակինյանը, երբ Ե. Լալայանի մահվան կապակցությամբ գրում էր. «Բայց և այնպես ինչ որ համբարեց Լալայանը, հավաքեց ժամանակին, անոնք փրկված են կորուստեն և պիտի մնան ստացվածք գիտության: Եկող սերունդները պարտավոր են երախտագիտության. պիտի օրհնեն հիշատակը մեծ վաստակավորին»[49]:

«Ազգագրական հանդեսի» հետագա գործունեության ընթացքում հավաքչական և հետազոտական աշխատանքներն ու հետազոտությունները ցույց տվեցին, որ անհրաժեշտ է Խալաթյանցի «Ծրագիրը» որոշ չափով ընդարձակել, լրացնել՝ ելնելով մի շարք նոր պահանջներից: Եվ աստիճանաբար հանդեսի էջերում հրապարակ եկան Ե. Լալայանի և ուրիշների լրացուցիչ նոր ծրագրեր ազգագրական այս կամ այն հարցերի, կամ ամբողջական հիմնախնդիրների վերաբերյալ[50]:

Տարիների դաշտային աշխատանքի փորձի հիման վրա՝ ժամանակի պահանջների անմիջական թելադրանքով, Ս. Լիսիցյանը 1930-ական թվականներին գրեց «Ազգագրական հարցարան», որից մինչև հրատարակումը՝ 1946 թվականը, ձեռագիր վիճակով օգտվում էին այլ բանահավաքներ ևս: Այն՝ իբրև կարևոր ձեռ-

[48] ԱՀ, գ. Ա, Շուշի, 1896, էջ 3:

[49] «Հանդես ամսօրյա», 1931, № 3-5:

[50] Թվարկենք դրանք. 1) ***Լալայան Ե.,*** Ծրագիր ամուսնության և հարսանիքի սովորույթների մասին նյութեր հավաքելու // ԱՀ, գ. Ա, Շուշի, 1896, հավելված, էջ 3-52: 2) ***Զելինսկի Ս.*** (հայորդի), Ծրագիր տղաբերքի և նորածին մանկան ֆիզիկական դաստիարակության մասին նյութեր հավաքելու // ԱՀ, գ. Գ, Թիֆլիս, 1898, № 1, հավելված, էջ 73-79: 3) Նույնի՝ Ծրագիր հիվանդության և բժշկության մասին նյութեր հավաքելու համար // ԱՀ, գ. Դ, Թիֆլիս, 1898, № 2, հավելված, էջ 93-106: 4) Թարգմանություն ***Է. Ադիրի*** հարցարանի, որ է՝ Ծրագիր սեպհականության նշանների (տամղաների) մասին նյութեր հավաքելու // ԱՀ, գ. VII-VIII, Թիֆլիս, 1901: 5) ***Հովսեփ Կարա-Մուրզա,*** Ծրագիր տնայնագործության վերաբերյալ նյութեր հավաքելու // ԱՀ, գ. XII, 1904, հավելված, էջ 3-32: 6) Ծրագիր Հայոց ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու // ԱՀ, գ. XVI, 1907, հավելված, էջ 1-26 (գրվել է Պետերբուրգում Ալեքսանդր III-ի ազգագրական թանգարանի համար, որը ռուսերենից փոխադրել և հարմարեցրել է Ա. Տեր-Գրիգորյանը):

նարկ, ազգագրական ընդարձակ հարցարան, մինչ օրս ծառայում է բոլոր ազգագրագետներին: Սա թվով երրորդ համապարփակ հարցարանն էր հայ ազգագրական իրականության մեջ, եթե նկատի չունենանք Ե. Լալայանի, Ս. Զելինսկու և ազգագրության առանձին բնագավառներին վերաբերող այլոց հարցարանները, որոնք թեմատիկ բնույթ ունեն և հրատարակվել են «Ազգագրական հանդեսի» տարբեր հատորներում: Ս. Լիսիցյանի հարցարանն ընդգրկում է ժողովրդի մարդաբանությունը, տնտեսական զբաղմունքները, նյութական և հոգևոր մշակույթը, հասարակական-ընտանեկան հարաբերությունները, ժողովրդական բանահյուսությանն ու արվեստին վերաբերող հնարավոր բոլոր հարցերը, ինչպես նաև՝ անհրաժեշտ ցուցումներ դաշտային նյութեր հավաքելու կարգի մասին[51]:

Վերոգրյալը հայ ազգագրության նորովի զարգացման հիմնավոր ատաղձ հանդիսացավ խորհրդային և ետխորհրդային տարիներին, որոնց ընթացքում հայ ազգաբանական միտքը՝ որպես պատմամշակութային ուրույն բնագավառ, թևակոխեց զարգացման նոր պարբերաշրջան:

[51] Միանգամայն տեղին է Ա. Պետրոսյանի այն հարցադրումը, թե «Ս. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» լույսընծայումից հետո անցած տասնամյակների ընթացքում ազգագրական գիտության մեջ առաջ են քաշվել բազմաթիվ նոր հիմնախնդիրներ, որոնք մինչև XX դարի 40-ական թվականները չէին կարող տեղ գտնել այդ հարցարանում: Ուստի հայ ազգագրության նոր ծրագիր-հարցարանի կազմումն ու հրատարակումը օրվա հրամայական պահանջ է դարձել» (տե՛ս Ա. Պետրոսյան. Հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարանի խնդրի շուրջ, էջ 242-243): Այդ նպատակին ծառայելու համար մենք հրատարակել ենք ամուսնության ու հարսանեկան ծիսաշարի և մանկան ծննդի ու խնամքի վերաբերյալ նյութեր հավաքելու ավելի ընդարձակ, լրամշակված ծրագիր-հարցարաններ (տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Ակնարկ դաշտային ազգագրական նյութերի գրառման եղանակների մասին: Հարցաշար ամուսնահարսանեկան սովորությունների, արարողությունների վերաբերյալ // ***Նահապետյան Ռ.,*** Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, Երևան, 2009, էջ 30-54, նույնի՝ Մանկան ծննդին և խնամքին առնչվող սովորությունների ու ծեսերի վերաբերյալ ազգագրական նյութերի գրառման հարցաշար // ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը, Երևան, 2011, Հավելված, էջ 192-206):

2. ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԸ (XVIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ - 1850-1860-ԱԿԱՆ ԹԹ.)

ա) 1. XVIII դարի երկրորդ կես - XIX դարի 50-60-ական թթ. ժամանակաշրջանի բնութագրությունը

Հայ ազգագրությունը՝ որպես գիտության ուրույն ճյուղ, ձևավորվեց XVIII դարի երկրորդ կեսից ընդհուպ XX դարասկիզբը: Այս պարբերաշրջանը կարելի է բաժանել երեք շրջափուլի՝ 1) մինչև 1850-1860ական թթ.՝ նյութերն առավել արդյունավետ դրանցելու, 2) 1870-1880-ական թթ. մասնագիտական հարցարանների հանդես գալու, 3) 1890-ականներից մինչև XX դարի սկզբները՝ որպես հայագիտության ուրույն բնագավառ վերջնականապես կազմավորվելու և զարգանալու ժամանակահատվածներ:

XVIII դարի երկրորդ կեսից մինչև 1850-1860-ական թթ. աչքի են ընկնում հայագիտական հրատարակությունների առատությամբ, հայ մտավորականության ազգագրական գործունեության վրա եվրոպական և ռուսական միջավայրի բարերար ազդեցությամբ: XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին Եվրոպայում ու Ռուսաստանում նշանակալից տեղաշարժերը, պայմանավորված բուրժուական հարաբերությունների առաջացմամբ և ազգային ինքնագիտակցության աշխուժացմամբ, խոշոր ազդակ հանդիսացան հայ ազգագրական ու բանահյուսական նյութերը նորովի արժևորելու համար: Ազգագրական նյութը այս շրջանում հիմնովին ծառայեցվում էր տնտեսական ու ազգային զարթոնքին, իդեալականացվում էին «Հայ և հայրենյաց տունը», «Թորգոմյան տոհմը», նկարագրվում էին ազգային սովորույթները, փառաբանվում նահապետական «գեղեցիկ» ու «քաղցրիկ» օրենքները՝ հայ ժողովրդի սովորույթներին, վարքուբարքին, ընտանեկան-հասարակական կենցաղին, հոգևոր մշակույթին վերաբերող անդրադարձներով: Այս շրջափուլում ազգագրական նյութեր օգտագործում էին հայ գրողները, օտար ճանապարհորդները և ուրիշներ, իսկ ազգային սովորությունները արտացոլվում էին հայ մամու-

լում: Ժամանակի հայ անդրանիկ պարբերականները՝ «Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա, 1840), «Բազմավեպ» (Վենետիկ, 1843), «Եվրոպա» (Վիեննա, 1847), «Մասիս» (Կ. Պոլիս, 1852) և այլն իրենց էջերում այս կամ այն չափով զետեղում էին ազգագրական և բանահյուսական նյութեր: Այս շրջանի գրականությանը շատ բնորոշ էր ազգային գեղեցիկ սովորությունների, անխառն բարքերի, տնտեսական զբաղմունքների, նյութական և հոգևոր մշակույթների, ժամանցի ձևերի, սպորտի ու խաղերի տեսակների, ուխտագնացությունների, ամուսնալընտանեկան սովորույթների ու ծիսակատարությունների նկարագրությունների օգտագործումը:

Այս պարբերաշրջանում ազգային ինքնաճանաչման գործում նշանակալից էր հատկապես Մխիթարյան միաբանության գործիչներ Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի, արևելահայ իրականության մեջ՝ Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի և այլոց դերը:

1.1. Մխիթարյան միաբանության խաղացած դերը հայ ազգագրական գիտության ձևավորման գործում

Բուն Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանները, նրա արևմտյան և արևելյան հատվածների ծանր կյանքը թուրքական ու պարսկական բռնապետությունների տիրապետության տակ պատճառ դարձան, որ ազգային զարթոնքի առաջին արտահայտություններն ի հայտ գան հայկական գաղթօջախներում: Մեծ է եղել Եվրոպայում կրթություն ստացած գիտնականների, մասնավորապես Վենետիկին մերձ Ս. Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանության անդամների դերը հայ ազգագրության՝ իբրև գիտության կայացման գործում: Նրանք կատարել են հայ մատենագրության հարուստ ժառանգության հետազոտություն, միաժամանակ հայ մատենագրությունը օտարներին են ներկայացրել թարգմանաբար: Հայ մատենագրության կարևորագույն երկերի հրատարակությանը զուգընթաց Մխիթարյանները լույս են ընծայել հին թարգմանությունների լավագույն նմուշները, այդ թվում՝ Աստվածաշունչը և անտիկ գրականություն: Նրանք ծավալեցին նաև հայ քերականագիտական, բառարանագրական վիթխարի աշխատանք՝ «Բառգիրք Հայկազեան

լեզուի», (հ. Ա, Վենետիկ, 1749, հ. Բ, Վենետիկ, 1769), «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», (Վենետիկ, 1836), «Բառգիրք արուեստից և գիտութեանց», «Բառգիրք յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց», «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», «Բառգիրք գործնական գիտութեանց», «Հայ հանրագիտակ»: Պատկառելի էր Մխիթարյանների կրթական-մանկավարժական գործունեությունը (Մուրադ-Ռաֆայեյան վարժարան, կրթօջախներ Արևմտյան Հայաստանում, Թուրքիայում, Սիրիայում, Եգիպտոսում և այլուր): Միաբանության առաջադիմական հայացքներով օժտված սաների մեջ կարելի է առանձնացնել ճանաչված անուններ՝ Մ. Պեշիկթաշլյան, Թ. Թերզյան, Մ. Մամուրյան, Ս. Հեքիմյան, Ծերենց, Դ. Վարուժան, Ա. Արփիարյան, Վ. Փափազյան և ուրիշներ: Անուրանալի է նրանց վաստակը գիտության տարբեր ոլորտների ուսումնասիրության մեջ[1], ինչպես նաև բեղմնավոր գործունեությունը հայ պարբերական մամուլում՝ «Եղանակ Բյուզանդյան», «Բազմավեպ», «Դիտակ Բյուզանդյան» և այլն[2]: Վենետիկի Մխիթարյան միաբանության գիտնականները հայ մշակույթի ու լեզվի ուսումնասիրությանը զուգընթաց առաջին հերթին ուշադրություն դարձրին հայ ազգագրության հարցերին, հայ ժողովրդի տարբեր հատվածների ազգային կյանքի ու կենցաղի, նրա հոգևոր ու նյութական մշակույթի երևույթներին: Այդ տեսանկյունից ուշադրության արժանի են հատկապես Մխիթարյան միաբանության անխոնջ գիտնականներ Ղ. Ինճիճյանի և Մ. Բժշկյանի հնախոսական, տեղագրական-աշխարհագրական, ճանապարհորդական ուղեգրական աշխատությունները, որոնք պարունակում են ազգագրական հարուստ, արժեքավոր և կարևոր նյութեր:

Ղուկաս Ինճիճյան, նրա ազգաբանական գործունեությունը (1758-1833): Ականավոր հայագետ-աշխարհագրագետ, ծնունդով Կ. Պոլսեցի Ղուկաս Ինճիճյանը քաջածանոթ էր Եվրոպայում ձևա-

---

[1] Տե՛ս Գրացուցակ Մխիթարյան տպարանի (1717-1960), Վենետիկ, 1960:

[2] Տե՛ս ***Անթաբյան Փ.,*** Վենետիկի Մխիթարյանների հայագիտական գործունեությունը (միաբանության հիմնադրման 250-ամյակի առթիվ // ՊԲՀ, 1968, թիվ 4, էջ 25-38:

վորված ազգագրության սկզբունքներին, տիրապետում էր մի քանի լեզվի, ուստի հանձն առավ այդ սկզբունքները հայ ազգագրությանը ծառայեցնելու գործին: Ձեռքի տակ ունենալով Մխիթարյանների հարուստ գրականությունը՝ նա ձեռնարկեց մեկ մարդու ուժերից վեր աշխատանք, փորձեց Հայաստանի և հայերի վերաբերյալ հայ և օտար մատենագրության մեջ եղած տեղեկությունները ի մի բերել և դրանց հիման վրա վեր հանել հայ ժողովրդի հազարամյակների ազգագրական նկարագիրը: Ղուկաս Ինճիճյանը թողել է գրական, պատմաաշխարհագրական, աղբյուրագիտական, ազգագրական հարուստ ժառանգություն: «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» (հ. Ա, Վենետիկ, 1802) և «Ստորագրութիւն Հայաստանեայց» (Վենետիկ, 1822) աշխատությունները Հայաստանի վերաբերյալ փաստական նյութի պատմաաշխարհագրական հարուստ շտեմարան էին, պարունակում են նաև պատմաքաղաքական անցքերի, Հայաստանի վարչաձևերի, նախարարական տների, նրանց իրավական դրության, հայ ժողովրդի բարքերի ու սովորույթների, զբաղմունքի, հավատալիքների վերաբերյալ կարևոր տեղեկություններ:

«Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխատությունը: XIX դարի առաջին կեսին Ինճիճյանն առաջինն էր հայագետներից, որ «Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» մեծածավալ եռահատոր աշխատությունում ներառել է մատենագրության մեջ հաստատագրված ազգագրական տվյալներ՝ դրանք խմբավորելով ըստ թեմաների: Այսպես՝ երկրորդ հատորում «Դրօշք, նշանք» խորագրի ներքո ներկայացրել է միջին դարերի հայկական պետական-զինվորական դրոշները, դրանց նշանները: Նա գրում է, որ հայոց դրոշի նշանը նախ արծիվն է եղել, ապա դրան ավելացել է առյուծը: V դարի պատմագիրների վկայությունների հիման վրա նշել է, որ Արշակ թագավորի օրոք արծիվն ու նետը զինանշան են համարվել, որովհետև զինվորները դրանք կրում էին իրենց ճակատներին ու պարանոցին (էջ 235-236): Աշխատությունում տեղ են գտել այլ թեմաներ՝ «Զինուորութիւն Հայաստանեայց», «Սովորութիւն Հայաստանեայց»: Երկասիրության մեջ մատենագրությամբ հավաստված է պատմաազգագրական տեղեկությունների հիման վրա ներկայացված հայոց միջնադարյան ռազմական հանդերձանքը, զինվորների

զգեստները (266-269), պաշտպանական զենքերի տեսակները (248-250), ամրոցները, պարսպաքանդ սարքերը (262-263), վրանները (251-252), ազդարարիչ եղջերափողերը (252-253), ինչպես նաև՝ արքունական կենցաղի որոշ կողմեր՝ թագադրության արարողակարգը, օծումը, պալատականների սովորույթները (278-284), միջնադարյան հայոց ամուսնական սովորույթները (292-293), բարքերը, պետական-նախարարական իրավական նորմերը (300-310), հուղարկավորման ծեսերը (284-293): Բացառիկ տեղեկատվական արժեք են ներկայացնում Ղ. Ինճիճյանի անդրադարձները (երրորդ հատորում) հայոց միջնադարյան զբաղմունքներին, ճարտարապետությանն ու երաժշտությանը, հեթանոսության ու քրիստոնեությանն առնչվող հարցերին, հոգևորականների նիստուկացին, հագուկապին, ծիսական արարողակարգին:

Հայոց հին հավատամքները նա համեմատության մեջ դրեց հին ժողովուրդների նմանատիպ հավատալիքների հետ՝ փորձելով գտնել այդ համակարգում համամարդկային մտածողության արժեքները: Ըստ Ղ. Ինճիճյանի՝ հայոց սիրո և գեղեցկության աստվածուհի Աստղիկը նույն եգիպտական Իսիսն է, հռոմեական Դիանան և հունական Արտեմիսը: Այս համեմատության միջոցով նա փորձեց ի մի բերել հին դարաշրջանի հեթանոսական հավատալիքների հիմքը կազմող տոտեմիզմի և անիմիզմի դրսևորումները՝ մատնացույց անելով վերապրուկային երևույթների առկայությունը իր ապրած ժամանակահատվածում:

Ղ. Ինճիճյանը անդրադարձել է նաև ժողովրդական բժշկությանը, որը հենված է մարդկային փորձի և ճանաչողության վրա՝ փորձելով ի մի բերել մեզանում հայտնի ժողովրդական բժշկագիտության հիմնական սկզբունքները:

Հայ կենցաղավարության մեջ առաջավոր ձևեր մտցնելը Ինճիճյանի վաղեմի նպատակներից էր: Դեռևս 1815 թ. «Ազգասեր» աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել է այդ խնդիրներին: Եվ կենցաղագիտական նոր երևույթները դյուրըմբռնելի լինելու համար հեղինակն այդ աշխատությունը շարադրել է բարբառախառն գրական լեզվով: Այստեղ նա բազմաթիվ օրինակներ է բերել հռոմեացի, հույն, ռուս և այլ ժողովուրդների վարքուբար-

քից՝ չմոռանալով նշել նաև հայկական միջնադարյան կենցաղավարության գեղեցիկ օրինակներ: Այս համապատկերում նա խնդիր է առաջադրել ըմբռնելու ազգային ինքնաճանաչողության ոգին և սուր պայքար մղելու նախանձի, քինախնդրության, բամբասասիրության, չարախոսության, կեղծավորության և նմանատիպ այլ երևույթների դեմ:

Գիտնականի հրատարակած ծավալուն գործերից է «Դարապատում» վերնագրով 8 հատորից բաղկացած աշխատությունը (1824-1827), որը թարգմանվել է ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն: Այստեղ Ինճիճյանը անդրադարձել է տարբեր ժողովուրդների ազգագրական նկարագրին՝ հիմնականում հենվելով իր թարգմանած աղբյուրագիտական նյութերի վրա: Վերջին երկու հատորները նվիրված են գիտության և արվեստի զարգացման պատմությանը, մեծ մտածողների, արվեստագետների, եկեղեցական գործիչների կյանքին ու ստեղծագործությանը:

Մինաս Բժշկյանը (1777-1851)՝ որպես բանահավաք և ազգագրագետ

Մինաս Բժշկյանի հիմնական աշխատություններն են՝ «Ճեմարան գիտելեաց», «Հմտութիւն մանկանց», «Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով...», և «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան»:

Մինաս Բժշկյանը արևմտահայոց մեջ առաջինն էր, որ նպատակադրմամբ հայ և այլ ժողովուրդների կենցաղի ու մշակույթի վերաբերյալ ճամփորդություններով անձամբ արժեքավոր ազգագրական նյութեր գրառեց: Նա հայ իրականության մեջ առաջինն էր, որ գիտակցեց՝ ազգագրության բուն աղբյուրը ժողովրդի բանավոր ժառանգությունն է, այսինքն՝ հույժ անհրաժեշտ է հավաքել և խմբավորել դաշտային ազգագրական նյութերը: Ըստ այդմ՝ իր նշանավոր երկու աշխատությունները («Պատմութիւն Պոնտոսի» և «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան») գրել է հիմնականում տարբեր ժողովուրդներից անձամբ գրառած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա: Այդ գործին հատկապես նպաստել են երկու անգամ երկարատև ճանապարհորդելու պատեհ առիթները, ինչպես նաև Ղրիմի հայկական գաղութում եկեղեցական թեմի առաջնորդի պաշտոն վարելը: Եզակի և բացառիկ արժեքավոր են նրա անդրադարձները ոչ միայն հայոց, այլև այն ժողո-

վուրդների (թուրքեր, հույներ, աբխազներ, աբազներ, չերքեզներ, ինգուշներ, թաթարներ, օսեր, վրացիներ, մեգրելներ, աջարներ, Դոնի կազակներ, բուլղարներ, լեհեր, հունգարներ...) ազգագրական պատկերին, որոնց միջավայրում ապրել են հայերը: Նրա դաշտային ազգագրական հետազոտությունները ականատեսի դիտանկյունից արժանահավատ են և այդ ժողովուրդների պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար հույժ կարևոր սկզբնաղբյուր, նամանավանդ գիտնականի գրքում պահպանված տեղեկությունները այն բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների մասին, որոնց զգալի մասը ձուլվել են թուրքերի հետ: Ճանապարհորդությունը դեպի Պոնտոս՝ Սև ծովի ափերով, սկսել է 1817 թ., որը տևել է ուղիղ երկու տարի: Մ. Բժշկյանն ըստ կարելվույն գրի է առել իր անցած վայրերի վերաբերյալ աշխարհագրական, պատմական, հնախոսական, ճարտարապետական, ազգագրական և այլ կարգի տեղեկություններ:

Այսպես, Պոնտոսի հայերի հիմնական զբաղմունքը եղել է դաշտամշակությունը, պարտիզամշակությունը, ծխախոտամշակությունը, քաթանագործությունը, ընտիր կաթնամթերքների պատրաստումը: Որոշ վայրերում համշենցի հայերը թեև դավանափոխ էին եղել, բայց պահպանել էին իրենց լեզուն, մականունը, իսկ ծերերը շարունակում էին խաչապաշտ մնալ: Աբխազիայի հայերը պահպանել էին ազգային եկեղեցին ու ծիսակատարությունները: Այդ տարածքում ապրող բազմաթիվ ցեղեր ապրում էին տոհմական կարգերով: Նա ականատես է եղել նախնադարից եկող բազմաթիվ ծեսերի և արարողությունների: «Պատմութիւն Պոնտոսի» աշխատությունը այսօր էլ չի կորցրել իր աղբյուրագիտական արժեքը[3]:

Մինաս Բժշկյանին՝ իբրև հայրենասեր մտավորական եկեղեցականի, հուզել է հայկական գաղութների, մասնավորապես լեհահայ գաղութի ճակատագիրը: Գիտնականը ցավով է գրում, որ երբեմնի հզոր լեհահայ գաղութը կանգնած է ուծացման եզրին: Լեհահայերը մոռացել են մայրենի լեզուն, սովորույթները, ծեսերը, ընդունել կաթոլիկություն, և եթե չարվեն լուրջ քայլեր, մի քանի տասնամյակ անց լեհահայ գաղութը ամբողջովին կձուլվի: Ցավոք,

[3] Տե՛ս ***Բժշկյան Մ.,*** Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով ստորագրեալ տեառն Հ. Մինաս վարդապետի Բժշկեան Տրապիզոնցւոյ ի Մխիթարեան միաբանութենէ, ի Վենետիկ, 1819, էջ 58-148:

նրա այս կանխատեսումները իրականացան: Նա հիմնովին ապացուցեց, որ լեհահահայերը երբեմնի Բագրատունյաց մայրաքաղաք Անիի բնակիչներն են եղել, որոնք սելջուկ-թուրքերի արշավանքներից և հայկական թագավորության կործանումից հետո զանգվածաբար գաղթել են Լեհաստան՝ հիմնելով լեհահայ գաղութը:

«Ճանապարհորդություն ի Լեհաստան» աշխատությունը հարուստ է ազգագրական նյութերով: Այն անդրադառնում է նյութական մշակույթին, որը հայերը ստեղծել են Եվրոպայում կամ այնտեղ տարել Անիից՝ եկեղեցական սպասքներ, զգեստներ, Աստվածածնի տախտականկարը: Գիտնականը ներկայացրել է Լեհաստանում և Հունգարիայում հայկական ավանների, արվարձանների ու գյուղերի, եկեղեցիների, վանքերի դպրոցների, աղբյուրների, ժողովրդական կառույցների ստեղծման պատմությունը, մոմի գործարանի կառուցումը, թատրոնի շենքի նախագծի ստեղծումը և այլն: Հունգարիայում 1703 թ. կառուցված Հայաքաղաքը 1820-ական թթ. ուներ 6000 հայ բնակիչ:

Մ. Բժշկյանը ընդարձակ նկարագրություն է թողել հայոց ամուսնական սովորույթների, ազգանվան ձևերի, կտակագրության կարգի, խնամակալության, դպրոցներում երեխաների ուսուցման, ազգային երգարվեստի, երաժշտության և այլ ոլորտների վերաբերյալ:

Լեհահայերի արհեստավորական կազմակերպությունների մասին Մ. Բժշկյանի տեղեկությունները ևս շատ արժեքավոր էին. ըստ նրա՝ կային դերձակների, կոշկակարների, մազմանների, սուրուքճիների (հովիվների), մսավաճառների և այլ համքարություններ, որ կոչվում էին **ցեխմիստը,** լեհերեն՝ **պրասդավայ:** Մինաս Բժշկյանը հանգամանորեն ներկայացրել է հասարակական այս կազմակերպությունների ներքին օրենքներն ու կանոնները[4]:

Ընդհանուր առմամբ Լեհաստանում, Բեսարաբիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Ղրիմում և հայաբնակ այլ վայրերի բնակավայրերում նրա կողմից գրառված նյութերը բացառիկ արժանահավատ են ու եզակի:

[4] Տե՛ս ***Բժշկյան Մ.,*** Ճանապարհորդութիւս ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սիրելոց ի նախնեաց Անի քաղաքին, ի Վենետիկ, 1830, էջ 96-97, 121-133, 156, 178-181, 195-227, 244 և այլն:

Նրա «Ճեմարան գիտելեաց» աշխատությունը, որ շարադրվել է չափածո, հարց ու պատասխանի կարգով, ծառայել է որպես դասագիրք պատանիների համար: Դասագրքում բացատրված են կյանքի բազմաթիվ բնագավառներում հանդիպող երևույթները: Ազգագրական տեսանկյունից ուշագրավը դիցաբանությունն է, հատկապես հունական և հռոմեական առասպելները: Կարևոր են դասագրքի այն հատվածները, որոնք ներկայացնում են աշխարհամասերի բնակչության ռասսայական կազմը, դրանց վիճակագրությունը և քաղաքակրթական աստիճանները[5]:

«Հմտութիւն մանկանց» քառահատոր աշխատությունը՝ որպես ընդհանուր ազգագրության համառոտ ժողովածու, չինացիների, հնդիկների, հարավամերիկյան բնիկների, ճապոնացիների, նորզելանդացիների, աֆրիկացիների, արաբների, թուրքերի, պարսիկների, վրացիների և այլոց կենցաղամշակութային սովորությունների և կրոնական համոզմունքների մասին է: Բժշկյանն իր հավաքած ազգագրական տվյալները, ինչպես նաև այլ գիտնականներից մեջբերածները ցրել է դասագրքերում և ուսուցանել հայ աշակերտությանը, որով ընդհանուր տեղեկություններ էին հաղորդվում աշխարհի ժողովուրդների մասին ազգագրական տեսանկյունից[6]:

1.2. Մ. Թաղիադյանի և Խ. Աբովյանի ազգագրական գործունեությունը

Մեսրոպ Թաղիադքան (1803-1858): XIX դարի առաջին կեսի հայ նշանավոր լուսավորիչ, գրող, մանկավարժ, հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանը թողել է գրական հարուստ ժառանգու-

[5] Տե՛ս ***Բժշկյան Մ.,*** Ճեմարան գիտելեաց որ է համառօտ տեղեկութիւն հարկաւոր գիտութեանց, ազատական արուեստից: Ի պէտս ուսումնասէր մանկանց ի հայր Մինաս վարդապետէ Բժշկեան Տրապիզոնցւոյ, յաշակերտութենէ, ամենապատիւ մեծին Մխիթարայ, Վենետիկ, 1815, էջ 239-278:

[6] Տե՛ս ***Բժշկյան Մ.***, Հմտութիւն մանկանց ի պէտս ազնուազարմ Տիրան մանկան Աղեքսանեան ի հայր Մինաս վարդապետէ Բժշկեան ի Մխիթարեան միաբանութենէ, բաժանեալ ի չորս մասունս, ի Վենետիկ, 1818, էջ 56-57, 70-96:

թյուն, որի մի մասն է միայն հրատարակված: Նրա անտիպ գործե-րի մի զգալի մասը դեռ ուսումնասիրված չեն: Թաղիադյանը դեռ-ևս պատանեկության տարիներից գրի է առել իր տեսած ու լսած պատմական իրադարձությունները, ինչպես և ազգագրական ու հնագիտական նյութեր, ժողովրդական զրույցներ ու երգեր, առակներ ու ասացվածքներ, տպագրության է պատրաստել «Պսակ» խորագրով մի ժողովածու, ուր ամփոփված են եղել հայ-կական հարսանեկան երգեր, ծեսերի, սովորույթների նկարագրու-թյուններ: Հավաքած նյութերի հիման վրա հետագայում կազմել է նաև «Ծիսարան» և «Մաշտոց» խորագրերով ժողովածուներ:

«Ճանապարհորդություն ի Հայս», «Դիցաբանություն» աշ-խատությունների բնույթը, նշանակությունը, ավանդը հայագի-տության, առանձնապես հայ ազգագրության մեջ:

«Ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ տեղե-կություններ կան Քանաքեռի, Օշականի, Կարբիի, Մեղրիի և այլ վայրերի այգեգործության, դաշտերը ոռոգելու համակարգերի մա-սին, նկարագրվում են Էջմիածնի վանքի կալվածքները և տնտե-սությունը, մասնավորապես՝ վարուցանքը, բերքահավաքը, գյուղգործիքները, խոսվում է Զրվեժում ընտիր ձեթ ստանալու միջոցների, եղանակների, Նորքում կավե անոթների արտադրու-թյան, Արարատյան հովտում բամբակամշակության, Սյունիքում երկաթամշակության և հայ բնակչության տնտեսության այլ զբաղմունքների վերաբերյալ: Նա ուշագրավ տեղեկություններ է հաղորդում գետնափոր խրճիթներում և վրանաբնակ վաչկատուն կյանք վարող **Սեղլու** և **Ղարափափախ** անվանումներով ցեղերի կեն-ցաղի, զբաղմունքների ու տարազի, տղամարդկանց ավազակությամբ զբաղվելու մասին: Մանրամասն խոսում է Արևելյան Հայաստանի գետերը նավարկելի դարձնելու և առևտրական նպատակներին ծա-ռայեցնելու, երկրի հարուստ ընդերքը օգտագործելու, խոպանացած դաշտերը բերքատու դարձնելու, արհեստների զարգացման բազմա-պիսի հնարավորությունների և այլ միջոցառումների մասին: Դա մի ընդարձակ ծրագիր էր, որով նա գիտնականի խորիմացությամբ փոր-ձում էր կռահել երկրի արտադրողական ուժերի կազմակերպման իրական հնարավորությունները, ճանապարհ բացել կապիտալիզմի զարգացման համար: Թաղիադյանն առաջարկում էր կազմակերպել

ընկերությունների լայն ցանց Արևելյան Հայաստանում, ամրապնդել կապը ինչպես արևմտյան հատվածի, այնպես էլ գաղութահայության հետ, նպաստել հայրենադարձության, հայ առևտրականների կապիտալները սեփական հողի վրա օգտագործելու և խոպանացած երկիրը շենացնելու համար[7]:

Մ. Թաղիադյանի՝ 1830 թ. հրատարակած «Դիցաբանութիւն» աշխատության մեջ, որի նյութերը քաղված են հունական առասպելաբանությունից, զուգահեռ նյութեր են բերվում հայկական, հռոմեական, պարսկական իրականությունից՝ հարց ու պատասխանի ձևով:

Մ. Թաղիադյանի աշխատությունները ոչ միայն գրական գործեր են, այլև ուշագրավ ազգագրական աղբյուրներ: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հիշատակել Մատենադարանի՝ Աշոտ Հովհաննիսյանի դիվանում պահպանված՝ Մ. Թաղիադյանի՝ 1828 թ. հոկտեմբերի 8-ին Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակը, որտեղ Թաղիադյանը վերջինիս առաջարկում է հայության ազգային լուսավորության և կուլտուրական շինարարության մի ընդարձակ ծրագիր, ուր բացահայտվում են երիտասարդ լուսավորչի խորհրդածությունները ազատագրված հայրենիքի հոգևոր զարթոնքի և վերածնության համար բացված նոր ուղիներ մասին[8]: Նրա գործունեությունը կարևոր նշանակություն ունեցավ նշանավոր երկու ազգագրագետների՝ Խ. Աբովյանի և Մ. Բժշկյանի համար:

Խաչատուր Աբովյան (1809-1848): Խ. Աբովյանը հայագիտության մեջ գնահատված է որպես հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ ու մանկավարժ[9], սակայն, ցավոք, նրա ազգագրական ժառանգությունն առ այսօր ամբողջովին ուսումնասիրված ու պատշաճ գնահատված չէ, մինչդեռ նա մեծ դեր է խաղացել հայ գիտական ազգագրության հիմնադրման գործում: **Արևելահայ իրականության մեջ նպատակամիտված ազգագրական և բանա-**

[7] Տե՛ս ***Թաղիադյան Մ.,*** Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, գրական ժառանգություն 9, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 23-93:

[8] ***Թաղիադյան Մ.,*** նշվ. աշխ., էջ 390-413:

[9] Տե՛ս ***Հակոբյան Պ.,*** Խաչատուր Աբովյան: Կյանքը, գործը, ժամանակը (1809-1848), Երևան, 1967:

հյուսական նյութերի գրառումը նախաձեռնողը հենց Խ. Աբովյանն էր: Նա դարձավ Արևելյան Հայաստանի ազգագրության առաջին գիտական նկարագրողն ու հայ ազգաբանության սկզբնավորողը[10]: Ինչպես Եվրոպայում ու Ռուսաստանում XVIII դարում, այնպես էլ Հայաստանում XIX դարի առաջին կեսին գեղարվեստական գրականությունն սկսեց փոխել իր ուղղությունը՝ ստեղծագործության նյութ դարձնելով ազգային սովորություններն ու բարքերը: Աշխարհիկ գրականության խմորման այս շրջանում հանդես եկող հայ գրողների ու բանաստեղծների երկերում արդեն նկատելի էին ազգագրական տվյալների դրսևորումները, բայց տակավին հաղթահարված չէր գրաբարյան լեզուն (Մ. Թաղիադյան և ուրիշներ): Այդ նոր գրական ուղղությանն անհրաժեշտաբար պետք էր աշխարհիկ լեզու, որով միայն կարելի էր ազգային ոգին արտացոլել գեղարվեստական գործերի մեջ: Այդ դարակազմիկ մեծ գործը վիճակված էր մեծ գրողին ու լուսավորչին՝ Խ. Աբովյանին: Ազգագրության հախուռն մուտքը հայ գրականության մեջ և Աբովյանի ստեղծագործությունների միջոցով մեզ հասնելը պատահական չէր, այլ հասարակական զարգացման, քայքայվող ավատական-նահապետական կյանքի և բուրժուական հարաբերությունների ներթափանցման արդյունք: Ազգագրությունը՝ որպես ժողովրդի կենցաղի բուն արտահայտություն, XIX դարի առաջին կեսին դարձել էր ազգային հպարտության առարկա, վերադարձ ազգային հնավանդ սովորություններին ու կենցաղի «գեղեցկություններին», նահապետական «երանավետ» կյանքի գովաբանմանը, ազգային «ոգու» ոգեկոչմանը, դրանց իդեալականացմանը: Խ. Աբովյանը, ազգագրության գրառումով ու դրա հիման վրա վեպեր ու զրույցներ կազմելով, նպատակ ուներ հայրենասիրական, ազատասիրական զգացմունքներ արթնացնելու, երկրի տնտեսական, մշակութային կյանքը առաջ մղելու:

Աբովյանը հայկական կենցաղը մոտիկից էր ճանաչում: Նրա գործերում ժողովրդասիրության շնորհիվ ազգագրական ուղղությունը դեմոկրատական բնույթ ստացավ: Դրան մեծապես նպաստեց ռուսական և եվրոպական առաջավոր միտքը: Նրա՝ ազգա-

[10] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, թիվ 3 (188), էջ 132-148:

գրությամբ զբաղվելը պայմանավորված էր նախ Դորպատի համալսարանում ուսումնառությամբ, երբ շփվեց ռուսական և եվրոպական ազգագրական գիտության հետ, իսկ մյուս խթանը Պարրոտի և նրա խմբում ընդգրկված եվրոպական այլ գիտնականների այցն էր Արևելյան Հայաստան՝ Արարատի դագաթը բարձրանալու նպատակով: Պարրոտի հորդորանքով և խնդրանքով Աբովյանը սկսեց զբաղվել ազգագրությամբ, ընդ որում՝ նրա բոլոր ազգագրական գործերը գրվել են գերմաներեն և շուրջ մեկ դար մնացել չհրատարակված: Այս պատճառով Խ. Աբովյանի ազգագրական ժառանգությունը մնացել էր անհայտ: Միայն 1940-1950-ական թթ., երբ ձեռնարկվեց Աբովյանի երկերի 10 հատորյակի հրատարակումը, ազգագրական աշխատություններն առաջին անգամ թարգմանվեցին հայերեն և հրատարակվեցին:

Ռուսական առաջավոր մտքի և եվրոպացի ճանապարհորդների բարերար ներգործությունը մեծ ազդակ էր Աբովյանի ազգագրական գործունեության կայացման գործում:

Աբովյանը եվրոպացի ճանապարհորդների ուղեկիցն ու բացատրողն էր: Նրանք Աբովյանի առաջնորդությամբ շրջել են Հայաստանի մի շարք գավառներում (խոսքը Պարրոտի, Հաքստհաուզենի, Վագների, Բոդենշտեդտի և այլոց մասին է (Ռ. Ն.), որոնց հրատարակած ազգագրական նյութերը հայերի մասին մեծ մասամբ ներկայացրել է ինքը Աբովյանը: Յուրացնելով ժամանակաշրջանի առաջադիմական գաղափարները, ծանոթանալով եվրոպական քաղաքակիրթ կենսակերպին՝ Աբովյանը վերադարձավ հայրենիք լուսավորական և քաղաքակրթական մեծ առաքելությամբ ու ծրագրով: Նա եղավ իր դարաշրջանի առաջին բանագետն ու բանահավաքը, իր երկերում քննարկեց այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հայոց քաղաքային և գյուղական կյանքը, ազգային փոքրամասնությունները, ազգային ծեսերի ու սովորույթների ազգագրական բնութագրությունը[11]:

Աբովյանի հաղորդած ազգագրական նյութերը մեզ են հասել երկու ճանապարհով՝ ցրված լինելով գրական ստեղծագործությունների մեջ և հատուկ նպատակադրումով ուսումնասիրված լինելով: Աբով-

[11] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Աբովյանը՝ քրդերի ազգագրության հետազոտող // «Էջմիածին», 2011, Ա., էջ 76-90:

յանի ցանկացած գործ ազգագրական անսպառ նյութ է պարունակում: Նշենք, որ, բացի գեղարվեստական արձակից ու չափածո ստեղծագործություններից, Խ. Աբովյանը զբաղվել է զուտ ազգագրական հետազոտություններով՝ անդրադառնալով ազգագրական խնդիրների: Խ. Աբովյանն էլ Մ. Բժշկյանի նման նպատակամիտված գրի է առել հայ և այլոց ազգագրական ամբողջական նյութերը: Ազգագրության մեջ շատ քիչ բնագավառներ կարելի է մատնանշել, որոնց վերաբերյալ Աբովյանը նյութեր չի գրանցել:

Խ. Աբովյանի ազգագրական ուսումնասիրություններից են՝ «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին», «Գյուղական տների կառուցվածքը», «Քրդեր և եզդիներ», «Թիֆլիզու հայոց հանգստարանը», «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին», «Համառոտ ակնարկ հայերի մասին», «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը», «Ռուսական իջևանատների մասին» և այլն, որոնց մեծ մասը գրվել է եվրոպացի վերոնշյալ ճանապարհորդների խնդրանքով ու խորհրդով:

1840 թ. գերմաներեն գրված «Ակնարկում» աղբյուրագիտական կարևորությամբ ներկայացված են Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունները: Այսպես՝ հայ աղջիկը կարող էր ամուսնանալ 14 տարեկանից, փեսացուի ով լինելը կարևոր չէր, միայն թե օժիտի հոգսից ազատվեին: «Ակնարկում» ներկայացված ամուսնության կազմակերպման մի քանի սովորություններից էին՝ օրորոցախաղը, միայն հոր կամքով տղա և աղջիկ ամուսնացնելը, ընտրության համար առավելությունը ոչ այնքան գեղեցկությանը, որքան աշխատունակությանը տալը, կանանց և տղամարդկանց կողմից միջորդությունների դիմելը, միջնորդների աղջկա ծնողների միջև երկար ու բարակ երկխոսությունները, որոնք Աբովյանը բնորոշել է իբրև հայկական ճարտասանության ձևեր: Գրողը անդրադարձել է «օժիտ», «գլխագին» եզրույթներին՝ ընդունելով գլխագնի գոյությանը հայ իրականության մեջ և չկարողանալով էական տարբերություն գտնել այս երկուսի միջև: Ի դեպ, մեր ուսումնասիրություններում մերժվում է գլխագնի գոյությունը հայ իրականության

մեջ[12]: Ամբողջովին ներկայացված է Թիֆլիսի հայկական հարսանեկան ծիսաշարը՝ հայկական ինքնատիպ սովորություններով հանդերձ: Կարևոր տեղ է հատկացված նաև ընտանեկան հարաբերություններին, կանանց իրավազուրկ վիճակին: Գրողը մանրամասնորեն նկարագրել է Թիֆլիս քաղաքի տոնավաճառներն ու շուկաները, առևտուրը, ներմուծվող ու արտահանվող ապրանքների տեսականին: Նաև խոսվում է Թիֆլիսի վերակառուցման, շենքերի, շինարարության մեջ եվրոպական ոճի կիրառման, իշևատների, հյուրանոցների, քաղաքային տարազի եվրոպականացման գործընթացների, կահույքի, երաժշտության, արհեստագործության, հյուրասիրության կանոնների, խնջույքի ձևերի և այլնի մասին: Աբովյանի վկայությամբ Թիֆլիսն ուներ 3000 տուն և 40 հազար բնակիչ, որոնց մեծ մասը հայեր էին: Նրա վկայությամբ քաղաքում զարգացած են եղել մի շարք արհեստներ՝ ատաղձագործությունը, դերձակությունը, դարբնությունը, ժամագործությունը և այլն:

Աբովյանը մանրամասն անդրադարձել է Թիֆլիսի ազնվականների ակումբի գործունեությանը, դպրոցներին, գիմնազիաներին, հոգևոր սեմինարիաներին, մեծ դրվատանքով՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցին: Ակնարկելով քաղաքի բնակչության տարազի մասին՝ նա գրել է. «Եվրոպացու համար տարօրինակ պիտի թվա Թիֆլիսում տեսնել այնքան տարբեր հագուստներ, դիմագծեր, լեզուներ... Նա կպատկերացնի իրեն մի ոտքով Ասիայում, իսկ մյուսով՝ Եվրոպայում»: Տեղացի պաշտոնյաներն ու վաճառականները «փոխարինել են իրենց ազգային հագուստը եվրոպականով: Գեղեցիկ սեռն էլ օրեցօր տարվում է այդ կրքով և փոխում է իր նախկին կերպարանքը»: Նույն պատկերն ունեն հասարակական զվարճանքներն ու տան կահկարասին: Ընդարձակ հաղորդում ունի հայկական ուտեստի, խնջույքի կազմակերպման ձևերի, հանքային տաք բաղնիքների, ժողովրդական տոնախմբությունների և այլնի մասին[13]:

---

[12] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (պատմաազգագրական ուսումնասիրություն), ԵՊՀ հրատ., 2007, էջ 81-94, նույնի՝ Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, Ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի հասարակագիտական ֆակուլտետների ուսանողների համար, Երևան, 2009, էջ 85-91:

[13] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Վերք Հայաստանի // Երկեր, կազմեց Հ. Ֆելեքյան, Առաջաբանը՝ Պ. Հակոբյանի, Երևան, «Սով. գրող», 1984, էջ 600-644:

Աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է քաղաքաբնակ հայության բարքերն ուսումնասիրելու համար[14]:

«Գյուղական տների կառուցվածքը» հոդվածում անդրադարձել է գյուղական կյանքին, Քանաքեռի ժողովրդական շենքերի տեսակներին ու կահկարասուն: Ելնելով իր հայրական տան օրինակից՝ Խ. Աբովյանը հետազոտման նյութ դարձրեց հայոց ժողովրդական բնակարանի և նրա օժանդակ կառույցների ուսումնասիրությունը: Հետագայում ժողովրդական բնակարանի և նրա համալիրի հետազոտությունը դարձավ հայ ազգագրության կարևոր խնդիրներից մեկը:

Խ. Աբովյանը տվել է XIX դարի առաջին կեսի ժողովրդական ճարտարապետության նկարագիրը, որն այսօր ևս օգտակար է ժողովրդական ճարտարապետությամբ զբաղվողների համար: Խ. Աբովյանի նկարագրությունը վերաբերում է բազմաբաժին շենքին, որի մեջ մտնում էին թոնրատուն-խոհանոցը, նրան կից, բակից առանձին բացվող մուտքով հյուրասենյակը, մառանը, ննջարանները, գոմը, մարագը և այլն: Մեկ բաժնով շենքեր սովորաբար ունեցել են գյուղի չքավոր ընտանիքները: Նա անդրադարձել է նաև գյուղական ներքին կյանքին, շինականների ընտանեկան հարաբերություններին և ամուսնության հարցերին, ուր առանձնակի ուշադրության են արժանացել չխոսկանության և դրա հետ կապված ավելորդ սովորությունները, սեփականության ժառանգմանն առնչվող իրավահարաբերությունները, ավագության կարգի պահպանվածությունը: Հոդվածում ներկայացված են կենցաղավարության ձևերը թոնրատանը, այգինեում, հյուրեր ընդունելու կարգը, կանանց և տղամարդկանց ժամանցները կազմակերպելու եղանակները, սեռահասակային խմբեր կազմելու սովորությունները: Խ. Աբովյանը նկարագրում է նաև ժողովրդական ու կրոնական տոները և ուխտագնացությունները, հարսանեկան ու այլ հանդեսներին երիտասարդների լռակյաց ընտրությունների ձևերը և այլն:

---

[14] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Աբովյանը որպես ազգագրագետ // «Աբովյանագիտական հոդվածների հատընտիր ժողովածու», Երևան, 2007, էջ 123-130, նույնի՝ Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ // «Էջմիածին», 2007, Ա, էջ 88-94, նույնի՝ Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում // Գիտական աշխատություններ VIII, 2005, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Գյումրի, 2005, էջ 53-59:

Նշված հոդվածը XIX դարի առաջին կեսի հայոց ներքին կյանքի ու սովորույթների, մանկական հուշերի մի ամբողջական պատկեր է: Այստեղ Խ. Աբովյանը նկարագրել է հայկական ընտանիքի կազմը, անդամների փոխհարաբերությունները, ավագության կարգը, նահապետի անսահմանափակ իշխանությունը, տնտեսական հարաբերությունները կանոնակարգող սովորութային իրավունքի նորմերը: Ուշագրավ նկարագրություն է թողել գյուղական տնտեսական կենցաղի, ժողովրդական հավատալիքների և տոների վերաբերյալ[15]: Աշխատությունը Աբովյանը 1843 թ. օգոստոսի վերջին Երևանում հանձնել է պրուսացի ճանապարհորդ Ա. Հաքստհաուզենին, որը դրա մի մասը բառացի կամ վերապատմած ձևով մեջբերել է իր «Անդրկովկաս» աշխատության մեջ: Այս աշխատությունը առաջին ազգագրական երկն է մեզանում, գրված է Դորպատում՝ 1834-1835 թթ. ընթացքում:

«Քրդեր և եզդիներ» ուսումնասիրության մեջ Աբովյանը ներկայացնում է այդ ժողովուրդների սովորությունները, հեթանոսական և մահմեդական կրոնը, զբաղմունքները, ամուսնական կարգը և բարքերը: Քաջ տիրապետելով քրդերենին և բազմիցս հյուրընկալվելով քրդերի ցեղային առաջնորդների վրաններում՝ նա առատորեն գրառեց ազգագրական ու բանահյուսական նյութեր: Նրա հրապարակումները մեծ հետաքրքրություն առաջացրին քրդերի ու եզդիների հանդեպ Եվրոպայում, որով այսօր իրավամբ Աբովյանը համարվում է այդ ժողովուրդների ազգագրության ու բանահյուսության հիմնադիրը[16]:

Վարժվելով բանահավաքի ծանր գործին՝ Աբովյանն ի վերջո հանգել է այն հետևությանը, որ ճանաչելով իր ժողովրդի կենցաղը՝ պետք է անդրադառնալ նրա վերափոխմանն ու քաղաքակրթմանը: Այդ ամենի առհավատչյան եղավ 1836 թ. Մոսկվայում գրած «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» ցարական կառավա-

---

[15] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Վերք Հայաստանի, էջ 555-599, ***Նահապետյան Ռ.,*** Աբովյանը որպես ազգագրագետ, էջ 123-130, նույնի՝ Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ, էջ 88-94:

[16] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958, էջ 243-278, ***Նահապետյան Ռ.,*** Աբովյանը՝ քրդերի ազգագրության հետազոտող, էջ 76-90:

ությանը ուղղված դիմում-գրությունը: Նրանում ներկայացված է Արևելահայաստանի տնտեսական ու մշակութային բարեփոխումների մի ծրագիր, որը ներառում է նաև հայ ժողովրդի ապրելակերպի եվրոպականացման, քաղաքակրթելու, դպրոցաշինության, ինստիտուտներ հիմնելու, մասնագետ կադրեր պատրաստելու, հին, իր դարը ապրած գյուղատնտեսությունը վերափոխելու, տեխնիկական նորամուծություններ կատարելու, հացահատիկային, այգեգործական, տեխնիկական բույսերը նոր հիմունքներով մշակելու, տնտեսական, մշակութային դրության բարելավմանը հասնելուն ուղղված առաջարկներ և այլ հարցեր: Դա ինքնին մի ծրագիր էր՝ Արևելյան Հայաստանը տնտեսական ու մշակութային տեսանկյուններից ոտքի հանելու, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը առաջադիմական հիմքերի վրա դնելու, նոր մասնագետներ պատրաստելու համար: Նա իր ծրագրում առաջարկում էր ուսումնասիրել հողերի հատկությունները, դրանք մշակել համատեղ ուժերով, ցանել այնպիսի կուլտուրաներ, որոնք ավելի շահութաբեր կլինեն վաճառքի համար: Նա կարծիք է հայտնում, որ Հայաստանում կարելի է խրախուսել մետաքսի, բամբակի, կանեփի, ծխախոտի, բուսական ներկերի արտադրությունները: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հայ ժողովրդի կրթությանը և այլն[17]:

«Ակնարկ հայերի մասին» ուշագրավ հոդվածում հայրենասեր գործիչը ցասումով է արձագանքում Շուշիի բողոքական քարոզիչներ Ավգուստ Դիտրիխի և Ֆելիցիան Զարեմբայի՝ «Հայ ժողովրդի արդի վիճակի պատմական նկարագրություն» վերտառությամբ աշխատության դեմ, որում նրանք Եվրոպայի կրթված հասարակությանն են ներկայացնում հայ ժողովրդին վերագրվող միայն թերությունները, արատները: Չհանդուրժելով նրանց դիտավորությունները՝ Աբովյանը գերմաներեն գրում է «Ընդդեմ զրպարտիչների» և «Ակնարկ հայերի մասին» պատմաազգագրական ուսումնասիրությունները, որոնք նախատեսված էին եվրոպացի ընթերցողների համար: Ուսումնասիրության նպատակն էր ցույց տալ Հայաստանն ու հայերին այնպես, ինչպես կան իրենց մտածողությամբ, վարքով, բարքով, կենցաղով, առանց կանխակալ այն

[17] ***Աբովյան Խ.,*** Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 154-190, ***Նահապետյան Ռ.,*** Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ, էջ 93-94:

միտումի, որոնցով աչքի էին ընկնում բողոքական և կաթոլիկ քարոզիչների՝ տարբեր լեզուներով հրատարակած ճանապարհորդական նոթերը[18]:

Խ. Աբովյանի «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը» հոդվածում ընդգծված են հայոց հոգևոր և աշխարհիկ երաժշտության խորապես ազգային բնույթը և ինքնատիպությունը: Ըստ Աբովյանի՝ եկեղեցական երաժշտության ակունքները պետք է փնտրել ժողովրդական երաժշտության մեջ[19]: Հետագայում Խ. Աբովյանի այս թեզը զարգացրին Կարա-Մուրզան և հատկապես Կոմիտասը:

Առանձին ուշադրության արժանի է «Թիֆլիզու Հայոց Հանգստարանը» պատմվածքը: Այստեղ մանրամասնորեն ներկայացված են հուղարկավորությունը, սգալու ձևերը, սգո հագուստները, ինքնախարազանման, կոծելու, երեսին հող քսելու, ճանկռելու, գլխի մազերը պոկելու, բացականչություններ անելու սովորությունները և այլն: Կարելի է ասել, որ պատմվածքն ամբողջությամբ ազգագրական բնույթի գործ է: Նկարագրվող դեպքերը կատարվել են 1841 թ. փետրվարի առաջին տասնօրյակին: Նախնական տարբերակը գրվել է 1841 թ. փետրվար-Հունիս ամիսներին: Սույն ակնարկում հստակորեն շարադրված են Աբովյանի ծրագրերն ու ըմբռնումները հայ ժողովրդի լուսավորության ուղիների մասին, որոնց գլխավոր նպատակն էր բարձրացնել ժողովրդի, հատկապես անգրագետ գյուղացիության դիմադրողական ոգին՝ ընդդեմ սոցիալական ճնշման և տգիտության չարիքների: Խոսքը Թիֆլիսի Վերա թաղամասի գերեզմանոցի մասին է՝ հիմնված 1830-ական թթ. վերջերին, որն այլևս գոյություն չունի[20]:

Ազգագրական ուշագրավ տեղեկություններ են պարունակում նրա օրագրերը: Այստեղ արծարծված հարցերն են՝ գերմանացիների և այլոց կենցաղավարությունը, հյուրասիրության կարգը, Աբովյան գերդաստանի ավանդական ուխտագնացություններն

[18] ***Աբովյան Խ.,*** Երկերի լիակատար ժողովածու, հ. 8 էջ 32-42:

[19] Տե՛ս նույն տեղում, հ. 10 (լրացուցիչ), Երևան, 1961, էջ 105-113, ***Նահապետյան Ռ.,*** Աբովյանը որպես ազգագրագետ, էջ 128-129:

[20] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Վերք Հայաստանի, էջ 645-652, ***Նահապետյան Ռ.,*** Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ, էջ 93:

էջմիածին և այլն:

Խ. Աբովյանը նկարագրել է նաև տարբեր ժողովուրդների՝ հռոմեացիների, հույների, անգլիացիների, ավստրիացիների, ռուսների, հնդիկների և այլոց հնագույն ու միջնադարյան սովորույթները՝ քաղելով իր ժամանակի գրականությունից: Նա հայ և օտար ժողովուրդների ազգագրությամբ զբաղվել է գիտնականի մակարդակով ու բարեխղճությամբ:

«Վերք Հայաստանի» վեպի, «Առաջին սեր», «Թուրքի աղջիկը» պատմվածքների և բանահյուսական երանգավորմամբ այլ գործերի ազգագրական բնույթը և ուղղվածությունը:

«Վերք Հայաստանի» վեպը Այրարատ նահանգը ներկայացնող, ազգագրությամբ հագեցած երկասիրություն է: Հեղինակի գեղարվեստական արձակում առհասարակ տեղ են գտել հայ ժողովրդի զբաղմունքների՝ երկրագործության, այգեգործության, բերքահավաքի ու կալսելու, անասնապահության, որսորդության վերաբերյալ նկարագրություններ: Նյութական մշակույթից ներկայացված են բնակարանը, զգեստը, զարդերը, ասեղնագործությունն ու կահույքը, փոխադրամիջոցների տեսակները, զենքերը, երաժշտական գործիքները, ուտեստները: «Վերքում», և այլուր առանձին ուշադրություն է դարձվել ժողովրդական մարտական խաղերին, ձիով մականախաղերին, գնդակախաղերին: Ժողովրդական տոներից հատկապես Ծաղկավանքում պատկերված է Վարդավառի տոնակատարությունը: Հոգևոր մշակույթի առումով նյութեր ունի կենդանիների, ջրի, արևի, չար ու բարի ոգիների, վիշապների, քաջքերի պաշտամունքի վերաբերյալ[21]:

«Առաջին սերը» պատմվածքն ունի երկրորդ վերնագիր ևս՝ «Ծաղկեվանք»: Նկարագրելով գեղջուկների ամենամյա ուխտագնացությունները դեպի Արայի լեռան լանջերին թառած Հնօրյա վանք և այդտեղի ծիսակատարությունը՝ Աբովյանը զուգահեռաբար ներկայացրել է մեր ժողովրդի կենցաղն ու բարոյագիտական ըմբռնումները: Աբովյանը նպատակ է ունեցել երկը լրացնելու նոր դրվագներով՝ տալ Ծաղկեվանքի ու նրա հետ կապված տոնի պատմաազգագրական տեսությունը, որը չի հասցրել իրականացնել[22]:

«Թուրքի աղջիկը» ունի նաև ենթավերնագիր՝ «Զորություն կրոնի», որից հետևում է, որ տվյալ երկում հեղինակին զբաղեցնողը մարդկության պատմության մեջ կրոնների խաղացած բացա-

[21] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Վերք Հայաստանի, էջ 3-253:
[22] Տե՛ս նույն տեղում, էջ 254-272:

սական դերի քննադատությունն է և մարդուն վերացնող, նրա հոգում վառված դժոխքը դրախտի վերափոխող նոր կրոնի՝ սիրո կրոնի բնութագիրը ու փառաբանումը: Ներկայացված ակնարկները Խ. Աբովյանի ազգաբանական գործունեության չափազանց հակիրճ բնութագրությունն է միայն[23]:

Ամփոփելով ասենք՝ Խ. Աբովյանը առաջինն էր մեզանում, որ իր երկերի նյութը դարձրեց հայ գյուղաշխարհի, գեղջուկ հայի կենցաղը, XIX դարի սկզբներին հայությանը հուզող պատմական, քաղաքական և մշակութային խնդիրները: Նրանից սկսած՝ հայ աշխարհն իր սոցիալ-քաղաքական միջավայրով, ազգային կյանքի յուրահատկություններով դառնում է գրականությունը սնուցող հիմնական աղբյուր: Աբովյանի երկերը ընդգրկում են XIX դարի առաջին քառորդի հայ սոցիալական, տնտեսական, քաղաքական, կենցաղային և մշակութային կյանքի բոլոր ոլորտները և կազմում են մեր կյանքի այդ ժամանակաշրջանի հանրագիտարանը: Ցավոք, բանահավաքման հորդորական ծրագրեր չստեղծվեցին ո՛չ Մ. Բժշկյանի և ո՛չ էլ Խ. Աբովյանի կողմից:

Մինաս Բժշկյանի և Խ. Աբովյանի գործերն անտիպ կամ գրաբարատիպ լինելու հետևանքով անմիջական հետևորդներ և ազգագրական ուսումնասիրություններ չեղան: Ազգագրագետներից տողերիս հեղինակը վերջին տասնամյակում իր ուսումնասիրություններում կարևորեց նրանց խաղացած դերը հայ ազգաբանության՝ իբրև ուրույն գիտության կայացման գործում:

Տարերային բանահավաքչության հաղթահարումը մասամբ գտնում ենք նաև XIX դարի առաջին կեսի մամուլում: Եթե մինչ այդ ազգագրական ու բանահյուսական երևույթները գրի էին առնվում իբրև օժանդակ նյութեր, ապա այս շրջանի մամուլում, հատկապես 1840-1850-ական թվականներին սկզբնավորվեց նպատակային բանահավաքչությունը՝ ազգային ինքնագիտակցության արթնացման գաղափարական ազդեցությամբ պայմանավորված: Ազգագիր բանահավաքները մամուլում հանդես էին գալիս իբրև այդ գաղափարները կրողներ, օգտագործում էին ազգագրության գեղեցիկ նմուշները հատուկ նպատակներով: Մամուլի միջոցներից հարկ է առանձնացնել հետևյալները՝ «Ազդարար Բյուզանդ-

[23] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Վերք Հայաստանի, էջ 273-289:

յան» (շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1840-1841), «Արշալույս Արարատ-յան» (Զմյուռնիա, 1840-1887), «Հայրենասեր» (շաբաթաթերթ, Զմյուռնիաս, 1843-1846, 1830-1842 թթ. հրատարակվել է «Ազգա-սեր» խորագրով), «Հայաստան» (շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1846-1852), «Եվրոպա» (շաբաթաթերթ, Վիեննա, 1847-1858), «Բանա-սեր» (տասնօրյա, Մադրաս, 1848-1849), «Ուսումնասեր» (լրագիր, Սինգապուր, 1849-1853) և այլն: Սրանց հրապարակումներում ուղղակի կամ անուղղակի շատ անդրադարձներ կան ժողովուրդ-ների սովորույթների, վարքուբարքի, առանձնապես հասարակա-կան կենցաղին և հոգևոր մշակույթի վերաբերյալ:

Տարերային բանահավաքչության հաղթահարումը հիմնակա-նում պայմանավորված էր ազգագրական հարցարանի ստեղծման հանգամանքով: XIX դարի երկրորդ կեսի սկզբներին առանձին անհատներ արդեն գիտակցում էին բանահավաքչության, դաշտա-յին ազգագրական հետազոտություններ կատարելու, ազգագրա-կան հարցարաններ ստեղծելու կարևորությունը[24]: Նրանց թվում էին հատկապես Սրվանձտյանցը և Գ. Խալաթյանցը:

Այսպիսով՝ XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի 50-60-ական թվականները բնութագրվում են որպես ազգագրական նյութերի առավել արդյունավետ գրանցման, հայ ազգագրության և բանահյուսության՝ իբրև գիտության ուրույն ոլորտի սաղմնա-վորման, ձևավորման առաջին պարբերաշրջան, որն աչքի է ընկ-նում հայագիտական հրատարակությունների առատությամբ, երբ սկսեցին հրապարակվել նաև քննական հետազոտական աշխատու-թյուններ: Հայաստանում ազգագրական գիտության կայացման գործում բացառիկ դրական դեր խաղացին արևելահայ իրականու-թյան մեջ Մեսրոպ Թաղիադյանը և Խաչատուր Աբովյանը, իսկ գաղթօջախներից Վենետիկում՝ Մխիթարյան միաբանության նշա-նավոր հայագետներ Ղուկաս Ինճիճյանը, Մինաս Բժշկյանը և այլք: Ազգագրական և բանահյուսական նյութերի անսպառ աղ-բյուր դարձավ նաև ժամանակի մամուլը:

[24] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը, էջ 137:

3. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ՝ ԱԶԳԱԳՐԱԳԵՏ

Խ. Աբովյանը հայագիտության մեջ գնահատված է որպես հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ ու մանկավարժ, սակայն, ցավոք, նրա ազգագրական ժառանգությունը առ այսօր մնում է չուսումնասիրված և պատշաճ չգնահատված, մինչդեռ Խ. Աբովյանը իր թողած ազգագրական ժառանգությամբ մեծ դեր է խաղացել հայ գիտական ազգագրության հիմնադրման գործում: Խոսքը Խ. Աբովյանի թե՛ բուն ազգագրական ու բանագիտական գործերի մասին, որոնք նա գրել է հատուկ մտադրությամբ, և թե՛ այն ազգագրական երևույթների մասին, նա օգտագործել է իր գեղարվեստական ստեղծագործություններում:

Հայ ազգագրությունը լայն արտացոլում է գտել Խ. Աբովյանի երկերում: Այդ տեսանկյունից միայն Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը հայ ժողովրդական ավանդական կենցաղի, ծեսերի ու սովորույթների, բարքերի մի հարուստ շտեմարան է: Հայերի և Հայաստանում ապրող քրդերի, թուրքերի և այլ էթնիկ խմբերի կենցաղի ու մշակույթի վերաբերյալ անչափ ուշագրավ են նաև նրա շուրջ 2 տասնյակի հասնող գրական և գիտական գործերը: Դրանցից կարելի է առանձնացնել «Առաջին սեր», «Թիֆլիսի Հայոց հանգստարանը», «Թուրքի աղջիկը», «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորույթների մասին», «Համառոտ ակնարկ հայերի մասին», «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին», «Քրդեր», «Եզդիներ», «Քրդեր և եզդիներ», «Ակնարկ քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի ու սովորույթների մասին», «Ռուսական իշևանատների մասին», «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը», «Գյուղական տների կառուցվածքը» և այլն:

Անհրաժեշտ է նկատել, որ ձեռքի տակ չունենալով ազգագրական նյութերի գրանցման և շարադրման որոշակի ծրագիր՝ Խ. Աբովյանն իր կողմից գրառած նյութերը չի թեմայավորել ըստ բնագավառների, որի հետևանքով դրանք հաճախ ներկայանում են

ցրված և չհամակարգված: Այնուհանդերձ, նրա գրի առած և հրատարակած նյութերը չափազանց արժեքավոր են հայ ազգագրական գիտության ուսումնասիրության համար: Նրա ազգագրական գործունեությունը բարձր է գնահատել Գ. Խալաթյանցը[1]: Նա իր «Ծրագրում», որը կազմելիս որոշ չափով օգտվել է Խ. Աբովյանի գործերից, գրում է. «Հանճարեղ Աբովյանը, թեև բանաստեղծորեն նկարագրելով ժողովրդական կյանքն ու սովորությունները, իսկապես առաջինն էր, որ ճաշակ տվեց ազգագրության մասին»[2]:

Կ. Մելիք-Փաշայանը, իր հոդվածներից մեկում[3] անդրադառնալով Խ. Աբովյանի ազգագրական ժառանգությանը, բարձր է գնահատել նրա դերը հայ ազգագրության պատմության մեջ՝ իրավացիորեն նրան համարելով հայ ազգագրության հիմնադիրներից մեկի: Խ. Աբովյանի ազգագրական գործունեության մասին դասագրքի շրջանակներում համառոտ անդրադարձել է նաև Վ. Բդոյանը[4]:

Սույն հոդվածով մեր առջև խնդիր չենք դրել ամբողջական ներկայացնելու Խ. Աբովյանի հարուստ ազգագրական ժառանգության ընութագրությունը, այլ հակիրճ՝ հույս ունենալով առաջիկայում հանդես գալ ավելի հանգամանորեն:

1835 թ. գերմաներեն գրած «Գյուղական տների կառուցվածքը» հոդվածում[5] Խ. Աբովյանն անդրադարձել է գյուղական ներքին կյանքին. շինականների ընտանեկան հարաբերություններին և ամուսնության հարցերին, ուր առանձնակի ուշադրության են արժանացել չխոսկանության և դրան առնչվող ավելորդ սովորությունները, սեփականության ժառանգմանն առնչվող իրավահարաբերությունները, ծնողների և զավակների փոխհարաբերությունները, ավագության կարգի պահպանվածությունը, նահապետի և նրան փոխարինող ավագ որդու իրավունքները և այլն: Հոդ-

---

[1] ***Խալաթյանց Գ.,*** Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների», Մոսկվա, 1887:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս ***Մելիք-Փաշայան Կ.***, Սովետահայ ազգագրության անցած ուղին // «Լրաբեր հաս. գիտ.», 1968, թիվ 11, էջ 54:

[4] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրության (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 14-15:

[5] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Գյուղական տների կառուցվածքը // Երկեր, հ. 10, Երևան, 1961, էջ 59-96:

վածում ներկայացված են կենցաղավարության ձևերը թոնրատունը, այգիներում, հյուրեր ընդունելու կարգը, կանանց և տղամարդկանց ժամանցները կազմակերպելու եղանակները, սեռահասակային խմբեր կազմելու սովորությունները: Խ. Աբովյանը գրում է. «Գյուղի ինչպես մեծերը, այնպես էլ կանայք ու երիտասարդները տարբեր խմբեր են կազմում: Նրանք մեկ այստեղ են, մեկ այնտեղ. մերթ ձորում, մերթ իրենց այգում, տներում, կտուրների վրա և քիչ, աննշան ուտելիքներով՝ մեծ մասամբ միրգ ու գինի, հաճելի ժամանակ են անցկացնում: Միայն առաջինները, որպես ընտանիքի հայրեր, իրավունք ունեն այդ բոլորը հրապարակորեն և հնարավորին չափ հանդիսավոր ձևով կատարել, որին այնուհետև մասնակցում են տան մյուս անդամները՝ առանց տարիքի և սեռի խտրության: Նրանք երգերով ու զվարճություններով և մի փոքր ճաշով հաճախ ամբողջ գիշերներ են անցկացնում»[6]: «Կանայք իրենց խնջույքներն անում են մրգի մառաններում, հաճախ հենց գինու կարասի մոտ: Դրանց մեծ մասամբ ներկա են լինում նաև իրենց երեխաները»[7]:

Այնուհետև Խ. Աբովյանը նկարագրում է ժողովրդական ու կրոնական տոները և ուխտագնացություններին, հարսանեկան ու այլ հանդեսներին երիտասարդների լռակյաց ընտրությունների ձևերը և այլն:

«Գյուղական տների կառուցվածքը» հոդվածում Աբովյանը ավելի հանգամանորեն տեղ է հատկացնում Քանաքեռի ժողովրդական շենքերին և տնային գույքին ու կահույքին: Աբովյանը տվել է 19-րդ դարի առաջին կեսի ժողովրդական ճարտարապետության նկարագիրը, որն այսօր ևս օգտակար է ժողովրդական ճարտարապետությամբ զբաղվողների համար: Խ. Աբովյանի նկարագրությունը վերաբերում է բազմաբաժին շենքին, որն ընդգրկում է թոնրատուն-խոհանոցը, մառանը, ննջարանները, գոմը, մարագը և այլն: Մեկ բաժնով շենքեր սովորաբար ունեցել են գյուղի չքավոր ընտանիքները:

Բազմաբաժին այդ համալիրի ամենակարևոր և բազմագործառույթ բաժինը թոնրատունն էր: Սա բնակելի բաժանմունքն էր և

[6] ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 10, էջ 88:
[7] Նույն տեղում, էջ 89:

աչքի է ընկել և իր մեծությամբ և գործառույթների բաշխվածությամբ. այստեղ է կատարվել գերդաստանի գրեթե ողջ գործունեությունը: Այն քառանկյունաձև էր և գտնվում էր շենքերի համալիրի կենտրոնում: Ելումուտը կատարվում էր մի դռնով: Տան լուսավորությունը ստացվում էր երդիկից: Թոնրատունն ունենում էր պատրհաններ, որոնց մեջ իրեր էին պահվում: Թոնրատունը մյուս բաժանմունքների հետ կապող դռներ չէր ունենում: Սա հիմնական հարկաբաժինն էր:

Թոնրատանը կից գտնվում է հյուրասենյակը, որի մուտքը բացվում էր բակից և ոչ թե բնակելի մասից: Հյուրասենյակը ունեցել է երկու մեծ պատուհան, որոնք ապակու փոխարեն թղթապատվում էին: Այս հյուրասենյակն ունենում էր օջախ և պատուհաններ: Սրա գաջասվաղը հարուստ ընտանիքներում նախշազարդվում էր:

Մառանը սառն էր պահվում, որպեսզի բնամթերքները լավ պահպանվեն: «Բացի ամառվանից,– գրում է Աբովյանը,– տարվա մյուս եղանակներին այստեղից բուրում է մի անուշահոտություն, որ անկարելի է նկարագրել: Երբ ներս ես մտնում, թվում է, թե գտնվում ես այնպիսի վայրում, ուր պատերը և առաստաղը պտղավորված են»[8]: Այստեղ էր հայ գյուղացին պահում իր հանդ ու այգու պարգևաց բարիքները: «Մի կողմում մի կույտ տանձ, մի այլ կողմում՝ խնձոր, մեկ ուրիշ տեղ՝ մեծ քանակությամբ չորացրած մրգեր ... մուտքի մոտ՝ գինով լի... մեծ կարասներ, առաստաղի գերաններից խիտ շարքերով կախ արած՝ խաղող, տանձի, խնձորի բազմաքանակ, մեծ ու գեղեցիկ շարեր,– այս էր առաջին հայացքից նկատում անծանոթը»:

Թանկագին հյուրերը հյուրընկալվում էին այնտեղ: «Իմ հայրն այստեղ ընդունեց իր տան ամենալավ հյուրին,– գրում է Աբովյանը,– իմ ջերմորեն սիրած բարերար, պարոն պետական խորհրդական Պարրոտին՝ իր բոլոր ուղեկիցներով, թեպետ ունեինք հյուրասենյակ»[9]:

«Մառանը միաժամանակ երիտասարդ ամուսինների ննջասենյակ էր. անտարակույս ավելի շատ հրապուրիչ, քան մի գեղեցիկ

[8] ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 10, էջ 61-62:
[9] Նույն տեղում, էջ 63:

պալատ, թեև այնտեղ բացի իրենց անկողնուց ու թերևս մի փոքր հայելուց, ոչ մի այլ կահ-կարասի չկա»[10]:

Այսպիսով, ըստ Աբովյանի նկարագրության, հեղինակի օրոք բնակության, մթերքների և անասունների համար կառուցվում էին 3-4 բաժնով շենքեր, որոնք մեծ մասամբ պարսպապատվում էին:

«Գյուղական տների կառուցվածքը» հոդվածը, որը գրվել է գերմաներեն, Պ. Հակոբյանի կարծիքով ընդարձակ աշխատություն է եղել. դրանից կորել են բազմաթիվ ազգագրական նկարագիրներ: Այդ կորած մասերը Աբովյանը հանձնած է եղել Հաքստհաուզենին[11]:

Խ. Աբովյանի արժեքավոր գործերից մեկը 1840 թ. գերմաներեն գրած մի ընդարձակ հոդված է՝ «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» խորագրով: Ակնարկն ընդգրկում է Թիֆլիսի վերակառուցումը, շենքերը, շինարարության մեջ եվրոպական ոճի կիրառումը, իշևանատները, հյուրանոցները, քաղաքային տարազի եվրոպականացման գործընթացը, կահույքը, երաժշտությունը և այլն[12]: Նրա հաղորդման համաձայն՝ ատաղձագործության, դերձակության, դարբնության և ժամագործության գծով գերմանացիներն առանձնակի տեղ էին գրավում: Աբովյանը կարևոր տեղ է հատկացնում Թիֆլիսում ընդունված հյուրասիրական կանոններին, խնջույքը վարելու ձևերին, կերակուրներին ու մատուցման եղանակներին, Ներսիսյան դպրոցի ակումբին ու սեղանախաղե-

[10] Առ այսօր պահպանված տոհմական տանը մինչև 1926 թվականը բնակվել են Աբովյանի հարազատները: 1927 թ. Քանաքեռ է եկել լուսավորության ժողկոմ Ասքանազ Մռավյանը և դիմել Խ. Աբովյանի հորեղբոր թոռ Արտեմ Աբովյանին՝ խնդրելով վաճառել հայրական տունը՝ այն թանգարան դարձնելու համար: Աբովյանների տունը կառուցել էր պապ Ալովը: 1938 թ. ապրիլի 25-ին ՀՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում է ընդունել՝ «Ի նշանավորումն գրող, հայ նոր գրականության հիմնադիր Աբովյանի մահվան 90-ամյակի (նրա հայրական)՝ տունը Քանաքեռում վերակառուցել և դարձնել նրա կյանքն ու գործունեությունը ցուցադրող թանգարան»: Տոհմական ավանդության համաձայն՝ Խաչատուրը լույս աշխարհ է եկել Աբովյանների հնամենի տան այն հարկաբաժնում, որը գերդաստանի համար ծառայել է որպես մառան և մրգերի ամբարանոց (տե՛ս ***Հակոբյան Պ.***, Խաչատուր Աբովյան, Երևան, 1967, էջ 72:

[11] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 10, էջ 404:

[12] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրություն, էջ 14:

ին, կրկեսային խաղերին և այլն: Հեղինակը նշել է բարքերի անկումը Թիֆլիսում, բամբասիրությունը կենցաղում, աղջկա ծնունդը սգալու սոցիալական պատճառները (անչափ մեծ օժիտը) և այլն: Աբովյանն անցնում է ամուսնության սովորությունների նկարագրությանը: Ըստ այդ բնութագրման՝ հայ աղջիկը պետք է ամուսնանար 14 տարեկան հասակում. փեսացուի ով լինելը կարևորություն չէր ներկայացնում, միայն թե բեռից ազատվեին: Հեղինակն «Ակնարկում» ցույց է տվել ամուսնությունը կազմակերպելու մի քանի սովորություններ: Դրանք էին՝ օրորոցախաղի սովորությունը, միայն հոր կամքով տղա և աղջիկ ամուսնացնելը, ընտրության համար առավելությունը ոչ այնքան գեղեցկությանը, որքան աշխատունակությանը տալը, կանանց և տղամարդկանց կողմից միջնորդությունների դիմելը, միջնորդների և աղջկա ծնողների միջև երկար ու բարակ խոսակցությունները, որոնք մենախոսության ու երկխոսության բնույթ էին ընդունում, և Աբովյանի կողմից բնորոշվել են իբրև հայկական ճարտասանության ձևեր:

Նշված բոլոր ծիսակատարությունները ներկայացնելուց հետո հեղինակը նկարագրել է հարսանեկան տոնահանդեսը, որի մեջ կարևոր են դիտվել փեսայի ընկերների մասնակցությունը հարսանիքին և խնամապագի սովորության մի տարբերակը, փեսայի բացարձակ լուռ մնալը և նրա ընկերների սուր կատակները, որոնք պատանեկան ընկերակցությունների նախնական սովորույթներից էին պահպանվել: Աբովյանը կարևոր տեղ է հատկացրել նաև ընտանեկան հարաբերություններին, կանանց իրավազուրկ վիճակին[13]:

«Ակնարկում» ավանդական բարքերի, ընտանեկան հարաբերությունների անկման ընդհանուր պատկերի հիման վրա Խ. Աբովյանը հատկապես ընդգծում է ամուսնությունը տղամարդկանց համար դրամագլուխ ձեռք բերելու և շահույթի աղբյուր դարձնելու փաստը:

«Համառոտ ակնարկ հայերի մասին» գերմաներեն գրված հոդվածում[14], որը գրելու շարժառիթ է հանդիսացել կաթոլիկ միսիոներների անհիմն հերյուրանքները հայ ժողովրդի մասին:

---

[13] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958, էջ 154-190:

[14] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Համառոտ ակնարկ հայերի մասին, հ. 8, էջ 32-42:

Շուշիի բողոքական քարոզիչներ Ավգուստ Դիտրիխի և Ֆելի-ցիան Զարեմբայի «Հայ ժողովրդի արդի վիճակի պատմական նկա-րագրություն» վերտառությամբ աշխատության մեջ Եվրոպայի կրթված հասարակությանն է ներկայացվում հայ ժողովրդի միայն թերությունները, արատավոր կողմերը, Խ. Աբովյանը չհանդուր-ժելով այդ, գերմաներեն գրում է պատմաազգագրական համառոտ մի ակնարկ, որի նպատակն էր ցույց տալ Հայաստանն ու հայերին այնպես, ինչպես կան իրենց մտածողությամբ, վարքով, բարքով, կենցաղով:

Խ. Աբովյանը համոզիչ կեպով մերժում և գիտական տեսան-կյուից արժեքազուրկ է համարում նրանց բնորոշումները: Խ. Աբովյանը գրում է. «Եթե ոչ մի բան՝ ոչ հուշարձան, ոչ էլ պատմական տվյալներ հիմք չլինեն ապացուցելու համար, որ Հա-յաստանում գոյություն է ունեցել մի հնագույն, քաղաքական և մտավոր տեսակետից ինքնուրույն, յուրահատուկ և ինքնատիպ նախնական մշակույթ, ապա՝ դրան ցայտուն և կենդանի կռվան կարող է հանդիսանալ այդ երկրի լեզուն»[15]:

1836 թ. լույս է տեսնում Խ. Աբովյանի «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» ընդարձակ դիմում-գրությունը[16], որտեղ լուսա-վորիչը առաջ է քաշում սոցիալ-տնտեսական, կուլտուրական բնույթի վերափոխությունների ծրագիր՝ ռուսական կառավարու-թյանը ներկայացնելու նպատակով: Նա իր ծրագրում առաջար-կում է ուսումնասիրել հողերի հատկությունները, դրանք մշակել համատեղ ուժերով, ցանել այնպիսի կուլտուրաներ, որոնք ավելի շահութաբեր կլինեն վաճառքի համար: Նա գտնում է, որ անհրա-ժեշտ է ուշադրություն դարձնել հայ ժողովրդի կրթությանը և այլն: Դա ինքնին մի ծրագիր էր՝ Արևելահայաստանը տնտեսական ու կուլտուրական տեսանկյունից ոտքի հանելու, արդյունաբերու-թյունը և գյուղատնտեսությունը առաջադիմական հիմքերի վրա դնելու, նոր մասնագետներ պատրաստելու համար և այլն:

Յուրացնելով ժամանակաշրջանի առաջադիմական գաղափար-ները, ծանոթանալով եվրոպական քաղաքակիրթ կենսակերպին,

---

[15] ***Աբովյան Խ.,*** Համառոտ ակնարկ հայերի մասին, հ. 8, էջ 38:

[16] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին, հ. 8, էջ 82-95:

Աբովյանը վերադարձավ հայրենիք լուսավորական և քաղաքակրթական մեծ առաքելությամբ և ծրագրերով: Իր գործունեությամբ և գրավոր խոսքով նա բացահայտ պատերազմ հայտարարեց Հայաստանում տիրող միջնադարյան տգիտության, խավարամտության, սնոտիապաշտության, ինչպես նաև բյուրոկրատիզմի, ցարական չինովնիկության դեմ: «Օգտակար լինել իմ հայրենիքին՝ հանդգնում եմ կառավարությանը պլաններ առաջադրել իմ ազգի և երկրի համար, իրավամբ արժանանա կառավարության հատուկ ուշադրությանը, այդ բոլորը անում եմ ոչ թե կողմնապահությունից և ծայրահեղ հայրենասիրությունից, այլ անկեղծ և հաստատուն համոզմամբ»[17]: Խ. Աբովյանը համոզված է, որ հայը ամենակուլտուրական տարրն է հարևան ժողովուրդների մեջ՝ ընդունակ ընթանալու եվրոպական բարեփոխումների ճանապարհով և լուսավորություն տարածելու նաև հարևանների շրջանում: Ահա թե ինչ է գրում նա. «Սա մի ուրիշ ժամանակաշրջան է, երբ Հայաստանը, չնայած իր փոքրիկ տարածության, որ նա գրավում է անդրկովկասյան երկրների միջև, չնայած նրան, որ մինչև այժմ իր բազմաթիվ հզոր, բայց և բիրտ հարևանների միջոցով զրկվել է և չի արժանացել ոչ մի տևական կուլտուրայի, այնուհանդերձ հայ ժողովուրդն ինքնըստինքյան ոչ միայն կուլտուրականն է, այլև այն ժողովուրդն է, որի բնավորությունը և ապրելակերպը նպաստում են, որ նա լուսավորություն տարածի իր հարևանների մեջ: Ես այս պլանով աչքի առաջ ունեմ ոչ միայն Հայաստանի, այլև անդրկովկասյան մյուս ժողովուրդների բախտավորությունը»[18]:

Ազգագրական առավել կարևոր գործ է Խ. Աբովյանի «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը» հոդվածը[19]: Այստեղ ընդգծված են հայոց հոգևոր և աշխարհիկ երաժշտության խորապես ազգային բնույթը և ինքնատիպությունը: Ճշգրիտ գնահատական է տրված ժամանակի եկեղեցական երաժշտությանը[20], որի ակունքները նա իրավացիորեն, փնտրում է ժողովրդական երաժշտության մեջ:

---

[17] ***Աբովյան Խ.,*** նշվ.աշխ., էջ 83:
[18] Նույն տեղում:
[19] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը // ԵԼԺ, հ. 10, էջ 105-113:
[20] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 10, Ծանոթագրություններ, էջ 367:

1846 թ. գերմաներեն գրված «Քրդեր» հոդվածը[21] առաջին համակողմանի ազգագրական հետազոտությունն է Անդրկովկասի քրդերի մասին: Այս հոդվածում առավել արժեքավոր են Խ. Աբովյանի հաղորդած տեղեկությունները քրդերի հոգևոր մշակույթի և տնտեսական կենցաղի վերաբերյալ: Աշխատանքը գրելու համար Աբովյանն ուսումնասիրել է Էջմիածնի և Երևանի եկեղեցական գրադարանների ձեռագրերը, ծանոթացել քրդերի վերաբերյալ նրանց վկայություններին: Հետագայում անձամբ ծանոթացել է Զիլանի, Սիպկանի, Գասանի, Ջալալի քրդական ցեղերի հետ և հավաքել անհրաժեշտ ազգագրական տեղեկություններ նրանց մասին: Խ. Աբովյանը համատեղել է դաշտային և կաբինետային աշխատանքը՝ լավ հասկանալով այդ զուգակցման անհրաժեշտությունը ազգագրական աշխատանքի բնագավառում: Այստեղ Խ. Աբովյանը փորձել է անդրադառնալ նաև քրդերի ծագման հարցին՝ նրանց կապելով արաբների հետ: Նրա այս վարկածը քրդերի ծագման մասին, իհարկե, անհավանական է:

Խ. Աբովյանի «Քրդեր և եզիդիներ» ուսումնասիրությունը[22] թվագրված չէ, այն գրվել է յոթատառ գերմաներենով: Հոդվածն ունի երկու ենթավերնագիր՝ «Քրդեր» և «Եզիդիներ»: «Քրդերը» բաժնում Աբովյանը կրկին անդրադարձել է նրանց ծագման հարցին և հայտնել է այն կարծիքը, որ քրդերի ձևավորմանը մասնակցել են մարիրերը, հայերը, արաբները և այլ հին ժողովուրդներ: Այնուհետև խոսել է քրդերի կրոնական հավատալիքների, քրդական լեզվի, քրդուհու վիճակի, նրանց հյուրասիրության մասին: «Եզիդիները» բաժնում Խ. Աբովյանը հենց սկզբից նշել է, որ այն բոլորը, ինչ ասվել է քրդերի մասին, գոյություն ունի նաև եզիդիների մեջ: Նրանց եղած տարբերությունը միայն կրոնական հավատալիքների մեջ պետք է փնտրել: Եվ պատահական չէ, որ Աբովյանը ավելի մանրամասն և հանգամանորեն շեշտը դրել է եզիդիների կրոնական հավատալիքների վրա, բացահայտել դրանց առնչվող սովորույթները, ծեսերը, որոնք միանգամայն ինքնատիպ են, բայց ինչ առումով նման են հայկականին:

1846-1847 թթ. Աբովյանը դարձյալ գերմաներեն գրել է «Ակնարկ քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի

[21] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Քրդեր // ԵԼԺ, հ. 8, էջ 373-393:
[22] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Քրդեր և եզիդիներ // ԵԼԺ, հ. 8, էջ 243-285:

ու սովորույթների մասին» հոդվածը[23], որը Խ. Աբովյանի՝ քրդերի մասին գրած ընդարձակ ուսումնասիրության համառոտ շարադրանքն է: Այս հոդվածում ևս անդրադարձել է քրդերի ծագմանը, կրոնական հավատալիքներին, հոգևոր և նյութական մշակույթի մի շարք տարրերին:

Բացի վերոհիշյալ զուտ ազգագրական բնույթի աշխատություններից՝ մեծ քանակությամբ ազգագրական նյութեր են սփռված Խ. Աբովյանի գեղարվեստական երկերում: Այդ տեսանկյունից առանձին ուշադրության են արժանի «Թիֆլիսի հայոց հանգստարանը» պատմվածքը[24], «Վերք Հայաստանի» վեպը[25], «Առաջին սեր»[26], «Թուրքի աղջիկ»[27] արձակ երկերը:

Առանձին ուշադրության արժանի է «Թիֆլիզու հայոց հանգստարանը» պատմվածքը: Այստեղ մանրամասնորեն ներկայացված են հուղարկավորությունը, սգալու ձևերը, սգո հանդերձները, ինքնախարազանման, կոծելու, երեսին հող քսելու, բացականչությունները անելու սովորությունները և այլն: Կարելի է ասել, որ պատմվածքն ամբողջապես ազգագրական բնույթի գործ է: Գեղարվեստական արձակում Խ. Աբովյանը հանդես է եկել որպես հմուտ կենցաղագետ: Մանրամասնորեն նկարագրել է ժողովրդի կենցաղն ու մշակույթը, ծեսերն ու սովորությունները, ժողովրդական տոները: Չնայած այս նկարագրությունները ունեն գեղարվեստական բնույթ, սակայն դրանք հմուտ ազգագրագետի և բանասերի մանրակրկիտ գրառումներ են:

---

[23] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Ակնարկ քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի ու սովորույթների մասին // ԵԼԺ, հ. 8, էջ 345-349:

[24] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Թիֆլիսի հայոց հանգստարանը // Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան 1947, էջ 40-47:

[25] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Վերք Հայաստանի, Երևան, 1975:

[26] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Առաջին սեր, հ. 4, էջ 1-18:

[27] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Թուրքի աղջիկը, հ. 4, էջ 19-33:

4. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ

XIX դարի առաջին կեսին ազգագրական մեծ աշխատանք է կատարել Խ. Աբովյանը (1809-1848 թթ.): Ճակատագրի բերումով, դժբախտաբար, վերջինիս ազգագրական ժառանգությունը մինչև XX դարի կեսերը մնացել էր անտիպ: Այն մեր օրերում ունի գիտական կարևոր նշանակություն: Դրանք Աբովյանի թե՛ բուն ազգագրական ու բանագիտական գործերն են, որոնք նա գրել է հատուկ նպատակադրմամբ, թե՛ այն ազգագրական նյութը, որը նա օգտագործել է իր գեղարվեստական ստեղծագործություններում:

Խ. Աբովյանի կյանքում ազգագրությամբ զբաղվելը պայմանավորված էր նախ նրա Դորպատյան ուսումնառությամբ, երբ շփվեց ռուսական և եվրոպական ազգագրական գիտության հետ, իսկ մյուս խթանը Պարրոտի և նրա խմբում ընդգրկված եվրոպական այլ գիտնականների այցն էր Արևելյան Հայաստան՝ Արարատի գագաթը բարձրանալու նպատակով: Պարրոտի հորդորանքով և խնդրանքով Աբովյանը սկսեց զբաղվել ազգագրությամբ, ընդ որում՝ նրա բոլոր ազգագրական գործերը գրվել են գերմաներեն և շուրջ մեկ դար մնացել չհրատարակված: Այս պատճառով Խ. Աբովյանի ազգագրական ժառանգությունը մնացել էր անհայտ: Միայն 1940-1950-ական թվականներին, երբ ձեռնարկվեց Աբովյանի երկերի տասհատորյակի հրատարակումը, ազգագրական աշխատություններն առաջին անգամ թարգմանվեցին հայերեն և հրատարակվեցին:

Աբովյանի ցանկացած գործ ազգագրական անսպառ նյութ է պարունակում: Նշենք որ, բացի գեղարվեստական արձակից ու չափածո ստեղծագործություններից՝ Խ. Աբովյանը զբաղվել է զուտ ազգագրական հետազոտություններով՝ անդրադառնալով ազգագրական տարաբնույթ խնդիրների:

Խ. Աբովյանի արժեքավոր գործերից մեկը 1840 թ. գրած «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» ընդարձակ հոդվածն է: Այստեղ գրողը մանրամասնորեն նկարագրել է Թիֆլիս քաղաքի տոնավաճառներն ու շուկաները, առևտուրը, ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսականին, հատկապես մեծ ուշադրու-

թյուն է դարձրել Թիֆլիսահայոց կենցաղին, քաղաքային տարազի եվրոպականացման գործընթացին, երաժշտությանը: Ներկայացրել է Թիֆլիսի վերակառուցումը, շենքերը, շինարարության մեջ եվրոպական ոճի կիրառումը, իշևանատները, հյուրանոցները, կահույքի տեսակները ևն:

Աբովյանը նշել է, որ բավականին զարգացած էին արհեստները, մասնավորապես ատաղձագործությունը, դերձակությունը և ժամագործությունը, որոնց մեջ առանձնակի ներդրում ունեին գերմանացիները: Նա հանգամանորեն անդրադարձել է Թիֆլիսում ընդունված հյուրասիրության կանոններին, խնջույքը վարելու ձևերին, կերակուրներին ու մատուցման եղանակներին, Ներսիսյան դպրոցի ակումբին ու սեղանախաղերին, կրկեսային խաղերին ևն: Գրողը մատնանշել է բարքերի անկումը Թիֆլիսում, բամբասասիրությունը կենցաղում, աղջկա ծնունդով վշտանալու սոցիալական պատճառները (մեծ չափի օժիտը) ևն: Այս համապատկերում Աբովյանը անդրադարձել է ամուսնության սովորություններին: Ըստ այդմ՝ հայ աղջիկը կարող է ամուսնանալ 14 տարեկանից. փեսացուի ով լինելը կարևոր չէր, միայն թե հոգսից ազատվեին: «Ակնարկում» ներկայացված ամուսնության կազմակերպման մի քանի սովորություններից էին՝ օրորոցախազը, միայն հոր կամքով տղա և աղջիկ ամուսնացնելը, ընտրության համար առավելությունը ոչ այնքան գեղեցկությանը, որքան աշխատունակությանը տալը, կանանց և տղամարդկանց կողմից միջնորդությունների դիմելը, միջնորդների և աղջկա ծնողների միջև երկար ու բարակ խոսակցությունները՝ որպես մենախոսություն ու երկխոսություն, որոնք Աբովյանը բնորոշել է իբրև հայկական ճարտասանության ձևեր:

Գրողը անդրադարձել է օժիտ-գլխագին երևույթներին՝ ընդունելով գլխագնի գոյությունը հայ իրականության մեջ և չկարողանալով էական տարբերություն գտնել այս երկուսի միջև: Մեր ուսումնասիրություններում մերժվում է գլխագնի գոյությունը հայ իրականության մեջ[1]: Այն հանգամանքը, որ հայ ընտանիքներում աղջկա ծնունդը այնպիսի ոգևորություն առաջ չի բերել, ինչպես տղայինը, ինքնին մերժում է գլխագնի գոյությունը մեզանում: Ինչ վերաբերում է օժիտին, ապա այն եղել է նոր կազմավորվող ընտանի-

[1] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004, էջ 136-142:

քի հիմքը ապահովող գործոնը: Խ. Աբովյանը անդրադարձել է նաև ***արնեգնին*** կամ ***սարմիային***. դա այն գումարն էր, որը հարսը ձեռք էր բերում նշանդրեքից մինչև ամուսնություն ընկած փուլում՝ տարբեր առիթներով ստանալով դրամական նվեր և զարդեղեն: Սարմիան պատկանելու էր հարսին. ոչ ոք այն տնօրինելու իրավունք չուներ՝ բացի հարսից: Աբովյանը անդրադարձել է նաև ***նարոտին***, որ ամուսնական զույգերը կրելու էին պարանոցին մինչև առագաստ մտնելը, դրա կրոնամոգական դերին:

Ծիսակատարությունները ներկայացնելուց հետո հեղինակը նկարագրել է հարսանեկան տոնահանդեսը, որի մեջ կարևոր են դիտվել փեսայի ընկերների մասնակցությունը հարսանիքին և ***խնամապապագի*** սովորության մի տարբերակը՝ փեսայի բացարձակ լուռ մնալը և նրա ընկերների սուր կատակները, որոնք պատանեկան ընկերակցությունների հնամենի սովորույթներից էին պահպանվել: Աբովյանը կարևոր տեղ է հատկացրել փեսայի աներոջ և հարսանիքի քավորի այլաբանական զրույցներին: Այնուհետև դիտարկումներ կան ընտանեկան հարաբերությունների և աղջկա ու կնոջ իրավազուրկ վիճակի վերաբերյալ[2]:

«Գյուղական տների կառուցվածքը» հոդվածում, ելնելով իր հայրական տան օրինակից, նա հայ ազգագրության մեջ առաջին անգամ հետազոտման նյութ է դարձրել հայոց բնակելի տան ու նրա օժանդակ կառույցների ազգագրական ուսումնասիրությունը:

Նշյալ հոդվածում Աբովյանը անդրադարձել է չինականների ընտանեկան հարաբերություններին և ամուսնության հարցերին, որոնց թվում առանձնակի ուշադրության են արժանացել չխոսկանության և դրան առնչվող ավելորդ սովորությունները, սեփականության ժառանգման իրավահարաբերությունները, ծնողների և զավակների փոխհարաբերությունները, ավագության կարգի պահպանվածությունը, նահապետի և նրան փոխարինող ավագ որդու իրավունքները, որից երևում է, որ այրիացած մայրը ***մեծ նան*** կոչումը հանձնում էր նահապետ կարգված որդու կնոջը, իսկ ինքը անվանվում էր ***փոքր նան***: Գրողը հավաստում է, որ գերդաստանում, առանց բացառության, բոլոր երեխաները քույրեր ու եղբայրներ էին համարվում: Այնուհետև ներկայացվում են կենցաղավարության

[2] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հ. 8, Երևան, 1958, էջ 154-190:

ձևերը թոնրատանը և այգիներում, ինչպես նաև հյուրեր ընդունելու, նրանց առանձին սենյակներում հյուրասիրելու կարգը ևն:

Աբովյանն ուշադրություն է դարձրել կանանց ու տղամարդկանց ժամանցները կազմակերպելու եղանակներին: Ըստ այդմ՝ գյուղական համայնքները 19-րդ դարի սկզբներին պահպանում էին սեռահասակային խմբեր կազմելու սովորությունները: Նա գրում է. «Գյուղի ինչպես մեծերը, այնպես էլ կանայք ու երիտասարդները տարբեր խմբեր են կազմում: Նրանք մեկ այստեղ են, մեկ այնտեղ. մերթ ձորում, մերթ իրենց այգում, տներում, կտուրների վրա և քիչ, աննշան ուտելիքներով՝ մեծ մասամբ միրգ ու գինի, հաճելի ժամանակ են անցկացնում: Միայն առաջինները, որպես ընտանիքի հայրեր, իրավունք ունեն այդ բոլորը հրապարակորեն և հնարավորին չափ հանդիսավոր ձևով կատարել, որին այնուհետև մասնակցում են նաև տան մյուս անդամները՝ առանց տարիքի և սեռի խտրության: Նրանք երգերով ու զվարճություններով և մի փոքր ճաշով հաճախ ամբողջ գիշերներ են անցկացնում»[3]:

«Կանայք իրենց խնջույքներն անում են մրգի մառաններում, հաճախ հենց գինու կարասի մոտ: Դրանց մեծ մասամբ ներկա են լինում նաև իրենց երեխաները»[4]: Այնուհետև հեղինակը նկարագրում է ժողովրդական ու կրոնական տոները և ուխտագնացություններին, հարսանեկան ու այլ տոնահանդեսներին երիտասարդների լռակյաց ընտրությունների ձևերը ևն:

Հակառակ թիֆլիսահայոց՝ Աբովյանի հայրենի համայնքներում աղջիկ ունենալը բարեբախտություն էր համարվում, որովհետև փեսա չունենալը տխուր երևույթ էր դիտվում:

Նշված հոդվածի մեջ առանձին տեղ է հատկացված Քանաքեռի բնակիչների շենքերի տեսակներին, որոնք ներկայացված են տնային գույքի ու կահույքի պարագաների բազմազանությամբ:

Ըստ այդմ՝ գրողի օրոք բնակության, մթերքների և անասուններ ի համար կառուցվում էին 3-4 բաժնով շենքեր, որոնք մեծ մասամբ պարսպապատվում էին[5]: Թոնրատունն ամենաբարձր բաժինն էր. այն գտնվում էր շենքերի համալիրի կենտրոնում՝ քառակուսի հատակագծով: Ելումուտը կատարվում էր մի դռնից: Լինում էին նաև օժան-

[3] ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 10, Երևան, 1961, էջ 88:
[4] Նույն տեղում, էջ 89:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 59-96:

դակ շենքեր, որոնք չեն նկարագրվել: Թոնրատան լուսավորությունն ապահովվում էր գմբեթածածկ երդիկից: Թոնրատունն-հացատանը տեղադրված են մեծ ու փոքր թոնիրներ, առաջինը՝ հաց թխելու, երկրորդը՝ ճաշեր եփելու և ամենօրյա կենցաղային նպատակների համար: Ջմռանը թոնրի վրա էր դրվում ***քուրսի*** սեղանը՝ քառակուսի մինչև ծնկները հասնող բարձրությամբ: Ընտանիքի անդամները նստում էին այս սեղանի շուրջ, ոտքերը և ձեռքերը ներս էին երկարում և տաքանում: Ընտանիքի գլխավորը իր հատուկ տեղն ուներ: Ընտանիքը ճաշում էր քուրսի սեղանի վրա: Քուրսու շուրջն էին գցում անկողինները՝ կողք կողքի, բոլորի ոտքերը ուղղվում էին դեպի թոնիրը: Ուշագրավ է, որ այս հարկաբաժինը բազմագործառույթ նշանակություն է ունեցել: Թոնրատունն ունենում էր պատրհաններ, որտեղ իրեր էին պահվում:

Գրողը լուսամուտավոր սենյակը հյուրասենյակ է համարել, որի ծագման մասին ոչինչ չի ասել: Լուսամուտները ապակու փոխարեն թղթապատվում էին ապակու թանկության պատճառով: Թղթին հալած յուղ էին քսում, որը նպաստում էր լույսի ավելացմանը: Այս հյուրասենյակն ունենում էր օջախ՝ բուխարի և պատուհաններ: Սրա դաջասվաղը հարուստ ընտանիքներում նախշազարդվում էր: Թոնրատունը մյուս բաժանմունքների հետ կապող դռներ չէր ունենում: Մառանը սառն էր պահվում, որ բնամթերքները լավ պահպանվեն: Այստեղ երբեմն տեղի էր ունենում հյուրասիրություն, որպեսզի հրավիրյալն ազատ զգալով օգտվեր մրգերից: Աբովյանի հայրը հենց այսպես է հյուրասիրել Ֆրիդրիխ Պարրոտին:

«Գյուղական տների կառուցվածքը» հոդվածը, որը գրվել է գերմաներեն, Պ. Հակոբյանի կարծիքով ընդարձակ աշխատություն է եղել. դրանից կորել են բազմաթիվ ազգագրական նկարագրություններ, որոնք Աբովյանը հանձնած է եղել Հաքստհաուզենին[6]:

Խ. Աբովյանը ազգագրական ուշագրավ տեղեկություններ ունի իր հիշատակարանում և դորպատյան օրագրերում: Հիշատակարանում արծարծված հարցերն են. պարսկական տարազ կրող հայ իշխանի կենցաղավարությունը, հյուրասիրության կարգը, Աբովյան գերդաստանի ավանդական ուխտագնացությունները Ս. Էջմիածին, նրանց և կաթողիկոսի կապերը, նվիրատվություն-

[6] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, էջ 404:

ները վանքին, Աբովյանների այգուց օտարների օգտվելու հանգամանքները, կաթողիկոսական հանդերձավորման նկարագրությունը, հայրապետական ընդունելությունների կարգը, միաբանների ճաշկերույթը, քանաքեռցիների տարազների մասնակի նկարագիրը, պարսիկ դերվիշի և քրդերի կրոնական հայացքները ևն:

Դորպատյան օրագրերը գրվել են 1830-ական թվականներին: Գրողի ուսանողական կյանքից և իր ուսուցիչների հետ ունեցած հարաբերություններից զատ՝ ներկայացված են Գերմանիայի մտավորականների ընտանեկան կենցաղը և քաղաքային կյանքը: Աբովյանը, տարիներ շարունակ պարբերաբար այցելելով իր ուսուցիչների տները, ծանոթացել է նրանց կենցաղին, նիստուկացին ու նկարագրել դրանք անմիջական տպավորություններով: Այդ ընդարձակ օրագրում տեղ են գտել ամուսնության, հարսանիքի ու խնջույքների, ծննդյան տարեդարձներին նվիրված կերուխումի, կնոջ և տղամարդու պատշաճ փոխհարաբերությունների, երեխաների դաստիարակության, առատաձեռն հյուրասիրությունների, հուղարկավորության ծեսերի ու սովորությունների, տոների և բազմաթիվ այլ երևույթների նկարագրություններ: Աբովյանը գրառել է նաև իր ճանապարհորդական տպավորությունները: Օրագրում տեղ են գտել եվրոպական ճաշատեսակների և մատուցման ձևերի, քաղաքային տարազների, շենքերի, փոխադրամիջոցների, ժողովրդի զբաղմունքների բնութագրերը ևն:

«Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտություն» հոդվածում[7] Աբովյանը մեզանում առաջին անգամ քննարկեց հոգևոր և ժողովրդական երաժշտության խնդիրները՝ իրավացիորեն նկատելով, որ դրանք ոչ միայն չեն հակասում իրար, այլև նույն ժողովրդական ստեղծագործությունն են, պարզապես հոգևոր երաժշտությունը հարմարեցված է եկեղեցական ծեսերին ու արարողություններին: Հետագայում Խ. Աբովյանի այս թեզը զարգացրին Կարա-Մուրզան և հատկապես Կոմիտասը:

Գրողը համառոտ նկարագրել է ռուսական իջևանատները: 1840 թ. դրանք ունեցել են հետևյալ պատկերը. երկթեք կտուրներով շենքերը հենվում էին սյուների վրա: Դրանցից յուրաքանչյուրը միանգամից ընդունում էր 50-60 սայլ՝ բեռներով ու ձիերով

[7] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, էջ 105-113:

հանդերձ: Կային նաև երկհարկանի իջևանատներ: Հանդամանորեն նկարագրվել է իջևանատների նիստուկացը, հյուրեր ընդունելու և ճանապարհելու եղանակները, իջևանատների բարքերը, փոխհարաբերությունները, որոնցով հստակ պատկերացում է տրվում XIX դարի առաջին կեսի ռուսական իջևանատների մասին: Այսպես՝ անկողին չէին հրամցնում, քնում էին որմնաթախտերին, ածուռներ հազվադեպ էին գտնվում: Ռուսական վառարանի կտուրը ընտանիքի քնելատեղն էր: Իջևանատան տնտեսությունը կանայք էին վարում: Իջևանատունը հյուրերին մատուցում էր կերակուրներ և թեյ: Ուտելու բոլոր ամանները փայտից էին: Մարդիկ ուտում էին ամանից ձեռքով կամ գդալով: Ուտելու պահին ներս մտնողը պետք է արտասաներ «աղ ու հաց», իսկ թեյի ժամանակ՝ «թեյ ու ջուր»: Լուսավորելու միջոցը կեչու փայտն էր, որի բարակ ճողիկները վառում էին աշտանակի մեջ[8]:

Խ. Աբովյանի «Քրդեր և եզդիներ» աշխատության «Քրդերը» հատվածը ներկայացնում է այդ ժողովրդի կյանքը, սովորույթները, կրոնը, զբաղմունքները: Անասնապահությունը նկարագրելիս հեղինակը նշել է, թե քրդերի հոտը ձմռանը հայերն էին պահում: Արևելահայաստանում այդ ձրիակերությանը վերջ տրվեց պետության միջամտությամբ: Քրդերի նստակեցությունն Արևմտահայաստանում, հեղինակի հաղորդմամբ, սկսվել է XIX դարի սկզբին:

Աբովյանը նկարագրել է քրդերի առևանգմամբ ամուսնության սովորությունը, ժողովրդի բարքերը ևն: Իսկ «Եզդիներ» բաժնում ներկայացրել է այդ ժողովրդի կենցաղը և կրոնը, որը խառնուրդ է քրիստոնեության, մահմեդականության ու եբրայական հավատալիքների: Նա նշում է, որ եզդիների պատկերացմամբ՝ գողությունը մեղք չէ, որովհետև ծագում է Քրիստոսի՝ մի մեխ գողանալու պատմությունից, որը եզդիներն են կատարել[9]:

Խ. Աբովյանն առաջին անգամ հետազոտման նյութ դարձրեց քրդերի և եզդիների կենցաղի մի շարք ոլորտների ուսումնասիրությունները: Քաջ տիրապետելով քրդերենին և բազմիցս հյուրընկալվելով քրդերի ցեղային առաջնորդների վրաններում՝ նա առատորեն գրառեց ազգագրական ու բանահյուսական նյութեր: Գրողն անդրադարձավ արյան վրեժի սովորույթին, որը չափազանց կայուն պահ-

[8] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 323-324:
[9] Տե՛ս նույն տեղում, էջ 243-278:

պանվել էր քրդերի ու եզդիների մեջ XIX դարի առաջին կեսին: Արյան վրեժի սովորույթը իր արմատներով աղերսվում է հանգուցյալների պաշտամունքին, սերում է խոր հնադարից: Խ. Աբովյանը ուսումնասիրեց քրդերի բանահյուսական ժանրերը, երգերը՝ նկատելով, որ դրանց հիմքում ընկած է քրդերի առօրյա կենցաղը: Ըստ նրա՝ յուրաքանչյուր քրդուհի ի ծնե ստեղծագործող է և երաժիշտ: Նա մանրամասնորեն քննարկեց քրդերի և եզդիների մեջ պահպանված տոհմատիրական շրջանի սովորությունները, որոնցից էր կնոջը, հատկապես մեծ մորը հատկացվող տեղն ու դերը, ինչն արմատներով աղերսվում է մայրիշխանությանը: Աբովյանը փաստորեն վեր հանեց այդ ժողովուրդների ազգագրական ու բանահյուսական նկարագիրը: Նրա հրապարակումները մեծ հետաքրքրություն առաջացրին քրդերի ու եզդիների հանդեպ Եվրոպայում, որով այսօր իրավամբ Աբովյանը համարվում է այդ ժողովուրդների ազգագրության ու բանահյուսության հիմնադիրը:

Խ. Աբովյանի ազգագրական ժառանգության զգալի մասը ցրված է նրա գեղարվեստական երկերում: Այդ տեսանկյունից առանձին ուշադրության է արժանի «Թիֆլիզու հայոց հանգստարանը» պատմվածքը: Այստեղ մանրամասնորեն ներկայացված են հուղարկավորությունը, սգալու ձևերը, սգո հագուստները, ինքնախարազանման, կոծելու, երեսին հող քսելու, բացականչություններ անելու սովորությունները ևն: Կարելի է ասել, որ պատմվածքը ազգագրական ամբողջական մի թեմա ընդգրկող գործ է[10]:

Հեղինակի գեղարվեստական արձակում առհասարակ տեղ են գտել հայ ժողովրդի զբաղմունքների՝ երկրագործության, այգեգործության, բերքահավաքի ու կալսելու, անասնապահության, որսորդության վերաբերյալ նկարագրություններ: Կենցաղից ներկայացված են բնակարանները, զգեստը, զարդերը, ասեղնագործությունն ու կահույքը, փոխադրամիջոցների տեսակները, զենքերը, երաժշտական գործիքները, կերակուրները ևն: «Վերք»-ում և այլուր հեղինակն առանձին ուշադրություն է դարձրել ժողովրդի մարզական խաղերին, մասնավորապես ձիով մականախաղերին, գնդակախաղերին: Ժողովրդական տոները նույնպես եղել են Աբովյանի ուշադրության կենտրոնում. լուրջ գործ է Ծաղկավանքում Վարդավառի պատկերումը:

[10] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 4, էջ 40-46:

Հոգևոր մշակույթի առումով նա նյութեր ունի կենդանիների, հողի, ջրի, քարի, արևի, չար ու բարի ոգիների, վիշապների, քաջքերի պաշտամունքների վերաբերյալ: Ինչպես Բժշկյանը, Խ. Աբովյանն էլ հայ ընթերցողին ծանոթացնելու նպատակով նկարագրել է տարբեր երկրների սովորույթները, որոնք քաղել է իր ժամանակի տպագիր գրականությունից: Դրանք զրույցներ են, որոնք ներկայացնում են հռոմեացիների, հույների, անգլիացիների, ավստրիացիների, ռուսների, հնդիկների և այլ ժողովուրդների հնագույն ու միջնադարյան պետական վերնախավերի և առանձին անձանց ցոփ բարքերը, չվայտությունները, կերուխումի համար հատկացվող վիթխարի ծախսերը, կաշառակերության ձևերը, խրախճանքներին հագուրդ տալու համար կազմակերպվող մարզական մրցապայքարի ձևերը, սադիստական սովորությունները, աշխարհահռչակ ժլատների կյանքն ու կենցաղը, խաղամոլությունը, ընտանեկան բարքերը ևն:

Ակնհայտ է, որ Խ. Աբովյանը հայ և օտար ժողովուրդների ազգագրությամբ զբաղվել է եվրոպական տիպի գիտնականի մակարդակով ու բարեխղճությամբ: Նա այդ գրառումները կատարել է Հաքստհաուզենի, Պարրոտի, Վագների և ուրիշների խնդրանքով ու խորհրդով, ինչը հետո դարձել է գրողի զբաղմունքներից մեկը:

Վարժվելով բանահավաքի ծանր գործին՝ Աբովյանն ի վերջո հանգել է այն հետևությանը, որ ճանաչելով իր ժողովրդի կենցաղը՝ պետք է անդրադառնալ նրա վերափոխմանն ու քաղաքակրթմանը: Այդ բանի առհավատչյան «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» դիմում-գրությունն է, որը գրել էր 1836 թ. Մոսկվայում՝ ռուսական կառավարությանը ներկայացնելու համար: Դա ինքնին մի ծրագիր էր՝ Արևելահայաստանը տնտեսական ու մշակութային առումներով ոտքի հանելու, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը առաջադիմական հիմքերի վրա դնելու, նոր մասնագետներ պատրաստելու, ինստիտուտ հիմնելու համար ևն: Ըստ այդմ՝ նա համառոտ նկարագրել է գյուղատնտեսության ճյուղերն ու տեխնիկայի հետամնացությունը: Նա բառացիորեն գրում է. «Էլ ինչո՞ւ զարմանալ, երբ 30-40 ընտանիքից բաղկացած մի գյուղ ի վիճակի է ամենաշատը միայն 5-6 գութան պահել և դաշտ ուղարկել, և սրանք իրենց հերթին այնքան վատորակ են, որ հարկավոր է լի-

նում ամենաքիչը 10-12 եզ լծել և 5-6 բանվոր (հոտաղ – Ռ. Ն.) բանեցնել, և որովհետև ո՛չ լծկան անասունները, ո՛չ էլ օրավարձը էժան չեն, ապա, կարծում եմ, պարզ է, թե որտեղից է առաջանում այդ չքավորությունը, և որտեղից՝ հաճախակի սովը»[11]:

Այնուհետև գրողը նկարագրել է վարուցանքի ժամանակ անհրաժեշտաբար կազմակերպվող կոլեկտիվ աշխատանքը. «Հարկավոր է, որ 6-8 ընտանիքներ միանան միմյանց հետ,– որոնցից մեկը հաճախ կարող է տրամադրել իր միակ բանվորին, իսկ մյուսն՝ իր միակ եզը,– մի լրիվ գութան սարքելու համար: Եվ այսպիսով, մշակում են նրանք իրենց դաշտերը հերթով, որոշ աշխատանքային օրերի: Ով ավելի շատ մարդ կամ անասուն կտրամադրի, նա էլ ավելի մեծ բաժին կստանա բերքից, այնպես որ, եթե մեկին բաժին է հասնում 10 գութանային աշխատանքային օր, ապա նա առաջին կարգի երկրագործ է համարվում: Շատ չքավորներ պետք է բավականանան երկու երեք աշխատանքային օրով և ուրիշ միջոցով իրենց գլխի ճարը տեսնեն»[12]:

Այնուհետև գրողը մանրամասնորեն նկարագրել է շատ ավելի վատ և խղճուկ տեխնիկական միջոցները, շեշտել ծանրաշարժ սայլի օգտագործման աննպատակահարմարությունը, որից գյուղը ունենում էր ամենաշատը 4-5 հատ: Նա ցավով նկատում է, որ շարունակվում է նահապետական եղանակով կալսումը, իսկ գյուղացիները գաղափար անգամ չունեն կալսիչ ու քամհար մեքենաների մասին, որի պատճառով հացահատիկի բերքահավաքն ու զտումը ընթանում են կորուստներով ու շատ երկար[13]:

Գրողը կարևորում է ոչ միայն իրենց դարն ապրած գյուղատնտեսական գործիքներն ու վարման եղանակները առաջնակարգ տեխնիկայով ու մեթոդներով փոխարինելու անհրաժեշտությունը, այլև առաջարկում է գիտականորեն ուսումնասիրել տարբեր հողատեսքերի հատկությունները և ըստ այդմ որոշել, թե դրանց վրա ինչ մշակաբույսեր է նպատակահարմար աճեցնել: Նա կարծիք է հայտնում, որ Հայաստանում կարելի է խրախուսել մետաքսի, բամբակի, կանեփի, կտավատի, ծխախոտի, բուսական ներկերի ար-

[11] ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 82-95:
[12] Նույն տեղում, էջ 86-87:
[13] Տե՛ս նույն տեղում, էջ 87:

տաղրությունները[14]: Բարեփոխումների իրականացման համար Խաչատուր Աբովյան լուսավորիչը ամենաանհրաժեշտ պայմաններից մեկը և ամենակարևորը համարել է հայ ժողովրդի կրթական մակարդակի բարձրացումը, ընդգծել է նրանց բացառիկ առանձնաշնորհները. աչքի են ընկել իրենց առևտրական ոգու ունակություններով, նրանց «վիճակված է երկու աշխարհամասերը միացնել և ավելի ու ավելի ամրապնդել: Ամենուրեք, ուր նրանք նստակյաց են, լինի այդ Կովկասում, Պարսկաստանում, թե Թուրքիայում՝ մեծ մասամբ նրանց ձեռքումն են գտնվում թե՛ առևտուրը, թե՛ արհեստները, թե՛ արդյունաբերությունը և թե՛ մանավանդ, հողագործությունը»[15]: «Զնայած, որ նրանք ապրել են մի այդպիսի ծանր և դաժան ճնշման ներքո, չրջապատված են եղել բացարձակապես ավազակներով, այդուհանդերձ,– նշում է ժամանակի մեծ մտածողը,– նրանց բարեպաշտ միտքը երբեք չի այլասերվել, երբեք չի բթացել դեպի կրթությունն ու կատարելագործությանը խորացող նրանց ոգին: Հայերի մոտ ասույթ էր դարձել. «Ով գրել, կարդալ չգիտի, նա կես մարդ է»: Նրանց ջանասիրությունը, կրթության հանդեպ ծարավը, որոնցով նրանք աչքի են ընկնում ներկայումս անդրկովկասյան բոլոր դպրոցներում, ուր ամենից շատ իրենք են հաճախում, անկասկածորեն հաստատում են այս»[16]: Այստեղից էլ Խ. Աբովյանը հավաստիացնում է, որ հնարավոր է հենց հայերի միջոցով ժամանակի ընթացքում արագ մի ընդհանուր քաղաքակրթություն տարածել այդ երկրներում՝ նրա հարևանների մեջ, որովհետև հայերը, բացի վերը հիշած հատկություններից, ունեն նաև շնորհք իրենց այն հարևան ժողովուրդների լեզուն, սովորույթները, առանձնահատկությունները ամենից լավ սովորելու և յուրացնելու, որոնց մեջ նրանք ցրված ապրում են[17]: Աբովյանը առաջարկում է իշխանություններին բացել առևտրական, արդյունաբերական և գյուղատնտեսական դպրոցներ, հայ գործարարներին՝ ներդնել կապիտալ միջոցներ՝ Հայաստանը, այդ թվում՝ նաև Անդրկովկասը դարավոր հետամնացությունից դուրս բերելու համար: Նա դրա իրագործման համար առաջ է քաշում ծրագրային մի լայն փաթեթ:

---

[14] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, էջ 90-91:
[15] Տե՛ս նույն տեղում, էջ 84:
[16] Տե՛ս նույն տեղում, էջ 84:
[17] Տե՛ս նույն տեղում:

5. ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԵԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒ ԾԵՍԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Խ. Աբովյանը հայոց սոցիոնորմատիվ մշակույթի կամ ընտանեական-հասարակական կենցաղը պատկերող բազմաթիվ ուշագրավ և արժեքավոր նկարագրություններ է թողել: Նրա «Առաջին սերը»[1], «Թիֆլիզու հայոց հանգստարանը»,[2] «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին»,[3] «Համառոտ ակնարկ հայերի մասին»,[4] «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին»,[5] «Գյուղական տների կառուցվածքը»,[6] «Վերք Հայաստանի»[7] և այլ ստեղծագործություններ հարուստ են հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի վերաբերյալ տեղեկություններով:

XIX դարի առաջին կեսը մի ժամանակաշրջան էր, երբ հայ իրականության մեջ դեռևս կենսունակ էին ընտանեական համայնքները կամ գերդաստանները: Նահապետական գերդաստանն իր կազմով ու կառուցվածքով սերտ ազգակցությամբ եռասերունդ կամ քառասերունդ անհատական ընտանիքների համախմբումն ու միավորումն էր մեկ տան մեջ: Խ. Աբովյանի նկարագրություններից երևում էր, որ Արևելյան Հայաստանում դեռևս բավականին կայուն էին պահպանվել գերդաստանական հարաբերությունների շատ մնացուկներ, որոնց ուսումնասիրությամբ հնարավոր է վերականգնել արևելահայ հատվածի ընտանեական, ամուսնական կյանքի իրական պատկերը: Այդպիսի մեծ ընտանիքների կազմը, ըստ գրողի, հասնում էր 10-50 հոգու: Դրանց երկարատև պահ-

[1] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 4, Երևան, 1947, էջ 1-19:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 40-47:
[3] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 8, Երևան, 1958, էջ 154-193:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 32-42:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 82-96:
[6] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 10, Եր., 1961, էջ 59-99:
[7] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Վերք Հայաստանի ողբ հայրենասերի, Երևան, 2004, էջ 3-422:

պանման հարցում հիմնականն ու առաջնայինը տնտեսական դրդապատճառներն էին: Բնափակ տնտեսությունը և արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը պահանջում էին արտադրական մեծ կոլեկտիվների համակեցություն[8]:

Գերդաստանին բնորոշ էին կայուն կազմը, կուռ ղեկավարությունը, փոխհարաբերությունները կարգավորող կարգ ու կանոնը, որոնք, հազարամյակների միջով փոխանցվելով, սովորութային ուժով հասել էին XIX դար՝ դառնալով ազգագրագետների ուսումնասիրության առարկա:

Գերդաստանի նահապետը նրա ընդհանուր, միանձնյա ղեկավարն էր: Նրա իրավունքները գրեթե անսահմանափակ էին: Նա էր գերդաստանական ամբողջ սեփականության տերը, գերդաստանի բոլոր անդամների ճակատագիրը տնօրինողը: Նրա իրավունքն էր խրախուսել գերդաստանի օգտին գործող անձանց և պարսավել ու պատժել նրա շահերն ու սովորութային իրավունքը խախտողներին: Բացի դրանից՝ կարող էր ժառանգությունից զրկել անհնազանդ զավակներին կամ թոռներին և հեռացնել ընտանիքից: Եվ եթե նմանին մինչև իսկ ազգականն էլ ապաստան տար, այդպիսին տան թշնամի կհամարվեր: Ազգականն ավելի շուտ պետք է աշխատեր հաշտեցնել նրանց, ինչը և հաճախ կատարվում էր: Քանի դեռ մեծերից մեկն ապրում էր, բոլորն իրենց երեխաներով և կանանցով հանդերձ նրա հպատակներն էին[9]:

Ընդհանրապես գերդաստանի նահապետին բնորոշ այս և նման իրավունքները բավականին լավ էին պահպանված, մի հանգամանք, որին առանձնահատուկ ուշադրություն առաջինը դարձրել է Խ. Աբովյանը: Այսպես, ըստ գրողի, գերդաստանում ծերունիների ընդգծված հեղինակության մասին է վկայում խոսկապ կոչվող արարողությունը[10]:

Համատարած երևույթ էր, որ հարսներն ամուսնության առաջին իսկ օրից երեսը ծածկում էին քողով: Քողածածկ հարսն ազատ էր մնում գերդաստանի ու օտար տղամարդկանց աչքերից: Միայն առաջնեկի ծննդից հետո կամ, ինչպես Խ. Աբովյանն է հի-

[8] Տե՛ս ***Косвеи М.,*** Семейная община и петронимия, Москва, 1963, с. 56, ***Карапетян Э***., Армянская семейная община, Ереван, 1958, с. 8:
[9] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 10, էջ 64:
[10] Տե՛ս նույն տեղում:

չատակում, «խոսկապ» արարողությունից հետո հարսը կարող էր բաց երեսով երևալ օտար տղամարդկանց: Այս ծեսը կատարվում էր նույնիսկ այն ժամանակ, երբ հարսներն արդեն 30-40 տարեկան էին, այսինքն՝ անգամ մի քանի զավակների տեր էին: Սակայն մինչ այս ծիսակատարությունը, ծնողները, երբ դրսում կամ այլ տեղ հարսներին խոսելիս տեսնեին, պետք է չտեսնելու տային[11]: Այս ազատության համար նրանք անձնվիրությամբ և երախտագիտությամբ համբուրում էին մեծերի ձեռքը և իրենց երջանիկ զգում, որ տանն արդեն որպես հասուն կանայք են դիտվում: Ծերունիները հաճախ թանկարժեք նվերներ էին անում նրանց, իրենց ձեռքով իջեցնում էին այն քողը, որը մինչև այդ ծածկած էր պահում նրանց քիթն ու բերանները: Դա նրանց ազատության նշանն էր:

Հայկական գերդաստանում ընդհարված ամուսինների հաշտեցման գործում ևս գլալի դեր է խաղացել նահապետը: Ըստ սովորույթի՝ վիճած ամուսիններին բերել են մեծի մոտ, որոնք համբուրել են նրա ձեռքը և խոստացել, որ նման բան այլևս չի կրկնվի: Այնուհետև ամուսինների հաշտեցումն ընդգծելու համար ծերունին խրատական և պարսավանքի խոսքեր է ուղղել իր որդուն՝ ասելով. «Մի՞թե իզուր եմ քեզ մինչև այս հասակը հասցրել, որ դու մեր ծերությունը դառնացնե՞ս, չգիտե՞ս, որ ամեն րոպե կարող եմ քեզ հետ ուզածիս պես վարվել: Որդի, այդ բոլորը մեզ համար չի, այլ քեզ համար է, մեր մի ոտն արդեն գերեզմանում է. ինչ դու մեզ անես, նույնը քո երեխաներից շուտով կստանաս»[12]:

Ծնողների նկատմամբ որդիների ամենափոքր հանդգնությունը համարվում էր ընտանեկան աղետ, վշտի պատճառ. «Աստված իր օրհնությունն իմ տանից վերցրել է, մխիթարության փոխարեն ցավ ու վիշտ տվել: Լսվա՞ծ բան է, որ որդին իր հոր հանդեպ անհնազանդ լինի. իմ տան վրա անեծք կա» և այլն,– ասում էին նրանք: Մեծերի նկատմամբ խորին հարգանքը, ըստ Խ. Աբովյանի, դրսևորվում էր հայ ընտանեկան կենցաղի բոլոր դրվագներում: Ուշագրավ է նաև գրողի ճաշելու պահի վերաբերյալ նկարագրությունը. «Տան առավել տարեց անդամները և նրանց հետ ավելի երիտասարդներն իրենց ջահել կանանցով նստում են մի կողմում, դեմքերը մեծ մասամբ հակառակ կողմը դարձրած, որտեղ նստում

[11] ***Աբովյան Խ.***, Երկեր, հ. 10, էջ 65:
[12] Նույն տեղում:

են ծերունիները: Տատը մեծ մասամբ ճաշում է ծերունու դիմաց, որպեսզի վերջինս չտեսնի, թե ինչպես են ուտում մյուսները, չնայած մեզ մոտ մեկընդմիշտ կանոն է, որ երիտասարդ կանայք և աղջիկներն ուտելու ժամանակ մի ձեռքը միշտ պահում են բերաններին, անկախ այն բանից՝ այնտեղ է նա, թե ոչ: Նրանց խոսակցությունն այնքան ցածր է, այնպես գաղտնի, որ մինչև իսկ այդ տարածության վրա ոչինչ չի կարելի ասել, բացի փսփսոցից»[13]:

Չնայած նահապետի բռնապետական դերին՝ նրա մահը միշտ էլ մեծ կորուստ է համարվել գերդաստանի համար՝ առաջ բերելով բոլոր անդամների ափսոսանքն ու կարեկցանքը: Այս մասին ևս Խ. Աբովյանը թողել է արժեքավոր նկարագրություններ: Սրտառուչ է, թե ինչպես են արդեն 50-60 տարեկան որդիները երախտագիտության խոսքեր ասել հանգուցյալի մասին. «Մեր տան սյուները քանդվեցին, ո՞վ է մեզ կառավարելու և սանձահարելու, թանկագին ծնողներ: Այժմ մենք նման ենք մի տակառի, որի կափարիչը չկա, և ամեն կեղտոտություն անարգել ներս է լցվում»:

Մահացած նահապետին փոխարինել է ավագ եղբայրը կամ ավագ որդին, որին չէին դիմում իր անունով, այլ ***հայր*** պատվանունով: Նրա կնոջն անվանել են Մեծ նան, իրենց հարազատ մորը՝ Փոքր նան, և նրանց երեխաները քույր և եղբայր են համարվել[14]: Ավանդական ընտանեկան այսպիսի դրվածքը վկայում է արյունակցական-ազգակցական կապերի կենսունակության մասին:

Ընտանիքի նահապետի օգնականը նրա կինն էր, որը մեծ իշխանություն ուներ հատկապես կանանց նկատմամբ: Անդամ նահապետի մահից հետո մեծ մոր ընդհանուր հսկայական գործառույթները պահպանվում էին: Նրա հեղինակությունը խարսխված էր ոչ թե բռնի ուժի, այլ իսկապես հարգանքի վրա:

Նկարագրելով ներընտանեկան փոխհարաբերությունները՝ Խ. Աբովյանն անդրադարձել է նաև թոնրատանը (հացատուն), որտեղ ճաշել են գերդաստանի անդամները, լավաշ թխել, տաքացել: Թոնիրը վառել են ամեն օր՝ վաղ առավոտյան: Բոլոր կերակուրները եփել են թոնրի վրա: Կափարիչով ծածկված թոնրի վրա դրել են քառակուսի սեղանի ձև ունեցող, մեկ ոտնաչափ բարձրությամբ քուրսին, որը երկու-երեք կարպետով կամ գորգով ծածկել են այն-

[13] ***Աբովյան Խ.,*** Հ. 10, էջ 67:
[14] Տե՛ս նույն տեղում, էջ 28-29:

պես, որ դրանց ծայրերը ձգվեն մինչև հատակը՝ տաքությունը ներսում պահելու նպատակով: Ընտանիքի բոլոր անդամներն ըստ կարգի նստել են քուրսու շուրջը և տաքանալու համար ոտքերը, հաճախ նաև ձեռքերը երկարել են ներս: Ընտանիքի հայրն ունեցել է իր հատուկ տեղը: Քուրսու շուրջը ճաշել են առավոտյան և երեկոյան: Կանայք մեծ մասամբ ճաշել են տղամարդկանցից առանձին: Շատ հաճախ հայր ու որդի, մայր ու աղջիկ, քույր ու եղբայր միևնույն ամանից են կերել, թոնրատանն ընդունել են միայն ազգականներին և ծանոթ հյուրերին[15]: Ավելի ուշ՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին, գերդաստանի նահապետի հեղինակությունն աստիճանաբար անկում է ապրել: Դա կապիտալիստական հարաբերությունների երկիր ներթափանցման հետևանք էր, որը նպաստում էր անհատական ընտանիքների դերի բարձրացմանը:

Խ. Աբովյանը մանրամասնորեն անդրադարձել է հարսանիքին, որը, փաստորեն, ամեն մի ամուսնության հասարակայնորեն վավերացնելու ծես էր համարվում: Գրողը, ճիշտ ըմբռնելով հարսանեկան սովորույթների դերն ու նշանակությունը, փորձել է դրանք իմաստավորել: Ըստ նրա՝ հարսանեկան սովորույթները՝ որպես ազգային երևույթ, միանգամայն ինքնատիպ են[16]: Ամուսնությունը մեծ մասամբ կատարվել է ոչ թե ազատ ընտրության միջոցով, այլ ծնողների ցանկությամբ:

Ամուսնացող կողմերի՝ սեփական ընտրությամբ ամուսնությունը խստորեն սահմանափակված էր, որին մեծապես նպաստում էր աղջիկներին մանկության շրջանում նշանելու կամ նույնիսկ հարս տանելու սովորությունը: Այսպիսի դեպքերում փորձում էին արդարանալ այն պատճառաբանությամբ, թե ընտանիքի համար անհրաժեշտ են աշխատավոր ուժեր, որ նրանք ձեռք են բերում՝ հանձին նորահարսի[17]: Գրողի դիտարկման համաձայն՝ ոմանք իրենց խնամիական կապերը կնքում էին այն ժամանակ, երբ երեխաները դեռևս չէին ծնվել: Եթե մեկին աղջիկ էր ծնվում, մյուսին՝ տղա, համաձայն պայմանավորվածության՝ տասնհինգ տարին լրանալուն պես նրանց ամուսնացնում էին: Սովորաբար տղաներին ամուսնացնում էին մինչև նրանց քսան տարեկան

[15] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** հ. 10, էջ 69:
[16] Տե՛ս նույն տեղում, հ. 8, էջ 162-163:
[17] Տե՛ս նույն տեղում, էջ 164:

դառնալը, իսկ աղջիկներին՝ մինչև տասնհինգ: Յուրաքանչյուր ընտանիքի հայր տենչում է այն օրվան, երբ կկարողանա երջանկացնել իր զավակներին՝ ամուսնացնելով. «Չէի ցանկանա էս մաշված ոսկորներս հողի տակ դնել, մինչև որ հարսանիքիդ օրը չպարեմ»: Կամ՝ «Հը, տղա, երբ՞ պիտի քեզ լծենք կամին, գիժ մոզու պես դես ու դեն ես ընկնում»: «Թող մենք էլ կարմիր թելը (նարոտը – Ռ. Ն.) վիզդ կապենք և թագը գլխիդ դնենք»[18]:

Խ. Աբովյանը բազմիցս ընդգծել է, որ ամուսնությունը տղամարդկանց համար եղել է շահույթի աղբյուր և դրամագլուխ ձեռք բերելու միջոց: «Շատ բացառիկ դեպքերում,– գրում է Աբովյանը,– կհանդգնի որևէ երիտասարդ իր սրտի ուզածին ընտրել, իսկ աղջիկը՝ երբեք»[19]: Խոսելով ամուսնության հիմքում ընկած դրամական գործարքների մասին՝ Խ. Աբովյանը վեր է հանում արատները, անողոք ծաղրի ենթարկում ժամանակի բարքերը: «Բոլորն էլ փողի ծարավ են զգամ,– գրում է նա,– փողի համար են ամուսնանում, փողն է ամենամեծ սրբությունը աշխարհիս երեսին երկնային ամենամեծ բախտավորությունը, լավագույն բուժամիջոցը, ինչպես նաև դրախտ ու դժոխք գնալու, ամբողջ աշխարհը տակն ու վրա անելու, կործանելու և նորից չինելու միակ միջոցը»[20]: Խ. Աբովյանն ազդագրագետի խոր իմացությամբ և գեղագետի հմտությամբ նկարագրել է նաև Թիֆլիսի հայության այն խոր ապրումները, որոնք առնչվում էին օժիտի պատրաստման, աղջկա ծնունդը դժբախտություն համարելու հետ[21]: Աղջկա օժիտը հասնում էր 200 - 1000 - 7000 - 10.000 արծաթ ռուբլի և մի այդքան էլ ակնեղենի, նամանավանդ Թիֆլիսի համար ամեն ինչ եռապատիկ թանկ էր, քան ուրիշ տեղ:

Երիտասարդին կամ աղջկան ամուսնացնելը ծնողների և տան մեծերի գործն է եղել: Երբ երիտասարդները հասունացել են,

---

[18] ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 8, էջ 162:

[19] Նույն տեղում:

[20] Նույն տեղում, էջ 179-180:

[21] Ուշագրավ է, որ աղջկա ծնունդը պատուհաս է համարվել Թիֆլիսի հայության համար: «Թող սատանի բաժին դառնա: Քիչ ցավ ունեինք, հիմա էլ նորն է գալիս: Երբ աստված մարդուն պատժել է ուզում, սրանից մեծ պատիժ չի կարող լինել: Ա՜խ, երանի թե մեռներ, իսկույն ևեթ հողի տակը դնեինք», «Սև լիներ էս օրը մեզ համար, աղջիկ է ծնվել: Ոչ սպանել կարող ես, ոչ էլ ջուրը գցել»:

հայրն ու մայրը սկսել են մտածել նրանց ամուսնության մասին: Ընտրությունից հետո, որը մեծ մասամբ կատարում էր տղայի հայրը, նա գնում էր աղջկա բնակավայրը տեսնելու նրան ջուր կրելիս (որովհետև մեծ մասամբ աղջիկներն են գետից կամ աղբյուրից ջուր բերել), ապա խնամախոսի միջոցով տեղյակ է պահել աղջկա ծնողներին: Վերջիններս սովորաբար մերժել են ամեն տեսակ առաջարկություններ, մինչև չստանան իրենց պահանջածը: Միաժամանակ գովերգել են իրենց աղջկա արժանիքները. «Իմ աղջիկը գեղեցիկ է արևի նման, անմեղ՝ ինչպես աղավնին, ջանասեր է և կարող է տասը մարդու գործ կատարել, կույր չէ, աչքեր ունի՝ ամեն մեկը լուսնի նման... ի՞նչն է պակաս: Հաց շատ ունենք նրան կերակրելու համար, հայտնի օջախից է. չէ՛, չէ՛ էդպես էժան չեմ ծախի: Նա մեր տան աչքն է, մեր տան սյունն ու լույսը: Նա հողից չի բուսել որ էդպես հեշտ ու հանգիստ տնից դուրս գցեմ: Չի՛ ուզում, ուզածս չի՛ տալիս, թող նա իր ճամփեն գնա, ես էլ իմ»:

Աղջկա ծնողներին մեծ համբերությամբ լսելուց հետո սկսում է խոսել միջնորդը, որի դերը կատարել են քահանաները, պառավ կանայք կամ տղամարդիկ: Միջնորդը խորամանկորեն և հմտորեն սկսել է հակաճառել աղջկա ծնողներին:

Երկու կողմերի համաձայնության դեպքում աներն ստացել է պահանջած իրերն ու դրամը, որից հետո կատարվել է նշանդրեքի արարողությունը: Նշանդրեքի ժամանակ հարսին, բացի զգեստներից, նվիրել են մատանիներ և այլ զարդեր, որոնցով նա արդեն կապվում էր ապագա ամուսնու ընտանիքի հետ: Այդ օրը հարսնացուին նվիրում էին նաև շաքար և կոնֆետներ: Դրանից հետո քահանան օրհնում էր հարսի զգեստները նշանվածների ծնողների ներկայությամբ: Նշանդրեքից հետո հարսնացուն քող էր կրում և տնից դրեթե դուրս չէր գալիս[22]: Ազգագրական նյութերը վկայում են, որ նշանդրեքից հետո հարսին զանազան հասարակական վայրեր տանելու պարտականությունն ընկնում է տղայի կողմի կանանց վրա:

Սովորույթի համաձայն՝ փեսան իրավունք չուներ աներոջ հետ հանդիպելու. դրա համար գոյություն է ունեցել հատուկ արարողություն: Փեսային աներոջ տուն են հրավիրել, ընծաներ տվել, բայց նա կանգնել է աներոջ մոտ գլուխը կախ հանցավորի նման և իր մթքերն արտահայտել է մնջախոսությամբ, հաճախ

[22] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** հ. 8, էջ 169:

համբուրել աներոջ ձեռքը, չի համարձակվել նրա հետ ճաշել ու կատակել[23]:

Խ. Աբովյանի նկարագրած՝ նորապսակների խուսափման այս սովորույթը որոշակի հասարակական պայմանների հետևանք էր: Սովորույթի ծագման, մեկնաբանման, դասակարգման շուրջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Գիտնականներից ոմանք այն կապում են ա) կնոջ առևանգման ինստիտուտի հետ՝ իբրև բռնի ամուսնության դեմ ձևավորված հակազդեցություն, բ) դիտարկել են որպես արգելակող համակարգ, սեռային կապերի կանխման միջոց, որը ծագել է խմբային ամուսնությունից անհատականի անցման ընթացքում, գ) որպես մայրիշխանությունից հայրիշխանության անցման ժամանակաշրջանի մնացուկ, դ) տիրապետող բազմաթիվ մնացուկների հոգեբանական ըմբռնում[24]:

Աները փեսայի հետ զրուցելիս նորից իր աղջկա գովքն է արել, փեսային խրատներ տվել. «Արի ձեռքս համբուրիր ու ղոչաղ կաց, չեմ թողնի, որ ճակատդ մռայլվի, հողի տակից էլ ձեզ համար հաց կհանեմ: Սրանից հետո իմ դուռը բաց է քեզ համար, իսկ հարսնացուիդ (մինչև ամուսնությունը – Ռ. Ն.) իրավունք չունես տեսնելու, թե չէ աչքերդ կհանեմ, աղջկաս էլ ընդմիշտ կխլեմ քեզանից, ասածներս մտքումդ պահիր: Ես ձեզ իրար մոտ կտանեմ»[25]: Այս բոլորն ավարտվել է նրանով, որ աները հարվածել է փեսայի ականջին, ծոծրակին, համբուրել է ճակատը, քաշել ականջը, քիթը, հետո երկու ձեռքով բռնել է ամոթից կաս-կարմիր կտրած փեսայի գլուխը և սեղմել կրծքին: Այս դեպքում աներոջ համբույրը, ըստ Ե. Լալայանի, ոչ թե հարգանքի, այլ սիրո նշան էր[26]:

Ըստ Խ. Աբովյանի վկայության՝ աղջկա մայրը ևս հատուկ ուշադրություն է դարձրել փեսային, հյուրասիրել համեղ կերակուրներով: Նրան է դիմել «աչքիս լույս», «սրտիս սյուն», «ցավդ տանեմ», «երեսս ոտքիդ տակ» և այլ սիրալիր արտահայտություններով:

---

[23] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** հ. 8, էջ 169:

[24] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Խուսափման սովորույթի դրսևորումները աղձնիքահայերի ընտանեկան կենցաղում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2005. 1, էջ 149:

[25] ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 8, էջ 170:

[26] Տե՛ս ***Լալայան Ե.,*** Ծիսական կարգը հայոց մեջ, Ա պրակ, Թիֆլիս, 1913, էջ 10:

Աղգագրական առումով մի սքանչելի երկխոսություն է զոքանչի սիրատոչոր խոսքերն ուղղված նորափեսային. «...Մեռնեմ աչքերիդ, գլխիդ, հոգուդ, երեսիդ, մեռնեմ քո բոյ-բուսաթին: Սիրտս ուզում է քեզ սաղ-սաղ ուտել: Երբ քեզ տեսնում եմ, արևն է ծագում առաջս: Ուզում եմ գլխովդ պտտույտ գալ: Ցավդ տանեմ: Երեսս ոտքիդ տակը: Թո՛ղ աստված հոգիս ու մարմինս առնի, քեզ տա: Հոգիս հոգուդ բնակարան է դարձել: Որ կյանքս էլ ուզես, կտամ: Ամեն անգամ, երբ ոտքդ իմ շեմն ես դնում, կարծես թե երկինք է երևում իմ տանը: Մեռնեմ անունիդ: Եթե կարողանայի սիրտս բաց անել, կտեսնեիր, որ արյունս քո սիրուց եռ է գալիս, երբ ինձանից հեռանամ ես, թվում է, որ տան պատերը դևեր են դարձել ու ինձ ուտել են ուզում: Մի օր քեզ չտեսնելիս կարծես աշխարհը տակն ու վրա է լինում: Դու հոգուս լույսն ես, սրտիս ճրագը...: Աչքս ջուր է դառնում, երբ ուշանում ես: Երբ ձայնդ ականջս է ընկնում, խելք ու միտքս չքանում է: Դու իմ թագն ու պարծանքն ես: Քուն թե արթուն քեզ եմ միայն տեսնում: Պատկերդ այնպես է տպավորվել իմ սրտում, որ եթե քեզ մի ժամ չտեսնեմ, հոգիս կտամ: Ինչ ունեմ՝ քոնն է. տունս, ունեցածչունեցածս, կյանքս, բոլորս մատաղ լինենք ոտքերիդ տակ: Մեռնեմ էն ձեռքին, որ քեզ պահել ու մեծացրել է»[27]: Նման վերաբերմունքը փեսայի նկատմամբ շարունակվել է նշանդրեքից մինչև հարսանիք: Այդ ընթացքում փեսան պարտավոր էր տոն օրերին նվերներով այցելել իր նշանածին:

Խ. Աբովյանի վկայությամբ հարսանիքը տևել է երեք օր, մասնակցել են բոլոր ազգականները: Փեսան նախօրոք սափրվել է, լողացել: Յուրահատուկ ծես է եղել փեսայի բաղնիք գնալը, որն ուղեկցվել է երաժշտությամբ և փեսայի ընկերների ուղեկցությամբ: Բաղնիքում երեկոյան քեֆ են արել ու կատակել, իսկ փեսան, սովորության համաձայն, քեֆին մասնակցելու իրավունք չի ունեցել, որովհետև հաջորդ օրը պետք է հաղորդություն ընդուներ եկեղեցում[28]:

Խ. Աբովյանը գրել է, որ բաղնիքից վերադառնալուց հետո բոլոր հյուրերը զվարճանում են, պարում ու երգում, նրանց հյու-

[27] ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 8, էջ 170:
[28] Նույն տեղում, էջ 171:

բասիրում էր փեսայի հայրը: Ոչ մի կին իրավունք չուներ այդ սենյակում երևալու: Այս նկարագրության ժամանակ է, որ Խ. Աբովյանը հարևանցիորեն հիշատակում է խնամապագին նմանվող մի երևույթ: Նա գրում էր. «Ձահել տղաներից մեկը ձայն է տալիս. Զինակիրնե՛ր, ում քրոջը համբուրենք: – Խաչեղբոր,– հնչում է պատասխանը: Երբեմն կանչողին պատասխանում են. «քո քրոջը», կամ՝ «նրա քրոջը, ով ձայն տվեց»[29]: Այս սովորույթը պահպանվել էր XIX դարի վերջերին և XX դարի առաջին քառորդին, որն արվում էր հարսնառի կերուխումն աղջկա հոր տանն ավարտելուց հետո՝ տանից դուրս գալու պահին: Խնամեպագի իմաստը նախապես ընտրած աղջկան հասարակայնորեն տաբուացնելն էր: Հարսնացուի տանը հավաքվել են մի խումբ կանայք, որոնք հարսնացուի աչքերը ներկել են սև ներկով, իսկ եղունգներն ու մատները կարմիր հինայով: Հինան այս դեպքում օգտագործվել է որպես զարդ, մյուս կողմից խորհրդանշել է նորի գաղափարը:

Հայկական հարսանիքների ժամանակ կարևոր անձ է եղել խաչեղբայրը, որն անպատճառ պետք է փեսայի արյունակից ազգականը լիներ[30]: Այս դեպքում Խ. Աբովյանը պետք է նկատի ունենար խաչեղբոր տոհմական լինելը, որովհետև հայաբնակ շատ գավառներում յուրաքանչյուր գերդաստան իր խաչեղբայրներին շարունակ միևնույն տոհմի սերունդներից է հրավիրել[31]:

«Քավոր», «կնքահայր», «խաչեղբայր» հասկացությունները չափազանց կարևոր դեր են կատարում հայ ընտանեկան-ամուսնական ծեսերի ու սովորույթյունների մեջ: Պսակի արարողության ժամանակ քավորի ներկայությունը խիստ անհրաժեշտ է համարվել: Հարսանեկան ծիսակատարության ողջ ընթացքում քավորին վերապահված է բացառիկ դեր՝ պաշտպանել «թագավորին» և «թագուհուն» անտեսանելի և տեսանելի բոլոր չարիքներից ու թշնամիներից: Քավորի առաջնորդությամբ հարսանքավորների խումբը գնացել է հարսնացուի ետևից, իսկ փեսայի ծնողներն ու տարեց հյուրերը մնացել են տանը: Փեսա-թագավորը մինչև շեմից ներս

[29] ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 8, էջ 172-173:

[30] Նույն տեղում, էջ 171-172:

[31] Տե՛ս ***Սամուելյան Խ.,*** Մայրական իրավունքը // «Ազգագրական հանդես», գիրք XVII, Թիֆլիս, 1908, էջ 74:

մտնելն աներոջից որևէ նվեր է ստացել: Աները փեսային խոստացել է իբրև ընծա նվիրել մեկ եզ.– «Եզ ունես, արտդ վարիր...»: «Մի եզով է կամենում փեսային ընդունել»,– ծաղրել են ներկաները...: Ի վերջո աները խոստացել է. «Իմ սպիտակ ձին կամ հինգ տակառ գինին, կամ թե՝ պարտեզի մի մասը ձեզ փեշքեշ»: Այնուհետև Հարսի մայրը բակում փեսայի բերանը կոնֆետ կամ շաքար է դրել, հետո երկու մետաքսե կանաչ և կարմիր ուսաշոր խաչաձև կապել փեսայի և խաչեղբոր վզին, համբուրել նրանց, շաքարաջուր տվել խմելու, որից հետո՝ պարել: Ըստ Խ. Աբովյանի վկայության, պարում էր նաև աները[32]: Այնուհետև փեսաթագավորին նստեցրել են նրա համար հատակ պատրաստած տեղը, որից հետո քահանան օրհնել է Հարսի զգեստները: Հարսի դեմքը ծածկել են սպիտակ քողով, գլխի չորս կողմը փաթաթել բաց կարմիր կտոր, որը կոչվել է ***կրաքաշի***[33]: Կտորի մի ծայրը բռնել է Հարսը, իսկ մյուսը՝ փեսան: Հարսին հագցնելուց հետո հրավիրել են խաչեղբորը, որ կապի Հարսի գոտին, որը խորհրդանշել է կուսության գաղափարը:

Նորապսակներին օրհնել է աղջկա հայրը, այնուհետև Հարսն ու փեսան Հարսանքավորների հետ շարժվել են դեպի եկեղեցի: Աղջկա ծնողները Հարսանքավորների հետ եկեղեցի չեն գնացել: Խ. Աբովյանն այս երևույթի մեջ տեսնում է առևանգմամբ ամուսնությունից առաջացած թշնամության հետքերը: Հարսնացուին եկեղեցի է ուղեկցել այն կինը, որը նրա մատներին հինա է դրել, ինչպես նաև Հարսի եղբայրը, որոնք Հարսին պաշտպանել են «չարից»: Երաժիշտները գնացել են առջևից, փեսան իր խաչեղբոր հետ հետևից, իսկ երկու քայլ այն կողմ՝ Հարսնացուն:

Եկեղեցում խաչեղբայրը նորապսակների գլխավերևում պահել է մերկացրած սուր, իսկ եկեղեցու սպասավորները կատարել են պսակադրությունը[34]: Պսակադրության վերջում քահանան նորապսակներին տվել է մի բաժակ գինի, որից սկզբում խմել է փեսան, հետո՝ Հարսը[35]: Պսակադրությունն ավարտելուց հետո Հարսանքավորները գնացել են փեսայի տուն: Նորապսակներին դիմավորել է փեսայի մայրը, որը պարելով մոտեցել է Հարսին, համբուրել

[32] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Երկեր, հ. 8, էջ 174:
[33] Տե՛ս նույն տեղում, էջ 174-175:
[34] Տե՛ս նույն տեղում, էջ 176:
[35] Տե՛ս նույն տեղում:

նրան, ներս տարել և նստեցրել նրա համար նախատեսված տեղում, գիրկը դրել տղա երեխա՝ նմանն ունենալու ակընկալիքով: Հաջորդ օրը կատարվել է մի ծես, որի ժամանակ հավեր են զոհաբերել: Խաչեղբայրը առանց այլևայլության սկսել է սրով խփել ու սպանել պատահած հավերին, որոնց տերերը չեն պահանջել հավի արժեքը: Երբեմն այսպես են վարվել նաև պատահած դառների և ուլերի հետ[36]: Այդ երեկոյան նորապսակներին նվերներ հանձնելու արարողակարգն էր արվում: Ամենաթանկ նվերը պետք է տար խաչեղբայրը: Խաչեղբորը կատարած ծախսերի դիմաց որոշ ժամանակ անց փեսայի ծնողները պարտավոր էին հատուցել խաչեղբորը՝ տուն տանելով նրա ծախսերը՝ թանկարժեք նվերներ: Նույն օրը քահանան արձակել է կարմիր թելը (նարոտը), որը խորհրդանշել է հարսանիքի ավարտը, և նորապսակների անկողին մտնելու իրավունք ստանալը: Այդ ծեսը կոչվել է թագվերացում: «Թագվերցումից» երեք-չորս շաբաթ հետո միայն, ինչպես վկայում Խ. Աբովյանը, հարսն իրավունք է ստացել այցելելու ծնողներին, որը կոչվել է ***երեսբացուկ*** կամ ***դարձ***[37]:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Խ. Աբովյանի բազմաթիվ ստեղծագործությունները՝ փորձել ենք ի մի բերել հայոց ընտանեկան-ամուսնական սովորույթներին ու ծեսերին առնչվող նկարագրությունները, որոնք բավականին շատ տեղեկություններ են պարունակում ավանդական հայկական ընտանիքների սոցիալ-հասարակական փոխհարաբերությունների և առհասարակ տվյալ ժամանակաշրջանի ավանդութային արժեհամակարգի մասին:

[36] Տե՛ս ***Աբովյան Խ.***, Երկեր, հ 8, էջ 177:
[37] Տե՛ս նույն տեղում:

6. Խ. ԱԲՈՎՅԱՆԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՂ

XIX դարի սկզբին եվրոպական գիտական միտքը հայկական միջավայր թափանցեց Եվրոպայում կրթություն ստացած հայորդիների միջոցով: Նշանակալից դեր խաղացին հայկական դաղթօջախները Եվրոպայում, որտեղ եվրոպական կրթություն ստացան բազմաթիվ հայ գիտնականներ: Այդպիսին էր առանձնապես Վենետիկին մերձ Սուրբ Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանությունը: Նրանք առաջինն էին, որ համակարգված ձևով ի մի բերեցին մատենագրության մեջ հաստատագրված ազգագրական տվյալները[1]: Այդ ժամանակ գրական բանասիրության ասպարեզ իջավ Մ. Թաղիադյանն (1803-1858) իր «Ճանապարհորդություն ի Հայս» գիրքը[2] նշանակալից երևույթ էին հայ իրականության մեջ ոչ միայն իբրև գրական գործ, այլև իբրև մի ուշագրավ աղբյուր ազգագրական տեսանկյունից:

Թաղիադյանը, XIX դարի սկզբին հայ կյանքից ազգագրական ու բանահյուսական նյութեր օգտագործելով, ուղի հարթեց հետագայում իրեն հաջորդող գրողների համար: Նրա հետ մի շարք այլ մտավորականներ իրենց այդ տիպի գործունեությամբ նախադրյալ հանդիսացան երկու նշանավոր մտավորականների՝ քանաքեռցի Խ. Աբովյանի և տրապիզոնցի Ա. Բժշկյանի (1777-1851) համար: Այս երկու նշանավոր դեմքերը XIX դարի առաջին կեսին գրական-հասարակական մտքի բնական ծնունդ էին: Հայ ազգագրության պատմության մեջ նրանք դարագլուխ են կազմում այդ գիտությունը հունի մեջ դնելու, նրան տարերքից դեպի գիտության ուղին մղելու տեսանկյունից: Մ. Բժշկյանի՝ ազգագրական լուրջ նշանակություն ունեցող գործերը երկուսն են՝ «Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով...» (Վենետիկ, 1819) և «Ճանապարհորդութիւն ի Լեհս» (Վենետիկ, 1830): Այս գրքերը գրվեցին ան-

[1] Տե՛ս ***Նահապետյան Ռ.***, Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // «Պատմաբանասիրական հանդես», 2011, թիվ 3 (188), էջ 132-149:

[2] Տե՛ս ***Թաղիադյան Մ.***, Ուղեգրություններ, Երևան, 1975, էջ 23-201:

ձամբ իր շրջագայությունների ընթացքում սեփական դաշտային ազգագրական եզակի նյութերի հիման վրա: Դրանք գիտական շրջանառության մեջ դնելը բացառիկ երևույթ էր ոչ միայն կորստից փրկելու, այլև հայ և օտար շատ ժողովուրդների մասին բացառիկ աղբյուրագիտական տեղեկությունների հավաստման, դրանց արժևորման տեսանկյունից: Փաստորեն՝ Մինաս Բժշկյանը առաջին ու խանդավառ հայ բանահավաքն էր, որ մեծ քանակությամբ նյութ է գրի առել XIX դարասկզբին:

Պոնտոսի պատմության մեջ նա բավական ուշագրավ նյութեր ունի ծովափնյա մի շարք ցեղերի ու ժողովուրդների ինչպես քաղաքական կացության, նմանապես և կենցաղի ու սովորությունների վերաբերյալ: Դրանք այն էթնոսներն են, որոնց մեծ մասը թուրքական տիրապետության ներքո ձուլվեցին, թուրքացվեցին: Նրա մյուս գործը լեհահայերի էթնոմշակութային առավել քան կարևոր բնութագիրն է հետագա սերունդներին հավաստելու առումով: Բացի նշված աշխատություններից՝ Ս. Բժշկյանին են պատկանում «Հմտություն մանկանց» և «Ճեմարան գիտելյաց» դասագրքերը, որոնցում կարևոր տեղեկություններ էին հաղորդվում աշխարհի ժողովուրդների մասին: Սակայն առ այսօր նշված ուսումնասիրությունները պատշաճ ուսումնասիրված և գնահատված չեն: Ս. Բժշկյանին վիճակված չէր անել այն, ինչը արեց հայրենասեր լուսավորիչ Խ. Աբովյանը:

Ինչպես Եվրոպայում և Ռուսաստանում XVIII դարում, Հայաստանում XIX դարի սկզբներին գեղարվեստական գրականությունն սկսեց փոխել իր ուղղությունը՝ ստեղծագործության նյութը դարձնելով ազգային սովորություններն ու ավանդույթները: Աշխարհիկ գրականության խմորման այս շրջանում հանդես եկող հայ գրողների ու բանաստեղծների երկերում արդեն նկատելի էին ազգագրական տվյալների դրսևորումները, բայց տակավին հաղթահարված չէր գրաբարյան լեզուն (Թաղիադյան և ուրիշները): Այդ նոր գրական ուղղությանն անհրաժեշտաբար պետք էր աշխարհիկ լեզու, որով միայն կարելի էր ազգային ոգին տեղավորել գեղարվեստական գործերի մեջ: Այդ դարագլուխ կազմող մեծ գործը վիճակված էր մեծ գրողին ու լուսավորչին՝ Խ. Աբովյանին:

Ազգագրության հախուռն մուտքը հայ գրականության մեջ և

Աբովյանի ստեղծագործությունների միջոցով մեզ հավաստելը պատահական չէր: Դա հասարակական զարգացման արդյունք էր, քայքայվող ավատական-նահապետական կյանքի և բուրժուական հարաբերությունների հաստատման արդյունք:

Հայ ազգագրության սկզբնավորումն ու ձևավորումն էլ հենց այդ արթնացնող նոր համակարգի ծնունդն էին, ինչն էլ Աբովյանից քիչ առաջ և նրա ամբողջ կյանքի ընթացքում խաղում էր ազգային ինքնաճանաչողության ու ազատագրական պայքարի գործոնի դեր: Աբովյանի մոտ ազգագրական երևույթների գրառումն ու դրա հիման վրա կազմած գրական գործերը ունեին հայրենասիրական, ազատասիրական, երկրի տնտեսական, մշակութային կյանքը առաջ մղելու նպատակ: Աբովյանը հայկական կենցաղը մոտիկից էր ճանաչում: Նրա մոտ բուռն ժողովրդասիրությունն էր պատճառը, որ ազգագրական ուղղությունը դեմոկրատական բնույթ ստացավ: Դրան մեծապես նպաստեց նաև ռուսական առաջավոր միտքը Արևելահայաստանը պարսից տիրապետությունից ազատագրելու շրջանում:

Պակաս նշանակալից չէին նաև եվրոպական ճանապարհորդների ազդեցությունները, որոնք Աբովյանի առաջնորդությամբ շրջել են Հայաստանի մի շարք գավառներ (Պարրոտ, Հաքստհաուզեն, Վագներ, Բոդենշտեդտ և ուրիշները), չնայած որ այդ բոլոր ուղևորների կողմից հրատարակված հայ ազգագրական նյութերը մեծ մասամբ պատմել է ինքը՝ Աբովյանը, եթե հաշվի չառնենք ժողովրդի բերանից նրա կատարած անմիջական թարգմանությունները: Յուրացնելով ժամանակաշրջանի առաջադիմական գաղափարները, ծանոթանալով եվրոպական ժողովրդի կենսակերպին՝ Աբովյանը վերադարձավ հայրենիք լուսավորական և քաղաքակրթական մեծ առաքելությամբ ու ծրագրով:

Ընդհանրապես ազգագրությամբ և մասնավորապես հայ ազգագրությամբ զբաղվելը որոշ մտավորականության և մանավանդ հետաղեմ կղերականության կողմից դիտվում էր իբրև անպատշաճ, ստոր աշխատանք:

Ցրել այս մղձավանջը, դեն նետել գրաբարը, մտնել հարազատ ժողովրդի մեջ, խոսել նրա հետ հարազատ պարզ լեզվով, գրի առնել նրա կենցաղը, իրեն իսկ՝ այդ ժողովրդին հրամցնելու նպատակով. ահա այս էր մեծ լուսավորչի ու ազգագրագետի ազգագրական

ուղղությունը:

Աքիմյանի պատմած հուշերի մեջ շատ կարևոր վկայություններ կան հենց այդ մասին: «Մեր վարժապետը,– պատմում է Աքիմյանը,– առանձնապես սիրում է ներկա լինել ժողովրդական տոներին, դիտել, ուսումնասիրել երևույթները, բաներ քաղել դրանցից: Թիֆլիսում այն ժամանակ ո՛չ թատրոն կար, ո՛չ օպերա և ո՛չ անգամ կրկես: Դրանց փոխարեն կային ջիրիդ, մուշտակռիվ, կոխ՝ ըմբշամարտ: Բայց նա այդ հանդիսավայրերը լոկ զվարճանալու համար չէր գնում, այլ ինչպես ասի՝ ուսումնասիրելու համար, երկար կանգնած ականջ էր դնում, թե ժողովուրդը – մարդ թե կնիկ ինչպես են խոսում, ընչի՞ց են հաճույք զգում կամ ի՞նչպես են պահում իրենց: Այդ անում էր նա որոշ նպատակով. մենք նրա հետ եղող աշակերտներս, այդ չէինք իմանում, բայց հետո՝ վերջն իմացանք, երբ սկսեց մեզ մոտ մաս-մաս կարդալ Աղասու պատմությունը»[3]:

Վերոնշյալ հուշերը գրի առնող Քամալյանի նույն հաղորդման մեջ այնուհետև պատմվում է, թե ինչպես Աբովյանը երկար ճանապարհ էր անցնում և իր աշակերտների հետ դիտում ժողովրդական տոնախմբությունները լեռներում՝ սրբավայրերի մոտ, թե ինչպես հարցումներ էր անում և գրանցում դրանք: Այդ նույնը տեսնում ենք Աբովյանի երկերում: «Էս օր էլ,– գրում էր նա «Վերքի» հուշակավոր առաջաբանում,– մուրազս հենց էն ա եղել, որ գնամ ընկնիմ մեկ իշխանի ոտք, ասեմ, ինձ մե կտոր հաց տա ու ես՝ գիշեր-ցերեկ ընկնիմ գեղեգեղ ու մեր ազգի սիրած բաները հավաքեմ, գրեմ»:

Ազգագրական երևույթները գրի առնելը և նրա գրական մշակումը ժողովրդի համար, Աբովյանի համար ուներ հայրենասիրական զգացմունքներ արթնացնող նշանակություն: Նա զգում էր, որ իր ժողովրդի մեջ ազգային ինքնագիտակցություն արթնացնողը ոչ թե եվրոպական բանաստեղծությունն ու պրոզան էր, ոչ թե օտար լեզուն և խորթ գաղափարները, այլ իրենց այդ ժողովրդի սեփական մշակույթն ու պատմությունը: «Հենց բերաններս բաց ենք անում,– գրում էր Խ. Աբովյանը, առակ ենք ասում,– ուրիշ լեզվից ա, օրինակ ենք բերում, նմանապես, հենց ասում ենք, «Եվրոպա, Եվրոպա», բայց մեր վրա խոսելիս, աստված հեռու տա-

[3] ***Քամալյան Ա.,*** Նեմեց և հայ ծերերը Աբովյանց անմահ Խաչատուրի մասին // «Սովետական գրականություն», 1940, թիվ 8-9:

նի, ինչ չենք ասում. բաս մեր երեխեն մեզ կսիրի՞: Բաս ազգի սրտումն էլ բարի նշան կմնա՞»:

Եվրոպական ճանապարհորդները, որոնց հանդիպել և օգնել է Աբովյանը,– իրենց ուղեգրություններում ցույց են տվել Աբովյանի բուռն հայրենասիրությունն ու ազգագրական և բանագիտական աշխատանքներին նվիրված լինելը: Հաքստհաուզենը մի տեղ գրում էր. «...Ես անցուցի այնտեղ [Քանաքեռում] Աբովյանի հետ խոսակցությամբ բոլոր ժամանակը մինչև երեկո և ստացա նորանից այն և մյուս օրը թանկագին տեղեկություններ հայոց ազգի կենցաղավարության, բարքի, մասնավոր հատկությանց, հակամիտությանց վերա ու ուստի կարողացա հասկանալ նորա ներքին կյանքը առավել պարզ այս տեղեկություններից, քան, եթե ապրեի նոցա մեջ ամբողջ ամիսներ»[4]:

Եվրոպացի ճանապարհորդը խոստովանում է, թե ինչ կարևոր ծառայություններ է մատուցել իրեն Աբովյանը. նրա հետ զրույցների ընթացքում է Հաքստհաուզենը ձեռք բերել հարուստ գիտելիքներ հայ ժողովրդի կենսակերպի, սովորությունների, ինքնատիպության մասին, նրա օգնությամբ է կարողացել ընկալել հայերի ներքին կյանքը շատ ավելի պարզ, քան եթե ինքը ամիսներ շարունակ ապրեր հայերի մեջ, և վերջինիս գնահատմամբ Աբովյանը ջերմ հայրենասեր էր և իր երախտագիտությունն էր հայտնում Անդրկովկասի ժողովուրդների վերաբերյալ կատարած դիտարկումների համար[5]: Հայերի նկատմամբ Հաքստհաուզենի բացառիկ ջերմ վերաբերմունքը պայմանավորված է նախ և առաջ Խ. Աբովյանի նկատմամբ և իր՝ Հայաստանում եղած ժամանակ տեսած և լսած տպավորություններով:

---

[4] ***Հակոբյան Պ.,*** Խաչատուր Աբովյան, Կյանքը, գործը, ժամանակը (1809-1836), Երևան, 1967, էջ 7-9, 17, 23, 31-35, 37-38 և այլն: ***Աբեղյան Ա.***, «Աբովեան և Հաքստհաուզեն», Ե տարի, թիվ 2(50), թիվ 3 (51), Բոստոն, 1927, էջ 82-99, 131-145:

[5] Տե՛ս Заметки о семейной и общественной жизни и отношений народов, обитающих между Черным и Коспийском морями. Путевые впечатления и воспоминания барона Августа фон-Гаксттаузена, СПб., 1857: Տե՛ս նաև ***Հովսեփյան Լ.,*** Հայերը Ավգուստ Հաքստհաուզենի գնահատմամբ // «Հայագիտական հանդես», № 3, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 2009, էջ 57-65:

Խաչատուր Աբովյանը առաջինն էր, որ իր երկերի նյութը դարձրեց հայ գյուղաշխարհի, գեղջուկ հայի կենցաղը, XIX դարի սկզբներին հայությանը հուզող պատմական, քաղաքական և մշակութային խնդիրները: Նրանից սկսած՝ հայ աշխարհն իր սոցիալ-քաղաքական միջավայրով, ազգային կյանքի յուրահատկություններով դարձավ գրականությունը սնուցանող հիմնական աղբյուր: Աբովյանի երկերը ընդգրկում են XIX դարի առաջին քառորդի հայ սոցիալական, տնտեսական, քաղաքական, կենցաղային և մշակութային կյանքի բոլոր ոլորտները, որով էլ դրանք հանդիսանում են մեր կյանքի այդ ժամանակաշրջանի հանրագիտարանը:

Աբովյանը նախանշեց հայ նոր գրականության ժողովրդական ուղղությունն ու ազգային բովանդակությունը:

Աբովյանի հաղորդած ազգագրական նյութերը մեզ են հասել երկու ճանապարհով՝ նյութեր, որ ցրված են գրական ստեղծագործությունների մեջ, և նյութեր, որոնք հատուկ նպատակադրված ուսումնասիրված են[6]: Այս տեսանկյունից միայն Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը հայ ժողովրդական ավանդական կենցաղի, ծեսերի ու սովորույթների, բարքերի մի հարուստ շտեմարան է:

Հեղինակի գեղարվեստական արձակի մեջ առհասարակ տեղ են գտել հայ ժողովրդի զբաղմունքների՝ երկրագործության, այգեգործության, բերքահավաքի ու կալսելու, անասնապահության, որսորդության վերաբերյալ նկարագրություններ:

Կենցաղից ներկայացված են բնակարանները, զգեստը, զարդերը, ասեղնագործությունն ու կահույքը, փոխադրամիջոցների տեսակները, զենքերը, երաժշտական գործիքները, կերակուրները և այլն: «Վերքում» և այլուր հեղինակը առանձին ուշադրություն է

[6] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» // Խ. Աբովյան ԵԼԺ, 8 հատորով, հ. 8, Երևան 1958, էջ 154-193, նույնի՝ «Գյուղական տների կառուցվածքը» // Երկեր, հ. 10, (լրացուցիչ), Երևան, 1961, էջ 53-93, նույնի՝ «Թիֆլիզու հայոց հանգստարանը» // ԵԼԺ, հ. 4, Երևան, 1947, էջ 40-47, նույնի՝ «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» // ԵԼԺ, հ. 8, էջ 82-96, նույնի՝ «Համառոտ ակնարկ հայերի մասին» // ԵԼԺ, հ. 8, էջ 32-42, նույնի՝ «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը» // Երկեր, հ. 10, էջ 105-113:

դարձրել ժողովրդի մարզական խաղերին, մասնավորապես ձիով մականախաղերին, գնդակախաղերին: Ժողովրդական տոները նույնպես եղել են Աբովանի ուշադրության կենտրոնում. լուրջ գործ է Ծաղկավանքում Վարդավառի պատկերումը: Հոգևոր մշակույթի առումով նա նյութեր ունի կենդանիների, հողի, քարի, արևի, չար ու բարի ոգիների, վիշապների, քաջքերի պաշտամունքի վերաբերյալ: Ինչպես Մ. Բժշկյանը, Խ. Աբովյանն էլ հայ ընթերցողներին ծանոթացրել է տարբեր երկրների սովորույթները, որոնք քաղել է իր ժամանակի տպագիր գրականությունից: Դրանք զրույցներ են, որոնք ներկայացնում են հռոմեացիների, հույների, անգլիացիների, ավստրիացիների, ռուսների, հնդիկների և այլ ժողովուրդների հնագույն ու միջնադարյան պետական վերնախավերի և առանձին անձանց ցոփ բարքերը, չվայտություններըը, կերուխումի համար հատկացվող վիթխարի ծախսերը, կաշառակերության ձևերը, խրախճանքներին հագուրդ տալու համար կազմակերպվող մարզական մրցապայքարի ձևերը, սադիստական սովորությունները, աշխարհահռչակ ժլատների կյանքն ու կենցաղը, խաղամոլությունը, ընտանեկան բարքերը և այլն:

Խ. Աբովյանի երկերը և նպատակային ազգագրական հոդվածները մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Արևելահայ իրականության մեջ Խատաչուր Աբովյանն էլ Մ. Բժշկյանցի նման նպատակամիտված գրի էր առնում ազգագրական նյութերը և նույնիսկ հետազոտում: Ազգագրության մեջ շատ քիչ բնագավառներ կարելի է մատնանշել, որոնց վերաբերյալ շատ թե քիչ, դիտավորյալ թե հարևանցիորեն Աբովյանը նյութեր չգրանցեր:

Այս բոլորից պարզ երևում է, որ Խ. Աբովյանը հայ և օտար ժողովուրդների ազգագրությամբ զբաղվել է եվրոպական տիպի գիտնականի մակարդակով ու բարեխղճությամբ: Վարժվելով բանահավաքի ծանր գործին՝ Աբովյանն ի վերջո հանգել է այն հետևությանը, որ ճանաչելով իր ժողովրդի կենցաղը՝ պետք է անդրադառնալ նրա վերափոխմանն ու քաղաքակրթմանը: Այդ բանի առհավատչյան «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» դիմումագրությունն է, որը գրել է 1836 թ. Մոսկվայում՝ ռուսական կառավարությանը ներկայացնելու համար: Դա ինքնին մի ծրագիր էր՝ Արևելահայաստանը տնտեսական ու մշակութային առումներով

ոտքի հանելու, տեղական արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը առաջադիմական հիմքերի վրա դնելու, նոր մասնագետներ պատրաստելու, բարձրագույն ուսումնական հաստատություն հիմնելու համար և այլն[7]:

Խ. Աբովյանի ազգաբանական գործունեության մանրակրկիտ վերլուծությունը դուրս է սույն հոդվածի շրջանակներից, դրանց մի մասը կարծարծվեն մեր հետագա ուսումնասիրություններում[8], բավարարվենք միայն նրանով, որ նա տնտեսական կենցաղից նյութեր ունի հողագործության, այգեգործության, անասնապահության, օժանդակ և յուրացնող տնտեսաճյուղերի, տնայնագործության և արհեստների, հաղորդակցության ու կապի միջոցների մասին: Տնտեսական կենցաղի ուսումնասիրման համար կարևոր են Աբովյանի հաղորդած տեղեկություններն այն իմաստով, որ դրանք իրենց տեսակի մեջ եթե ոչ եզակի, ապա հազվադյուտ տվյալներ են՝ XIX դարի առաջին կեսը լավ հասկանալու համար: Նույնիսկ և դեռ ավելի կարևոր են մեզ համար նյութական մշակույթի մասին Աբովյանի գրառած նյութերը:

Նյութական մշակույթի բնագավառից նա գրանցել է կամ նկարագրել իր ապրած ու շրջած վայրերը, տունն ու նրա ժողովրդաճարտարապետական կառույցները, շենքերի ստորաբաժանումները, բնակարանների սարքավորումն ու կահավորումը և ամանները: Նա այդ ասպարեզից ներկայացրել է հայերի և այլազգիների զգեստների ու զարդերի, ինչպես նաև ագանելիքների պարզ նկարագիրը և այլն:

Զգալի ու նշանակալից են Աբովյանի գրի առած և մշակած ազգագրական այն նյութերը, որոնք վերաբերում են սոցիոնորմատիվ մշակույթին՝ ամուսնություն և հարսանիք, գերդաստան և

---

[7] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, 3 (188), էջ 132-148:

[8] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում // Գիտական աշխատություններ, VIII, ՀՀ ԳԱԱ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2005, էջ 53-59, նույնի՝ Խ. Աբովյանը որպես ազգագրագետ // Աբովյանագիտական հոդվածների հատընտիր ժողովածու, Երևան, 2007, էջ 123-132, նույնի՝ Խ. Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ // «Էջմիածին», 2007, Ա., էջ 88-94;

փոքր ընտանիք, մահ և թաղում, դրացիություն, համայնք և կառավարություն:

Բավական առատ են այն նյութերը, որոնք ընդգրկում են նախնական կրոնական համակարգերը և հեթանոսական հավատալիքները հայերի մեջ: Աբովյանը հատուկ ուսումնասիրություններ ունի Հայաստանում բնակվող քրդերի և եզդիների վերաբերյալ և իրավացիորեն նա համարվում է քրդագիտության առաջին հետազոտողը[9]: Մի խոսքով Խ. Աբովյանի ազգագրական գործունեությանը հանգամանորեն անդրադառնալը հույժ կարևոր է և մերօրյա պահանջների առումով խիստ անհրաժեշտ: Լավ է ասված. «Աբովյանն սկիզբ էր, սկիզբ ազգային ինքնագիտակցության ու քաղաքակրթության, սկիզբ լուսավորչական շարժման ու աշխարհիկ կրթության ծավալման, սկիզբ աշխարհաբարը գրական լեզու դարձնելու ու հայրենիքի գաղափարադրույթը տարածելու, որոնց մեջ կարևորվում էին մանավանդ լեզվի, հայրենասիրության գաղափարը, հայ ժողովրդի սոցիալական և ազատագրության հարցերը[10]»:

Այս նույն հետևողականությամբ նա սկիզբ էր նաև հայ գիտական ազգաբանության ասպարեզում:

---

[9] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Խ. Աբովյանը՝ քրդերի ազգագրության հետազոտող // «Էջմիածին», 2011, Ա, էջ 76-90:

[10] ***Ավագյան Ա.,*** Հին Քանաքեռը և Աբովյանը // «Հայագիտական հանդես», № 3 (12), Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, 2009, էջ 28-33:

7. Խ. ԱԲՈՎՅԱՆԸ՝ ՔՐԴԵՐԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՂ

Խ. Աբովյանին՝ որպես հայ ազգագրության և բանագիտության սկզբնավորողներից մեկին, հանձնարարված էր ուսումնասիրել Հայաստանի տարածքում ապրող քրդերի և եզդիների կենցաղամշակութային յուրահատկությունները: Պատվիրատուն ցարական կառավարության Կովկասյան փոխարքայության պաշտոնյա Կոմս Բեկենդորֆն էր: Խ. Աբովյանը 1845 թ. վերջերին՝ հենց Քրիստոսի ծննդյան տոներին, ամենադաժան ձմռանը, իր հաշվին արձակուրդ վերցնելով, մեկնեց քրդաբնակ և եզդիաբնակ շրջաններ, որտեղ երկու շաբաթ ապրելով նրանց մեջ՝ արժեքավոր տեղեկություններ ձեռք բերեց նրանց բարքերի, սովորությունների, հավատալիքների, բնավորության և նույնիսկ պոեզիայի մասին: Վերադառնալով Թիֆլիս՝ երեք ամսվա ընթացքում հավաքած նյութերը մշակեց և ամփոփեց գերմաներենով գրված «Քրդեր և եզիդիներ» աշխատության մեջ: Հավանաբար, Աբովյանի ուղևորությունը եղել է 1845 թ. դեկտեմբերի 23-ից մինչև 1846 թ. հունվարի 6-ը, քանի որ այդ ժամանակ էին տեղի ունենում ծննդյան տոները և Նոր տարվա արձակուրդները:

Աբովյանի լավատեղյակությունը քրդերի և եզիդիների մասին մեծ չափով պայմանավորված է եղել նաև մանկապատանեկան տարիների տպավորություններով, իր հայրական տանը՝ Քանաքեռում ձմռանը մշտապես հանդրվանող քրդերի և եզիդիների հետ շփումներով, և 1829 թ. սկսած մինչև 1844 թվականը՝ Պարրոտի, Վագների, Հաքստհաուզենի, Աբիխի հետ շրջագայությունների ժամանակ Արևելյան Հայաստանում, Բայազետի փաշայությունում և Մակուի խանությունում գրի առած հարուստ տեղեկություններով և նրանց լեզվի ու սովորույթների լավ իմացությամբ: Բացի այդ՝ Աբովյանը հիշատակում է նաև, թե ինքը քրդերի և եզիդիների մասին նյութեր է գրառել նաև նրանց սովորություններին լավատեղյակ տեղացի հայերից: Անշուշտ, նրա ձեռքի տակ են եղել արաբական և պարսկական որոշ աղբյուրներ, ինչպես նաև Հ. Ջամչյանի «Հայոց պատմությունը» և Ղ. Ինճիճյանի «Աշխարհագրու-

թյուն չորից մասանց աշխարհի» մասն առաջին, Ասիա, հ. Ա, գիրքը, ուր քրդերի մասին խոսվում է 51-56 էջերում:

«Քրդեր և եզիդիներ» ուսումնասիրությունը ուշագրավ տեղ է գրավում Խ. Աբովյանի գրական հարուստ ժառանգության մեջ: Քրդերի և եզիդիների մասին հետազոտություն կատարելու ցարական կառավարության առաջարկը, ինչ խոսք, կապված էր ռուսական կայսրության մեջ նոր մտած ժողովուրդների ազգային յուրահատկությունների իմացության միջոցով կառավարման ազգային քաղաքականություն մշակելուն զուգահեռ: Միաժամանակ հայոց ազգային՝ էթնիկ առանձնահատկությունների բացահայտման համար «կպահանջվեն ոչ միայն բանականություն, ամեն տեսակի գիտելիքներ, այլև տեղական և հարևան ժողովուրդների ազգային պատմության վավերագրերի բազմամյա, ժրաջան ուսումնասիրություն և հետազոտություն»[1]:

«Քրդեր և եզիդիներ»[2] ուսումնասիրությունը բաղկացած է երկու բաժնից. առաջինը՝ «Քրդեր», ապա՝ «Եզիդիներ»: Ուսումնասիրության ձեռագիր առաջին օրինակը ուղարկվել է Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Մորից Վագներին: Վերջինս Աբովյանին համարում է Արևելքի լավագույն հետազոտող ու գիտակ, ասիական շատ լեզուների տիրապետող: Վագները գրում է. «Պարոն Աբովյանի ձեռագիրը, որ պարունակում է քրդերի և շատ տեղեր նրանց հետ խառն ապրող եզիդիների սովորույթների, բնավորության գծերի և կյանքի պայմանների մասին հանգամանալից դիտողություններ, դրվեց իմ տրամադրության տակ ազատորեն օգտվելու պայմանով»[3]: Ձեռագրերից երկրորդը հանձնված է եղել Կովկասի փոխարքայի դրասենյակին դեռևս 1846 թվականին: Աբովյանը իբրև առանձին տարբերակ գրել է նաև «Ակնարկ քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի և սովորույթների մասին»[4], առանձին՝ նաև «Քրդեր»[5] և «Եզիդիներ»[6]:

---

[1] ***Աբովյան Խ.,*** Համառոտ ակնարկ հայերի մասին // ԵԼԺ, 8 հատորով, հ. 8, Երևան, 1958, էջ 32:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 243-285:

[3] Նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 424:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 345-349:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 373-393:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 405-412:

Քրդերին նվիրված մասի սկզբում Խ. Աբովյանը ընդգծում է, որ քրդերի ծագման, ներկայի և անցյալի մասին գրավոր տեղեկությունները շատ աննշան են: Նույնիսկ քուրդ գրագետները ոչինչ չգիտեն իրենց մասին, բացի նրանցից, որ իրենք քուրդ են և աշխարհիս երեսին գոյություն ունեն նույյան ժամանակներից: Քրդերն ունեն ինքնանվանման երկու ձև՝ «կուրմանջ» և «քուրդ»: Առաջինը կապված է ճևավորման տեղանքի հետ: Քրդերը իրար մեջ իրենց կոչում են «կուրմանջ»: Այլազգիների համար նրանց ինքնանվանումը «քուրդն» է:

Խ. Աբովյանը բերում է քուրդ անվանման 3 բացատրություն. առաջինը, որ առաջ են քաշել Միքայել Զամչյանը և Ղ. Ինճիճյանը, կապված է արաբական տիրապետության շրջանում իսլամ կրոնը ընդունելու և Հայկական Կորդուք ու Մոկս պատմական հարավային նահանգներում հաստատվելու տեղավայրի անվան հետ, երկրորդը՝ պարսկերեն կուրդ՝ ուժեղ, զորեղ, իսկ երրորդը՝ թուրքերեն գուրդ (գայլ) բառերի հետ, որը հիշեցնում է այդ ժողովրդի ավազակային հակում ունենալու հանգամանքը: Աբովյանը մի դեպքում հնարավոր է համարում անունը բխեցնել Կուրդուք վայրի անվանումից, իսկ առավել հավանականը այս երեք անուններից համարում է թուրքականը, որովհետև ըստ նրա՝ քրդերն այնպես են թուրքերեն խոսում, ինչպես իրենց ընիկ լեզվով: Բոլոր դեպքերում քուրդը միջնադարում առաջացած անուն է: «Կուրմանջ» ինքնաանվանումն էլ կապում է Պարսկաստանի հարավարևելյան սահմանում գտնվող Կալման կամ Կարման (ներկայիս Քիրմանշահ) քաղաքի անվան հետ, այն քաղաքի, որը սկզբում եղել է մի քանի քրդական ցեղերի բնակավայր[7]:

Խ. Աբովյանը ակնարկային հոդված է նվիրել քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի ու սովորույթների ուսումնասիրմանը: Ըստ Աբովյանի՝ քրդերը մարական ծագում ունեն: Ինչ մնում է լեզվին, ապա իսլամի ընդունման և արաբական տիրապետության շրջանում քրդերենը, ըստ Աբովյանի, «մի խառնուրդ է թաթարերենի, արաբերենի, հայերենի և հատկապես պարսկերենի», «հայկական և ասորական սահմանամերձ վայրերում իշխանական ամբողջ ցեղեր և գավառներ անցան նրանց

[7] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Համառոտ ակնարկ հայերի մասին // ԵԼԺ, հ. 8, էջ 375:

[քրդերի – Ռ. Ն.] կողմը և ճուլվեցին նրանց հետ»[8]: Քրդերի՝ դեպի հայկական սահմանամերձ շրջաններ տեղաշարժվելու և հայկական հոծ բնակչությանը իրենց ենթարկելու շրջանում որոշ քրդական ցեղեր «սերվել են հայ իշխանական Սլկունի, Ռշտունի, Մամիկոնյան և Մանդակունի տներից»[9]: Ակնարկում Աբովյանը խոսում է արաբներից քրդերի կրած մեծ ազդեցության՝ կրոնի, արտաքին կերպարանքի, տարազի, ընտանեկան բարքերի, կենցաղի, օրենքների, ամեն տեսակ առաքինությունների և արատների մասին. Ներթափանցումը քուրդ հավատակիցների մեջ այնքան մեծ է եղել, որ նույնիսկ քրդերի կարծիքով իրենք սերվել են արաբներից[10]:

Մեկ այլ տեղում գրում է, թե «Հարավային Միջագետքում բոլոր քրդական ցեղերը խոսում են արաբերեն, ինչպես իրենց մայրենի լեզվով... ասիական ոչ մի ժողովուրդ այնպես մաքուր չեն խոսել արաբերեն, ինչպես քրդերը»: Այս և կենցաղամշակութային այլ ընդհանրություններ նկատի ունենալով՝ Խ. Աբովյանը հանգում է մի եզրակացության, որի հետ ոչ մի կերպ չի կարելի համաձայնել: Նա գրում է. «Ոչ մի կասկած չի կարող լինել, որ քրդերի մի խոշոր մասը սերում է արաբներից»[11]: Հարկ է նշել, որ քրդերի ծագման, նրանց պատմությանն առնչվող շատ հարցեր տակավին մինչև օրս էլ լիովին չեն պարզաբանված:

Արաբական խալիֆայության կազմավորումից հետո քրդական ցեղախմբերը թափանցել են Հյուսիսային Միջագետք և մահմեդականություն են ընդունել: Սելջուկյան թուրքերի տիրապետության շրջանում՝ XI-XII-րդ դարերում, քրդերը սկսեցին հաստատվել Հայաստանի հարավային գավառներում: Այդ գործընթացը ավելի զանգվածային բնույթ կրեց մոնղոլական նվաճումների շրջանում և հատկապես XV-XVI դարերում, երբ օսմանյան սուլթանները Պարսկաստանից պարբերաբար գաղթեցնում և Հայաստանի հարավային գավառներում էին տեղավորում ռազմատենչ քրդերի, որոնց վրա դրվում էր թուրքական սահմանների պաշտ-

[8] ***Աբովյան Խ.,*** Ակնարկ քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի և սովորույթների մասին // ԵԼԺ, հ. 8, էջ 345:
[9] Նույն տեղում, էջ 346:
[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում, էջ 378-379:

պանությունը, դրա դիմաց քուրդ ցեղապետներին արտոնություններ ու առանձնաշնորհումներ էին տրվում: Նստակեցության և ազատ ապրելու պայմաններ ստեղծելով՝ թուրքական սուլթանները փաստորեն դայթակղում էին պարսկական քրդերին: Նրանց իրավունք էր վերապահվում շարժվել իրենց հոտերի հետ ցանկացած ուղղությամբ: Թուրք կառավարողները նրանց միջոցով փորձում էին տարանջատել ու թուլացնել տեղական նստակյաց հայ բնակչությանը: Քրդական ցեղերը «յուրթլուկի» «օջակլըկի ու հյուքումեթի» ինքնավար իրավունքներով ընդարձակ շրջաններ են զբաղեցնում, որոնք այնուհետև վերածվեցին քրդական հզոր իշխանության՝ Բիթլիս կենտրոնով[12]:

Քրդերը Պարսկաստանում, ինչպես և Թուրքիայում, հատկապես հայկական հարավային գավառներում, համարյա անսահման իշխանության տեր էին և մի քանիսում էլ հաստատել էին իրենց իշխանությունը: «Իրենց արշավանքների և ասպատակություններ ի ժամանակ քրդական ցեղերից մի քանիսը սարսափելի էին թե՛ միմյանց նկատմամբ և թե՛ օտարների»[13]:

Քրդերի բնութագրությունը: Ուշագրավ է նաև քրդերի նիստուկացի, բարքերի ու սովորույթների՝ Խ. Աբովյանի նկարագրությունը: Ըստ Աբովյանի՝ քրդերը մեծ մասամբ զբաղվել են խաշնարածությամբ, հողագործությամբ, մասամբ նաև՝ արհեստներով: Նրանք ապրել են նահապետական կյանքի բնատուր մաքրությամբ, միաժամանակ «ազատ են, անկախ ու անսանձ, անհանդրվան», «առաջին անգամ ես նրանցից սովորեցի, որ դժբախտության մեջ էլ կարելի է չընկճվել»[14]:

Քրդերը, ըստ Խ. Աբովյանի, քաջ են, ազատասեր, սակայն միաժամանակ ռազմատենչ են ու վայրագ: Նրանք կռվում են հարևան ժողովուրդների՝ թուրքերի, պարսիկների, հայերի, նույնիսկ իրար դեմ, հակված են կողոպուտների, հափշտակությունների ու

---

[12] Տե՛ս ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 444-452, ***Հ. Շահպազեան***, Քուրդո-Հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 57-58, ***Никитин В.,*** Курды, М., 1964, էջ 240-247, ***Туманский А. Г.,*** Очерк района Эрзрумского и Битлийского вилайетов, Тифлис, 1909, էջ 31:

[13] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 346:

[14] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Ակնարկ քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի և սովորույթների մասին // ԵԼԺ, հ. 8, էջ 259:

թալանների: Նրանց մեջ արյունակցական վրեժը խստորեն պահպանվում է և պարտադիր կարգով պետք է ի կատար ածվի նույնիսկ երկար տարիներ անց, իսկ երբեմն էլ կարող է լուծվել թշնամական ամբողջ ցեղի բնաջնջմամբ. «Ինչքան նահապետական ու ասպետական է նրանց նիստուկացը, այնքան էլ հասարակ մարդը հոգով ու մարմնով ամուր կապված է իր ցեղապետներին: Վերջինիս հեղինակությունը և խոսքը միշտ սուրբ և անդրժելի է համարվել առաջինի համար: Ցեղապետի մի նշանով ամեն ոք պատրաստ էր մեռնելու, ով միայն մարտունակ էր համարում իրեն: Բավական էր միայն մի թեթև արատավորել ցեղի՝ հաճախ առանձին անհատի պատիվը, այո՛, հաճախ նույնիսկ կատակով ասված մի խոսք, որպեսզի մի ամբողջ գավառ հրի ու սրի մատնվեր: Արյան վրեժը հագեցվում է երբեմն մի ամբողջ ցեղի ոչնչացումով»[15]:

Եթե վրիժառություն ծագի նույնիսկ ընտանիքի թանկագին անդամներից մեկի մահվան հետևանքով, և արյունարբու ավազակների մի ամբողջ ոհմակ պատսպարվի այդ տանը, ապա բոլորն էլ զենքերը պատյան են դնում, և երկու կողմերն էլ բաժանվում են միմյանցից որպես բարեկամներ: Նմանապես այն դեպքերում, երբ հանցավորն ինքը, զգալով իր թուլությունը և իր արյունածարավ թշնամու գերազանցությունը, սուրը ուսից կախած, ոչ սովորականի նման թեք, այլ ուղիղ, թևի տակ դրած մի կտոր կտավ՝ որպես պատան և իբր կատարյալ հպատակության նշան, երևա իր հակառակորդի կամ ցեղապետի տանը, ապա ամեն ինչ մի հարվածով լուծված է համարվում, և եթե նրան որևէ մեկը նվազագույն վիրավորանք անգամ հասցնի, իսկական դժոխք կընկնի:

Խ. Աբովյանը քրդին հակիրճ բնութագրել է այսպես՝ «առնական կեցվածք, չափավոր, վայելուչ վարք, կոպիտ արտաքին տեսք, ուժեղ, մկանոտ մարմին, հռոմեական արծվաքիթ, լայն և խայտաբղետ զգեստներ. սրանք են արտաքին և ներքին նշանները և հատկությունները յուրաքանչյուր քրդի...»[16]:

Խ. Աբովյանը «Քրդեր» ուսումնասիրության մեջ տալիս է քրդի ընդհանուր բնութագիրը այսպես. «Քրդերին կարելի է կոչել Արևելքի ասպետներ այդ բառի լիակատար իմաստով, եթե միայն

[15] ***Աբովյան Խ.,*** Ակնարկ..., էջ 347:
[16] Նույն տեղում, էջ 349:

նրանք նստակյաց կյանք վարեին: ***Ռազմասիրություն, պարզասրտություն, ազնվություն, անսահման հավատարմություն իրենց իշխաններին, տված խոսքի կատարում, հյուրասիրություն*** և անսահման հարգանք, որ նրանք տածում են կնոջ հանդեպ. ահա այն առաքինությունները և հատկությունները, որ ընդհանուր են քուրդ ժողովրդին»: Միաժամանակ իբրև բացասական ընութագրություն՝ ընդգծում է նրանց մյուս հատկությունները՝ «***արյան վրիժառություն ու տոհմական թշնամություն մինչև իսկ մերձավոր ազգականների մեջ, հափշտակամոլություն, ավազակամոլություն***»[17]:

Քրդերի տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի ընութագիրը: Խ. Աբովյանը քրդերին բաժանել է նստակյաց և քոչվորական կենցաղ վարող խմբերի: Քոչվորները զբաղվել են անասնապահությամբ, իսկ նստակյաց կյանք վարող քրդերը՝ հողագործությամբ, արհեստագործությամբ և առևտրով, այսինքն՝ գյուղերում և քաղաքային վայրերում ապրողներ և հայտնի են եղել իրենց բնակավայրերի անուններով՝ սլիվանցի, ռշկոտանցի: Այդպես են կոչվել, որովհետև բնակության վայրը եղել է Սլիվանը (Տիգրանակերտ), իսկ Բաղեշում, Մուշում, Սասունում կոչվել են ռշկոտան: Նրանք ձմռանը իրենց գյուղերում ապաստան են տվել քոչվոր քրդերին և որպես հատուցում՝ պաշտպանել նրանց արտաքին հարձակումներից: Փաստորեն՝ վաչկատուն քրդերը պատուհաս էին նստակյացների գլխին, քանզի պարտավոր էին ամբողջ ձմռանը մինչև սար բարձրանալը օթևան տալ նրանց, ապահովել վառելիքով, անասնակերով: Ի դեպ, վաչկատուն քրդերը կոչվել են նաև իրենց տոհմապետների կամ ցեղապետների անուններով:

Անհրաժեշտ է նշել, որ Խ. Աբովյանը չի խորացել անասնապահ և երկրագործ քրդերի կենցաղի մանրամասների մեջ:

Առևտուր և փոխանակություն: Քրդերի հիմնական զբաղմունքը անցյալում վաչկատուն կյանքն է եղել: Վարձվում էին զինվորական ծառայության և զբաղվում էին հիմնականում ավազակությամբ ու հափշտակությամբ: Իրենց պարենային պաշարի, գործվածքեղենի մի մասը վաճառում էին մոտակա քաղաքներում՝ զենք, զգեստ, կենցաղային իրեր գնելու համար: Տղամարդու ամ-

[17] ***Աբովյան Խ.,*** Քրդեր // ԵԼԺ, հ. 8, էջ 381:

բողջ հագուստը, ըստ Խ. Աբովյանի, շատ գնում էին միայն հայ վաճառականներից: Քոչվոր քուրդը դրամական հաշվի մասին պատկերացում չի ունեցել. հաշվել են մե՛րթ մատներով, մե՛րթ համրիչի դեր կատարող մանր քարերով կամ էլ դիմել են քաղաքներում ապրող և հաշիվ իմացող քրդի միջնորդության: Քուրդը երբեք ոտք չի դրել թուրքի խանութ, նրա համար վստահելին հայն է եղել[18]:

Քուրդ տղամարդը սեփական տանը ոչնչով չի զբաղվել՝ բացի իր հոտը արածեցնելուց կամ հովվություն անելուց: Շուկա է տարել վաճառելու կարագ, պանիր և անասնապահական այլ մթերքներ ու հումք՝ բուրդ, կաշի և այլն:

Քրդերի նյութական մշակույթը: Քրդերի բնակարաններին անդրադառնալով՝ Աբովյանը միայն մեկ անգամ է հիշատակում վրանը, որը հարմար էր քոչվոր քրդերի տեղափոխումների համար: Նրա նկարագրած վրանը աչքի է ընկնում սև գույնով: Իսկ իշխանական վրանները նման են եղել արաբականին, բայց եղել են սպիտակ գույնի: Սև գույնը նրանց համար նույն նշանակությունն ուներ, ինչ ծիրանին հայերի, որը կրել են միայն թագավորները:

Տ. Արիստովան ևս իր աշխատության[19] մեջ գրում է, որ քոչվորական կյանք վարող քրդերի համար բնակարան է հանդիսացել վրանը, որը պատրաստել են հողի մեջ ամրացված փայտե երկար, բարակ ձողերից, որոնց վերին մասը ամրացվել է պարանով: Վրանի վրա գցել են այծի մազից հյուսված գործվածք՝ սովորաբար սև գույնի: Այն ծածկել է ամբողջ վրանը՝ բացի մուտքից:

Խ. Աբովյանը նկարագրել է նաև քրդերի ու եզիդիների տարազը: Խոսելով կանանց տարազի մասին՝ նա հիշատակել է երկու երկար շապիկներ, որոնք կրծքի վրա կտրվածք են ունեցել: Դրանք կարված են եղել կոշտ ու կոպիտ կտորից, գոտին, վարտիքը՝ նույնպես, գլուխները կապել են սպիտակ կամ կարմիր գլխաշորով: Մինչդեռ բեկերի և ավագների կանայք «պճնազարդվում և հագնվում էին մեծ ճաշակով, ման էին գալիս մետաքսե թանկագին զգեստներով, լանջն ու գլուխը զարդարում էին բազմաթիվ թանկարժեք ակներով, արծաթով, ոսկով, մարգարիտով և շրջապատված էին ստրուկների և ստր-

[18] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 386:

[19] Տե՛ս ***Аристова Т. Ф.,*** Курды Закавказья, Москва, 1966, էջ 67-68:

կուհիների խմբերով»[20]: Մազերը, որ արձակում էին մեջքի վրա, սովորույթի համաձայն, զարդարում էին մանրագույն, էժանագին մարգարտով: Ձեն կրել ոտնաման, տարվա բոլոր եղանակներին ման են եկել բոկոտն, ապրել են ծանր աշխատանքով և զրկանքներով, սակայն պատերազմասեր ամազոնուհիների նման հայտնի էին իրենց քաջությամբ և անվախությամբ: Հագնվում և զինվում էին տղամարդկանց նման, երբեմն մասնակցում էին կռիվներին, իրենց ամուսինների հետ պատերազմ գնում[21]:

Տղամարդու տարազը նկարագրելով՝ Աբովյանը նշում է, որ նրանք կրել են մահուդե բաճկոն, որը զարդարված է եղել մետաքսե կամ բրդե թելերով, որովհետև այն հագել են միայն հարուստները, նաև լայն սպիտակ շալվար: «Նրանց գլխի համարյա միշտ կարմրագույն ապարոշները՝ մի քանի խայտաճամուկ թաշկինակներից փաթաթան արած, նրանց պայծառ գույնի բրդե և մետաքսե ժապավեններով ասեղնագործած բաճկոնները, ճերմակ վարտիքները տարազային մի ուրույն համալիր է կազմել»[22]:

Խ. Աբովյանը թվարկում է նաև քրդի սիրած զենքերը՝ ատրճանակը, թուրը, վահանը, կարաբինը, ճկուն եղեգնափայտի գլխին հագցրած տեգը, որը մի ծայրից զարդարված էր սև ճյութի նման խիստ փետուրով: Ըստ հեղինակի՝ տեգը ամենամահաբեր զենքն էր ճարպիկ և վարժ քրդի ձեռքին, իսկ զենքերի ընտրությունը պայմանավորված էր նրա անձնական քաջության և կռիվների հարձակողական բնույթով: Քրդի հագուկապը, քրդական զինավառ գունդը, ըստ Խ. Աբովյանի, «իր գեղեցկությամբ կարող էր մրցել որևէ գվարդիական հեծելազնդի հետ: Նրանց բոլոր զենքերը նախատեսված են եղել ավելի շատ հարձակման նպատակին: Այս զենքերը կարծես տղամարդկանց համար եղել են նաև յուրատեսակ զարդեր՝ կազմելով տարազի անբաժան մասը»[23]:

Խ. Աբովյանը նկարագրել է նաև եզիդիների հոգևորական դասի տարազը: Նրանք կրել են մարմնին կպած սև, բրդե կոպիտ զգեստներ, ինչպես աշխարհիկ մարդիկ[24]: Խ. Աբովյանը հիշատակություններ ունի քրդուհիների կրած զարդերի վերաբերյալ,

[20] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 385:
[21] Տե՛ս նույն տեղում:
[22] Նույն տեղում, էջ 387:
[23] Տե՛ս նույն տեղում:
[24] Տե՛ս նույն տեղում, էջ 409:

որոնցով հիմնականում զարդարել են իրենց մազերը: Դրանք եղել են էժանագին մարգարիտներ կամ մետաղե տարբեր զարդեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անդրկովկասի քրդերի տարազը գրեթե ուսումնասիրված չէ, նրա այս վկայությունները շատ արժեքավոր են: Դրանք միտված են ամբողջացնելու քրդերի տարազի մասին պատկերացումները: Արժևորելով Խ. Աբովյանի վկայությունները տարազի մասին՝ պետք է ասել, որ դրանք շատ բաներով համընկնում են ինչպես Եղիազարովի[25], այնպես էլ ավելի ուշ շրջանի հետազոտողների վկայությունների հետ:

Խ. Աբովյանը քրդերի ուտեստին անդրադարձել է նրանց մոտ հյուրասիրության եղած պահին: «Ամբողջ արևելքում,– նշում է նա,– առասպել է դարձել քրդերի հյուրասիրությունը[26]: Այս մասին է վկայում նաև քրդագետ Բայազիդին[27]: Նկարագրելով Իբրահիմ աղայի տանը ականատես եղած հյուրասիրությունը՝ նա միաժամանակ կարևոր տեղեկություններ է հաղորդում քրդերի ուտեստի և ըմպելիքների մասին: Տափակ պղնձե սկուտեղների մեջ մատուցել են կերակուրներ՝ եփած միս, փլավ, պանիր, խորոված միս, բրնձե ապուր, կարագ[28]: Քրդի ամենօրյա ճաշը բաղկացած է եղել բրնձի փլավից, մանր կտրտած, սոխի, պղպեղի հետ խառնած, ապա՝ դնդած ու բրնձի ապուրի մեջ եփած տավարի մսից, խորոված մսից, պանրից և եռացրած կաթից: Ուտեստեղենը մատուցել են պղնձե մեծ սկուտեղներով և ըստ սովորույթի՝ դրվել է սփռոցի մեջտեղը կամ հյուրի առաջ. ձեռքերը լվանալուց հետո ամենքը բազմել են ավագության կարգով: Ուտելիքը վերցրել են մատներով:

Մեկ սկուտեղից կարող էին օգտվել միայն երեք հոգի: Տանտիրոջ, նրա ընտանիքի և հյուրի ճաշելուց հետո նույն սփռոցի վրա ճաշում էին ծառաները: Մի շարք տեղերում ծառաներն առանձին են ճաշել: Ճաշից հետո նորից լվացել են ձեռքերը և սուրճ խմել[29]: Խ. Աբովյանի հիշատակություններից երևում է, որ նրանք չեն խմել թեյ և օղի. «Եղբայրներից մեկը թեյ էր պատ-

[25] ***Егиазаров С.А.,*** Краткий этнографический очерк курдов Эриванской губерни, Тифлис, 1884, էջ 29-30:

[26] ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 387:

[27] Տե՛ս ***Баязиди М. М.,*** նշվ. աշխ. էջ 16:

[28] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 349:

[29] Տե՛ս նույն տեղում, էջ 384:

բաստում,– գրում է նա,– այն էլ իմ պատճառով, որովհետև նրանք թեյ չէին խմում» կամ «Իմ պատճառով չէին մոռացել նաև օղին, որը բերել էին մի շատ հեռավոր գյուղից»[30]:

Ի տարբերություն քրդերի՝ եզդիները օգտագործել են օղի և գինի, քանի որ նրանց կրոնական հավատալիքները դրանց օգտագործումը չէր արգելում: Գինի խմելիս բաժակի մեջ ոչ մի կաթիլ չպետք է մնար, որ ոչ մի կաթիլ ներքև չթափվեր, հակառակ դեպքում դա կհամարվեր աստծո պատիժ[31]:

Քրդերի հասարակական-ընտանեկան կենցաղի բնութագիրը: Քրդական ընտանիքի, ընտանեկան սովորույթների, ծեսերի, նրանց համայնքի և համայնական սովորույթների մասին Խ. Աբովյանը բավականին նկարագրություններ է թողել:

Դեռևս XX դարի 20-ական թվականներին քրդերը պահպանել են նահապետական մեծ ընտանիքը (մալա մազրն), որը բաղկացած էր մի քանի սերունդներից[32]: Այդ ընտանիքը բաղկացած է եղել 30-70, իսկ երբեմն՝ մինչև 80 անդամից[33]:

Քուրդը, ըստ ավանդույթի, իր խոսքի տերն է, քանի դեռ նրա հյուրն ես և նրա պաշտպանությանն ես ապավինել. նման դեպքերում նա իր կյանքն էլ չի խնայի հյուրի համար, «եթե որևէ մեկը կհամարձակվի ձեռք տալ հյուրին»: «Հյուրասիրությունը քրդի համար լավագույն առաքինություններից մեկն է»,– գրում է Խ. Աբովյանը: Հյուրով հատուկ զբաղվողը տանուտեր, ունևոր քուրդն է: Ամեն մի տանուտեր քուրդ իր առաջին պարտքն է համարել ոչխար մորթել եկած հյուրի պատվին և երբեք ճանապարհ չի գցել առանց ընծայի, որը սովորաբար լինում էր ընտիր նժույգ կամ զենք: Ըստ նրա հավաստման, ի տարբերություն արևելյան ժողովուրդների, ականավոր հյուրին դիմավորում էին ոչ թե խոնարհումի՝ «ես քո ոտքի հողն եմ», կամ՝ «ես հոգով, սրտով քո ստրուկն եմ» խոսքերով, այլ՝ առանց չողոքորթության՝ «Դու մեր

[30] ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, էջ 258:
[31] Տե՛ս նույն տեղում, էջ 263:
[32] Տե՛ս ***Аристова Т. Ф.,*** նշվ. աշխ., էջ 143:
[33] Տե՛ս ***Ամինե Ավդալ***, Անդրկովկասի քրդերի կենցաղը, Երևան, 1957, էջ 22:

եղբայրն ես, դու մեր աղան ես, մեր աչքի լույսը, թող մեր բարեկամությունը հավերժ լինի»[34]:

Տանուտերն ունեցել է իր անձեռնամխելի նստատեղը, որտեղ փռված են եղել գորգեր, փափուկ ներքնակներ և նրանց երկու կողմերում դրված են եղել բարձեր: Ավագի խոսքը մեծ հեղինակություն է վայելել: Նրա ճայնը և կամքը ընտանիքում անխախտելի օրենք են եղել: Այս նկարագրությունից կարելի է եզրակացնել, որ այդ ընտանիքներում եղել է աշխատանքի որոշակի բաժանում. յուրաքանչյուրն իմացել է իր անելիքը:

Քրդական ընտանիքում տանուտերը կամ ցեղապետը թույլ չեն տվել, որ մարդիկ սողան իրենց շուրջը, այլ խորին հարգանքով և պատկառանքով են լցված եղել մեծերի հանդեպ: Համայնքի ավագներն իրենց ճաշը և ընթրիքը վայելել են իրենց ցեղապետի մոտ: Մատուցողները երիտասարդներն էին. նախ ճաշում էին ավագ, տարեց տղամարդիկ: Ցեղապետի հարգանքը ժառանգական է եղել և մշտապես ունեցել է իրավունք հրամայելու, Աբովյանի բառերով ասած՝ «այո՛, նույնիսկ կյանքի և մահվան վրա»:

Որպես պատվավոր տիտղոս՝ ցեղապետերի անվանը ավելացնում էին ***աղա*** թուրքական բառը: Նրանց պատվին հասցրած նվազագույն վիրավորանքի կամ իշխաններից մեկի հասցեին ուղղված որևէ ծաղրանքի համար հաճախ ապստամբել են ամբողջ ցեղեր և խիստ վրեժխնդիր են եղել վիրավորանք հասցնողներից[35]:

Խ. Աբովյանը հարուստ վկայություն ունի ընտանիքում քուրդ կնոջ իրավական վիճակի մասին: «Զնայած քուրդ ժողովրդի վայրի և անսանձ բնավորությանը,– նշում է Աբովյանը,– նրանց մեջ գերակշռում է զուտ ասպետական մի առաքինություն, այն է՝ նրանց տածած անսահման հարգանքը իգական սեռի նկատմամբ»[36]: Նրանց հարգանքը կանանց, նույնիսկ քրիստոնյա կանանց հանդեպ արժանի է զարմանքի և ընդօրինակման,– նշում է հեղինակը: Թշնամու կալվածքը ասպատակելու ժամանակ էլ նրանք աչքի էին ընկել կանանց նկատմամբ իրենց հեզ և քնքուշ վարվեցողությամբ: Մինչև իսկ պատերազմի ժամանակ և գերի վերցրած ստրկուհիներին նրանք չեն խիզախել կնության վերց-

[34] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Ակնարկ..... // ԵԼԺ, հ. 8, էջ 348:
[35] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 381:
[36] Նույն տեղում:

նել՝ առանց նրանց համաձայնության: Քրդերը սրբացրել են կնոջը: Եթե արյան վրեժի իրականացման կատաղած պահին քրդուհին խաղաղեցնելու միջնորդություն աներ, կռվողները կմեղմանային և նույնիսկ կներեին միմյանց: Անգամ, երբ զինված մարտիկները ներխուժեին թշնամու վրանը կամ գյուղը, բավական է որևէ միջնորդող կնոջ ներկայությունը, որպեսզի նա մեղմանար, ներում շնորհեր երկարամյա արյան վրեժին ենթակա անձնավորությանը: Անհասկանալի աստիճանի է հասնում նրանց հարգանքը կանանց սեռի, հատկապես օտարազգի կանանց նկատմամբ: Երբեք, ոչ մի դեպքում նրանք չեն դիպչում կուսական անձեռնմխելիությանը, նույնիսկ ամուսնացած կանանց պատվին, եթե սրանք նրանց ձեռքն ընկնեն անգամ ամայի դաշտում: Իրենց ձեռքն ընկած կանանց հետ վարվում են մեծագույն հարգանքով, սիրով ու քնքշությամբ, մինչև որ սրանց ազգականները ետ գնեն կամ իրենք որոշեն իրենց ճակատագիրը: Հակառակ դեպքում ասում էին. «Թո՛ղ իմ գլուխը փաթաթեն իմ կնոջ լաչակը»[37]: Քուրդ տղամարդու համար ամենաանարգական խոսքն է՝ «Կնոջդ լաչակը գլխիս մնա, եթե քեզ ներեմ», կամ «Թող կնոջդ վարտիքը իմ գլխին լինի»[38]:

Աբովյանը առանձնապես բարձր է գնահատում քուրդ կնոջ բարոյական հատկանիշները, շնորհքը. «Նրանք գործում են դեղեցկագույն գորգեր, թաղիքե ծածկոցներ և բրդե այլ հյուսվածքներ, որոնց ներկերը իրենք են պատրաստում, բայց և միաժամանակ աշխույժ են, ուրախ, բերկրալի, ազատ... Նրանք երգում են դաշտում, ջրի գնալիս, անասուններին արձակելիս: Նրանց բարքերի վեհությունը վերին աստիճանի արժանի է ուշադրության և հիացմունքի»[39]: Ունևոր և անվանի քրդի տանը գեղեցիկ կինը բոլորովին չի երևում, իսկ հասարակ քրդի տանը, ընդհակառակը, նա նույն խստությամբ փակի տակ չի մնում: Հասարակ քրդուհին եվրոպացիների հետ վարվում է բավականաչափ ազատորեն և քաղցրությամբ, եթե միայն հավաստիացած է, թե իրեն չեն կարող տեսնել ո՛չ պառավները և ո՛չ էլ այրերը: «Օտարազգիների առաջ նրանք չեն շփոթվում և երբեք էլ չեն ծածկում երեսները»[40]: Մե-

[37] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 388:
[38] Նույն տեղում, էջ 252:
[39] Նույն տեղում, էջ 385:
[40] Նույն տեղում, էջ 384:

ծամեծների կանայք անսահման իշխանություն են ունեցել իրենց ամուսինների և ոչ պակաս ազդեցություն նրանց ռազմարշավների վրա, այնպես որ արյան վրիժառության կատաղի բռնկման կամ մի այլ գժտության պահին, բավական է, որ որևէ կին խնդրի, կամ հենց տաք կռվի ժամանակ միջամտի, որպեսզի այդ բոլորը կարծես մագնիսական ուժով հարթվի[41]: Որքան էլ նրանք սրբացրել են կանանց, այնուամենայնիվ, չեն հանդուրժել կանանց անհավատարմությունը:

Ամուսնական հավատարմությունը խախտող կնոջը կամ իր սիրածին դավաճանող աղջկան մահ էր սպասվում: «Կնոջ անհավատարմության նկատմամբ քուրդն ավելի կատաղի է, քան վագրը»: Աղջիկը պետք է փախչեր իր սիրածի հետ, եթե նույնիսկ ծնողներն ու ազգականները դեմ էին նրանց ամուսնությանը[42], քրդական ընտանիքում, չնայած նահապետական կարգ ու կանոնին, այնուամենայնիվ քրդուհին ուներ զգալի կշիռ և ազատ էր ինչպես եվրոպացի կինը:

Քուրդ տղամարդկանց հիմնական մասը տարվա զգալի ժամանակը կտրված էր ընտանիքից*, և կամա-ակամա կինն ստիպված էր լինում միջամտել ընտանեկան, երբեմն նաև հասարակական լուծում պահանջող գործերին: Նրա վրա էր ընկած տնային գործերի ողջ ծանրությունը, վայելել է ընդհանուրի հարգանքն ու կարեկցանք: Քրդերի կարծիքով կինը ազնվագույն նժույգ է, որին պետք է խնամել, պաշտպանել, բայց և սանձը միշտ ձեռքում պահել, որպեսզի չկարողանա իր մեջքը ուրիշ որևէ մեկի դարձնել, թե չէ փորձանք կբերի մարդու գլխին: Սովորաբար քուրդ կանայք քիչ էին ենթարկվում սահմանափակումների, աչքի են ընկնում խիզախությամբ և քաջությամբ: Երբեմն տղամարդու պես հագնված ու զինված՝ հետևում են ամուսիններին, մասնակցում կռիվներին և պակաս սխրագործություններ չէին կատարում, քան

[41] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 347:
[42] Տե՛ս նույն տեղում, էջ 254:
* Քուրդ տղամարդը, բացի թալանից, կողոպուտից, որսից, ձիավարժությունից, անասուններ և այլ մթերքներ շուկա տանելուց, սենյակում, ինչպես և վրաններում ուրիշների հետ անգործ նստելուց, զրուցելուց և ծխելուց, ուրիշ ոչինչ չի հասկանում տնային այլ գործերից. այդ բոլորը կնոջ գործն է (տե՛ս ***Աբովյան Խ.,*** Ակնարկ..., էջ 347):

տղամարդիկ[43]: Մեծագույն անարգանքը, որ նման դեպքերում կարող է հասցնել մի ցեղ կամ համայնք մյուսին, այն է, որ կանանց վարտիքները հանում են, սակայն առանց նրանց պատվին դիպչելու: Նրանց հասկացողությամբ ոչինչ չի կարող գերազանցել նման ոճրագործությանը[44]: Այս հանգամանքը բացատրվում է քրդերի մեջ տոհմային մայրիշխանական կարգերի մնացուկների զգալի պահպանվածությամբ:

Թեև մահմեդական կրոնը չէր արգելում բազմակնությունը, բայց դա վերաբերում էր առավել հարուստ շրջաններին: Բազմակնությունն անցյալում տարածված էր թե՛ մահմեդական, թե՛ քուրդ եզիդիների մեջ: Խ. Աբովյանը գրում է. «Հարուստ և նշանավոր մարդիկ թույլ էին տալիս իրենց ունենալու միաժամանակ երկու կին, բայց այնքան հաճախակի չէին փոխում իրենց կանանց, ինչպես չիա քրդերը»[45]: Էնգելսի վկայությամբ «իրականության մեջ տղամարդու բազմակնությունն անշուշտ ստրկության հետևանք է և մատչելի է բացառիկ դիրքեր գրավող առանձին անհատների համար միայն»[46]: Ընդհանրապես Անդրկովկասի քրդերի մեջ ընդունված էր ամուսնության վեց ձև՝ «բեշիկ քյարթմա», «նշանկրեն», առևանգում, «սարդառունշտանդն», «բարդելի», «բազմակնություն»[47]: Այս ձևերից Խ. Աբովյանի աշխատության մեջ հանդիպում ենք «բեշիկ քյարթմային» և առևանգմանը, ըստ որում՝ ամուսնությունների մեծ մասը կատարվել է առևանգման միջոցով: Երբ կնքվել է քյաբին[48], այսինքն՝ ամուսնության դաշնը, ապա երիտասարդ զույգին և նրանց ծնողներին հաշտեցրել է նա, ում մոտ որ պաշտպանություն են գտել երիտասարդները[49]: Միաժամանակ Խ. Աբովյանը գրել է գնմամբ ամուսնական սովորույթի մասին. «Ոչ մի ամուսնություն չէր կատարվում առանց

---

[43] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 367: Հմմտ. ***Ռաֆֆի***, Ի՞նչ է քուրդը, և ի՞նչ է թուրքը // Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1956, էջ 374, ***Баяазади М. М.,*** Нравы и обычай курдов, Москва, 1972, с. 55:

[44] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 348:

[45] Տե՛ս նույն տեղում, էջ 385:

[46] ***Էնգելս Ֆ.,*** Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1965, էջ 80:

[47] Տե՛ս ***Ամինե Ավդալ***, նշվ. աշխ., էջ 42:

[48] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ. 8, էջ 254:

[49] Տե՛ս նույն տեղում:

ընծաների, ինչպես արևելյան ժողովուրդներին էր բնորոշ, երբ հարսնացուի ծնողները և ազգականները իրենց համաձայնությունն էին տալիս, փեսացուի հայրը պարտավոր էր նրանց ուղարկել թանկարժեք նվերներ: Երբ երկու կողմերը ավարտում էին իրենց բանակցությունները և սակարկումները «խալանի» կամ գլխագնի վերաբերյալ, հրավիրվում էր մոլլան, և փեսացուն էլ հարսնացուին էր հանձնում նշանի մատանին՝ քյաբինը[50]:

Քուրդ աղջիկներին շատ փոքր հասակում են ամուսնացրել, նույնիսկ տասը տարեկանից: Պետք է նշել, որ քրդերի մեջ նշանված հարսնացուների համար մեծագույն խայտառակություն էր իրենց երեսը ցույց տալ նույնիսկ կին ազգականուհիներին ամուսնությունից առաջ և հետո: Ամենամերձավոր ազգականները միայն ընծաների և խոստումների միջոցով կարող էին նրան քողազերծ անելու պատվին արժանանալ:

Խ. Աբովյանը ակնարկ ունի նաև տղաբերքի սովորույթների մասին: Նա գրում է, թե «Հայտնի են հազարավոր օրինակներ, երբ քրդուհին բաց դաշտի մեջ երեխա է ծննդաբերել և հետո երեխան, փայտն ու ջուրը հետն առած՝ տուն է գնացել»[51]:

Խ. Աբովյանը հակիրճ բնութագրել է նաև ժողովրդական բժշկությունը: Նա գրում է, թե քրդի համար բժիշկ գոյություն չունի, բայց ճանաչված են ժողովրդական հեքիմները՝ կանայք, որոնք բուսաբուժությամբ բուժում են մի քանի տեղական հիվանդություններ: Վիրաբուժությունը ամենից լավ նրանք են հասկանում, ինչպես և բոլոր ասիական ժողովուրդները: Քրդերը երկարակյաց են. 120-130 տարեկան ծերունիները քիչ չեն, ընդհանրապես մեծամասնությունը հասնում է խոր ծերության[52]:

Ցեղի ազնվությունը կատարելագործելու և հարատևությունը պահպանելու նպատակով քուրդ բեկերը և ընդհանրապես բարձր դասի մարդիկ դիմել են հետևյալ քայլին. նրանք ընտրել են իրենց ազգականներից մեկին կամ գեղեցկությամբ ու մարմնի լավ կազմվածքով հայտնի մի օտար մարդու, հրավիրել են տուն և խնդրել, որ այդ գիշեր փոխարինի իրենց[53]:

---

[50] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ 8, էջ 384-385:
[51] Տե՛ս նույն տեղում, էջ 255:
[52] Տե՛ս նույն տեղում, էջ 256:
[53] Նույն տեղում, էջ 386:

Ինչպես բոլոր լեռնաբնակներին, այնպես էլ քրդերին յուրահատուկ է եղել արյան վրեժի սովորույթը: Արյան վրիժառության պատճառները սովորաբար եղել են ազգականի սպանությունը, անձնական վիրավորանքը, աղջիկ առևանգելը, հարսի անհավատարմությունը:

Նման դեպքերում թշնամացել են ոչ միայն գերդաստանները, այլև ամբողջ ցեղեր: Քուրդը անձեռնմխելի է համարել իր թշնամուն, եթե նա, պատեհ րոպե գտնելով, կարողացել է մտնել նրա տունը, մոլայի կամ ցեղապետ իշխանի բնակարանը և թուրը դցել մեջքին կամ գոտիով փաթաթել ձեռքերը: Այս գործողությունը համարվել է լիակատար խոնարհություն և խոստովանություն, թե նա իր կյանքը հանձնում է թշնամու ողորմածությանը: Այդ սրբազան սովորույթը խախտելը հանցանք է համարվել և ամբողջ ցեղը դուրս է եկել խախտողի դեմ[54]:

Խ. Աբովյանը հիշատակում է, որ քրդերը բաժանված են եղել մի քանի ցեղերի՝ իրենց ցեղապետերով: Ցեղապետի խոսքը միշտ սուրբ է եղել հասարակ մարդու համար: Ցեղապետը չի հանդուրժել քծնանքը, յուրաքանչյուրն իրեն շատ ազատ պետք է պահեր և խորին պատկառանք տածեր դեպի ավագը[55]: Ցեղապետերն իրենց անվանը կցել են թուրքական աղա բառը, օրինակ՝ Սուլեյման աղա, Ավդալ աղա: Ցեղապետերը մեծ տուրք են վերցրել իրենց ժողովրդից՝ բնամթերքով կամ կանխիկ դրամով: Շահագործման ձևերից է եղել նաև տոների ժամանակ «հարուստ նվերներ ստանալը, որը կոչվել է փեշքեշ»[56]: Ցեղերի մեջ ծագած գժտությունները հարթել են ավագներն ու իշխանները: Ավագի վրանը կամ տունը փոխարինել է դատարանին, որը մատչելի է եղել և՛ մեծերին, և՛ փոքրերին, և՛ ունևոր իշխանին, և՛ չքավորին: Այստեղ խորհրդակցել են հասարակական գործերի մասին, ողջ օրը խոսել են, ծխել, սուրճ խմել: Ավագները նստել են գորգերի վրա. յուրաքանչյուրն իր տեղն է ունեցել, երիտասարդները մնացել են կանգնած: Նույնիսկ գյուղի տանուտերի կրտսեր որդիները իրավունք չեն ունե-

[54] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, էջ 388:
[55] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Ակնարկ..., էջ 348:
[56] Տե՛ս ***Курдов К.,*** Х.Абовян как курдовед-этнограф // «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., թիվ 10, Երևան, 1955:

ցել նստելու ծերերի ներկայությամբ և պետք է սուրճ պատրաստեին ու ծխամուրճ մատուցեին: Երբ ավագը ցանկացել է վեր կենալ և դուրս գալ, նրան օգնել են երիտասարդները. մեկը հողաթափերն է հագցրել, մյուսը՝ ձեռքը բռնել, մյուսի վրա ավագն է հենվել և այլն: Երբ նա նորից ներս է մտել, բոլոր նստածները ոտքի են կանգնել և նստել են միայն այն ժամանակ, երբ ավագն արդեն նստած էր բարձի վրա[57]:

Խ. Աբովյանը ուշադրություն է դարձրել քրդական ընտանեկան և համայնքային հյուրասիրությանը: Ըստ նրա՝ քրդերի հյուրասիրությունը ամբողջ Արևելքում առասպել էր դարձել: Նրանք հյուրին նայում են որպես աստծո առաքյալի: Քրդական համայնքում հյուրասիրության դասական օրինակ է Իբրահիմ աղայի տանը հյուրընկալելու արարողությունը, որն էլ՝ որպես ազգագրական ուշագրավ նյութ, մեջ ենք բերում գրեթե ամբողջությամբ. «Արդեն առաջուց գիտեին, որ ես նրանց պիտի այցելեմ: Հենց որ նրա դռան առաջ երևացի, ինձ ընդառաջ եկավ մի պնդակազմ քուրդ, համարյա ձեռքերի վրա իջեցրեց ինձ ձիուց, և նրան հետևող ծառան առաջնորդեց ինձ գոմի սենյակը: Իմ երևալը այնտեղ ամեն ինչ շարժման մեջ դրեց: Ես այնտեղ գտա բազմաթիվ մարդիկ: Բոլորը ոտքի ելան և վազեցին ինձ ընդառաջ, բացառություն չկազմեց նույնիսկ ինքը՝ Իբրահիմ աղան: Հանձնարարականի սպասող երիտասարդներից մեկը հանեց իմ կոշիկները, երկու հոգի էլ բռնեցին թևերս, այնպես որ ես չգիտեի՝ ինչպես վարվել: Բարի գալուստի մաղթանքները անցնում էին բերնից բերան, բայց այնպես սրտանց, որ հազիվ թե ես որևէ տեղ երբևէ զգացած լինեմ: Վերը՝ մի անկյունում, որտեղ գտնվում էր տանտիրոջ անձեռնմխելի նստատեղը, փռել էին գորգեր, փափուկ ներքնակներ և նրանց երկու կողմից՝ մեծ բարձեր: Այդտեղ պիտի ես նստեի: Իմ ձախ կողքին նստած էր ինքը՝ սիրալիր տանտերը, իմ դիմաց՝ ահռելի, բարձր հասակով մի ծերուկ: Մի քանիսը շարունակ կանգնած էին ոտքի վրա, իմ հետևն էլ՝ երկու երիտասարդ, ինձ ծխամուրճ և այլ հարկավոր բաներ մատակարարելու համար: Սկզբում ես կարծում էի, որ դրանք նրա ծառաներն են, բայց որքան մեծ եղավ իմ զարմանքը, երբ մի քիչ հետո իմացա, որ բոլոր այդ ներկա եղող-

[57] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ, հ.8, էջ 383:

ների մեծ մասը նույն այդ ընտանիքի անդամներն էին»[58]: Ճոխ հյուրասիրությունը ուղեկցվել է երգ ու երաժշտությամբ:

Հյուրընկալման այս սովորույթը գրեթե նույնությամբ նկարագրել է Հովսեփ Օրբելին 1911-1912 թթ. Արևմտյան Հայաստանում, Մոկս պատմական գավառում ազգագրական և բանահավաքչական դիտարկումների ժամանակ: Նա այստեղ հյուրընկալվել էր հայտնի քուրդ գավառապետ Մուրթուլա բեկի տանը: Սովորույթի համաձայն Մոկսում ևս հավաքույթների կամ ճաշկերույթների ժամանակ բազմում էին բարձերին՝ ըստ ավագության կարգի, որը հիշեցնում է հին իրանական ու հայկական «Գահնամակի» կարգը[59]: Բացի սրանից՝ քրդերի, ինչպես և արևմտահայերի մեջ, սովորության համաձայն, երբ հասակավոր մարդը վրան կամ տուն էր մտնում, մի ձեռքով բռնում էր միայն ընտանիքի ավագ տղամարդու ձեռքը, իսկ մյուս ձեռքը դնում էր ճակատին: Եթե մտնողը երիտասարդ էր, պարտավոր էր հերթով մոտենալ բոլոր ավագներին և խոնարհաբար համբուրել ձեռքերը, իսկ վերջիններս պետք է համբուրեին երիտասարդի ճակատը և գլուխը, ընդունեին ողջույնով, որն ուներ նույն նշանակությունը, ինչ հայերիս «բարով եկաբը»:

Ուշագրավ է Խ. Աբովյանի հաղորդումը մահվան և հուղարկավորության որոշ սովորույթների մասին: Նա գրում է, որ քրդերի համար ռազմադաշտում մեռնելը ամենապատվավոր մահն է, որն ուղեկցվում է ցնծությամբ ու երգերով, իսկ ամենամեծ սուգը, որը նրանք ողբում են աղեկտուր լացուկոծով, այն է, երբ տղամարդը մեռնում է բնական մահով[60]:

Քրդերի հոգևոր մշակույթի տարրերի բնութագրությունը: Առավել հետաքրքիր են Խ. Աբովյանի հետազոտությունները քրդական ժողովրդական ստեղծագործությունների բնագավառում: Վկայություններ կան, որ նա հետաքրքրվել է քրդերի ժողովրդական պոեզիայով և դրվատանքով է խոսում քրդական պոեզիայի մասին: Իր «Քրդեր և եզիդիներ» ուսումնասիրության հա-

[58] ***Աբովյան Խ.,*** Քրդերը // ԵԼԺ, հ. 8, էջ 257-258:

[59] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Աղձինքահայոց հյուրընկալման ավանդույթը (XIX-XX դդ) // ՊԲՀ, 2005, 1 (168), էջ 164:

[60] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Եզիդիները, ԵԼԺ, հ. 8, էջ 393:

վելվածում եվրոպական հանրությանը քրդերի ու եզդիների պոեզիային ծանոթացնելու համար Աբովյանը ներկայացրել է վերջիններիս պոեզիայի մի փունջ: Գերմանացի ճանապարհորդ և գիտնական Մ. Վագները գրել է, որ Աբովյանը իրեն է ուղարկել եզիդիների և քրդերի երգեր, որոնցից մի քանիսը ինքը օգտագործել է եզիդիների մասին գրած իր հոդվածում: Քրդական երգերով Աբովյանի անձնական տետրակը այժմ պահվում է ՀՀ ԳԱԱ գրականության և արվեստի թանգարանում:

Խոսելով քրդերի ժողովրդական ստեղծագործությունների մասին՝ Խ. Աբովյանը գրել է. «Քրդերի ժողովրդական պոեզիան ապշեցուցիչ ընթացք է ունեցել և հասել հնարավոր կատարելության: Ամեն մի քուրդ, մինչև իսկ քրդուհի ի բնե հոգով բանաստեղծ է»: Նրանք ընդունակ են հանպատրաստից նոր ոտանավորներ հորինելու՝ նայած առիթին[61]:

Զավազանց հետաքրքիր է ժողովրդական պոեզիայի նշանակության մասին Խ. Աբովյանի տրված բնորոշումը՝ որպես քրդերի ազգագրության ուսումնասիրման աղբյուրի: Այդ ուսումնասիրությունները Աբովյանին բերել է այն համոզման, որ քրդերը դարերով պահպանել են բերանացի և գրավոր ավանդություններով իրենց ազգային կերպարանքը, նախկին ինքնատիպությունը:

Խ. Աբովյանը գրի է առել նաև քրդական երգեր: Դրանցից առավել շատ են մեներգերը, քան խմբերգերը: Քրդերի մեղեդիները յուրօրինակ են,– գրել է Խ. Աբովյանը,– և միայն իրենց լսողությանը հաճելի[62]: Նրանց երգերի հիմքում ընկած են սերը, կարոտը, պատերազմական ընդհարումները և այլն: Այդ երգերը ոչ թե գրի են առնվել, այլ բանավոր փոխանցվել են սերնդից սերունդ: Քրդերը մեծ մասամբ երգել են ազգային երգեր:

Քուրդ երգիչը կամ երգչուհին երգելիս ծնոտի տակ է դրել մեկ կամ երկու ձեռքերը, երկու կողմից բռնել են դեմքը, ուղիղ կանգնել են և առանց երաժշտական գործիքների ուղեկցության սկսել են բացականչել՝ լո՛, լո՛ դրան կցելով խոսքեր[63]: Քրդերը երգել են դաշտում, ջրի գնալիս, անասուններին արածեցնելիս, հարսանյաց խնջույքներին: Քրդերը, մանավանդ քրդուհիները, բա-

[61] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** ԵԼԺ հ. 8, էջ 349:
[62] Տե՛ս նույն տեղում:
[63] Տե՛ս նույն տեղում, էջ 379:

նաստեղծական արտակարգ տաղանդի տեր են: «Նրանք շատ պարզ և անպաճույճ երգում են իրենց հովիտները, լեռները, ջրվեժները, աղբյուրները, ծաղիկները, զենքերը, նժույգները, զինվորական քաջագործությունները, իրենց գեղեցկուհիներին, և նրանց հրապույրները,– այն ամենը, ինչ մատչելի է նրանց զգացմունքին և ըմբռնողությանը, զարդարում են համեմատություններով և ճգնում են ավելի ևս կենդանի ներկայացնել այդ բոլորը քաղցրանվագ երգերով...»[64]: Այնուհետև ցավով արձանագրում է, որ դրանք անհրաժեշտ է գրի առնել, որ մոռացության չմատնվեն. «Որքան լավ կլիներ այդ բոլորը հավաքել, բայց հարկավոր է դրա համար լի գրպան և ազատ ժամանակ՝ գյուղից գյուղ անցնելու և հավաքելու համար»[65]:

Ըստ Աբովյանի՝ յուրահատուկ են նաև քրդերի պարերը: Տղամարդիկ և կանայք միասին կամ առանձին բռնում են միմյանց ձեռք, մի շրջան կազմում և որոշ տակտով պարում են՝ սկզբում դանդաղ, հետզհետե կատաղի ոստյուններով և իրար քաշելով[66]: Երաժշտական գործիքներից, որ քրդերը օգտագործել են հարսանյաց հանդեսների ժամանակ, պետք է նշել զուռնան և թմբուկը[67]: Հովիվները հիմնականում նվագել են թութակ, որը պատրաստել են եղեգից ու փայտե խողովակներից:

Խ. Աբովյանը առաջիններից էր, որ սեփական դիտարկումների հիման վրա ներկայացրել է քրդերի կյանքի, մշակույթի մասին արժեքավոր նյութեր: Դրանով նա այդ ժողովրդին հանում էր գիտական անհայտության ծիրից՝ դառնալով ազգաբանական, մշակութաբանական հետազոտությունների սկզբնավորողներից մեկը:

---

[64] Տե՛ս ***Աբովյան Խ.,*** Քրդեր և եզիդիներ // ԵԼԺ, հ. 8, էջ 247:
[65] Տե՛ս նույն տեղում:
[66] Տե՛ս նույն տեղում, էջ 256:
[67] Տե՛ս նույն տեղում, էջ 378:

8. ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԺԹ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ (ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆ, ՄԻՆԱՍ ԲԺՇԿՅԱՆ)

Հայ ազգագրությունը՝ որպես առանձին գիտություն, հանդես եկավ ԺԹ դարավերջին - Ի դարասկզբին: Սակայն մինչ այդ բավական երկար ժամանակ զգալի քայլեր էին կատարվել ազգաբանությունը հայոց մեջ կայացնելու և գիտական հիմքերի վրա դնելու ուղղությամբ: Հատկապես ԺԹ դարի երկրորդ, քառորդին, երբ Արևելյան Հայաստանը միավորվեց Ռուսաստանի հետ, գիտությունների, այդ թվում ազգաբանական գիտության զարգացման հնարավորություններ առաջացան:

Արևմտյան Հայաստանի նահանգներում նույն ժամանակաշրջանում ազգագրության զարգացման համար դեռևս հող չէր նախապատրաստված: Այդ թերին լրացնելու եկավ Վենետիկում հիմնված Մխիթարյան միաբանությունը, որի գիտնականները մտացած էին եվրոպական գիտությունների մեջ: Հայ նշանավոր հեղափոխական դեմոկրատ, բանաստեղծ Միքայել Նալբանդյանը, իր «Մխիթար և Մխիթարյանք» հոդվածում անդրադառնալով օտար հողում հայ մշակութային օջախների ստեղծման հարցին, գրում է. «Հայոց ազգի փոքրիշատե իմացական նորոգությունը վատ է կատարվեր օտար աշխարհում... Հայկական դպրությունը պիտո էր հյուր գնալ Իտալիա և օտար հացով սնանել»[1], քանզի Հայաստանում նման օջախներ ստեղծելու հնարավորություններ չկային:

Առաջին հարյուրամյակում՝ 1750-ականներից մինչև 1850-ական թվականներին, Մխիթարյան միաբանությունը արդասավոր գործունեություն է ծավալել իր հարյուրավոր հրատարակություններով, դասագիրք-ձեռնարկներով, դպրոցներով, կրթական ու գրական մշակներով՝ ուղղություն տալով հայ մշակույթի զարգացմանը: Մխիթարյաններն առանձնապես աչքի են ընկել հայ հին մատենագրության և օտար լեզուների իմացությամբ, որը հնարավորություն է տվել նրանց հաղորդակից դառնալու արևմտաեվրոպական և անտիկ շրջանի գրականությանն ու մտավոր արժեքներին: Վենետիկի Մխիթար-

[1] ***Նալբանդյան Մ.,*** Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 1947, էջ 186:

յանները հրատարակել են Փավստոս Բուզանդի, Կորյունի, Եղնիկ Կողբացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Հովհան Մանդակունու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու և այլոց երկերը[2]: Միաժամանակ հայ մատենագրությունը օտարներին ներկայացրել են թարգմանաբար: Հայ մատենագրության կարևորագույն երկերի հրատարակությանը զուգընթաց Մխիթարյանները լույս են ընծայել հին թարգմանությունների լավագույն նմուշներ, այդ թվում՝ Աստվածաշունչը, Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու և այլ հեղինակների տասնյակ երկեր: Մեծ էր Մխիթարյանների դերը անտիկ գրականության թարգմանության գործում: Այսպիսով՝ հայագիտությունը, այդ թվում՝ և ազգագրությունը, զուգահեռաբար զարգացան թե՛ Արևելյան Հայաստանում, թե՛ Վենետիկում, ավելի ուշ՝ նաև այլ գաղթօջախներում: Հայ ազգագրական գիտության ձևավորմանը նպաստեցին նաև եվրոպական համանման գրականության նմուշների թարգմանությունները: Բացի մամուլից՝ ազգագրական նյութերը թափանցում էին հայ նոր գրականության ոլորտ: Այս գրականությանը շատ բնորոշ էին ազգային գեղեցիկ սովորույթների, անխառն բարքերի, տնտեսական զբաղմունքի, նյութական ու հոգևոր մշակույթի, ժամանցի ձևերի, սպորտի և խաղերի տեսակների, ուխտագնացությունների, ամուսնալնտանեկան սովորույթների ու ծիսակատարությունների նկարագրությունները[3]:

Ահա այս համապատկերում հայկական ազգագրական և բանահյուսական նյութերը պատմագրության էջերից քաղելով կամ ժողովրդից գրի առնելով՝ գրողներն ու գիտնականները իրենց երկերը հագեցնում էին դրանցով: Այդ հետազոտողներից է Մխիթարյան միաբանության անվանի գիտնական Ղուկաս Ինճիճյանը[4]: Նա հայրենիքից դուրս գիտական ազգագրությամբ զբաղվող առաջին գիտնականներից է:

---

[2] Տե՛ս «Գրացուցակ Մխիթարեան տպարանին (1717-1960)», Վենետիկ, 1960:

[3] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 10-13:

[4] Մխիթարյան միաբանության երևելի գործիչներ Ղուկաս Ինճիճյանի և Մինաս Բժշկյանի ազգաբանական գործունեության համառոտ քննությունն իրականացրել ենք «Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը» // (ՊԲՀ, 2011, թ. 3, էջ 132-149) և «Աբովյանը որպես հայ ազգաբանական գիտության սկզբնավորող» (Աբովյանագիտական-5 (հոդվածների ժողովածու), Երևան, 2012, էջ 111-119) հոդվածներում:

Ականավոր հայագետ-աշխարհագրագետ, ծնունդով Կ. Պոլսից Ղուկաս Ինճիճյանը (1758-1833 թթ.) Մխիթարյան միաբանության անդամ էր 1779 թվականից: Նա քաջածանոթ էր Եվրոպայում ձևավորված ազգագրության սկզբունքներին, տիրապետում էր մի քանի լեզվի, ուստի հանձն առավ այդ սկզբունքները հայ ազգագրությանը ծառայեցնելու գործը: Ձեռքի տակ ունենալով Մխիթարյանների հարուստ գրականությունը՝ նա ձեռնարկեց մեկ մարդու ուժերից վեր աշխատանք. փորձեց հայ և օտար մատենագրության մեջ եղած տեղեկությունները՝ Հայաստանի ու հայերի վերաբերյալ, ի մի բերել և դրանց հիման վրա վեր հանել հայ ժողովրդի հազարամյակների ազգագրական նկարագիրը: Ղուկաս Ինճիճյանը թողել է գրական, պատմաաշխարհագրական, աղբյուրագիտական, ազգագրական հարուստ ժառանգություն:

Նշենք, որ Կ. Պոլսում ապրած տարիներին նա հիմնել է «Արշարունեաց ընկերութիւնը» (1810 թ.), որը կոչված էր նյութական և բարոյական միջոցներով խթանելու մամուլի ու գրականության հրատարակումը: Բացի դրանից՝ ընկերությունը նպատակ ուներ գրքերը հրատարակելու նոր հայերենով, որն ավելի ընկալելի էր հայության լայն շրջանակներին: Ղ. Ինճիճյանն ընկերության խնամակալն էր և հոգաբարձուն, իսկ Հակոբ և Մկրտիչ Տյուզյանները՝ մեկենասները[5]:

ԺԹ դարում Ղ. Ինճիճյանն առաջին էր հայագետներից, որ «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» եռահատոր մեծածավալ աշխատությունում ներառել է մատենագրության մեջ հաստատագրված ազգագրական տվյալներ՝ դրանք խմբավորելով ըստ թեմաների: Այսպես՝ երկրորդ հատորում՝ «Դրօշք, նշան» խորագրի ներքո, ներկայացրել է միջին դարերի հայկական պետական-զինվորական դրոշները, դրանց նշանները: Հիմնվելով Մինաս Համդեցու տվյալների վրա՝ Ղ. Ինճիճյանը գրում է, որ հայոց դրոշի նշանը նախ արծիվն է եղել, ապա դրան ավելացել է առյուծը[6]: Ե դարի պատմագիրների վկայությունների

[5] Տե՛ս «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ», կազմ.՝ ***Հ. Պետրոսյանը***, Երևան, 1960, էջ 99:

[6] «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», Տն. Հ. Ղուկաս աթոռակալ վարդապետի Ինճիճեան, Հ. Բ., ի Վենետիկ, 1833, էջ 235 (այսուհետ այս գրքից մեջբերումների հղումները կտրվեն բնագրում, կնշվի էջը):

հիման վրա նշել է, որ Արշակ թագավորի օրոք արծիվն ու նետը զինանշան են համարվել, որովհետև զինվորները դրանք կրում էին իրենց ճակատին ու պարանոցին (էջ 235): Ապա մատնանշել է այլոց վկայությունները՝ «...արծուէնշանք, աղեղնադրօշք, արծուէնշանք վարժականիւք, նշանակս եւ դրոշս դաղմատականս և վիշապագլուխս...» (էջ 236): Ըստ այդ տվյալների՝ «նշան սպարապետի զօրավարի էր՝ կրել առաջի իւր խաչադրօշ» և «նշան իշխանաց ի պատերազմի էր՝ կրել ի սաղաւարտս իրեանց զնշան խաչին, որ կայր յանուն սրբոյն Սարգսի...» (էջ 235):

«Զինուորութիւն Հայաստանեայց» խորագրի ներքո Ղ. Ինճիճյանն ի մի է բերել պատմագիրների տեղեկությունները և ներկայացրել զինվորների զգեստները (էջ 266-269), պաշտպանական զենքերը (էջ 248-250), զենքի տեսակները (էջ 254-264), ամրոցներ քանդող տեխնիկան (էջ 262-263), վրանները (էջ 251-252), ազդարարիչ փողերը (էջ 252-253) և այլն:

«Սովորութիւն Հայաստանեայց» բաժնում ներկայացրել է արքունական կենցաղի որոշ կողմեր՝ թագավորների պաշտոնական տարազն ու դրա օգտագործման ձևերը, թագն ու խույրը, թագադրության հանդեսները, օծման արարողությունները (էջ 278-284) և այլն: Նույն կերպ նա ներկայացրել է թագավորների փոխանորդների, մարզպետների, իշխանների և մյուսների զգեստներն ու սովորույթները (էջ 284-287): Ժողովրդական տարազի ձևերին, զարդերին ու գործածության եղանակներին, օծանելիքներին անդրադարձել է համառոտ ակնարկով (էջ 287-292): Առանձին դրվագներով ներկայացրել է հայերի միջնադարյան ամուսնական սովորույթները (էջ 292-293), բարքերը (էջ 311-314), պետական-նախարարական օրենքներն ու իրավունքին վերաբերող գրականությունը (էջ 302-310), դաշն կնքելիս ազգային և միջազգային սովորույթների կիրառումը (էջ 300-301): Հուղարկավորման, հոգեհանգստի և հետթաղման ծեսերը ներկայացնելիս առանձնացրել է հատկապես սգավորության, մահարձաններ կանգնեցնելու սովորույթները (էջ 293-300):

Ղ. Ինճիճյանը մանրամասնորեն քննության է առել միջին դարերում ազգային առաքինության և մոլորությունների վերա-

բերյալ տեղեկությունները: Ըստ արժանվույն գնահատելով ազգային հերոսներին, որոնք իրենց առաքինազարդ վարքով ծառայել են ազգին ու հայրենիքին (էջ 315-368), գիտնականը խստորեն քննադատել է այն ախտերը, որոնք կրում էին երկպառակները և նրանց կողմնակիցները, որոնք չարությամբ ու նախանձով, քսությամբ և բանսարկությամբ, մատնությամբ ու դավաճանությամբ գործել են հայրենիքի դեմ՝ դրանով վնաս հասցնելով ազգային կենցաղավարությանը (էջ 369-401): Այստեղ նա հրամայական է համարում հայկական կենցաղն առողջ հիմքերի վրա դնելը, արատներն արմատախիլ անելը:

Ի դեպ, հայ կենցաղավարության մեջ առաջավոր ձևեր մտցնելը Ղ. Ինճիճյանի վաղեմի նպատակներից էր: Դեռևս 1815 թ. «Ազգասէր» աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել է այդ խնդիրներին: Կենցաղագիտական նոր երևույթները դյուրըմբռնելի լինելու համար հեղինակն այդ աշխատությունը շարադրել է բարբառախառն գրական լեզվով: Այստեղ նա բազմաթիվ օրինակներ է բերել հռոմեացի, հույն, ռուս և այլ ժողովուրդների վարքուբարքից՝ չմոռանալով ներառել նաև հայկական միջնադարյան կենցաղավարության գեղեցիկ օրինակներ: Այս համապատկերում նա խնդիր է առաջադրել ըմբռնելու ազգային ինքնաճանաչության ոգին և սուր պայքար մղելու նախանձի, քինախնդրության, բամբասասիրության, չարախոսության, կեղծավորության և նման այլ երևույթների դեմ:

Բացի հայկական կենցաղագիտության հարցերից՝ Ղ. Ինճիճյանն այս աշխատությունում նկարագրել է խորվաթների ու դաղմատցիների ազգային բնորոշ առանձնահատկությունները, որոնք գրի է առել դեռևս 1786 թ.՝ Խորվաթիայում եղած ժամանակ:

Ղ. Ինճիճյանը «Հնախոսութիւն աշխարհագրական...» աշխատության երրորդ հատորում հանգամանորեն անդրադարձել է հայոց երկրագործության, որսորդության, ճարտարապետության, քանդակագործության ու երաժշտության վերաբերյալ տվյալներին, հեթանոսությանը, քրիստոնեությանը և այլն: Ուշագրավ մանրամասներ են առկա հոգևորական դասի նիստուկացի, եկեղեցականների զգեստների, հանդերձների, պարագաների, կաթողիկոսական սովորույթների, ծիսակատարությունների մասին: Նա համեմատության մեջ է դրել հայոց և մյուս հին ժողովուրդների հավատալիքները՝ փորձելով այդ համակարգում գտնել համամարդկա-

յին մտածողության ընդհանրություններ: Ըստ նրա՝ հայոց սիրո ու գեղեցկության աստվածուհի Աստղիկը նույն եգիպտական Իսիսն է, հռոմեական Դիանան և հունական Արտեմիսը: Այս հա-մեմատությամբ նա փորձել է ի մի բերել հին դարաշրջանի հեթա-նոսական հավատալիքների հիմքը կազմող տոտեմիզմի և անիմիզ-մի դրսևորումները՝ մատնացույց անելով վերապրուկային երևույթների առկայությունն իր ապրած ժամանակաշրջանում:

Աշխատության մեջ Ղ. Ինճիճյանն անդրադարձել է նաև տե-ղանունների ստուգաբանությանը, ժողովրդական բժշկությանը, որը հիմնված էր մարդկային փորձի ու ճանաչողության վրա՝ փոր-ձելով առանձնացնել այդ շրջանում հայտնի ժողովրդական բժշկա-գիտության հիմնական սկզբունքները: Նա, սակայն, լինելով հո-գևորական, հաճախ կրոնական թեմաներով խնդիրների մասին խո-սելիս դրանք մեկնաբանել է կրոնական համապատասխան գաղա-փարախոսության դիրքերից՝ փորձելով դրանց մեջ տեսնել նաև հայկականը: Այսպես՝ նա տասնյակ էջեր է նվիրել այն դրույթի ապացուցմանը, որ Ադամն ու Եվան խոսել են հայերեն:

Գիտնականի հրատարակած ծավալուն գործերից է «Դարապա-տում» վերնագրով 8 հատորից բաղկացած աշխատությունը (1824-1827 թթ.), որը թարգմանվել է ֆրանսերեն, իտալերեն, գերմանե-րեն, առավել ճանաչված է Եվրոպայում, քան մեզանում: Այստեղ Ղ. Ինճիճյանն անդրադարձել է տարբեր ժողովուրդների ազգա-գրական նկարագրին՝ հիմնականում հենվելով իր թարգմանած աղբյուրագիտական նյութերի վրա: Վերջին երկու հատորները նվիրված են գիտության և արվեստի զարգացման պատմությանը, մեծ մտածողների, արվեստագետների, եկեղեցական գործիչների կյանքին ու գործունեությանը:

Ղ. Ինճիճյանը հրատարակել է նաև «Ամարանոց Բիւզան-դեան» (Վենետիկ, 1794 թ.), «Տարեգրություն» (աշխարհաբար) և «Եղանակ Բիւզանդեան» (Վենետիկ, 1803-1820 թթ.) տարեգրքե-րը, որոնք ազգագրական նյութերի անսպառ աղբյուրներ են:

«Եղանակ Բիւզանդեան» տարեգրքի 1808, 1809, 1812, 1815-1820 թթ.[7] հատորները խիստ ինքնատիպ բնույթ ունեն: Յուրաքանչ-յուր տարեթիվ անպայման ունի տվյալ տարվա բոլոր տասներկու

[7] ***Շտիկյան Ս.,*** Ղ. Ինճիճյանի «Եղանակ Բիւզանդեան» տարեգիրքը // ՊԲՀ, 1966, թ. 2, էջ 173-177:

ամիսների աստղաբաշխական նկարագիրը: Սրան հաջորդում են յուրաքանչյուր ամսվան առնչվող մանրամասն բնութագրերը օրվա տևողությունը, արևածագի ու մայրամուտի ժամանակները, գիշերահավասարները, յուրաքանչյուր օրվա ընթացքում տեղի ունեցած բնական երևույթները և այլն, այս ամենը հաճախ տրված է վայրկյանների ճշգրտությամբ: Այս ուղղությունն, առավել կամ պակաս չափով գերակայող է մնում բոլոր տարիների համար: Նման աստղաբաշխական բնույթի տարեգիրքը նախադեպը չունի:

Նրա աշխատությունների զգալի մասը վերաբերում է աշխարհագրությանը: Մասնակցել է Ս. Ագոնցի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» բազմահատորի ստեղծման աշխատանքներին, որի Ասիային նվիրված «Նոր Հայաստան» (Վենետիկ, 1806 թ.) հատորի հեղինակն է: Այդտեղ աշխարհագրական տեղեկություններ էին տրված Փոքր Հայքի, Միջագետքի, Կիլիկիայի, Խաղտիքի, Ատրպատականի, Աղվանքի և այլ վայրերի մասին: Նա ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է պատմական Հայաստանը տվյալ ժամանակահատվածում[8]: Սույն աշխատությունը փաստական նյութի հարուստ շտեմարան է և, անկասկած, ունի պատմաաշխարհագրական կարևոր արժեք: Հայաստանի և նրա աշխարհագրության վերաբերյալ իր մյուս հայտնի աշխատություններում[9] Ղ. Ինճիճյանը խոսել է պատմաքաղաքական կարևոր անցուդարձերի, Հայաստանի վարչաձևերի, նախարարական տների, նրանց իրավական դրության, հայ ժողովրդի բարքերի ու սովորույթների, զբաղմունքի, հավատալիքների և հատկանշական այն ամենի մասին, որոնք վերաբերում է Հայաստանին ու նրա բնակչությանը[10]:

«Ստորագրութիւն հին Հայաստանեայց»[11] ստվարածավալ աշխատության մեջ հունահռոմեական և ասորական աղբյուրներից

---

[8] Տե՛ս ***Ագոնց Ս.,*** Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա., Վենետիկ, 1802:

[9] Տե՛ս ***Ինճիճեան Ղ.,*** Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա., Բ., Գ., Վենետիկ, 1835:

[10] Վենետիկի Մխիթարյանների 250-ամյա գործունեությանը հանգամանորեն անդրադարձել է Փ. Անթաբյանը: Նա հակիրճ ներկայացրել է նաև Ղ. Ինճիճյանի անցած գիտական ուղին (տե՛ս ***Փ. Անթաբյան,*** Վենետիկի Մխիթարյանների հայագիտական գործունեությունը (Միաբանության հիմնադրման 250-ամյակի առթիվ) // ՊԲՀ, 1968, թ. 4, էջ 25-38):

[11] ***Ինճիճեան Ղ.,*** Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1822:

հավաքած փաստական հարուստ նյութերի հիման վրա տալիս է Մեծ Հայքի պատմաաշխարհագրական պատկերը՝ նահանգների ու գավառների աշխարհագրական բնութագիրը, տեղանունների ստուգաբանությունը, տեղեկություններ ազգագրության վերաբերյալ, կատարում աշխարհագրական անունների տեղագրական ճշտումներ:

Գիտական ազգագրության ձևավորման մեջ մեծ ավանդ ունեցող մյուս հետազոտողը Մինաս Բժշկյանն է: Նա Մխիթարյան միաբանության ականավոր գիտնականներից է՝ բանասեր, մանկավարժ, պատմաբան, ազգագրագետ, երաժշտագետ:

Ծնվել է Տրապիզոնում 1777 թ., վախճանվել Ս. Ղազարի վանքում 1851 թվականին: Զբաղվել է մանկավարժությամբ և գիտությամբ: 1814 թ. տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ծավալել է նաև թատերական գործունեություն: Եղել է Ղրիմի հայոց առաջնորդ, ճանապարհորդել է Սև ծովի ափերում և Եվրոպայում: Լինելով պատմական, աշխարհագրական և բանասիրական բնագավառների փորձառու գիտնական՝ Մ. Բժշկյանը կարողացել է ազգային գիտությունը զուգակցել միջազգայինին և հարստացնել իր գիտելիքները: Բացի պատմական և բանասիրական ուսումնասիրություններից, աշխարհագրությամբ ու մանկավարժությամբ զբաղվելուց՝ նա հավաքել է հայ և օտար ժողովուրդների կենցաղի ու մշակույթի վերաբերյալ նյութեր: Ժամանակագրորեն լինելով երկրորդը Ղուկաս Ինճիճյանից հետո նա մեզանում առաջինը գիտակցեց, որ ազգագրության բուն աղբյուրը ժողովրդի բանավոր ժառանգությունն է, այսինքն՝ հույժ անհրաժեշտ է հավաքել և խմբավորել դաշտային՝ ազգագրական նյութերը: Ըստ այդմ՝ իր երկու նշանավոր աշխատությունները գրել է հիմնականում իր կողմից տարբեր ժողովուրդներից գրառված դաշտային-ազգագրական նյութերի հիման վրա: Այդ գործին հատկապես նպաստել են երկար ճանապարհորդելու պատեհ առիթները (երկու անգամ), ինչպես նաև Ղրիմի հայկական գաղութում առաջնորդի պաշտոն վարելը: Այստեղ նա հիմնավորապես սովորելով ռուսերեն և թաթարերեն, տիրապետելով նաև այլ լեզուների՝ գրել է «Քերականութիւն հայկազեան լեզուի, բացատրեալ ի ռուսաց բարբառ» (1840 թ.) և «Քերականութիւն բազմալեզու. յորում բովանդակին սկզբունք արաբացի, պարսիկ, օսմանեան և թաթար բարբառ. հան-

դերձ ծանօթութեամբք այլ և այլ լեզուանց» (1844 թ.) աշխատութիւնները:

Մ. Բժշկյանի առանձին աշխատություններում տեղ գտած ազգագրական նյութերն ու ուսումնասիրությունները հայ ազգագրական գիտության համար մեծ նշանակություն ունեն հատկապես այն պատճառով, որ ամբողջովին ընդգրկում են նրա ապրած ժամանակաշրջանը: Պահպանելով ժամանակագրական կարգը՝ ներկայացնենք նրա մի քանի աշխատությունների ազգագրական բնութագրերը:

1815 թ. Վենետիկում Մ. Բժշկյանը հրատարակել է «Ճեմարան գիտելեաց...»[12] մեծածավալ աշխատությունը: Վերջինս շարադրվել է չափածո հարց ու պատասխանի կարգով: Այս դասագրքում բացատրված են կյանքի տարբեր բնագավառներում հանդիպող երևույթները: Ազգագրական տեսանկյունից ուշագրավը դիցաբանությունն է, հատկապես հունական և հռոմեական առասպելները:

Կարևոր են դասագրքի այն հատվածները, որոնք ներկայացնում են աշխարհամասերի բնակչության ռասսայական կազմը, դրանց վիճակագրությունն ու քաղաքակրթական աստիճանները[13]:

Մ. Բժշկյանի մյուս դասագիրքը՝ «Հմտութիւն մանկանց ...»[14], կարելի է համարել ընդհանուր ազգագրության համառոտ ժողովածու: Այս դասագիրքը բաղկացած է չորս հատորներից, որոնք հրատարակվել են 1818 թվականին: Դասագիրքը գրված է աշխարհաբար մատչելի լեզվով: Առաջին հատորը ներկայացնում է չինացիների, հնդկացիների, հարավամերիկյան բնիկների և այլ ժողովուրդների սովորույթները: Ավելի արժեքավորը գրքի երրորդ հատորն է, որում ընդհանրացված կարգով ներկայացված են պարսիկների, հնդիկների, չինացիների և այլ ազգերի բաղում սովորույթները, կրոնները և այլն:

---

[12] Տե՛ս «Ճեմարան գիտելեաց որ է համառօտ տեղեկութիւն հարկաւոր գիտութեանց, ազատական արուեստից: Ի պէտս ուսումնասէր մանկանց ի Հայր Մինաս վարդապետի Բժշկեան Տրապիզոնցւոյ, յաշակերտութենէ ամենապատիւ Մեծին Մխիթարայ ի Վենետիկ», 1815 (այսուհետ՝ «ճեմարան գիտելեաց...»):

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 131-147:

[14] Տե՛ս «Հմտաթիւն մանկանց ի պէտս ազնուազարմ Տիրան մանկան Աղեքսանեան ի Հայրս Մինաս վարդապետէ Բժշկեան ի Մխիթարեան միաբանութենէ, բաժանեալ ի չորս մասունս», ի Վենետիկ, 1818, էջ 72-86:

Պարսիկների կյանքից հիշատակված են կրակապաշտությունը և կենցաղային առանձին երևույթներ: Հեղինակն առանձնակի սիրով նկարագրել է հնդիկ ժողովրդի ցեղային սովորույթները, տարազը, կերակուրները և ցեղերի մեծ մասի կողմից տոտեմիզմի պահպանման հետևանքով որոշ կենդանիների և թռչունների միս չուտելը, մատներով ու պարաններով հաշիվ պահելու ձևերի գաղտնիքներն ուրիշներից թաքցնելը և այլն: Հեղինակը մանրամասնություններ է հաղորդել հնդկական կենդանապաշտության և բուսապաշտության վերաբերյալ, որոնց թվում են կովի պաշտամունքի լայն տարածումը, ակնազարդ կովը տաճարներում պահելու, նրան երկրպագելու սովորույթները և այլն: Ըստ նրա նկարագրության՝ աշխարհի տերն ու ղեկավարը հնդիկների համար Ճընկըռնատ աստվածությունն էր, որի կռատունն ուխտի գնացողները, ինչ հեռավորությունից էլ լիներ, պիտի ծնկաչոք գային: Երբեմն նման այցը տևում էր մեկ տարի: «Ոմանք ալ,– ավելացնում է Մ. Բժշկյանը,– երեսի վրա կպառկին ու գլուխնին ուր որ կը հասնի, անկէ նորեն կը պառկին, և այսպես պառկելով կերթան ամիսներով»[15]: Ապա նկարագրված են այդ աստվածության մոտ կատարվող ծիսակատարությունները, նրան երեխաներ զոհելը, քրմերի ծառայությունները, ինչպես նաև Դուրկա աստվածության պաշտամունքը, նրա քրմերի ճգնավորական զարհուրելի կենցաղավարությունը, ջրապաշտությունը, Գանգեսի ափը ցրած ծանր հիվանդի՝ առողջանալու դեպքում տուն վերադառնալու իրավունքից զրկված լինելը, կենդանիների հիվանդանոց ունենալը և կռապաշտական այլ սովորույթներ: Ցեղային և ընտանեկան կենցաղի վերաբերյալ տեղեկություններից ուշագրավ են կրոնական տարբերությունների պատճառով տարբեր տոհմերի թշնամանքը, ամուսնության նպատակով մեծերի կողմից երկու տարեկան աղջկան գնելն ու տուն տանելը, մեծացնելը և դաստիարակելը, աղջիկ երեխաների վաճառքը, որոշ ցեղերի մեջ մեռած ամուսնու համար պատրաստված խարույկի վրա նրա առողջ կնոջը ևս այրելը և այլն[16]:

Զինաստանին նվիրված հատվածներում Մ. Բժշկյանը նկարա-

[15] Տե՛ս «Հմտաթիւն մանկանց ...», էջ 72-86:
[16] Տե՛ս նույն տեղում:

գրել է պետական յուրօրինակ օրենքները, թագավորների ընտանեկան և հասարակական կենցաղը, արքունական շքեղաշուք տարազը, շքահանդեսները, կրոնը, աստվածների արձանները, ապաշխարության հագուստներ ու պարանոցներին շղթաներ կրող 35 հազար քրմերի սովորույթները, մարդաբանական տիպերը, տոտեմիզմի մնացուկները, աղջիկներին փոքր տարիքից երկաթե կոշիկ-կաղապար հագցնելով ոտքերը փոքր պահելու զարհուրելի սովորույթը, ուտելու ձևերը, հյուրասիրության եղանակները, ողջունման ձևերը, հուղարկավորության ծեսերը և այլն[17]:

Աշխատության մեջ համանման նկարագրություններ կան ճապոնացիների, նորզելանդացիների, աֆրիկացիների, արաբների, թուրքերի, վրացիների և այլ ժողովուրդների վերաբերյալ:

Վերոնշյալ երկու աշխատություններն էլ շարադրված են գրավոր աղբյուրներից քաղված նյութերի հիման վրա, որոնցում հեղինակը համեմատության մեջ է դնում տասնյակ ժողովուրդների կենցաղին ու մշակույթին առնչվող ազգագրական ծեսերն ու սովորույթները՝ փորձելով այդ համեմատության միջոցով հասնել որոշակի ընդհանրացումների:

Եթե Մ. Բժշկյանի վերոհիշյալ դասագրքերում ազգագրության վերաբերյալ ընդհանուր երևույթները տեղ են գտել իբրև մեծ մասամբ ուրիշներից քաղված նյութեր, ապա նրա «Պատմութիւն Պոնտոսի» և «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» աշխատություններում ազգագրական նյութն ամբողջովին հեղինակի բանահավաքչական վաստակն է:

Ինչպես երևում է Մ. Բժշկյանի «Արդ՝ մենք շրջելով ընդ ոլորտս Պոնտոսի առաքելական պաշտօնիւ»[18] արտահայտությունից, նա հատուկ նպատակով ճանապարհորդել է Սև ծովի ափերով: Ճանապարհորդությունն սկսել է 1817 թ. և ուղիղ երկու տարի անց հասել նույն տեղը: Ինչպես բոլոր ուղևորներին է հատուկ, Մ. Բժշկյանն իր անցած վայրերի վերաբերյալ հնարավորին չափ գրի է առել աշխարհագրական, պատմական, հնախոսական, ճարտարապետական, ազգագրական և այլ կարգի տեղեկություններ: Նա,

[17] Տե՛ս «Հմտութիւն մանկանց ...», էջ 88-96:

[18] «Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով ստորագրեալ տեառն Հ. Մինաս վարդապետի Բժշկեան Տրապիզոնցւոյն ի Մխիթարեան միաբանութենէ», ի Վենետիկ, 1819, էջ 9:

նախապես ծանոթանալով աշխարհահռչակ ճանապարհորդների՝ Հերոդոտի, Քսենոփոնի, Արիանոսի և ավելի ուշ շրջանի ուղևորների ուսումնասիրություններին, իր վկայությունները համեմատում է այդ հեղինակների տվյալների հետ: Նրա գրի առած նոր նյութերը գիտական ու ճանաչողական մնայուն արժեքներ են, որովհետև նրանից հետո ծովափնյա ժողովուրդների էթնիկական կազմում հսկայական փոփոխություններ են կատարվել, պատմական հուշարձաններից շատերը կործանվել կամ ոչնչացվել են:

Մ. Բժշկյանի այս աշխատության մեջ հիմնական տեղը հատկացված է տարբեր ժողովուրդներին ու ցեղերին. հայերի վերաբերյալ աղգագրական տեղեկությունները թեև արժեքավոր, բայց սակավ են:

Նրա հավաստմամբ Զարշամպայի ավանային բնակիչները համշենցիներ էին, որոնք զբաղվում էին դաշտամշակությամբ, պարտեզամշակությամբ և միաժամանակ «ամէնքը զինուոր գրուած են որդւոց որդի և ունեն զօրապէտ հայ իշխան, որ զիրենք կը կառավարէ. մարդէ ահ չունին. միայն Տէրէպէկիին հետ պատերազմ կերթան և զօրաւոր մարդիկ են»[19]: Պլատանա ավանում հույների և թուրքերի հետ խառը բնակվող հայերը զբաղվում էին ծխախոտամշակությամբ, քաթանագործությամբ, ընտիր կաթնամթերքներ պատրաստելով: Տրապիզոն քաղաքի հայերին համարում է անեցիներ, իսկ շրջակա հայ գյուղացիությանը՝ համշենցիներ: Նա գտնում է, որ քաղաքում բնակություն են հաստատել վաղ անցյալում գաղթած պարսկահայեր: Քաղաքաբնակ համշենցիները, որոնք պարտադրված, թուրքական զինված ուժերին էին ծառայում, միաժամանակ հարկատու էին: Հենվելով վիմական արձանագրությունների վրա՝ հեղինակը հավաստում է, թե Տրապիզոնի մի թաղում ապրող երբեմնի ֆրանսիացիները հայացած են եղել[20]:

Սյուրմենեի համշենցի մահմեդականացած հայերի մասին գրում է, որ նրանք պահպանում են «իրենց մականունը և լեզուն. կան ծերեր, որ գիտեն քրիստոնէութիւն և կը պատուեն խաչը և

[19] «Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով ստորագրեալ տեառն Հ. Մինաս վարդապետի Բժշկեան Տրապիզոնցւոյն ի Մխիթարեան միաբանութենէ», ի Վենետիկ, 1819, էջ 49:

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 82-97:

ծածուկ ողորմութիւն կուտան ժամերուն»[21] և զոհեր են մատուցում: Նրանք արտադրում էին ընտիր յուղ, մանածեղեն, ձկան յուղ (դելֆինի), «որ բոլոր այս կողմերս և Լազիստան այս եղը կը գործածեն ճրագի և մեծ առուտուր կըլլայ»[22]:

Համամշենի Խաչիքյար վանքը, բացի հայերից, համարվել է նաև այլազգիների ուխտավայր, ընդ որում՝ «այս վանքին քով գտան մեծ զանգակ մի, ուր կայ գերեզման արջու, վրան գրուած է, թէ այս արջ հաւատարիմ ծառայութիւն ըրեր է վանքին տասներկու տարի. հայ և տաճիկ վրան ուխտ կ'երթան մինչև հիմայ անմտութեամբ և սատկած օրը վրան կ'երթան աղօթք կենեն»[23]:

Անցնելով աբխազների երկիր՝ Մ. Բժշկյանը ներկայացրել է հայկական երկու գյուղեր՝ Աթուխա և Պզատուխ: Սրանց բնակիչները թեև պարսկահայեր են եղել, որոնք երբեմնի հմուտ հողագործներ և անասնապահներ էին, այստեղ նրանք արդեն «ապազայի (աբխազների) վարք ունէին... առուտուրի, որսորդութեան քաջ են, ուրիշ բան չիյտեն. հասարակ լեզունին ապազայի է, գիտեն հայերէն... իրենց աղջիկներն ալ ապազայի նման են հագուստով և ամէն վարքով... գլուխնին կլոր խալբախ կը դնեն, որ իրենք կը շինեն»[24]: Այս գյուղերը տակավին պահպանում էին ազգային եկեղեցին ու ծիսակատարությունները:

Պոնտոսում բնակվող հույների վերաբերյալ տեղեկությունները ցույց են տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում արդեն ուշացման հետևանքով շատերը կորցրել էին ազգային առանձնահատկությունների մեծ մասը: Պլատանայում նրանք զբաղվելիս են եղել ծխախոտամշակությամբ և պղնձագործությամբ: Ավանդության համաձայն՝ հույները Տրապիզոնում ամսվա յուրաքանչյուր օրվա համար մի եկեղեցի են կառուցել, իսկ հետազոտողի օրոք այնտեղ կային 24 հունական եկեղեցի, վանք, մատուռ: Այնուամենայնիվ, ըստ Մ. Բժշկյանի վկայության՝ իբր իրար հետ գժտված լինելու պատճառով հույն մեծահարուստներն իրենց

[21] «Պատմութիւն Պոնտոսի ...», էջ 93:
[22] Տե՛ս նույն տեղում:
[23] Տե՛ս նույն տեղում, էջ 97:
[24] Տե՛ս նույն տեղում, էջ 116:

տներում մատուռներ էին կառուցում, որ եկեղեցի չհաճախեն[25], մի երևույթ, որը, ըստ էության, կապված էր ոչ թե ներքին հակասությունների, այլ թուրքական հալածանքների հետ: Դա հաստատապես երևում է նրանից, որ նույն Մ. Բժշկյանի հաղորդմամբ Գյումուշխանեում և նրա շրջակայքում բնակվող մեծ թվով հույների մեջ «ցեղ մը կայ, որ Կրոմցի կըսուին. բոլորը կէսկէս են, զի ներսէն ամէն քրիստոնէութեան պարտքը կը կատարեն, դրսէն այլազգ են և, երբեմն այլազգութիւն ալ կընեն, երբ որ հարկադրեն և որդոց որդի այսպէս կերթան. իրենց իմամն ալ այսպէս է և ոչ երբեւէ կը փոխուին»[26]:

Կեորելե բնակավայրում Մ. Բժշկյանը հիշատակում է մի ցեղի, որին ԺԹ դարասկզբի բնակիչներն անվանում էին «Զըրա սէօնտխրէն» կամ «Զեփնի»: «Սրանք,– գրում է ուղևորը,– կռապաշտութենէ մնացած զարմանալի բաներ ունէին, տարին անգամ մի մեծ ուրախութեամբ արք և կանայք միատեղ խաղալով և գիշերն ամէն լոյսը մարելով գարշելի բաներով կանցընէին և հին կռապաշտներուն պէս առանց իրար ճանչնալու և առանց ազգակից և քոյր որոշելու կը խառնակէին գազանի նման: Այս բանը հիմայ վերցած է իրենց մէջէն, սակայն շատերը նամազ չիյտեն. և արբեցութիւնն իբր օրինաւոր գործք համարելով շատ կարբենան»[27]: Ըստ հեղինակի գրառած նյութերի՝ բազմաթիվ ցեղեր ապրում էին տոհմական կարգերով: Նա ականատես է եղել նախնադարից եկող բազմաթիվ ծեսերի և արարողությունների: Այսպես՝ չեփնի ցեղի մեջ գոյություն ունեցած սովորույթն իր արմատներով աղերսվում է նախնադարի այն շրջափուլին, երբ չէին կանոնակարգվել ընտանեկան կապերը՝ որպես խառնամուսնության դրսևորում: Ակնհայտ է հեղինակի այս նկարագրության աղերսը պրոմիսկուիտետի (անկանոն սեռական կապերի) հետ:

Լազերի բնակավայրերն այցելելիս Մ. Բժշկյանը նկատել է, որ այդ ժողովուրդը արտաքին ճնշումների հետևանքով մեծ մասամբ ձուլվել է հույներին ու թուրքերին, թեև պահպանում է իր ցեղային ոգին: Օֆ (Օֆիս) բնակավայրում աչքի էին զարնում նրանց

[25] «Պատմութիւն Պոնտոսի ...», էջ 76:
[26] Տե՛ս նույն տեղում, էջ 90-91:
[27] Տե՛ս նույն տեղում, էջ 56:

ներքին կենցաղում վրիժառության սովորույթների պահպանումը: Քեմեր բնակավայրում կիսաթուրքացած լազերն արտադրում էին թել, պանիր, նարինջ, կիտրոն, ձկան յուղ և մեղր, սրա մի տեսակը, որ «տէլի պալ» էր կոչվում, հարբեցնող հատկություն ուներ, և դրանով Քսենոֆոնի զորքը 24 ժամ հարբած է մնացել: Աթինա փոքր նավահանգստի լազերը, որ ճարպիկ առևտրականներ էին, զբաղվում էին նաև գերեվաճառությամբ[28]: Հակառակ արևելյան սովորույթներին՝ Լազիկա գավառի Կեոնե ավանի լազերի, մանավանդ մեծամեծների կանայք, ըստ Մ. Բժշկյանի հավաստման, ամազոնուհիների հատկություն ունեին, նրանք տղամարդկանց նկատմամբ իշխողի դերում են եղել:

Զափազանց հետաքրքիր նկարագրություններ կան մեգրելների վերաբերյալ: Նշվում է, որ նրանք հաճախ էին հարձակվում լեզգիների և լազերի վրա ու գերեվարածներին վաճառում: Նրանց հարուստ վերնախավը ստրուկներին կամ ճորտերին ևս վաճառելու իրավունք ուներ: Հմուտ որսորդներ էին, ուստի լավ ձի, շուն և բազե ունենալը մարդու երջանկության գրավականն էին համարում: Սիրում էին հասարակական ճաշկերույթները, որտեղ երբեմն «իրենց թագավորը, թագուհին, իշխանները և ծառաները մէկտեղ կուտէին»: Հիշատակելի են նաև այլ սովորույթներ. «Ոմանք գործք ողորմութեան կը սեպեն անառողջանալի հիւանդը մեռցնել... Սոսկալի է իրենց սուգը, քառասուն օր կը տևէ. լաթերնին կը պատռեն, մազերնին կը փեթտ են և կուրծքներուն կը զարնեն՝ զարհուրելի ձայներ հանելով, ինչպէս ըրին Տրապիզոն, երբ մեռաւ մեր օրն իրենց վերջին թագաւորը՝ Սօղոմոն: Թագաւորն որ մեռնի, եպիսկոպոսը պատարագ կընէ և բոլոր քաղաքը կը պտըտցընեն մեռելը: Հետոյ դրօշակ կը բանան, մէկին տակը կը նստեցնեն մեռելին շները, մէկին՝ տակը ձին և մէկալին տակը սուրը կը դնեն, մեծ իշխանը կը հրաւիրի սուգի, որ ոտքը բաց և մինչև կէս մեջքը մերկ կը չոքի աղօթք կընէ ամէն մէկ դրօշակին տակը մեռելին հոգուն համար. հետոյ իրեն հարկիք կընեն»[29]:

Այնուհետև ուղևորը նկարագրել է մահացածների հիշատակը հարգելու կրոնական ծիսակատարությունը, ժողովրդի ավելորդա-

[28] «Պատմութիւն Պոնտոսի ...», էջ 93-96:
[29] Տե՛ս նույն տեղում, էջ 103-104:

պաշտությունները, կախարդական սովորույթների պահպանումը, քրիստոնյա քահանաների հեթանոսական պաշտամունքները, եկեղեցուն հեթանոսական սովորույթով ընծաներ նվիրելը և այլն: Այդ ժողովուրդն արտադրում էր մետաքս, կտավեղեն, բուրդ, կաշի, մորթի, մեղրամոմ, որսի կենդանիների մորթիներ և այլն[30]:

Վրացիների մասին տեղեկությունները հակիրճ են: Նրանց թագավորների, պալատական իշխանների թիվը 200-ն էր, նույնքան էին և իշխանավորները, որոնց մեջ չէին մտնում ազնվականները: Թագուհուն ընկերակցում էին 60 զարդարված տիկիններ, որոնք ամազոնուհիների նման ձի նստել գիտեին[31]:

Մ. Բժշկյանը հետաքրքիր տեղեկություններ ունի աբխազների և նրանց հետ լեզվական ընդհանրություն ունեցող աբազների վերաբերյալ, որոնց «ապազ», իսկ երկիրը «Ապազա» էր անվանում: Վերջիններիս համարում էր սկյութական ցեղ: Ժթ դարասկզբին, ըստ հեղինակի, աբազ-աբխազները ցեղային կյանքով էին ապրում: Ցեղապետներն ու ազգապետներն ընտրվում էին բանավոր օրենքով: Սրանցով կարգավորվում էին միջցեղային և ցեղամիջային հարաբերությունները, ապրանքափոխանակությունը և ընտանեկան կենցաղը: Ամուսնության համար աղջկա ընտրությունը կատարվում էր ամբողջ համայնքի ներկայությամբ, որը տեղի էր ունենում սրբազան ծառի տակ՝ հասարակական կերուխումի և մոգական միջոցառումների պայմաններում: Հյուրընկալման բարքերն այստեղ անսովոր էին: Օտարականն աբազ-աբխազների մեջ մտնելիս պարտավոր էր անհապաղ դիմել մեկին, ծնկաչոք խնդրել, որ իրեն հյուրընկալի: Նրա կյանքն ապահովելու համար հյուրընկալը մյուսների ներկայությամբ պետք է երդվեր: Այնուհետև նա պարտավոր էր հյուրից անբաժան լինել, այլապես վերջինս գերվում և վաճառվում էր: Սրանց կերակուրները համեստ էին. առօրյա ուտելիքներն էին լազուտե հացը, միսն ու պանիրը: Հագուստը ամառ-ձմեռ միևնույն սև մազեղենն էր: Աբազ-աբխազները մոլի ծառապաշտ էին. սրբազան մեծ ծառի մոտ հանող գերին ու մահապարտը ազատ էին արձակվում: Թաղման ծեսերը գրեթե նույնն էին, ինչ մեգրելներինը: Անապայի տարածքում ապրող

[30] «Պատմութիւն Պոնտոսի ...», էջ 103-104:
[31] Տե՛ս նույն տեղում, էջ 102:

աբազների և Աբխազիայում ապրողների սովորույթները հիմնականում համընկնում էին[32]:

Չերքեզների վերաբերյալ նշվում էր, որ նրանց իշխանները այդ ժամանակ սրբազան էին համարվում, նրանց ու ժողովրդի տաբազը և կերակուրները նույնն էին: Գիր չունենալու պատճառով իշխանների և ծերունիների բանավոր խոսքը չերքեզների համար օրենք էր, որը բխում էր սովորութային իրավունքից: Մեկ տարեկան երեխային զենք ու խաղալիք էին հրամցնում, և եթե նա առաջինը զենքին էր ձեռք տալիս, ընտանիքը ցնծություն էր ապրում: Յոթ տարեկան երեխան հանձնվում էր վարպետին, որը սովորեցնում էր զինավարժություն, ձիավարություն և այլն: Կնոջը բարակիրան դարձնելու նպատակով նրա մեջքին մանկուց կաշվե գոտի էին կապում, որը տարիքին զուգահեռ փոխարինվում էր ավելի մեծով: Մ. Բժշկյանը չերքեզուհիներին համարում էր ամազոնուհիներ այն պատճառով, որ նրանք ևս քաջ ու վարժ էին ձիավարության մեջ: Կենցաղի շատ հին կողմերին համապատասխան՝ պահպանվում էին հավատալիքները: Ահա այս հակիրճ տեղեկություններից բացի՝ հեղինակը ներկայացրել է չերքեզ ամուսինների կենցաղը և հուղարկավորության ծեսերը[33]:

Թողնելով Կովկասյան լեռնաստանները և գնալով դեպի ռուսական, ուկրաինական և բուլղարական ափերը՝ Մ. Բժշկյանը մասնակի տեղեկություններ է հաղորդել թաթարական ցեղերի, օսերի, Դոնի կազակների, բուլղարների և այլ ազգերի կենցաղի վերաբերյալ[34]:

Վերոնշյալից երևում է, որ հեղինակն իր «Պատմութիւն Պոնտոսի» աշխատությամբ մեզ է ներկայանում իբրև Պոնտոսի, Կովկասի, Ռուսաստանի, Ուկրաինայի և այլ երկրների մի շարք ժողովուրդների առաջին բանահավաք-ազգագիրներից մեկը ԺԹ դարի առաջին քառորդում: Նրա այս աշխատությունն այսօր ևս չի կորցրել իր աղբյուրագիտական արժեքը բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների ազգագրության համար:

Մ. Բժշկյանին՝ իբրև հայրենասեր մտավորական-եկեղեցականի, հուզել է հատկապես հայկական, մասնավորապես լեհահայ գա-

[32] «Պատմութիւն Պոնտոսի ...», էջ 109-120:
[33] Տե՛ս նույն տեղում, էջ 120-128:
[34] Տե՛ս նույն տեղում, էջ 140-148:

ղությի ճակատագիրը: Նա որոշեց Մխիթարյան միաբանության թույլտվությամբ մեկնել Լեհաստան՝ տեսնելու այս գաղութի իրական պատկերը: Նրա ճանապարհորդության արդյունքը եղավ «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան»[35] աշխատությունը, որը նախորդի նման շարադրված էր ինչպես գրավոր նյութերի, այնպես և իր կողմից հավաքված դաշտային-ազգագրական նյութերի հիման վրա: Գիտնականը ցավով է գրում, որ երբեմնի հզոր լեհահայ գաղութը կանգնած է կործանման եզրին: Լեհահայերը մոռացել են մայրենի լեզուն, սովորույթները, ծեսերը, ընդունել կաթոլիկություն, և եթե չձեռնարկվեն լուրջ քայլեր, մի քանի տասնամյակ անց լեհահայ գաղութը ամբողջովին կձուլվի: Ցավոք, նրա այս կանխատեսումներն իրականացան: Աշխատության մեջ գիտնականը հիմնովին ապացուցում է, որ լեհահայերը երբեմնի Բագրատունյաց մայրաքաղաք Անիի բնակիչներն են եղել, որոնք սելջուկ-թուրքերի արշավանքներից և հայկական թագավորության կործանումից հետո զանգվածաբար գաղթել են Լեհաստան՝ հիմնելով լեհահայ գաղութը: Ուղեգրության մեջ հեղինակն ի մի է բերել պատմիչների թողած տեղեկությունները Անի քաղաքի և դրա բնակիչների՝ Լեհաստան գաղթի (1062 թ. և 1239 թ.) մասին, օգտագործել Անիի և Շիրակի պատմական մի շարք հուշարձանների արձանագրությունները, հնագիտական, ազգագրական տեղեկություններ է հաղորդել ԺԹ դարում Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի և Ուկրաինայի հայաբնակ վայրերի, հայերի կենցաղի, ազգային սովորույթների, դատավարության, եկեղեցական բարքերի, վանքերի և այլ հուշարձանների մասին: Մեր օրերում Մ. Բժշկյանի այս աշխատությունը համարվում է լեհահայ գաղութի վերաբերյալ պատմաազգագրական ամբողջական հետազոտություն, որը չի կորցրել իր արդիականությունը:

«Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» աշխատությունը հարուստ է հատկապես հայերի մասին ազգագրական նյութերով: Այն անդրադառնում է հայոց նյութական մշակույթին, որը հայերը ստեղծել են Եվրոպայում կամ այնտեղ տարել Անիից: Օրինակ՝

[35] Տե՛ս ***Բժշկեան Մ.,*** Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սիրելոց ի նախնեաց Անի քաղաքին, ի Վենետիկ, 1830, նաև՝ ***Հովակիմյան Հ.*** (Արշակունի), Պատմություն հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967:

հիշատակվում է Անիից տարված և մինչ իր օրերը պահպանված եկեղեցական սպասքի, զգեստների և Աստվածածնի տախտականկարի մասին[36]: Ղրիմում հիշատակում է քաղաքի հայկական դպրոցի կառուցման մանրամասները, որին, ի դեպ, ինքն էլ է մասնակցել[37]: Լեհաստանում և Հունգարիայում հեղինակը ներկայացրել է հայկական ավանների, արվարձանների ու գյուղերի, եկեղեցիների, վանքերի, դպրոցների, աղբյուրների, ժողովրդական կառույցների ստեղծման պատմությունը, մոմի գործարանի կառուցումը, թատրոնի շենքի նախագծի ստեղծումը[38] և այլն: Հունգարիայում 1703 թ. կառուցված Հայաքաղաքը 1820-ական թթ. ուներ 6000 հայ բնակիչ: Այստեղ տները մեծ մասամբ աղյուսաշեն և միահարկ էին: Լայն փողոցները տեղ-տեղ սալահատակով էին: Հունգարական զուտ հայաբնակ Եղիսաբեթուպոլիս (Պաշլով) քաղաքի բնակիչները բնակավայրից դուրս հող էին մշակում, որտեղ «ամենայն տանուտեարք ի միում աւուր տան հնձել զարտորայս իւրենց և միում աւուր սկսանին կթել զայգիս իւրեանց. այսպէս ամենայն գործողութիւնք ի քաղաքիս են կարգաւորեալ»[39]: Համայնքային մի սովորույթ, որը, ըստ երևույթին, Անիից էր անցել և բուն Հայաստանում քիչ էր պահպանվել:

Ռուսաստանի և Եվրոպայի հայկական գաղթավայրերում Մ. Բժշկյանը հիշատակել է մի շարք արհեստներ, որոնցից են կաշեգործությունը, մոմագործությունը, օճառագործությունը, դերձակությունը, ասեղնագործությունը, կոշկակարությունը և այլն: Այդ շրջաններում արհեստավորներն ունեին իրենց կազմակերպությունները, որոնք, օրինակ, Լեհաստանում հայտնի էին «ցեխմիստր» (համքարություն) անունով, լեհական պետությունը միջնադարում սահմանել է այս միությունների կանոնները, որոնք պարտադիր են եղել բոլորի համար: Դրանից ելնելով և դրան համապատասխան՝ Օքսենտիոս Խոսրովայնիկոլյանց հայ վարդապետի ձեռքով 1747 թ. գրվել է հայ ցեխմիստրների կանոնադրությունը, որտեղ ասվում է, որ արհեստավորական յուրաքանչյուր

[36] Տե՛ս ***Բժշկեան Մ.,*** Ճանապարհորդութիւն ի Լեհաստան ...», էջ 125:
[37] Տե՛ս նույն տեղում, էջ 251-252:
[38] Տե՛ս նույն տեղում, էջ 194-195:
[39] Տե՛ս նույն տեղում, էջ196:

խումբ պետք է ունենա իր համքարությունը և մի սուրբ, որը պիտի «հովանավորի» այդ միության գործունեությունը: Միություններն ունեցել են գանձարկղեր, որոնցում առկա գումարով հոգացել են իրենց տնտեսական կարիքները: Համքարություններն ունեցել են նաև իրենց դրոշը: Նման կազմակերպությունների մեջ մտնում էին ամուրի տղաների խմբերը, որոնք ***կտրիճների*** միություններ էին և պահպանում էին սեռահասակային դասերի հնագույն կազմակերպությունների ավանդույթները[40]:

Մ. Բժշկյանը հանգամանորեն խոսել է Լեհաստանում, ԺԴ դարից սկսած, հայկական իրավահավասարությունները պահպանելու նպատակով ազգային դատաստանագրքով առաջնորդվելու հանգամանքների մասին: Այստեղ նկարագրել է դատավարական կազմ ընտրելու, վերընտրելու, պաշտոնյաների կոչումների, ընտրության ժամանակ դատաստանատանը և եկեղեցում դրան նվիրված ծիսակատարությունների, ընտրվածներին հրացանաձգության ծեսով այցելելու, կերուխում կազմակերպելու տեսարանները[41]:

Դատավորի գլխավորությամբ 40 խորհրդական-տանուտերերը դեռևս 1492 թ. հաստատել էին մի կանոնադրություն, որը «գրօրենք»[42] անվանումն ուներ: Դա հայերի այլևայլ հարաբերությունների նաև ամուսնական կարգը պահպանելու մասին օրենքն էր, որը, որքան հայտնի է, առաջին անգամ գրավոր արտահայտվել է Լեհաստանի հայ գաղութում: «Գրօրենքի» մեջ արծարծված հարցերը հետևյալն էին՝ 1. հարսնացուի օժիտի և փեսացուին տրվելիք ընծաների սահմանումը, 2. քահանայի կողմից պսակվողների ազգակցական աստիճանի որոշումը (թույլատրվում էր ամուսնանալ հինգերորդ աստիճանում), 3. փեսացուի կողմից հարսնացուին տրվելիք «երեսջրի» (գլխագնի) չափի որոշումը, 4. փոխադարձորեն տրված նշանների օրհնումը պատարագի ժամանակ և այդ նշանադրության մասին հասարակությանը հայտարարելը, 5. հարսանիքի օրը որոշելը, 6. հարսանեկան հանդեսի տևողությունը պահպանելու հարցը (3 օր), 7. պսակող քահանայի հասանելիքի սահմանումը, 8. կտրիճների մասնակցությունը հարսա-

[40] Տե՛ս ***Բժշկեան Մ.,*** Ճանապարհորդութիւն ի Լեհաստան ...», էջ 104, 149, 167:
[41] Տե՛ս նույն տեղում, էջ 117:
[42] Տե՛ս նույն տեղում, էջ 18:

նիքին և նրանց պարտականությունները այդ հանդեսում, 9. պատարագի ժամանակ զույգի հաղորդելն ու պսակելը և այլն:

Նշված աշխատության մեջ ներկայացված են նաև հայկական միջնադարյան ազգանունները, որոնցից են՝ Բաղդասարենց, Վարդերեսևիչ, Նիկոլայանց, Ասվատուրյանց, Մոշորով և այլն, ինչպես նաև կտակագրության կարգը, խնամակալությունը, Եղիսաբեթուպոլսի դրպոցներում երեխաներին ձրի ուսումի տալը և այլն: Ճանապարհորդն այս աշխատության մեջ ևս ազգագրական նյութեր ունի օտար ժողովուրդների վերաբերյալ: Դրանցից ամենակարևորները նկարագրում են Ղրիմի կազակների և թաթարների ընտանեկան, հասարակական և ռազմական կենցաղն ու սովորույթները, գետնափոր տները և այլն:

Մ. Բժշկյանի գիտական հետաքրքրությունների շրջանակներում են եղել նաև ազգային երգարվեստի, միջնադարյան խաչագրերի և հայկական ձայնագրության նոր համակարգի խնդիրները: Լինելով երաժշտագետ Հ. Լիմոնճյանի ժամանակակիցը՝ Մ. Բժշկյանը տեղեկություններ է արձանագրել նրա կյանքի ու գործունեության մասին, նրա խորհրդով և օգնությամբ նոթեր շարադրել հայ երաժշտության վերաբերյալ: Ունի երաժշտագիտական անտիպ մի աշխատություն՝ «Երաժշտութիւն, որ է համառօտ տեղեկութիւն երաժշտական սկզբանց և ելևէջութեանց եղանակաց և նշանագրաց խաղից (1815)»[43]:

Այսպիսով՝ պետք է նշել որ Մխիթարյան միաբանության գիտնականներ Ղ. Ինճիճյանը և Մ. Բժշկյանը ԺԹ դարի առաջին կեսին զգալի ներդրում ունեցան իրենց աշխատություններով հայրենիքից դուրս հայ ազգագրությունը գիտական հիմքերի վրա դնելու, ազգագիտական նյութերն առավել արդյունավետ գրանցելու, համակարգելու գործում: Անուրանալի է նրանց վաստակը ինչպես հայ, այնպես և այլ ժողովուրդների տոնածիսական, կենցաղային, բարոյաէթիկական, հոգևոր և այլ սովորույթները, դրանց առանձնահատկությունները գրառելու և համակարգելու, առանձնահատկություններն ու ընդհանրությունները բաղդատելու և ինչ-որ չափով գիտական կարգաբերման ենթարկելու հարցե-

[43] Տե՛ս ***Հիսարլեան Ա.,*** Պատմութիւն հայ ձայնագրութեան, Կ. Պոլիս, 1914, էջ 8, նաև՝ ***Տայեան Ղ.***, Հայ արդի ձայնագրութիւնը և Մինաս Բժշկեան // «Գեղունի», 1927, էջ 60:

րում: Պատահական չէ, որ նրանց աշխատությունները հետագա հետազոտողների համար կարևոր և հաճախ եզակի սկզբնաղբյուր-ներ են, իսկ նրանց գործունեությունը դարձավ այն նախադրյալ-ներից մեկը, որի հիման վրա հետագայում՝ 1870-1880-ական թթ., ստեղծվեցին մասնագիտական հարցարաններ, իսկ 1890-ական թվականներից մինչև Ի դարասկիզբը ձևավորվեց հայ ազգագրա-կան գիտությունը՝ որպես հայագիտության առանձին ոլորտ:

բ) 1870-1880-ական թվականները՝ մասնագիտական ծրագիր հարցարանների հանդես գալու, ազգագրությունը սիրողականից գիտական հիմքերի վրա դնելու պարբերաշրջան

(Գ. Սրվանձտյանց, Գ. Խալաթյանց և նրանց հետևորդները)

1. ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀԱՎԱՔԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ազգագրության մեջ XIX դարի երկրորդ կեսը նշանավորվեց Գարեգին Սրվանձտյանցի գործունեությամբ:

Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը ծնվել է 1840 թ. դեկտեմբերի 12-ին Վանի Այգեստան արվարձանում, Սանդենց Ավետիսի և Սանդուխտի ընտանիքում: Նրա գրոց անունը Հովհաննես էր: Հայնկուսների դպրոցում սովորելիս, արտակարգ ընդունակությունները ու ուշիմությունը նկատի ունենալով, Հովհաննեսին Ինգլիզ Օհաննես էին անվանում: 1857 թ. Հովհաննեսն ընդունվել է Վարագա վանքում Խրիմյան Հայրիկի բացած ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը, որտեղ նրա շնորհալիությունն ու հայրենասիրական բարձր զգացմունքները նկատի ունենալով՝ Մ. Խրիմյանը նրան վերանվանել է վարդանանց քաջերից Գարեգին Սրվանձտյանցի անունով (հետագայում այն դարձավ Սանդենց Ավետիսի ամբողջ ազգատոհմի նոր ազգանունը):

Վարագի դպրոցում սովորելիս Գ. Սրվանձտյանցը դարձել է Մ. Խրիմյանի հուսալի աշխատակից աշակերտը, վարում է «Արծուի Վասպուրականի» ամսաթերթի փոխխմբագրի պաշտոնը, Խրիմյանի հետ ճանապարհորդել է Արևելյան Հայաստանի գավառներում (1860-1861): Ուղևորությունների ընթացքում գրել է մի շարք հոդվածներ, որոնք հավասարապես ազգագրական և հրապարակախոսական բնույթի էին: 1863-1865 թթ. Գ. Սրվանձտյանցը Մշո Ս. Կարապետի վանքում հրատարակել է «Լրատար արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը: Այդ նույն վանքում, Կարինում և այլուր նա զբաղվել է մանկավարժությամբ, կազմել այբբենարան ու ընթերցարան: Սարկավագից հասել է վարդապետի (1864) և եպիսկոպոսի (1886) աստիճանի: Նա Վանում, Մուշում, Կարինում, Ակնում, Տրապիզոնում, Կ. Պոլսում և այլուր վարել է առաջնորդի և այլ պաշտոններ: 1860-ական թթ. մինչև 1880-ական թթ. վերջը նա իր պաշտոնավարած վայրերում Մ. Խրիմյանի հետ կամ միայնակ անողոք և դժվարին պայքար է ծավալել աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական կարգերը պաշտպանող խմբակցությունների ու առանձին անձանց դեմ: Նա ակնհայտ և ընդհատակյա պայքար է մղել թուրքական բռնապետու-

թյան, քրդական ավարառության ու անկարգությունների դեմ. նրան և Խրիմյանին հոգևոր և աշխարհիկ հակառակորդները մատնել են պետության ձեռքը՝ որպես հայ ժողովրդին ապստամբության նախապատրաստողների: Գ. Սրվանձտյանցն իր ազնիվ պայքարի համար ոչ միայն դարձել է հայ ժողովրդի սիրելի վարդապետը, այլև, ինչպես բնորոշել է Մ. Խրիմյանը, Հայաստանի «հեղափոխության ավետարանիչը»:

Ռուս-թուրքական պատերազմից հետո՝ 1878 թ., Կ. Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ երեք վարդապետ գործուղվել են Հայկական լեռնաշխարհի խռովահույզ գավառները՝ հայ ժողովրդի դժգոհությունների պատճառները պարզելու, տեղի հայության կարիքները տեղեկագրելու և թուրքական պետությանը ներկայացնելու նպատակով: Նրանցից մեկը Գ. Սրվանձըտյանցն էր, որի վրա դրված էին ծանր պարտականություններ՝ ամոքել ժողովրդի վիրավոր սիրտը, կանխել նրա արտագաղթը և տեղերում թուրքական իշխանությունների ուշադրությունը բևեռել լեռնականների վայրագությունները վերացնելու հարցերին: Որոշ ընդմիջումներով Գ. Սրվանձտյանցի այս ուղևորությունը տևեց երկու տարի (1878 և 1879): Գործուղման արդյունքը եղավ «Թորոս աղբար» երկհատորյակը, որի առաջին հատորը 1879 թ. լույս տեսավ, իսկ երկրորդը՝ 1884 թվականին:

Գ. Սրվանձտյանցը մեծ հայրենասեր էր. լինելով աշխատավոր ընտանիքի զավակ, ինչպես և կրելով 1860-ական թթ. ականավոր ազգային գործիչների ազդեցությունը՝ նա պայքար էր ծավալում շահատակությունների դեմ: «Հայրենասիրություն մի անկշիռ և գերհարգո առաքինություն է և իսկական բարյաց բուն արմատ»,– գրում էր Սրվանձտյանցը: Նրա կարծիքով ազգերի լուսավորությունը մեծապես պարտական է տվյալ ժողովրդի հայրենասիրությանը: Դա մի անպարտելի զենք էր համարում, որով ազգի անհատը խորապես նվիրվում է հայրենիքին և ապրում նրա ուրախություններն ու փորձությունները: Ինքը հենց այդպիսին էր: Հոգևոր և աշխարհիկ պաշտոնների բերումով նա Արևմտահայաստանը խորապես ուսումնասիրել էր, նկարագրել և պատկերել ընթերցողների համար: Այդ տեսանկյունից ուշագրավ էին նրա վերոհիշյալ «Թորոս աղբարի» հատորները, ինչպես նաև «Գրոց ու բրոցը» և «Մանանան»:

Իր նշանավոր գրվածքներում և ճառերում նա էլ վաթսունա-

կանների գործիչների նման ձգտում էր Հայաստանը տեսնել միավորված, «Հայը հայուն ծանոթացնել, հայը հայուն սիրել տալն է բոլորովին իմ փափաքս և ջանքս»: Այս մասին գրում էր հեղինակն այն օրերին, երբ ռուս-թուրքական պատերազմից հետո շրջում էր հայկական ավերված նահանգներում ու գավառներում:

Գ. Սրվանձտյանցը հայ չինականի նվիրված պաշտպանն էր. նրա աչքերի առջև սուլթանական Թուրքիան անլուր հարստահարություններով կեղեքում էր հողի մշակներին, վտանգավոր չափերի էր հասել արտագաղթը: Տեսնելով այդ երևույթները՝ Գ. Սրվանձտյանցն իր հնարավորությունների չափով պայքարում էր հանուն այն բանի, որ հայ ժողովուրդը տոկար և բնավեր չլիներ: Իր ուղևորություններից մեկի ժամանակ, երբ հասնում է Ծովքի ափերը, նա լճի երեսին տեսնում է տխուր մի թռչուն, «սևորակ փետուրներով, բարակ վզիկով, գլորակ գլխով, որ ծռած էր մեկ քով, թխորակ աչքերով, սպիտակ լանջով, ծնկները ծալած ջրույն ալյաց վրա կերերա, սգավորի մը կամ անգին կորուստ ունեցողի մը կնմանի... Մինակ է ինքն բոլորովին: Հանկարծ ծովուն հատակը կիջնե կանհետանա, խորերը կհուզե, և ահա ջրույն երեսը կելնե պարապ և ունայն, միևնույն տխուր տիպով ու դիրքով...»: Տեղացիներից լսում է, որ սգավոր թռչունը Թորոս աղբար անունն է կրում: Այս թռչունն համարելով որպես Հայաստանի խորհրդանիշ՝ Գ. Սրվանձտյանցը գրում է. «Ա՛յ Թորոս աղբար, որ կհուզես ծովուս խորերը, կհուզես սրտիս անդունդները: Թորո՛ս աղբար, որ մեկ կորուստներդ կխնդրես, արդյոք տաճարին եթե դահլիճին, Լևոնյանց եթե Ներսիսյանց, Հեթումյանց եթե Գրիգորյանց, խու՞յրն եթե սաղավարտն, խա՞չն եթե գայիսոնն, փետուրի՞կն եթե պողովատիկն, դրո՞շմն եթե դրոշակն, Աստվածաբան մատյա՞ննն եթե գահույք արքունական, ծիրանի՞ն եթե եմիփորոնն, Վկայասիրին բուրվառն ու աղոթամատու՞յցն եթե Թորոսի սուրն վրիժուց:

... Էյ Թորոս աղբար, թռիր ինձ հետ, թռիր զքեզ տանիմ հայրենիքեն հեռացյալ Հայոց ի տես, ի հույզ և ի հույս...:

Բայց դու կմերժես, չես համոզվիր, և ոչ տեղեդ կբաժանվիս:

Այո՛, դու ուղիղ ես, հուզե, խնդրե, որոնե այդ տեղ. կորուստը՝ կորսված տեղը»[1]: Այսինքն՝ Թորոսի վրեժի սուրը ձեռքդ պահիր և հայրենի հողից մի հեռանա: Սա ճիշտ այն միտքն էր, ինչ

[1] ***Սրվանձտյանց Գ.***, Թորոս աղբար Հայաստանի ճամփորդ, մասն առաջին // Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 182-183:

Մ. Խրիմյանի երկաթե չերեփի գաղափարը:

Գ. Սրվանձտյանցի քաղաքական բացահայտ և քողարկված հայացքները հայտնի էին Թուրքական բռնապետությանը, ուստի և 1888 թ. նրան խորամանկորեն հանեցին Տրապիզոնի առաջնորդական պաշտոնից և, այսպես կոչված, ազատ աքսորի ուղարկեցին Կ. Պոլիս: Ընդմիշտ զրկվելով Հայաստան վերադառնալու իրավունքից՝ Գ. Սրվանձտյանցը, հայրենիքի կորուստը մորմոքալով, վախճանվեց 52 տարեկան հասակում (1892):

Ազգագրական և բանահյուսական նյութերի հավաքման համար Գ. Սրվանձտյանցին նախորդող ազգագրագետները հատուկ ծրագրեր (հարցարաններ) չստեղծեցին: Այդ և այլ պատճառներով էլ նրանք անմիջական հետևորդներ գրեթե չունեցան: Առանձին գիտնականներ, որոնք ստեղծագործում էին մայր հայրենիքից դուրս և մասամբ զբաղվում էին ազգագրությամբ, նույնպես ուղեցույց գործեր չունեցան:

Ազգագրական բանահավաքչության գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար մեծ էր Գ. Սրվանձտյանցի մշակած ուղղության դերը: «Ծանիր զքեզ» աստվածաշնչյան իմաստությունը ժողովրդին հասցնելու խնդիրը XIX դարի հայ մտավոր գործիչների սրբազան պարտքն էր համարվում: Ազգի վերաձևավորման խնդիրը, մասնավորապես XIX դարի երկրորդ կեսին պահանջում էր յուրօրինակ գրական ուղղության սկզբնավորում, որը մատչելի լիներ բոլոր խավերին: Այդ ուղղության սկիզբը դրվեց Խ. Աբովյանի անմահ «Վերքի» հրատարակումով (1858), որին հետևեցին Հայաստանի երկու հատվածների գրական մշակները: Կարգախոսն էր՝ վերցնել ժողովրդից և խանդավառ խոսքով վերադարձնել նրան: Պերճ Պռոշյանին վիճակվեց կատարել այդ առաքելությունը Արևելահայաստանում, իսկ Գ. Սրվանձտյանցին՝ Արևմտահայաստանում: Սակայն Գ. Սրվանձտյանցը Պռոշյանից տարբերվեց նրանով, որ գեղարվեստական ստեղծագործությունների փոխարեն կատարեց ժողովրդական ստեղծագործությունների գրառումներ:

Թուրքական հարստահարությունների և քաղաքական հալածանքների դեմ մաքառելու տարիներին Գ. Սրվանձտյանցը պարզապես հայտնագործեց ազգագրությունն ու բանահյուսությունը որպես հոգևոր զենքեր և դրանցով ազգային զարթոնքի քարոզ-

չությունը գործը բարձրացրեց մի նոր մակարդակի վրա[2]: «Ծանիր զքեզ»-ի գաղափարը բուրում էր Սրվանձտյանցի յուրաքանչյուր տողից:

1860 թ. Վարագա ժառանգավորաց վարժարանի 20-ամյա սանը, ճանապարհորդելով Անդրկովկասում, գրեց և հրատարակեց «Երևան քաղաք», «Տփխիս քաղաք», «Սյունյաց աշխարհ և Շուշի քաղաք» հոդվածները: Վերջիններս հագեցած էին ազգագրական ուշագրավ տվյալներով: Արժանահիշատակ են հատկապես կրոնական ծեսերի, Թիֆլիսի հայ համքարությունների օրենքների, պատանեկան խաղերի, արհեստների ու առևտրի, տների կառուցվածքի, հայ, ռուս, պարսիկ և այլ ժողովուրդների կյանքից վերցված դրվագները:

Գ. Սրվանձտյանցը սկզբում տարերայնորեն սկսեց գրանցել ազգային սովորությունները, սակայն շատ շուտով համակարգեց աշխատանքները և հրապարակեց իր հռչակավոր «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գիրքը (1874): Վերջինս նրա կարևորագույն գործն էր, որը սովորական գիրք չէր, այլ, ինչպես դիպուկ նկատել է «Հայ ազգագրություն» ձեռնարկի հեղինակ Վ. Բդոյանը, երկու կարևորագույն հայանագործումների ժողովածու էր: Առաջինը «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վեպն էր և երկրորդը՝ հայ ազգագրական բանահավաքչության համար գրված առաջին ծրագիրը (հարցարանը)[3]:

«Գրոց ու բրոց» յուրօրինակ ծրագիրն իր կառուցվածքով ու հարցերի առաջադրումներով,– շարունակում է Վ. Բդոյանը,– իհարկե, միանգամայն տարբերվում էր Եվրոպայում և այլուր կազմվող ծրագրերից, որովհետև հեղինակն անծանոթ էր այդ վերջիններին: Նա իր ծրագիրը, դարի քաղաքական ու մշակութային պահանջների համաձայն, առաջադրել է բնատուր խելքի ու տաղանդի շնորհիվ: Այդ ծրագիրը՝ որպես հայ իրականության մեջ առաջին փորձը, պարզ էր, հասարակ, նախնական»[4]: Բայց այն լցված էր հայրենաբաղձ Սրվանձտյանցի մեղրանուշ խոսքերով, որով նա օգտագործողներ ու հետևորդներ ունեցավ: Այդ են վկա-

[2] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրություն. Համառոտ ուրվագիծ, Երևան, 1974, էջ 17:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Նույն տեղում:

յում նրան ժամանակակից նշանավոր գրական ու գիտական գործիչները, որոնք նույնիսկ խոստովանում են «Գրոց ու բրոցի» թողած ազդեցությունն իրենց վրա:

«Գրոց ու բրոցին» հետևեց «Մանանա» ժողովածուն (1876): Սրվանձտյանցն այս գրքում զետեղել է մի շարք նամակներ, որոնց հեղինակները ողջունել են «Գրոց ու բրոցը»: Նրանցից մեկը՝ Հ. Շահնազարյանը, գրում էր. «Ձեր Գրոց ու բրոց գրքույկն է այն ազգի գրություններեն, որք շատ քիչ անգամ հրապարակ կելլեն և որք իրենց պատվականության համար միշտ փնտռված ու կարդացված են: Ընթերցողն Ձեր գրքույկին մեջ ... կգտնե... ամեն տեսակ նյութոց առատություն մի՝ իր ուշադրությունը գրավելու արժանի: Երկրաբանին կցուցանենք իրեն անծանոթ բույսեր, աշխարհագիրին ընդարձակ ու ցանկալի տեղեկություններ կուտաք սիրելի երկրի մի վրա..., հնախոսին սիրտը եռանդ կձգեք խուզարկություններ ընելու այն երկրին մեջ, ուր շատ քաջության հետքերն ընդ հողով ծածկյալ՝ դիպվածով միայն երևան գան մերթ ընդ մերթ, իսկ բանաստեղծին կվառեք, կբորբոքեք սիրտն ու խանդը, երբ չնորհալի առասպելները քաղելով բնակչաց շրթներեն մեզ կպատմեք: Բայց ինչպե՞ս հայտնեմ Ձեզ այն ազդեցության ուժն ու սաստկությունը, որ Գրոց ու բրոց առաջի տողեն սկսյալ մինչև հետինը կազդեն ազգասեր սրտից վրա...: Դուք տարբեր ազդում մի կգործեք կրծքի և երևակայության վրա, վասն զի հանդիման կարծես մեր աչաց կբերեք, դուք ունեք գրությամբ մի կարի հույժ սիրելի երկիր մի՝ իր բոլոր ավերակներովն, ուր միանգամայն վեհագլուխ սարերու ստորոտն փոշվոց հետ խառն տեսնելով սննդագործ ցողուններ ու բարուկներ, մեր կենդանի հույսեր, տրտմելու փոխարեն կքաջալերվին ու կզվարթանան»[5]:

Բարձր գնահատականներ են տվել նաև Կ. Պոլսի Պատրիարք Ներսես Վարժապետյանը[6], Ղևոնդ Ալիշանը[7] և ուրիշներ: Սակայն Գ. Սրվանձտյանցի գրական վաստակի և մասնավորապես «Գրոց ու բրոցի» դերի գիտական ամենաբարձր գնահատականը տվել է պրոֆ. Գ. Խալաթյանցը՝ գրելով. «1870-ական թվականների սկզբին

[5] ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հատոր 1, Ծանոթագրություններ և ցանկեր, էջ 622-624:
[6] Տե՛ս նույն տեղում, 620-621:
[7] Տե՛ս նույն տեղում, 621-622:

լույս են տեսնում Սրվանձտյանցի առաջին երկասիրությունները: Ազգային-ժողովրդական կյանքի խորին հմտությունը, հայ ազգագրության ամեն մի ճյուղին վերաբերյալ ճոխ և բազմատեսակ նյութերն ու նկարագիրները: Ժողովրդի անպաճույճ կյանքին ցույց տված անկեղծ համակրանքն ու ներբողները, ազգասիրական ոգին, որ փայլում է ամեն մի երեսում, այս բոլորը միացած բանաստեղծական գողտրիկ լեզվի և նուրբ ճաշակի հետ, վերին աստիճանի գեղեցիկ տպավորություն արին ընթերցող հասարակության վերա: Հայ ազգագրության անբավ ճոխությունը, նյութեր հավաքելու անհրաժեշտ կարևորությունը, նոցանից սպասելիք գիտնական, գործնական և բարոյական ահագին օգուտները առաջին անգամ, որքան հնար էր, պարզվեցան: Հայ ազգագրությունը նոր շունչ առավ: Ամեն մի գրագետ համակրեց ժողովրդական մեղվաշուրթ վարդապետին, սիրեց նորա նկարագրած երկիրը, ժողովուրդը, ժողովրդի անարվեստ բանաստեղծությունը: Սրվանձտյանցը օրինակ դարձավ, նորան հետևեցին զարմանալի եռանդով և միաբանությամբ մի շարք քանքարավոր բանասերներ, որոնք, սիրելով իրանց գործը, երբեմն նաև նեղություն ու զրկանք հանձն առնելով, աշխատեցին ամեն մեկը յուր գյուղը, գավառը, երկիրը ուսումնասիրել, նյութեր հավաքել, ժողովրդական կյանքի զանազան երևույթները նկարագրել:

Եվ ահա կարճ միջոցում (1875-1887) լույս են տեսնում բազմաթիվ ուշադրության արժանի հոդվածներ, գրքույկներ, ժողովածուներ այս կամ այն գավառի մասին, և այժմ ևս չէ դադարում օրեցօր ավելանալ այդ կարևոր և օգտավետ հրատարակություններ-ի շարքը»[8]: Գ. Խալաթյանցը, թվարկելով Սրվանձտյանցի անմիջական հետևորդներին, ավելացրել է, թե հայ ազգագրության զարգացումը կախված է առաջնորդող ծրագրից, որի համար և ինքը կազմել է իր «Ծրագիրը»[9]:

Գ. Խալաթյանցը, սակայն, 1887 թ. հրատարակած իր այդ «Ծրագիրը» համարում էր առաջին փորձը[10], որից երևում է, որ նա Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը» ծրագիր չի դիտել: Այս ծրա-

[8] Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորություններ-ի, հավաքեց և կազմեց Գ. Խալաթյանց, Մոսկվա, 1887, էջ Թ-Ժ:
[9] Տե՛ս նույն տեղում, էջ Ժ-ԺԳ:
[10] Տե՛ս նույն տեղում, էջ ԺԳ:

գիրը չեն կռահել նաև Ե. Լալայանը, Ս. Լիսիցյանը և հայ ազգագրության մյուս երախտավորները[11]: Ինչո՞ւ: Որովհետև հեղինակը իր ծրագիրը արդի իմաստով չի համակարգել, հարցերը չի թեմավորել ու համարակալել, որովհետև առաջադրված հարցերը շաղկապել է պատասխան նկարագրերին: Ընթերցողները և գիտնականները բոլոր պարագաներում ընդունել են «Գրոց ու բրոցի» բարերարվարակիչ ազդեցությունը, բայց չեն նկատել, որ հեղինակն այն ներկայացրել է իբրև ծրագիր: Չեն նկատել նույնիսկ ակնհայտ փաստերը, որ մենք տեսնում ենք «Գրոց ու բրոցի» էջերում: Ուստի հաստատելու համար, որ այդ գրքի ամբողջ կեսը հայ ազգագրության ծրագիր է եղել, կբերենք հեղինակի խոսքերը:

Իր բարեկամ Աղաբեկյանին ուղղած ուղերձում Սրվանձտյանցը գրում էր. «Մտածելով, թե փայտերը, քարերը և ամենայն ակունք ու այլ նյութերը նախքան զարվեստավորվելը իրենց բնական բույսին և կազմին մեջ անվայելուչ և անշնորհք երևույթ մը ունին, բայց արվեստավորք զանոնք թանկ կը գնեն, և ինչո՞ւ ուրեմն արհեստական նյութը իրեն նախնականը պատրաստողն ու վաճառողն ունի, ինչու գրարվեստն ալ չունենա»[12]: «Իսկ թե քանի՞ տեսակ կա թռչնոց և ի՞նչ անոնց անունները. անոնցմե յուրաքանչյուրը ո՞ր գավառին մեջ շատ կա, ի՞նչ գիտելիք անոնց վրա, նույնպես և ընտանի կենդանյաց և վայրի գազանոց տեսակները. անոնց անունները: Քանի տեսակ կա ծառոց, ի՞նչ անուն անոնց, ի՞նչ հատկություն, ի՞նչ պտուղ, քանի՞ տեսակ և անուն կա խնձորին, տանձին, քանի՞ խաղողին: Այսպես նաև ծաղկանց, բանջարեղինաց»[13]: «Ընթերցողին հայտնի է, թե որչափ շտապով կթռչի գրիչս, առանց ուշադրություն ընելու վերոհիշածս ու չհիշածս լերանց, դարեվանդաց, բլրոց և ամենայն վայրաց նկարագիրներն ու վեպերն ներկայացնելու: Ես նպատակ ունիմ հառաջ վազելու:

Եվ որովհետև այս իմ գրական գործս իբրև հուշարար և ծրագիր կուզեմ ներկայացնել, բավականեն ավելին չեմ ուզեր երկա-

[11] Վ. Բդոյանը «Գրոց ու բրոցը» ազգագրական ծրագիր է համարել դեռևս 1946 թ. (տե՛ս «Էջմիածին», 1946, № 1, էջ 39):

[12] Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 31:

[13] Նույն տեղում, էջ 42:

րել»[14]: «Ուր տարավ և ուր բերավ զիս այս նկարագիրը, զոր միայն իբր ծրագիր կգրեմ: Դառնամ պիտի, դաղրիմ պիտի, քանզի անսահման են այսպիսի վայրերը և անսպառ՝ անոնց վրա խոսվածներն ու երևցածները»[15]: «Իմ փափաքս եղած է, որ բանասերք ուշադրություն դարձնեն Հայաստանի մեջ բնակած հայոց ժողովրդական լեզվաց և այն լեզուներով հրատարակեն վեպեր, տրամախոսություններ և այլն, և այսպիսով սիրելի և ծանոթ կացուցանեն զանոնք գրագիտաց...»[16]:

Կարևոր է հիշել, որ հեղինակը «Գրոց ու բրոցի» տիտղոսաթերթի վրա դրոշմել է՝ «Ծրագրյաց Գ. Վ. Սրվանձտյանց»: Վերոհիշյալ ուղերձի տակ նա ստորագրել է «Ծրագրող Սրվանձտյանց Գ. Վ.»: Իսկ 9-16-րդ էջերում ներկայացրած նախաբանի տակ գրել է «ծրագրողն»: Մակագրության այս ձևը չի կրկնվել հեղինակի մյուս գրքերից ոչ մեկի վրա: Ինքնին շատ ուշագրավ է հենց «Գրոց ու բրոց» արտահայտությունը, որը «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքի միայն առաջին կեսին է վերաբերում: Ընդ որում՝ «Գրոցն» այն է, ինչ հեղինակը գրի է առել իբրև ազգագրական և բանահյուսական հում նյութեր, իսկ «բրոցը» ակնհայտորեն խորհրդանշական է՝ «բրել, պեղել, պատմել տալ և գրի առնել» նշանակությամբ: Ուրեմն «Գրոց ու բրոց» վերտառությունը այլ կերպ նշանակում է «Գրառումներ և հարցեր» (բանահավաքների համար): Ասել է թե՝ գրքի անունն այլ կերպ կարելի է կարդալ «Գրառումներ ու հարցեր և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»:

Գ. Սրվանձտյանցը բազում տեղերում բանահավաքներին միտք է տալիս՝ գրի առնել ընտանեկան կյանքի նկարագիրը, բնակավայրերի տեղագրությունը, շենքերի ձևերը, որոնք «լույս կու տան մեր հայկական լեզվին, մեր ազգային հնագիտության ու պատմության»[17]: Եվ քանի որ հեղինակը համեստորեն իրեն ձեռնհաս չի համարում զբաղվելու ծավալուն բանահավաքչական գործով, նա «Գրոց ու բրոցի» հետագա բազմաթիվ էջերում հար-

[14] Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, ***Գ. Սրվանձտյանց,*** Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 72:
[15] Նույն տեղում, էջ 79:
[16] Նույն տեղում, էջ 116:
[17] Տե՛ս նույն տեղում, էջ 38-39:

ցեր է առաջադրում, որպեսզի ավելի կարող մարդիկ զբաղվեն ազգագրության գրանցմամբ: Այդ հարցերի մեջ ընդգրկված են Վանա նավերի նկարագրերը և եզրույթները (էջ 39), գյուղատնտեսական գործիքները, փոխադրամիջոցները, աշխատանքային գործընթացները (էջ 39), տան շարժական գույքը, կահույքը, ամանները, ամբարները և փեթակները, հաց թխելու պարագաները, կաթնամշակութային միջոցները, հատիկաչափերը, լվացքի ամանները, հացի տեսակները և այլն (էջ 40), ազգային տարազը, տարազի հետ կապված զարդերն ու հուռութները և այլն (էջ 40-41), դարբնոցներն ու դարբնությունը, հյուսնությունը, դերձակությունը, ոսկերչությունը, շինարարական տեխնիկան (էջ 40-41), ժողովրդական բժշկությունը, դեղագիտությունը և այլն (էջ 42-43), պտղաբուծության, բանջարաբուծության, կենդանիների ու թռչունների հետ առնչվող եզրույթաբանությունը (էջ 42), ծաղիկների աշխարհը և բարբառային բառերի ցուցակներ կազմելը, դիցաբանությունը և առասպելաբանությունը (էջ 48-50):

Գ. Սրվանձտյանցը հորդորում է մտավորականներին գրել ժողովրդի կենդանի խոսակցական լեզվով: Բաղդատելով հայոց գրական և «գավառական» լեզուները՝ նա գտնում է, որ առաջինը համեմատաբար աղքատ է իր բառապաշարով, մինչդեռ երկրորդը՝ աչքի է ընկնում իր հարստություններով: Իբրև ապացույց իր ասածի՝ Սրվանձտյանցը բերում է գյուղատնտեսական գործիքների ու վերջիններիս առանձին մասերի, թռչունների ու կենդանիների, բույսերի ու պտուղների, ծառ ու ծաղկի տարբեր տեսակների բուն ժողովրդական բարբառային բազմաթիվ ու բազմատեսակ անուններ, որոնք բացակայում են գրական լեզվի մեջ, և դրա հիման վրա առաջ է քաշում գրական լեզուն ժողովրդական լավագույն բառերով ու ոճերով հարստացնելու կարևոր հարցը: Հեղինակը մի առանձին խրախուսանքով հորդորում է ուսումնասիրել Սասունն ու Խուլթը, սրանց հայ և քուրդ բնակիչների կյանքը՝ գրելով. «Ինչ սքանչելի բան կլիներ այս ամենուն կենցաղավարությանը նկարագրին հետ և իրենց զգեստուց ձևն ու կյանքի զբաղմունքը ստորագրվեր, կամ անոնց պատկերները լուսանկարով հանվեր»[18]:

[18] Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ // ***Գ. Սրվանձտյանց,*** Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 73:

Առանձնահատուկ կերպով սիրելով ազգային դիցաբանության վերաբերյալ նյութեր գրի առնելը՝ Գ. Սրվանձտյանցը թվում է մասնավորապես Վասպուրականի գավառները և գրում. «Ասոր յուրաքանչյուր գավառը զատ-զատ անձանց գործ է ստորագրել, և զատ-զատ մատյան կազմել»[19]:

Գ. Սրվանձտյանցն իր «Գրոց ու բրոցի» առաջին կեսն ավարտելուց առաջ, ուրիշներին բանահավաքության մղելով, գրում է. «Հիմա նորեն միտքս եկավ, քանի որ մեր մտադրությունն է ժողովրդական կյանքե ծանոթություններ հիշել, որոնք լույս կարող են տալ ազգային պատմության և լեզվին կամ գրականության, ուշադրության առնելու է, ուրեմն, անոնց մեջ եղած տնտեսական, գեղջկական, քաղաքական և կրոնական արարողությունները, առածները, երդումները, անեծքները, օրհնանքները, երգերը, պարերը, տղայոց խաղերը, որոնք առհասարակ կյանքի և լեզվի պատմությունը կկազմեն»[20]: Ապագա գրառողին իր միտքը ավելի լավ հաղորդելու համար նա թվարկում է գրի առնելիք թեմաները, ինչպիսիք են՝ ամուսնացող զույգին առնչվող ծեսերը, հարսանեկան խնջույքը, պսակը, պսակից տուն վերադարձի ճանապարհի ծեսերը և այլն[21]: Քննության առարկա ժողովածուում տեղ գտած մյուս նյութերից անհրաժեշտ է հիշատակել նաև Տարոնի ու Վասպուրականի ժողովրդական բժշկության, համբարձման վիճակախաղի, վարդավառի տոնախմբության ուշադրավ նկարագրությունները, բուժիչ աղբյուրների, սրբազան համարված ծառերի, հրաշագործ քարերի, Թուխ Մանուկների, Ցասման խաչերի, օձի պաշտամունքի վերաբերյալ ուշադրավ տեղեկությունները:

Մինչ Գ. Սրվանձտյանցը հայ ազգագրությունն իբրև գրական ատաղձ է օգտագործվում գեղարվեստական գրականության մեջ: Այդ ձևով մեծ քանակությամբ նյութեր են հայթայթել Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Ռաֆֆին, գյուղագիրները և ուրիշներ: Եվ եթե գրողները ազգագրությունը ծառայեցրել են գեղագիտությանը, ապա Գ. Սրվանձտյանցը, ընդհակառակը, գեղագիտությունն է

[19] Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, էջ 79: Այս և այլ հարցերի վերաբերյալ շատ ենք օգտվել Հայ ազգագրության ձեռնարկից: Հմմտ. **Բդոյան Վ.**, Հայ ազգագրություն, էջ 16-20:

[20] Նույն տեղում, էջ 81:

[21] Տե՛ս նույն տեղում, 81-82:

ծառայեցրել ազգագրությանը: Իսկ սա հայ ազգագրության մեջ երևույթ էր, որը հայտնագործել և տաղանդավոր կերպով կիրառել է Գ. Սրվանձտյանցը: Ի պատիվ իրեն՝ Գ. Սրվանձտյանցը ազգագրական տվյալները գեղագիտական խոսքով մատուցելիս չի աղավաղել, չի խաթարել, որովհետև բուն նպատակը ազգագրությանը հարազատ մնալն է եղել:

Այս կերպ ստեղծվում է հայ ազգագրության գրանցման ու մեկնաբանման սրվանձտյանական ուղղությունը, որին հետևեցին իր ժամանակակից և հետագա բանահավաքները: Նրա ստեղծած այս ուղղությունն առանձին ընդունելություն գտավ Արևմտահայաստանում՝ 1870-ական թվականներից սկսած: Դրա պատճառը երկրի այդ հատվածին վիճակված պատմական մռայլ ճակատագիրն էր: Սփյուռքի հայության համար սրվանձտյանական գրանցման հայրենաբաղձ ոճը այժմ էլ իշխող ձևն է, քանի որ ծառայում է պահպանելու ազգային ոգին:

Գ. Սրվանձտյանցի գրի առնելու ձևն ու ոճը, հայրենաբաղձության յուրահատկությունները, ազգային ու տնտեսական համախմբման գիտակցական արծարծման մեթոդներն ստեղծվել են XIX դարի պատմական այն գործոնների ազդեցությամբ, որոնք պահանջում էին կանխել ազգի կործանումը: Դրանով պետք է բացատրել, որ յուրաքանչյուր ազգագիր բանահավաք Սփյուռքում բանահյուսության ու ազգային սովորույթների փրկարարի դեր ունի: Սրվանձտյանական ուղղությունը տակավին կարևոր դեր ունի ազգահավաքման և ազգապահպանման գործում:

Գ. Սրվանձտյանցի ստեղծած ուղղության մյուս կարևոր արժեքը հայ ազգագրությունը 1870-ական թթ. սկզբին նոր աստիճանի բարձրացնելն էր, որը նա կատարեց իր ծրագրով ու գրանցման մեթոդներով, հրատարակած ժողովածուներով: Այդ գիտական ուղղությանը հետևող բազմաթիվ բանահավաքներ նյութերի գրանցման առումով նշանակալից գործ են կատարել:

Գ. Սրվանձտյանցը ազգագրական նյութեր շատ է գրանցել: Սակայն տպագրվել է փոքր մասը միայն: Հեղինակը քանիցս նշել է, թե իր գրական վաստակների զգալի մասը ուղևորությունների, պաշտոնափոխությունների և զանազան անպատեհությունների ժամանակ կորստի են մատնվել: Ազգագրի մեծ եղբոր դուստրը՝ Անթառամ Սրվանձտյանցը, 1944-1945 թթ. ասել է, թե հայ-թուր-

քական մի միջադեպի ժամանակ, ըստ երևույթին, 1895-1896 թթ. դեպքերի օրերին, թուրքերը խուզարկել են Վանա գրագետների տները և շատերին բանտարկել: Գարեգինի կրտսեր եղբայրը՝ Սիմեոնը, երկյուղ կրելով, թե ընտանիքի անդամները բանտ կնետվեն, թոնրի կրակին է հանձնել Գ. Սրվանձտյանցի՝ այնտեղ ունեցած ամբողջ արխիվն ու գրադարանը:

Անհայտ են «Արծուիկ Տարօնոյ», «Արծուի Վասպուրականի» ամսաթերթերի արխիվային նյութերի ճակատագրերը: Իսկ այժմ Գ. Սրվանձտյանցի արխիվում ազգագրական անտիպ նյութերի աննշան պատառիկներ են միայն մնացել:

Այսպիսով, որպես ազգագրական ժառանգություն՝ մենք ձեռքի տակ ունենք Գ. Սրվանձտյանցի տպագիր գործերը՝ «Գրոց ու բրոց», «Մանանա», «Թորոս աղբար» և «Համով-Հոտով» աշխատությունները, որոնք ցրված են ժամանակի մամուլում: Արևմտահայաստանի տնտեսությունը հեղինակը ներկայացրել է գյուղատնտեսության և արհեստների համառոտ բնութագրերով: Այդ հաղորդումներից երևում է, որ Արևմտահայաստանը մինչև XIX դարի երկրորդ կեսը պահպանում էր տնայնագործությունը, բնատնտեսությանը հատուկ արտադրամիջոցներն ու արտադրաեղանակները: Քաղաքներում երկաթագործության, պղնձագործության, ատաղձագործության և այլ արհեստների շարքում լավ զարգացած էր կտավագործությունը, որն արդեն գտնվում էր ապրանքային արտադրության անցնելու գործընթացում: Դրա շնորհիվ զարգանում էր ազնվագեղմ այծերի բուծումը Վասպուրականում, Հայկական Տավրոսի որոշ վայրերում և այլուր: Նա առանձնապես զարգացած էր համարում Արաբկիրի մանուսագործությունը:

Գ. Սրվանձտյանցը նաև նկարագրել է արտասահմանից ներմուծվող հումքի տեսակները, որոնք վերամշակվում էին և արտահանվում:

Գ. Սրվանձտյանցը բազմիցս անդրադարձել է նյութական մշակույթի առարկաներին: Դրանցից են՝ բնակավայրերն ու կառույցները, ազգային և օտար ժողովուրդների տարազները, զարդերը, կահկարասին: Ուշադրության արժանի են հեղինակի այն հաղորդումները, համաձայն որոնց՝ ոչ բոլոր նահանգներում էր հայկական տարազն անաղարտ մնացել: Ծոփքում, Աղձնիքում, Փոքր Հայքում, Պոնտոսի շրջաններում, մինչև իսկ ավանդապահ

Վասպուրականում հայ կինն ստիպված էր մահմեդականների նման սավան կրել, թեև վերջինս ազգային տարազը դուրս չէր մղում: Գ. Սրվանձտյանցը ներկայացրել է նաև բուն ազգային տարազի կորուստները, օրինակ՝ Ամասիա քաղաքում «կանայք... մարզվանցվոց էրիկ մարդու շալվար կհագնին՝ ի գլուխ կիսաքող մը կրելով, իսկ փողոցը շրջած ատեն սավանով կպատսպարվին. անխոս և անտես կպահեն զիրենք. կարի սակավաթիվ են շրջազգեստ հագնող կանայք»[22]: Նշանակում է՝ անդրավարտիքը հիշյալ վայրերում դուրս էր մղել շրջազգեստի տեսակները:

Գ. Սրվանձտյանցը նյութեր է ներկայացրել նաև ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ: Նա ուշադրություն է հրավիրել հայ կնոջ ծանր վիճակին (մասնավորապես քաղաքներում) և խարազանել երևույթը: Հեղինակը ներկայացրել է նաև ամուսնության սովորությունները և անհաշտ դիրք է գրավել օժիտի ու հարակից ավելորդ ծեսերի կիրառման նկատմամբ:

Գ. Սրվանձտյանցի ազգագրական գրանցումները ընդգրկում են նաև առտնին կենցաղը, կերակուրներն ու հյուրասիրության ձևերը, հուղարկավորության սովորությունները, լազերի, ասորիների, քրդերի, թուրքերի և այլ ժողովուրդների կենցաղը և այլն:

Գ. Սրվանձտյանցի ազգագրական ամենամեծ նախասիրությունները կապված էին հայկական հեթանոսական կրոնի և հնադույն այլ պաշտամունքների հետ: Բանահավաքը, իհարկե, մինչքրիստոնեական պաշտամունքները քրիստոնեական դիրքերից խարազանելու համար չէ, որ գրի էր առնում նշյալ նյութերը առանձնակի հաճույքով: Ընդհակառակը, նա պաշտամունքների նկատմամբ ուներ առանձնահատուկ վերաբերմունք՝ նշելով, թե հայ ժողովրդի պատմության համար հեթանոսական ու նախնական կրոնների մնացուկները կարևոր նշանակություն ունեն: Նա իրավացի էր, որովհետև կրոնական առանձին համակարգերի հաջորդականությունը կամ էվոլյուցիոն շղթան ամեն մի ժողովրդի հոգևոր կարողությունների պատմության մի մասն է: Այդ իմաստով կրոնների պատմությունը մի օժանդակ աղբյուր է նաև աշխարհիկ պատմության համար ճիշտ այնպես, ինչպես հնագիտական պեղածո արժեքները: Այս տեսանկյունից Գ. Սրվանձտյանցի աշխատու-

[22] ***Սրվանձտյանց Գ.,*** Թորոս աղբար, մասն Ա., Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 212:

թյուններում փաստագրված այն պաշտամունքները, որոնք ներկայացնում են ոգեպաշտությունը, տոտեմիզմը, ջրային ու ցամաքային տարրերը, չար ու բարի ոգիների կարծեցյալ աշխարհը և մարդու ինքնապաշտպանության ձևերը, աստեղային կրոնի և դիցաբանության կրոնի մնացորդները, այս բոլորը եղել են և կլինեն հայոց հին հավատքի պատմության աղբյուրները:

Գ. Սրվանձտյանցի հիշատակած ջրային տարերքում ապրող առասպելական նժույգներն ու գոմեշները, որոնցից երևակայական նոր ցեղեր են ստանում, ոչ այլ ինչ են, քան անասունների ցեղերն ազնվացնելու իղձերը, որը մարդն ունեցել է ամենանախնական ժամանակներից ի վեր: Գ. Սրվանձտյանցն այս առումով դեռ շատ օգտակար է լինելու ուսումնասիրողներին, որոնք բազմակողմանի քննությամբ կարող են ցույց տալ, որ պալեոլիթյան, էնեոլիթյան և այլ շրջանների կենդանիների ոսկորների, ժայռապատկերների, բրոնզե արձանիկների ու բրոնզե առարկաների վրա հաստատագրված կենդանական պատկերների ու Գ. Սրվանձտյանցի փրկած կենդանապաշտական նյութերի համադրությամբ հաստատվում է այն, որ դրանք միևնույն շղթայի օղակներն են, իսկ դրանց ուղեկցող մարդը՝ այս երկրի հաստատուն բնակիչը: Նույնը պետք է ասել նաև Գ. Սրվանձտյանցի հավաքած բուն դիցապաշտական նյութերի մասին: Ոչ մի հայ բանահավաք XIX դարում և հետագայում այդպիսի արժեքավոր նյութեր գրի չի առել: Աստղիկ և Անահիտ դիցուհիների, նմանապես Հայկի ու Բելի աստվածությունների առասպելների վերաբերյալ Գ. Սրվանձտյանցի գրի առած տվյալները հաստատում են Ագաթանգեղոսի, Խորենացու և մյուս պատմիչների հաղորդումները:

Ժողովրդական տոներն ու ուխտագնացությունները, որոնք քրիստոնեական Հայաստանը ժառանգություն է ստացել հեթանոս Հայաստանից, օգտագործվել են աշխարհիկ նպատակներով: Հնագույն ժամանակներից ի վեր հայ մատենագրության մեջ պատկերվել են այնպիսի տոնախմբություններ, որոնց ժամանակ դրսևորում էին ժողովրդական խաղատեսակները, ձիարշավները, ազգային պարերը, և մրցություններում անուն վաստակած մարդիկ համբավ էին ձեռք բերում ոչ միայն երկրի ներսում, այլև միջազգային ասպարեզներում: Ահա այս նյութերն են զբաղեցրել Գ. Սրվանձտյանցին: Բացի դրանցից՝ հեղինակը մեծ վաստակ ունի

հայ ժողովրդական բանահյուսության գրառման բնագավառում: Առավել արժեքավորը, սակայն, «Գրոց ու բրոց» ժողովածուի Բ մասն է, ուր զետեղված է հայ ժողովրդի ազգային մեծ վեպը՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով, որը մինչ այդ անհայտ էր մեր գրականությանը: «Սասունցի Դավիթ» հայոց ազգային դյուցազներգությունը, որը հայտնագործվել է 1873 թ., և հրատարակվեց 1874 թ. Կ. Պոլսում «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով, հայ մշակույթի դարավոր պատմության մեջ կատարված մեծագույն հայտնագործություններից մեկն էր, որի համար մենք պարտական ենք Գ. Սրվանձտյանցի տարիների գործադրած ջանքերին: Գ. Սրվանձտյանցի պատումն ունի բացառիկ նշանակություն մեր մշակույթի պատմության մեջ: Այդ պատումի հետ, փաստորեն, կապվում է ոչ միայն հայ ժողովրդական վեպի հայտնագործման կարևոր փաստը, այլև հերքումը ոմանց այն թյուր ըմբռնման, ըստ որի՝ հայ ժողովուրդն իբր զրկված է եղել ազգային լեզվով ու ազգային նկարագրով հերոսական վիպասանություն ունենալու հնարավորությունից[23]: Գ. Սրվանձտյանցի պատումի արժեքը, սակայն, չի սահմանափակվում միայն դրանով: Այն աչքի է ընկնում նաև իր ամբողջականությամբ, բովանդակայնության և ձևի արժանիքներով, գրառման հարազատությամբ: Այսօր էլ, երբ մեր ձեռքի տակ կան «Սասնա ծռերի» շուրջ 160 տպագիր ու անտիպ պատումներ, տվյալ պատումը, իրավամբ, համարվում է լավագույններից մեկը:

Գ. Սրվանձտյանցը, լավ գնահատելով ազգագրական նյութերը, գրում է. «Այս գործիս հրատարակությունը հասկացողին համար արժեք կունենա, բայց կարծեմ արհամարհողներ ավելի պիտի լինին և այպանողներ, ոչ միայն այս գրվածին կտորը, այլ ամբողջ սույն գրքույկը, այդ թվում և իմ անձը: Ասոնք չհասկացողներեն են»[24]: Բարեբախտաբար, Գ. Սրվանձտյանցն սխալ էր: Ոչ թե «համրանքով քսան հոգի և եթե հավանեցին նրա գործին, այլ նույնիսկ չհասկացողները հրապուրվեցին նրա ճարտար լեզվից և նրա բերած պատումի գեղեցկությամբ: Ամեն կողմից նա հավանություն ու քաջալերություն ստացավ, մինչև անգամ դրամական

[23] ***Հարությունյան Ս.,*** Գարեգին Սրվանձտյանցը և Հայկական հերոսավեպ // ՊԲՀ, 1990, թիվ 4, էջ 8:
[24] ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ. 1, էջ 86:

նպաստ: Ժողովրդական նյութով զբաղվողի և բարբառներ ուսումնասիրողի համար պարզ պիտի լիներ այդ հրատարակության մեծ արժեքը և պիտի օգտվեին դրանից: Դրանով խանդավառված մի շարք բանահավաքներ, նրանց թվում՝ Մանուկ Աբեղյանը, Գարեգին Հովսեփյանը, Սարգիս Հայկունին, Խաչիկ Դադյանը, Բագրատ Խալաթյանը, Երվանդ Լալայանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Արամ Ղանալանյանը և շատ ուրիշներ, Հայաստանի զանազան կողմերում գրի առան նորանոր պատումներ[25]: Էպոսը անվանվել է նաև «Սասնա ծռեր», «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Դավիթ և Մհեր», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» և այլն: «Գրոց ու բրոցը», «Մանանան» և «Համով-Հոտովը» հայկական հեքիաթների, երգերի ու տաղերի ընտիր ժողովածուներն են: «Սասնա ծռեր»-ում գործում է վիպական հերոսների չորս հիմնական սերունդ՝ Սանասար և Բաղդասար (I), որոնք պատումներում հանդես են գալիս նաև տարբեր անուններով՝ Աբամելիք և Սանասար, Սանասար և Ասլամելիք: Մեծ կամ Ջոջ Մհեր, երբեմն՝ Առյուծաձև Մհեր (II), Դավիթ՝ Թլոր, Թլոլ, Թլվատ, Թառլան մականուններով (III), Փոքր կամ Պստիկ Մհեր (IV): Հերոսների այս չորս սերունդներն իրար հետ կապված են ուղղահայաց՝ հայր-որդի ազգակցական կապերով: Յուրաքանչյուր սերունդ ունի վիպական իր առանձին պատմությունը, որը վիպասացներն անվանել են «ճյուղ»՝ սերունդ իմաստով: «Սասնա ծռերի» ամենաընդարձակ, ամբողջական և կենտրոնական մասը Դավթի ճյուղն է, որով և հաճախ էպոսն է անվանվում:

1876 թ. Կ. Պոլսում լույս է տեսել Սրվանձտյանցի երրորդ ժողովածուն՝ «Մանանա» խորագրով, որտեղ առանձնապես արժեքավոր են ժողովրդական հեքիաթներն ու երգերը: Սրվանձտյանցը այստեղ ներկայացել է ոչ միայն դրանց հայտնաբերող ու հրատարակիչ, այլև իբրև դրանց առաջին գնահատողն ու բնութագրողը:

Ուշագրավ է նաև նրա «Համով-Հոտով» ժողովածուն, որը լույս է տեսել 1884 թ. Կ. Պոլսում: Այն բաղկացած է երեք տարբեր մասերից, որոնց հեղինակը կոչել է «Ճաշակ»: Այստեղ հարուստ

[25] Սասնա ծռեր, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պետ. հրատ., հ. Ա, 1936, հ. Բ, մ. Ա, 1944, մ. Բ, 1951:

տեղեկություններ կան Վան-Վասպուրականի, Մանազկերտի, Բաղեշի և Մուշ-Բուլանխի գավառների, քաղաքների ու գյուղերի, բնության ու բնակչության տեղագրական, ազգագրական բնութագրության վերաբերյալ:

Մինչև Գ. Սրվանձտյանցի աշխատությունների հրապարակումը հայ բանագետներն ու ազգագրագետները աղոտ պատկերացում ունեին իրենց ժողովրդի բառ ու բանի, հավատալիքների, վարք ու բարքի, ծեսերի, սովորությունների, հայրենի բնաշխարհի առանձնահատկությունների վերաբերյալ: Այդ նյութերը մեզանում մեծ մասամբ մնում էին, Թումանյանի խոսքով ասած, «ավերակների ու հողի տակ, իրենց պարծանքները՝ մոռացության ու անհայտության մեջ» [26]:

Գ. Սրվանձտյանցը առաջիններից մեկն էր, որն իր հայտնաբերած հարուստ նյութերով մեծապես նպաստեց հայ բանագիտության, ազգագրության, գրականության ու հնագիտության զարգացմանը: Նրա աշխատությունները չէին սահմանափակվում միայն ճանաչողական նշանակությամբ, նա նաև իսկական գեղագետ էր, գրող ու բանաստեղծ: Հովհաննես Թումանյանը նրան համարել է «Մեր անուշ, հայրենախոս բանաստեղծը», իսկ նրա գրքերն էլ համեմատել է բուրումնալի ծաղկեփնջերի հետ: «Մի Աբովյան կամ մի Սրվանձտյանց,– գրել է նա,– կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, որոնք ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»[27]:

«Մեր գրականության մեջ,– գրել է Ռաֆֆին,– ոչ ոք Սրվանձտյանցի չափ չի ուսումնասիրել և չէ հավաքել մեր ժողովրդական ավանդությունները, սովորությունները, մեր նախապաշարմունքները... նրա չորս ամենահետաքրքիր գրքերը խիստ հարուստ գանձ են մեր հնագետների հետազոտության համար»[28]: Սրվանձտյանցի ու նրա երկերի մասին նույն ձևով են արտահայտվել Ղևոնդ Ալիշանը, Գաբրիել Պատկանյանը, Ծերենցը, Սեդրակ Մանդինյանը, Մանուկ Աբեղյանը և ուրիշներ, ժամանակի պարբերական մամուլը:

Գ. Սրվանձտյանցի ամենամեծ ծառայությունը հայ ազգագրության ու բանահյուսության բնագավառում բանահավաքչու-

[26] ***Թումանյան Հ.,*** Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 146-147:
[27] Նույն տեղում, էջ 377-378:
[28] «Մշակ», 1883, № 143:

թյան գործի կազմակերպումն էր: «Գրոց ու բրոցի» և «Մանանայի» հրապարակ գալը մեծ աշխուժություն մտցրեց բանահավաքչության մեջ: Բանահավաքները, որ մինչ այդ մամուլում փորձում էին տեղ հատկացնել ազգային բանավոր գրականությանն ու ազգագրությանը, այժմ սկսեցին գրքեր հրատարակել, որոնք ավելի լայն հնարավորություններ էին ընձեռում հեղինակներին: Այդ հեղինակներից շատերը նույնիսկ կենդանի շփումների մեջ էին Սրվանձտյանցի հետ, որը նրանց խրախուսում և ուղղություն էր տալիս: Հենց Սրվանձտյանցի կենդանության տարիներին մեկը մյուսի ետևից հրապարակ եկան բազմաթիվ բանահավաքներ, որոնք իրենց համեստ կարողություններին համապատասխան սկսեցին նկարագրել հայրենի բնակավայրերն ու գավառները: Այդպիսիններից հիշատակենք Արիստակես վ. Սեդրակյանին[29], Արիստակես վ. Սարգսյանցին[30], Պետրոս ծ. Կալհոկեցուն[31], Գեորգ գ. Շերենցին[32], Մանուել Կ. Միրախորյանին[33], Հակոբ Հ. Ալլահ-

[29] Տե՛ս ***Արիստակես վարդապետ Սեդրակյան***, Քնար Մշեցվոց և վանեցվոց (մինչև այժմ չհրատարակված երգեր), Վաղարշապատ, 1874: Նույնի՝ Ամուսնական խնդիրներ, Մոսկվա, 1891:

[30] Տե՛ս ***Արիստակես վարդապետ Սարգսյանց***, Պանդուխտ վանեցին, նամակներ, երգեր, առածներ, առեղծվածներ, Կ. Պոլիս, 1875:

[31] Տե՛ս ***Պետրոս ծ. վարդապետ Կալհոկեցի***, Ասիական ճանապարհորդություն ի հայրենիս, Կ. Պոլիս, 1881: Ուղևորը եղել ու համառոտ նկարագրել է Հայաստանի խոշոր գետերը՝ Եփրատ, Տիգրիս, Արաքս և մյուսներ, ներկայացրել հայկական վանքերը և այլն:

[32] Տե՛ս ***Շերենց Գեորգ,*** Վանա սազ. հավաքածույք Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների (տեղական բարբառով), առաջին մաս, Թիֆլիս, 1885, Բ մաս, Թիֆլիս, 1899:

[33] ***Մանուել Կ. Միրախորյան,*** Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի. տեղագրությունք սարեն և ձորեն, հնեն և նորեն, պիտանի գիտնոց, մասն Ա, Կ.Պոլիս, 1884: Մասն Բ, Կ. Պոլիս, 1885: Մասն Գ, Կ. Պոլիս, 1885: Գ. Սրվանձտյանցի նման հաղթահարելով բազում դժվարություններ՝ Միրախորյանը շրջել է Հայաստանի բազմաթիվ գավառները և գրանցումները հրատարակել է ոչ միայն իբրև աշխարհագրական, պատմական և ազգագրական շրջանակների, այլև իբրև դպրոցական ընթերցանության գիրք: Ուղևորությունն սկսել է Տրապիզոնից, անցել Բասյան գավառով, շրջել Վանա լճի ավազանի, Աղձնիքի և Տուրուբերանի գավառները և ավարտել Բարձր Հայքով: Հայրենագիտական բազմապիսի նյութերից բացի՝ ուղևորությունում տեղ են գտել ազգագրական թանկարժեք տվյալներ, որոնց մեջ հատկապես կարևորվում է Կարնո նահանգի «Հայ գյուղացվոց տարեկան կենաց չորս եղանակի նկարագիրը» (Գ, 177-217):

վերդյանին[34], Հովհաննես Նազարյանցին[35], Երեմիա եպս. Տեր-Սարգսյանցին[36], Մ. Խրիմյանին[37], Ճուլարտյանին[38], Վ. վ. Տեր-Մինասյանին[39], Հ. Կ. Ճանիկյանին[40], Գևորգ Տեր-Աղեքսանդրյանին[41]...:

Գ. Սրվանձտյանցի կյանքի ու գործունեության վերաբերյալ

---

[34] Տե՛ս ***Ալլահվերդյան Հ. Հ.,*** Ուլնիա կամ Զեյթուն. լեռնային ավան ի Կիլիկիա. նկարագիր տեղական, կենսական, բանասիրական և լեզվաբանական, Կ. Պոլիս, 1884: Առաջին մասում ներկայացված են Զեյթունի դիրքը, բնակչության թիվը, բնակավայրի կառուցվածքը, եկեղեցիները, վանքերն ու դպրոցները, երկրորդ մասում՝ զգեստները, կահկարասին, կերակուրները, երկրամշակությունը, որսորդությունը, ամուսնության ու հարսանեկան սովորությունները, իսկ երրորդում՝ ավելորդապաշտությունները ու բանահյուսության մանր ժանրերը:

[35] Տե՛ս ***Նազարյանց Հ.,*** Նախապաշարմունք, հ. I, Տփխիս, 1878, նույնի՝ Անեկդոտներ, հ. I, 1876, հ. II, 1877:

[36] ***Երեմիա եպիսկոպոս Տեր-Սարգսյանց*** (Տևկանց), Տոհմային հիշատակարան, գիրք Ա և Բ, Վարագ, 1881: Այս աշխատությունը տակավին լույս չի տեսել, ձեռագիրը գտնվում է Մատենադարանում (№4184): Տևկանցի աշխատությունն ազգագրական երևույթների հարուստ հատոր է:

[37] Տե՛ս Պապիկ և Թոռնիկ. գրեց Հայոց Հայրիկ գյուղական ժողովրդի թոռնիկներու համար,- Էջմիածին, 1894: Մ. Խրիմյանը ակնհայտորեն կրել է իր աշակերտի՝ Գ. Սրվանձտյանցի գրական ազդեցությունը. նա իր մի շարք գործերը շարադրել է սրվանձտյանական ոճով: Նրա ամենակարևոր ազգագրական գործը «Պապիկ և Թոռնիկն» է, որում հեղինակը բավական հանգամանորեն նկարագրել է երկրագործի տարեկան աշխատանքները և հաճախ առաջ է քաշել հողամշակման տեխնիկայի զարգացման հարցերը, ոռոգման համակարգի բարելավումը և այլն:

[38] Տե՛ս ***Ճուլարտյան Սիմոն վարդապետ,*** Առածք ազգայինք, Վենետիկ, 1880:

[39] Տե՛ս Անգիր դպրություն և առակք. Տեր-Մինասյան Վահան վարդապետ. հ. Ա., Կ. Պոլիս, 1893. հ. Բ, 1893: Սեփական գրած առակներից բացի՝ նկարագրել է նաև հայկական ժողովրդական տոները: Բարեկենդանի և աբեղաթոզի սովորությունների մասին նյութեր է տպագրել «Մասիս» շաբաթաթերթում (տես «Մասիս», 1901, էջ 86-88):

[40] ***Ճանիկյան Հ. Կ.,*** Հնություն Ակնա, Թիֆլիս, 1895: Ստվար հատոր է, որը հարուստ ազգագրական ու բանահյուսական նյութեր է պարունակում: Նախաբանում խոսում է այն մասին, թե այս գործը պատրաստել է 1880-ական թթ.՝ ստանալով Ակնի առաջնորդի՝ Գ. Սրվանձտյանցի հորդորները:

[41] ***Տեր-Աղեքսանդրյան Գևորգ,*** Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, մասն Ա, Բանաստեղծություն, Թիֆլիս, 1886: Ստվար հատոր է, որում տեղ են գտել բանահյուսության մանր ժանրերը, հեքիաթները և ազգագրական որոշ բացատրություններ: Հեղինակը խոստովանում է, որ ինքը կրել է Խ. Աբովյանի և Գ. Ախվերդյանի ազդեցությունը, իսկ որպես ուղեցույց հաշվի է առել Գ. Սրվանձտյանցի և մյուսների գործերը:

ստեղծվել է հարուստ գրական, գիտական ժառանգություն, որոնցից առանձնացնում ենք հետևյալները՝

Շերենց Գ., Գ. Սրվանձտյանցի մահվան 10-ամյակի առթիվ // «Ազգագրական հանդէս», 1902, գ. IX, էջ 272-281:

Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978:

Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, Երևան, 1982:

Հայկունի, Գ. Սրվանձտյանցի մահվան 10-ամյակի առթիվ // «Ազգագրական հանդէս», 1902, գ. IX, էջ 272-281:

Երեմյան Հ. Ս., Գ. Սրվանձտյանցի կյանքն ու գրական գործունեությունը // «Բազմավեպ», 1912, № 1, էջ 4-12, № 2, էջ 50-53:

Շահնազարյան Ա., Գ. Սրվանձտյանցի մահվան 20-ամյակի առթիվ, «Ազգագրական հանդէս», 1913, գ. XXIV, էջ 112-116, գ. XXV, էջ 85-107:

Բդոյան Վ., Հայրենիքը և հայրենասիրությունը Գարեգին Սրվանձտյանցի երկերում // «Էջմիածին» ամսագիր, 1944, փետրվար-մարտ, էջ 38-46, ապրիլ-մայիս, էջ 27-36:

Բդոյան Վ., Գ. Սրվանձտյանցը որպես ազգագրագետ // «Էջմիածին», 1946, № 7-8, էջ 37-42:

Աճառյան Հ., Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանց, «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, 1964, էջ 155-158:

Մելիք-Փաշայան Կ., Հայ մշակույթի ականավոր գործիչը // «Երեկոյան Երևան», 1965, № 366:

Նազինյան Ա., Հայ բանահյուսության և ազգագրության վաստակավոր մշակը // «Սովետական Հայաստան», 1965, № 306:

Նազինյան Ա., Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, էջ 7-26:

Կոստանդյան Է. Ա., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Երևան, 1979:

2. ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹԹ.

XIX դարի 70-80-ական թվականները հայ ազգագրության պատմության մեջ բնութագրվում են որպես տարերային բանահավաքչության հաղթահարման, ազգագրական հարցարանների ստեղծման, հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում հավաքչական բուռն գործունեության ծավալման պարբերաշրջան: Այս շրջափուլում են ստեղծվել հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարանները: Հայագիտության մեջ կան շրջանառվող կարծիքներ, որոնց համաձայն՝ Մ. Միանսարյանցի և Ա. և Ս. Երիցյանների ուսումնասիրությունները համարվում են որ հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարանները[1]: Մ. Միանսարյանցի (1830-1880) ազգային, մշակութային, լուսավորական գաղափարները ամփոփված են նրա «Մտածութիւնք ազգային լուսավորութեան մասին» հրապարակախոսական հոդվածում: Այստեղ նա մի ծրագիր-հարցարան է ներկայացրել հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի բազմաբնույթ կողմերից միայն մտավոր, մշակութային, բարոյահոգեբանական առանձնահատկությունների համալիր հետազոտության առումով: Հարցերի պատասխանները, ըստ Մ. Միանսարյանցի, հնարավորություն կընձեռեն հետազոտողներին ազգային վերածննդի, լուսավորության, քաղաքակրթության, հայ ժողովրդի համախումբ կեցության առաջնահերթ խնդիրները քննելու և վերլուծելու մշակութաբանական առավել լայն տեսաղաշտում: Այն չի կարելի «Ազգագրական հարցարան» դիտարկել ազգագրական երևույթների սահմանափակ թվով հարցերի ընդգրկման պատճառով: Մ. Միանսարյանցի «Քնար Հայկական» (1868) ժողովածուն իր բնագրագիտական որոշակի սկզբունքներով թերևս առաջին լուրջ փորձերից մեկն է, որի ուղեն-

[1] Տե՛ս ***Վարդանյան Ս.,*** Միքայել Միանսարյանց: Կյանքն ու գործը, Երևան, 2002, էջ 21, ***Варданян Л.,*** Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005, с. 307, ***Վարդումյան Դ.,*** Ազգագրություն // Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 926:

չած բազմաթիվ դրույթներ նպաստել են XIX դարի երկրորդ կեսին նոր սկզբնավորվող հայ բանագիտության ձևավորմանն ու զարգացմանը: Նույնը կարելի է ասել Ալեքսանդր և Սրբուհի Երիցյանների ուսումնասիրությունների վերաբերյալ: Ա. Երիցյանը հրատարակեց «Ընդհանուր հարցեր հայոց բանանց և սովորութաց» (Թիֆլիս, 1874), իսկ Ս. Երիցյանը՝ «Տոմար ընտանեկան» (Թիֆլիս, 1884), սակայն այս աշխատանքներն ընդգրկում են ազգագրության սոսկ սահմանափակ բնագավառներ՝ ընտանիք, իրավական սովորույթներ, վիճակագրական տվյալներ և այլն, որոնք չունեցան գործնական կիրառություն: Դրանք չդարձան դաշտային ազգագրական նյութերի գրառման ծրագիր-հարցարաններ:

Գարեգին Սրվանձտյանց (1840-1892). ազգագրական և բանահավաքչական գործունեությունը: Հայ ազգագրության մեջ XIX դարի 60-80-ական թվականները նշանավորվում են Գ. Սրվանձտյանցի բեղմնավոր գործունեությամբ[2]: Ծնվել է 1840 թ. Վա-

[2] Տե՛ս ***Հայկունի***, Գ. Սրվանձտյանցի մահվան 10-ամյակի առթիվ //«Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 272-281, ***Երեմյան Հ. Ս.***, Գ. Սրվանձտյանցի կյանքն ու գրական գործունեությունը // «Բազմավէպ», 1912, № 1, էջ 4-12, № 2, էջ 50-53, ***Շահնազարյան Ա.***, Գարեգին Սրվանձտյանցի մահվան 20-ամյակի առթիվ // ԱՀ, գ. XXIV, Թիֆլիս, 1913, էջ 112-116, գ. XXV, էջ 85-107, ***Բդոյան Վ.***, Հայրենիքը և հայրենասիրությունը Գարեգին Սրվանձտյանցի երկերում // «Էջմիածին» ամսագիր, 1944, փետրվար-մարտ, էջ 38-46, ապրիլ-մայիս, էջ 27-36, ***նույնի***՝ Գարեգին Սրվանձտյանցը որպես ազգագրագետ // «Էջմիածին ամսագիր», 1946, թիվ 7-8, էջ 37-42, ***Անասյան Հ.***, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանց // «Էջմիածին ամսագիր», 1950, մայիս-հունիս, էջ 29-32, ***Ղանալանյան Ա.***, Գարեգին Սրվանձտյանց // «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, 1964, էջ 555-588, նույնի՝ Գարեգին Սրվանձտյանց // Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, էջ 7-26, ***Կոստանդյան Է.***, Գարեգին Սրվանձտյանց, Կյանքը և գործունեությունը, Երևան, 1979, ***Նահապետյան Ռ.***, Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը // «Էջմիածին» ամսագիր, 2007, ժ, էջ 110-122, նույնի՝ Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական գործունեությունը // Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրման 85-ամյակին նվիրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2007 թ. նոյեմբերի 7-9), I պրակ, ՀՊՄՀ, Երևան, 2008, էջ 217-219:

նում, վախճանվել է 1892 թ. Կ. Պոլսում: Նախնական կրթությունը ստացել է Վանում, ապա ավարտել է Վարագա վանքի ժառանգավորաց դպրոցը, եղել է տեղի ուսուցիչ, «Արծուի Վասպուրական» թերթի փոխխմբագիր, 1862 թ.՝ Մշո Ս. Կարապետ վանքին կից ժառանգավորաց վարժարանի տնօրեն-ուսուցիչ, 1863-1865 թթ.՝ «Լրատար Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթի խմբագիր, 1866 թ. Կ. Պոլսում հրատարակել է «Նոր ընթերցարան» դասագիրքը, նրա նախաձեռնությամբ բացվել են դպրոցներ: 1867 թ. Կարինում ձեռնադրվել է վարդապետ, 1867-1869 թթ. ստանձնել է Կարինի վարժարանների լիազոր-տեսչի պաշտոնը, 1869 թ. եղել է Մշո Ս. Կարապետ վանքի վանահոր փոխանորդ, 1872 թ. մասնակցել է Վանի «Միություն ի փրկություն» ազգային-ազատագրական խմբակի ստեղծմանը: Կ. Պոլսի պատրիարքի կոնդակով եղել է Արևմտյան Հայաստանում՝ Տիգրանակերտ, Սեբաստիա, Մարզվան, Թոքատ, Կամախ, Երզնկա, Դերջան, Կարին, Արաբկիր, Բաղեշ, Վան, Մուշ և այլ հայաբնակ վայրերում: 1879-1881 թ. եղել է Վանի հոգևոր առաջնորդի փոխանորդ, մասնակցել է «Սև խաչ» հայրենասիրական գաղտնի կազմակերպության աշխատանքներին, ապա վիճակավոր առաջնորդի պաշտոն է վարել Բաղեշում, Խարբերդում, 1886 թ. Էջմիածնում օծվել է եպիսկոպոս, նշանակվել է Տրապիզոնի, ապա՝ Ս. Կարապետի վանքի վանահայր, հետո պաշտոնազրկվել է և առնվել իշխանությունների հսկողության տակ: Ազգագրության ու հնագիտության բնագավառում կատարած բեղմնավոր գործունեության համար ընտրվել է Պետերբուրգի կայսերական հնագիտական ակադեմիայի պատվավոր անդամ: Մկրտիչ Խրիմյանի (Հայոց Հայրիկ) հետ համագործակցությամբ և հոգևորականի կոչման բերումով նա տասնամյակներ ի վեր շրջեց հատկապես Արևմտյան Հայաստանում ու ստեղծեց արժեքավոր մենագրություններ՝ առաջնորդվելով ժամանակի գործիչներին հատուկ՝ «Ծանիր զքեզ» խորիմաստ նշանաբանով: 1860-1861 թթ.՝ «Արծուի Վասպուրական» ամսաթերթի փոխխմբագիր եղած ժամանակ, որպես նվիրակ և քարոզիչ Մ. Խրիմյանի հետ ճանապարհորդել է Արևելյան Հայաստանի գավառներում, որի ընթացքում գրել է մի շարք ազգագրական և հրապարակախոսական հոդվածներ՝ «Երևան քաղաք», «Տփղիս քաղաք», «Սյունյաց աշխարհ և Շուշի

քաղաք» վերտառություններով: Վերջիններս հագեցած էին ազգագրական ուշագրավ տվյալներով: Արժանահիշատակ են հատկապես կրոնական ծեսերի, Թիֆլիսի հայ համքարությունների օրենքների, պատանեկան խաղերի, արհեստների ու առևտրի, տների կառուցվածքի, հայ, ռուս, պարսիկ և այլ ժողովուրդների կյանքից վերցված դրվագները: Ազգագրական բնույթի հոդվածներ է տպագրել նաև իր հրատարակած «Լրատար Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթում (1863-1865): Գ. Սրվանձտյանցը այդ տարեբայնությունից շատ շուտ ազատվեց, երբ հրապարակ հանեց իր հռչակավոր «Գրոց ու բրոց» աշխատությունը:

Գ. Սրվանձտյանցը իր նախորդներից տարբերվում էր արդեն որպես ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման բուռն վերելքի նախաձեռնող ու կազմակերպիչ, որպես ազգագրական հարցարանի ստեղծման նախաձեռնող: Իր հայտնաբերած հայոց ազգային էպոսն էլ հենց միտք հղացրեց ազգագրական և բանահյուսական նյութերի գրանցման սկզբնապես տարերային, ապա համակարգված նախնական հարցարան հիմնելու, որպիսին հանդիսացավ նրա «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գիրքը (Կ. Պոլիս, 1874): Վերջինս նրա կարևորագույն գործն էր, սովորական գիրք չէր, այլ, ինչպես դիպուկ նկատել է ազգագրագետ Վ. Բդոյանը, երկու կարևորագույն հայտնագործությունների ժողովածու է[3]:

«Գրոց ու բրոցը» գիտական հանրությանը ներկայացվեց որպես նախադեպը չունեցող ծրագիր-հարցարան: Հանգամանքների բերումով Գ. Սրվանձտյանցը ճանապարհորդել ու շրջագայել է Արևմտյան Հայաստանի մեծ մասում և նկարագրել հայ ժողովրդի նյութական, կենցաղային, մտավոր-լուսավորական, սոցիալական ու քաղաքական վիճակը: 1870-ական թվականներից հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում նա ծավալեց հավաքչական բուռն գործունեություն՝ ընդգրկելով պատմական Հայաստանի ազգագրական հիմնական շրջանները: «Գրոց ու բրոց» յուրօրինակ ծրագիրն իր «կառուցվածքով ու հարցերի առաջադրմամբ, իհարկե, միանգամայն տարբերվում էր Եվրոպայում և

[3] ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 16-17:

այլուր կազմվող ծրագրերից, որովհետև հեղինակն անծանոթ էր դրանց: Նա իր ծրագիրը, դարի քաղաքական ու մշակութային պահանջներին համաձայն, առաջադրել է բնատուր խելքի ու տաղանդի շնորհիվ: Այդ ծրագիրը՝ որպես հայ իրականության մեջ առաջին փորձ, ինչ խոսք, պարզ էր ու հասարակ, նախնական: Որպես առաջին, խիստ նախնական փորձ, հարցերը համակարգված, թեմատիկ խմբավորման ենթարկված ու համարակալված չէին, դրանք շաղկապված էին պատասխան նկարագրերին: «Գրոց ու բրոցն» ընդգրկում էր հայ ազգագրության գրեթե բոլոր հիմնական խնդիրները՝ տեղագրություն, բնության նկարագրություն, տնտեսական կենցաղ (գյուղատնտեսական գործիքներ, փոխադրամիջոցներ, աշխատանքային գործընթացներ), զբաղմունքներ (կաթնամշակություն, այգեգործություն, մեղվապահություն, արհեստներ, ժողովրդական բժշկություն), նյութական մշակույթ (տան կահկարասի, տարազ և այլն), ընտանեկան և հասարակական կենցաղ (ընտանիք, ամուսնություն, մանկան ծնունդ, հուղարկավորություն), հոգևոր մշակույթ (ժողովրդական հավատք, պաշտամունք և այլն): Այն հորդոր էր՝ ուղղված գավառական մտավորականությանը՝ զբաղվելու ազգագրությամբ և բանահավաքչությամբ: Թուրքական հարստահարությունների և քաղաքական հալածանքների դեմ մաքառելու տարիներին Սրվանձտյանցը պարզապես հայտնագործեց ազգագրությունն ու բանահյուսությունը նաև որպես հոգևոր զենք և դրանով ազգային զարթոնքի մի նոր խթան գտավ: «Ծանիր զքեզ»-ի գաղափարը նստած էր նշանավոր գործչի յուրաքանչյուր տողում: Այն լեցուն էր հայրենաբաղձ Սրվանձտյանցի մեղրանուշ խոսքերով, որոնք գործածության արժանացան հետևորդների կողմից: Այդ են վկայում ժամանակակից գրական ու գիտական նշանավոր գործիչները, որոնք խոստովանել են «Գրոց ու բրոցի» թողած ազդեցությունն իրենց վրա: Այդուհանդերձ, թեև ընթերցողները և գիտնականները ընդունել են «Գրոց ու բրոցի» բարերար ու վարակիչ ազդեցությունը, բայց չեն նկատել, որ հեղինակն այն ներկայացրել է իբրև ծրագիր: Չեն նկատել նույնիսկ ակնհայտ փաստերը, որ գրանցված են «Գրոց ու բրոցի» էջերում: Ուստի հաստատելու համար, որ գրքի ամբողջ կեսը հայ ազգագրության ծրագիր է եղել, բերենք հեղինակի հետևյալ խոսքերը. «Եվ որովհետև այս իմ գրական գործս իբրև հուշարար և ծրագիր կուզեմ ներկայացնել, բավականին ավելին չեմ ուզեր

երկարել: ... Ուր տարավ և ուր բերավ զիս այս նկարագիրը, զոր միայն իբր ծրագիր կը գրեմ: Դառնամ պիտի, դադրիմ պիտի, քանզի անսահման են այսպիսի վայրերը և անսպառ՝ անոնց վրա խոսվածներն ու երևցածները»[4]: Կամ՝ «Իմ փափագս եղած է, որ բանասերք ուշադրություն դարձնեն Հայաստանի մեջ բնակած հայոց ժողովրդական լեզվաց և այն լեզուներով հրատարակեն վեպեր, տրամախոսություններ և այլն. և այսպիսով սիրելի և ծանոթ կացուցանեն զանոնք գրագիտաց...»[5]: Կարևոր է հիշել, որ հեղինակը «Գրոց ու բրոցի» տիտղոսաթերթի վրա դրոշմել է՝ «Ծրագրեաց Գ. Վ. Սրվանձտեանց»: Մակագրության այս ձևը չի կրկնվել հեղինակի մյուս գրքերից և ոչ մեկի վրա[6]:

Ազգագրագետ Ա. Պետրոսյանը «Հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարանի խնդրի շուրջ»[7] հոդվածում ջանք չի խնայում Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը» ազգագրական նյութերի գրառման ծրագիր-հարցարան լինելը մերժելու համար, սակայն, բերված փաստերը համադրելով՝ ընթերցողը հաճախ հակառակ կարծիքի է հանգում, մանավանդ որ հեղինակը ևս գրում է. «Ակնհայտ է, որ Գ. Սրվանձտյանցը «Գրոց ու բրոցի» առաջին մասը դիտում է որպես ծրագիր՝ այն առաջարկելով ուրիշներին ևս»[8]: Այնուամենայնիվ Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը» չկարողացավ կատարել այն դերը, ինչ հետագայում վիճակվեց կատարել Գ. Խալաթյանցի հարցարանին:

Գ. Սրվանձտյանցի երկրորդ մեծագույն ծառայությունը «Սասնա ծռեր» դյուցազնավեպի հայտնագործումը, գրառումը և հրապարակումն էր: 1873 թ. Գ. Սրվանձտյանցը ժողովրդագրական նյութեր գրառելիս Մշո Առնիստ գյուղի երեսփոխան Կրպեից (Կարապետ) գրի առավ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»

---

[4] ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ. 1, էջ 79:

[5] Նույն տեղում, էջ 116:

[6] Մանրամասն տես ***Նահապետյան Ռ.,*** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը, էջ 110-122, նույնի՝ Գ. Սրվանձտյանցի ազգագրական գործունեությունը, էջ 217-219, նույնի՝ Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, թիվ 3, էջ 132-148:

[7] ***Պետրոսյան Ա.,*** Հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարանի խնդրի շուրջ // ՊԲՀ, 2008, թիվ 2 (178), էջ 230-243:

[8] Նույն տեղում, էջ 232:

դյուցազնավեպը, որը, իրավամբ, ճանաչվեց մեր ազգային հերոսական էպոսը: Հայ մշակույթի դարավոր պատմության մեջ կատարված մեծագույն հայտնագործումներից մեկն էր դա, որի համար մենք պարտական ենք Գ. Սրվանձտյանցի տարիների ուշադիր հետամուտներին և գործադրած անձանձիր ջանքերին: Սրվանձտյանցի պատումն ունի բացառիկ նշանակություն մեր մշակույթի պատմության մեջ: Այդ պատումին է առնչվում, փաստորեն, ոչ միայն հայ ժողովրդական վեպի հայտնագործման կարևոր փաստը, այլև հերքումը ոմանց այն թյուրըմբռնման, ըստ որի՝ հայ ժողովուրդն իբր չի ունեցել ազգային վեպ: Սրվանձտյանցի այս հայտնագործության արժեքը, սակայն, չի սահմանափակվում միայն դրանով: Այն աչքի է ընկնում նաև իր ամբողջականությամբ, բովանդակության ու ձևի արժանիքներով, գրառման հարազատությամբ[9]: Այն մինչ օրս գրառված ավելի քան 160 տարբերակներից ամենակատարյալն է ու անփոխարինելին: Դա հրաշալիք հայտնագործություն էր:

Այսպիսով, բացառիկ էին «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գիրքը (Կ. Պոլիս, 1874) և ազգագրագետի դերը հայ ազգագրության և բանագիտության ասպարեզում ազգագրության բանահավաքչության գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու առումով:

«Գրոց ու բրոցին» հետևեցին Սրվանձտյանցի «Հնոց-նորոց» (1874), «Մանանա» (1876), Թորոս Աղբար»՝ երկու հատորով (1879, 1884), «Համով-Հոտով» (1884) ժողովածուները: Մեծ էր դրանց դերը ազգագրությունը և բանագիտությունը գիտության վերածելու, բանահավաք կադրեր պատրաստելու գործում: Այդ աշխատությունները ծառայեցին որպես նպատակային բանահավաքչության առաջին օրինակ, որին հետևելու էր գավառաբնակ մտավորականության մի ամբողջ սերունդ:

«Համով-Հոտովի» զգալի մասը Վան-Վասպուրականի, Մուշ-Բուլանըխի և Արևմտյան Հայաստանի ուրիշ գավառների, քաղաքների ու գյուղերի, բնաշխարհի լեռների, ձորերի, անտառների, դաշտերի, լճերի, կղզիների, գետերի, աղբյուրների տեղադրու-

[9] Տե՛ս ***Ղանալանյան Ա.,*** Գարեգին Սրվանձտյանց // Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, էջ 12-13:

թյան, բնակչության ազգագրական սովորույթների, շրջապատի բերդերի, վանքերի, ավանների ու շենների նկարագրությունն է: Այստեղ համապատասխան տվյալներ կարելի է գտնել Վան քաղաքի ու շրջակայքի, Բերկրիի, Խոշաբի, Աղբակի, Դատվանի, Նանըկանցի, Գոմքի, Կարմրակի, Նարեկի, Մոխրաբերդի, Ախավանցի, Արտոսի, Ոստանի, Առտերի, Ախթամարի, Շատախի, Մոկսի, Սպարկերտի, Կարկառի, Խլաթի, Արճեշի, Մանազկերտի, Խնուսի, Բաղեշի, Մոտկանի, Տատիկի և շատ ուրիշ վայրերի վերաբերյալ[10]: Այն նաև ընդգրկում է բանահյուսական տարբեր ժանրի գրառված նյութեր:

1876 թ. «Գրոց ու բրոցի» երկրպագուները ընծա ստացան Գ. Սրվանձտյանից մի նոր ժողովածու՝ «Մանանա» խորհրդավոր խորագրով, որը մոտ երկու և կես անգամ ավելի մեծ ծավալ ուներ նախորդից[11]: Սա ազգագրական տեսանկյունից մի նոր երևույթ էր և՛ քանակի, և՛ որակի առումով: Գիրքը բաղկացած է մի քանի մասից. ա) «Հայրենեաց համն ու հոտը», որտեղ զետեղել է ազգագրական նյութերի մեծ մասը, բ) «Հայրենեաց վեպք և զրոյցք» որտեղ ընդգրկված են հեքիաթներն ու առակները, գ) «Երգք և նվագք հայրենեաց», որտեղ տեղ են գտել ձեռագրերից քաղված միջնադարյան բանաստեղծների մի շարք բանաստեղծություններ, ապա՝ աշխարհիկ ժողովրդական երգեր, այնուհետև՝ հանելուկներ, դյութանք, բժշկարան և այլն:

Գրքում բերված են Վանի Այգեստան թաղամասի տեղագրությունը, բնակիչների կյանքի հանգամանքները, ընտանեկան սովորությունները, մանկական խաղերը, ժողովրդական նախապաշարումները, ծածկագրերի, խաղերի, բարբառային անունները և այլն: Այս երկում նա հատկապես անդրադարձել է Վասպուրականի ժողովրդական երգերին, վիպական զրույցներին, հեքիաթներին: Նրա՝ հայկական հեքիաթներին տված այն բնորոշումը, թե բոլոր հեքիաթներն ունեն որոշակի ուղղվածություն և հաջող ավարտ, այսօր էլ միանգամայն ընդունելի են: Ըստ Սրվանձտյանցի՝ ժողովրդական երգն ու երաժշտությունը հայերի մեջ այնքան

[10] Տե՛ս ***Ղանալանյան Ա.,*** Գարեգին Սրվանձտյանց // Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, էջ 365-586:
[11] Տե՛ս նույն տեղում, էջ 117-364:

հին են, որքան և ինքը՝ ժողովուրդը:

«Մանանան» Վասպուրականի վերաբերյալ բանահյուսական-ազգագրական ուշագրավ հետազոտություն է, որը «Գրոց ու բրոցի» նման մեծ հետաքրքրություն առաջացրեց հայ իրականության մեջ: Սրվանձտյանցը քաղել է նյութը ժողովրդի բանավոր լեզվից՝ հարազատ մնալով տվյալ բարբառին, մշակել է այն ու դրել գիտական շրջանառության մեջ: Իր այս գործով Գարեգին Սրվանձտյանցը մեծապես հարստացրեց հայ գրական անդաստանը:

1878 թ. Կ. Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ երեք վարդապետ գործուղվեցին արևմտահայ գավառները՝ նրա բնակչության դժգոհության առիթները, կարիքները, ժողովրդագրական վիճակագրությունը տեղեկագրելու՝ սուլթանական թուրքական պետությանը ներկայացնելու նպատակով: Այդ վարդապետներից մեկը Գ. Սրվանձտյանցն էր՝ իր ժողովրդի նիստուկացին քաջատեղյակ մի հայրենասեր մտավորական: Նրա ուղևորությունը տևեց երկու տարի՝ 1878-1880 թթ., որի ընթացքում շատ ավելի մոտիկից շփվեց հարազատ ժողովրդի հետ, ավելի լավ ճանաչեց նրա հոգևոր կարողությունները: Գ. Սրվանձտյանցը շրջագայում է հայաբնակ բազմաթիվ վայրերում՝ Տիգրանակերտ, Սեբաստիա, Մարզվան, Ամասիա, Թոքատ, Պաֆրա, Սինոպ, Տիվրիկ, Ակն, Կամախ, Երզնկա, Դերջան, Կարին, Արաբկիր, Բաղեշ, Վան, Մուշ: Իր տպավորությունները ամփոփում է «Թորոս Աղբար» երկում[12]: Գրքում տրված է այդ վայրերի և տեղի հայ բնակչության կյանքի ու կենցաղի ճշմարտացի պատվերը՝ համապատասխան վիճակագրական տվյալներով, վերարտադրված է նրանց անցյալը, ներկան, տնտեսական, քաղաքական կացությունը: Յուրաքանչյուր վայրի համառոտ նկարագրին զուգահեռ տրվում են տեղեկություններ նրա կլիմայի, առևտրական կամ արդյունաբերական նշանակության, աչքի ընկնող շինությունների, դպրոցների, ուսուցիչների աշակերտության, տեղական կենդանիների ու բույսերի և այլնի մասին:

Թորոս Աղբարը այն երևակայական թռչունն էր, որին հեղի-

[12] Տե՛ս ***Սրվանձտյանց Գ.,*** Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, Երկեր, հ. 2, Երևան, 1982 (մասն առաջին), էջ 169-323 (մասն երկրորդ), էջ 324-514:

նակը հանդիպել էր Նարեկացու ծննդավայրում գտնվող Ծովք լճում. ինչպես թռչունը ողբում էր Նարեկացու մահը, այնպես էլ Սրվանձտյանցը ողբում էր արևմտահայության շուրջ ստեղծված մթնոլորտը արյունարբու սուլթան Համիդի կողմից: Նա զգուշացնում էր մոտեցող վտանգի մասին: Ցավոք, Սրվանձտյանցի կանխատեսումը հայերին սպառնացող կոտորածների մասին իրականացավ 1894-1896 թվականներին: «Թորոս Աղբար»-ում հեղինակը վեր հանեց սերնդեսերունդ փոխանցված և ժողովրդի բանավոր լեզվում պահպանված հսկայական քանակությամբ ազգագրական նյութեր: «Թորոս Աղբարի» ազգագրական-աշխարհագրական արժեքը բարձր է գնահատվել Ռուսաստանի աշխարհագրական ընկերության կողմից և համառոտված թարգմանվել ու տպագրվել «Торос Ахпар. Путеводитель по Армении» խորագրով»[13]:

Ի տարբերություն մյուս աշխատությունների՝ «Հնոց-նորոցը» գրված է բացառապես գրավոր աղբյուրների հիման վրա: Զգալով թուրքական կառավարությունից եկող վտանգը՝ նա հայոց եկեղեցիներից վերցրեց ձեռագիր հավաքածուներ, ավանդազրույցներ, ցուցակներ, որոնք էլ հրապարակեց նշյալ աշխատության մեջ[14]:

Մինչ Գ. Սրվանձտյանցը հայ ազգագրությունն իբրև գրական ատաղձ էր օգտագործվում գեղարվեստական գրականության մեջ: Այդ ձևով մեծ քանակությամբ նյութեր են հայթայթել Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Րաֆֆին, գյուղագիրները և ուրիշներ: Եվ եթե գրողները ազգագրությունը ծառայեցրել են գեղագիտությանը, ապա Գ. Սրվանձտյանցը, ընդհակառակը, գեղագիտությունն է ծառայեցրել ազգագրությանը: Իսկ սա հայ ազգագրության մեջ երևույթ էր, որը հայտնագործել և տաղանդավոր կերպով կիրառել է Գ. Սրվանձտյանցը: Ի պատիվ իրեն՝ Գ. Սրվանձտյանցը ազգագրական տվյալները գեղագիտական խոսքով մատուցելիս չի աղավաղել, չի խաթարել, որովհետև բուն նպատակը ազգագրությանը հարազատ մնալն է եղել[15]: Նախքան Գ. Սրվանձտյանցի աշխատու-

[13] Տե՛ս Известия Кавказского отдела императорского Русского географического общества», т. IX, Тифлис, 1887:

[14] Տե՛ս ***Սրվանձտյանց Գ.,*** Հնոց-նորոց, Կ. Պոլիս, 1874:

[15] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական բանահավաքչական գործունեությունը, էջ 116-117:

թյունների հրապարակումը արևմտահայ մտավորականները աղոտ պատկերացում ունեին իրենց ժողովրդի բառ ու բանի, հավատալիքների, վարքուբարքի, ծեսերի, սովորությունների, հայրենի բնաշխարհի առանձնահատկությունների վերաբերյալ: Այդ նյութերը մեզանում մեծ մասամբ մնում էին, Թումանյանի խոսքով ասած, «ավերակների ու հողի տակ», իրենց պարծանքները՝ մոռացության ու անհայտության մեջ[16]:

Գ. Սրվանձտյանցը առաջիններից մեկն էր, որն իր հայտնաբերած հարուստ նյութերով մեծապես նպաստեց հայ բանագիտության, ազգագրության, գրականության ու հնագիտության զարգացմանը: Նրա աշխատությունները չէին սահմանափակվում միայն ճանաչողական նշանակությամբ. նա նաև իսկական գեղագետ էր, գրող ու բանաստեղծ: Հովհաննես Թումանյանը նրան համարել է «մեր անուշ, հայրենախոս բանաստեղծը», իսկ նրա գրքերն էլ համեմատել է բուրումնալի ծաղկեփնջերի հետ: «Մի Աբովյան կամ մի Սրվանձտյանց,– գրել է նա,– կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, որոնք ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»[17]: Գ. Սրվանձտյանցի երկերի արժանիքն այն է, որ նա, ամենայն հմտությամբ պահպանելով նյութերի անաղարտությունը, դրանք ներկայացրեց գեղարվեստական շնչով՝ միաժամանակ անելով ազգաբանական ու բանագիտական նուրբ դիտողություններ: Ուստի նրա ժողովածուները, ճանաչողականից բացի, ունեն գիտական որոշակի արժեք:

Ունենալով մեծ երևակայություն, ճոխ լեզու և մոտիկից ծանոթ լինելով արևմտահայության բարքերին ու սովորություններին՝ Սրվանձտյանցը ամբողջացրեց Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից գրառած ազգագրական նյութը: Նրա յուրաքանչյուր գիրքը մեծ աշխուժություն էր առաջացնում մտավորականների շրջանում, և պատահական չէ, որ Սրվանձտյանցի երկերի ազդեցությամբ սկսվեց մտավորականների շարժը դեպի գավառներ՝ ազգագրական, բանահյուսական նյութեր գրառելու համար: Սրվանձտյանցի հսկայական ժառանգությունը, հետաքրքրություն առաջացրեց դեպի ազգագրությունն ու բանահյուսությունը, իսկ երկերի ինքնատիպ ոճը,

[16] Տե՛ս ***Թումանյան Հ.,*** Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 146-147:

[17] Նույն տեղում, էջ 377-378:

լեզուն համապատասխան ճաշակ ձևավորեցին:

Գ. Սրվանձտյանցի երկերի դերը և նրա «Ծրագրի» հետևորդները: Սրվանձտյանցի կատարած գործը հասարակական մեծ արձագանք գտավ և ջերմ ընդունելության արժանացավ: Ինքը՝ Սրվանձտյանցը, իր կատարած գործը ներկայացնում էր որպես ուրիշներին խրախուսելու և ազգօգուտ գործունեության մղելու օրինակ: Նա գրում է. «Մեր մտադրությունն է ժողովրդական կյանքե ծանոթություններ հիշել, որոնք լույս կարող են տալ մեր ազգային պատմության և լեզվին կամ գրականության. ուշադրության առնելու է, ուրեմն, անոնց մեջ եղած տնական, գեղջկական, քաղաքական ու կրոնական արարողությունները, առածները, երդումները, անեծքները, օրհնանքները, երգերը, պարերը, տղայոց խաղերը, որոնք առհասարակ կյանքի և լեզվի պատմությունը կը կազմեն»[18]:

Գարեգին Սրվանձտյանցի գործերը թարմ շունչ են հաղորդում ժամանակի հայ մտավոր աշխարհի վրա: Մտավորականների շրջանում շարժում է ծավալվում մինչ այդ արհամարվող գեղջկական կյանքը՝ այնտեղից՝ ժողովրդի հուգու խորքերից դուրս բերելու դարերով անթեղված գանձերը՝ որպես ինքնաճանաչման մինչ այդ անտեսված միջոց: Դա արդյունք էր սկսված ազգային զարթոնքի, որի առաջին արտահայտություններից մեկը հենց ինքը՝ Գ. Սրվանձտյանցն էր:

1870-1880-ական թթ. ասպարեզ իջավ բանահավաքների մի ամբողջ սերունդ, որը, ոգևորված Գ. Սրվանձտյանցի օրինակով, առավել արդյունավետ ազգագրական-բանահյուսական հավաքչական գործունեություն ծավալեց: Հրապարակվեցին մեծ թվով ազգագրական ու բանահյուսական ժողովածուներ, որոնք ավելի լայնորեն ընդգրկեցին պատմական Հայաստանի ազգագրական շրջանները՝ մեծապես հարստացնելով հայ ազգագրության գանձարանը նորանոր նյութերով: Նշենք մի քանի հեղինակների՝ **Արիստակես վարդապետ Սեդրակյան** («Քնար մշեցվոց և վանեցվոց», Վաղարշապատ, 1874, «Ամուսնական խնդիրներ» Մոսկվա, 1891), **Արիստակես վրդ. Սարգսենց** («Պանդուխտ վանեցին», Կ. Պոլիս, 1874), **Պետրոս վրդ. Կալհոկեցի** («Ասիական ճանապարհորդություն ի Հայրենիս», Կ. Պոլիս, 1881), **Գևորգ Գ. Շերենց** («Վանա սազ»,

[18] ***Սրվանձտյանց Գ.,*** «Գրոց ու բրոց», Երկեր, հ. 1, մ. Ա., էջ 81:

Թիֆլիս, մաս Ա, 1885, մաս Բ, 1899), **Մ. Կ. Միրախորյան** («Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի...», Կ. Պոլիս, Մասն Ա. 1884, Բ. 1885, Գ. 1886), **Հակոբ Հ. Ալահվերդյան** («Ուլնիա կամ Զեյթուն», Կ. Պոլիս, 1884), **Հովհաննես Նազարյանց** («Նախապաշարմունք», Թիֆլիս, 1878, «Անեկդոտներ», Թիֆլիս, հ. 1, 1876, հ. 2, 1877), **Երեմիա եպ. Տեր-Սարգսենց-Տևկանց** («Տոհմային հիշատակարան», գիրք Ա և Բ, Վարագ, 1881), **Սիմոն վ. Ճուլարտյան** («Առածք ազգայինք», Վենետիկ, 1880), **Հ. Կ. Ճանիկյան** («Հնությունք Ակնա», Թիֆլիս, 1895), **Գևորգ Տեր-Աղեքսանդրյան** («Թիֆլիսեցոց մտավոր կյանքը», Թիֆլիս, 1886) և այլք: Այսպիսով՝ ժամանակի հայ գավառաբնակ մտավորականության ջանքերով ազգագրության և բանահյուսության ասպարեզում մեծաքանակ նյութեր կուտակվեցին տարբեր գավառներից և բնակավայրերից՝ ընդգրկելով և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստանը, նաև հայկական գաղթոջախները: Նրանց շնորհակալ գործունեության շնորհիվ կորստյան վտանգից փրկվեցին հայ ազգային մշակույթի անթիվ գանձեր:

Սփյուռքի հայության համար ազգային ոգու պահպանելուն ուղղված ազգագրական նյութերի սրվանձտյանական գրանցման հայրենաբաղձ ոճը ներկայումս էլ իշխող ձև է մնում: Հավաքված ու հրատարակված ազգագրական և բանահյուսական նյութերը, սակայն, վերը հիշատակված ժողովածուներում չունեցան ազգագրության ու բանահյուսության գիտական պահանջներին համապատասխան մակարդակ:

Գ. Սրվանձտյանցի և նրա հետևորդների երկերում ազգագրությունը և բանահյուսությունը խիստ միաձույլ էին հանդես գալիս: Դրանք ազգագրական-բանահյուսական համալիր հետազոտություններ չէին և չէին էլ կարող լինել առանց դրանց գործունեությունը ուղղորդող գիտական ազգագրական ծրագրերի առկայության, ժամանակի հասարակական-քաղաքական պայմանների: Այդ բանն արեց Գ. Խալաթյանցը 1887 թ., Սրվանձտյանցի երկերի նյութի և արևմտաեվրոպական ու ռուսական արդեն առկա գիտական որոշ փորձի հիման վրա՝ կազմելով հայ ազգագրական, բայց արդեն գիտական հիմունքներով գրված հարցարան, որը հետագա-

յում իր ամբողջ աշխատանքի հիմքում դրեց նշանավոր ազգագրագետ Ե. Լալայանը:

Գրիգոր Խալաթյանցը (1858-1912), որպես հայ գիտական ազգաբանության հիմնադիր: Հայ ազգագրության հետագա զարգացման գործում մեծ է եղել Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, նշանավոր հայագետ, պատմաբան, բանասեր Գրիգոր Խալաթյանցի՝ պատմագիտության, ազգաբանական գիտության, լեզվի ու գրականության բնագավառներում ունեցած դերն ու նշանակությունը[19]: Նրա գրչին են պատկանում ավելի քան 20 տպագիր աշխատություն, հայ և օտար մամուլում սփռված բազմաթիվ հոդվածներ, ինչպես և անտիպ ուսումնասիրություններ[20]:

Ծնվել է 1858 թ. սեպտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) քաղաքում, վախճանվել է 1912 թ. փետրվարի 8-ին Թիֆլիսում: Գիտության դոկտոր էր 1903 թվականից, պրոֆեսոր՝ 1906 թվականից: 1868-1877 թթ. սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, 1877-1880 թթ.՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, ապա՝ տեղափոխվել պատմալեզվաբանական ֆակուլտետ և ավարտել 1884 թվականին: Այնուհետև կատարելագործվել է Գերմանիայում: 1886 թվականից մինչև կյանքի վերջն աշխատել է Լազարյան ճեմարանում՝ դասավանդելով հայագիտական տարբեր առարկաներ: 1890 թվականից գլխավորել է հայագիտության ամբիոնը, իսկ 1897-1903 թթ. եղել է ճեմարանի տեսուչը: Նրա անդրանիկ գործն է «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսի ռուսերեն թարգմանությունը (1881), «Ղազար Փարպեցի եւ գործք նորին» (1883), «Հայ ժողովրդական հեքիաթների ընդհանուր ուրվագիծ» (1885, ռուս.), «Հայոց վեպը Մովսես Խորենացու Պատմության մեջ» (1896, ռուսերեն), «Գիրք մնացորդացը» ըստ հնագույն հայ թարգմանության (1899), «Մովսես Խորենացին և յուր աղբյուրները» (1898), «Մովսես Խորենացու նորագույն աղբյուրների մասին» (1898), «Հայ Արշակունիները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (1903), «Ակնարկ

[19] Տե՛ս ***Շահնազարյան Ա.,*** Պրոֆ. Գրիգոր Աբրահամյան Խալաթյանց // «Ազգագրական հանդես», գ. XXII, № 1, Թիֆլիս, 1912, էջ 249-263:

[20] ***Վարդանյան Վ.,*** Գր. Խալաթյան // ՊԲՀ, 1968, թիվ 4, էջ 143-149:

Հայաստանի պատմության...» (1910, ռուսերեն): Թեև որոշ երկերում առկա են թյուր կարծիքներ, դրույթներ ու տեսակետներ, որոնք հետագայում մերժել է հայագիտությունը, սակայն այսօր էլ խալաթյանցի բազմաթիվ երկեր պահպանել են իրենց գիտական արժեքը:

Ազգագրության և բանահյուսության զարգացումն ու նվաճումները Եվրոպայում և Ռուսաստանում ազդակ հանդիսացան՝ 1880-ական թթ. վերջին և հատկապես 1890-ական թվականների սկզբին հայ ազգագրության և բանահյուսության գծով կատարվող աշխատանքներն էլ գիտության նոր պահանջների համեմատ իրականացնելու համար: Այդ էր պահանջում նաև հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում կուտակված նյութերի ու հարուստ փորձի ուսումնասիրությունը: Այդ գործը վիճակված էր Գ. Խալաթյանցին և Երվանդ Լալայանին: Գ. Խալաթյանցի՝ որպես եվրոպական ազգագրության քաջածանոթ տեսաբանի, ազգագրական գործի կազմակերպչի գործուն մասնակցությամբ 1880-ական թթ. սկզբներին հրատարակվում է ռուսերեն ազգագրական ծրագիր: Դրա օրինակով Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսուցչապետ Գրիգոր Խալաթյանցը 1887 թ. հրատարակեց «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» (Մոսկվա, 1887) ուղեցույց ծրագիր-հարցարանը, որն անգնահատելի դեր ունեցավ հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում: Այն համակարգված, կուռ կառուցվածք ուներ և նորույթ էր: Խալաթյանցի ծրագիր-հարցարանը բացառիկ դրական դեր խաղաց ազգագրագետ կադրերի պատրաստման, նպատակադրված դաշտային ազգագրական հետազոտությունների իրականացման, բանահավաքչական նյութերի համակարգված գրառման, գիտական արշավախմբերի կազմակերպման գործում: Այն մեծապես խթանեց հայ ազգագրական գիտության ձևավորումն ու հետագա զարգացումը:

Գ. Խալաթյանցը նախաբանում լուրջ ուշադրություն է դարձրել հայ ազգագրության վերաբերյալ նյութերը մշակելու խնդրին՝ ցավով արձանագրելով. «Ժողովրդի խոսքն ու բարբառը, հին ծեսն ու սնապաշտությունը, առասպելական վեպն ու ավանդությունը, հին երգն ու խաղը, հեքիաթն ու առակը, որպես և շատ ազգային

իրավաբանական սովորությունները – մեր աչքի առաջ պակասում, նվազում, մաշվում, արհամարհանքի կամ մոռացության են տրվում և հետզհետե անհետանալու վիճակին մոտենում՝ չփվելով ու ընդհարվելով նորաձևությունների հետ, կյանքի նոր գաղափարների ու պայմանների, գրավոր օրենքների հետ, նոցա հոսանքին չդիմանալով և նոցա տեղի տալով»[21]:

«Ծրագրով» սահմանվում էր առարկան, ուղղություն տրվում բանահավաքներին՝բազմապատկելով նրանց թիվը: Ծրագիրը ընծայված է Գ. Սրվանձտյանցին: Ծրագրից հետո մեծ հետաքրքրություն է առաջանում դեպի ազգաբանությունը («Ծրագրիդ ճառագայթներով, ուր կլուսավորեր, կառաջնորդեր և կցուցաներ ամեն բան պարզ ու կատարյալ, մեծ գործի պիտանի է Ծրագիրդ»,– գրում է Գ. Սրվանձտյանցը):

Ծրագրի բովանդակությունը, կառուցվածքը: Ծրագիրն ընդգրկում էր 500 հարց և 10 բաժին, որոնք վերաբերում են կենցաղի և մշակույթի ամենատարբեր բնագավառներին՝ 1) աշխարհագրական և պատմական տեղեկություններ, 2) մարդաբանական տեղեկություններ, 3) բնակարանը և իր պարագաները, 4) զգեստ և զարդ, 5) կերակուր և խմիչք, 6) կենցաղ և զբաղմունք, 7) ընտանեկան բարք ու սովորույթ, 8) հավատք, 9) լեզու և գիր, արվեստ, ձեռագիր, 10) ժողովրդական բանավոր գրականության տեսակները: Ծրագրի երկրորդ բաժինը վերաբերում է իրավունքին և կազմված է երեք գլխից՝ 1) հասարակական կացություն և վարչություն, դատ ու պատիժ, 2) քաղաքացիական իրավունք, 3) քրեական իրավունք[22]: Գ. Խալաթյանցի «Ծրագիրը» արդյունք էր խոր ու բազմակողմանի հետազոտության: Այն ժամանակի գիտության համատեքստում ընդհանրացնում և ամփոփում է ազգագրության բնագավառը, նրա սահմանումն ու ընդգրկումը, դասակարգումը, ինչպես նաև վեր հանում մշակույթի այլ բնագավառների հետ ունեցած առնչություններն ու կապերը՝ ելնելով հայ իրականության և հայկական նյութի պահանջներից: Յուրաքանչյուր բաժնի և ենթաբաժնի մեջ նա հարցադրումների հետ տվել է մի շարք ծա-

[21] ***Խալաթյանց Գ.,*** Նյութեր հայ ազգագրության պատմության // «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Է, Մոսկվա, 1908, էջ 48:

[22] ***Խալաթյանց Գ.,*** Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887, էջ 44:

նոթություններ, օրինակներ ու նմուշներ՝ նպաստելու բանահավաքի աշխատանքին: «Ծրագիրն» իր ներքին կառուցվածքով և հարցադրումներն իրենց բնույթով նպատակ ունեին ազգագրական երևույթների և մշակութային տարբեր մարզերի փաստերը ներկայացնելու ոչ թե մեկուսացված, այլ համակցված և փոխադարձ ներթափանցումներով: Միաժամանակ ուշադրավ խորհուրդներ ու ցուցումներ էր տալիս բանահավաքներին, թե ինչպես պետք է զրուցել բանասացների հետ, ինչ կերպ գրի առնել և դասավորել համապատասխան բաժինների հարցադրման արդյունքները: Գիտնականը հատուկ ուշադրություն է հրավիրում նյութերի հարազատ և անաղարտ գրանցման հանգամանքին: Նա գրում է. **«Բանահավաքը մեծ ուշադրությամբ և հարգանքով պետք է վերաբերվի այն բոլոր տեղեկություններին, որ իրան կհաղորդեն, կամ ինքը կժողովե անմիջապես... Հարկավոր է դիտել ու գրել այն, ինչ որ կա, և ոչ թե այն, ինչ որ պետք է լինի՝ բանահավաքի կարծիքով»**[23]: Այնուհետև Գ. Խալաթյանցը իր «Ծրագրում» մատնանշում է, որ ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման գործին պետք է հաջորդի առանձին հավաքածուների հրատարակությունը, ուր ներկայացված լինեն և ազգագրական նկարագրություններ ու բանահյուսական ստեղծագործություններ և հետազոտություններ:

Գ. Խալաթյանցը «Նյութեր հայ ազգագրության պատմության համար» հոդվածում մատնանշում էր հայ ազգագրագետների անելիքները. 1) պետք է շտապեցնել դաշտային ազգագրական նյութեր հավաքելու խնդիրը, 2) պետք է հոգ տանել կազմելու ազգագրական մատենախոսական լիակատար նկարագրություններ, 3) նյութեր հավաքելուն զուգընթաց մեզ պետք է դրանց հիման վրա կատարել ուսումնասիրություն, հետազոտություն, վերլուծություն, 4) պետք է աշխուժացնել հայոց ազգագրական գործունեությունը, 5) ձեռնարկել անհապաղ գիտական արշավախմբեր, գիտական համաժողովներ, 6) պետք է հիմնել ազգագրական թանգարաններ, բուհերում դասավանդել կովկասյան և հայ ազգագրության վերաբերյալ առարկաներ, 7) մեծ կարևորություն ունի հայ

[23] ***Խալաթյանց Գ.,*** Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887, էջ ԺԸ:

ազգագրության համար և դրացի ազգերի ընկերական և հասարակական կենցաղի համեմատական ուսումնասիրությունը[24]: Գ. Խալաթյանցի կարծիքով ազգագրությունը օգնում էր պարզելու շատ կարևոր խնդիրներ: Ժողովրդի բուն պատմությունը վերականգնելու անսպառ նյութը պարուրված է հեքիաթների, առասպելների, հանելուկների, առակների, գեղջկական երգերի և բանահյուսական այլ ստեղծագործությունների մեջ, որոնք, «դարերի ընթացքում փոփոխվելով, բարդվելով, ձևակերպվելով», իրենց մեջ պարփակել են կյանքի իսկական պատկերը, «ժողովրդի ձգտումներն ու իդեալները»: Ժողովրդագիտությունը, ըստ գիտնականի, ինքնաճանաչման մի հզոր միջոց է, բացի դրանից՝ այն նպաստում է լեզվի, գրականության, բարոյագիտության, իրավագիտության զարգացմանը: Նա հրամայական պահանջ է համարում ազգագրական բաժիններ հիմնել Պոլսում, Էջմիածնում, ընդլայնել բանահավաքման միջոցները, Թիֆլիսում կովկասագիտական համալսարան բացել: Գ. Խալաթյանցին մտահոգում է, որ շատ ավանդություններ, իրավական սովորություններ, չփվելով նորամուծություններին, գրավոր կանոններին «նվազում, մաշվում, արհամարհանքի կամ մոռացության են տրվում», «կանցնի շատ-շատ մի կես դար, և այդ մեր պապերից ավանդած հազարավոր տարիների շատ կողմերից թանկագին կտակը կկորչի անդարձ, եթե օրով առաջ հոգ չտանենք խնամքով արձանագրելու նրան և պահելու գիտության համար»: Նա նշում ու կարևորում է, որ երբ կարողանանք մեզանում էլ գիտության վերածել ազգագրությունը, այնժամ հիմք կդոյանա գրելու մեր մշակույթի ու երկրի պատմությունը՝ «ճշմարտացի ու պատշաճավոր»[25]:

«Ծրագիրը» էական դեր խաղաց ազգագրական գործը հայ իրականության մեջ գիտական սկզբունքներով իրականացնելու հարցում: Այդ ժամանակաշրջանի հայ գրականությունը ողողված է ժողովրդի առօրյան, կենցաղն ու սովորույթները համակողմանիորեն արտացոլող առատ նյութերով: Այն իր արտացոլումը գտավ թե՛ գեղարվեստական գրականության մեջ՝ (Ռաֆֆի, Պ. Պռոշյան, Ռ. Պատկանյան, Մուրացան, Հ. Թումանյան, Մ. Նալ-

[24] Տե՛ս ***Խալաթյանց Գ.,*** Նյութեր հայ ազգագրության պատմության, էջ 57-58:

[25] Տե՛ս նույն տեղում, էջ 46-48:

բանդյան) և թե՛ Վ. Սուրենյանցի, Լանսերեի, Ֆեթվաճյանի, Գ. Բաշինջաղյանի, Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Ռ. Մելիքյանի, Թ. Թորամանյանի և ուրիշների արվեստի գործերում:

Հայ ազգագրական նյութի մատուցման ու մեկնաբանման գործում նշանակալի ներդրում կատարեցին Ս. Ամատունին[26], Ա. Ղլտճյանը[27], Մ. Միրախորյանը[28], Ս. Հայկունին[29], Գ. Ախվերդյանը[30] և այլք: Մի շարք հանդեսներ՝ «Արաքս», «Բյուրակն», «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Մշակ» և այլն, ապա՝ «Ազգագրական հանդես», «Էմինյան ազգագրական ժողովածու», նվիրվեցին հայ ազգաբանական գործունեությանը:

Գ. Խալաթյանցի հորդորով են հիմնվել «Հայոց ազգագրական ընկերությունը» և «Ազգագրական հանդեսը» («Այժմ մնում է,– գրում է Լալայանը Խալաթյանցին,– մի ուրիշ ցանկության իրականանալը, դուք վերադառնաք Կովկաս և ստանձնեք այս ընկերության ղեկավարությունը»):

1906 թ. Խալաթյանցը հրավիրվել է Մոսկվայի կայսերական համալսարան և վարել հայ ազգագրություն դասընթացը: Նշանավոր հայագետը զբաղվել է նաև հայ մատենագետի, մասնավորապես Մ. Խորենացու քննությամբ և նրանց գործերի թարգմանությունններով: Նա ռուսերեն և գերմաներեն թարգմանել է «Սասունցի Դավիթ» էպոսը, գրել այդ լեզուներով «Հայ ժողովրդական հեքիաթների ուրվագիծ» աշխատությունը:

«Էմինյան ազգագրական ժողովածու»-ի (1901-1913 թթ., 9 հ.) դերն ու նշանակությունը հայ ազգագրական գիտության պատմության մեջ: Համաձայն Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինի կտակի՝ որոշվել է նրա դրամագլխի եկամուտներն ուղղել հայ ազգագրության և հայ ժողովրդական գրականության վերաբերյալ ուշադրության արժանի նյութերի և հե-

[26] Տե՛ս ***Ամատունի Ս.,*** Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:

[27] Տե՛ս ***Ղլտճեան Ա.,*** Հայոց հին իրաւունքը, Ալեքսանդրապոլ, 1918: Նույնի՝ Ամուսնութիւն, ամուսնալուծութիւն և քաղաքացիական պսակ, Ալեքսանդրապոլ, 1904:

[28] Տե՛ս ***Միրախորյան Մ.,*** Նկարագրական ուղևորություն ի Հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի տեղագրությունք սարեն ու ձորեն, հնեն ու նորեն պիտանի գիտնոց), Կ. Պոլիս, հ. 1, 1884, հ. 2, 3, 1885:

[29] Տե՛ս ***Հայկունի Ս.,*** Բագրևանդ, ջրաբաշխ գավառ, 1, Էջմիածին, 1894:

[30] Տե՛ս ***Ахвердов Ю.,*** Тифлисские амкары, Тифлис, 1883:

տազոտությունների ժողովածուներ հիմնելուն: «Դրամագլխի հաշվով տպագրվելիք թե՛ ժողովածուները և թե՛ առանձին գրվածքները պետք է գիտական նշանակություն ունենան և վերաբերեն **հայ ազգագրությանը**, հայոց հավատքին, հնությունններին, պատմությանը, որպես և լեզվին, բանավոր ու գրավոր գրականությանը, արվեստներին: Ժողովածուները պետք է նվիրվեն Էմինի հիշատակին»[31]: Ահա Էմինյան ազգագրական այդ դրամագլխի միջոցներով, ի թիվս այլ գործերի, տպագրվել են նաև «Էմինյան ազգագրական ժողովածուի» 9 հատորները: Ժողովածուի խնդիրն էր հայ ազգագրության և ժողովրդական գրականության վերաբերյալ ուշադրության արժանի հավաքածուներ, նյութեր և գիտական հետազոտություններ հրատարակելը: Գ. Խալաթյանցը մեծ աշխատանք է կատարել «Էմինյան ազգագրական ժողովածուն» գիտական պատշաճ մակարդակով հրատարակելու համար: Ժողովածուի 1-8-րդ հատորների անփոփոխ խմբագիրը Գ. Խալաթյանցն էր, իսկ 9-րդ հատորը (նրա մահից հետո) խմբագրել է հայագետ Կ. Կոստանյանը: Այն համառ ջանքերը, եռանդուն ստեղծագործական աշխատանքը, որը թափել է Խալաթյանցը հանդեսի 8 հատորների խմբագրման, ծանոթագրության ու տպագրության ուղղությամբ, վեր է ամեն տեսակի գնահատությունից: ԷԱԺ-ի առաջին գիրքը (1901) նվիրված է պատմական Հայաստանի ազգագրական ինքնատիպ շրջաններից մեկին՝ Շիրակի ազգագրությանն ու բանահյուսությանը, որի նյութերը ամբողջությամբ հավաքել է ճանաչված ազգագրագետ Ալեքսանդր Մխիթարյանը (1846-1916)՝ «Փշրանքներ Շիրակի ամբարներից» վերնագրով: Առաջին մասում ներառված են ժողովրդական բանավոր գրականության տեսակները՝ հեքիաթ, առակ, առած, հանելուկ, օրհնանք, անեծք, երդում և այլն: Երկրորդ մասը վերաբերում է ազգագրությանը, որտեղ ներկայացված են տեղացիների ընտանեկան բարքն ու սովորույթը, կենցաղն ու զբաղմունքը և հատկապես հավատքը (անոտիապաշտություն, նախապաշարմունքներ, երազներ, բժշկություն, կախարդություն, թովչություն, բժժանք), իբրև հավելված՝ Շիրակի բարբառի համառոտ բառարանը: Խոսելով հավաքածուի նշանակության ու արժեքի մասին՝ հատորի առաջաբանում Գ. Խա-

[31] «Մկրտիչ Էմինի երկասիրությունները», հ. 4, Մոսկվա, 1898:

լաթյանցը նշում է, որ շատ երևույթներ ու նյութեր նման կլինեն և կհիշեցնեն այլ դավառների ազգագրական նկարագրությունները, և գիտնականը միաժամանակ իրավացի դիտողություն է անում. «Բայց նաև այս կրկնությունը՝ որոշ սիստեմի հետ միասին յուր անհերքելի արժեքն ունի՝ վերստուգելով ու հաստատելով նախընթաց հաղորդածները և հայ ազգագրության համեմատական ուսումնասիրության համար ավելի առատ և ապահով նյութ պատրաստելով»[32]: Քննության առարկա նյութերից բացի՝ Ա. Մխիթարյանը հրատարակել է նաև «Տաղեր և խաղեր» (Ալեքսանդրապոլ, 1900) ուշագրավ ժողովածուն:

Ժողովածուի 4 գիրք նվիրված է վաստակաշատ բանահավաք Սարգիս Հայկունու (1838-1908) բանահյուսական նյութերի հավաքածուներին՝ Հայ ժողովրդական վեպեր (6 հատ, որոնց թվում՝ «Դավիթ և Մհեր» վեպի Մոկաց ճյուղը) և հեքիաթներ (42 հատ), (հատոր Բ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901): «Հայ ժողովրդական հեքիաթ» (հատոր Դ, 1902), «Դավիթ և Մհեր» դյուցազանվեպի Շատախի և Արարատյան ճյուղերը, «Հայ-քրդական վեպ» (հ. Ե, 1904), «Հայ ժողովրդական երգ» և բանահյուսական այլ ժանրի ստեղծագործություններ (հ. Զ, 1906): Գրի է առնվել «Սասնա ծռեր» 4 պատում, ժողովրդական վեպերի ու սիրավեպերի 32 պատում, 117 հեքիաթ ու առակ, 276 երգ, մոտ 800-ի հասնող առած, ասացվածք, հանելուկ և այլն: Անհրաժեշտ է ընդգծել չորս հատորներում տեղ գտած Ս. Հայկունու բանահյուսական նյութի ժանրային բազմազանությունը՝ էպոսի 4 պատում, հեքիաթներ, երգեր, առածներ ու հանելուկներ, անեծքներ, օրհնանքներ, երդումներ, շուտասելուկներ, որոնք հարուստ են ոչ միայն քանակով, այլև իրենց գրառման վայրերով: Գ. Խալաթյանցը շատ բարձր է գնահատել Ս. Հայկունու բանահավաքչական գործունեությունը՝ ազգագրական տարբեր շրջաններից գրառած մեծաքանակ և բազմազան նյութեր և հարևան ժողովուրդներից բարեխղճորեն գրառելու համար[33]: Ի դեպ, Սարգիս Հայկունու գործունեությունը

[32] «Էմինյան ազգագրական ժողովածու», այսուհետ՝ ԷԱԺ, հ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 8:
[33] Տե՛ս ԷԱԺ, հ. Զ, Մոսկվա-Վաղարշապատ, 1906, էջ 14:

ըստ արժանվույն գնահատել է Վերժինե Սվազլյանը[34]:

ԷԱԺ-ի ընդգրկած մյուս բնագավառը ազգագրական լեզվաբանությունն է՝ էթնոլինգվիստիկան: Երեք հատորներով լույս են տեսել Հ. Աճառյանի (1876-1953) «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և թուրքերեն փոխառյալ բառերը» (Հ. Գ, 1902), «Հայ բարբառագիտություն», (Հ. Ը, 1911), «Հայերեն գավառական բառարան», (Հ. Թ, 1913) աշխատությունները: Սրանով ԷԱԺ-ը բարձրացրեց ժողովրդական լեզվի, ազգագրական լեզվաբանության հիմնախնդիրը:

ԷԱԺ-ի Է հատորը (1908) Գ. Խալաթյանցը ներկայացրել է որպես ազգագրության և բանահյուսության տեսության ու պատմության ընդհանուր հոդվածների ժողովածու: Հայերեն թարգմանությամբ ներկայացված են Լ. Շտերնբերգի «Ազգագրություն», «Համեմատական կրոնախոսություն», Ե. Անիչկովի «Ֆոլկլոր», Հ. Լիպպերտի «Կուլտուրի պատմություն» և մի քանի այլ հոդված: Այստեղ է հրատարակված Գ. Խալաթյանցի «Նյութեր հայ ազգագրության պատմության» ուշագրավ հոդվածը, որում առաջ քաշված անելիքները առ այսօր էլ մնում են առաջնահերթ պահանջ:

Մկրտիչ Խրիմյանի երկերի ազգագրական և բանահավաքչական համառոտ բնութագիրը: Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ) հայտնի է ոչ միայն իբրև հայ ժողովրդի մեծ երախտավոր, հասարակական-քաղաքական և կրոնական խոշոր գործիչ, գրող, այլև նշանավոր բանահավաք-ազգագրագետ: Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Ա. Վանեցի) ծնվել է Վանում 1820 թ. ապրիլի 4-ին, վախճանվել է 1907 թ. հոկտեմբերի 29-ին Վաղարշապատում: Հայոց կաթողիկոս էր 1893 թվականից: Սովորել է Վասպուրականի Լիմ և Կտուց անապատների դպրոցներում, 1842 թ. հաստատվել է Կ. Պոլսում: 1847 թ. ճանապարհորդել է Պարսկաստանում, Անդրկովկասում, այցելել Երուսաղեմ: 1848-1850 թթ. ուսուցչություն է արել Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասի դպրոցում: 1851 թ.

[34] ***Սվազլյան Վ.,*** Սարգիս Հայկունի. Կյանքը և գործունեությունը // «Հայ ազգագրություն և բանահյուսություն», Նյութեր և ուսումնասիրություններ, հ. 4, Երևան, 1973:

Կ. Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ մեկնել է Կիլիկիա՝ հայության կյանքը ուսումնասիրելու և տեղի կրթական գործին նպաստելու համար: 1854 թ. ձեռնադրվել է վարդապետ: 1855 թ. Կ. Պոլսում հիմնադրել է «Արծուի Վասպուրական» պարբերականը: 1856 թ. Վարագավանքի վանահայրն էր, 1857 թ. հիմնադրել է տեղի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը: 1860 թ. այցելել է Արևելյան Հայաստան, ծանոթացել հայ կյանքին: 1862 թ. ստացել է Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնն ու Ս. Կարապետ վանքի վանահայրությունը՝ ձեռնարկելով նոր ժառանգավորաց վարժարանի հիմնադրումը: Ժողովրդի մեջ նա մեծարվել է «Հայրիկ» պատվանվամբ: 1868 թ. Էջմիածնում օծվել է եպիսկոպոս, 1869 թ. ընտրվել է Կ. Պոլսի հայոց պատրիարք (մինչև 1873 թվականը): 1878թ. եղել է Բեռլինի կոնգրեսի հայկական պատվիրակության ղեկավարը: 1879 թ. ընտրվել է Վանի հոգևոր առաջնորդ, 1880 թ. Վանում բացել է երկրագործական ուսումնարան: Աջակցել է Վանի «Սև խաչ» և Կարինի «Պաշտպան հայրենյաց» ազգային ազատագրական գաղտնի կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը, 1892 թ. մայիսին ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս, 1893 թ. սեպտեմբերի 26-ին օծվել է Էջմիածնում: 1895 թ. մեկնել է Պետերբուրգ և Նիկոլայ II ցարից հայցել նրա պաշտպանությունը Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների իրականացման համար: Եռանդուն պայքար է մղել հայ եկեղեցապատկան ունեցվածքը բռնագրավելու մասին 1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքի դեմ և այլն[35]: Մկրտիչ Խրիմյանի հասարակական և արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի գործունեությանն են անդրադարձել Ա. Մադոյանը, Հ. Պետրոսյանը[36], Ռ. Նահապետյանը[37],

[35] ***Աճեմյան Հ.***, Հայոց հայրիկ, Թավրիզ, 1929, ***Գաբրիելյան Մ.***, Խրիմյան Հայրիկ, Նյու Յորք, 1892, ***Գյոզալյան Գ.***, Խրիմյան Հայրիկ (Գաղափարների աշխարհը), Պեյրութ, 1962, ***Երեմյան Ս.***, Ազգային դեմքեր, Գրագետ հայեր, առաջին շարք, Վենետիկ, Ս. Ղազար, 1913, ***Մալումյան Խ.***, Մ. Խրիմյան, Թիֆլիս, 1892, ***Կոստանդյան Է.***, Մկրտիչ Ա Վանեցի // ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 641-642:

[36] Տե՛ս ***Մադոյան Ա., Պետրոսյան Հ.***, Գաղափարի և ազատության ջահակիրը (առաջաբան) // Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 5-18:

ազգագրական գործունեությանը՝ Ա. Պետրոսյանը[38]: Խրիմյանի գրական ժառանգության ուսումնասիրության տեսանկյունից ուշադրության արժանի են նաև Վ. Պալճյանի[39], Կ. Դանիելյանի[40], Հ. Պետրոսյանի[41] ուսումնասիրությունները: Նրա «Պապիկ և Թոռնիկ», «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամուել», «Վանդոյժ», «Հայդոյժ» աշխատությունները[42] կարևոր ազգաբանական աղբյուրագիտական արժեք ունեն: Դրանցում (հատկապես «Պապիկ և Թոռնիկում») Մ. Խրիմյանը ուշադրավ և եզակի նկարագրություններ ունի տնտեսական կենցաղի՝ երկրագործության շարացան ու շաղացան համակարգերի, վարուցանքի ձևերի, երկրագործական աշխատանքային գործիքների, հատկապես վարի ու հնձի, ոռոգման ու պարարտացման, բերքահավաքի և կալսոցի, շտեմարանելու, երկրագործական պաշտամունքի, ժողովրդական հմտությունների ու կիրառված դարավոր փորձի, աշխատանքի համագործակցության ձևերի (հարակաշ) և այլնի վերաբերյալ: Հանգամանորեն ներկայացնում է Վանա լճի ավազանում կիրառված վարուցանքի «արդյունավետ» շարացան համակարգը, որը ապահովում է բարձր բերքատվություն. «մինչև մեկին քսան ու քսանհինգ» բերք էր ստացվում, սերմի կորուստ չէր լինում: Շարացան համակարգը Խրիմյանն անվանել է «տիր» կամ «դիր» դնել («Պապիկ և Թոռնիկ», էջ 49-51): Այնուհետև տալիս է շարքացան արորի բացառիկ նկարագիրը. «Հարօրի խոփի ետև կցված կան երկու տախտակներ կանգուն ու կես երկարությամբ և թզաչափ լայնությամբ: Այս երկու տախտակներ կցված են իրարու,

[37] Տե՛ս ***Նահապետյան Ռ.***, Մ. Խրիմյանը և արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը // Երիտասարդ գիտաշխատող, ԵՊՀ, 1969, թիվ 8-9, էջ 67-78:

[38] Տե՛ս ***Պետրոսյան Ա.***, Մկրտիչ Խրիմյանը բանասաց, բանահավաք, ազգագրագետ // ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Զ, 2011: Տե՛ս նաև նույնի՝ Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 139-171:

[39] Տե՛ս ***Պալճյան Վ.***, Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ, Պուքրեշ, 1943:

[40] Տե՛ս ***Դանիելյան Կ.***, Հայ գյուղագրությունը 19-րդ դարում (1860-1890), Երևան, 1973:

[41] Տե՛ս ***Պետրոսյան Հ.***, Գեղամ Տեր-Կարապետյան, Երևան, 1983:

[42] Տե՛ս ***Խրիմյան Հայրիկ***, Երկեր, կազմողներ՝ Ա. Մադոյան, Հ. Պետրոսյան, Երևան, 1992:

եռանկյուն ձև ունեն. վերին մասն բաց է թզաչափ լայնությամբ, իսկ վարի մասն մի մատի չափ բաց է տախտակներու երկարությամբ, այնպես, որ սերմնացան այդ հարօրին ետևեն երթալով սերմը փոքրիկ բուռով կը ձգե տախտակներու մեջ և անտի ակոսին մեջ կիյնան կարգավ սերմի հատիկներ. ակոսի երկու կողմի հողեր թափելով կը ծածկեն սերմեր: Դու տեսնաս բուսած ժամանակ որչա՜փ սիրուն ձեւ կունենան, ուղիղ գծով ակոսէն կը բարձրանան, եւ հաջող տարին մինչև մէկին քսան և քսանհինգ (բերք) կուտան»[43]: Շարքացան արորով մշակվում էին գերազանցապես լանջային, անջրդի հողերը: Այս համակարգի օգտագործման շնորհիվ Վասպուրականը հռչակված էր ցորենի բարձր բերքատվությամբ[44]:

Խրիմյանի վկայությամբ, երբ ցանքը սկսվում էր, սերմնացանը « ... տուն չէր դառնար դաշտէն», քնում էր բացած ակոսի մեջ՝ բաց երկնքի տակ, մինչև ավարտվեր սերմից հանելու ժամանակը: Ցանքը սկսելու համար նա «... գոտին պինդ կկապէր բուռն մի սերմէն առնելով չապկի սրտաբացեն կը ցանէր ծոցին երկու կողմը մինչև անթատակեր. ետոյ երես խաչակնքելով կսկսէր ցանել արտը»: Ցանքը տևում էր 20-30 օր, «... մինչև կը ծլէին ցանվորի ծոցի հատիկներ»: Դա «...մի բարեգուշակ նշան կը համարվէր ցանված արտերուն պտղաբերությեան...» («Պապիկ և Թոռնիկ», էջ 57-58): Խրիմյանը անդրադառնում է գարնանացան և աշնանացան համակարգերին, արհեստական ոռոգման համակարգերի անհրաժեշտությանը, ցանքաշրջանառությանը, արտերը քարերից մաքրելու, գոմաղբով պարարտացնելու, սերմը պարբերաբար փոխելու և այլ հարցերի՝ հմուտ հողագործի բանիմացությամբ: Դրանք ներկայացված են բացառապես իր դաշտային ազգագրական նյութերի հիման վրա: Նույն կերպ արժեքավոր են անասնապահության, հատկապես լծկանի, օժանդակ զբաղմունքների, շերամապահության, մետաքսի ստացման, արհեստագործության, փոխադրամիջոցների տեսակների վերաբերյալ տեղեկությունները: Տնտեսական կենցաղի վերաբերյալ Մ. Խրիմյանի անդրադարձներն ունեն ազգագրական հե-

[43] ***Խրիմյան Հայրիկ,*** Երկեր, էջ 50:

[44] Տես ***Բդոյան Վ.,*** Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 252-253:

տազոտությունների սկզբնաղբյուրի արժեք:

Կարևոր տեղ են գրավում ընտանիքին և ընտանեկան կենցաղին վերաբերող նյութերը: «Դրախտի ընտանիքում» արտացոլված են գլխատանը, գերդաստանին, նրանում գործող սովորութային իրավունքի չափանիշներին, աշխատանքի սեռատարիքային բաժանումներին, կնոջ և տղամարդու կարգավիճակին, ամուսնական, հարսանյաց արարողություններին, ամուսնացող զույգի իրավունքներին ու պարտականություններին, ծնողների ու զավակների փոխհարաբերություններին, ընտանեկան դաստիարակության հարցերին, հուղարկավորության սովորույթներին և այլ խնդիրների վերաբերող հարցեր (էջ 180-186):

Մ. Խրիմյանն ընտանեկան կյանքի բարեկեցության համար առաջ է քաշել երեք պայման՝ ուսում, դաստիարակություն և տնտեսություն. «Լուսով հաց գտէք, դաստիարակութեամբ բարի ընտանիք կազմեցէք, իսկ իմաստուն տնտեսութեամբ հոգացէք... ձեր ներկան և ապագան» (նույն տեղում, էջ 185): Հարկ ենք համարում նրա ուսանելի մի քանի մտքեր մեջբերել, որոնք այսօր էլ ունեն դաստիարակչական մեծ արժեք.

«Գիտես, Թոռնիկ, Աստուած մի արասցէ, եթե քո ամուսին Շուշան մեռնի, մի ուրիշ Շուշան կարող ես առնել, բայց երբ հող քեզ համար մեռնի, այսինքն կամ ծախես, կամ ձեռքէդ հանես եւ զրկուիս քո ժառանգած հողէն, էն ժամանակ դու էլ կը մեռնիս, Շուշանն էլ հետ քեզ կը մեռնի եւ Պապիկի տուն եւ օճախ կը քանդուի» («Պապիկ և Թոռնիկ», էջ 24):

«Իշխանության առաջին խանձարուրն ընտանիքն է» («Սիրաք և Սամուել», էջ 329):

«Նահապետական ընտանեաց մեջ շատ նշանավոր էր ծնողաց յարգանք ու որդւոց պատկառանք» («Դրախտի ընտանիք», էջ 195):

«Ընտանեկան կյանքին և տան շինութեան հիմնաքարեր կը համարուին հայր ու մայր» (նույն տեղում):

«...Աշխարհիս չարեաց ու բարեաց սկզբնածնունդ մայր ընտանիքն է» (նույն տեղում, էջ 205-206):

«Հայրենի կրոն, հավատ և եկեղեցին, այո այդ սուրբ ավանդները անեղծ, անկորուստ պահելու խորանն ընտանիքն է» (նույն տեղում, էջ 207):

«Յորժամ տան ծերունի նահապետ ողջ է, ու կը կառավարէ որդիքները և թոռները, նմանապէս մայր տանտիկին իւր հարսնեբը և աղջիկները... նորածին մանուկներու օրորոցներով կը լեցուի և կը ցնծայ տունը» (նույն տեղում):

«Հայրս... զարմացեր է, երբ քսանի չափ նորածին տղոց օրորոցները համրած է»,– խոսքը Մշո Հացեկաց գավառ կատարած ուղևորության մասին է (նույն տեղում, էջ 207-209):

«Ամուսնութիւն Աստծոյ հաստատած մի օրէնքն է՝ մարդկային սեռ պահելու համար» («Պապիկ և Թոռնիկ», էջ 128):

«Ամուսնութիւն Աստծոյ խորհրդաւոր ձեռագործ և բնական օրէնքն է, ... ամուսնական օրենքը դրախտէն կը սկսի, ...ամուսնութեան բուն օրէնքը բնական սէրն է, որ մարդուն բնութենէն անբաժանելի է, ... ամուսնական օրէնքը աշխարհի մարդկութեան հիմն է... մեր կեանքը շարունակող ստեղծագործ ձեռքն է» (նույն տեղում, էջ 126):

«Ամուսնական միության մեջ այր և կին՝ մի մարմին է» («Դրախտի ընտանիք», էջ 221):

Ամուսնությունը պետք է «առանց արենակցութեան լինի», քանի որ դա ոչ միայն «բարոյապէս հակառակն է», այլև «վնասակար և ազնուասերունդ ընտանիք կազմելու... բժիշկները փորձով կապացուցեն ազգակից ամուսնութեան չար հետևանքները» (նույն տեղում, էջ 221):

«Ամուսնական արմատէն ընտանիքը կը հաստատուի, ընտանիքէն ժողովուրդ, ժողովուրդէն այլ եւ այլ ազգերը, ազգերէն իշխանական պետությունները և պետութիւններէն ընհանուր մարդկային համաշխարհական ընկերութիւն» («Դրախտի ընտանիք», էջ 205-206):

«Հարսանիքը պսակի սուրբ խորհուրդին հրապարակական ու հանդիսաւոր արարողութիւնն է... մարդոյն Նոր Կենաց մուտքն է և տոնահանդեսն է», որը պետք է իրականացնել «չափով, կշռով և պարկեշտութեամբ» (նույն տեղում, էջ 230):

«Իրենց զավակներ շուտ կը կարգեն, որպեսզի տան աշխատաւորներ հասնին» (նույն տեղում, էջ 227):

Նշանադրությունից հետո «կոյսն պարտաւոր է իւր պատկառանաց քողով ծածկուիլ միշտ ի պատիւ փեսային. և միանգամայն

ցոյց տալով, թէ ինքն նուիրեալ է, այլևս ազատ չէ» (նույն տեղում, էջ 225):

«Կենակից ամուսին և հարսն ընտրելու իրավունքը ամուսնացող փեսային իրավունքն է», սակայն «ծնողք ևս մեծ իրաւունք ունին այս պարագային մէջ» (նույն տեղում):

«Առևանգութիւնք կը լինեին, որոց ըստ մեծի մասի պատճառը ծնողաց խստասիրտ յամառութիւնը և ընծայասիրութեան բաղձանքն է...» (նույն տեղում):

Մենք նմանատիպ շատ հարցերի պատասխաններ և խորհուրդներ պարունակող մտքերի՝ որպես «մշտախօս կտակ եւ յիշատակ», կհանդիպենք ընտանեկան դաստիարակության, հուղարկավորման սովորույթների և սոցիալական այլ խնդիրների վերաբերյալ:

«Տղամարդը «արտաքին վաստակաւորն է», իսկ կինը «տան տիկինն» է, որի խնդիրն է «տան կառավարութիւն» և «մայրական դաստիարակութիւն»: «Ինչպես «միակտուր լծափայտ՝ եզներու վզի վերայ հաւասար դրուած է», այնպես էլ կնոջ և տղամարդու միջև տան հոգսերի բաժանումը: «Լծակից» բառը թույլ է տալիս հասկանալու «առն և կնոջ հաւասար կեանք և ընթացքը» (նույն տեղում, էջ 250):

«Կինը աղախին չէ. այլ տան տիկին ու թագուհի» (նույն տեղում, էջ 245), «Կին մարդոց կեանքն է» (նույն տեղում, էջ 147)[45]:

«Ծնողները պետք է բարի գործոց օրինակով դաստիարակեն իրենց զավակները», «ծնողները պետք է «նախ իրենց կեանքն ուղղեն և ապա իրաւունք ունենան իրենց զավակները խրատելու», «իրենց զավակներին դաստիարակեն այնպես, որ նոքա հայրենատուր սուրբ կրօն, հաւատք անարատ ու անեղծ պահեն, Հայաստանեայց եկեղեցին սիրեն, եղբայր սիրեն, ընկեր սիրեն, մարդասեր լինին, ազգ սիրեն, հայրենիք սիրեն եւ նոր հին անշքացեալ փառք ու յիշատակը չի մոռանան, նորա կիսակործան տաճարները յիշեն, ուսումն սիրեն, գիտութիւն սիրեն, դպրոց սիրեն, գիրք սիրեն, եթե քաղաքացի են՝ նոր աշխարհի այլ եւ այլ ար-

[45] Ի դեպ, Ա. Պետրոսյանը Խրիմյանի ազգագրական գործունեությանը անդրադառնալիս առանձնացրել է նրա՝ հայ բանարվեստի ընտանեկան դաստիարակության համար մեծ խորհուրդ ունեցող նշխարները (տե՛ս ***Պետրոսյան Ա.,*** Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, էջ 161-171):

հեստները սորվին. անխարդախ լինին վաճառելոյ եւ գնելոյ մեջ: Իսկ եթե չինական են, հող սիրեն, մաճ սիրեն եւ աշխատութիւն սիրեն»: «Օրհնեցեք, որ նոքա (զավակները – Ռ. Ն.) ամուսնասէր լինին, տնաշէն եւ տնտես լինին. բարի եւ ազնուական ընտանիք կազմեն, որով միայն հնար է, որ ազգային կեանքը բարւոքի, բարձրանայ իւր համբաւ եւ փառք» (նույն տեղում, էջ 279-280):

Ղևոնդ Ալիշանի երկերի ազգագրական համառոտ բնութագիրը: Բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ Ղևոնդ Ալիշանը ծնվել է Կ. Պոլսում 1820 թ. հուլիսի 6-(18)-ին դրամագետ-հնագետի ընտանիքում: 1832 թ. մեկնել է Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ ուսումնառության, 1840 թ. պաշտոնապես ճանաչվել է Մխիթարյան միաբանության անդամ: Եղել է Հռոմում, Փարիզում, Վիեննայում, Բեռլինում, Լոնդոնում, Գենտում (Բելգիա), Միլանում, Բրյուսելում, սակայն երբեք չի եղել Հայաստանում: 1872 թ. մինչև կյանքի վերջը մշտապես ապրել է Վենետիկի Ս. Ղազար կղզում, որտեղ էլ մահացել է 1901 թ. նոյեմբերի 9(22)-ին[46]: Ալիշանը եղել է հայ ժողովրդական բանարվեստի առաջին գնահատողներից և բանահավաք ուսումնասիրողներից[47]: «Հայոց երգք ռամկականք» (1852) ժողովածուն մեր գիտական բանագիտության առաջին աշխատություններից է: Գիտական հոդվածներով Ալիշանը հանդես է եկել 1843 թվականից՝ «Բազմավեպի» էջերում: «Տեղագիր Հայոց մեծաց» (1855) աշխատության մեջ տեղադրել է պատմական Հայաստանի նահանգները (Վասպուրական, Սյունիք, Արցախ, Այրարատ, Տայք և այլն), տվել նրանց համապատասխան գիտաաշխարհագրական բնութագրությունը: Գրքում տրված է Հայաստան աշխարհի «բնական նկարագիրը», այսինքն՝ գետեր, լեռներ, տարբեր վայրերի կլիմայական բնութագրություններ, կենդանական աշխարհի գիտական նկարագրություն, արհեստների տեսակներն ու ըստ գավառների տարածված լինելը: Աշխատությունն ավարտվում է տեղանունների հանգամանալի ցանկով: «Տեղագիր Հայոց մեծացը»՝ իբրև պատմական Հայաստանի աշ-

[46] Տե՛ս ***Երեմյան Ս.***, Կենսագրություն Հ. Ալիշանի, Վենետիկ, 1902: Տե՛ս նաև ***Շտիկյան Ս.***, Ղևոնդ Ալիշան, (Ծննդյան 150-ամյակի առթիվ) // ՊԲՀ, 1970, № 2, էջ 13-263:

[47] Տե՛ս ***Ցարութիւնեան Ս.***, Ղեւոնդ Ալիշանը եւ Հայոց երգերն ու հավատալիքները // «Բազմավէպ», 1-4, 2001, էջ 233-241:

խարհագրության վերաբերյալ հմտալից տեղեկատու ձեռնարկ, դարձել է ոչ միայն Հայաստանի պատմությամբ ու աշխարհագրությամբ, այլև ազգագրությամբ զբաղվողների սեղանի գիրքը:

Ալիշանը նախատեսել էր գրել պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգների մասին պատմաաշխարհագրական և ժողովրդագրական բնույթի աշխատություններ, որոնք պետք է զետեղվեին 20-22 մեծադիր հատորներում: Շարքի առաջին գործն է «Շիրակ, տեղագրություն պատկերացույցը» (1881), որտեղ Ալիշանը հանգամանալից քննության է ենթարկել այդ գավառի պատմությունն ու աշխարհագրությունը՝ ազգագրական պատկերներով հանդերձ: Այնուհետև իրար են հաջորդել «Սիսուան, համագրություն Հայկական Կիլիկիո և Լևոն Մեծագործ» (1885), «Այրարատ, բնաշխարհ Հայաստանյաց» (1890) և «Սիսական, տեղագրություն Սյունյաց աշխարհի» (1893) աշխատությունները, որոնք կոթողային ուսումնասիրություններ են: Այդ գործերում Ալիշանը մասնագիտական մանրակրկիտությամբ տեղագրել է Հայաստանի պատմական նահանգների լեռները, գետերը, լճերը, ձորերը, բուսական ու կենդանական աշխարհը, արժեքավոր տեղեկություններ հաղորդել քաղաքներում, շեներում ու գյուղերում եղած մեծ ու փոքր պատմական հուշարձանների մասին: Նրա տեղագրական երկերում հավաքված են բազմաթիվ մեծարժեք նյութեր հայկական վանքերի, զանազան հուշարձանների վրա եղած արձանագրություններից, ամփոփված են իր նկարագրած տեղավայրերից մինչ այդ հրատարակված բոլոր արձանագրությունները: Ուշագրավ են Ալիշանի «Հայապատում» (1901) և «Հայ բուսակ կամ հայկական բուսաբանություն» (1895) աշխատությունը, ուր հեղինակը հավաքել, դասդասել և գիտականորեն բնութագրել է Հայկական լեռնաշխարհի ավելի քան 3400 բույսեր ու ծաղկատեսակներ՝ 150-ից ավելի նկարներով:

«Այրարատ», «Շիրակ», «Սիսական», «Սիսուան», «Նշմարք հայկականք» (պր. 1-3), «Հայաստան-Վենետիկ», «Բնախոսություն Հայաստանի», «Հայապատում» և այլ ծավալուն աշխատությունները անխոնջ հետազոտական աշխատանքի, տեղագրական, պատմաքաղաքական, մատենագիտական, հնագիտական, ազգագրական անհամար փաստերի համահավաք շտեմարաններ են: Մեծ Հայքի մի քանի գավառներին և Կիլիկյան Հայաստանին նվիրված պատմամշակութային մենագրությունները ցայժմ մնում են չգերազանցված:

Հետազոտական մեղվաջան աշխատանքի և խոր հմտության շնորհիվ հեղինակը կազմել է համանման գավառների մանրամասն տեղագրությունը, խոսել է նրանց բուսական ու կենդանական աշխարհի մասին, նշել կարևոր վարչական, կրոնական, մշակութային կենտրոնները, նաև հիմնական գծերով ներկայացրել Հայաստանի քաղաքական պատմությունը: Ի տարբերություն նախորդ հեղինակների ծայրաստիճան կցկտուր, երբեմն էլ միմյանց հակասող պատմաաշխարհագրական պրպտումների՝ Ալիշանի ստվարածավալ մենագրությունները հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջերը քննական վերլուծությամբ այս կամ այն գավառի կամ նահանգի ճշգրտված պատմաաշխարհագրական ու մշակութային համալիր բնութագրումներ են: Դրանցում աչքաթող չեն արվել գիտակրթական, ճարտարապետական կենտրոնները, նրանց տեղագրական մանրակրկիտ նկարագրությունները, վիմագրական, հնագիտաազգագրական, ժողովրդագրական, պատմական իրադարձությունների, նշանավոր գործիչների վերաբերյալ: Ցավոք, նա չհասցրեց հրատարակել «Վասպուրական» երկու հատորով ստվարածավալ աշխատությունը, որի հրատարակումը մեծ նպաստ կբերեր հայագիտությանը: Նրա աշխատություններից յուրաքանչյուրը պատմաազգագրական հատուկ ուսումնասիրության գործեր են: Միայն այս կարգով հնարավոր է ամբողջական պատկերացում կազմել Ղևոնդ Ալիշանի ներդրած բազմաբնույթ գիտական վաստակի մասին: Ղ. Ալիշանի յուրաքանչյուր աշխատություն իր տեսակի մեջ նախորդը չի ունեցել:

«Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» (1895) աշխատությունը հոգևոր մշակույթի արժեքավոր ուսումնասիրություն է: Այն ընդգրկում է հայոց բնապաշտության, կենդանապաշտության, ոգիների աշխարհի, հայ հեթանոսական դիցարանի, մոգության, հմայության և այլ հարցերի բնութագրությունը: Աշխատությունում քննվում են հայկական հեթանոսության ծագումնաբանական ակունքները և այլն: Այս ինքնատիպ մենագրությունն արդյունք էր հեղինակի՝ հայ միջնադարյան ձեռագիր ու տպագիր աղբյուրների, վիմագրության, տեղագրության, հնագիտական հուշարձանների, ժողովրդական հավատալիքների երկարատև պրպտումների, որոնց հիման վրա նա քաղել էր մեծաքանակ արժեքավոր նյութեր, ենթարկել գիտական կուռ համա-

կարգման և հետազոտել ժամանակի միջազգային կրոնագիտության մեջ ընդունված մեթոդներին համապատասխան: Աշխատությանմեջ ուսումնասիրվել էր հայ հեթանոսական հավատալիքների, պաշտամունքի, դիցաբանության դրեթե ամբողջական համակարգը: Քննության էր առնվել քրիստոնեությունից հազարամյակներ առաջ հայկական ցեղերի նախնադարյան հավատալիքների ու պաշտամունքների մեծածավալ համակարգը՝ իր տարբեր դրսևորումներով՝ տարրապաշտությամբ, երկնային լուսատուների, բույսերի, կենդանիների, լեռների ու քարերի, գետերի ու աղբյուրների, բարի ու չար ոգիների, աստվածային հերոս-նախնիների պաշտամունքներով, նախնադարյան կրոնապաշտամունքային ձևերով՝ հմայությամբ, գուշակությամբ, ախտարքային հավատալիքներով, հանդերձյալ կյանքի նկատմամբ ունեցած նախնական ու հետագա պատկերացումներով, այլ կերպ ասած՝ հայոց նախաքրիստոնեական ժամանակների հավատալիքների, դիցաբանության և կրոնական պաշտամունքների ամբողջական համակարգը, որն աննախադեպ երևույթ էր հայագիտության պատմության մեջ:

«Բազմավեպի» էջերում գիտնականի տպագրած ժողովրդական տոներին և հավատալիքներին վերաբերող հոդվածների ազգագրական, գիտական արժեքը առ այսօր ըստ արժանվույն գնահատված չէ: Ղևոնդ Ալիշանի բանագիտական ակնառու գործունեությանն են անդրադարձել Ա. Ղանալանյանը[48], Ս. Հարությունյանը: Ըստ Ս. Հարությունյանի՝ Ալիշանն իր գործունեությամբ դառնում է հայ ժողովրդագիտության նախակարապետներից մեկը[49]: Ուշագրավ է Ղ. Ալիշանի՝ 1852 թ. Վենետիկում հրատարակած «Հայոց երգք ռամկականք» աշխատությունը: Այն հայ միջնադարյան գուսանաժողովրդական և աշուղական երգերի անդրանիկ ժողովածուներից մեկն էր՝ դասական օրինակ հայ բանասիրության պատմության մեջ: Ղ. Ալիշանն իր ժողովածուում է ամփոփել Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Լոնդոնի մատենագրություններում պահվող հայ միջնադարյան ձեռագրերից անձամբ քաղած և ԺԹ դարում բանավոր ավանդությունից վկայված մոտ

[48] Տե՛ս ***Ղանալանյան Ա.***, Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985:

[49] Տե՛ս ***Ցարությունեան Ս.***, Ղեւոնդ Ալիշանը եւ Հայոց երգերն ու հաւատալիքները // «Բազմավէպ», 1-4, 2001, Վենետիկ, Ս. Ղազար, 2001, էջ 233-241:

երկու տասնյակ ժողովրդական երգեր, դրանց զուգակցել նաև նույն երգերի իր իսկ կատարած անգլերեն թարգմանությունները, որով ոչ միայն մեր միջնադարյան և բուն ժողովրդական երգերի ընտրանին առաջին անգամ արժանանացավ առանձին հրատարակության, այլև դրվեց թե՛ ազգային, թե՛ միջազգային գիտական լայն շրջանառության մեջ[50]: Նշենք, որ Ալիշանի այս ժողովածուով է ի հայտ եկել հանրահայտ «Կռո՛ւնկ, ուստի՞ կու դաս» երգը:

Իր գիտական հսկայական ժառանգությամբ Ալիշանը մեծապես նպաստել է հայրենական գիտության զարգացմանը: Նրա գործերի մեծ մասը նաև հայ ազգագրության համար այսօր էլ ունեն ճանաչողական արժեք և սկզբնաղբյուրի նշանակություն:

Հայ ազգագրական նյութի գիտական ուսումնասիրության առումով նախահեղափոխական շրջանում շատ են կարևորվում նաև **Նիկողայոս Ադոնցի** (1871-1942) և **Սողոմոն Եղիազարովի** (1852-1914) ուսումնասիրությունները: Ադոնցն իր «Армения в эпоху Юстиниана» (Ս. Պետերբուրգ, 1908) աշխատության մեջ պատմաազգագրական նյութերի քննությամբ բացահայտել է միջնադարյան Հայաստանի քաղաքական-տարածքային կազմավորումների աղերսը տոհմային-ազգակցական ու համայնքային կազմավորումների հետ: Ազգագրական առումով առանձնապես ուշագրավ են Ս. Եղիազարովի «Сельская община» (Казань, 1899) և «Городская цехи» (Казань, 1891) աշխատություններում XIX դարի հայ գյուղական համայնքի և արհեստավորական համքարությունների վերաբերյալ կատարված հետազոտությունները:

Վերջում նկատենք, որ հոդվածում քննարկվող ժամանակաշրջանից են ռուս և եվրոպացի ճանապարհորդներ **Իվան Շոպենի** (1798-1870)[51], **Էլիզե Ռեկլյուի** (1830-1905)[52], **Հենրի Լինչի** (1862-

[50] Տե՛ս ***Ցարութիւնեան Ս.,*** Ղեւոնդ Ալիշանը եւ հայոց երգերն ու հաւատալիքները, էջ 235-236:

[51] Տե՛ս ***Шопен И. И.,*** Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб., 1852:

[52] Տե՛ս ***Ռեկլյու Է.,*** Լազիստան, Հայաստան և Քրդստան, Վաղարշապատ, 1893:

1913)[53] և այլոց ուղեգրությունները, XIX դարի երկրորդ կեսին հրապարակ եկած մի շարք հայերեն պարբերականներ և ռուսալեզու մատենաշարեր, որոնք, կարելի է ասել, առ այսօր անսպառ ազգագրական նյութ են բովանդակում՝ տակավին չօգտագործված:

XIX դարի երկրորդ կեսին հանդես են գալիս հայկական մի շարք նոր թերթեր և ամսագրեր, որոնք ավելի, քան դարասկզբի մամուլը, ուշադրություն են դարձնում ազգագրական թեմաներին[54]: Հայերի ներքին կյանքի ու սովորույթների, մասնավորապես տնտեսական զբաղմունքների ու կենցաղի վերաբերյալ առատ նյութեր են պարունակում նաև XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հրապարակված ռուսական մի շարք մատենաշարեր ու պարբերականներ[55]:

Այսպիսով՝ ազգագրական գիտելիքների կուտակման այս հիմքի վրա էլ ծավալվեց ազգագրության՝ որպես պատմական գիտության ուրույն բնագավառի ձևավորման ու զարգացման գործընթացները, «Ազգագրական հանդեսի» (1895/1896-1916 թթ) և «Էմինյան ազգագրական ժողովածուի» (1901-1913թթ.) հրատարակմամբ ավարտին հասցվեց այն:

---

[53] Տե՛ս ***Линч Х. Ф. Б.,*** Армения. Тифлис, т. 1-2, 1910:

[54] Տե՛ս Այդ պարբերականներից էին «Մասիս» օրաթերթը՝ Կ. Պոլսում (1884-1908), «Արծուի Վասպուրականի» ամսաթերթը նախ Կ. Պոլսում (1855-1856), ապա՝ Վարագա վանքում (1858-1864, 1873-1874), «Հյուսիսափայլը»՝ Մոսկվայում (1858-1864), «Կռունկ Հայոց աշխարհի» Թիֆլիսում (1860-1863), «Լրատար Արծուիկ Տարօնոյն»՝ Մշո Ս. Կարապետ վանքում (1863-1865), «Արարատ» ամսագիրը՝ Էջմիածնում (1868-1919), «Արևելյան մամուլ» ամսագիրը՝ Զմյուռնիայում (1871-1909), «Մշակ» օրաթերթը, (1872-1920), «Փորձ» ամսագիրը՝ Թիֆլիսում (1876-1881), «Բիւրակն» ամսաթերթը՝ Կ. Պոլսում (միայն նոր շրջանը՝ 1897-1900 թթ.), «Նոր դար» օրաթերթը՝ Թիֆլիսում (1884-1908), «Արաքս» ամսագիրը՝ Պետերբուրգում (1887-1898), «Հանդես ամսօրյա» ամսագիրը՝ Վիեննայում (1887 թվականից մինչև այսօր):

[55] Տե՛ս “Кавказский календарь” (Тифлис, 1845-1917); “Материалы для описания местностей и племен Кавказа” (Тифлис, 1883-1903), “Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края” (Тифлис, 1885-1887 (в 7 томах); “Известия Кавказского отдела императорского российского географического общества” (Тифлис, 1872-1917) և այլն:

Գ. 1890-ական թվականներից մինչև XX դարի սկզբները՝ հայ ազգագրությունն իբրև ուրույն գիտական ոլորտի վերջնական կայացման շրջափուլ (Ե. Լալայան և այլք)

1. ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ ԵՎ «ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԴԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(«Ազգագրական հանդեսի» 120-ամյակի առթիվ)

Բացառիկ է ականավոր ազգագրագետ, բանագետ ու հնագետ, խմբագիր ու հրատարակիչ, մանկավարժ ու թանգարանաստեղծ Երվանդ Լալայանի դերը հայ ազգագրական գիտության կայացման և հետագա զարգացման գործում: Նա թողել է հարուստ ու բազմաբովանդակ ժառանգություն: Նրա գիտագործնական բազմաբեղուն ու բազմաբնույթ գործունեությունը առ այսօր խորքային ուսումնասիրության չի արժանացել: Ուսումնասիրությունները սահմանափակվում են գիտական հոդվածների և լրագրային հաղորդումների վերլուծության շրջանակներով[1]:

---

[1] Տե՛ս ***Ակինյան Ն.,*** Ե. Լալայան (մահախոսական) // «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1931, թիվ 3-5: ***Խ. Սամուելյան***, Ե. Լալայան (մահախոսական) // «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, 1931, փետրվարի 28, թիվ 50: ***Ղաֆադարյան Կ.,*** Երվանդ Լալայան (ծննդյան 100-ամյակի առթիվ) // «Սովետական Հայաստան», 1964, նոյեմբերի 27: ***Меликсет Беков Л. Н.,*** Армянский этнограф-археолог Е.А. Лалаян // “Советская этнография”, 1936, № 4-5: ***Սարգսյան Ա.,*** Ե. Լալայանի կյանքն ու գործունեությունը արտացոլող փաստաթղթեր // «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1963, № 1: Մելիք-Փաշայան Կ. Վ., Երվանդ Լալայան (ծննդյան 100-ամյակի առթիվ) // «Պատմաբանասիրական հանդես», 1964, թիվ 3, էջ 29-41: ***Նազինյան Ա. Մ.***, Երվանդ Լալայանը բանահավաք-բանագետ // «Տեղեկագիր» հաս. գիտ. ՀՍՍՀ ԳԱ, 1965, թիվ 8, էջ 63-70: ***Ադամյան Ա. Հ.***, Երվանդ Լալայանի անտիպ նամակներից // «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (Հաս. գիտ.), թիվ 8, 1965, էջ 71-80: ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 27-28: ***Մելիք-Փաշայան Կ. Վ.***, ***Նազինյան Ա. Մ.***, Երվանդ Լալայանի կյանքն ու գիտական գործունեությունը // Լալայան Երվանդ, Երկեր, հինգ հատորով, հ. 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1983, էջ 7-32: ***Նահապետյան Ռ.***, Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, թիվ 3, էջ 132-148: ***Վարդանյան Ս.***, Ջավախքի բանահյուսական մշակույթը Երվանդ Լալայանի գրառումներում (Ծննդյան 150-ամյակի առթիվ) // ՊԲՀ, 2014, թիվ 2, էջ 46-54:

Ե. Լալայանը հիմնավոր մասնագիտական կրթություն էր ստացել Ժնևի և Լոզանի համալսարաններում, աշխատել էր Վիեննայի Մխիթարյանների մոտ և Փարիզի մարդաբանական դպրոցում, քաջատեղյակ էր ժամանակի ազգագրական և մարդաբանական գիտությունների հիմունքներին: Նա գործունեություն է ծավալել 1880-1920-ական թվականներին: Ծնվել է 1864 թ. մարտի 13-ին Ալեքսանդրապոլում: 1885 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և իբրև ուսուցիչ աշխատել է Ախալցխայում, Ախալքալաքում, Ալեքսանդրապոլում: 1894 թ. ավարտելով Ժնևի համալսարանի հասարակագիտական բաժինը՝ ստացել է սոցիալական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Վեց ամիս աշխատելով Վիեննայի Մխիթարյանների մոտ՝ ձեռք է բերել գիտական աշխատանքի փորձ: Իսկ Փարիզի մարդաբանական դպրոցում ծանոթացել է մարդաբանության սկզբունքներին: Զբավարարվելով դրանցով՝ նա ավարտել է նաև Շվեյցարիայի Լոզան քաղաքի համալսարանին կից մանկավարժության դասընթացը և ստացել մանկավարժի վկայական: Ե. Լալայանը, ուսումնառության տարիներին՝ 1890-1894 թթ., գիտական և մանկավարժական աշխատանքի լուրջ փորձ ձեռք բերելով, վերադարձել է Անդրկովկաս և երկու տարի՝ 1895-1897 թթ., դասավանդել է Շուշիի թեմական դպրոցում: Ե. Լալայանի հրատարակած առաջին աչքի ընկնող գործը «Ջավախքի բուրմունք» բանահյուսական ժողովածուն էր[2]: Այնուհետև հրատարակել է «Սուրբ Սարգիս»[3], «Տաճկախոս հռոմեական հայերը»[4] հոդվածները, որոնք ընդգրկվում են «Ջավախք»[5] պատմաազգագրական աշխատության մեջ: Դրանում տեղ է գտել նաև Ե. Լալայանի՝ 1895 թ. Փարիզի ժողովրդական ավանդույթների ընկերության պարբերականում տպագրված «Հայկական ավանդությունները և սնոտիապաշտությունները» հոդվածաշարը: Ի դեպ, Ե. Լալայանը նույն ընկերության թղթակից անդամն էր:

---

[2] Տե՛ս «Ջավախքի բուրմունք», հավաքեց ***Լալայանց Ե.***, Թիֆլիս, 1892:

[3] Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1894, № 11, էջ 350-353:

[4] Տե՛ս նույն տեղում, 1894, № 10, էջ 313-315:

[5] Տե՛ս ***Լալայան Երվանդ***, Ջավախք (Նյութեր ապագա ուսումնասիրության համար) // «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գիրք Ա., Շուշի, 1896:

Մինչև Երվանդ Լալայանի գրական ասպարեզ իջնելը Արևելահայաստանում ազգագրական նյութեր հավաքելու ծրագիր չկար: XIX դարի երկրորդ կեսին մեզ հայտնի են գրողներ, որոնք, քաջածանոթ լինելով հայ գյուղական կյանքին, իրենց ստեղծագործությունները հագեցնում էին ազգային սովորություններով, ծեսերով, կենցաղային և աշխատանքային երգերով և այլն: Այդ եղանակը կիրառել է Խ. Աբովյանը դեռ XIX դարի առաջին կեսին: Գրեթե նույն ժամանակահատվածում էր ազգագրական ուսումնասիրություններ կատարում Մխիթարյան միաբանության անդամ Մինաս Բժշկյանը: Պերճ Պռոշյանը Արևելահայաստանում դարձավ Աբովյանի գործի շարունակողը. նրա «Սոս և Վարդիթեր», «Հացի խնդիր» և մյուս վեպերը Աշտարակի բուն կենցաղով լեցուն գործեր են: Այդ նույն նպատակներով ազգագրական նյութեր է օգտագործել նաև Ռաֆֆին: Ինչպես Արևմտահայաստանում, նմանապես Արևելահայաստանում ծրագրային դեր կատարեց Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց» վերնագրով գիրքը[6]: Հեղինակը խորհուրդ էր տալիս գավառահայ մտավորականությանը՝ գրառելու և մոռացությունից փրկելու ազգագրական-բանահյուսական նյութերը: Նա ազգագրական նյութերը գրի էր առնում մեծ ոգևորությամբ, խոսուն հայերենով, մի երևույթ, որ շատ կարևոր էր XIX դարի երկրորդ կեսին, ազգային ինքնագիտակցության զարթոնքի շրջանում: Նկատենք, որ մինչև այսօր էլ Գարեգին Սրվանձտյանցի այս մեթոդը ուղենիշ է եղել արևմտահայ, իսկ ներկայումս՝ սփյուռքահայ ազգագիրների համար:

XIX դարի 90-ական թթ. վերջին տասնամյակներն արդեն և XX դարի սկիզբը նշանավորվեցին ազգագրական գիտելիքների աննախադեպ կուտակմամբ: Կարելի է ասել, որ այդ ժամանակաշրջանի ամբողջ հայ գրականությունը, դրա ամենալայն ըմբռնմամբ, ողողված է ժողովրդի առօրյա կյանքը, կենցաղն ու սովորույթները համակողմանիորեն արտացոլող առատ նյութերով: Այդ երևույթն իր արտահայտությունը գտավ թե՛ պարբերական մամուլում, հատկապես «Հանդես ամսօրյա», «Բազմավեպ», «Մշակ», «Բյուրակն», «Տարազ» և այլն, և թե՛ գեղարվեստական գրականության մեջ

[6] Տե՛ս ***Սրվանձտյանց Գ.,*** «Գրոց ու բրոց», մասն Ա., Երկեր, հ. 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, էջ 35-88:

(Բաֆֆի, Պ. Պռոշյան, Ռ. Պատկանյան, Հ. Թումանյան, Մ. Նալբանդյան, գյուղագիրներ և այլք), ինչպես նաև արվեստի զանազան բնագավառներում: Հայ ազգագրական նյութի մատուցման ու մեկնաբանման գործում նշանակալի ներդրում կատարվեց նաև ժամանակի բանասիրության մեջ, ինչպես, օրինակ, Ղ. Ալիշանի, Ս. Ամատունու, Ա. Ղլտչյանի, Վ. Հացունու, Ս. Հայկունու, Ն. Ադոնցի, Ս. Եղիազարյանի և այլոց կողմից: Վերջապես, նպաստավոր էր նաև ժամանակաշրջանը՝ հայ հասարակության բոլոր խավերի քաղաքական բուռն զարթոնքը՝ կապված ազգային մշակութային արժեքների և էթնիկ յուրահատկությունների նորովի գիտակցման և վերագնահատման հետ: Այս ամենի շնորհիվ պարարտ հող նախապատրաստվեց Հայաստանում ազգագրական գիտության կայացման և առաջընթացի համար: Այն հիմնավորապես կապված է Գ. Խալաթյանցի և հատկապես Ե. Լալայանի անխոնջ գործունեության հետ:

Երվանդ Լալայանը ազգագրական նյութերը գրի առավ գիտական-հետազոտողի բարեխղճությամբ, և դա այն բանի շնորհիվ, որ հրապարակի վրա էր Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանցի՝ խնամքով ու մանրամասնորեն կազմած «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» ուղեցույցը, որը լույս տեսավ 1887 թվականին: Ե. Լալայանը հիմնավորապես գործողության մեջ դրեց Գ. Խալաթյանցի «Ծրագիրը»: Այդ առիթով նա գրել է. «Այս աշխատության մեջ (նկատի ունի «Ջավախքը» – Ռ. Ն.) մենք առաջնորդվել ենք պրոֆ. Գ. Խալաթյանցի կազմած ծրագրով, որ առաջարկում ենք մեր բանահավաքներին որպես մի անհրաժեշտ ուղեցույց»[7]: «Ծրագիրը» հայ ազգագրությունը բուն գիտական հողի վրա դնելու լուրջ փորձ էր, որ Խալաթյանցը կատարել էր Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց» գրքի և ռուսական ու եվրոպական գիտությունների նվաճումների ազդեցությամբ: Այդ ծրագրի հիման վրա Արևելյան և Արևմտյան Հայաստանի բնակավայրերում շրջագայելիս նա գրի էր առնում ու հրատարակում տվյալ վայրի ազգագրական նյութը: Հետազոտությունը լրացվում էր ժողովրդական անգիր գրականության նմուշներով, նշանավոր վանքերի,

[7] ***Լալայան Ե.,*** Ջավախք (Նյութեր ապագա ուսումնասիրության համար) // «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գ. Ա, էջ 379:

պատմական հուշարձանների, միջնադարյան ձեռագիր մատյանների և այլ հնությունների նկարագրություններով: Իր անդրանիկ բանահավաքչական գործունեությունը սկսել է Ջավախքում դեռևս 1889 թվականին: Նա գրի է առնել Կարնո հայ բնակչության նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ մեծ քանակությամբ նյութ: Հայ գիտական ազգագրությունը մեծ կորուստներ կունենար, եթե Ե. Լալայանը համալիր կարգով գրի չառներ և չուսումնասիրեր, թանգարանի համար չհավաքեր կորստի մատնվող ազգագրական նմուշները: Գրի առնելիս նա առաջնորդվում էր նյութերի ամբողջականությունը պահպանելու սկզբունքով:

«Ազգագրական հանդեսը» հիմնելու շարժառիթները և պատմական նշանակությունը հայ ազգագրական գիտության զարգացման գործում:

Ե. Լալայանը 1895 թ. Շուշիում հիմնեց է հայ իրականության մեջ առաջին, ցարդ նմանը չունեցող ազգագրական մասնագիտական պարբերականը՝ «Ազգագրական հանդեսը», որը նշանակալից երևույթ էր հայ ժողովրդագիտության բնագավառում: Անդրանիկ համարը լույս տեսավ Շուշիում 1895-1896 թվականներին: Երկրորդ համարը տպագրվեց Թիֆլիսում ու պարբերաբար հրատարակվեց շուրջ քսան տարի՝ մինչև 1916 թվականը: Լալայանի անմիջական խմբագրությամբ ու ղեկավարությամբ լույս ընծայվեց 26 հատոր: Հանդեսի առաջին հատորը բովանդակում էր Ջավախքի[8] հայոց ազգագրությունը, ինչպես նաև իր հեղինակությամբ «Համառոտ տեսություն հայ ազգագրության» ակնարկը, ուր նա շարադրել է հայ ազգագրության անցած ուղին, որին ավելացնելու էր իր գիտական վաստակը: «Հրատակչից» խորագրով համառոտ առաջաբանում Լալայանը շարադրում է հանդեսը ստեղծելու շարժառիթները, նպատակները. «Ռոպեական ազդեցության տակ չենք վճռել մի այդպիսի հանդեսի հրատարակության ձեռնամուխ լինել,

[8] Տե՛ս ԱՀ, գիրք Ա: Հետագա հղումները չծանրաբեռնելու համար նպատակահարմար ենք գտնում այստեղ նշել ԱՀ-ի համարների լույսընծայման տարեթվերը՝ գ. Բ՝ 1897, գ. Գ՝ 1898, գ. Դ՝ 1898, գ. Ե՝ 1899, գ. Զ՝ 1900, գ. VII-VIII՝ 1901, գ. IX՝ 1902, գ. X՝ 1903, գ. XI՝ 1904, գ. XII՝ 1904, գ. XIII՝ 1906, գ. XIV՝ 1906, գ. XV՝ 1907, գ. XVI՝ 1907, գ. XVII՝ 1908, գ. XVIII՝ 1908, գ. XIX՝ 1910, գ. XX՝ 1910, գ. XXI՝ 1911, գ. XXII՝ 1912, գ. XXIII՝ 1912, գ. XXIV՝ 1913, գ. XXV՝ 1914, գ. XXVI՝ 1916:

ոչ էլ պատահմամբ ենք ընտրել այս. մեզ ճանաչողները գիտեն, թե որքան ժամանակից ի վեր փայփայել ենք այս միտքը և որքա՛ն արգելքների ենք հաղթել փոքրիշատե նախապատրաստվելու այս գործի համար: Այսօր մենք հանդես ենք գալիս ոչ թե միայն մեր ուժի վրա վստահացած, այլ ազգի ինքնաճանաչության զգացման: Թերթերի մեջ սփռված և առանձին լույս տեսնող ազգագրական հոդվածներն արդեն ապացուցանում են, որ հայոց ազգն էլ վերջապես զարթնել է խոր քնից և ցանկանում է կատարել գիտության ամենիմաստ խոսքը՝ «Ծանի՛ր զքեզ». նա կամենում է ճանաչել իրեն և յուր ազգային հատկությունների վրա հիմնել ազգային զարգացումը: Մեր այս գործն այդ զգացման արդյունքն է և մեր կոչումը՝ այդ գործին գիտական ուղղություն տալ և աշխատողների մեջ միություն հաստատել»[9]: «Ազգագրական հանդեսի» խնդիրն է եղել նպաստել ամեն մի հայի՝ ճանաչելու իր ազգի անցյալը, իր երկիրը, իրեն շրջապատող ազգերը[10]:

«Մեր կոչումն այժմ միայն,– գրում է մեծ բանահավաքը և գիտության կազմակերպիչը,– նյութեր հավաքելն է, որովհետև դրանց պակասության պատճառով գիտական ուսումնասիրություններն անհնարին են, և մեկ էլ՝ դրանց համար ժամանակ չի պակասիլ: Մենք կը կրենք քարերը և երանի նրան, ով կըգա այդ քարերով ազգային ինքնուրույնության շենքը կառուցանելու և համամարդկային էվոլյուսիոնի օրենքները գծելու»[11]:

Լալայանը մեծ ուշադրություն է դարձրել այդ կարևոր գործում մտավորականության լայն խավերին ներգրավելուն: Նա մամուլի էջերում հրատարակած հայտարարություններով, ազգագրական ընկերության կազմակերպած դասախոսություններով և բազմաթիվ այլ միջոցներով հորդորել է և խրախուսել՝ նվիրվել ազգային մշակույթի պահպանմանը, գիտական սերունդներին այն հանձնելու մեծ գործին: Նա գրում է. «Դե՛հ, ուրեմն, հայ ժողովուրդ, բա՛ց սիրով մեր առաջ քո սիրտն ու հոգին, թո՛ղ որ մենք թափանցենք քո ներքին կյանքի մեջ և պատկերացնենք քեզ ինչպես որ ես. քո ախտերիդ նկարն անգամ կարող է բարիք բերել

[9] Տե՛ս Ա.Հ, գիրք Ա., էջ 5:
[10] Տե՛ս «Համառոտ տեսություն հայոց ազգագրական ընկերության նպատակների և ամբողջ գործունեության», Թիֆլիս, 1914, էջ 3:
[11] Ա.Հ, գ. Ա., էջ 6:

քեզ: Եվ դեռ քանի քաղաքակրթության հուրը լափում է անցյալի բոլոր հիշատակներն, և մենք պետք է շտապենք հավաքելու, ինչ-որ դեռ մնացել է, և դեռ քանի մենք մասնագետ ազգագրագետներ չունինք, հրավեր ենք կարդում հայոց գրականության **Մշակներիդ և Ձեզ, Հայ Ուսուցչուհիներ, և Ուսուցիչներ, որ սիրով հանձն եք առել Հայ ժողովրդի կրթության գործը, Ձեր իսկ գործի հաջողության և ազգային ինքնուրույնությունն ապահովելու փափագով՝ յուրաքանչյուրդ Ձեր միջավայրը ներկայացնելու նեղությունն հանձն առեք**...»[12]: Գիտնականի այդ կոչը ապարդյուն չանցավ: Ինչպես պետք էր սպասել, Հայաստանի երկու հատվածներից նրա շուրջը համախմբվեցին բազմաթիվ բանահավաքներ և գիտնականներ:

Նյութական ու բարոյական զրկանքների գնով Լալայանին հաջողվել է հաստատվել Թիֆլիսում: Ե. Լալայանի գիտական ջանքերի և քարոզչական աշխատանքի շնորհիվ պարբերականի շուրջը համախմբված ականավոր մտավորականների ու գավառական գրագետների (Մ. Աբեղյան, Թ. Թորամանյան, Հ. Աճառյան, Լեո, Մելիքսեթ բեկ, Ե. Շահազիզ, Խ. Սամվելյան, Ա. Զելինսկի, Կարա-Մուրզա, Բենսե (Սահակ Մովսիսյան), Ս. Լիսիցյան և ուրիշներ) բանահավաքչական համակարգված գործունեություն ծավալվեց: Հանդեսի համարներում տպագրվել են ինչպես ազգագրական ու բանահյուսական հարուստ նյութեր, այնպես էլ տեսական աշխատություններ, հնագիտական ուսումնասիրություններ, մարդաբանությանը վերաբերող հետազոտություններ և այլն: 1896-1900 թթ. Ե. Լալայանը իր գրառած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա «Ազգագրական հանդեսում» տպագրել է «Ջավախք»[13], «Վարանդա»[14], «Սիսիան»[15], «Զանգեզուր»[16], «Գանձա-

[12] Ա.Հ, գ. Ա, էջ 6:

[13] Տե՛ս «Ջավախք». նյութեր ապագա ուսումնասիրության համար // Ա.Հ, գ. Ա, էջ 117-378, գ. Բ, էջ 245-294:

[14] Տե՛ս «Վարանդա». նյութեր ապագա ուսումնասիրության համար // Ա.Հ, գ. Բ, էջ 5-243, գ. Գ, էջ 9-53, (այլոց հեղինակությամբ՝ էջեր 54-76, 77-101, 102-112, 113-144, 144-150, 151-172, 173-178, 187-244, 338-349):

[15] Տե՛ս «Սիսիան» նյութեր ապագա ուսումնասիրության համար // Ա.Հ, գ. Գ, էջ 105-270:

[16] Տե՛ս «Զանգեզուր» նյութեր ապագա ուսումնասիրության համար // Ա.Հ, գ. Դ, էջ 7-116, «Զանգեզուրի գավառ». Կապան կամ Ղափան // Ա.Հ, գ. XII, էջ 175-212:

կի գավառ»[17], «Բորչալուի գավառ»[18] արժեքավոր աշխատությունները: Շուրջ 50 բանահավաքներ «Ազգագրական հանդեսին» նյութեր էին առաքում: Օրինակ՝ Բենսեն գիտական հմտությամբ ներկայացրեց Հարք գավառի ազգագրական նյութերի մեծագույն մասը[19]: Բարձր Հայքի ազգագրական նյութերը փրկելու տեսանկյունից մեծ գործ է կատարել Հ. Մալխասյանը, որը բարեխղճորեն նկարագրել է Ջավախքի նյութերը[20]: Հ. Մուրադյանցը ներկայացրել է համշենահայերի յուրօրինակ կենցաղի մի շարք կողմերը[21]: Արցախի տնտեսական, ընտանեկան կենցաղը, հիվանդությունն ու բժշկությունը, հուղարկավորության ծեսերը և այլն

[17] Տե՛ս «Գանձակի գավառ» նյութեր ապագա ուսումնասիրության համար // ԱՀ, գ. Ե, էջ 213-216, գ. Զ, էջ 231-371, գ.VII-VIII, էջ 255-270:

[18] Տե՛ս «Բորչալուի գավառ» // ԱՀ, գ. VII-VIII, էջ 271-436, գ. IX, էջ 197-262, գ. X, էջ 113-268, գ. XI, էջ 33-128:

[19] Տե՛ս ***Բենսե*** (Սահակ Մովսիսյան), «Բուլանըխ կամ Հարք գավառ» (ԱՀ, գ. Ե, էջ 8-184 և Զ, էջ 7-108): Այս աշխատությունը հետո լույս է տեսել առանձին հատորով: Աշխատության բովանդակությունը հետևյալն է՝ պատմական տեսություն, տեղագրություն, բուսական ու կենդանական աշխարհ, հանքեր, բնակավայրեր ու ճարտարապետական հուշարձաններ, ազգագրություն՝ վարչական կարգ, բնակարան, զգեստ ու զարդ, տնտեսական զբաղմունքներ՝ հողագործություն, անասնապահություն, փոխադրամիջոցներ, տնային գույք և կահույք, արհեստներ, ուտեստներ, ամուսնություն և հարսանիք, տղաբերք և կնունք, ընտանեկան հարաբերություններ, հիվանդություն և բժշկություն, մահ և թաղում, կրոնների վերապրուկներ, ժողովրդական տոներ, երգեր ու մանր ժանրեր: Բենսեին ենք պարտական ողջ Տուրուբերանի երկրագործական ամբողջ տեխնիկան նկարներով ու նկարագրությամբ մեզ հասցնելու համար: Պետք է նշել, որ ավելի մանրակրկիտ բանահավաք, քան Բենսեն էր, չգիտենք:

[20] Տե՛ս ***Մալխասյան Հ.,*** Հայ գեղջուկի ալբոմը (ԱՀ, գ. Գ, էջ 359-391, գ. Զ, էջ 193-203): Այս հոդվածաշարում մանրամասնորեն նկարագրված են երկրագործական աշխատանքները տարբեր սեզոններում, աշխատանքի գործիքները ներկայացված են նկարներով: Նկարագրված են բոլոր ուտելիքներն ու կերակուրները, կավե և պղնձե ամանները՝ նկարներով հանդերձ: Իսկ աշխատության մեծ մասը տակավին անտիպ է, որը ներկայացնում է արհեստները և այլն:

[21] Տե՛ս ***Մուրադյանց Հ.,*** Համշենցի հայեր. ազգագրական նյութեր (ԱՀ, գ. Դ, էջ 117-143, գ. Ե, էջ 361-406, գ. Զ, էջ 109-158): Հոդվածաշարի արծարծած հարցերն են՝ երկրի տեղագրությունը, վիճակագրությունը, զգեստն ու զարդը, տնտեսական զբաղմունքները՝ երկրագործությունը, ինչպես նաև ամուսնական սովորությունները, պաշտամունքները և տոները:

նկարագրել է Ղ. Տեր-Ղազարյանը[22], ինչպես նաև Հ. Վ. և Ա. Բ. բանահավաքները[23]: Հայ ժողովրդի արհեստագործության վերաբերյալ նյութեր և ուսումնասիրություններ է հրատարակել Ս. Թառայանցը[24]: Վ. Փափազյանը մեծ աշխատություն է գրել հայ բոշաների կենցաղի վերաբերյալ, որի հում նյութը անձամբ ինքն է հավաքել[25]: Կովկասյան ժողովուրդների, այդ թվում հայերի կաթնամթերքների վերաբերյալ ուսումնասիրություն է տպագրել Ա. Քալանթարը[26]: Ալաշկերտի բանահյուսությունը մեծապես շահել է Գրիգորիս քահ. Նժդեհյանցի շնորհիվ[27]: Նոր Նախիջևանի հայոց ազգագրությունը նշանակալից հմտությամբ գրի առել ու մեծ ծավալով տպագրել է Ե. Շահազիզը[28], Երևանի, Շարուր-Դարալագյազի, Հին Նախիջևանի, Ջուղայի, Ագուլիսի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Բասենի, Շիրակի և Ղազախի ու Շամախու հայերի սովորությունները ջանասիրաբար գրի է առել և տպագրել «Փորձ» ամսագրում ու «Ազգագրական հանդեսում» նշանավոր բժիշկ, հայրենասեր Քաջբերունին[29]: Հրաչյա և Արմենուհի Աճառյանները գրի են առել Կ. Պոլսի ժողովրդական բանահյուսությունը[30]:

---

[22] Տե՛ս ԱՀ, գ. Բ, էջ 77-101:

[23] Տե՛ս ԱՀ, գ. Բ, էջ 144-186:

[24] Տե՛ս նույն տեղում, էջ 3-71:

[25] Տե՛ս ԱՀ, գ. Բ, էջ 74-90, գ. Դ, էջ 203-275: Այս շատ ուշագրավ աշխատությունը բովանդակում է բազմաթիվ թեմաներ՝ ժողովրդի ծագումը, թիվը, մարդաբանական կառուցվածքն ու բնավորությունը, թափառական կենցաղավարությունը, բնակարանը, հագուստներն ու զարդերը, կերակուրներն ու խմիչքները, զբաղմունքը, լեզուն, կրոնական հավատալիքները, ամուսնության սովորությունները, հուղարկավորության ծեսերը, ժողովրդական արվեստը, բանահյուսությունը, իրավաբանական սովորությունները և այլն:

[26] Տե՛ս ***Քալանթար Ա.,*** Կաթնային արդյունքներ (ԱՀ, գ. Դ, էջ 276-292):

[27] Տե՛ս ***Գրիգորիս քահ. Նժդեհյանց,*** Ալաշկերտի բանավոր գրականություն (ԱՀ, գ. Ե, էջ 185-199, գ. VII-VIII, էջ 437-505, գ. IX, էջ 263-271, գ. XI, էջ 197-240, գ. XII, էջ 95-103, գ. XIII, էջ 63-86, գ. XVII, էջ 49-52, գ. XVIII, էջ 33-36, գ. XIX, էջ 95-98, գ. XX, էջ 108-111):

[28] Տե՛ս ***Շահազիզ Եր.***, Նոր-Նախիջևանը և Նոր-նախիջևանցիք (ԱՀ, գ. VII-VIII, էջ 5-102, գ. IX, էջ 5-82):

[29] Տե՛ս ***Քաջբերունի,*** Հայկական սովորություններ («Փորձ», 1879, № 10, էջ 39-47, 1881, № 5-6, էջ 57-62, ԱՀ, գ. VII-VIII, էջ 113-204, գ. IX, էջ 83-116):

[30] Տե՛ս ***Հրաչյա և Արմենուհի Աճառյաններ,*** Հավաքածո պոլսահայ ռամկական անգիր գրականության (ԱՀ, գ. IX, էջ 160-196):

Եվ այսպես, ուրիշ շատ բանահավաքներ Լալայանի խմբագրած «Ազգագրական հանդեսում» տպագրել են իրենց գավառների ազգագրական ու բանահյուսական նյութեր, «Սասնա ծռերի» մի շարք պատումներ և այլն:

Բացի զուտ բանահավաքչական աշխատանքներից՝ «Ազգագրական հանդեսում» տպագրվում էին ժամանակի նշանավոր մտավորականների իրավագիտական, ազգագրական, բանագիտական, հնագիտական և այլ ուսումնասիրությունները[31]: Այստեղ թարգմանաբար լույս են տեսնել նաև եվրոպացի մի շարք ազգագրագետների տեսական աշխատությունները և այլ գործեր[32], հիմնականում՝ Ե. Լալայանի թարգմանությամբ: Ե. Լալայանը ձգտում էր այդ թարգմանությունների միջոցով հայ ընթերցողներին իրազեկ դարձնել Եվրոպայում ազգագրական, բանահյուսական, մարդաբանական գիտությունների նորությունների, հատկապես այն նոր մեթոդներին, որոնք արմատավորվել էին Արևմտյան Եվրոպայում: «Ազգագրական հանդեսի» Զ գրքով փակվում է XIX դարը:

---

[31] Տե՛ս ***Սամուելյան Խ.,*** Արյան վրեժ և փրկանք (Ա.Հ, գ. X, էջ 269-303), Հին Հայոց իրավունքը և նրա հետազոտության մեթոդը (Ա.Հ, գ. XI, էջ 5-32), Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն (Ա.Հ, գ.XII, էջ 49-83), Հայ ընտանեկան պաշտամունքը (Ա.Հ, գ. XII, էջ 202-234, գ. XIII, էջ 112-139, գ. XIV, էջ 156-174), Հայոց ժառանգական իրավունքը (Ա.Հ, գ. XV, էջ 68-90, գ. XVI, էջ 117-129), Մայրական իրավունք (Ա.Հ, գ. XVII, էջ 126-141, գ. XIX, էջ 33-58), Ֆոլկլորի միջազգային դաշնակցություն (Ա.Հ, գ. XXI, էջ 34-36), Սիմբոլը հայ սովորույթներում (Ա.Հ, գ. XXII, էջ 232-245, գ. XXIII, էջ 231-234), ***Կոստանյան Կ.,*** Պռույդ և տուայր (Ա.Հ, գ. XIII, էջ 131-138), ***Բաբայան Լ.,*** Պարսկաստանի կրակապաշտները (Ա.Հ, գ. XVIII, էջ 37-58), **Ատրպետ**, Եզան պաշտամունքը (Ա.Հ, գ. XXIII, էջ 114-124), ***Իփեկյան Գ.***, Քավոր (Ա.Հ, գ. XXIV, էջ 90-110), ***Ղլտչյան Ա.,*** Հայ հին իրավունքը (Ա.Հ, գ. XXII, էջ 5-60, գ. XXIII, էջ 84-114, գ. XXIV, էջ 5-50) և ուրիշները:

[32] Տե՛ս ***Վիրխով Ռ.,*** Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ (Ա.Հ, գ. Ա., էջ 50-116): Պրոֆ. Պետրի, Մարդաբանության պատմական զարգացումը (Ա.Հ, գ. Ա., հավելված, էջ 3-52): ***Լետուրնո Շ.,*** Ամուսնության զարգացումն (Ա.Հ, գ. Ա., հավելված, էջ 53-120): ***Պոզոդա Ա.,*** Նորագույն տեսություններ գերդաստանի, հասարակության և պետության ծագման մասին (Ա.Հ, գ. Գ, հավելված, էջ -50, գ. Դ, հավելված, էջ 3-26, Ե, հավելված, էջ 3-24): ***Կանեստրին Գ.,*** Մարդաբանություն (Ա.Հ, գ. Բ, էջ 3-118): ***Ռատցել Ֆ.,*** Տարերք ազգագրության (Ա.Հ, գ. Դ, հավելված, էջ 59-96, գ. Ե, հավելված, էջ 25-40, գ. Զ, հավելված, էջ 3-40):

1896-1900 թվականները ամսագրի հրատարակության առաջին շրջանն էին. խմբագրի սեփական միջոցներով հրատարակվեց 6 գիրք՝ յուրաքանչյուրը 500-600 էջով և բազմաթիվ իլյուստրացիաներով: Այս շրջանում ամսագիրն ուներ երկու բաժին՝ ազգագրական և մարդաբանական:

«Հայոց ազգագրական-հրատարակչական ընկերության» (1900 թ. հոկտեմբեր) և «Հայոց ազգագրական ընկերության» (1906 թ.) գործունեությունը:

Ե. Լալայանը, սակայն, չսահմանափակվեց միայն «Հանդեսի» հրատարակությամբ: Նրա շուրջը համախմբված մտավորականության ներգրավմամբ 1900 թ. հոկտեմբերի 21-ին կազմակերպվեց «Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը»[33]: Ընկերության նպատակն է դյուրացնել «Ազգագրական հանդեսի» հրատարակությունը և Ե. Լալայանի աշխատանքը, տպագրել գրքեր, գրքույկներ, քարտեզներ, բացել տպարաններ ու գրավաճառանոցներ և այլն, ընդլայնել և աշխուժացնել լուսավորչական, հասարակական գործունեության շրջանակները: Ընկերության նախագահն էր Ա. Մելիք-Ազարյանը, անդամ-քարտուղար Ե. Լալայանը: Ընկերության որոշմամբ Երվանդ Լալայանը ընտրվել է «Ազգագրական հանդեսի» մշտական խմբագիր: Յոթ անձից կազմված խմբագրական հանձնաժողովում ընդգրկվել նաև Պերճ Պռոշյանը և Հովհաննես Թումանյանը: Ի դեպ, մեծ լոռեցին այս ազգանվեր ձեռնարկում Լալայանի հավատարիմ աջակիցն ու համախոհն էր: Այսպես, «Ազգագրական գործը մեզանում» ուշագրավ հոդվածում նա գրում է. «Մեր ազգը, որ աշխարհքի ու Արևելքի ամենահին ազգերեն մինն է և ազգագրության տեսակետից հանդիսանում է վերին աստիճանի հետաքրքրական մի աղբյուր ուսումնասիրության, և մեր աշխարհքը, որը մի լիքը թանգարան է ամեն տեսակ կենցաղագիտական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում է խավարի մեջ, իրենց փառքերը ավերակների ու հողի տակ, իրենց պարծանքները մոռա-

[33] ԱՀ-ի 1905 թ. XII գրքի 307 էջ-ում ասվում է, որ Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը հիմնվել է նոյեմբերի 21-ին:

ցության և անհայտության մեջ: Իրար հետևից անընդհատ կորչում կամ փչանում են այդ ամենը նոր կյանքի հոսանքների տակ ու նորանոր աղետների մեջ: Սրա համար էլ մեր աչքում մի առանձին նշանակություն է առնում Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերությունը իր թանգարանով ու հանդեսով, որն հիմնել է պ. Ե. Լալայանը և իր անդուլ աշխատանքով ճգնում է ծավալել ու ճոխացնել»[34]: Հ. Թումանյանն առաջ է քաշել ազգագրական նյութերի հավաքման հարցը՝ կոչ անելով հարուստներին օգնել «Հայոց ազգագրական ընկերությանը» նյութապես, իսկ ուսուցիչներին՝ հավաքել այդ նյութերը, որոնք կորչում են: Ազգագրական նյութերը հաղորդողները տարեց մարդիկ էին, որոնց մասին Թումանյանը գրել է. «Սրանց ամեն մեկը ավանդությունների, առասպելների, հին զրույցների, ժողովրդական հավատալիքների մի շտեմարան, մի թանգարան է: Այս պատմություններից, զրույցներից, սովորություններից շատերը եկած են հին դարերից, մեր հին նախնիների կյանքն ու սովորություններն են, նրանց մտքի և հոգու ծնունդներն են»[35]:

«Հայոց ազգագրական-հրատարակչական ընկերությունը» նոր թափ է հաղորդել բանահավաքչությանը[36]: Այդ ընկերության հիմնադրմամբ սկսվել է «Ազգագրական հանդեսի» հրատարակության երկրորդ շրջանը, պարբերականը դադարում է լինել Ե. Լալայանի հրատարակությունը՝ դառնալով ընկերության պաշտոնական օրգանը[37]: Այս շրջանում՝ մինչև 1906 թվականը, հրատարակվեց հանդեսի 7 գիրք, ընդ որում՝ մարդաբանական բաժինը վերացվեց: «Հայոց» ազգագրական-հրատարակչական ընկերության շնորհիվ հրատարակվեցին ոչ միայն հանդեսի հետագա հատորները, այլև բազմաթիվ գրքեր, գրքույկներ ու քարտեզներ: 1905 թ. ընկերության անդամների թիվը հասնում է 80-ի: Ե. Լալայանը մտադիր էր ավելի ընդարձակել ընկերության գործունեությունը: Նրա նպատակն էր հիմնել հայ ազգագրական ընկերություն իր թանգարանով, գրադարանով,

[34] ***Թումանյան Հ.,*** Երկերի ժողովածու, հ. VI, Երևան, 1959, էջ 146-147:
[35] Նույն տեղում, էջ 65:
[36] Տե՛ս ԱՀ, գ. XIV, էջ 186:
[37] Տե՛ս ***Лалаян Е.,*** Очеркь истории Армянской этнографии, Тифлис, 1913, էջ 4-5:

գիտական օրգանով ու հրատարակչությամբ, նաև դասընթացներով: Իր բարձրագույն կրթությունն ավարտելուց հետո նա փորձել է ձեռնարկել այս գաղափարի իրագործումը, սակայն նկատի ունենալով հայերի հանդեպ Անդրկովկասի ցարական իշխանության հալածական քաղաքականությունը, աշխատեց հիմնել այդ ընկերությունը Փարիզում: Բայց այդ նրան չհաջողվեց, և միայն 1905 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Ռուսաստանում որոշ քաղաքական ազատություններ ձեռք բերվեցին, Ե. Լալայանը կարողացավ իրականացնել իր վաղուց փայփայած գաղափարն և հիմնեց «Հայոց ազգագրական ընկերությունը» Թիֆլիսում: Միայն այս եղանակով գիտնականը հնարավոր էր համարում հասնել «ազգի ինքնաճանաչության գաղափարին»: Ահա թե ինչ է գրում նա «Հայոց ազգագրական ընկերության» նպատակների ու գործունեության մասին իր կազմած զեկուցագրում (1914թ). «Հայրենիքի և ազգի համակողմանի ուսումնասիրության, ազգային ինքնուրույնություն, ազգային ոգին բնորոշող ազգագրական նյութերը և հայրենի հնությունները հավաքելու, պահպանելու և ուսումնասիրելու կարիքը ցայտուն կերպով երևան է գալիս, երբ ազգը հասնում է ինքնաճանաչության գաղափարին»:

Հինգ տարվա եռանդուն գործունեությունից հետո՝ 1906 թ., «Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը» վերանվանվում է «Հայոց ազգագրական ընկերություն» (174 մշտական անդամով): Նպատակն էր ավելի մեծ ծավալով գործել, մասնավորապես ազգագրական և ընդհանրապես մարդաբանական, հնագիտական գիտությունների տեսանկյունից ուսումնասիրել Կովկասը, հարակից երկրները և հայկական գաղթօջախները, հոգալ և միջնորդել տեղական իշխանությունների առաջ՝ պահպանելու Կովկասի հնությունները, կազմակերպելու գիտական արշավախմբեր, կատարելու պեղումներ, բացելու թանգարաններ, գրադարաններ Թիֆլիսում և Էջմիածնում, կազմակերպելու դասախոսություններ, ազգագրական-երաժշտական երեկույթներ և այլն: Ուշագրավ է վերջինիս դերը մասնագիտական հարցարանների ստեղծման և եղած նյութերը «Ազգագրական հանդեսում» հրատարակելու գործում: Ընկերությունը հարատևեց չուրջ տասը տարի՝ մեծապես խթանելով ազգագրական-մարդաբանական-հնագիտական աշխատանքների ծավալումը ոչ

միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում: Այս միջոցին հայ ազգագրության նահապետ, բանահավաք, հնագետ Ե. Լալայանը մեր առաջ հառնում է նաև որպես թանգարանաշինության մեծ երախտավոր: Նրա ակտիվ նախաձեռնությամբ Թիֆլիսի «Հայոց ազգագրական ընկերությունն» իր ընդհանուր ժողովում քննարկել է հայ ազգագրական-հնագիտական թանգարան հիմնելու հարցը և ընդունել հետևյալ որոշումը. «Նկատի ունենալով այն ահագին նշանակությունը, որ ազգագրական հնագիտական թանգարանն ունի մի ազգի ինքնուրույն զարգացման և ընդհանրապես մարդկության էվոլուցիան բնորոշելու համար. ի նկատի առնելով, որ համաշխարհային քաղաքակրթության արագ զարգացման շնորհիվ հայի առանձնահատուկ կյանքը, նրա ազգային զգեստները, աշխատանքի գործիքները, նիստն ու կացը, սովորույթները մեծ արագությամբ փոփոխության են ենթարկվում..., ընկերությունը որոշում է նախապատրաստական աշխատանքներ տանել ազգագրական-հնագիտական թանգարան հիմնելու»[38]: Շրջանառվում էր թանգարանի հիմնադրման երկու վայր. ոմանք գտնում էին, որ այն պետք է հիմնադրվի Հայաստանում՝ Ալեքսանդրապոլում, Երևանում կամ Էջմիածնում, իսկ մյուսների կարծիքով՝ հենց Թիֆլիսում: Ի վերջո, Էջմիածնի հոգևոր Սինոդի որոշմամբ և Ամենայն Հայոց կաթողիկոսի թույլտվությամբ որոշվեց թանգարանը կառուցել Թիֆլիսում՝ Հայոց Ավագ եկեղեցուն կից տարածքում:

Թիֆլիսում Ե. Լալայանի ջանքերով հիմնված Ազգագրական-հնագիտական թանգարանի հիմքը կազմեցին Ե. Լալայանի կողմից պեղված հնագիտական նյութերը և տարբեր ճանապարհներով ձեռք բերված ազգագրական հավաքածուները:

1908 թ. հունվարի 4-ին ընկերության նիստում որոշվեց Թիֆլիսում բացել նաև գրադարան: Հիմնականում Ե. Լալայանի

[38]1907 թ. մարտի 30-ին հրավիրված Հայոց ազգագրական ընկերության ժողովը որոշում ընդունեց նախապատրաստական աշխատանքներ տանել թանգարան ստեղծելու համար, և այդ կապակցությամբ անհրաժեշտ համարվեց հրատարակել նյութեր հավաքելու ծրագիր: Շուտով այն տպագրվեց «Ծրագիր Հայոց ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու» վերնագրով (ԱՀ, գ. XVI, հավելված, էջ 1-26. գրվել է Պետերբուրգում Ալեքսանդր III-ի ազգագրական թանգարանի համար, որը ռուսերենից փոխադրել և հարմարեցրել է Ա. Տեր-Գրիգորյանը):

ջանքերով Թիֆլիսում ստեղծվեց մասնագիտական թանկարժեք գրականությամբ հարուստ Կովկասագիտական-մարդաբանական գրադարանը, որի հիմքը կազմեց գիտնականի անձնական հավաքածուն՝ 10 հազար կտոր գրականությամբ ու նաև հայ պարբերական մամուլի նյութերով: Գրադարանի գրքային ֆոնդը բաղկացած էր 40 հազար գրքերից: Գրադարանի վարիչն էր Ե. Լալայանի կինը՝ Հայկանուշ Լալայանը, որն աշխատում էր առանց վարձատրության:

Թանգարանում Ե. Լալայանի ղեկավարությամբ գործում էին հայագիտական դասընթացներ, հրավիրվում էին գիտական նստաշրջաններ, կազմակերպվում էին բազմաթիվ արշավախմբեր:

Ընկերության շնորհիվ առանձին գրքերով հրատարակվեց ազգագրական-բանահյուսական բնույթի բազմազան գրականություն: Միաժամանակ Ե. Լալայանը հոդվածներով ու զեկուցումներով հանդես է գալիս միջազգային համաժողովներում և պարբերականներում: «Հայոց ազգագրական ընկերության» գործունեության, ծրագրերի և Ե. Լալայանի ձեռնարկած միջոցառումների վերաբերյալ Հայաստանի պետական պատմության և արվեստի ու գրականության թանգարանների արխիվներում պահվում են 1000-ից ավելի փաստաթղթեր ու նամակներ:

Հայկական ազգագրական ընկերության հիմնադրմամբ սկսվում է «Ազգագրական հանդեսի» հրատարակության երրորդ և վերջին շրջանը (1906-1916): Ընկերությունը շարունակում է այն հրատարակել որպես եռամսյա պարբերական, սակայն կարողանում է հրատարակել միայն տարեկան երկու գիրք (այն էլ ոչ բոլոր տարիներին): Այս շրջանում նյութական միջոցների անբավարար լինելու պատճառով որոշ չափով կրճատվում են առանձին շրջանների ազգագրական նկարագրությունները:

Քանի որ հովանավորները հրաժարվում են հատկացնել խոստացված ֆինանսավորումը, «Ազգագրական հանդեսը» հայտնվում է ծանր վիճակի մեջ. այդ նույն պատճառով ի դերև են ելնում նաև մյուս նպատակները:

Աշխատանքներն ընթանում էին բնականոն հունով մինչև 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում: Վրաստանում լրջորեն վտանգվեց նաև հայկական արժեքների ճակատագի-

ը: Այս հարցում էլ մեծ աշխատանք ծավալեց թանգարանի գիտական ղեկավար Ե. Լալայանը՝ բանակցություններ վարելով Հայաստանի, Վրաստանի կառավարությունների և համապատասխան նախարարությունների հետ: Հայաստանի առաջին հանրապետության կառավարության 1919 թ. սեպտեմբերի 9-ի նիստի որոշմամբ Երևանում անհրաժեշտ համարվեց հիմնել ազգագրական-մարդաբանական թանգարան, որի համար բազա պետք է դառնային Թիֆլիսի ազգագրական-հնագիտական թանգարանի ժողովածուները: Ե. Լալայանի ակտիվ մասնակցությամբ 1921 թ. այն մաս-մաս տեղափոխվեց Երևան, որն էլ Հայաստանի պատմության պետական թանգարանի հիմքը դարձավ:

Երվանդ Լալայանի հրատարակչական և թարգմանչական գործունեությունը: Գ. Խալաթյանցի «Ծրագրի», մասամբ նաև Լալայանի՝ որոշ թեմաների վերաբերյալ կազմած լրացուցիչ հարցաշարերի շնորհիվ[39] պատմական Հայաստանի առանձին գավառների ուսումնասիրությունը առաջին անգամ հայ ազգաբանական գիտության մեջ իրականացվեց համալիր, ամբողջական թեմատիկ ընդգրկումներով, ընդ որում՝ ազգագրական երևույթներին զուգահեռ ներկայացվեցին են նաև բանահյուսությունը, մարդաբանությունը, պատմությունը, բնությունը (երկրի նկարագիր՝ լեռ-

[39] «Ազգագրական հանդեսի» հետագա գործունեության ընթացքում հավաքչական և հետազոտական աշխատանքներն ու հետազոտությունները ցույց տվեցին, որ անհրաժեշտ է Խալաթյանցի «Ծրագիրը» որոշ չափով ընդարձակել, լրացնել՝ ելնելով մի շարք նոր պահանջներից: Եվ ատիճանաբար հանդեսի էջերում հրապարակ եկան Ե. Լալայանի և ուրիշների լրացուցիչ նոր ծրագրեր՝ ազգագրական այս կամ այն հարցի կամ ամբողջական հիմնախնդիրների վերաբերյալ: Թվարկենք դրանք. 1) ***Լալայան Ե.***, Ծրագիր ամուսնության և հարսանիքի սովորույթների մասին նյութեր հավաքելու (ԱՀ, գ. Ա, հավելված, էջ 3-52): 2) ***Զելինսկի Ս.***, Ծրագիր տղաբերքի և նորածին մանկան ֆիզիկական դաստիարակության մասին նյութեր հավաքելու (ԱՀ, գ. Գ, հավելված, էջ 73-79): 3) Նույնի՝ Ծրագիր հիվանդության և բժշկության մասին նյութեր հավաքելու համար (ԱՀ, գ. Դ, հավելված, էջ 93-106): 4) Թարգմանություն *Է. Ադիրրի* հարցարանի, որ է՝ Ծրագիր սեպհականության նշանների (տամղաների) մասին նյութեր հավաքելու (ԱՀ, գ. VII-VIII), էջ 525, 5) ***Կարա-Մուրզա Հ.***Ծրագիր տնայնագործության վերաբերյալ նյութեր հավաքելու (ԱՀ, գ. XII, հավելված, էջ 3-32), Ծրագիր հայոց ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու (ԱՀ, գ. XVI, հավելված, էջ 1-26):

ներ, ջրեր, կլիմա, հանքեր, բուսական և կենդանական աշխարհ, տեղագրական՝ գավառի վարչական բաժանում, գյուղեր, վանքեր, վիճակագրություն, քարտեզ և այլն: Հանգամանորեն ներկայացվում է հնագիտական մշակույթի առկա վիճակը: Շարունակում են հրատարակվել պատմական Հայաստանի առանձին շրջանների վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ՝ Ե. Լալայանի՝ «Նախիջևանի գավառ. Ա մասն՝ Գողթն կամ Օրդուբադի ոստիկանական շրջան»[40], «Շարուր Դարալագյազի գավառ, Ա մասն՝ Վայոց ձոր»[41], «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք»[42], «Վասպուրական»[43], «Մուշ-Տարոն»[44] և այլն: Վասպուրականի վերաբերյալ Ե. Լալայանը նախատեսել էր հրատարակել մի քանի հատոր, սակայն Առաջին աշխարհամարտը և նյութական միջոցների սղությունը թույլ չեն տալիս այն իրագործել: Նա կարողանում է անդրադառնալ Վասպուրականի ազգագրությանը, բանահյուսությանը, Վասպուրականի ասորիներին, տնայնագործությանը, նշանավոր վանքերին, նրանց շրջակա տապանաքարերի արձանագրությունների վերլուծությանը: Ե. Լալայանը համեստորեն այդ աշխատությունները կոչել է «Նյութեր ապագա ուսումնասիրության համար», թեև դրանք լուրջ գիտահետազոտական ուսումնասիրություններ են: Լալայանը այդ գործին մոտեցել է հայրենասեր գիտնականի խոր ինքնագիտակցությամբ: Ազգագրական-բանահյուսական նյութեր գրի առնելու հույժ անհրաժեշտությունը նկատի ունենալով՝ Լալայանը գրել է. «Քանի որ ուսումնասիրու-

[40] Տե՛ս «Նախիջևանի գավառ, Ա մասն. Գողթն» (ԱՀ, գ. XI, էջ 241-334, գ. XII, էջ 109-174), «Նախիջևանի ոստիկանական շրջանը» (գ. XIII, էջ 199-226), «Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճավան» (գ. XV, էջ 133-163):

[41] Տե՛ս «Շարուր-Դարալագյազի գավառ» (ԱՀ, գ. XII, էջ 235-293), «Վայոց ձոր» (ԱՀ, գ. XIII, էջ 139-166, գ. XIV, էջ 133-155, գ. XXVI, էջ 5-84):

[42] Տե՛ս «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք» (ԱՀ, գ. XIII, էջ 167-197, գ. XIV, էջ 5-37, գ. XV, էջ 165-206, գ. XVI, էջ 9-65, գ. XVII, էջ 86-125, գ. XVIII, էջ 109-156, գ. XIX, էջ 5-34, գ. XX, էջ 33-60):

[43] Տե՛ս «Վասպուրական» (ԱՀ, գ. XX, էջ 116-212, գ. XXI, էջ 37-100, գ. XXII, էջ 85-100, գ. XXV, էջ 21-60),

«Տնայնագործությունը Վասպուրականում. Շատախի շալագործությունը» (ԱՀ էջ 189-215), «Հավատք» (ԱՀ, գ. XXVI, էջ 195-210):

[44] Տե՛ս «Մուշ-Տարոն» (ԱՀ, գ. XXVI, էջ 149-194):

թյուններ կատարելու համար երբեք ժամանակ չի պակասելու, մինչդեռ եթե հապաղենք ազգագրական երևույթները գրառել, շատ ու շատ նյութեր բոլորովին անհետանալու են, ուստի իմ անմիջական նպատակը ոչ թե ուսումնասիրություն տալն է, այլ եվրոպական ուսումնասիրության լույսով հայկական նյութերը որոնելը, գտնելը, կորստից ազատելը»[45]:

Լալայանը իրավացիորեն գտնում էր, որ հայ ժողովրդի մշակութային արժեքների՝ ազգագրական, բանահյուսական և հոգևոր մշակույթի այլևայլ նյութերի հայտնաբերումն ու հավաքումը անհատական գործ չեն, այլ պետք է դառնան համազգային, համաժողովրդական խնդիր:

Ե. Լալայանի գիտական գործունեության հիմնական բնագավառներից է նաև ժողովրդական բանահյուսությունը: Նա ժողովրդական բանահյուսությունը դիտում էր որպես ազգագրության մի անբաժանելի օղակ և աշխատություններում մեծ տեղ էր հատկացնում բանահյուսական նյութերին, որոնք ոչ միայն լրացնում ու լուսաբանում են քննարկվող պատմաազգագրական շրջանի ընտանեկան բարքերն ու հավատալիքները, այլև դառնում են ուղեկցող ու ամբողջացնող նյութ: Ե. Լալայանի բանահյուսական հավաքածուներում մեծ տեղ են գրավում տարբեր ազգագրական շրջաններից, ինչպես, օրինակ, Ջավախքից, Գանձակից, Զանգեզուրից, Լոռիից գրի առնված վիճակի կամ ջանգյուլումի երգերխաղիկները:

Ե. Լալայանը գրի է առել և հրատարակել է «Սասնա ծռերի»՝ Նոր Բայազետի[46], Վանի[47] և Ալաշկերտի[48] պատումները, իրանական «Ռուստամ Զալ»[49] վեպի հայկական տարբերակը: Ազգագրական նյութեր գրառելիս Լալայանը, որպես կանոն, հարազատ էր մնում տվյալ բարբառին, ժողովրդական լեզվին, առանց փոխելու գրառում էր տվյալ ազգագրական շրջանին բնորոշ բանահյուսական նյութերը:

---

[45] Տե՛ս ***Լալայան Ե.,*** Ծիսական կարգերը հայոց մեջ (արտատպված ԱՀ-ից), Թիֆլիս, 1913, էջ 3:
[46] Տե՛ս ԱՀ, գ. XVIII, էջ 37-82:
[47] Տե՛ս ԱՀ, գ. XX, էջ 61-101, գ. XXI, Թիֆլիս, էջ 101-126:
[48] Տե՛ս Մարգարիտներ հայ բանահյուսության, գ. Գ, Թիֆլիս, 1915:
[49] Տե՛ս ԱՀ, գ. XIV, էջ 69-85:

Ե. Լալայանը հավաքել և հրատարակել է չափազանց արժեքավոր բանահյուսական նյութեր «Ազգագրական հանդեսում», առանձին գրքերով՝ «Ջավախքի բուրմունք» (1892), «Հոբոս» (1903), «Մոլլա Նասր-Էդ-Դինը» (1904), «Պառավաշունչ» (1911), «Մարգարիտներ հայ բանահյուսության» (հատ., Ա-Գ, 1914-1915) գործերը, գրի է առել հեքիաթներ, առակներ, առածներ, հանելուկներ, շուտասելուկներ, ինչպես նաև հոգևոր ոլորտը ընդգրկող տարբեր բնույթի ծեսեր և արարողություններ: «Մարգարիտների» երեք գիրքը միասին պարունակում է 91 հեքիաթ: Ժողովածուի Ա և Բ հատորներում ընդգրկված են Արարատյան հովտի բնակչության, իսկ Գ գրքում՝ Ապարանում բնակություն հաստատած արևմտահայ վերաբնակիչների հեքիաթները: Լալայանը գրի է առել նաև «Արա Գեղեցիկ» ավանդավեպը[50] «Ալեքսանդր Մակեդոնացին» և «Դավիթ Անհաղթը»[51], «Նոր Բայազետի բանահյուսությունից»[52], «Ապարանի բանահյուսությունից»[53], «Ջավախքի բանահյուսությունից»[54] և բանահյուսական բազմաթիվ այլ արժեքավոր հավաքածուներ: Նրա գրի առած հեքիաթների մի զգալի հատվածը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատոր հրատարակության մեջ:

Առաջին աշխարհամարտի, արևմտահայերի ցեղասպանության ու հայրենիքից ցիրուցան լինելու, նյութական կյանքի համատարած անկման հետևանքով «Հայոց ազգագրական ընկերությունը» սնանկացավ, դադարեց բանահավաքչական գործունեությունը: 1914-1915 թթ. «Ազգագրական հանդեսը» լույս չտեսավ, 1916 թ. հրատարակվեց միայն հանդեսի վերջին՝ 26-րդ հատորը:

Անհատական շրջագայություններից զատ «Հայոց ազգագրական ընկերության միջոցով 1915 թ. սեպտեմբերին»՝ Առաջին աշխարհամարտի այդ ծանր օրերին, Ե. Լալայանը կազմակերպեց արշավախումբ՝ թուրքական յաթաղանից մազապուրծ և Անդրկովկա-

[50] Տե՛ս ԱՀ, գ. XIX, էջ 144-159:
[51] Տե՛ս ԱՀ, գ. X, էջ 304-312:
[52] Տե՛ս ԱՀ, գ. XIX, էջ 115-150:
[53] Տե՛ս նույն տեղում, էջ 151-157:
[54] Տե՛ս նույն տեղում, էջ 158-164:

սի քաղաքներում ու գյուղերում ապաստանած արևմտահայ գաղթականներից ժողովրդական բանահյուսության և ազգագրական նյութեր գրի առնելու համար: Արշավախմբի աշխատանքներին մասնակից դարձրեց նշանավոր մտավորականներ Ա. Բարսեղյանին, Ս. Շալջյանին, Ն. Մարտիրոսյանին, Մ. Դաբաղյան-Վեսպերին, Ս. Կուժիկյանին, Ե. Պեզազյանին: Գիտական արշավախմբի աշխատանքը տևեց չորս ամիս. այդ ընթացքում հավաքվեց 874 հեքիաթ, նաև հավաքագրվեցին առակներ, պատմվածքներ, կենդանական վեպեր, ավանդություններ, մոտ 240 հատ, նմանապես ժողովրդական երգեր, աղոթքներ, առածներ և այլն, շուրջ 62 տետրակներ: Զուգահեռաբար Լալայանը գրի առավ Մշո հայերի ազգագրությունը, որը և տպագրել է իր հանդեսի վերջին՝ 26-րդ հատորում:

Ազգագրական նյութերի հավաքման գործում Ե. Լալայանը ուշադրություն է դարձրել նաև հայերին հարևան մի քանի ժողովուրդների՝ ռուս դուխոբորների, մալականների և ուտիների ու ասորիների ազգագրության վրա: Ուտիների մասին թողել է մի ընդարձակ ձեռագիր՝ «Ուտիների ազգագրությունը», որը թարգմանված է նաև ռուսերեն: Այդ աշխատության ամփոփ համառոտությունը լույս է տեսել ՀՍԽՀ գիտությունների և արվեստի ինստիտուտի «Տեղեկագրում» (հ. 1, 1926), ասորիների մասին՝ «Վասպուրականի ասորիները» վերտառությամբ ուսումնասիրությունը լույս է տեսել «Ազգագրական հանդեսում» (գիրք 20):

Պատմության թանգարանի դիվանում են գտնվում Լալայանի օրագրության ձեռագրերը, որոնք մեծ թվով նյութեր են պարունակում նրա կյանքի ու գիտական գործունեության վերաբերյալ:

«Ազգագրական հանդեսից» բացի՝ նա աշխատակցել է «Տարազ», «Մշակ», «Մուրճ», «Նոր-դար» և այլ պարբերականներին: Բազմաբեղուն գիտնականի գրչին են պատկանում ավելի քան 70 արժեքավոր աշխատություններ, գրեթե նույնքան էլ անտիպ գործեր:

Բուն ազգագրության և բանահյուսության նյութերին զուգահեռ «Ազգագրական հանդեսը» մեծ տեղ էր տալիս հարակից բոլոր գիտություններին՝ պատմությանը, հնագիտությանը, աշխարհագրությանը, սոցիոլոգիային, լեզվաբանությանը, արվեստին, մարդաբանությանը և այլն: Բացի անհատական շրջագայություն-

ներից և հրատարակած կոնկրետ աշխատանքներից՝ Լալայանը ազգագրության տարբեր բնագավառներին վերաբերող ծրագրեր է կազմել, ուղարկել ուսուցիչներին ու հասարակական գործիչներին՝ տեղերում նյութեր հավաքելու համար: Նա միաժամանակ ստացված նյութերը վերադասակարգել է, խմբագրել, ճարտարապետական հուշարձանները լուսանկարել, աշխարհագրական ու տեղագրական քարտեզներ է կազմել, թարգմանություններ կատարել՝ «Հանդեսի» յուրաքանչյուր գիրքը ներկայացնելով բազմակողմանի ու հարուստ բովանդակությամբ:

Փաստորեն՝ «Ազգագրական հանդեսը» դարձել էր հայ կյանքի մի յուրօրինակ հանրագիտարան: Այն հրատարակվում էր որոշակի համակարգով: Ամեն մի գիրքը հիմնականում ընդգրկում էր Հայաստանի որևէ գավառի կամ Կովկասի որևէ հայաբնակ շրջանի ստվարածավալ ու համակողմանի նկարագրություն՝ մեծ մասամբ շարադրված իր իսկ՝ Ե. Լալայանի կողմից: Հանդեսի էջերում ուշագրավ նյութեր են հրատարակվել նաև բոշաների, քրդերի, ասորիների, պարսիկների, տեղի ռուս և ուկրաինացի աղանդավորների, ուտիների, վրացիների, հույների և այլոց ազգագրության վերաբերյալ[55]:

«Ազգագրական հանդեսի» շնորհիվ ազգագրությունը Հայաստանում լիովին ձևավորվեց որպես գիտության ուրույն բնագավառ՝ սահմանազատվելով մասնավորապես բանագիտությունից: Հանդեսի միջոցով կորուստից փրկվեցին ու հետագա սերունդներին կտակվեցին հայ ժողովրդական ավանդութային մշակույթի շատ ու շատ նյութեր, որոնք նոր, կապիտալիստական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների ներթափանցման հետևանքով ենթարկվեցին արմատական փոփոխությունների[56]: Միայն կարելի է ափսոսալ, որ չնայած Ե. Լալայանի ծավալած վիթխարի հավաքչական աշխատանքին՝ Հայաստանի ոչ բոլոր շրջանները հնարավոր եղավ ընդգրկելու, և ժողովրդական մշակույթի ոչ բոլոր կողմերին վերաբերող նյութերը փրկվեցին կորստից: Ներկայումս «Ազգագրական հանդեսի» ավանդները շարունակում է «Հայ ազգագրու-

[55] Տե՛ս ***Փափազյան Վ.,*** Հայ բոշաներ (ԱՀ, գ. Գ), ***Լալայան Ե.***, Մալականներ (ԱՀ, VII-VIII գրքեր), 1901, ***Բաբայան Լ.,*** Կրակապաշտներ (ԱՀ, գ. XVIII):

[56] Տե՛ս ***Վարդումյան Դ.,*** Ազգագրություն, ՀԺՊ, հ. VI, Երևան, 1981, էջ 926-929:

թյուն և բանահյուսություն» մատենաշարը, որը 1970 թվականից սկսած պարբերաբար հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից:

Իրավացի էր հայագետ Ն. Ակինյանը, երբ Ե. Լալայանի մահվան կապակցությամբ գրում էր. «Բայց և այնպես ինչ-որ համբարեց Լալայանը, հավաքեց ժամանակին, անոնք փրկված են կորուստեն և պիտի մնան ստացված գիտության: Եկող սերունդները պարտավոր են երախտագիտության. պիտի օրհնեն հիշատակը մեծ վաստակավորին»[57]:

Այսպիսով՝ Ե. Լալայանը բազմահարուստ ու բազմաբովանդակ գործունեությամբ, այդ թվում իր իսկ կողմից հիմնված և խմբագրված «Ազգագրական հանդեսի» 26 գրքերում և այլուր պատմական Հայաստանի մեծ մասի վերաբերյալ ազգագրական և բանահյուսական նյութերի հրատարակմամբ վերջնականապես կայացրեց գիտական ազգաբանությունը և հիմք դրեց դրա զարգացմանը: Որպես բանահավաք՝ Լալայանը ոչ թե պարզապես նյութ արձանագրող էր, այլ հետազոտող-գիտնական: Ե. Լալայանը հիմք դրեց նաև պատմական Հայաստանի պատմաազգագրական շրջանների համալիր և բազմակողմանի տարածքային հետազոտության մեթոդին, որի արդյունքը գիտնականի «Ջավախք», «Վարանդա», «Գանձակի գավառ», «Բորչալուի գավառ», «Վայոց ձոր», «Զանգեզուր», «Նոր Բայազետի գավառ», «Նախիջևանի գավառ», «Վասպուրական», «Մուշ-Տարոն» և այլ աշխատություններն են:

[57] ***Ակինյան Ն.,*** Ե. Լալայան (մահախոսական), էջ 294:

2. Ե. ԼԱԼԱՅԱՆԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՂ

Ազգագրության մեջ «պատմաազգագրական շրջան» և «տնտեսամշակութային տիպ» հասկացությունները անհամեմատ քիչ են մշակված[1]:

«Պատմաազգագրական մարզ» հասկացության ներքո հասկացվում է այն բնատարածքը, որի վրա ապրող ժողովուրդների կապերի փոխադարձ ազդեցության և պատմական ճակատագրերի ընդհանրության արդյունքում ձևավորվել է որոշակի մշակութային ընդհանրություն[2]: Այդ ընդհանրությունը առավել դյուրին հետազոտվում է ըստ ազգագրական տվյալների, որոնք վերաբերում են նյութական մշակույթին (բնակավայր, բնակարան, բնակարանի ներսույթ, ուտեստ, սպասք, զգեստ և զարդարանք), նաև հոգևոր մշակույթի առանձին երևույթների (ծեսեր, հավատալիքներ, տոներ, ժողովրդական բանահյուսություն): Ազգագրական նյութի օգնությամբ հաճախ հստակորեն ուրվագծվում են տնտեսամշակութային տիպերի բնատարածքային ու էթնիկական տարածման սահմանները, դրանով իսկ բնորոշվում են նաև պատմաազգագրական մարզերը:

Տնտեսամշակութային տիպերի և պատմաազգագրական մարզերի առանձնացումը շատ կարևոր է ազգագրական դասակարգման համար: Աշխարհի ժողովուրդների գոյություն ունեցող դասակար-

---

[1] Տե՛ս ***Андрианов Б.***, Хозяйственно-культурные типы и исторической процесс // “Советская этнография”, № 2, 1968, ***Чеснов Я.***, О социально-этнографических и природных условиях возникновения хозяйственно-культурных типов // СЭ, 1970, № 6, ***Вардумян Д.***, Характеристика основных этнографических районов Армении в XIX в., М, 1964, նույնի՝ Հայաստանի հիմնական ազգագրական շրջանների բնութագիրը ԺԹ դարում // «Բազմավեպ», 2002, թիվ 1-4, էջ 358-364; նույնի՝ Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերի ընդհանուր բնութագրումը (XIX-XX դդ.) // ՊԲՀ, 2004, թիվ 2(166), էջ 48-64:

[2] Տե՛ս ***Левин М. Г.*** и ***Чебоксаров Н. Н.,*** Хозяйственно-культурные типы и историко-этнографические области // «Советская этнографияե, №4, 1955, էջ 4:

գումները կառուցված են հիմնականում լեզվաբանական սկզբունքներով: Ուստի անհրաժեշտություն է ժողովուրդների բուն ազգագրական դասակարգումը՝ հիմնված պատմաազգագրական մարզերի և ենթամարզերի առանձնացման վրա: Սա ազգագրագետների կարևորագույն խնդիրներից է: Այս տեսանկյունից պետք է բարձր գնահատել «Ազգագրական հանդեսի» (1895/1896-1916) և անձամբ Երվանդ Լալայանի գիտակազմակերպչական նպատակասլաց ու բազմաբովանդակ գործունեությունը: Նա «Ազգագրական հանդեսի» նպատակն է համարել. «Հավաքել հայ ազգագրությանը վերաբերող նյութեր և սրանց ուսումնասիրությամբ գծել հայ ազգի հոգեկան, մտավոր ու հասարակական կյանքի զարգացումը, նպաստել ամեն մի հայի ճանաչելու իր ազգի անցյալը, իր պատմական հայրենիքը, իրեն շրջապատող ազգերը»: Նրա ջանքերի շնորհիվ «Հանդեսի» շուրջը համախմբվեց ականավոր մտավորականների և գավառական գրագետների լայն ցանց, պատմական Հայաստանի ազգագրական շրջանների մեծ մասի վերաբերյալ ազգագրական-բանահյուսական նյութեր հավաքվեցին՝ պարբերաբար հրատարակվելով «Ազգագրական հանդեսում», նաև առանձնատիպերի ձևով, որոշ մասը՝ ռուսերեն թարգմանությամբ: Ե. Լալայանը Հայաստանի վերաբերյալ ազգագրական ուսումնասիրությունները կատարել է ըստ որոշակի շրջանների, որոնք կազմում են ազգագրական մի ամբողջություն:

Նշենք, որ «Ազգագրական հանդեսում» բանահյուսական նյութը զգալի տեղ էր գրավում, այդուհանդերձ Հայաստանի տարբեր շրջաններին վերաբերող ազգագրական ուսումնասիրությունները ավելի ծավալուն ու մեծաքանակ էին, որոնց հեղինակը հիմնականում հենց Երվանդ Լալայանն էր[3]: Նրանից առաջ ժողովրդական մշակույթի հիմնական աղբյուր հանդիսացող ազգագրական նյութը տակավին կարոտ էր մասնագիտական, հատկապես ըստ պատմաազգագրական մարզերի և ենթամարզերի դասդասման ու ընդհանրացման: Նա իր բանահավաքչական գործունեությունը

[3] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Երվանդ Լալայանի և «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Երևան, 2016, էջ 373-386:

սկսել է Ախալքալաքում դեռևս 1889 թվականին: Որպես բանահավաք՝ Լալայանը ոչ թե նյութի պարզ արձանագրող է, այլ հետազոտող գիտնական: Գրի առնելու ընթացքում նա առաջնորդվել է նյութի ամբողջականությունը պահպանելու սկզբունքով, կենցաղավարության, նյութական ու հոգևոր մշակույթի միջև բնական պատճառական կապերը վեր հանելով:

Իր գործունեության ընթացքում Ե. Լալայանը առաջնորդվում էր Գրիգոր Խալաթյանցի կազմած ծրագրով, որը «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» վերտառությամբ լույս է տեսել Մոսկվայում 1887 թվականին: Այդ մասին Լալայանը գրում է. «Ես ազդվեցի Խալաթյանցի ծրագրից, և ինքս ինձ նվիրեցի ազգագրությանը»: Նույնը առաջարկում է մյուս բանահավաքներին՝ որպես «անհրաժեշտ ուղեցույց»[4]: Այդ ծրագրի հիման վրա պատմական Հայաստանի երկու հատվածներում շրջագայելիս նա գրի է առնում ու հրատարակում տվյալ վայրի ազգագրական նյութը՝ ժողովրդական բանավոր գրականության նմուշներով, նշանավոր վանքերի, պատմական հուշարձանների, միջնադարյան ձեռագիր մատյանների և այլ հնությունների նկարագրություններով:

«Ազգագրական հանդեսը» հրատարակվում է որոշակի համակարգով. ամեն մի հատորը հիմնականում բաղկացած է Հայաստանի որևէ գավառը կամ Կովկասի որևէ հայաբնակ շրջանը ներկայացնող (Ջավախք, Գանձակի գավառ, Լոռի, Վարանդա, Սիսիան, Զանգեզուր, Վայոց ձոր, Գեղարքունիք, Նախիջևանի գավառ, (Գողթն) Վասպուրական, Մուշ-Տարոն, Նոր Նախիջևան, Համշեն, Հարք և այլն) ստվարածավալ ու համակողմանի նկարագրություններից: Մեծ մասամբ շարադրված է իր իսկ՝ Ե. Լալայանի կողմից:

Նրա՝ ազգագրական առանձին շրջաններին ուղղված աշխատությունները ընդգրկում են հետևյալ հիմնական բաժինները՝ պատմական համառոտ տեսություն, տեղագրություն, պատմական հուշարձաններ, ազգաբնակչությանը վերաբերող տեղեկություններ, տնտեսական դրություն, լուսավորություն, նյութական մշակույթ, բնակարան, զգեստ և զարդ, ընտանեկան բարք՝ ամուսնու-

[4] Տե՛ս ***Լալայան Ե.,*** Ջավախք (Նյութեր ապագա ուսումնասիրության համար) // «Ազգագրական հանդես» (այսուհետ՝ ԱՀ), Ա գիրք, Շուշի, 1895-1896, էջ 379:

թյուն, տղաբերք և կնունք, ընտանեկան կյանք, հիվանդություն և բժշկություն, մահ, թաղում և մեռելոց, հոգու և հանդերձյալ կյանքի ժողովրդական ընկալումներ, հավատք՝ լեռների, քարի, կրակի, ջրի, ծառերի, կենդանիների, լուսավորների, ոգիների պաշտամունքային դրսևորումներ, կախարդություն, սնոտիապաշտություն, նշանավոր տոներ, ժողովրդական բանավոր գրականություն[5]: Ընդհանրապես որևէ պատմաազգագրական շրջանին վերաբերող նրա ուսումնասիրությունը կարելի է բաժանել երկու մեծ բաժնի՝ պատմաաշխարհագրական և ազգագրական: Ազգագրական տեղեկություններին զուգահեռ Լալայանը մանրամասն տեղեկություններ է տալիս տվյալ շրջանի պատմության, բնակլիմայական և աշխարհագրական պայմանների, հուշարձանների, գյուղական բնակավայրերի մասին: Սակայն հարկ է նշել, որ այդ բաժինները ընդհանրապես և առանձին շրջաններ մասնավորապես, նույն չափով չեն արժանացել Լալայանի ուշադրությանը: Ազգագրագետի ուսումնասիրություններում առավել մեծ տեղ են գրավում ընտանեկան բարքերին ու հավատքին վերաբերող բաժինները: Դա պետք է բացատրել այն հանգամանքով, որ Լալայանը գտնվում էր էվոլյուցիոնիզմի՝ ժամանակի ազգագրության տիրապետող և առաջադիմական ուղղության ազդեցության ներքո:

Է. Կարապետյանը «Ազգագրական հանդեսի» հիմնադրման 60-ամյակին նվիրված իր հոդվածում նկատում է, որ «հեղինակի [Ե. Լալայանի – Ռ. Ն.] տեսադաշտից դուրս է մնացել նյութական կյանքը»[6]: Այս բնորոշումը մեզ համար այնքան էլ պարզ չէ, մանավանդ որ նույն հոդվածում Է. Կարապետյանը Ե. Լալայանի հետազոտությունների պլանում նշում է նաև «տնտեսական դրություն» բաժինը: Կարծում ենք՝ ավելի հստակորեն կարելի է նշել, որ ժողովրդի տնտեսական կենցաղը և դրան առնչվող աշխատանքի գործիքները անհամեմատ քիչ են արտացոլվել Ե. Լալայանի գործերում, այն էլ՝ միայն առանձին շրջաններ նկարագրելիս: Իսկ նյութական մշակույթի այնպիսի տարրերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ բնակարանը, տարազը, ուտեստը, Լալայանը բավականին հան-

[5] Տե՛ս, օրինակ, ***Լալայան Ե.,*** Վարանդա, ԱՀ, երկրորդ տարի, Բ գիրք, 1897, Թիֆլիս (տե՛ս բովանդակությունը):

[6] ***Карапетян Э.,*** К 60-летию армянского этнографического издания «Азгагракан андес», СЭ, № 2, 1898, էջ 113:

գամանալի է անդրադարձել:

Սովորաբար Ե. Լալայանը ուսումնասիրության համար ընտրում է Հայաստանի որևէ վարչական միավոր: Սակայն նա ազգագրական ուսումնասիրությունը կատարում է ոչ թե տարերայնորեն, այլ դիտում է այն որպես մի ազգագրական շրջան՝ իր յուրօրինակ համալիր նկարագրով: Լալայանը երբեմն որևէ մեծ շրջան բաժանում է ազգագրական տեսանկյունից ավելի փոքր ենթաշրջանների՝ որոշ նյութեր հավաքելով ողջ շրջանի, որոշ նյութեր էլ առանձին ենթաշրջանների վերաբերյալ: Միաժամանակ նա տվյալ շրջանի բնակչությանը առանձնացնում է գաղթականներից՝ ուսումնասիրության օբյեկտ դարձնելով միայն բնիկներին: Այդ առիթով նա «Զանգեզուրի գավառ» աշխատության մեջ գրում է. «Մեր ներկա հետազոտության մեջ մենք միայն նրանց (գաղթականների – Ռ. Ն.) գյուղերը նկարագրեցինք, որպեսզի տեղագրական բաժինները փոքր ի շատե լրիվ կարողանայինք ներկայացնել, այնինչ մյուս, զուտ ազգագրական կետերում, մենք նրանց բոլորովին անուշադիր թողինք, հետազոտելով միմիայն բնիկ ժողովրդին, որպեսզի ազգագրական տեսակետից սխալներ արած չլինենք և տարբեր սովորույթներ իրար չխառնեինք»[7]:

Որպես Լալայանի գործելակերպի առանձնահատկություն՝ պետք է նշել, որ նա իր հետազոտությունները դատարկ տեղում չի սկսում: Ձեռնարկելով որևէ շրջանի ուսումնասիրությունը՝ Լալայանը օգտագործում է մատենագիրների և այլ հեղինակների անտիպ կամ տպագրված հատուկենտ տեղեկություններն ու հավաքած նյութերը՝ հարստացնելով աղբյուրագիտական հենքը:

Ե. Լալայանը առաջինն էր, որ հայ ազգագրությունը հանեց տնայնագործական շրջանակներից, ազատվեց իր նախորդների աշխատանքների միակողմանիությունից, ազգագրական ուսումնասիրությունների համար մշակեց որոշակի համակարգ, հայ ազգագրությունը դրեց գիտական հիմքերի վրա: Դա է նրա մեծագույն ծառայությունը: Համառ աշխատունակություն ցուցաբերելու ու անսպառ եռանդի շնորհիվ նա կարողացավ ծավալել այնպիսի ընդգրկուն աշխատանք, գլուխ բերել այնպիսի հսկա գործ, որի նմանը կարող էին կատարել միայն հատուկ ընկերություններ, մասնագի-

[7] ***Լալայան Ե.,*** Սիսիան // ԱՀ, գ. Գ, Թիֆլիս, 1898, № 1, էջ 194:

տական ինստիտուտներ: Նա միայնակ, շատ անգամ սեփական նյութական միջոցներով ճանապարհորդել է Անդրկովկասի գրեթե բոլոր հայաբնակ վայրերը, նաև Արևմտյան Հայաստանի որոշ վայրերում: Արդյունքում հավաքել է ազգագրական և հետագայում նաև հնագիտական ու բանահյուսական նյութեր Ջավախքում, Վարանդայում, Սիսիանում, Զանգեզուրում, Գանձակի, Բորչալուի (Լոռի), Նախիջևանի, Նոր Բայազետի, Երևանի, Էջմիածնի գավառներում, Գողթանում, Վայոց ձորում և Վասպուրականում: Ամենուր, մերթ գրիչը ձեռքին արձանագրելով և ուսումնասիրելով, մերթ բրիչը ձեռքին պեղելով, Ե. Լալայանը ի հայտ է բերում Հայաստանի պատմության և մշակույթի, կենցաղի ու սովորությունների վերաբերյալ անչափ հարուստ նյութեր՝ դրանց մի մասը դնելով գիտական շրջանառության մեջ:

«Ազգագրական հանդեսի» Ա, Բ և Գ գրքերում տեղ գտած Ե. Լալայանի «Ջավախք»[8] մեծածավալ աշխատությունը գրված է հեղինակի հավաքած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա և իր տեսակի մեջ նորույթ է[9]: «Ջավախք» աշխատությունը նվիրված է նախկին Գուգարք նահանգի Ջավախք գավառին (ներկայիս Ախալքալաքի շրջան, Վրաստանի Հանրապետություն): Աշխատությունը կազմված է հետևյալ մասերից՝ «Պատմական համառոտ տեսություն» (էջ 117-124), ուր տրվում է Ջավախքի պատմական անցյալը հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջը, «Ջավախքի տեղագրությունը» (125-152)՝ լեռներ, լճեր, գետեր, կլիմա, բուսական և կենդանական աշխարհը, նշանավոր գյուղերը, հնությունները՝ եկեղեցիներ, ամրոցներ (153-172): Մյուս գլուխները նվիրված են Ջավախքի բնակչությանը (173-185), հանգամանորեն տրված են վիճակագրական տվյալներ (186-192) գավառում բնակվող հայերի, հայ բոշաների, ռուսների, վրացիների, հույների, թուրքերի, քրդերի, ինչպես նաև ազգաբնակչության տեղաշարժի (193-199), ժողովրդական լուսավորության մասին (218-223): «Տնտեսական դրություն» բաժնում (200-217) նկարա-

[8] Տե՛ս ԱՀ, գիրք Ա., 1896, էջ 117-378, գիրք Բ, 1897, էջ 245-295, գիրք Գ, 1898, էջ 91-104, գիրք Դ, 1898, էջ 159:

[9] Տե՛ս ***Մելիք-Փաշայան Կ. Վ.,*** Երվանդ Լալայան // ՊԲՀ, № 3, 1964, էջ 33:

գրված են ինչպես գյուղացիների, այնպես էլ քաղաքացիների զբաղմունքները: Նյութական մշակույթից ներկայացված են բնակարան, զգեստ և զարդարանք բաժինները (227-231): «Ընտանեկան բարք» (233-319) բաժնում նկարագրված են ամուսնությունը և հարսանեկան սովորույթները, տղաբերքը և կնունքը, ընտանեկան կյանքը, ժողովրդական բժշկությունը, հոգու և հանդերձյալ կյանքի մասին սնահավատ պատկերացումները և այլն: Աշխատության վերջին բաժինը նվիրված է հավատքին և նշանավոր տոներին (320-379): Վերջապես՝ «նշանավոր տոներ» (245-278) և «Հայ գրչագիրներ» (279-294) վերտառությամբ բաժինները զետեղված են «Ազգագրական հանդեսի» Բ գրքում:

«Ազգագրական հանդեսի» Բ և Գ գրքերում զետեղված է Ե. Լալայանի խմբագրությամբ գրված կոլեկտիվ «Վարանդա» աշխատությունը, որը նվիրված է Շուշու գավառի ազգագրությանը (ներկայիս Արցախի Հանրապետության Շուշիի և Մարտունու շրջանները, Հադրութի շրջանի մի մասը): Այս աշխատությունը Լալայանը գրել է համահեղինակությամբ. բանահավաք Լ. Աթաբեկյանը կազմել է Վարանդայի վիճակագրությունը, Ղ. Տեր-Ղազարյանը նկարագրել է տնտեսական կենցաղը, «Ընտանեկան բարք» բաժնի «Հիվանդություն և բժշկություն» հատվածի վերաբերյալ նյութեր է գրառել նաև Հ. Տեր-Հովհաննիսյանը, իսկ Հ.Վ.-ն («Տղաբերք և կնունք») և Ա.Բ.-ն («Ընտանեկան կյանքը») (որոնց ով լինելը հայտնի չէ)[10] մասնակցել են ընտանեկան կենցաղի նկարագրությանը: Աշխատության մեծ մասը գրել է Ե. Լալայանը: Այս աշխատությունը ևս կազմված է նախորդ աշխատության սխեմայով[11]՝ 1) «Պատմական տեսություն» (էջ 5-8), 2) «Տեղագրություն» (9-53), 3) «Վիճակագրական տեղեկություններ» (54-

[10] ***Լալայանը Ե.,*** «Վարանդա» աշխատության վերջում՝ ծանոթագրության մեջ, գրում է. «Բացի իմ հավաքած նյութերից՝ ինձ համար տարբեր գյուղերից նյութեր հավաքեցին Պ. Պ. Ալլահվերդյանը, Վարդապետյանը, Հովհաննիսյանը և ուրիշներ, որոնց շնորհակալություն եմ հայտնում» (տե՛ս ԱՀ, գիրք Գ, էջ 349): Հավանաբար նրանք նշված սկզբնատառերով գրված հեղինակներն են, որոնց գրառած նյութերը Ե. Լալայանը խմբագրել և տեղադրել է իր աշխատության մեջ:

[11] Տե՛ս ԱՀ, գիրք Բ. 1897, էջ 4-244, գիրք Գ, 1898, էջ 339-349:

76), 4) «Տնտեսական դրություն» (77-101), 5) «Լուսավորություն» (102-112), 6) «Ընտանեկան բարք» (113-185), ա) «Ամուսնություն» (113-143), բ) «Տղաբերք և կնունք» (144-150), գ) «Ընտանեկան կյանք» (151-172), դ) «Հիվանդություն և բժշկություն» (173-177), ե) «Մահ, թաղում և մեռելոց» (178-184), զ) «Հոգու և հանդերձյալ կյանքի մասին» (185-186), 7) «Հավատք» (187-243), ա) «Լեռների պաշտամունք» (187-188), բ) «Քարի պաշտամունք» (188-193), գ) «Կրակի պաշտամունք» (194-195), դ) «Ջրի պաշտամունք» (196-197), ե) «Ծառերի պաշտամունք» (198-203), զ) «Կենդանիների պաշտամունք» (204-215), է) «Լուսավորների պաշտամունք» (216-220), ը) «Ոգիների պաշտամունք» (221-230), թ) «Կախարդություն» (231-239), ժ) «Սնոտիապաշտություններ» (240-244) և վերջապես՝ «Նշանավոր տոներ» (338-349)՝ նաև ԱՀ-ի երրորդ գրքում, ուր անդրադարձել է Ջավախքի բանավոր գրականությանը[12]:

Ե. Լալայանի հաջորդ գործը «Զանգեզուրի գավառ» աշխատությունն է: Ցեռնարկելով պատմաազգագրական այս շրջանի ուսումնասիրությունը՝ Ե. Լալայանը նպատակահարմար է գտել այն բաժանել «ազգագրական տեսանկյունից անհրաժեշտ շրջանների (Սիսիան, Կապան)», դրանք ուսումնասիրել առանձին-առանձին, իսկ այնուհետև հավաքել այն նյութերը, որոնք ընդհանուր են ողջ գավառի համար: Սակայն Լալայանին հաջողվեց նկարագրել միայն Զանգեզուրի ոստիկանական շրջանի[13] (ներկայիս Գորիսի շրջան) և Սիսիանի ոստիկանական շրջանի[14] (ներկայիս Սիսիանի շրջան) ազգագրությունը, իսկ Կապանի շրջանի[15] վերաբերյալ տվել է միայն պատմական համառոտ տեսություն: Այդ իսկ պատճառով վերոհիշյալ «Զանգեզուր» և «Սիսիան» աշխատություններում բացակայում են այնպիսի բաժիններ, ինչպիսիք են հավատքը, տնտեսական դրությունը, վիճակագրական տեղե-

[12] Տե՛ս ԱՀ, գիրք Գ, 1898, էջ 91-102:
[13] Տե՛ս ԱՀ, գիրք Դ, 1898, № 2, էջ 7-116:
[14] Տե՛ս ԱՀ, գիրք Գ, 1898, № 1, էջ 105-272:
[15] Տե՛ս ԱՀ, գիրք XII, էջ 175-202:

կությունները, կերակուրը և խմիչքը, ազգային իրավաբանական սովորույթները: Աշխատությունները գրված են հետևյալ ծրագրով՝ պատմական համառոտ տեսություն, բնագրություն, նշանավոր գյուղեր և պատմական հուշարձաններ, բնակիչներ, բնակարան, զգեստ և զարդ, ընտանեկան բարք, նշանավոր տոներ, ժողովրդական երգեր: Սակայն Սիսիանի և Զանգեզուր աշխատությունների էջերում զետեղված են ազգագրական բացառիկ նշանակություն ունեցող Սիսիանի քարտեզը, Որոտնա վանքը, Սատանի կամուրջը, Տաթևի վանքը՝ իր սյուն-գավազանով, մենհիրներ և դոլմեններ, սիսիանցիներ՝ տեղական տարազով, սիսիանցի գերդաստանը, բնակարանը՝ իր ներսույթով, երաժշտական գործիքներ, սափորներ, գութան, դաշտային այլ գործիքներ (Սիսիան), Զանգեզուրի քարտեզը, ջրվեժը («չռռան»), Գորիսի համայնապատկերը, քարահունջեցի կինը՝ իր տարազով, գորիսեցի տղամարդը՝ իր տարազով, Ծիծեռնավանքը, պղնձե անոթներ, մանկան օրորոցը-«ճոճք», մանկան բարուրը՝ երեք կնոջ և մեկ տղամարդու հետ՝ իրենց ազգային հագուկապով, զանգեզուրցի կանայք և քողը երեսին նորահարսը ճաշելիս (Զանգեզուր):

Ե. Լալայանի գրչին է պատկանում նաև «Գանձակի գավառ»[16] մեծածավալ ուսումնասիրությունը: Պատմական տեսության մեջ Լալայանը անդրադարձել է հայ մելիքություններին, մելիքների, կյանքին, նրանց հասարակական և իրավաբանական սովորույթյուններին: Տեղագրության մեջ ներկայացված են ինչպես հայկական նշանավոր գյուղերը, վանքերն ու բերդերը, այնպես էլ գավառում բնակվող գերմանացիների, թուրքերի և մալականների գյուղերը: Այնուհետև տրված են հայ բնակչության մարդաբանական նկարագիրը, նրանց բնակարանը, տարազը, ընտանեկան բարքը՝ ամուսնահարսանեկան, տղաբերքի և կնունքի սովորույթներն ու ծեսերը, ընտանեկան կյանքը՝ բաղնիքը, ուտեստը և ըմպելիքը, ժողովրդական բժշկությունը, մահվան, հուղարկավորության և մեռելոցի հետ կապված սովորույթներն ու ծիսական արարողակարգը, ինչպես նաև հավատքը՝ լեռների, քարի, ջրի, կրակի, ծառերի, կենդանիների, տարերքի և տիեզերական երևույթների, ոգիների, սրբերի պաշտամունքային դրսևորումները, սնոտիապաշտա-

[16] Տե՛ս Ա.Հ, գիրք Ե, 1899, էջ 213-360: 1900, 232-282, գիրք VII VIII, 1901, 255-270:

մունքային երևույթները, նշանավոր տոները: Առանձին ներկայացված է գավառում բնակվող մալականների ազգագրությունը: Աշխատության մեջ տեղ են գտել Գանձակի մելիքներից մեկի լուսանկարը՝ մելիքական զգեստով, բեկը և հասարակ գյուղացի կինը՝ իրենց տարազներով, Գանձակի հրապարակը, Շահ-Աբասի հիմնած մզկիթը Գանձակում, նշանավոր վանքերից՝ Զարեքա անապատը, Գանձակի բերդը, Մամռուտ բերդը:

Ե. Լալայանի նշանավոր գործերից է «Բորչալուի գավառ»[17] աշխատությունը, որը նվիրված է Լոռվա ազգագրությանը: Այս գործը հեղինակը ձեռնարկել է նախ և առաջ նահապետական կյանքով ապրող Լոռու ազգագրության վերաբերյալ հինավուրց թանկագին նյութերը սերունդներին պահ տալու մտահոգությամբ, քանզի այն արագ կարող էր ոչնչացվել քաղաքային կենցաղավարության անցնելու պատճառով՝ պայմանավորված Թիֆլիս–Կարս կառուցվող երկաթուղով: Իր դաշտային բանահավաքչական տևական հետազոտությանը զուգահեռ Լալայանը աշխատությունը գրելիս օգտվել է նաև տպագրված ու անտիպ վիճակում եղած նյութերից ու տեղեկություններից, որոնք վերաբերում էին ուսումնասիրվող գավառին, թեև «մատենագիրներից քաղած տեղեկությունների ամենաչնչին մասն է վերաբերում ժողովրդի կուլտուրական զարգացմանը»[18]: Իր նախանշած ծրագրով Լալայանը տալիս է գավառի բնագրությունը, ընդգրկած սահմանները, բնական հարստությունները, կլիման, բուսական ու կենդանական աշխարհը, համառոտ պատմական տեսությունը, ոստիկանական շրջանի հայաբնակ գյուղերի տեղագրությունը, ընդհանուր տեղեկություններ գավառի ազգաբնակչության, վանական համալիրների ու եկեղեցիների, նշանավոր հուշարձանների մասին՝ նկարներով հանդերձ, և ազգագրական տվյալներ բնիկ ազգաբնակչության վերաբերյալ: Նկարագրված են նրանց բնակարանը, զգեստը և զարդը, գլխի հարդարանքը, ամուսնական սովորույթներն ու ծեսերը՝ ուշագրավ պատկերներով, ինչպես, օրինակ, փեսա-թագավորին սափրելու ծեսը, տղաբերքն ու կնունքը, մանկածնությունը, ընտանեկան կենցաղը, որտեղ հեղինակը ցույց է տալիս նահապե-

[17] Տե՛ս ԱՀ, գիրք VII-VIII, 1901, էջ 271-437, գիրք IX, 1902, էջ 197-262, գիրք X, 1903, էջ 112-268, գիրք XI, 1904, էջ 33-128:
[18] Տե՛ս ***Լալայան Ե.,*** Բորչալուի գավառ, Թիֆլիս /ա.թ./, էջ 4:

տական գերդաստանի ներընտանեկան հարաբերությունները, վարվելակարգը, գերդաստանի տրոհումը անհատական փոքր ընտանիքների, նրանց միջև պահպանվող ազգատոհմային կապերն ու պարտականությունները: Ուշադրավ են կերակուրին ու ըմպելիքներին, ժողովրդի առողջապահական դրությանը, մահվան, հուղարկավորման և հիշատակմանը հատկացված բաժինները: Զգալի տեղ են գրավում հավատքին, ժողովրդական տոներին ու պասերին, ուխտագնացությանը և ժողովրդական բանահյուսությանը վերաբերող բաժինները: Ե. Լալայանը աշխատության մեջ զետեղել է նաև ուշագրավ նկարներ, քարտեզներ:

Ե. Լալայանի «Նախիջևանի գավառ»[19] ուսումնասիրությունը ընդգրկում է «Գողթն» կամ Օրդուբադի՝ Վերին Ագուլիսի ոստիկանական և «Նախիջևանի ոստիկանական շրջան» կամ Նախճավան տարածաշրջանները: Առաջինը նվիրված է Հայկական տառերի գյուտի 1500-ամյակին: Ներկայացված են Գողթնի տեղագրությունը, բնագրությունը, պատմությունը, որի տակ խոսվում է քաղաքական կրոնական և մտավոր ու հասարակական զարգացման մասին, հանգամանորեն ներկայացվում են ոչ միայն Օրդուբադը, այլև Վերին Ագուլիս, Վանանդաձոր, Ցղնա կամ Զանանաբի ձոր, Բատաձոր-Գիլանաձոր և նրա շրջակա մյուս բնակավայրերը, գործող և կիսավեր վանքերն ու եկեղեցիները, բնակարանը, տարազը, գլխի հարդարանքը, ընտանեկան բարքը և նշանավոր տոները: Աշխատության երկրորդ մասը՝ «Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճավան» վերնագրով, հավանաբար կիսատ է մնացել և ընդգրկում է բնագրություն, պատմական տեսություն և տեղագրություն բաժինները: Պատմական տեսության առաջին մասը՝ նախապատմական շրջանը, Ե. Լալայանը գրել է իր կատարած պեղումների նյութերի հիման վրա: «Ազգագրական հանդեսի» 15-րդ գրքում ներկայացվում է Նախճավան (Նախիջևանի ոստիկանական) շրջանի տեղագրությունը՝ բաղկացած 31 գյուղից. Նախիջևանից դեպի հարավ և հյուսիս ընկած գյուղերը՝ իրենց բնակչության կազմով, տներով, շրջակա պատմական հուշարձաններով, նաև տարածքի վանքերը, եկեղեցիները, ամրոցները, հայ և թուրք

[19] Տե՛ս Նախիջևանի գավառ, Ա մասն, Գողթն կամ Օրդուբադի ոստիկանական շրջան // ԱՀ, գիրք, XI, 1904, էջ 240-336, գիրք XIII, 1906, էջ 199-226, գիրք XV, 1907, էջ 133-163:

բնակչության զբաղմունքները և այլն: Ե. Լալայանը ջանացել է աշխատության մեջ զետեղել պատմական հուշարձանների, բնակավայրերի, անհատ գործիչների հնարավորինս շատ նկարներ:

Նույն սկզբունքներով հրատարակվել է նաև Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք»[20] մեծածավալ աշխատությունը, որտեղ ներկայացված է Սևանա լճի ավազանի ազգագրությունը: Աշխատության մեջ հանգամանորեն տրված են Նոր Բայազետի բնագրությունը, իր կատարած հնագիտական պեղումների արդյունքների հիման վրա՝ նախապատմական շրջանը, տեղագրությունը, հաղորդակցության երթուղիները, պատմությունը, պատմական հուշարձանները, ընտանեկան բարքը, ամուսնահարսանեկան, տղաբերքի, կնունքի և մանկատածության սովորույթները, ժողովրդական դեղերն ու բժշկությունը, հուղարկավորման և մեռելոցի սովորություններն ու ծիսական արարողակարգերը, ժողովրդական հավատալիքներն ու պաշտամունքային դրսևորումները՝ լեռների, քարերի, կենդանիների, շեմքի տարրերի և ֆիզիկական երևույթների՝ ոգիների, սրբերի, նաև հավատքը՝ չար ոգիների վերաբերյալ, կախարդությունը, անոտիապաշտությունները, պասերն ու տոները, ժողովրդական բանահյուսությունը, նշանավոր վանքերը: Աշխատությունը գրված է Ե. Լալայանի երկար տարիների պեղումների և հավաքած ազգագրական նյութերի հիման վրա: Սակայն պետք է նշել, որ այս աշխատության մեջ հեղինակը մի շարք բաժիններ՝ նվիրված ազգաբնակչության վերաբերյալ տեղեկություններին, նյութական մշակույթին, չի ներկայացրել՝ պատճառաբանելով, որ բնակարանները, զգեստները նման են Վայոց ձորի, Բորչալուի գավառներին, ուստիև ավելորդ է համարել ժամանակ վատնելը:

Ե. Լալայանը գրել է նաև «Շարուր Դարալագյազի գավառ»[21] աշխատությունը, որը, սակայն, անավարտ է և լրիվությամբ չի ընդգրկում ամբողջ գավառին վերաբերող ազգագրական նյութը: Գավառը բաժանելով երկու մասի՝ Լալայանը ներկայացրել է

[20] Տե՛ս Ա.Հ, գիրք XIII, 1906, էջ 167-198, գիրք XV, 1907, էջ 164-205, գիրք XVI, 1907, էջ 8-65, գիրք XVII, 1908, էջ 86-125, գիրք XVIII, 1908, էջ 109-156, գիրք XIX, 1910, էջ 115-150, գիրք XX, 1910, էջ 31-60, գիրք XXIII, 1912, էջ 123-148, գիրք XXIV, 1913, էջ 51-59:

[21] Տե՛ս Ա.Հ, գիրք XII, 1904, էջ 235-293, գիրք XIII, 1906, էջ 139-166, գիրք XIV, 1906, էջ 133-155:

միայն նրա մի մասի՝ Դարալագյազի կամ Վայոց ձորի ազգագրությունը: Ներկայացված են Վայոց ձորի բնագրությունը, պատմությունը, տեղագրությունը, գյուղերը, բնակչության տարազը, ընտանեկան բարքը՝ ամուսնության և հարսանիքի սովորությունները, տղաբերքի և կնունքի, ժողովրդական դեղերի և բժշկության, մահվան, հուղարկավորման և մեռելոցի հետ կապված սովորությունները և նշանավոր վանքերը:

Ազգագրական շրջանների վերաբերյալ «Ազգագրական հանդեսում» տեղ գտած բացառիկ արժեքավոր ուսումնասիրություն է Ե. Լալայանի «Վասպուրական»[22] աշխատությունը: Նյութերը Ե. Լալայանը հավաքել է 1910 թ. Վասպուրական կատարած ճանապարհորդության ժամանակ, ինչպես նաև Արևելյան Հայաստանի այն վայրերում, ուր հայտնվել էին այդ նահանգից մազապուրծ փախած գաղթականները: Վասպուրականի վերաբերյալ աշխատանքը Ե. Լալայանը նախատեսել էր հրատարակել 6 հատորով, որոնք առանձին-առանձին պետք է ընդգրկեին՝ ա) ամբողջ Վանի նահանգի տեղեկագրությունը՝ պատմական և հնագիտական տեղեկություններով, բ) նահանգի բոլոր վանքերի նկարագրությունը, գ) ազգագրական տեղեկություններ Վանի, Շատախի, Մոկսի վերաբերյալ, դ) ժողովրդական հավատքը, ե) Վասպուրականի ձեռագրերի ցուցակը, զ) Վասպուրականի բանավոր գրականությունը ըստ բարբառների՝ հատորների բաժանված: Սակայն այս բանը հեղինակին չի հաջողվում: Հրատարակված աշխատությունը ընդգրկում է հետևյալ մասերը՝ Վասպուրականի ազգագրությունը, որտեղ մարդաբանական տեղեկություններ են տրված Վանի, Տոսպի և Հայոց ձորի բնակչության վերաբերյալ, մանրամասնորեն նկարագրված են նրանց բնակարանները և դրանց ներսույթը, զգեստը և զարդեղենը՝ իրենց նկարներով, ընտանեկան բարքերը, ամուսնահարսանեկան, տղաբերքի, կնունքի սովորությունները, ընտանեկան կյանքը, մահը, թաղումն ու մեռելոցը: Հաջորդ բաժիններն են Վասպուրականի նշանավոր վանքերը՝ դրանց մի զգալի մասի չափագրումներով, ամբողջական համալիրների նկարնե-

[22] Տե՛ս ԱՀ, գիրք XX, 1910, 116-196, 197-202, գիրք XXI, 1911, 101-104, գիրք XXII, 1912, էջ 85-100, 117-197, գիրք XXIII, 1912, 149-196, գիրք XXIV, 1913, էջ 117-180, 181-232, գիրք XXV, 1913, էջ 20-60, 109-164, 189-215, գիրք XXVI, 1916, էջ 196-212:

րով, արձանագրություններով, տապանագրերով, տնայնագործությունը, որի տակ ներկայացված է Շատախի շալագործությունը: «Հավատք» խորագիրը կրող բաժնում[23] Ե. Լալայանն անդրադարձել է լեռների, քարի, ջրի, ջրի բուժիչ հատկությունների, բույսերի, ծառերի, թփերի, կենդանիների՝ թռչունների, սողունների, շան, գայլի, ոգիների (չար ու բարի), սրբերի տեղական պաշտամունքային դրսևորումներին: Սրանց վերաբերյալ լրացումներ է կատարել 1915-1916 թթ. փախստականներից հայ բանահյուսության վերաբերյալ դաշտային ազգագրական նյութեր հավաքող արշավախումբը ղեկավարելիս: Մի առանձին բաժին է նվիրված Վասպուրականի ասորիների ազգագրությանը: «Վասպուրականը» հիմնարար և արժեքավոր աշխատություն է տվյալ պատմաազգագրական շրջանի վերաբերյալ և արդյունք է հեղինակի մի քանի տարիների համառ աշխատանքի:

Հայոց ազգագրական ընկերության միջոցներով 1915 թ. սեպտեմբերին հայ իրականության մեջ առաջին անգամ կազմակերպված ազգագրական-բանահավաքչական խմբարշավը, չորս ամիս շրջելով Անդրկովկասի այն վայրերում, ուր ապաստան էին գտել հայ փախստականները, գրի են առնում 874 հեքիաթ և բազմաթիվ երգեր: Դրանով Ե. Լալայանի ջանքերով կորստից փրկվեցին Մշո, Մոկսի, Վանի, Բիթլիսի, Արճեշի, Սասունի, Ալաշկերտի, Բասենի, Շատախի, Բուլանըխի և այլ ազգագրական շրջանների հեքիաթներ, առակներ, պատմվածքներ, ավանդություններ, աղոթքներ, առածներ, երգեր, ազգագրական այլ նյութեր: Նույնքան արժեքավոր էին Ե. Լալայանի գրի է առել ազգագրական նյութերը մշեցիների վերաբերյալ: Գիտնականը ծրագրել էր գրառած նյութերը լրացնելու և ամբողջացնելու նպատակով նոր խմբարշավ կազմակերպել դեպի Մշո պատմական գավառը: Սակայն մի կողմից նյութական սղությունը, մյուս կողմից պատերազմական պայմաններում թուրքական վայրագությունները այն դարձնում են անհնար: Իր հայտնի «Մուշ-Տարոն» աշխատության ծանոթագրության մեջ նշում է նաև, որ հավաքած նյութերի հավաստիությունը վերստուգելու հույսով այս աշխատությունը կարդացել է գավառի պատմությանն ու ազգագրական երևույթներին քաջածա-

[23] ԱՀ, գ. XXVI, էջ 196-212:

նոթ երեք անձնավորությունների (Եղիշե քահանա Տեր-Բարսամյան, Մուշեղ քահանա Տոնապետյան, Նազարեթ Մարտիրոսյան), որոնց հավանությանը արժանանալուց հետո այն հրատարակության է ներկայացրել[24]:

«Մուշ-Տարոն» աշխատությունը սկսում է «Զգեստ և զարդ» բաժնով՝ նկարագրելով կանանց, ապա՝ տղամարդկանց տարազների բարդ և անկրկնելի համալիրները՝ մշեցի փախստականների լուսանկարներով: Անդրադարձել է առօրյա և տոնական համալիրներին, գլխի բարդ հարդարանքներին, զարդերին, ագանելիքներին՝ ոտնամանների, գուլպաների տեսակներին: Այնուհետև անդրադարձել է ամուսնության և հարսանեկան սովորույթներին ու ծեսերին, եզակի նյութ է հաղորդվում ամուսնական երկսեռ տարիքի, խնամիության աստիճանների, ամուսնությունն ըստ ազգության, տեղի և սոցիալական համակարգի, ամուսնական զանազան դեպքերի, օրորոցախազով ամուսնության, հարսնացուի ընտրության, աղջիկտեսի, նշանադրության, մինչև հարսանիքն ու պսակը երկուստեք խնամիական կապերի, այցելությունների կարգի, տոներին միմյանց ***խոնչա-բոխչա*** ուղարկելու, հարսանիքի նախապատրաստական աշխատանքների, ***տաշտադրոնքի***, ***ազպալվածքի***, ***հինադրեքի***, փեսային սափրելու, հարս ու փեսայի զգեստներն օրհնելու, դրանց ուղեկցող երգերի, քավորի դերակատարության, բուն հարսանեկան և պսակի, ապա հետհարսանեկան արարողությունների՝ ***կթղայի***՝ նորահարսին նվերներ հանձնելու, օժիտի, հարսին առաջին անգամ դարձ տանելու, փեսապատիվ սովորույթի և այլնի վերաբերյալ:

Առանձին բաժնով ներկայացված են մանկան ծննդի և կնունքի, անվանակոչման կարգի, քառասունքի սովորույթի, նորածնի մարմնակրթական դաստիարակության սովորույթները: Առանձին գլուխ են կազմում մահվան, հուղարկավորման և մեռելոցների արարողությունների նկարագրությունները: Ցավոք, այս աշխատության մեջ ամբողջապես և համալիր ձևով չեն ներկայացված Գ. Խալաթյանցի ծրագիր-հարցարանի բոլոր պահանջները, ինչպես դա արված է նախորդ աշխատություններում:

Իհարկե, Ե. Լալայանին չհաջողվեց ամբողջությամբ սպառել

[24] ԱՀ, գ. XXVI, էջ 149:

հայոց պատմաազգագրական շրջանների ազգագրական բնութագրումը, ինչպես պատմական հայրենիքի տարածքում, այնպես էլ սփյուռքում: Դա մեկ մարդու կամ նույնիսկ մեկ սերնդի ուժերից վեր գործ է: Այստեղ կարևորն այն է, որ նա սկիզբ դրեց ու լայն ծավալով ներկայացրեց Հայաստանի ազգագրական շրջանների մի զգալի մասը՝ ըստ ազգագրական և տնտեսամշակութային երևույթների համադրման սկզբունքների: «Ազգագրական հանդեսի» 1896-1916 թթ. բանահավաքներից առաջինը Ե. Լալայանն էր, որին հաջողվեց պատմական Հայաստանի մի շարք շրջաններում ուսումնասիրություններ կատարել:

Պատմաազգագրական շրջանների վերաբերյալ իր աշխատություններում գիտնականը հույժ կարևոր ուշադրություն է դարձրել նաև ժողովրդագրությանը, որը ներկայացված է բնակավայրերի, տների ու բնակչության բացարձակ թվերով, նրանց սեռատարիքային կազմով, ազգային, դավանքային ու դասակարգային պատկանելիությամբ: Կարևոր տեղ է հատկացված բնակչության շարժերին (ամուսնություն, ծնունդ, մահ), որոնք ներկայացված են ըստ տարեթվերի՝ ազգային ու սեռատարիքային կազմով, իսկ արդյունքում բնակչության աճի տեմպերն արտահայտող տվյալներն են: Ուրույն տեղ է հատկացված բնակչության տեղաշարժերին, շարժընթացներին ու խտությանը, ինչպես նաև նրանց տնտեսական գործունեությանը վերաբերող ցուցանիշներին:

Վիճակագրական այդ հարուստ տվյալները Ե. Լալայանը քաղել է 1886 թ. «ընտանեկան ցուցակներից», 1897 թ. համառուսական առաջին մարդահամարի արդյունքներից, ինչպես նաև տարածքային վարչամիավորների 1890-1908 թթ. հրատարակած ամենամյա հաշվետվություններից և այլ աղբյուրներից, որոնք լրացվել ու մշակվել են հավաքչական աշխատանքների ընթացքում:

Ե. Լալայանի ուսումնասիրություններում հանգամանալի ուշադրություն է դարձվել հին վանքերի նկարագրություններին, դրանց վրա եղած վիմագրական արձանագրություններին: Այդ նյութերը հիմնականում արժեքավոր են իբրև հնագիտական տվյալներ՝ հայ ճարտարապետության, արվեստի ու սոցիալ-քաղաքական, հին կամ միջնադարյան հայոց պատմության ուսումնասիրությունների համար:

Իր ազգագրական հավաքագրումների մեջ անխոնջ գիտնականը մեծ ուշադրություն է դարձրել նաև հայ բանահյուսական նյութերի գրառմանը: Ժողովրդական բանահյուսությունն իր նյութերի քանակով ու բազմատեսակությամբ առաջնակարգ տեղ է գրավում նրա հավաքածուներում մեջ՝ կենդանի պատկեր ներկայացնելով ժողովրդական աշխարհայացքին, հավատալիքներին, բարբառներին, որոնց մեջ կարելի է բացահայտել նույնիսկ ամենահին մշակութային շերտերի մնացուկներ:

Ժողովրդական բանահյուսության նյութերի մեջ գերակշռում են հեքիաթները: Ե. Լալայանը կազմել է հեքիաթների ստվար ժողովածուներ, որոնց մի մասն է դեռևս հրատարակված: Դրանք են՝ 1. Ջավախքի հեքիաթները, որոնց մի մասը հրատարակված է «Ջավախքի բուրմունք» խորագրով գրքում, 2. Ալեքսանդրապոլի հեքիաթներ, 3. Լոռու հեքիաթներ, 4. Նոր Բայազետի հեքիաթներ, 5. Վասպուրականի հեքիաթներ, որոնցից երեք հատորները տպագրված են «Մարգարիտներ հայ բանահյուսության» խորագրով, 6. Էջմիածնի գավառի հեքիաթներ, 7. Կոտայքի հեքիաթներ, 8. Եղվարդի հեքիաթներ:

Ցավոք, գիտնականի գրի առած նյութերի մի զգալի մասը, ինչպես ասվեց, դեռևս հրատարակված չեն, շատ ծրագրեր մնացին անկատար: Գիտնականը ծրագրեր էր կազմել «Հայկական տներ», «Հայկական զգեստներ ու զարդարանքներ», «Հայկական կերակուրներ ու խոհանոց», «Հայկական ամուսնության ու հարսանիքի սովորություններ», «Հայկական խաղեր ու պարեր», «Հայկական ժողովրդական հավատք», «Հայկական տոներ», մի խոսքով՝ հայ ազգագրության գրեթե բոլոր ոլորտների վերաբերյալ թեմատիկ համալիր ուսումնասիրություններ, որոնք գիտնականը չհասցրեց կյանքի կոչել:

Նրա տեսադաշտից չվրիպեցին նաև Հայաստանի ազգային փոքրամասնությունների տեղաբաշխվածությունը և նրանց էթնոմշակութային փոխառնչակցությունը հայերի և միմյանց նկատմամբ: Հանդեսի էջերում ուշագրավ նյութեր են հրատարակվել բոշաների, քրդերի, ասորիների, պարսիկների, տեղի ռուս և ուկրաինացի աղանդավորների, ուտիների, վրացիների, հույների, թուրքերի և այլոց ազգագրական երևույթների վերաբերյալ:

«Ազգագրական հանդեսի» բոլոր հիմնական բաժինները ազգագրական հետազոտությունների հիմքում ունեցել են որևէ (մեծ

կամ փոքր) բնատարածք՝ իր բնակչությամբ և մշակույթով, չափանիշ ընտրելով երբեմն ժամանակի վարչատարածքային բաժանումը, երբեմն էլ՝ ավանդութային կենցաղամշակութային համալիրը:

Հայաստանի պատմաազգագրական շրջաններին նվիրված Ե. Լալայանի համալիր նյութերն ու հրատարակությունները մինչև օրս պահպանել են իրենց արդիականությունն ու թարմությունը, թեպետ քիչ չեն նաև տպագիր պարբերականներում ու ժողովածուներում նրա մյուս գործերը, որոնք ևս արժանի են հանգամանալի քննության: Այսպիսով՝ իր կյանքի 46 տարիները Ե. Լալայանը անձնվիրաբար ծառայեցրեց հայ ազգագրությանն ու բանահյուսությանը, գերազանցապես նյութերի հավաքման ու հրատարակման գործին: Այն, ինչ արել է Ե. Լալայանը, իսկական գիտական սխրանք է:

Այսպիսով՝ Ե. Լալայանը պատմաազգագրական շրջանների ուսումնասիրության հարուստ ժառանգություն թողեց: Հիմնականում հետևյալներն են՝ 1. Ջավախքի բուրմունք (Թիֆլիս 1892): 2. Ջավախք կամ Ախալքալաքի գավառ. ազգագրություն (ԱՀ, գ. I և II): 3. Վարանդա. ազգագրություն (ԱՀ, գ. II): 4. Սիսիան. ազգագրություն (ԱՀ, գ. III): 5. Զանգեզուր. ազգագրություն (ԱՀ, գ. III): 6. Ղափան. ազգագրություն (ԱՀ, գ. XII): 7. Գանձակի գավառ. ազգագրություն (ԱՀ, գ. V, VI և VII-VIII): 8. Բորչալուի գավառ. ազգագրություն (ԱՀ, գ. VII-VIII, IX, X, XI): 9. Գողթան գավառ. ազգագրություն (ԱՀ, գ. XI, XII): 10. Նախիջևանի ոստիկանական շրջան. ազգագրություն (ԱՀ, գ. XI, XIII և XIV): 11. Վայոց ձոր. ազգագրություն (ԱՀ, գ. XII, XIII, XIV), որը լույս է տեսել նաև ռուսերեն թարգանությամբ: 12. Նոր Բայազետի գավառ. ազգագրություն (ԱՀ, գ. XIV, XVI, XVII, XVIII, XX, XXII, XXIV), լույս է տեսել նաև ռուսերեն թարգամանությամբ: 13. Պեղումներ Նոր Բայազետի գավառում (ԱՀ, գ. XV, XIX), լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: 14. Գանձակի գավառի մալականները. ազգագրություն (ԱՀ, գ. XVII, XVIII): 15. Ապարանի բանահյուսությունից (ԱՀ, գ. XIX): 16. Ջավախքի բանահյուսությունից (ԱՀ, գ. XIX): 17. Սևանի վանքը (ԱՀ, գ. XVII), լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: 18. Վայոց ձորի վանքերը (ԱՀ, գ. XXVI): 19. Վասպուրականի ազգագրությունը (ԱՀ, գ. XX): 20. Վասպուրականի ասորիները (ԱՀ, գ. XXIV), լույս է

տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: 21. Վասպուրականի բանահյուսությունը (ԱՀ, գ. XX, XXI, XXII, XXIII, XXIV, XXV): 22. Վասպուրականի հավատքը (ԱՀ, գ. XXII, XXVI): 23. Տնայնագործությունը Վասպուրականում (ԱՀ, գ. XXV): 24. Ծիսական կարգերը հայոց մեջ (ԱՀ, գ. XXI, XXIII, XXV): 25. Մուշ-Տարոն. ազգագրություն (ԱՀ, գ. XXII): 26. Ցուցակ հայերեն ձեռագրերի Վասպուրականի (Թիֆլիս, 1915): 27. Ուտիների ազգագրությունից // «Տեղեկագիր Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի», թիվ 1, 1926: 28. Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում // «Տեղեկագիր Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի», թիվ 3, 1928: 29. Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ // «Տեղեկագիր Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի», թիվ 5, 1931: 30. Մարգարիտներ հայ բանահյուսության, հ. 1-3, Թիֆլիս, Վաղարշապատ, 1914-1915: 31. Դամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում (1931):

Բազմավաստակ գիտնականը չհասցրեց հրատարակել բազմաթիվ աշխատություններ, որոնցից են՝ 1. Հայկական տոներ, 2. Հայկական առածներ, 3. Հայկական հանելուկներ, 4. Էջմիածնի գավառը, 5. Սասունցիների ազգագրությունը, 6. Ուտիների ազգագրությունը, 7. Երևանի գավառը (ընդարձակ տեղագրական, հնագիտական ու պատմական, անավարտ), 8. Լոռու գավառի հեքիաթները, 9. Նոր Բայազետի գավառի հեքիաթները, 10. Լենինականի գավառի հեքիաթները, 11. Կոտայքի հեքիաթները, 12. Եղվարդի հեքիաթները, 13. Տնայնագործությունը Հայաստանում:

Ե. Լալայանից բացի՝ առանձին շրջանների վերաբերյալ ազգագրական ուսումնասիրություններով «Ազգագրական հանդեսում» հանդես են եկել նաև այլ բանահավաքներ: Դրանցից առավել աչքի է ընկնում Բենսեի (Սահակ Մովսիսյան) «Բուլանըխ կամ Հարք գավառ»[25] ուսումնասիրությունը՝ նվիրված Տուրուբերան նահանգի Հարք գավառի ազգագրությանը: Ուշագրավ է Յ. Մուրադյանցի «Համշենցի հայեր»[26] ուսումնասիրությունը, որը նվիրված է Սև ծովի անատոլիական ափերից կովկասյան ափերը գաղթած մոտ 15

[25] Տե՛ս ԱՀ, գիրք Ե, 1899, էջ 5-184, գիրք Զ, 1900, էջ 7-108:
[26] Տե՛ս ԱՀ, գիրք Դ. 1898, էջ 117-143, գիրք Ե, 1899, էջ 361-406, գիրք Զ, 1900, էջ 109-158:

հազար հայերի ազգագրությանը, որոնք իրենց համշենցի են անվանում իրենց նախկին հայրենիքի՝ Համշենի անունով:

Ե. Շահազիզի «Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք»[27] ուսումնասիրությունը նվիրված է Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախի պատմությանը և ազգագրությանը:

Արցախի տնտեսական կենցաղը նկարագրել է Ղ. Տեր-Ղազարյանը[28], ընտանեկան կենցաղը, հիվանդությունն ու բժշկությունը, հուղարկավորության ծեսերը և այլն ներկայացրել են Հ. Վ. և Ա. Բ. անվանումներով բանահավաքները[29]:

Վ. Փափազյանը մեծ աշխատություն է գրել հայ բոշաների կենցաղի վերաբերյալ, որի ազգագրական նյութը ամբողջությամբ անձամբ ինքն է հավաքել[30]: Կովկասյան ժողովուրդների, այդ թվում հայերի կաթնամթերքների վերաբերյալ ուսումնասիրությունն է կատարել Ա. Քալանթարը[31]: Ալաշկերտի բանահյուսությունը մեծապես շահել է Գ. քահ. Նժդեհյանցի շնորհիվ[32]:

Հին Նախիջևանի, Ջուղայի, Ագուլիսի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Բասենի, Շիրակի և Ղազախի ու Շամախու հայերի սովորությունները ջանասիրաբար գրի է առել ու «Փորձ» ամսագրում, ապա «Ազգագրական հանդեսում» տպագրել նշանավոր բժիշկ, հայրենասեր Հ. Քաջբերունին[33]: Հրաչյա և Արմենուհի Աճառյան-

---

[27] Տե՛ս ԱՀ, գ. VII-VIII, 1901, էջ 5-102, գ. IX, 1902, էջ 5-82:

[28] Տե՛ս ԱՀ, գ. Բ, էջ 77-101:

[29] Տե՛ս ԱՀ, գ. Բ, էջ 144-186:

[30] Տե՛ս ԱՀ, գ. Գ, էջ 74-90, Դ, էջ 203-275: Այս շատ ուշագրավ աշխատությունը բովանդակում է բազմաթիվ թեմաներ՝ ժողովրդի ծագումը, թիվը, մարդաբանական կառուցվածքն ու բնավորությունը, թափառական կենցաղավարությունը, բնակարանը, հագուստներն ու զարդերը, կերակուրներն ու խմիչքները, զբաղմունքը, լեզուն, կրոնական հավատալիքները, ամուսնության սովորույթները, հուղարկավորության ծեսերը, ժողովրդական արվեստը, բանահյուսությունը, իրավաբանական սովորությունները և այլն:

[31] Տե՛ս ***Քալանթար Ա.,*** Կաթնային արդյունքները // ԱՀ, Դ, էջ 276-292:

[32] Տե՛ս ***Գր. քահ. Նժդեհյանց,*** Ալաշկերտի բանավոր գրականություն // ԱՀ, գ. Ե, էջ 185-199, գ. VII-VIII, էջ 437-505, գ. IX, էջ 263-271, գ. XI, էջ 197-240, գ. XII, էջ 95-103, գ. XIII, էջ 83-86, գ. XVII, էջ 49-52, գ. XVIII, էջ 33-36, գ. XIX, էջ 95-98, գ. XX, էջ 108-111:

[33] Տե՛ս ***Քաջբերունի,*** Հայկական սովորություններ // «Փորձ», 1879, № 10, էջ 39-47, 1881, № 5-6, էջ 5762, ԱՀ, գ. VII-VIII, էջ 113-204, գ. IX, էջ 83-116:

ները գրի են առել Կ. Պոլսի ժողովրդական բանահյուսությունը[34]: Եվ այսպես, ուրիշ շատ բանահավաքներ Լալայանի խմբագրած «Ազգագրական հանդեսում» տպագրել են իրենց գավառների ազգագրական նյութերի ազգագրական նշխարներն ու բանահյուսությունը:

Ներկայումս նման կարգի հետազոտությունը մասնագետ ազգագրագետների կողմից գրեթե լռել է: 2014 թ. տողերիս հեղինակի կողմից այս հրատապ հարցի վերաբերյալ հրատարակված մի հոդվածում գրել ենք. «Ցավոք, ներկայումս ավանդական ազգագրությունը մոռացության է մատնվում ազգագրագետ բանահավաքներիս աչքի առաջ: Պատմական Հայաստանի 9/10 մասի և առանձնապես սփյուռքի ազգագրությունը կորստյան է մատնված: Մենք ցարդ պետական մոտեցում չունենք հատկապես Արևմտյան Հայաստանի ազգագրության ուսումնասիրության նկատմամբ: Այս աննպաստ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ կորստյան մատնվող ազգագրական նյութերը փրկվեն, առանձին շրջաններում և մարզերում դեռևս մնացած ազգագրական հետաքրքրություն ներկայացնող փաստերը գրի առնվեն: Մի՞թե հնարավոր չէ շարունակել Ե. Լալայանի, Ս. Լիսիցյանի, Վ. Բդոյանի, Դ. Վարդումյանի և մյուսների թողած ավանդները՝ ավարտին հասցնելով պատմական Հայաստանի բոլոր պատմազգագրական շրջանների ուսումնասիրությունը՝ պատրաստելով նաև ազգագրագետ կադրեր: Նշված խնդիրը պետք է բարձրացնել պետական մակարդակի: Հայաստանի Հանրապետության պատմազգագրական շրջանների ուսումնասիրության առումով մենք դեռևս չունենք համապարփակ հետազոտություններ, էլ ուր մնաց Արևմտյան Հայաստանը և ժամանակակից սփյուռքը»[35]: Նույն հոդվածում մենք կարևորել ենք նաև ավելի ընդլայնված և համապարփակ նոր հարցարան ունենալու անհրաժեշտությունը:

---

[34] Տե՛ս ***Հրաչյա և Արմենուհի Աճառյաններ,*** Հավաքածո պոլսահայ ռամկական անգիր գրականության, ԱՀ, գ. IX, էջ 160-196:

[35] ***Նահապետյան Ռ.,*** Հայաստանում ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությունից // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայ ժողովրդական մշակույթ, XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 31-40:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԻ ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ, ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) 1920-1940-ական թթ.

բ) 1950-1980-ական թթ.

1. ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920-1940-ԱԿԱՆ ԹԹ.)

Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջափուլ թևակոխեց իբրև պատմամշակութային գիտության լիովին կազմավորված բնագավառ: Խորհրդային կարգերի հաստատմամբ սկսվեց հայագիտության զարգացման նոր փուլ Հայաստանում գիտության մյուս բնագավառների հետ միասին բարենպաստ պայմաններ և զարգացման հեռանկարներ ստեղծվեցին նաև ազգագրական գիտության համար: Նյութական հնարավորություններ ու հեռանկարներ բացվեցին ինչպես գիտահետազոտական, այնպես էլ դաշտային բանահավաքչական աշխատանքների ծավալման համար[1]: Այն, ինչ նախկինում ինքնուրույն պետականության բացակայության պատճառով մեզանում կատարվում էր առանձին անհատների և ազգագրական, գավառագիտական և նման ընկերությունների նախաձեռնությամբ ու ջանքերով, սկսեց իրականացվել պետական հոգածությունը վայելող համապատասխան հիմնարկների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրված, հետևողական գործունեությամբ: Խորհրդային ազգագրության խնդիրների ու հեռանկարների, սոցիալիստական գյուղի վերափոխումների անդրադարձների վերաբերյալ պահանջներ էին առաջ քաշվում միութենական ազգագրության կողմից[2]: Սոցիալիստական գաղափարաբանության հիմնական պահանջներին համապատասխան քաղաքականացվում էր հասարակական գիտությունների ուսումնասիրությունը, գլխավոր խնդիր էր դառնում պետական իշխանության ու կոմունիստական կուսակցության վարած քաղաքականության քարոզչությունը, սոցիալիստական վերափոխումները ներկայացնելը: Գաղափարական այս պարտադրանքի պայմաններում

[1] Տե՛ս ***Карапетян Э., Вардумян Д.,*** О некоторых задачах армянской советской этнографии // «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1952, № 1, էջ 67-74:

[2] Տե՛ս ***Толстов С.П.,*** Основные задачи и путь развития советской этнографии, «Институт этнографии АН СССР, краткие сообщения» Москва-Ленинград, 1950, № XII:

հայագիտության, այդ թվում՝ նաև ազգագրական գիտության ապահով և անկաշկանդ զարգացումը, ըստ էության, դարձավ անհնարին: Այդուհանդերձ, հայ ազգագրական գիտության ձեռքբերումները խորհրդային տարիներին ակնառու էին: Խորհրդային շրջանում հայ ազգագրության ընթացքը նույնպես կարելի է բաժանել զարգացման երկու ժամանակաշրջանի.

ա) 1920-1940-ական թթ., երբ տակավին գործում էին դեռևս նախահեղափոխական շրջանից հայտնի բազմավաստակ ազգագրագետներ և բանագետներ (Ե. Լալայան, Խ. Սամուելյան, Ս. Լիսիցյան, Գ. Զուբսին, Ի. Պետրուշևսկի, Մ. Աբեղյան, Հ. Օրբելի և այլք), որոնք հավաքչական գործունեությանը զուգընթաց հրատարակեցին մի շարք ընդհանրացնող աշխատություններ:

բ) 1950-1980-ական թթ., երբ ասպարեզ եկավ ազգագրագետների նոր սերունդ, որը, հենվելով ավանդականի վրա, գիտության տվյալ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան, ծավալեց հավաքչական և հետազոտական լայն գործունեություն ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, Հայաստանի պատմության պետական թանգարանում, Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնում ու Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով ողջ պատմական Հայաստանում և Անդրկովկասում փակվեցին ազգագրական հրատարակչությունները, «Հայոց ազգագրական ընկերությունը» և նրա գործունեությանը նպաստող կազմակերպությունները: Նահատակվեցին կամ ցաքուցրիվ եղան նախախորհրդային շրջանում հայտնի բազմաթիվ ազգագրագետ-բանահավաքներ, որոնք համախմբված էին հատկապես «Ազգագրական հանդեսի» շուրջը: Նորաստեղծ Խորհրդային Հայաստանին վիճակված էր ամեն ինչ նորից սկսել[3]: Խորհրդային իշխանության առաջին տարիներին նոր կադրե-

[3] Տե՛ս ***Лисицян С. Д.,*** Армянская этнография за 15 лет // «Советская Этнография» (այսուհետ՝ СЭ), 1936, № 4-5, էջ 270-274, ***Կարապետյան Է., Վարդումյան Դ.,*** Սովետահայ ազգագրության մի քանի խնդիրների մասին // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1952, № 1, էջ 67-74, ***Вардумян Д. С.,*** Этнографическая работа в Армении в 5-6 пятилетиях

րի մեծ պակաս կար, բուհերի ուսումնական ծրագրերում բացակայում էր ազգագրագետ կադրեր պատրաստելու պահանջը, Մոսկվայի և Լենինգրադի բուհերում շատ թույլ էր կովկասագիտական առարկաների դասավանդման մակարդակը, հույս չէր ներշնչում դրանցում հայ ազգագրագետ կադրեր պատրաստելու գործընթացը: Մի կողմից երկրի տնտեսական ծանր վիճակը, մյուս կողմից կադրերի պակասը բացասաբար էին անդրադառնում հայ ազգագրության հավաքչական և գիտահետազոտական աշխատանքները արդյունավետ իրականացնելու վրա: Հարկավոր էր մի նյութական հիմք, որի վրա հենվելով՝ հնարավոր կլիներ ստեղծել ու աճեցնել նոր ազգագրական կադրեր: Խորհրդային ժամանակաշրջանում՝ 1920-1930-ական թթ. դժվարին նյութական պայմաններում, բայց պետության անմիջական իրավասությամբ, այդուհանդերձ, նախորդ սերնդի անբասիր աշխատանքով ստեղծվեցին ազգագրական գիտության զարգացման հնարավորություններ: Ազգագրական նյութերի հավաքումը կատարվում էր այլ պայմաններում: Հայ ժողովրդի արևելահայ հատվածը ձեռնամուխ է եղել երկրի սոցիալիստական վերակառուցմանը: Հարկավոր էր հետևել արագորեն կատարվող տնտեսական, հասարակական և մշակութային վերափոխությունների ընթացքին և ճշգրտորեն լուսաբանել դրանց շնորհիվ ժողովրդի կենցաղի ու սովորությունների մեջ տեղի ունեցող փոփոխությունները: Միաժամանակ անհրաժեշտ էր լրացնել ժողովրդի այն բոլոր ազգագրական խմբերի հետազոտությունը, որոնք մինչ այդ բոլորովին դուրս էին մնացել ուսումնասի-

// СЭ, 1956, № 3, էջ 146-148, նույնի՝ Армянская этнография за годы Советской власти // СЭ, 1962, № 5, էջ 111-116, նույնի՝ Ազգագրություն // «Գիտությունը Հայաստանում 50 տարում», ՀՍՍՀ ԳԱ հր., Երևան, 1973, էջ 65-70, ***Карапетян Э. Т.,*** К 60-летию армянского этнографического периодического издания «Азгагракан андес» // СЭ, 1956, № 2, էջ 111-114, ***Мелик-Пашаян К.В.,*** Жизнь и деятельность Эрванд Лалаяна // СЭ, 1965, № 2, էջ 135-146, նույնի՝ Ստեփան Լիսիցյան (ծննդյան 100-ամյակ առթիվ) // ՊԲՀ, 1965, № 4, էջ 31-42, ***Օդաբաշյան Ա.,*** Խաչիկ Սամվելյանը ազգագրագետ // ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 11, էջ 33-42, ***Բդոյան Վ.,*** Ազգագրություն // Հայագիտությունը 50 տարում, Երևան, 1970, էջ 195-229, ***Վարդումյան Դ.,*** Ազգագրություն // ՊԲՀ, 1970, № 4, էջ 135-145, նույնի՝ Հայ ազգագրությունը Ի դարում // «Բազմավէպ», 1-4, 2003, էջ 451-465, ***Մելիք-Փաշայան Կ. Վ.,*** Սովետահայ ազգագրության անցած ուղին // ՊԲՀ, 1968, № 11, էջ 54-67:

ղողների տեսաղաչտից կամ էլ թերի էին ուսումնասիրվել: Եթե սա դյուրին էր կատարել արևելահայերի նկատմամբ, քանի որ նրանք մտնում էին Սովետական Միության կազմի մեջ, ապա գործը բարդանում էր արևմտահայերի հարցում: Անմատչելի էր Արևմտյան Հայաստանը, ուր հայությունն գրեթե չէր մնացել: Սովետական Հայաստան էին ապաստանել թուրքական բարբարոսություններից ճողոպրած արևմտահայերի բեկորները, որոնք տեղավորվել էին զանազան բնակավայրերում: Սրանք մանրանկարային ձևով ներկայացնում էին գրեթե ամբողջ արևմտահայ մշակույթը, որը կարող էր կորչել, եթե չհաստատագրվեր: Եթե խորամուխ ենք լինում 1920-ական և 1930-ական թթ. սովետահայ ազգագրագետների կատարած աշխատանքների մեջ, ապա տեսնում ենք, որ այդ տարիներին նրանց հետաքրքրությունները կենտրոնացած են եղել նշված խնդիրների հետազոտությունը ամբողջացնելու վրա: Մի նոր եռանդով հավաքչական աշխատանքների են լծվում արդեն համբավավոր, բազմավաստակ Ե. Լալայանը, Ս. Լիսիցյանը, Խ. Սամուելյանը և հետզհետե նրանց շուրջը համախմբված որոշ երիտասարդներ:

Երվանդ Լալայանի 1920-1930-ական թթ. գործունեությունը: Խորհրդային շրջանում ազգագրական գիտության արդեն ձևավորված հիմնական սկզբունքների մի մասը պահպանվեց, սակայն զգալի էին նաև արձանագրված փոփոխությունները: Այս հարցում անուրանալի է անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանի վաստակը: Պատմաազգագրական շրջանացման և Ե. Լալայանի մշակած սկզբունքով հետազոտությունները[4] շարունակվեցին նաև

[4] Տե՛ս ***Լալայան Ե.,*** Ջավախք // «Ազգագրական հանդես» (այսուհետ՝ ԱՀ), Շուշի, 1896, գ. 1, էջ 117-378, նույնի՝ Վարանդա // ԱՀ, Թիֆլիս, 1997, գ. 2, էջ 5-255, նույնի՝ Սիսիան // ԱՀ, Թիֆլիս, 1898, գ. 3, էջ 105-272, նույնի՝ Զանգեզուր // ԱՀ, Թիֆլիս, 1898, գ. 4, էջ 7-117, նույնի՝ Գանձակ // ԱՀ, Թիֆլիս, 1899, գ. 5, էջ 213-260, նույնի՝ Բորչալու // ԱՀ, Թիֆլիս, 1902, գ. 9, էջ 197-262, նույնի՝ Գողթն, ԱՀ, Թիֆլիս, 1905, գ. 12, էջ 109-174, նույնի՝ Վայոց-ձոր, ԱՀ, Թիֆլիս, 1906, գ. 14, էջ 133-155, նույնի՝ Նոր-Բայազետ // ԱՀ, Թիֆլիս, 1907, գ. 16, էջ 8-65, նույնի՝ Վասպուրական // ԱՀ, Թիֆլիս, 1910, գ. 20, էջ 116-212, ***Лалаян Е.***, Ванский вилайет (Васпуракан). //СМОМПК, 1915. Вып. XLIV. Отд. Второй, էջ 1-84, նույնի՝ Մուշ-Տարոն // ԱՀ, Թիֆլիս, 1917, գ. 26, էջ 155-175: Տե՛ս նաև ***Լալայան Ե.,*** Երկեր 5 հատորով, հ. 1, Երևան, 1983, հ. 2, Երևան, 1988, հ. 3, Երևան, 2004:

խորհրդային շրջանում: XIX դարի վերջին քառորդից արմատավորված պատմահամեմատական մեթոդի կիրառությունը զարգացման հեռանկարներ բացեց հայագիտության բոլոր բնագավառների, այդ թվում, հայ ազգագրական գիտության առաջընթացի համար:

1920-ական թթ. Ե. Լալայանը ազգագրորեն, տեղագրորեն և հնագիտորեն հետազոտեց Կոտայքի շրջանը, մշակեց անցյալում իր կուտակած հարուստ ազգագրական նյութը: Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի միջոցներով նախ 1926 թ., ապա՝ 1928 թ. Ե. Լալայանը գործուղվեց Կոտայքի շրջան: 1926 թ. ամռանը 40 օր մնալով՝ գիտարշավը հայտնաբերեց և գրի առավ շուրջ 400 հին ու նոր ժողովրդական քառյակներ, հինգ տասնյակ հեքիաթներ, զրույցներ ու առակներ[5]: Կոտայքում կատարված դիտարկումների մի մասը հրատարակվեց ՀԽՍՀ գիտության և արվեստի (ՀԳԱԻ) տեղեկագրում[6]: Այստեղ նա իր կնոջ՝ Հայկանուշ Հարությունյանի և բանահավաք Շահեն Կուժիկյանի օգնությամբ գրի առավ սոցիալական հարաբերությունների, կրոնական պատկերացումների վերաբերյալ մեծ քանակությամբ ազգագրական և հատկապես բանահյուսական նյութեր:

Ե. Լալայանը ստանձնել էր ոչ միայն նորաստեղծ թանգարանի, հատկապես ազգագրության բաժնի հոգսերը, այլև Երևանի և Արարատյան հովտի ազգագրության ուսումնասիրությունը: Նրա ծրագրերի մեջ էր մտնում նաև Երևանի գավառագիտական թանգարանի կազմակերպումը: Նա շարունակում է պեղումները Էլառում: Ե. Լալայանի՝ այդ տարիների հնագիտական ու ազգագրական ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվեցին «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից»[7], «Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ»[8], «Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում»[9] հոդվածներում, «Դամբարանների պեղումները խորհրդային Հայաս-

[5] Տե՛ս ***Լալայան Ե.,*** Կոտայք (հաշվետվություն) // ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի (այսուհետ՝ ՀԳԱԻ) «Տեղեկագիր», 1927, № 2, էջ 220-225:

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Տե՛ս նույն տեղում, № 1, Երևան, 1926:

[8] Տե՛ս նույն տեղում, 1930-31, № 4-5:

[9] Տե՛ս նույն տեղում, 1928, № 3:

տանում»[10] (Եր., 1931) մենագրությունում: Իր հնագիտական աշխատանքները ամփոփող այս գրքում Լալայանը նկարագրել և արժևորել է իր պեղած բրոնզեդարյան փոխադրամիջոց սայլը, որ գտնվել էր Սևանա լճի ավազանում: Փաստորեն՝ սա փոխադրամիջոցների վերաբերյալ թերևս առաջին հաղորդումն էր: Դրա կարևորությունը նկատի ունենալով է, որ այն պահվում է Հայաստանի պատմության թանգարանում: «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետով» հոդվածում հեղինակը համառոտակի նկարագրում է Նիժի և Վարդաշենի տեղագրությունը, բուսական և կենդանական աշխարհը, ուտիների ծագման մասին եղած տեսակետները: Սոցիալական երևույթներին անդրադառնալիս ուշագրավ տվյալներ է բերում ուտիների տոհմական հնավանդ սովորությունների, կենցաղի մասին: «Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում» հետազոտության մեջ Ե. Լալայանը անդրադառնում է հուղարկավորության ձևերին և դրանց առնչվող սովորություններին:

«Տղաբերքի սովորությունների զարգացումը Հայոց մեջ» հոդվածում գիտնականը, օգտագործելով իր երկար տարիների ընթացքում հավաքած դաշտային ազգագրական նյութերը, ինչպես նաև համեմատական ազգագրության հարուստ տվյալները, հանգամանորեն բացահայտում է տղաբերքի սովորությունների էվոլյուցիան՝ սկսած հնագույն շրջանից մինչև XX դարի սկիզբը: Հավաստի վկայություններ կան[11], որ Ե. Լալալայանը գրել է ծիսական այս սովորությունների վերաբերյալ մի քանի հոդվածներ ևս, որոնք, սակայն, լույս տեսնելու բախտին չեն արժանացել և նրա մահից հետո անհետացել են: Նույն ճակատագրին է արժանացել նաև նրա ծավալուն մենագրությունը՝ «Տնայնագործական արհեստները Հայաստանում» աշխատությունը: Ծեսերին վերաբերող ազգագրական նյութերը նա առավել հմտորեն, քան ժամանակի հայ հնագետները, օգտագործում է իր պեղումներից հայտնաբերված համապատասխան նյութերը կենդանացնելու, դրանք մեկնաբանելու համար[12]:

---

[10] ***Լալայան Ե.,*** Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931:

[11] Տե՛ս ***Лисицян С.Д.,*** Армянская этнография за 15 лет, էջ 270-274:

[12] Տե՛ս Археологические раскопки в Новобаязетском уезде ССР Армении // «Русский археологический журнал» 1929, т. 17, выпуск 3-4: Տե՛ս նաև նույնի՝ Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում աշխատությունը:

Անգնահատելի են գիտնականի հետազոտական աշխատանքները հայ ժողովրդական մշակույթի՝ հնագիտության և բանահյուսության ոլորտներում ևս, որոնք սույն հոդվածի խնդիրներից դուրս են, թեև Ե. Լալայանը բանահյուսությունը դիտում էր որպես ազգագրության մի անբաժանելի օղակ, ուստի պատահական չէ, որ ազգագրական հետազոտությունների մեջ մեծ տեղ էր հատկացրել նաև բանահյուսական նյութերին: Ըստ նրա՝ բանահյուսական նյութերը լրացնում ու լուսաբանում են քննարկվող այս կամ այն պատմաազգագրական շրջանի ընտանեկան-հասարակական բարքերն ու հավատալիքները: Նույն կերպ հնագիտությունը ոչ այլ ինչ է, քան նախապատմական ազգագրություն, որն իր բոլոր խնդիրների սկիզբը որոնում է հնագիտության մեջ[13]:

Ե. Լալայանի թանգարանաստեղծ գործունեությունը: 1920-1940-ական թթ. ազգագրական գործն ամբողջությամբ կենտրոնացվեց Երևանում ստեղծված Հայաստանի պատմության պետական թանգարանում: Խորհրդային կարգեր հաստատվելուց քիչ անց Հայաստանի լուսժողկոմատը կարևորեց կենտրոնական թանգարան հիմնելու հարցը*: Այցելուների համար բացվել է 1921 թ. օգոստոսի 20-ին Գեղարվեստական թանգարան անվանմամբ: Առաջին վարիչը Վ. Ախիկյանն էր, իսկ երկու ամիս անց՝ Մարտիրոս Սարյանը: Թանգարանի առաջին ցուցանմուշները Հայաստանի կառավարության գնած գեղարվեստական մի քանի տասնյակ կտավներն էին: Նույն թվականի ձմռանը Ե. Լալայանը Թիֆլիսից Երևան տեղափոխեց Կովկասի հայոց ազգագրական ընկերության՝ Ե. Լալայանի ջանքերով հիմնված թանգարանն ու մասնագիտական գրադարանը՝ 20 հազար գրքով: Լուսժողկոմատի հանձնարարությամբ Ե. Լալայանի անմիջական ղեկավարությամբ թանգարանում կազմակերպվեցին հնագիտական և ազգագրական բաժինները և նա էլ դարձավ դրանց առաջին վարիչը: Տասնյակ տարիների ըն-

[13] Տե՛ս ***Մելիք-Փաշայան Կ. Վ., Նազարյան Ա. Մ.,*** Երվանդ Լալայանի կյանքն ու գիտական գործունեությունը // Երվանդ Լալայան, Երկեր հինգ հատորով, հ. 1, էջ 18, 28-29:

* Հայաստանի պատմության թանգարանը հիմնադրվել է Հայաստանի առաջին հանրապետության պառլամենտի ընդունած օրենքով (№ 439, 09.09.1919 թ.) և կոչվել է Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան:

թացքում Ե. Լալայանի և «Հայոց ազգագրական ընկերության» երազանքը ազգային թանգարան ունենալու մասին վերջապես իրականանում է: 1922 թ. Մոսկվայից Երևան տեղափոխվեցին նաև Լազարյան ճեմարանի՝ պատերազմի տարիներին այնտեղ պահված թանգարանային արժեքները, այդ նույն թվականին՝ Ե. Շահազիզի ջանքերով Նոր Նախիջևանի հայկական համայնքի հնությունների թանգարանային հավաքածուները: Այս ամենը կենտրոնանալով Գեղարվեստի թանգարանում՝ փոխեց նրա բովանդակությունը, ուստի նույն թվականի վերջերին թանգարանը վերանվանվեց Պետական կենտրոնական թանգարան: Թանգարանը այնուհետև հարստացավ այլ տեղերից ձեռք բերված մի շարք արժեքներով, այդ թվում՝ նաև պատմագրական արխիվային նյութերով: Կենտրոնական թանգարանում ձևավորվեցին հնագիտական, ազգագրական, գեղարվեստական և պատմագրական բաժինները՝ հանձնվելով ՀՍԽՀ լուսժողկոմատի իրավասությանը և ղեկավարվելով հատուկ խորհրդի կողմից[14]: 1922 թ. վերջերին Մ. Սարյանի զբաղվածության պատճառով Ե. Լալայանը ժամանակավորապես դարձավ թանգարանի տնօրենը: Նա 1926 թ. այստեղ տեղափոխեց «Անվո հնադարանի» բեկորները, որը Առաջին աշխարհամարտի ծանր օրերին մեծ դժվարությամբ հասցվել էր Սանահին: 1929 թ. թանգարան տեղափոխվեց XIX դարի վերջերին Մ. Խրիմյանի կազմած Էջմիածնի վանքի Ազգագրական թանգարանը: Թանգարանի հավաքածուները (15289 առարկա) համալրվեցին Հայաստանի և Անդրկովկասի հայաբնակ շրջաններից գիտարշավների միջոցով պարբերաբար հավաքված իրերով և Երևանի զանազան գերատեսչությունների ունեցած նյութերով: Հավաքված հնագիտական և ճարտարապետական նոր նյութերը հնարավորություն տվեցին ստեղծելու նաև ճարտարապետական բաժին (1930 թ.), որի առաջին վարիչը դարձավ Թ. Թորամանյանը: Սրանով բոլորվեց Պետական կենտրոնական թանգարանի կազմակերպման առաջին շրջանը: 1931 թ. այն վերանվանվեց Կուլտուր-պատմական թանգարան:

1935 թ. ՀԿԿ կենտկոմի հրամանով մայր թանգարանի հավա-

[14] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Հայկական ՍՍՌ պետական պատմական թանգարան // «Էջմիածին», 1947, № 7-8: Թանգարանի վերաբերյալ տե՛ս նաև՝ ***Вардумян Д.,*** Колхозный музей в Армении // СЭ, Москва, 1950, № 2:

քածուների հիման վրա ստեղծվեցին ինքնուրույն թանգարաններ. 1. գեղարվեստական բաժնի (ղեկավար՝ Դրամբյան) հիման վրա կազմակերպվեց Կերպարվեստի թանգարանը (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահը), 2. գրական բաժնի հիման վրա ձևավորվեց Գրական թանգարանը (այժմ՝ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան), 3. հնագիտության, ազգագրության և ճարտարապետության բաժինների հիման վրա էլ մայր թանգարանը 1935 թ. վերանվանվեց Պետական պատմական թանգարան: 1939 թ. Պետական պատմական թանգարանը Լուսժողկոմատի համակարգից անցավ ՍՍՌՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի համակարգ՝ դառնալով նրա գիտահետազոտական հաստատություններից մեկը: Այնուհետև թանգարանը նոր անվանափոխումների ենթարկվեց. 1962 թ.՝ Հայաստանի պատմության պետական թանգարան, 2003 թ.՝ Հայաստանի պատմության թանգարան: Թանգարանի ազգագրության բաժնի վարիչը ի սկզբանե մինչև 1928 թ. Ե. Լալայանն էր, իսկ 1928-1946 թթ.՝ Ս. Լիսիցյանը:

Թանգարանն էր հիմնականում կազմակերպում գործուղումները և գիտարշավները 1930-ական թվականներին: Գիտական արշավների հիմնական նպատակը թանգարանային արժեքներ, առանձնապես երկրագործական գործիքներ, արտադրամիջոցների տարատեսակներ ձեռք բերելն էր: Աշխատանքները իրականանում էին Ստեփան Լիսիցյանի ղեկավարությամբ: Այդ տարիներից այստեղ պահվում են զգեստներ, զարդեր, ասեղնագործ բանվածքներ, գորգեր, արծաթյա և ոսկյա բազմապիսի պարագաներ, արհեստի ու երկրագործության գործիքներ, տնային պարագաներ, պաշտամունքային առարկաներ, հայկական դրամների հարուստ հավաքածու, նեգատիվների ու լուսանկարների ֆոնդեր, գիտական նյութերի արխիվ և այլն: Թանգարանում պահպանվում է 400.000 առարկայից բաղկացած ազգային հավաքածու: Թանգարանի հավաքածուները համալրվում են հիմնականում Հայաստանի տարածքի հնավայրերից հայտնաբերված գտածոներով, գնումներով, նվիրատվություններով: Թանգարանը ներկայացնում էր Հայաստանի մշակույթի և պատմության ամբողջական պատկերը նախապատմական ժամանակներից մինչև մեր օրերը: Ազգագրական բաժինը կրում էր իր լավագույն ղեկավարներից մեկի՝ Ս. Լիսիցյանի անունը: Պատմական թանգարանն էլ հենց այս շրջափուլում հանդիսա-

ցավ այն օջախը, որտեղ ծավալվեցին գիտահետազոտական աշխատանքները նաև ազգագրության ոլորտում:

Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի հիմնումը: Խորհրդային Հայաստանի գիտական առաջին հիմնարկը հիմնվել է 1921 թ. փետրվարին Էջմիածնում «Կուլտուր-պատմական ինստիտուտ» անվամբ գիտականորեն Հայաստանի ժողովրդական մշակույթի ուսումնասիրության նպատակով[15]: 1922 թ. մայիսից ինստիտուտը վերանվանվեց Հայաստանի գիտական ինստիտուտ՝ հետևյալ բաժանմունքներով՝ ա) հնագիտական, ազգագրական, գեղարվեստական, պատմության, բ) լեզվագիտական և ցեղաբանական, գ)բանասիրական, դ) պատմական-հասարակագիտական: 1925 թ. հունվարին այն ակադեմիական կառուցվածքով վերածվեց բարձրագույն գիտահետազոտական հիմնարկի՝ ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի (նախագահ՝ Մ. Աբեղյան): Ինստիտուտի գիտական տեղեկագրում էր հրատարակվում 1920-1930-ական թթ. ազգագրական, հնագիտական, բանագիտական աշխատությունների զգալի մասը: Ինստիտուտը 1926-1928 թթ. հատուկ գիտական արշավախմբեր էր կազմակերպում: Նրանցից մեկը, ինչպես նշել ենք, գլխավորում էր Ե. Լալայանը: Մյուս գիտարշավը՝ երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանի գլխավորությամբ, Ախտայի (Հրազդան) և Կոտայքի գյուղերում հայտնաբերել ու ձայնագրել է շուրջ հիսուն ժողովրդական երգ[16]: Հաջորդ տարի՝ 1927 թ. ամռանը, նաև 1928 թ. նույն գիտարշավը Թալինի, Ապարանի, Ստեփանավանի, Փամբակի շրջաններում գրի են առել ևս 358 ժողովրդական երգ: Ինստիտուտը գնահատելի աշխատանք է կատարել ավանդական հայ բանահյուսության թանկարժեք նշխարների հայտնաբերման և

[15] Այն ղեկավարելու համար հիմնված գիտական կոլեգիայում ընդգրկվել են Լևոն Սարգսյանը (նախագահ), Սենեքերիմ Տեր-Հակոբյանը (Մատենադարանի վարիչ), Լևոն Լիսիցյանը (թանգարանի վարիչ): Շատ չանցած, նրանց փոխարինել են ճանաչված մտավորականներ Կ. Մելիք-Օհանջանյանը, Գ. եպիսկ. Հովսեփյանը, Խ. Սամուելյանը: Նրանում ներգրավել են նաև Լեոն (Առաքել Բաբախանյան), Թ. Թորամանյանը, Գ. Զուբարյանը և այլք:

[16] Տե՛ս նույն տեղում, 1927, № 2, էջ 227 (Ս. Մելիքյանի զեկուցում-հաշվետվությունը):

գրառման, մշակման ու հրատարակման ուղղությամբ[17]:

1931 թ. Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի հիմքի վրա կազմակերպվեց Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտը, որն իր առաջնահերթ խնդիրներից էր համարում կորստյան ենթակա ազգագրական և բանահյուսական նյութերի հայտնաբերումը, գրառումը և ուսումնասիրությունը: Այնուհետև այս աշխատանքները 1934-1939 թթ. շարունակեց Կուլտուրայի պատմության ինստիտուտին փոխարինած Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտը:

Ազգագրության բնագավառում 1920-ական թթ. կեսերին կարևոր դեր խաղաց նաև ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կովկասյան պատմահնագիտական ինստիտուտը, որը գտնվում էր Թիֆլիսում: Այստեղ աշխատում էին հայ ազգագրությամբ ու հնագիտությամբ զբաղվող մի շարք գիտնականներ, այդ թվում՝ Ս. Լիսիցյանը, Լևոն Մելիքսեթ-Բեկը:

Վերոհիշյալ հաստատությունները անհատական ուղևորությունների, գործուղումների ու խմբարշավների միջոցով հսկայական գործ կատարեցին թանգարանային արժեքների ձեռքբերման և ազգագրական նյութեր գրի առնելու տեսանկյունից:

Հայագիտության հետագա զարգացման տեսակետից կարևոր նվաճումներից էին Պատմության և գրականության ինստիտուտի (1935 թ.), նույն տարում՝ ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հիմնումը, որոնց վրա 1943 թ. հիմնվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան:

Ազգագրական գիտության զարգացման, մասնագետ կադրերի պատրաստման տեսանկյունից նշանակալից դեր է խաղացել Երևանի պետական համալսարանը: ԵՊՀ-ն, իր գոյության տարիներին զարգանալով ու հզորանալով, դարձել է հանրապետության ուսումնագիտական ու կրթամշակութային խոշոր կենտրոն, ակնառու նվաճումներ գրանցել Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ պատմաբան-ազգագրագետ բարձրորակ կադրեր պատրաստելու գործում: Դեռևս 1930-1940-ական թթ. որոշ ընդմիջումներով «Ազգագրություն» առարկան դա-

[17] Տե՛ս ***Ղանալանյան Ա. Տ.,*** Սովետահայ բանագիտությունը հիսուն տարում // ՊԲՀ, 1970, № 3, էջ 13-32:

սավանդում էր պրոֆ. Ս. Լիսիցյանը: Նրա մահից (1947) հետո երկար ժամանակ այդ առարկան ուսումնական ծրագրերից դուրս էր մնացել և վերականգնվեց 1964-1965 ուս.տարում:

1920-1930-ական թթ. և 1940-ական թթ. սկզբներին գլխավոր ուշադրությունը առաջին հերթին դարձվել է անցյալում կուտակված վիթխարի նյութի ուսումնասիրման և նոր տեսանկյունից լուսաբանելու գործունեության վրա: Երկար տարիների համառ աշխատանքը այդ բնագավառում տվեց իր պտուղները: Ե. Լալայանը, Խ. Սամուելյանը, Ս. Լիսիցյանը հայտնի էին նախախորհրդային շրջանից հայագիտությանը մատուցած ծառայություններով: Հարուստ գիտելիքների հիմքով նրանք կարողացան հարմարվել ժամանակի պահանջներին՝ վերախմաստավորված ներկայացնելով իրենց հետազոտությունների արդյունքները, նորովի ծավալելով նաև դաշտային հավաքչական, թանգարանային-ցուցադրական աշխատանքները:

Խաչիկ Սամուելյան (1873-1940)[18]**:** Խ. Սամուելյանի գիտական աշխատությունները իրավագիտության, պատմության և հատկապես ազգագրության ասպարեզներում դեռևս նախախորհրդային

[18] Ծնվել է 1873 թ. Ղրիմի Կերչ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Թեոդոսիայի գիմնազիայում: 1895-1900 թթ. սովորել և ավարտել է Պետերբուրգի իրավաբանական ֆակուլտետը, 1901-1903 թթ. ուսանել է Ենայի (Գերմանիա) համալսարանում, ապա բնակություն է հաստատել Թիֆլիսում և 1907 թ. զբաղվել է լրագրությամբ: 1904-1907 թթ. եղել է «Кавказское сельское хозяйство» ամսագրի պատասխանատու քարտուղարը: 1907-1908 թթ. զբաղեցրել է Գևորգյան ճեմարանում դասախոսի, 1909-1921 թթ.՝ Նոր Նախիջևանում թեմական, Թիֆլիսի առևտրական դպրոցներում՝ ուսուցչի, Շուշիի, Բաքվի, Ալեքսանդրապոլի դպրոցներում՝ տեսուչի պաշտոններ: Բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել «Մշակ», «Տարազ», «Արշալույս», «Սուրհանդակ», իսկ խորհրդային շրջանում՝ «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանդարդ», «Հայաստանի աշխատավորուհի», «Բանվոր» և այլ պարբերականներում: 1921-1922 թթ. ընտրվել է Հայաստանի գիտական ինստիտուտի կոլեգիայի անդամ, ապա վարել իրավաբանական տարբեր պաշտոններ, 1924-1934 թթ. նշանակվել է պետական կենտրոնական արխիվի վարիչ, որից հետո զբաղվել է մանկավարժական գործունեությամբ ԵՊՀ-ում, Նյութական կուլտուրայի և Մանկավարժական ինստիտուտներում: Վախճանվել է 1940 թ. (տե՛ս Կ. Մելիք-Փաշայան, Խ. Սամուելյան (ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1974, № 1, էջ 86-96):

տարիներին ակնառու էին[19]: Գիտնականը ակտիվ աշխատակցել է «Ազգագրական հանդեսին»՝ տպագրելով մի շարք ուսումնասիրություններ, եղել է նաև «Հայոց ազգագրական ընկերության» և խմբագրական մասնաժողովի անդամ: Կրթությամբ լինելով իրավաբան և որպես այդպիսին մուտք գործելով ազգագրության բնագավառը՝ նա բեղմնավոր աշխատանք է կատարել հայ ժողովրդի սովորութային իրավունքի բազմակողմանի հետազոտության և դրան առնչվող պետական իրավունքի ակունքների հարցերը հետազոտելու բնագավառում: Այդ ուղղությամբ նրա կատարած երկար տարիների աշխատանքի արդյունքն է հայ իրավունքի հնագույն պատմությանը նվիրված նրա աշխատությունը, որը գրված է գլխավորապես ազգագրական նյութերի հիման վրա՝ քաղված հայ մատենագրական և ազգագրական աղբյուրներից[20]: Սակայն Խ. Սամուելյանի, ինչպես նաև հայ ժողովրդական մշակույթի հետազոտության գլուխգործոցը հանդիսացավ նրա եռահատոր աշխատությունը[21]:

Հին հայկական սովորութային իրավունքի, գերդաստանի, տոհմական կառույցների, ամուսնության ձևերի, օժիտի, գլխագնի, քա-

---

[19] Առաջին գիտական հոդվածներն են՝ «Очерки по обычному семейному праву», «Кавказский вестник», 1902, «Արյան վրեժ և փրկանք» // ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 269-303, «Հայոց հին իրավունքը և նրա հետազոտության մեթոդը» // ԱՀ, գ. XI, Թիֆլիս, 1904, էջ 532, «Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն» // ԱՀ, գ. XII, Թիֆլիս, 1905, էջ 40-83, «Հայ ընտանեկան պաշտամունքը» // ԱՀ, գ. XIII, Թիֆլիս, 1906, էջ 112-130, ԱՀ, գ. XIV, № 2, Թիֆլիս, 1906, էջ 156-174, «Հայոց ժառանգական իրավունքը» // ԱՀ, գ. XV, Թիֆլիս, 1907, էջ 68-90, «Մայրական իրավունք» // ԱՀ, գ. XVII, № 1, Թիֆլիս, 1908, էջ 126-141, ԱՀ, գ. XVIII, № 2, Թիֆլիս, 1908, էջ 59-90, գ. XIX, Թիֆլիս, 1910, էջ 33-58, «Հայ սովորութական իրավունքը» // Վիեննա, 1911, «Սիմբոլը հայ սովորույթներում» // ԱՀ., գ. XXII, № 1, Թիֆլիս, 1912, էջ 132-245, գ. XXIII, № 2, Թիֆլիս, 1912, «Մ. Գոշի «Դատաստանագիրքը» ու Հայոց քաղաքացիական իրավունքը» (Վիեննա, 1911), «Տոտեմիզմը հայոց մեջ» // «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գ. Ա և Բ, Վաղարշապատ, 1921-1922, էջ 15-34 և այլն):

[20] Տե՛ս ***Սամուելյան Խ.***. Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, «Արմֆան» հրատ., 1939:

[21] Տե՛ս ***Սամուելյան Խ.***, Հին Հայաստանի կուլտուրան, հ I, 1931, հ. II, 1941, հ. III, 1941, Երևան, «Արմֆան» հրատ.:

վորի, ժողովրդական հավատալիքների ուսումնասիրությունը կենտրոնական տեղ էր գրավում Խ. Սամուելյանի աշխատություններում: Նա տեսաբան ազգագրագետ է, լավատեղյակ եվրոպական և ռուսական առաջավոր գիտությանը: Տեսական բնույթի են «Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն», «Հայ ընտանեկան պաշտամունքը» ազգագրական ուսումնասիրությունները, որոնցում հարուստ փաստական նյութերով հետազոտվում են առևանգմամբ և գնմամբ ամուսնությունը, նրա զարգացման շրջանները, ցույց է տրված, որ առևանգմամբ ամուսնությունը աստիճանաբար վերանում է, իսկ գլխագինը տեղի է տալիս օժիտին: Ըստ Խ. Սամուելյանի՝ ընտանեկան պաշտամունքը խստորեն առնչվում է ոգիների պաշտամունքին, թաղման ծեսերին, ննջեցյալների պաշտամունքին: Հանգամանորեն վերլուծվում են օջախի պաշտամունքին առնչվող հարցերը: Ուշագրավ ուսումնասիրություններից են նաև «Տոտեմիզմը հայոց մեջ», «Քարի պաշտամունքը հայոց մեջ» հոդվածները, որոնցում ներկայացվում է կենդանիների, թռչունների, սողունների, եզան, օձի, անգղի, այծի, գայլի, խոյի պաշտամունքը: Քարապաշտությունը, ըստ գիտնականի, ոգեպաշտություն է, աշխարհայացք և ոչ թե կրոն: Հնագիտական ազգագրական, մատենագրական հարուստ նյութերով ապացուցում է, որ քարապաշտությունը հայերի մեջ գոյություն է ունեցել վաղնջական ժամանակներից և հարատևել է մինչև XIX դարի վերջը: Այս հարցերի զգալի մասը արծածված է «Հին Հայաստանի կուլտուրան» գրքի առաջին հատորում[22]: Գիտնականը, ըստ էության, մշակել էր հայ հոգևոր մշակույթի զարգացման հիմնական ուրվագծերը: Այդ աշխատության մեջ Խ. Սամուելյանը դժվարագույն խնդիր է դնում իր առաջ՝ մեծ մասամբ վերապրուկային նյութերի հիման վրա վերականգնելու նախնադարյան տոհմային կարգերի պատկերը Հայաստանում:

«Հին Հայաստանի կուլտուրան» հետազոտության երկրորդ հատորում անդրադարձել է տնտեսական արտադրական և նյութական մշակույթի տարբեր կողմերին: Այսպես, օրինակ, փոխադրության հնագույն միջոցներից սայլերի, կառքերի և վերջիններիս մոդելների ու նկարների և Ախթալայում գտնված բրոնզե գոտու

[22] Տե՛ս ***Սամուելյան Խ.,*** Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, էջ 276-330:

և Վանում պեղված ուրարտական կնիքի վրա եղած կառքի քան-դակապատկերների ուսումնասիրությունը հեղինակին հանգեցրել է այն հետևության, որ Հայաստանի անիվավոր փոխադրամիջոց-ներն իրենց ծագմամբ ու զարգացմամբ անմիջական առնչություն ունեն Առաջավոր Ասիայի հնագույն երկրների՝ ասուրաբաբելա-կան աշխարհի, փոքրասիական ժողովուրդների և այլոց փոխադ-րանքների հետ[23]:

Խորհրդային կարգերի օրոք հայ ազգագրության նշանավոր տեսաբանը, ի մի բերելով նախահեղափոխական շրջանում գրած աշխատությունները, քննության առարկա դարձրեց հայկական ընտանեկան-գերդաստանական հարաբերությունները, գյուղական համայնքը, ծիսական կարգերը, ամուսնության ձևերը, հայոց պաշ-տամունքը և այլն: Առանձին հետաքրքրությամբ Խ. Սամուելյանը հետազոտեց հայկական տոհմային կարգերը՝ ազգակցական հարա-բերությունների հիման վրա, ազգապաշտպանական երևույթները, վրիժառության պարտականությունը, տոհմապետ-ազգապետների ծերակույտերի խաղացած դերը ազգակցական հարաբերություններ-ում[24]: Խ. Սամուելյանի ուսումնասիրություններում առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայկական գերդաստանը: Խ. Սամուելյանը նահապետական գերդաստանի որոշ հարցերի ու-սումնասիրությամբ զբաղվել էր դեռևս հեղափոխությունից առաջ: Սակայն 1920-1930-ական թթ. նա շարունակել է գիտահե-տազոտական աշխատանքները: Նահապետական գերդաստանը, «որը կազմում է գիտնականի եռահատոր աշխատության 3-րդ հատո-րի մի մասը» (էջ 165-204), գիտական պատշաճ ուսումնասիրու-թյուն է, որում քննության են առնված ընտանեկան համայնքը, դրա տնտեսական հիմքերը, գերդաստանի անդամների՝ իբրև մի-ջանկյալ ընտանետիպի հարաբերությունները, վերջինիս հարա-տևման, նրա հասարակական արժեքի, կոլեկտիվիստական բնույթի, այդ ընտանեձևի քայքայման և հարակից այլ հարցեր:

Խ. Սամուելյանի ուսումնասիրությունների առանձին հիմնա-

[23] Տե՛ս ***Սամուելյան Խ.,*** Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, էջ 74-82:
[24] Տե՛ս նույն տեղում, էջ 132-165:

հարցերից է նաև գյուղական համայնքի հետազոտությունը[25]:

Խ. Սամուելյանը քննել է նաև ամուսնության ձևերն ու դրան առնչվող ծիսական համակարգերը: Ջեռքի տակ եղած գրավոր աղբյուրների հիման վրա հեղինակը հետազոտել է ավանդական հարսանեկան տոնահանդեսները, հարսանիքը կազմակերպելու համայնքային սովորությունները, հարսի բարոյական կերպարին առնչվող խնդիրները և այլն[26]:

Խ. Սամուելյանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդի տեսաբան էր: Նրա «Հին Հայաստանի կուլտուրան» եռահատոր աշխատության մեջ առաջին փորձն է կատարվում՝ ներկայացնելու Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի զարգացման փուլերը՝ սկսած նախնադարյան համայնական կարգերից մինչև XX դարը: Ու թեև աշխատության մեջ նյութական և հոգևոր ու սոցիալական մշակույթի հարցերի վերաբերյալ հեղինակի որոշ մեկնություններ, ձևակերպումներ և եզրահանգումներ հնացել են, սակայն մեծ է նրա՝ հայ մշակույթի վերաբերյալ կատարած հետազոտությունների արժեքը:

Մեծ է Խ. Սամուելյանի դերը նաև հայ իրավագիտության պատմության ուսումնասիրության բնագավառում: Հայ իրականության մեջ նա առաջինն էր, որ քննարկման նյութ դարձրեց սովորութային իրավունքի նորմերը և փորձեց տալ իրավունքի սահմանը, դրա տեղն ու դերը:

Խ. Սամուելյանը նաև բանահյուսական ուսումնասիրությունների հեղինակ է: Նրա բանահյուսական ուսումնասիրություններից է «Աշխատանքը հայ ժողովրդական երգերում» աշխատությունը:

Գիտնականը նաև արխիվային գործի հմուտ կազմակերպիչ էր: 1924-1934 թթ. եղել է պետական կենտրոնական արխիվի վարիչը: Այդ տարիներին ազգագրագետները եռանդուն մասնակցություն են ունենում նաև լայնորեն ծավալվող գիտաթեիստական քարոզչության գործին: Հատկապես Խ. Սամուելյանը «Նիմանդ» կեղծանվամբ հրատարակեց երեք տասնյակից ավելի հակակրոնական բնույթի, կնոջ անհավասարության և նահապետական կյան-

[25] Տե՛ս ***Սամուելյան Խ.,*** Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, էջ 204-221:

[26] Տե՛ս ***Սամուելյան Խ.,*** Հին Հայաստանի կուլտուրան, հ. III, էջ 82-132:

քից եկող մյուս վնասակար երևույթների դեմ հոդվածներ և բրոշ-յուրներ[27]:

Ստեփան Լիսիցյան (1865-1947)[28]: Մեծ է եղել Ստեփան Լիսիցյանի ներդրումը ազգագրական գիտության կազմակերպման և զարգացման գործում: Նա իրավամբ համարվում է խորհրդահայ ազգագրության հիմնադիրը[29]: Գիտնականը ազգագրությամբ սկսել է զբաղվել 1920-ական թվականներից՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու առաջին իսկ տարիներից: Նրա համար օրախնդիր էր մոռացությունից փրկել ազգագրական նյութերը և կենցաղային իրերը, գրանցել նաև բանահյուսական նյութերն ու բարբառը, որի համար էլ ձեռնամուխ է լինում ազգագրական գիտարշավներ կազմակերպելուն ու հետազոտական աշխատանքներ կատարելուն: 1924 թ. Հայաստանի կառավարության հրավերով

---

[27] Տե՛ս, օրինակ, ***Սամուելյան Խ.,*** Հայ ժողովրդական տոները // «Վերելք» ամսագիր, Երևան, 1924, թիվ 2-3, նույնի՝ Աստվածածնի տոնը (հակակրոնական ակնարկ), Երևան, 1928, նույնի՝ Ո՞վ էր Քրիստոսը, Երևան, 1930, նույնի՝ Քրիստոսի ծնունդն ու մկրտությունը, Երևան, 1930, ***նույնի՝*** Եկեղեցական տոներ, Երևան, 1930 և այլն:

[28] Ստեփան Լիսիցյանը ծնվել է 1865 թ. Թիֆլիսում, զինվորական բժիշկ, գեներալ Դանիել Լիսիցյանի ընտանիքում: Բարձրագույն կրթություն է ստացել Եվրոպայում: 1889 թ. ավարտել է Վարշավայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և նույն թվականին մանկավարժական աշխատանքի է անցել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, տիրապետել է 12 լեզվի: 1894-1915 թթ. դասավանդել է Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցում: Լիսիցյանի մանկավարժական-լուսավորական գործունեության կարևոր ներդրումներից է «Տարազ», «Աղբյուր» պատկերազարդ հանդեսների և «Հասկեր» մանկական հանդեսի հրատարակությանը մասնակցությունը: Նրա թարգմանությամբ ռուսերեն, անգլերեն լույս է տեսել Խ. Լինչի «Հայաստան» երկհատոր աշխատությունը, թարգմանել է նաև Հ. Սենկևիչի «Յո՞ երթաս» վեպը: Ս. Լիսիցյանը Հ. Թումանյանի «Վերնատուն» գրական միավորման եռանդուն մասնակիցներից էր: Գիտամանկավարժական ասպարեզում ձեռքբերումների համար 1941 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1945 թ.՝ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

[29] Տե՛ս ***Մելիք-Փաշայան Կ.***, Սովետահայ ազգագրության անցած ուղին // «Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1968, № 11, էջ 54-67: Ս. Լիսիցյանի գիտական ու հասարակական ժառանգության մասին մանրամասն տե՛ս ***Варданян Л.,*** С. Лисицян и истоки армянской этнографии, Ереван, 2005:

Թիֆլիսից տեղափոխվել է Երևան, և սկսվել է Ս. Լիսիցյանի գործունեության մի նոր բեղմնավոր ժամանակաշրջան:

Հայ ազգաբանական գիտության բնագավառում Ս. Լիսիցյանի ծավալած գործունեությունը ընթացել է երեք հիմնական ուղղություններով՝ ա) ազգագրական նյութերի հավաքչություն, բ) գիտահետազոտական, գ) գիտակազմակերպչական: Գիտնականի ազգաբանական գործունեության ժամանակաշրջանը 1920-1940-ական թթ. կեսերն են: Այն սկսվում է ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի կովկասյան պատմահնագիտական ինստիտուտում աշխատելու տարիներից՝ 1924-1928 թթ.՝ հիմնական և 1928-1936 թթ.՝ արտահաստիքային: Թիֆլիսում այդ աշխատանքները գիտնականը և Լևոն Մելիքսեթ-Բեկը համակարգում էին Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի (ԿՊՀԻ) հետ: ԿՊՀԻ հանձնարարությամբ 1924 թ. ուսումնասիրությունների և ազգագրական նյութեր հավաքելու նպատակով Ս. Լիսիցյանը մեկնել է Լեռնային Ղարաբաղ, Գ. Զուրսինը՝ Զանգեզուր և Լազոն (Հ. Ղազարյան)՝ Լեռնային Քուրդիստան (Լաչին): Ապա նույն հիմնարկի հանձնարարությամբ 1925 թ. Ս. Լիսիցյանը մեկնել է Ախալքալաք, Ախալցխա, Շիրակ, 1927 թ.՝ Մեղրի, Նոր Բայազետ, 1928 թ.՝ Ագուլիս՝ հարուստ դաշտային ազգագրական նյութեր հավաքելով ինչպես տեղաբնակներից, այնպես էլ գաղթական հայերից[30]: Գրառված նյութերում մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ջուլֆա-Օրդուբադ տարածաշրջանում դեռևս գոյատևած «զոկեր» կոչվող էթնիկ խմբի վերաբերյալ տեղեկությունները, որոնք դեռևս հրատարակված չէին[31]: Նյութերը գրի էին առնվում 1926 թ. ազգագրագետի կազմած «Գավառագիտություն» խորագրով, ապա դեռևս ձեռագիր «Ազգագրական հարցարանի» հարցաշարերով: Այդ ասպարեզում նրա մեջ զուգակցվել են անխոնջ հետազոտողը և գիտության հմուտ կազմակերպիչը: Այդուհետ առավել հմտությամբ ուսումնասիրեց գյուղական բնակարանները և շենքերի ամբողջական համալիրները: 1925 թ. հունիսի 21-ին Ս. Լիսիցյանը ԿՊՀԻ գիտնականների ժողովում զեկուցել է հայկական գյուղա-

[30] Տե՛ս ***Лисицян С.,*** Армянская этнография за 15 лет, СЭ, 1936, № 4-5, էջ 270-274:

[31] Տե՛ս նույն տեղում, էջ 271:

կան բնակարանների ուսումնասիրման հարցի վերաբերյալ, որը նվիրված էր գլխատան ուսումնասիրությանը Ղարաբաղում[32]: Ստեփան Լիսիցյանը առաջինն էր, որ հանգամանալի ներկայացրեց Հայաստանի գյուղերի բնակարանի հիմնական տիպը՝ «գլխատունը» և այն մտցրեց գիտական շրջանառության մեջ: Նրա բացահայտումները վերաբերում են հայ գյուղական տան՝ «գլխատան» ճարտարապետական կառուցվածքի և հայոց պաշտամունքային կառույցների ծագումնաբանական ընդհանրություններին, որով հավաստվում է հայ ճարտարապետության տեղաբնիկ բնույթը, որը կասկածի տակ էր առնվել որոշ հետազոտողների կողմից: Տալիս է նաև գլխատան նկարագրությունը, տարածման շրջանները, նրա աղերսը ժամատան, այլ կերպ ասած՝ հայ դասական եկեղեցական ճարտարապետության ակունքների կապը ժողովրդական բնակարանի համալիրի ճարտարապետության հետ և այլն: Հաջորդ զեկուցումն այստեղ Բարձր Հայքի բնակարանների մասին էր[33]:

1926-1927 թթ. նույն տեղեկագրում հրատարակվել են նաև Լիսիցյանի հետազոտած այլ ազգագրական շրջանների վերաբերյալ նյութերը ևս[34]: Մեծ են եղել նրա ջանքերը Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Շատախի, Մոկսի, Սասունի, Ալաշկերտի պատմամշակութային բազում արժեքների հավաքման և գիտական շրջանառության մեջ դնելու ուղղությամբ:

1927 թ. լույս է տեսնել Ս. Լիսիցյանի «Շատախի պատմաազգագրական ուրվագծերը»[35] հոդվածը, որտեղ գիտնականը տվել է

---

[32] Տե՛ս ***Лисицян С.,*** К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам // «Известия кавказского историко-археологического института» (ИКИАИ), том III, Тифлис, 1925, էջ 97-108:

[33] Տե՛ս ***Лисицян С.,*** Крестьянское жилище Высокой Армении // ИКИАИ, т. IV, Тифлис, 1926, էջ 55-70, տե՛ս նաև էջ 136-138:

[34] Տե՛ս ***Лисицян С.,*** Из материалов по изучению жилищ Армении. «Крестьянское жилище Мегринского района» // ИКИАИ, т.V, Тифлис, 1927, էջ 119-133, Из материалов по изучению жилищ Армении. «Нор-Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов Памбакского и Даралагязского» // ИКИАИ, Тифлис, 1927, т. VI, էջ 133-140):

[35] Տե՛ս ***Лисицян С.,*** Историко-этнографические очерки Шатаха: «Мелики» («Сообшества сверстников») // ИКИАИ, т. V, Тифлис, 1927, էջ 71-82:

Շատախի աշխարհագրական դիրքը, վարչական բաժանումը, էմիրների, մելիքների գործունեությունը, առաջին անգամ արծարծել «Եղբայրական միությունների» (հասակակիցների միության) հարցը: Ուշագրավ է նաև գիտնականի «Սրբավայրերը լեռնանցքներում» աշխատանքը[36], որտեղ վերլուծվում ու բացահայտվում են նրանց ակունքները, որոնք առնչվում են հեթանոսական շրջանի լեռների ոգիների, կրակի և ջրի պաշտամունքին:

1928 թ. Ստեփան Լիսիցյանը նշանակվել է Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ և գլխավորել այն շուրջ 20 տարի՝ մինչև իր կյանքի վերջը (1947 թ.):

Ս. Լիսիցյանի անգնահատելի ծառայություններից մեկն այն էր, որ առաջինը սկսեց հավաքել արտադրամիջոցները և նյութական մշակույթի այն տեսակները, որոնք կարտացոլեին հայ ժողովրդի արտադրողական ուժերի զարգացման մակարդակը. ցավոք, դրանք մինչ այդ անուշադրության էին մատնված: Գիտարշավների միջոցով սոցիալիստական շինարարության շնորհիվ գյուղացիների կենցաղում կատարվող փոփոխությունների վերաբերյալ դաշտային ազգագրական նյութեր, ինչպես նաև թանգարանային արժեքներ ժողովելու խնդիրը մեծ եռանդով էր իրականացնում գիտության անխոնջ կազմակերպիչը: Թանգարանային աշխատանքների ծավալման, ֆոնդերի հարստացման, ցուցադրությունների կազմակերպման բնագավառում մեծ է եղել Ստեփան Լիսիցյանի երախտիքը, որին իրավամբ կարելի է համարել ազգագրական թանգարանային գործի հիմնադիրն ու անխոնջ զարգացնողը սովետական Հայաստանում: Թանգարանում նրա ջանքերով կենտրոնացվեցին ազգագրական թե՛ հավաքչական և թե՛ ցուցադրական ու գիտահետազոտական, ինչպես նաև թանգարանագիտական կազմակերպչական աշխատանքները, որոնց ոչ միայն ուղղություն տվողը, այլև հիմնական կատարողն ինքն էր:

Թանգարանային ցուցանմուշներ հավաքելու և ազգագրական հավաքածուները համալրելու համար Ս. Լիսիցյանը 1930-ական թթ. կազմակերպել է ազգագրական նոր գիտարշավներ դեպի Խորհրդային

[36] Տե՛ս ***Лисицян С.,*** «Святыни» у перевалов // СЭ, № 4-5, 1936, էջ 200-212:

Հայաստանի տարբեր շրջաններ, ինչպես նաև հարակից հանրապետությունների հայաբնակ վայրեր: Գիտնականը շատ էր կարևորում և առաջնահերթ ու անհետաձգելի խնդիր էր համարում արագ վերափոխումների պատճառով կորստյան մատնվող ավանդութային մշակույթի տարբեր երևույթներին վերաբերող ազգագրական նյութի գրառումը: Այդ նպատակով գիտարշավներին զուգընթաց նա տեղերում թղթակիցների լայն ցանց է ստեղծել:

1931-1938 թթ. ազգագրական գիտարշավը Ս. Լիսիցյանի ղեկավարությամբ մեկնում է Սիսիան և Գորիս (1931), Ղափան-Մեղրի (1932), Լոռի (1934-1935), Բոգդանովկա, Ախալքալաք և Ախալցըխա (1936), Աշտարակ, Նոր Բայազետ, Մարտունի և Վարդենիս (1938): Այդ տարիների գիտական արշավների հիմնական նպատակը թանգարանային արժեքների, հատկապես երկրագործական գործիքներ ձեռք բերելն էր: 1931 թ. ապրիլին Զանգեզուրի երկրաշարժի հետևանքների հաղթահարման տարում և ապա 1932 թ. Ղափանի ու Մեղրու շրջաններից հայթայթված ազգագրական հավաքածուների հիման վրա թանգարանում հնարավոր է դառնում կազմակերպել ազգագրական ցուցադրություններ, որոնցից հատկապես հիշատակման արժանի է Զանգեզուր-Մեղրի ցուցասրահը, որը գործեց մի քանի տարի:

Ազգագրական գիտարշավների ընթացքում գիտնականը գրի է առել ոչ միայն վիթխարի ազգագրական նյութ, այլև թանգարանի համար հայթայթել է շուրջ 1000 ցուցանմուշ, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում ոսկերչական, զինագործական, կավագործական իրերի ու գործիքների հազվագյուտ համալիրները: Դրանցում հատկապես կարևորվում էր կորստյան մատնվող Արևմտյան Հայաստանի որոշ լեռնային շրջաններին՝ Շատախին, Մոկսին, Սասունին վերաբերող արժեքավոր հավաքածուները: Միաժամանակ ձեռք են բերվում լուսանկարների և գեղանկարների ազգագրական հարուստ հավաքածուներ: Այդուհետև միջոցների սղության պատճառով գործուղումներն ու գիտարշավները դադարում են մինչև 1943 թվականը: Թանգարանի ազգագրական բաժինը հարկադրված զբաղվում է հիմնականում հավաքված նյութերի հետազոտական աշխատանքով: 1936 թ. լույս է տեսնում Լիսիցյանի

«Հայ ազգագրությունը 15 տարիների ընթացքում»[37] հոդվածը, որում հանգամանորեն ներկայացված են այն նվաճումները, որոնց հասել էր խորհրդահայ ազգագրությունը մեկուկես տասնամյակի ընթացքում:

1920-1930-ական թթ. Ս. Լիսիցյանի ուսումնասիրություններ-ի հանրագումարը եղավ «Ակնարկ նախահեղափոխական Հայաս-տանի ազգագրության» աշխատությունը[38], որը հայոց էթնոմշա-կութային ամբողջական պատկերը տալու առաջին փորձն էր: Այս-տեղ ի մի են բերված խորհրդահայ ազգագրության նվաճումները և հնարավորինս ամբողջականորեն ներկայացված է հայոց նյու-թական ու հոգևոր մշակույթի, տնտեսական զբաղմունքների ու սոցիալական կյանքի ընդհանուր պատկերը՝ էթնիկ առանձնահատ-կություններով: Նրանում, ավանդութայինից բացի, ներկայաց-վում են նաև մինչև 1930-ական թթ. կեսերը խորհրդային պայ-մաններում կատարված փոփոխությունները և դրանց զարգացման հետագա միտումները:

Ստեփան Լիսիցյանը գիտակազմակերպչական վիթխարի ջան-քեր գործադրեց հատկապես Հայաստանի պետական պատմական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ եղած տարիներին, նրա անունով էլ 1947 թվականից առ այսօր կոչվում է այն:

Բացառիկ կարևոր է Ստեփան Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» դերը և նշանակությունը հայ ազգագրական գիտու-թյունը զարգացնելու, բանահավաք կադրեր ներգրավելու գոր-ծում: «Ազգագրական հարցարանը» հանրագիտարանային բնույթի մասնագիտական ուղեցույց է, և որով ներկայումս էլ դաշտային աշխատանքների ընթացքում առաջնորդվում են հայ ժողովրդա-կան մշակույթով զբաղվողները: Այն ընդգրկում է ժողովրդի մարդաբանությունը, տնտեսական զբաղմունքները, նյութական և հոգևոր մշակույթը, հասարակական, ընտանեկան հարաբերու-թյունները, ժողովրդական բանահյուսությանն ու արվեստին վե-

[37] Տե՛ս ***Лисицян С.,*** Армянская этнография за 15 лет, № 4-5, էջ 270-274:

[38] Տե՛ս ***Лисицян С.,*** Очерки этнографии дореволюционной Армении // “Кавказский этнографический сборник” (այսուհետ՝ КЭС), Москва, 1955, I (новая серия), т. XXVI, էջ 182-264:

բաբերող հնարավոր բոլոր հարցերը, ինչպես նաև անհրաժեշտ ցուցումներ դաշտային նյութեր հավաքելու կարգի մասին: Հարցարանը հրատարակվեց հեղինակի մահվանից երկու շաբաթ առաջ: Սա երրորդ համապարփակ հարցարանն էր հայ ազգագրական իրականության մեջ, եթե նկատի չունենանք Երվանդ Լալայանի, Ս. Զելինսկու և ազգագրության առանձին բնագավառներին վերաբերող այլոց հարցարանները, որոնք թեմատիկ բնույթի են և հրատարակվել են «Ազգագրական հանդեսի» տարբեր հատորներում[39]:

1930-1940-ական թթ. Ս. Լիսիցյանի ստեղծած՝ հայ ազգագրությանը վերաբերող հիմնարար աշխատությունները լույս տեսան հետմահու՝ «Զանգեզուրի հայերը» (Եր., 1969) և «Լեռնային Ղարաբաղի հայերը» (ազգագրական ակնարկ) // «Հայ ազգագրություն և բանահյուսություն», գ. XII, (Եր., 1981, էջ 7-84) աշխատություններում: «Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատությունը 1992 թ. հրատարակվել է նաև ռուսերեն[40]: Գիտնականը 1920-1930-ական թթ. հավաքած դաշտային նյութերի հիման վրա մանրամասնորեն ներկայացրել է Արցախի ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթը, հիմնական զբաղմունքները, հավատալիքնե-

[39] Այդուհանդերձ, հայ ազգագրության նոր, ավելի մանրամասն հարցադրումների ներառմամբ ծրագիր-հարցարան կազմելն ու հրատարակելը հույժ անհրաժեշտ է նաև մեր օրերում, որպեսզի կորուսյալ Արևմտյան Հայաստանի և սփյուռքահայության մեծ մասի ազգագրական ժառանգությունը կորստյան մատնվելուց հետո գոնե կարողանանք փրկել ՀՀ շրջաններում դեռ մնացած փաստերը: Մի՞թե հնարավոր չէ շարունակել Ե. Լալայանի, Ս. Լիսիցյանի, Ա. Ալպոյաճյանի, Վ. Բդոյանի, Դ. Վարդումյանի և այլոց թողած ավանդները՝ ավարտին հասցնելով եթե ոչ պատմական Հայաստանի, գոնե ՀՀ պատմաազգագրական շրջանների ուսումնասիրությունը: Բարեբախտաբար, դեռևս կան արևմտահայ վերապրողների սերունդներ, որոնք շատ թե քիչ պահպանում են հիշողություններ «Էրզրի» մշակութային ժառանգության մասին: Շատ կարճ ժամանակից հետո դրանցից էլ կզրկվենք, դրա համար հույժ կարևոր են դաշտային ազգագրական հետազոտությունների խրախուսումը, ազգագրական երևույթներն ամբողջովին գրի առնելը (տե՛ս ***Նահապետյան Ռ.***, Հայաստանում ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությունից // Հայ ժողովրդական մշակույթ, XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 31-40):

[40] Տե՛ս ***Лисицян С.,*** Армяне Нагорного Карабаха (этнографический очерк), Ереван, 1992:

ը, նիստուկացը, բացահայտել դրանց տեղական առանձնահատկությունները՝ միաժամանակ ցույց տալով պատմամշակութային ընդհանրությունը հայ էթնոսի հետ ամբողջությամբ վերցրած: Այդ հարուստ ազգագրական նյութի մեծ մասը առաջին անգամ է դրվել գիտական շրջանառության մեջ: Այստեղ տեղին է կարևորել նաև Արցախի հայ բնակչության մինչքրիստոնեական հավատալիքների մասին Ի. Պետրուշևսկու ուսումնասիրությունը[41], որը գրվել է 1928 թ., այսինքն՝ այն ժամանակվա նյութերի հիման վրա, երբ դեռ ամբողջ թափով չէր ծավալվել կոլտնտեսային շարժումը, սոցիալիստական վերափոխումը[42]: Այս ժամանակաշրջանը բնորոշ էր նրանով, որ արցախահայոց կենցաղում ու աշխարհայացքում անցյալից եկած ավանդույթները տակավին հարատևում էին, իսկ նոր սովորույթները գտնվում էին լինելիության ընթացքի մեջ: Գրքում նախ քննվում են երկրամասի բնակլիմայական պայմաններն ու աշխարհագրական միջավայրը, բնակչության էթնիկական կազմն ու տեղաշարժերը, Շուշիի հիմնադրման պատմությունն ու իբրև քաղաք խաղացած դերը, պաշտամունքային-սովորութային մի շարք երևույթներ, նյութական ու հոգևոր մշակույթի հարցեր: 1924 թ. բնակչությունը այստեղ կազմել է 130 հազար մարդ, ընդ որում՝ հայերը՝ 120 հազար, իսկ ադրբեջանցիները՝ 10 հազար (էջ 16-17):

Ժողովրդական հավատալիքների համակարգում Ս. Լիսիցյանն առանձին-առանձին քննել է ժողովրդական տոները, հասարակական-ընտանեկան կենցաղին բնորոշ երևույթները, պաշտամունքի վայրերն ու ձևերը՝ զատելով, տարբերակելով քրիստոնեական և նախաքրիստոնեական շերտերը, վկայակոչում է մի շարք ավանդություններ ու հավատալիքներ՝ կապված բուսական ու կենդանական աշխարհի, բնության առանձին երևույթների հետ (ամպրոպ, կայծակ, ծառեր, քարայրներ, քարեր, աղբյուրներ, արջ, եղջերու և այլն): Նա հատուկ ուշադրություն է դարձրել այն պաշտամունքային վայրերի բազմաքանակությանը, որոնց անվանումները չեն առնչվում քրիստոնեական սրբերին, առանձնացրել է

[41] Տե՛ս ***Петрущевский И.,*** О дохристянских верованиях крестьян Нагорного Карабаха // «Известия» Аз. ГНИИ, Баку, 1930, т. I, вып. 5:

[42] Տե՛ս ***Լիսիցյան Ս.,*** Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 10:

կանանց անունով հայտնի քրիստոնեական կառույցները, որոնց թիվը հասնում էր 59-ի (104-ից) և իրավացիորեն այդ երևույթը փորձել է կապել Մեծ մոր երկրպագության վերապրուկների հետ (էջ 53):

Այժմ հակիրճ անդրադառնանք նրա «Զանգեզուրի հայերը» հետազոտության մեջ քննարկվող հարցերին: Տնտեսական կենցաղի վերաբերյալ Ս. Լիսիցյանը դեռևս 1940-ական թթ. համառոտակի անդրադարձել է Զանգեզուրի ազգագրական շրջանի վարուցանքի, բերքահավաքի, կալսման տեխնիկայի (էջ 126-134), այգեգործության (էջ 143-144)[43], անասնապահության (էջ 134-140, էջ 152-163)[44], օժանդակ և յուրացնող տնտեսաձևերի (էջ 140-147, էջ 163-167)[45], փոխադրամիջոցների (էջ 182-183)[46], գյուղական բնակավայրերի, շենքերի (էջ 86), տարազի և ուտեստի (էջ 168-174) բնութագրությանը[47]: «Բնակավայրեր և շենքեր» գլխում քննության են առնվում բնակավայրերի բնույթը և տեղադրությանն առնչվող հարցերը: Զանգեզուրում մեծ մասամբ դարավանդային բնույթ ունեցող բնակավայրերը Ս. Լիսիցյանն ուսումնասիրել է 1920-1930-ական թվականներին: Նա բացահայտել է ազգագրական այդ շրջանի բնակլիմայական, աշխարհագրական, տնտեսական ու քաղաքական գործոններով պայմանավորված բնակավայրերի տիպերը: Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ բնակավայրերի տեղաբաշխումը Զանգեզուրում ենթարկվել է աղբյուրների դասավորության, իշխող քամիների ուղղության և թշնամական հարձակումներից ապահովության պայմաններին: Գյուղերը խորը մտ-

[43] Տե՛ս նաև ***Лисицян С.,*** Очерки этнографии дореволюционной Армении, էջ 183-186: Հմմտ. «Хозяйства и материальная культура армян» /Народы Кавказа, т. II, Москва, 1962, էջ 463-469:

[44] Տե՛ս նույն տեղում, էջ 183-186: Հմմտ. Народы Кавказа, т. II, 469-471:

[45] Տե՛ս ***Лисицян С.,*** Очерки этнографии дореволюционной Армении, էջ 176-200: Հմմտ. Народы Кавказа, т. II, էջ 472-478:

[46] Տե՛ս նույն տեղում, էջ 200-203: Հմմտ. Народы Кавказа, т. II, էջ 478:

[47] Տե՛ս նույն տեղում, էջ 202-204, 216-222:

նում են ձորերի մեջ (Հալիձորը, Շինուհայրը, Խոտը, Հին Գորիսը, Վերինչենը, Քարահունջը, Խնձորեսկը և այլն): Կան ամբողջովին քարայր-բնակարաններ: Այդ տեսանկյունից տիպական է Խնձորեսկը: Այսպիսի բնակարաններ կան Հին Գորիսում, Տեղում, Խնածախում և այլուր: Ապա շարադրվել են Զանգեզուրի կենտրոն Գորիսի բարձրացման սոցիալ-տնտեսական հանգամանքները՝ կարևոր ճանապարհների հանգույց, առևտրական և վարչական կենտրոն լինելը: Այնուհետև ներկայացվել են բնակարանները և գյուղատնտեսական շենքերը (էջ 84-114): Առանձին բաժին է հատկացված տարազի բնութագրմանը: Ըստ հեղինակի՝ Զանգեզուրի հայ կնոջ զգեստները շատ նման են Շամախու, Նուխու, Գանձակի, Ղարաբաղի, Ղարադաղի, Մեղրու և Ագուլիսի տարազներին: Նկարագրվում են կանանց տարազների տեսակները՝ աշխատանքային, տոնական, ինչպես նաև աղջիկների հագուստը և այլն: Տղամարդու զգեստները նույնն են, ինչ արևելյան Կովկասի տղամարդկանց հագուստները (էջ 115-124):

Հասարակական-ընտանեկան կենցաղի բազում հարցեր են քննարկված Ս. Լիսիցյանի աշխատություններում: Արձանագրելով մեծ, գերդաստանական ընտանիքի մնացուկների առկայությունը Զանգեզուրում՝ նա նշում է, որ փոքր ընտանիքի ներքին կյանքում շոշափելիորեն երևում են գերդաստանական հարաբերությունները՝ տղամարդու գերիշխանությունը տան մեջ, կնոջ ենթարկվածությունն ու չխոսկանությունը, աշխատանքի բաժանման հին ձևերը և այլն: Ընդգծելով տղամարդու դերի առաջնայնությունը հայ ընտանիքում՝ առանձնացրել է մոր դերակատարության մի քանի ուշագրավ փաստեր՝ մոր՝ հարսնացու ընտրելը, աղջկա ամուսնության գործում քեռուն դիմելը, ապագա զոքանչի՝ փեսացուին ակնհայտ ու գաղտնի հովանավորելը, պսակադրությունից հետո աղջկա տանը խնջույք կազմակերպելը, որը բնորոշ է միայն Զանգեզուրին և այլն: Ս. Լիսիցյանը լայն տեղ է հատկացրել ամուսնությանը, ընտանեկան հարաբերություններին և մանկատածությանը վերաբերող բազմապիսի սովորույթներին, տվել դրանց գիտական մեկնաբանությունները[48]: Հայաստանի նախահեղափոխական շրջանի ընտանիքների ընդհանուր գնահատա-

[48] Տե՛ս ***Լիսիցյան Ս.,*** Զանգեզուրի հայերը, էջ 185-207, 219-227:

կանի, ամուսնության ձևերի և հարսանեկան ծեսերի ամփոփ բնութագրությունը տրված է «Очерки этнографии дореволюционной Армении» աշխատության մեջ[49]: Գիտնականը անդրադարձել է նաև հուղարկավորության համահայկական և Զանգեզուրի յուրահատկություններին[50], նաև գյուղական համայնքի դրսևորումներին[51]: Ս. Լիսիցյանը Զանգեզուրում ուսումնասիրել է տեղական տոները, դրանց էության գիտական բացատրությունները (էջ 260-278): Ստեփան Լիսիցյանի այս փաստալից աշխատությունը Զանգեզուրի հայերի մասին կարևոր ավանդ է հայ ազգագրական գիտության մեջ:

Ստեփան Լիսիցյանի աշխատությունները զգալի չափով օգտագործվել են «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի «Կովկասի ժողովուրդները» հատորի «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ժողովուրդները» բաժնում[52]: Ստեփան Լիսիցյանը վերջապես, հայտնի է նաև պատմական և պատմաշակութային բնույթի աշխատանքներով, մի բնագավառ, որով նա զբաղվել էր դեռևս անցյալում: Այս շրջանում լույս տեսան նրա «Ղոշուն դաշի մեգալիթյան բնակատեղին Սիսիանում» (1938 թ.), «Տիգրան Մեծն ըստ դրամների» (1941 թ.), «Գառնիի հունարեն արձանագրության վերծանումը» (1945 թ.), «Պոմպեոսի ուղին Անդրկովկասում» (1946 թ.), «Կիմերների Անդրկովկաս ներխուժելու ուղին» (1947 թ.) հոդվածները, որոնք շատ ուշագրավ ներդրում են հայ պատմագիտության մեջ:

Այսպիսով՝ Ս. Լիսիցյանն իր ավելի քան կեսդարյա գործունեությունը նվիրաբերեց Հայաստանում պատմագիտության, մասնավորապես ազգագրության, թանգարանագիտության, հնագիտության, ինչպես նաև աշխարհագրության և մանկավարժության զարգացմանը՝ հիմնարար աշխատություններով անգնահատելի ավանդ ներդնելով հայոց նյութական և հոգևոր մշակույթի զար-

[49] Տե՛ս Очерки этнографии …, էջ 232-241:
[50] Տե՛ս նույն տեղում, էջ 207-218:
[51] Տե՛ս նույն տեղում, էջ 260-278:
[52] Տե՛ս «Народы Кавказа», т. II, Москва, 1962, «Хозяйства и материальная культура армян», էջ 463-523, «Семейный быт» (524-536), «Религиозные верования» (536-540), «Здравохранение» (540-544), «Фольклор, литература и искусство» (551-601):

գացման մեջ:

Անխոնջ գիտնականը մեծ ջանքեր է գործադրել նաև բուհերում ազգագրություն առարկան ուսումնական ծրագրերում ընդգրկելու համար: Նրա ակտիվ քարոզչության շնորհիվ հետագայում իր նախապատրաստած ազգագրագետ կադրերի նոր սերունդը՝ Վ. Բդոյան, Կ. Մելիք-Փաշայան, Դ. Վարդումյան, Է. Կարապետյան, Ա. Օդաբաշյան և այլք, դարձան 1959 թ. ՀԽՍՀ ԳԱ համակարգում հիմնված Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրագետ կադրերի հիմնական կորիզը: Թանգարանի ազգագրության բաժնի վերոնշյալ երիտասարդ ազգագրագետները, ինչպես նաև Վ. Պետոյանը և Ամինե Ավդալը 1944-1950 թթ. տարեկան մեկ-երկու ամսով գործուղվել են Հայաստանի տարբեր շրջաններ՝ Արարատյան դաշտավայր, այդ թվում՝ Երևան, Աշտարակ, Թալին, Արագած, Գուգարք՝ դաշտային ազգագրական հետազոտությունների համար, իսկ ԳԱ արվեստի բաժնից Սրբուհի Լիսիցյանը՝ հայ ժողովրդական պարերի գրանցման համար՝ Թալին-Արագած տարածաշրջան:

Մանուկ Աբեղյան (1865-1944): Պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Աբեղյանը գիտական ասպարեզ իջավ XIX դարի վերջին տասնամյակներին և իր արդյունավետ գործունեությունը շարունակեց XX դարի առաջին կեսերին: 1899 թ. Մ. Աբեղյանը հրատարակել է երկու մենագրություն՝ «Հայ ժողովրդի հավատալիքները» և «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ»: Այդ զուտ աշխատությամբ, փաստորեն, հիմք դրվեց հայ ժողովրդական հավատալիքների, հնագույն առասպելների (Հայկի, Վահագնի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Տորքի) և առասպելական վեպի (Տիգրանի և Արտաշեսի վիպական ցիկլեր) գիտական ուսումնքնեերին: Մանուկ Աբեղյանը հայ ժողովրդական առասպելների լավագույն գիտակն էր: 1940 թ. մեծանուն հայագետը հրատարակել է «Ժողովրդական խաղիկներ» վերնագրով ստվար հատորը, որը պարունակում է տասնյակ տարիների ընթացքում հեղինակի (մասամբ նաև Կոմիտասի) գրի առած և տպագիր ու ձեռագիր աղբյուրներից հավաքած շուրջ 3.500 ժողովրդական խաղիկներ: Նույն թվականին հրատարակել է նաև «Գուսանական-ժողովրդական տաղեր» վերնագրով ժողովածուն: Ինչպես այս, այնպես էլ դեռևս 1931 թ. լույս տե-

սած «Հին գուսանական ժողովրդական երգերը» ուսումնասիրությունները մեծարժեք գործեր են:

«Հայ ժողովրդական հավատալիքը» ատենախոսության համար Ենայի (Գերմանիա) համալսարանում Աբեղյանը ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Այնուհետև, ինչպես նշեցինք, հետազոտել է հայ ժողովրդական բանահյուսությունը, ուսումնասիրել և համակարգել պատմավիպական և քնարական ժանրի ժողովրդական ստեղծագործությունները, հայտնաբերել է «Սասնա ծռերի» երկրորդ տարբերակը՝ «Դավիթ և Մհեր» ժողովրդական վեպի Մոկաց պատումը (1886), հետազոտել է «Սասնա ծռերի» ժանրային գեղարվեստական հատկանիշները, բացահայտել նրա պատմական ատաղձն ու վիպական առասպելական շերտերը: 1889-1890 թթ. «Մուրճ» ամսագրում Մ. Աբեղյանը «Ազգային վեպ» խորագրով հրատարակել է մի ընդարձակ ուսումնասիրություն, որը նորահայտ «Սասունցի Դավիթ» հերոսավեպին նվիրված առաջին լուրջ ու ամբողջական հետազոտությունն էր: 1906-1908 թթ. «Ազգագրական հանդեսի» մի քանի գրքերում լույս է տեսնել Աբեղյանի՝ վեպին նվիրված երկրորդ, ավելի ընդարձակ ու բազմակողմանի հետազոտությունը՝ «Հայ ժողովրդական վեպ» վերնագրով՝ վեպի 15 պատումների նյութի հիման վրա: Ավելի ուշ (1936-1944 թթ. և 1951 թ.) Աբեղյանի ընդհանուր խմբագրությամբ լույս են տեսնել վեպի շուրջ 50 պատումների գիտական ամբողջական ժողովածուի երկու հոյակապ հատորները՝ «Սասնա ծռեր» վերնագրով: 1939 թ. կազմել և հրատարակության է պատրաստել վեպի հոբելյանական համահավաք բնագրի առաջին ճյուղը («Սանասար և Բաղդասար»):

Աբեղյանը նորովի ուսումնասիրել է հայերի հին ու նոր հավատալիքները, առասպելական զրույցները, հայ վիպական և քնարական բանահյուսությունը, հեղինակ է «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» աշխատության[53]: Միայն նրա «Հայ ժողովրդական հավատք» ծավալուն

[53] Գեղամա լեռներում, Արագածում, Ջավախքում և այլուր տարածում գտած «վիշապներ» կոչվող ձկնակերպ քարե կոթողները ազգագրական և հնագիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում: «Վիշապներով» զբաղվել են նաև Ն. Յա. Մառը, Յա. Ի. Սմիռնովը (տե՛ս «Выша-

ուսումնասիրությունը բավական է, որ նա գնահատվի որպես հայ բանագիտության և ազգագրության ամենաերևելի դեմքերից մեկի: Ի վերջո, գիտնականի այս ոլորտի բոլոր հետազոտությունների արդյունքների ամփոփումն է «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր աշխատությունը (1944 թ., 1946 թ.):

Հովսեփ Օրբելի (1887-1961): Հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտության կայացման գործում նշանակալի ներդրում է ունեցել նշանավոր արևելագետ, հնագետ, վիմագրագետ ազգագրագետ, գիտության կազմակերպիչ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: Հույժ ուշագրավ ազգագրական դիտարկումները վերաբերում են նրա գիտական գործունեության նախնական փուլին: Հակիրճ ներկայացնենք այն՝ 1906-1917 թթ. Անիի պեղումների իրականացում[54], Անիի, Լեռնային Ղարաբաղի և այլ հուշարձանների հայկական արձանագրությունների գրառում և հրատարակում[55], 1909 թ. Մոկսի հայերի և քրդերի ազգագրության ու բարբառի հետազոտություն՝ կազմելով հայ և քրդական բարբառների բառարաններ, Էրզրումի, Բայազետի, Վանի, Աղթամարի, Բա-

---

пы», Ленинград, 1931), Գ. Ղափանցյանը («Հնության մի քանի հիշատակներ», «Արարատ», 1914, № 1), Բ. Բ. Պիոտրովսկին («Вышапы, каменные статуи в горах Армении», Ленинград, 1939,), Ա. Ս. Մնացականյանը («Հայկական զարդարվեստ», Երևան, 1955, էջ 547-557), և ուրիշներ: Նշված գիտնականներից Մառը, Սմիռնովը, Պիոտրովսկին, Ղափանցյանը «վիշապները» կապում են ջրի ու ջուր պարգևող աստվածության, իսկ Աբեղյանը՝ հին հայոց սիրո և հեշտանքի դիցուհու՝ Աստղիկի պաշտամունքի հետ: Անկախ այս կարծիքի գիտական արժանահավատությունից էականն այն է, ըստ բանագետ Ս. Հարությունյանի, որ Աբեղյանն այստեղ հանգամանորեն քննել է Աստղիկ դիցուհու պաշտամունքի ընդհանուր արմատները, տեղավայրերը, առասպելները և բացահայտել նրա տեղն ու նշանակությունը հին հայոց ծիսապաշտամունքային համակարգում» (***Հարությունյան Ս.,*** Մանուկ Աբեղյան, Գիտական վաստակի գնահատման ուրվագիծ, ՊԲՀ, 2006, № 1, էջ 3-27):

[54] Հովսեփ Օրբելին Անիի հնադարանի տնօրենն էր: 1910 թ. հրատարակվեց նրա կազմած «Каталог Анийского музея древностей», СПб., 1910. 1911 թ. Հ. Օրբելին ռուսերեն հրատարակեց իր «Անվո ավերակները» գրքույկը (Развалины Ани. История. Современное состояние. Раскопки).

[55] Հ. Օրբելին ժամանակակից հայ վիմագրության առաջին հետազոտողը եղավ: Դեռևս 1914-1917 թթ. հիմնականում «Քրիստոնյա Արևելք» (ռուսերեն) հանդեսում տպագրել է Անիի արձանագրությունների իր ուսումնասիրությունները («Դիվան հայ վիմագրության», պր. 1, Եր., 1966):

գավանի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրություն և չափագրում, հնագիտական պեղումներ Թոփրակ կալեում և Հայկաբերդում, 1916 թ.՝ Ն. Մառի հետ Վանում, եռանդուն կազմակերպչական ջանքեր թանգարանագիտության, թանգարանաստեղծման ասպարեզում. Հովսեփ Օրբելին եղել է Էրմիտաժի տնօրենը (1934-1954), ԽՍՀՄ ԳԱ հայկ. մասնաճյուղի, ապա՝ Հայաստանի ԳԱ պրեզիդենտը, ԽՍՀՄ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ղեկավարը (1943-1947) և այլն: Այդուհանդերձ, Հ. Օրբելու ազգագրական դիտարկումները հիմնականում վերաբերում են Արևմտյան Հայաստանի Մոկս գավառին, ուր նա այցելել է 1911-1912 թթ. և հավաքել ազգագրական, բանահյուսական և բարբառագիտական եզակի նյութեր: Մոկսի բնակչությունը խառն էր, այնտեղ ապրում էին թե՛ հայեր, թե՛ քրդեր: Այստեղ նա նյութերը գրառել է Մոկս քաղաքի Ապըրխանանց, Անջղոնց, Տաշտ թաղամասերում 23 հայ և մեկ քուրդ՝ հայերեն, արաբերեն, պարսկերենին, թուրքերենին տիրապետող բանասացներից: Բանասացները հիմնականում տղամարդիկ էին, հիշատակված է նաև կին բանասաց՝ Նազե Շահամիրյան անվամբ, որից Հ. Օրբելին գրառել է զվարճախոսություններ: Հ. Օրբելին կազմեց հայերեն-ռուսերեն և քրդերեն-ռուսերեն բարբառագիտական բառարաններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով թե՛ իմաստաբանությանը, թե՛ հնչյունաբանությանը: Օրբելու մեծ աշխատանքի արդյունքները նրա կենդանության օրոք լույս չտեսան: Միայն 1968 թ. լույս տեսավ Հ. Յրբելու ընտիր աշխատությունների առաջին հատորը[56]: 1982 թ. հրապարակվեց միայն մի փոքրիկ մասը[57], որն ընդգրկում է Մոկսի ազգագրական ակնարկը և գրի առնված բնագրերի ռուսերեն թարգմանությունները: 2002 թ. հրատարակվեց նրա «Ընտիր երկերի» երկրորդ հատորը[58], որտեղ առավել ընդլայնված է տրված Մոկսին վերաբերող ազգագրական ակնարկը: Այն կազմված է երկու հիմնական բաժնից՝ ազգագրու-

[56] Տե՛ս ***Орбели И. А.,*** Избранные труды, в двух томах, т. 1, Москва-Ленинград, 1968:

[57] Տե՛ս ***Орбели И. А.,*** Фольклор и быт Мокса, Москва, 1982:

[58] Տե՛ս ***Орбели И. А.,*** Избранные труды в двух томах, т. II, Ереван, 2002:

թյուն (Մոկսը և բնակիչները) և բանահյուսություն՝ հայ բանահյուսական բնագրեր, թարգմանություններ: Հավելվածում տրված են բնակավայրերի անվանումները՝ տեղի բարբառով, Մոկս քաղաքը՝ իր հինգ թաղամասերով, որտեղ, հայերից բացի, ապրում էին նաև քրդեր, գնչու-բոշաներ: Հաշվառված են 75 խոշոր բնակավայր, 5 ագարակ՝ իրենց տնտեսություններով, ազգային կազմով, 19 լուսանկար, որոնք պատկերել են բնական տեսարանները, կառույցները, տարազը, տապանաքարերը, մի խումբ հայուհիներ՝ մանուկների հետ, Մուրթուլա Բեկն իր վարչակազմով և այլն: Գյուղերը տեղադրված են ութ առանձին կիրճերում (ձորակներում): Գրքում Մոկսի աշխարհագրական և բնաէկոլոգիական միջավայրը և էթնիկ կազմը ներկայացնելուց հետո տրված են տեղեկություններ հայ (նստակյաց-երկրագործ) և քուրդ (քոչվոր-անասնապահ) ժողովուրդների թվաքանակի, զբաղմունքների՝ երկրագործության, անասնապահության, տնայնագործության, արհեստների, փոխադրամիջոցների, առևտրի, փոխանակության, նյութական մշակույթի՝ բնակավայրերի ու բնակարանների դասավորվածության, ներսույթի, հատակագծի, վերջապես՝ հասարակական, հոգևոր կյանքի ու կենցաղի, սովորույթների ու ավանդույթների, ինչպես նաև քաղաքական ու ազգամիջյան փոխհարաբերությունների վերաբերյալ: Ուշադրավ են հատկապես միջէթնիկ հարաբերությունները՝ հեղինակին հյուրընկալած Մուրթուլա բեկի բնութագիրը, երեկոյան հավաքույթները նրա տանը, ըստ ավագության բարձերին բազմելը, որը հիշեցնում է հին իրանական ու հայկական «Գահնամակի» կարգը[59]:

Մոկսի հայերից գիտնականի գրի առած բանահյուսական տեքստերից առանձին խումբ են կազմում ժողովրդական հեքիաթները, մանրապատում զրույցները, կենդանական վեպերն ու առակները, վիպական երգերն ու բալլադները, աշխատանքի և ծիսական երգերը, երգիծական և մանկական երգերը, առածներն ու ասացվածքները, հանելուկներն ու շուտասելուկները: Գրքի նշանակությունը կարևորվում է նրանով նաև, որ 1915-1916 թթ. Մոկսում ոչ մի հայ չմնաց, հետևաբար Օրբելու Մոկսի հայության վերաբերյալ դիտար-

[59] Տե՛ս նաև ***Վարդումյան Դ.,*** Հովսեփ Օրբելու ազգագրական հետազոտությունները Մոկսում, «Նոր ազգագրական հանդես», Ա, Երևան, 2005, էջ 122-124:

կումները մնացին որպես եզակի թանկարժեք հաղորդումներ: Ուսումնասիրվող հարցի շրջանակից դուրս չեն մնացել և մեջընդմեջ խոսվում է ամուսնության ու հարսանիքի, ժողովրդական տոների (Համբարձում, Վարդավառ, Տյառնընդառաջ) մասին և այլն[60]:

Մեծանուն գիտնականը ծանրակշիռ վաստակ ունի նաև հայ բանագիտության ասպարեզում: 1939 թ. «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարության միջոցառումները հանձնարարված էր գլխավորել Հ. Օրբելուն: Նա մեծ դեր ունեցավ «Սասունցի Դավիթ» համահավաք ժողովածուի (հայերեն և ռուսերեն) հրատարակման գործում (1939 թ.): Նրա նախաձեռնությամբ նույն թվականին Լենինգրադում տպագրվեց «Սասունցի Դավիթ» վեպի ռուսերեն թարգմանությունը, և գիտնականի զեկուցումներով այն ներկայացվեց ԽՍՀՄ ժողովուրդների լայն շրջաններին[61]: Նշենք, որ միջազգային բանագիտությանը մեր դյուցազներգությունը ծանոթ է հենց այդ թարգմանության շնորհիվ: Նրա ջանքերով էր, որ մեր դյուցազներգությունը, դուրս գալով ազգային սահմաններից, դարձավ համամարդկային մշակույթի սեփականություն: «Հայ հերոսական էպոսը» աշխատության և «Սասունցի Դավիթ» էպոսը («Խորհրդային գրականություն», ամսագիր, Եր., 1939, № 8-9) ուսումնասիրության մեջ Օրբելին հանգամանորեն անդրադարձել է էպոսի բովանդակությանը, կերպարներին, վեր է հանել էպոսի պատմական կորիզն ու ձևավորման ընթացքը, բացահայտել էպոսի և համանման այլ գործերի միջև առկա ընդհանրությունները: Կենդանի, պատկերավոր, ներշնչուն խոսքով նա վեր է հանել էպոսի պատմամշակութային ու գեղարվեստական արժեքները, ընդգծել նրա մեջ մարմնավորված ազատասիրական, հերոսական, խաղաղասիրական, մարդասիրական գաղափարները:

«Առակները» ևս նրա հետազոտությունների շատ կարևոր մասն են: Ընդգրկելով հսկայական նյութ՝ հեղինակը ներկայացրել է XII-XIII դարերի Հայաստանի հասարակական կյանքն ու մշա-

[60] Տե՛ս ***Ցուզբաշյան Կ. Ն.,*** Ակադեմիկոս Հ. Օրբելի, Երևան, 1971: Տե՛ս նաև ***Վարդումյան Դ.,*** Հ. Օրբելու ազգագրական հետազոտությունները Մոկսում, էջ 122-123:

[61] «Давид Сасунский, Армянский народный эпос», Москва-Ленинград, 1939, ***Օրբելի Հ.,*** Հայկական ժողովրդական էպոսը, Երևան, 1956:

կույթը և փորձ կատարել պարզաբանելու, թե ինչպիսի արձագանք է գտել դարաշրջանը առակներում[62]: Օրբելու ինչպես ազգագրական, այնպես էլ բանագիտական ուսումնասիրությունները աղբյուրագիտական և տեսական ընդհանրացնող գործեր են: Ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին թողել է հարուստ գիտական ժառանգություն: Հայ մշակույթի ասպարեզում Հովսեփ Օրբելին գնահատված է եղել որպես ռահվիրա:

1920-1940-ական թթ. նշանավոր ազգագրագետներից էր նաև **Երվանդ Շահազիզը (1856-1951)**՝ գրականագետ, պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ, բանասիրական գիտությունների դոկտոր (1944), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1946): 1922 թ. հրավիրվել է Երևան՝ մասնակցելու Հայաստանի կենտրոնական կուլտուր-պատմական թանգարանի ստեղծման աշխատանքներին՝ նորաստեղծ թանգարանը Նոր Նախիջևանի հայկական համայնքին պատկանող ազգագրական և արխիվային հարուստ նյութերով հարստացնելու համար: Թանգարանում աշխատել է որպես պատմագրական բաժնի վարիչ: Պատմաբանասիրական բազմաթիվ աշխատությունների հեղինակ է, որոնցից ազգագրական առումով ուշագրավ են Նոր Նախիջևանի հայկական գաղթավայրի պատմությանը, ազգային սովորություններին և ավանդույթներին վերաբերող «Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք» (Ա.Հ, գ. 9, էջ 5-57) ուսումնասիրությունը, «Հին Երևանը» (Եր., 1931), «Աշտարակի պատմությունը» (Եր., 1987): Անտիպ է դեռևս «Չերքեզիա կամ Չերքեզիստան և չերքեզահայք» աշխատությունը:

Հայ ազգագրության բնագավառում անառարկելի է նշանավոր լեզվաբան **Գ. Ղափանցյանի** (1887-1957)[63] հետազոտությունների

---

[62] Տե՛ս ***Орбели И.,*** Басни средневековой Армении, Москва-Ленинград, 1956.

[63] Ծնվել է Աշտարակում, բարձրագույն կրթությունն ստացել է Պետերբուրգի համալսարանում, աշակերտել է Նիկողայոս Մառին: 1913 թ. ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրաց-պարսկական բաժինը և աշխատանքի անցել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1914 թ. մասնակցել է Անիի Ն. Մառի կազմակերպած պեղումներին: 1921 թ. հրավիրվել է Երևանի համալսարան և մինչև 1954 թվականը ղեկավարել է լեզվաբանության ամբիոնը: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է: Նրա հրատարակած աշ-

կարևորությունը, առանձնապես հեթանոսական հավատալիքների ուսումնասիրության խնդրում: Տիրապետելով փոքրասիական մի շարք մեռած լեզուների (խեթերեն, ուրարտերեն, խուռիերեն և այլն)՝ Ղափանցյանը սեպագիր արձանագրությունների խորազնին ուսումնասիրությամբ պարզել է հայերի էթնիկական կապերը հարևան ժողովուրդների հետ, լեզվական փոխառություններն ու փոխազդեցությունները: Այդ առումով ուշադրության արժանի է «Chetto-armeniaca» (Եր., 1931) մենագրությունը, որտեղ քննել է հայերենի ու խեթերենի շուրջ 200 բառեր ու ձևեր, լուսաբանել նաև փոքրասիական մի շարք ժողովուրդների մշակույթի ու պատմության կնճռոտ հարցեր: Ղափանցյանի «Խեթական աստվածները հայոց մեջ»[64], «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (Եր., 1944) մենագրությունները, «Ջրահարսի պաշտամունքը հայերի մեջ»[65] և «Խեթական մի առասպելի մասին՝ կապված կռունկի և գարնան աստվածության հետ»[66] հոդվածները և «Հայասան - հայերի բնօրրան»[67] աշխատությունը մինչև օրս գնահատվում են որպես լուրջ ներդրում հայ ազգաբանության, հնագույն հավատալիքների լուսաբանման գործում: Ղափանցյանի նշանավոր աշխատություններից է նաև «Հայոց լեզվի պատմությունը» (Եր., 1961), որտեղ քննության են առնված հայ ժողովրդի կազմավորման հարցերը, հայոց լեզվի հնդեվրոպական նստվածքը:

Հայ ազգագրության վերաբերյալ ուշագրավ հետազոտություններ ունի **Գ. Զուրսինը:** Առաջինը նա հիմք դրեց Զանգեզուրի ազգագրական ուսումնասիրությանը՝ 1931 թ. լույս ընծայելով

խատություններից ուշագրավ են «Ընդհանուր լեզվաբանություն» (Եր., 1937-1939), «Ուրարտուի պատմություն» (1940), և այլ աշխատություններ (տե՛ս նաև ***Ղափանցյան Գ.***, Գիտական գործունեության համառոտ ակնարկ, Երևան, 1959):

[64] Տե՛ս ***Капанцян Г.А.,*** Хетские боги у армян: в связи с генезисом армянского пантеона вообще // «Երևանի պետհամալսարանի գիտական աշխատություններ», հ. 14, 1940, էջ 243-316:

[65] Տե՛ս «Խորհրդային գրականություն», 1940, թիվ 6, էջ 124-135:

[66] Տե՛ս «Մառի անվան կաբինետի աշխատություններ», № 1, 1945, էջ 173-186:

[67] Տե՛ս ***Капанцян Г. А.,*** Хайаса-колыбел армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1956:

«Армяне Зангезура»[68] գիրքը: Նրան հետևում են Ն. Գրիգորովի, Ե. Մելիք-Շահնազարյանի, Ն. Շիրակունու, Գեղիվանովի հոդվածները, որոնք տպագրվեցին «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» մատենաշարում:

Լ. Մելիքսեթ-Բեկը Ս. Լիսիցյանի և Գ. Զուբսինի հետ միասին աշխատելով Կովկասի պատմահնագիտական ինստիտուտում, նույնպես կարևոր ներդրում ունեցավ հայ ազգագրության բնագավառում: Ուշագրավ են Լ. Մելիքսեթ-Բեկի «Հայ ազգագրագետ-հնագետ Ե. Լալայանը»[69], «Կովկասում Կուվադայի սովորույթի հարցի մասին»[70] և այլ հոդվածներ[71]:

Հայ հեթանոսական կրոնի ուսումնասիրության խնդրում ուշագրավ է նշանավոր բանագետ Կ. Մելիք-Օհանջանյանի «Միթրա-Միհրը «Սասնա ծռերի» մեջ» (Հայկ. ՍՍՌ ԳԱ «Գրական-բանասիրական հետախուզումներ», գ. Ա, Եր., 1946) ուսումնասիրությունը: Հեթանոսական պաշտամունքի մեկ այլ աստվածության՝ Վահագնի պաշտամունքի վերաբերյալ ուշագրավ հետազոտություն է կատարել Բ. Առաքելյանը[72]: Ուշադրության արժանի է նաև Թ. Ավդալբեգյանի՝ արևի ու կրակի աստված Միհրին նվիրված «Միհրը հայոց մեջ»[73] աշ-

---

[68] Տե՛ս ***Чурсин Г.,*** Армяне Зангезура, Отдельный оттиск из «Научных записок», Тифлис, 1931, т. I, вып. 6:

[69] Տե՛ս ***Меликсет-Беков Л.,*** Армянский этнограф-археолог Е. А. Лалаян (К пятилетию со времени его кончины), СЭ, 1936, № 4-5, էջ 225-226:

[70] Տե՛ս ***Меликсет-Беков Л.,*** К вопросу об обычае кувады на Кавказе в связи с языковым пережитком матриархата, Сб. Академия наук СССР, XV, Москва-Ленинград, 1935, էջ 729-736:

[71] Տե՛ս ***Меликсет-Беков Л.,*** Указатель литературы по истории государства и права, обычному праву и юридическом древностям Грузии, Армении и Азербайджана, Тбилиси, 1939, նույնի՝ К истории удин (utica-armeniaca), “Труды Тбил. Гос. Ун-та”, т. 23, 1942, էջ 25-55:

[72] Տե՛ս ***Առաքելյան Բ. Ն.,*** դիտողություններ վիշապաքաղ Վահագնի մասին, «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ.», № 2, 1951, էջ 75-81:

[73] Տե՛ս ***Ավդալբեգյան Թ.,*** Միհրը հայոց մեջ // Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 13-79:

խատությունը, իսկ բնության մեռնող և հարություն առնող աստվածությունների, հողի ու ջրի պաշտամունքին է նվիրված Վ. Բդոյանի «Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ» ուսումնասիրությունը[74]:

Սփյուռքում էլ լույս տեսան պատմաազգագրական մի քանի շրջանների վերաբերող ուսումնասիրություններ, որոնք ավելի շատ տեղեկատվական, աղբյուրագիտական արժեքավոր ազգագրական գործեր են և արժանի են ուշադրության[75]:

1920-1940-ական թվականներին ինչ-ինչ պատճառներով անտեսվել են ազգագրության երկու կարևոր բնագավառ՝ մարդաբանությունը և ժողովրդական բժշկությունը: Հայ ժողովրդի մարդաբանությամբ թեև 1920-ական թթ. զբաղվել են Մոսկվայի հայտնի մարդաբանները՝ պրոֆ. Բունակի գլխավորությամբ, որի վերաբերյալ ասված է Ստեփան Լիսիցյանի «Армянская этнография за 15 лет» հոդվածում, այդուհանդերձ դա կրել է ոչ հիմնավոր բնույթ: Իսկ ժողովրդական բժշկության բնագավառում բացարձակապես ոչինչ արված չէ նշված ժամանակահատվածում: Մինչդեռ մեր ժողովուրդը ունի բազմադարյան բժշկական հմտություններ, որոնք մեր մշակույթի անկապտելի մասն են կազմում, բայց որոնք կորչում են անհետ, քանզի դրանց վերաբերյալ նյութեր չեն գրառվում:

Հայ ժողովրդի անցյալի ազգագրության վերաբերյալ հաճախ խիստ հազվագյուտ նյութեր են պարունակում հայ մատենագրության անսպառ գանձարանի՝ գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանի ձեռագրական ֆոնդերը, որոնք տակավին ուսումնասիրված չեն: Այդուհանդերձ, հարկ է նշել նաև, որ խորհրդային կարգերի հաստատման առաջին տասնամյակներին (1920-1940-ական թթ.) յուրատեսակ քամահրական վերաբերմունք

---

[74] Տե՛ս «Աշխատություններ Հայաստանի պետական թանգարանի», № 3, Երևան, 1950, էջ 5-71:

[75] Տե՛ս ***Երեմյան Ա.,*** Սպահանի Զահարմահալ գավառը // «Բազմավէպ», 1923, № 7-12, 1924, № 1-3, 6-12, 1925, № 3, ***Համբարձումյան Վ.***, Գյուղաշխարհ, պատմական և ազգագրական ուսումնասիրություն, Փարիզ, 1927, ***Բախտիկյան Ս. Ա.,*** Արաբկիր և շրջակայքի գյուղերը, Պեյրութ, 1934, ***Ազատյան Թ.***, Ակն և ակնցիք, Իսթանպուլ, 1943 և այլն:

է եղել ազգագրական գիտության նկատմամբ, մասնագետներ գրեթե չեն պատրաստվել, և միայն անցյալից հարատևող վերը նշված «մի քանի նախանձախնդիրների, հատկապես Ս. Լիսիցյանի ջանքերով է, որ գոյատևել է ազգագրությունը՝ վախվորած ծվարելով ՀՊԹ-ում և ԵՊՀ-ի աշխարհագրության մասնաճյուղում (գավառագիտություն անվան տակ)»[76]:

Ազգագրական գիտության նկատմամբ վերաբերմունքը, պայմանավորված աշխարհաքաղաքական տեղաշարժերով, հետզհետե փոխվում է Երկրորդ աշխարհամարտին հաջորդած նոր պայմաններում: Ի մի բերելով վերը ասվածը՝ վստահորեն կարելի է պնդել, որ 1920-1940-ական թվականները հանդիսացան այն շրջափուլը, երբ ազգագրության բնագավառում սկզբնավորվեց և զարգացում ապրեց թանգարանային գործը, իսկ Հայաստանի գիտության և արվեստի, Կովկասի պատմահնագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, Գիտությունների ակադեմիայի ստեղծմամբ նոր թափ ու ծավալ ստացավ ազգագրական նյութերի հավաքչական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեությունը: Նախախորհրդային շրջանում գործող ազգագրագետներ Ե. Լալայանը, Խ. Սամուելյանը, Ս. Լիսիցյանը, Մ. Աբեղյանը, Հ. Օրբելին և աչքի ընկնող այլ գիտնականներ՝ Ե. Շահազիզը, Գ. Ղափանցյանը, Գ. Զուբսինը, Լ. Մելիքսեթ-Բեկը և ուրիշներ, արդեն խորհրդային տարիներին հենվելով իրենց բազմամյա գիտելիքների և փորձառության վրա, ծավալեցին արդյունավետ հավաքչական և հետազոտական աշխատանք՝ որոշակի ներդրում ունենալով խորհրդահայ ազգագրության զարգացման գործում: Հայրենանվեր ազգագրագետներ-բանահավաքները խելամտորեն օգտագործեցին նաև նորագյուտ տեխնիկական միջոցները՝ լուսանկարում, ձայնագրում, չափագրում, քարտեզագրում, կինոնկարահանում և այլն, ինչի շնորհիվ գրանցված նյութերը ամբողջական տեսքով թողնվեցին հետագա ուսումնասիրողներին: Նրանց ժառանգության վրա արդեն XX դարի կեսերին սկսեց գործել ազգագրագետ-բանահավաքների հերթական սերունդը, որը, ազգագրական նոր, ավելի համակողմանի հարցարանով առաջնորդվելով, հայ ազ-

[76] Տե՛ս ***Վարդումյան Դ.,*** Հայ ազգագրությունը Ի դարում // «Բազմավէպ», 1-4, 2003, էջ 452:

գագրությունը զարգացրեց ժամանակի պահանջներին համահունչ՝ ի մի բերելով ու հրատարակելով ինչպես թեմատիկ, այնպես էլ՝ պատմաազգագրական շրջանների ամբողջական հետազոտություն-ներ: Այս շրջանը բնորոշվում էր նաև ազգագրության և բանահյու-սության՝ որպես գիտության ուրույն բնագավառների տարանջատ-ման ու զարգացման ժամանակաշրջան:

Այսպիսով՝ հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջափուլ թևակոխեց իբրև պատմամշակութային գիտության լիո-վին կազմավորված բնագավառ: Խորհրդային կարգերի հաստա-տումով սկսվեց հայագիտության զարգացման նոր փուլ. Հայաս-տանում գիտության մյուս բնագավառների հետ միասին բարե-նպաստ պայմաններ և զարգացման լայն հեռանկարներ ստեղծվե-ցին նաև ազգագրական գիտության համար: Նյութական հնարա-վորություններ ու հեռանկարներ բացվեցին ինչպես գիտահետա-զոտական, այնպես էլ դաշտային բանահավաքչական աշխատանք-ների ծավալման համար: Այն, ինչ նախկինում ինքնուրույն պե-տականության բացակայության պատճառով մեղանում կատար-վում էր առանձին անհատների և ազգագրական, դավառագիտա-կան և նման ընկերությունների նախաձեռնությամբ ու ջանքե-րով, այս շրջափուլում սկսեց իրականացվել պետական հոգածու-թյունը վայելող համապատասխան հիմնարկների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրված, հետևողական գործունեությամբ: Հարկ է նշել, որ այս շրջանում խորհրդային ազգագրության խնդիրների ու հեռանկարների, սոցիալիստական գյուղի վերափոխումների անդրադարձների վերաբերյալ պահանջ-ներ էին առաջ քաշվում միութենական ազգագրության կողմից: Գաղափարական այս պարտադրանքի պայմաններում հայագիտու-թյան, այդ թվում՝ նաև ազգագրական գիտության ապահով և ան-կաշկանդ զարգացումը, ըստ էության, դարձել էր անհնարին: Այ-դուհանդերձ, հայ ազգագրական գիտության ձեռքբերումները խորհրդային տարիներին ակնառու էին:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(1950-1980-ական թթ.)

Խորհրդային շրջանում հայ ազգագրության զարգացման ընթացքը կարելի է բաժանել երկու ժամանակաշրջանի՝ ա) 1920-1940-ական թթ., երբ տակավին գործում էին դեռևս նախահեղափոխական շրջանից հայտնի բազմավաստակ ազգագրագետներ և բանագետներ (Ե. Լալայան, Խ. Սամուելյան, Ս. Լիսիցյան, Մ. Աբեղյան, Հ. Օրբելի և այլք), բ) 1950-1980-ական թթ., երբ ասպարեզ եկան ազգագրագետների նոր սերունդ, որոնք, առաջնորդվելով Ս. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանով» (Երևան, 1946), դաշտային ազգագրական նոր նյութեր հավաքելուն զուգընթաց շարունակում են իրենց աշխատություններում ոչ միայն ուսումնասիրել դրանք, այլև գիտական նորովի ընդհանրացումներ կատարել:

1950-1980-ական թթ. հին սերունդին փոխարինելու եկած երիտասարդ մասնագետները ավելի սերտորեն են կապվում միության՝ առաջին հերթին ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի ազգագրության ինստիտուտի, ինչպես նաև հարևան հանրապետությունների ազգաբանական հաստատությունների հետ: Ավանդույթ են դառնում ամենամյա գիտական նստաշրջանները Մոսկվայում, որին մասնակցում են նաև հայ ազգագրագետները: Այս շրջանում սկսվում է նկատելի դառնալ խորհրդային ազգագրության մի այլ տարբերակիչ կողմը նախախորհրդայինից. եթե անցյալում ժողովրդի առօրյա կյանքից վերապրուկային նյութեր էին հավաքվում հիմնականում նախնադարյան-տոհմային կարգերի բնույթը պարզաբանելու նկատառումով, ապա այժմ իրականացվում է նաև շրջադարձ դեպի ժողովրդի ժամանակակից կենցաղի ու մշակույթի ուսումնասիրությունը: Ազգագրագետի խնդիրն է դառնում պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ կենցաղում դրսևորվող նոր երևույթները լուսաբանելու պատմական դինամիկ կապի մեջ,

ցույց տալու, թե կենցաղային այս կամ այն երևույթն ինչպիսի փոփոխություններ է կրում, և ինչով են դրանք պայմանավորված[1]: Այս շրջանում ուշադրության կենտրոնում է եղել հայ ժողովրդի կենցաղում խորհրդային շրջանում կատարված փոփոխությունների ուսումնասիրության հարցը, թեև շատ հաճախ այն ներկայացվել է նկատելի չափով իրականության գունազարդմամբ, շքահանդեսային երանգներով: Ոչ միշտ է ճիշտ լուսաբանվել ազգային մշակույթի լավագույն ավանդույթները զարգացնելու հարցը:

1953 թ. Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում կազմակերպվեց ազգագրության խումբ (1953-1955 թթ. խմբի ղեկավար՝ Է. Կարապետյան, 1955-1959 թթ. ՝ Դ. Վարդումյան), ապա՝ Պատմության ինստիտուտի, Պատմության պետական թանգարանի հնագետ ու ազգագրագետ կադրերի, նաև Գրականության ու Արվեստի ինստիտուտների բանահյուսության և պարարվեստի մասնագետների համախմբմամբ 1959 թ. հիմնվեց ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը (ՀԱԻ, հիմնադիր տնօրեն ՝ Բ. Առաքելյան, 1912-2004): Դրանում ազգագրության (վարիչ՝ Դ. Վարդումյան, 1923-2005) բաժնի ստեղծումը նշանակալի դեր խաղաց հայ ազգագրության զարգացման, մասնավորապես մասնագետ կադրեր պատրաստելու, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու, հանրապետության և արտերկրի հարակից շրջաններում գիտարշավներ կազմակերպելու, ազգագրական ու բանահյուսական նյութեր հավաքելու գործում: Ստեղծվեց գիտական մի կոլեկտիվ, որը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ Հայաստանի հնագիտության, ազգագրության, վիմագրության, բանահյուսության, երաժշտության և պարարվեստի ուսումնասիրությանը: 10 տարում ինստիտուտի աշխատակիցների թիվը 22-ից հասավ 81-ի, որոնցից 56-ը գիտաշխատողներ էին, մեկը՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 7-ը՝ գիտությունների դոկտոր, 30-ը՝

[1] Տե՛ս ***Վարդումյան Դ.,*** Ազգագրական գիտությունը Հայաստանում 1950-1955 թթ. // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, № 9, էջ 127-131:

գիտությունների թեկնածու[2]: 1950-1980-ական թթ. ազգագրագետ երախտավորներից էին՝ Վ. Բդոյանը (1910-1986), Կ. Մելիք-Փաշայանը (1919-1981), Է. Կարապետյանը (1920-1997), Ա. Օդաբաշյանը (1924-1998), Ս. Դավթյանը (1893-1978), Վ. Աբրահամյանը (1908-1986), Ն. Ավագյանը (1922-2007), Կ. Սեղբոսյանը (1928-2009), Լ. Պետրոսյանը (1929-2010), Դ. Վարդումյանը (1923-2005), Յու. Մկրտումյանը (1939-2005), Կ. Աթոյանը (1927-2000), Զ. Խառատյանը (1952-1992) և ուրիշներ: Այս ամենի շնորհիվ ազգագրության բնագավառում տարվող գիտահետազոտական աշխատանքները կենտրոնացան հիմնականում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, իսկ Հայաստանի պատմության պետական թանգարանը շարունակեց զբաղվել ֆոնդերի հարստացմամբ, դրանց գիտական մշակմամբ և ցուցադրումների կազմակերպմամբ: Դաշտային ազգագրական նյութերի գրառման նպատակով գիտական արշավախմբերի կազմակերպման, մասնագետ կադրերի պատրաստման, ասպիրանտական նոր տեղերի ստեղծման, Մոսկվայի, Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), Թբիլիսիի և այլ քաղաքների առաջատար ինստիտուտների հետ մասնագիտական կապերի ստեղծման ու այդ տարիներին հրատարակվող ազգագրական հետազոտությունների մեծ մասի խմբագրման ու հրատարակման գործում անուրանալի ներդրում ունեցավ Դ. Վարդումյանը:

Եթե հետպատերազմյան մի ամբողջ տասնամյակ՝ 1945-1955 թթ., գիտական արշավախմբերը սակավաթիվ անձնակազմ ունեին և կազմակերպվում էին դեպքից դեպք, ապա 1950-ական թվականների կեսերից սկսած՝ դրանք դառնում են բազմանդամ ու բազմապրոֆիլ, ընդլայնվում է նաև դաշտային հետազոտությունների աշխարհագրությունը: Հավաքված նյութերը օգտագործվում են ինչպես թեմատիկ պլանային, այնպես էլ՝ ընդհանրացնող աշխատություններում, որոնք ընդգրկում են ժողովրդական կենցաղի, սովորությունների ու մշակույթի ամենատարբեր կողմերը: Արշա-

[2] Տե՛ս ***Կ. Մելիք-Փաշայան.*** Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 10 տարին // ՊԲՀ, 1970, № 1, էջ 250-253:

վախմբերը գործուղվում են անհատական, փոքր ու մեծ խմբերով և որպես նորույթ՝ տեխնիկական նոր հնարավորություններով (լուսանկարիչ, ճարտարապետ, ձայնագրող՝ համապատասխան սարքավորումներով): Այս և հետագա տարիների դաշտային հետազոտությունների շնորհիվ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում ստեղծվեց ազգագրական գրառված և պատկերազարդային (լուսանկարներ, կինոֆիլմեր, չափագրություններ) և այլ նյութերի հարուստ արխիվ: Ազգագրական դաշտային աշխատանքներն ամփոփվում են համամիութենական գիտական նստաշրջաններում հաշվետվությունների ձևով: Այս շրջանում ուրվագծվում է նաև հայ ազգագրագետների նախասիրությունների շրջանակը:

Ազգագրության և բանահյուսության զարգացման համար նշանակալի ձեռնարկում էր 1970 թ. «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (ՀԱԲ) մատենաշարի ստեղծումը Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Բացառիկ էր դրա նշանակությունը հատկապես պատմաազգագրական շրջանների ու գաղթօջախների վերաբերյալ, ինչպես նաև թեմատիկ-մենագրական բնույթի հետազոտությունների հրապարակման առումով: Դրանով իսկ նորովի վերականգնվում են «Ազգագրական հանդեսի» (1896-1916) ընդհատված ավանդույթները: Հայ ազգագրագետների ջանքերով հրատարակվել են նաև «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի՝ «Կովկասի ժողովուրդները» հատորի «Հայեր» բաժինը»[3], «Երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի «Հայաստան» բաժինը[4]:

1978 թ. փետրվարի 16-ին Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ Սարդարապատում հիմնվեց Հայաստանի ազգագրության, ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանը (ՀԱԱՊԹ, հիմնադիր տնօրեն՝ Լավրենտի Բարսեղյան, 1937-2014): Բացառիկ է նաև այս թանգարանի դերը. այն շուտով վերած-

[3] Տե՛ս Армяне // Народы Кавказа, т. II, серия «Народы мира. Этнографические очерки», Москва, 1962, с. 435-602:

[4] Տե՛ս Армения // Страны и народы. Советский Союз (Республики Закавказья. Республики Средней Азии. Казахстан), Москва, 1984, с. 101-141:

վում է գիտամշակութային ու կրթադաստիարակչական համալիրի, որտեղ պահպանվում, ցուցադրվում և ուսումնասիրվում են հայ ժողովրդի մշակութային ժառանգությանը վերաբերող պատմամշակութային արժեքներ՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այստեղ կենտրոնացվել են 70 հազարից ավելի մշակութային արժեքներ՝ հավաքածուների 5 թեմատիկ բաժիններով՝ 1. հնագիտական՝ հնագույն և միջնադարյան արվեստ, արհեստներ, կրոնապաշտամունքային առարկաներ, 2. ազգագրական՝ աշխատանքի գործիքներ, արհեստներ, ազգային խոհանոց, օժանդակ տնտեսաձևեր, գորգ ու կարպետ, ժանյակ, ասեղնագործություն, կահույք, ազգային տարազ ու զարդեր, ընտանիքին և ազգային տոնացույցին վերաբերող առարկաներ, 3. լուսանկարներ, նկարներ, փաստաթղթեր, արխիվային նյութեր, 4. ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ, 5. այլ ժողովուրդների էթնիկ մշակույթին առնչվող նմուշներ: Թանգարանը ծավալում է նաև գիտակազմակերպչական գործունեություն: Այստեղ պահվող հարուստ ու բազմաբնույթ հավաքածուները գիտացուցադրական և գիտահետազոտական լայն գործունեության հնարավորություն են ընձեռել:

Դրվատելի է Հայաստանի պատմության պետական թանգարանի (ՀՊՊԹ) ազգագրության բաժնի վարիչների հետագա գործունեությունը [Վ. Բդոյան (1949-1959), Վ. Աբրահամյան (1959-1979), Ն. Ավագյան (1979-1989)], ինչպես և Սարդարապատի ազգագրության թանգարանի [տնօրեն՝ Լ. Բարսեղյան (1978-1986)] դերն ազգագրական ու հնագիտական հավաքածուների ձեռքբերման և ցուցադրությունների կազմակերպման, գիտական հետազոտությունների իրականացման գործում:

Ազգագրագետ կադրերի պատրաստման, պատմաազգագրական հետազոտությունների իրականացման գործում նշանակալի դեր խաղաց ԵՊՀ պատմության ֆակուլտետում 1969 թ. հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության բաժնի ու համանուն ամբիոնի ստեղծումը (վարիչ՝ Ա. Գ. Աբրահամյան, 1903-1983): Դրանով հանրապետությունում նոր հեռանկարներ բացվեցին ազգագրագետ կադրերի պատրաստման և առհասարակ ազգագրական գիտության ծավալման համար: Ամբիոնում դասախոսություններ կարդալու համար հրավիրվել էին հանրապետության մի շարք ականավոր գիտնականներ՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ,

որոնց թվում՝ հնագետներ Բ. Առաքելյանը, Բ. Պիոտրովսկին, պատմական գիտությունների դոկտորներ ու թեկնածուների շարքում ազգագրագետներ Վ. Բդոյանը, Կ. Մելիք-Փաշայանը, Դ. Վարդումյանը, աղբյուրագետ-վիմագրագետներ Պ. Մուրադյանը, Ս. Բարխուդարյանը, բանագետ Ս. Հարությունյանը և ուրիշներ:

1970-ական թթ. կեսերին ամբիոնում ազգագրության գծով ասպիրանտուրայում մասնագիտանում են Ռ. Նահապետյանը՝ Վ. Բդոյանի, ապա՝ Ա. Պետրոսյանը Դ. Վարդումյանի ղեկավարությամբ:

1989 թ. հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության ամբիոնի հիմքի վրա ձևավորվեցին, ինքնուրույն ամբիոններ դարձան Հնագիտության և Ազգագրության ամբիոնները: Ազգագրության ամբիոնի առաջին վարիչ դարձավ Յուրի Մկրտումյանը (1989-1994): Այս և հետագա տարիներին Մոսկվայից պարբերաբար դասախոսություններ կարդալու էին հրավիրվում միութենական նշանավոր ազգագրագետներ Ս. Տոկարևը, Ս. Հարությունովը, էթնոսոցիոլոգ Յ. Հարությունյանն ու ուրիշներ: 1974 թ. հրատարակել է Վ. Բդոյանի «Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ)» բուհական ուսումնական ձեռնարկը:

Այս շրջափուլում հայ ժողովրդի ազգագրական հետազոտությունը համապարփակ բնույթ է ստանում թե՛ դաշտային ազգագրական նյութեր ու թանգարանային ցուցանմուշներ հավաքելու, թե՛ թեմատիկ ուսումնասիրություններ կատարելու առումով: Օգտագործելով 1964 թ. Մոսկվայում կայացած Մարդաբանական ու ազգագրական գիտությունների միջազգային VII, 1973 թ. Չիկագոյի (ԱՄՆ) համաժողովների, 1987 թ. Երևանի համամիութենական գիտաժողովի մասնակիցների հետ սերտ շփումների հնարավորությունները և շարունակելով հայ ազգագրության ավանդույթները՝ հայ գիտնականները հրատարակեցին հայոց տնտեսական զբաղմունքներին, նյութական և հոգևոր մշակույթին, հասարակական-ընտանեկան հարաբերություններին, կենցաղին ու սովորույթներին, ինչպես նաև՝ խորհրդային շրջանում դրանց վերափոխությանը նվիրված աշխատություններ:

1980-ական թվականները հատկանշվում են տակավին 1950-ական թթ. սկսված երիտասարդ, խոստումնալից կադրերի պատրաստմամբ, հատկապես՝ ասպիրանտուրայի միջոցով: Այդպիսի

հնարավորություններ ունեին ինչպես Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության ու 1981 թ. հիմնված էթնոսոցիոլոգիայի (հիմնադիր-վարիչ՝ Է. Կարապետյան) բաժինները, այնպես էլ՝ ԵՊՀ ազգագրության ամբիոնը: Այս ամենով հնարավոր եղավ համապատասխան կադրերով պարբերաբար համալրել ազգագրական հաստատությունների, Հայաստանի ազգագրության թանգարանի (Սարդարապատ) և հանրապետության մյուս թանգարանների գիտական աշխատակազմերը: Հայ ազգագրությամբ ակտիվ զբաղվողներից էին նաև Ռուսաստանի ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի Կովկասի բաժնի վարիչ, ՌԴ ԳԱ թղթակից անդամ, պատմագիտության դոկտոր Ս. Հարությունովն ու նույն ինստիտուտի գիտական քարտուղար, պատմագիտության դոկտոր Ա. Տեր-Սարգսյանցը:

1950-1980-ական թվականներին սկզբնապես Պատմության ինստիտուտի, ապա ՀԱԻ ամենամյա գիտարշավների ու անհատական գործուղումների, նաև ՀՊՊԹ և ՀԱԱՊԹ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի ազգագրության ամբիոնի գիտարշավների միջոցով ազգագրական հետազոտության են ենթարկվել Խորհրդային Հայաստանի պատմաազգագրական շրջանները, իհարկե ոչ ամբողջությամբ, դժվարություններով հանդերձ՝ Արցախն ու Ուտիքը, Ջավախքի, Բոլնիս-Դմանիսի, Աբխազիայի, Կրասնոդարի երկրամասի և Ռոստովի մարզի հայաբնակ շրջանները[5]: Արժեքավոր նյութեր են հայթայթվել նաև սիրող բանահավաքների միջոցով, որոնց շնորհիվ համապատասխան հաստատություններում հարստացվել են արխիվային պահոցները: Այս շրջանում աշխուժանում է ժողովուրդների ժամանակակից կենցաղի ու մշակույթի ուսումնասիրությունը: Եթե մինչ այդ ազգագրագետն արդի կենցաղը դիտում էր միայն տոհմային կարգերի վերապրուկները հայտնաբերելու մղումով, ապա այժմ առաջին պլան է մղվում ժողովրդի կենցաղը հենց իր գործողության, հասարակական մյուս երևույթների հետ փոխադարձ կապի մեջ քննելու միտումը:

---

[5] Տե՛ս ***Вардумян Д.,*** Некоторые материалы по этнографии армян // «Краткие сообщения» института этнографии им. Н. Н. Миклухо-Маклая АН СССР, т. XXXIII, Москва, 1960, с. 31-38, նույնի՝ Ռոստովի մարզի հայերի մշակույթի և կենցաղի մասին // ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1961, № 10, էջ 87-99:

Եթե գնահատելու լինենք 1950-80-ական թվականների ազգագրական ձեռքբերումները՝ դաշտային նյութի, թանգարանային ցուցանմուշներ հավաքելու, թեմատիկ ուսումնասիրություններ կատարելու առումով, ապա այդ ժամանակահատվածը կարելի է համարել մեծ առաջընթացի շրջափուլ: Այժմ փորձենք դրանք արձանագրել ըստ հայ ազգագրության առանձին ոլորտների:

Արտադրական մշակույթ: Հայ ազգագրագետները խնդրո առարկա ժամանակամիջոցում մեծապես կարևորել են զբաղմունքների՝ երկրագործական և անասնապահական մշակույթների ուսումնասիրությունը[6]: Առանձնապես նշելի է Վ. Բդոյանի՝ իբրև հայ ազգագրության անխոնջ մշակի գործունեությունը: Այսպես՝ 1950 թ. լույս է տեսել նրա «Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ»[7] թեկնածուական ատենախոսությունը, որում քննության են առնվել երկրագործական պաշտամունքին առնչվող հարցերը: Նրա «Երկրագործական մշակույթը Հայաստանում» ծավալուն մենագրությունը նախադեպը չունի ազգագրական գիտության մեջ: Դրա համառոտ տարբերակը 1972 թ. լույս է տեսել Հունգարիայում» գերմաներեն: Վարող տեխնիկայի մանրակրկիտ ուսումնասիրությունից Վ. Բդոյանին պարզ է դարձել Հայաստանում գոյություն է ունեցել դաշտամշակության երկու գլխավոր համալիր՝ շաղացան, որը համընդհանուր էր ամբողջ երկրում, և շարքացան, որը կիրառված է եղել Վանա լճի ավազանում, որի հնամենիությունը փոխանցվել է ուրարտական շրջանից: Գրքում մանրամասն նաև ուսումնասիրված են վարող, փխրեցնող ու հարթող արտադրամիջոցները, լծասարքերը, բերքահավաքի գործիքները, կալսելու տեխնիկան, աշխատաեղանակները, աշխատանքը կազմակերպելու համայնքային ձևերը, երկրագործական պաշտամունքի դրսևորումները և այլն:

Հայոց անասնապահական մշակույթին նվիրված «Անասնապահության ձևերն Արևելյան Հայաստանում» իր աշխատության

---

[6] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, ***Мкртумян Ю.***, Формы скотоводства в Северо-восточной Армении (вторая половина XIX-начало XX в.) (историко-этнографическое исследование) // ՀԱԲ, հ. 6, Երևան, 1974, էջ 7-92:

[7] Տե՛ս Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի (այսուհետ՝ ԱՀՊՊԹ), հ. 3, Երևան, 1950, էջ 5-72:

մեջ Յ. Մկրտումյանը ներկայացրել է հյուսիսարևելյան Հայաստանի անասնապահության պատմական զարգացման առանձնահատկությունները XIX դարավերջին և XX դարասկզբին, նստակյաց ու հեռագնա անասնապահությունը և տարածվածության շրջանակները, անասնապահական աշխատանքի կազմակերպման հնավանդ ձևերը, յուրահատկությունները: Հետազոտության մեջ առանձնապես գիտական հետաքրքրություն են ներկայացնում անասուններն արածեցնելու համար ստեղծված ընկերակցությունները («Սարի համգյալ») ու անասնապահների անհատական և հասարակական վարձակալման ձևերի հարցը: Նա բացահայտել է ընկերակցությունների երեք ձև՝ կարողությամբ հավասար ազգականների, կարողությամբ հավասար հարևանների և կարողությամբ տարբեր հարևանների ու ազգականների: Դրանց ազգագրական ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բացահայտելու հասարակական կազմակերպությունների հնավանդ ձևերի այն մնացուկները, որոնք դեռևս XIX դարի երկրորդ կեսին և XX դարասկզբին պահպանվել էին հայկական իրականության մեջ: Գրքում հմտորեն բացահայտվել են անասնապահական մշակույթով պայմանավորված բնակավայրերի տիպերը, կթնատնտեսական սպասքը, յուրահատուկ հագուստը, ուտեստը, ընտանիքների գերդաստանական կենսակերպը, հայ կնոջ ակտիվ դերը և բարձր հեղինակությունը. հարցեր, որոնք կարևոր են հայ ժողովրդի պատմության ու ազգագրության ուսումնասիրման տեսանկյունից: Նրա ուշագրավ հետազոտություններից մեկն էլ նվիրված է Անդրկովկասի ժողովուրդների անասնապահության ձևերի ուսումնասիրությանը[8]:

Հայոց օժանդակ տնտեսաձևերից շերամապահական ու մեղվապահական մշակույթներին են նվիրված Ա. Պետրոսյանի «Հայոց շերամապահական մշակույթը» (1987) և Ա. Գասպարյանի «Մեղվաբուծությունը Հայաստանում» (1982) մենագրությունները: Երկու աշխատություններն էլ գրվել են մատենագիտական, հնագիտական և, հատկապես, ազգագրական նյութերի համեմատական ուսումնասիրության հիման վրա, շարադրված են դրանց սկզբնա-

[8] Տե՛ս ***Мкртумян Ю. И.,*** К изучению форм скотоводства у народов Закавказья // Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX-XX вв. Москва, 1971, с. 116-135:

վորման պատմությունը, տնտեսության այդ ճյուղերում դարերով կուտակված հավատալիքներն ու ծեսերը, դրանց կիրառական կարևոր նշանակությունը: Մեզանում, սակայն, մինչև 1980-ական թվականներն ուշադրություն չէր դարձվում տնտեսության այնպիսի օժանդակ ճյուղերի ուսումնասիրությանը, ինչպիսիք են՝ թռչնաբուծությունը, որսորդությունն ու ձկնորսությունը և տնայնագործությունը:

Միջնադարյան Հայաստանի արհեստներն ուսումնասիրել են Վ. Աբրահամյանն ու Բ. Առաքելյանը: Վ. Աբրահամյանը հայ և օտար մատենագիրների, ճանապարհորդների տեղեկությունների հիման վրա գրել է «Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ.» (1956), նաև «Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբը)» (1971) աշխատությունները: Գրքերում հեղինակը մանրամասն անդրադարձել է միջնադարյան Հայաստանի տնտեսական-քաղաքական կյանքի, արհեստների ամենաբազմազան կողմերի և, վերջապես, արհեստավորական համքարային կազմակերպությունների, դրանց ներքին ու վարչական կառուցվածքի վերաբերյալ հարցերին:

«Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.» երկհատոր (հ. 1, 1958, էջ 133-353, հ. 2, 1964, էջ 124-205) աշխատության մեջ Բ. Առաքելյանը հանգամանորեն, առանձին գլուխներով, ըստ հայ և օտար աղբյուրների տվյալների, ներկայացրել է արհեստների բազմաթիվ տեսակներ՝ մետաղագործություն (դարբնություն, զինագործություն, պղնձագործություն, ոսկերչություն), նաև փայտի մշակում, փորագրում, քարակոփություն, շինարարական, կավագործության և ապակեգործության, գործվածքների, գորգերի ու կաշվեղենի արտադրության հետ կապված արհեստներ, գրչություն և կազմարարություն, դեղորայքի ու անուշահոտ յուղերի պատրաստում և բազմաթիվ այլ արհեստատեսակներ: Երկրորդ հատորում էլ անդրադարձել է IX-XIII դարերի արհեստավորական համքարությունների գործունեությանը:

Արհեստների ուսումնասիրությանն է նվիրված Կ. Սեղբոսյանի «Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում» (ՀԱԲ, հ. 6, 1974) ուսումնասիրությունը, որը, ի տարբերություն նախորդների, հիմ-

նականում գրվել է տասնյակ տարիների ընթացքում հեղինակի գրառած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա: Սույն աշխատության մեջ պատմաազգագրական տեսանկյունից քննվում են Լենինականի (Գյումրի) քաղաքի արհեստավորական հիմնական ավանդույթներն ու համքարությունների գործունեությունը, կենցաղային սովորույթները և դրանց վերափոխումը քաղաքային կյանքի պայմաններում:

Խեցեգործության, բրուտագործության արհեստներին է նվիրված Ե. Սարգսյանի ուսումնասիրությունը[9], որը խեցեգործության գծով ներկայացնում է XIX դարավերջի և XX դարի նյութերը, արտադրվող պարագաների տեսակները, աշխատանքի գործիքներն ու աշխատաեղանակները, խեցեգործական արվեստը:

Արտադրական մշակույթի կարևոր ոլորտներից մեկն էլ ժողովրդական փոխադրամիջոցներն են: Խնդրին հնագիտական պեղումների արդյունքներով այս կամ այն չափով անդրադարձել է Բ. Պիոտրովսկին[10]: 1950-1960-ական թթ. Սևանա լճի ավազանի Լճաշեն գյուղի մոտակայքում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել են տակավին ուշ բրոնզի դարաշրջանի (մ. թ. ա. XIV-XIII դդ.) մի քանի երկանիվ ու քառանիվ սայլեր, ծածկավոր քառանիվ շքասայլեր, որոնք Լալայանի պեղած սայլի տարատեսակներն են: Այնտեղ գտնվել են նաև ճաղավոր անիվներով կառքեր, որոնք նման են ուրարտական ռազմակառքերին: Այս նյութերը հնագետ Հ. Մնացականյանը հրատարակել է առանձին հոդվածներով[11]: Հնագույն փոխադրամիջոցների տեսակներով ու դրանց զարգացման հարցերով է զբաղվել հնագետ Ս. Եսայանը[12]:

---

[9] Տե՛ս ***Саркисян Е.,*** Гончарное искусство Армении, Ереван, 1978:

[10] Տե՛ս ***Пиотровский Б.,*** Ванское царство. Москва, 1959, с. 151-152: Հմմտ. նույնի՝ Искусство Урарту. VIII-VI вв. до н. э., Л., 1962, с. 72-77, 107:

[11] Տե՛ս ***Мнацаканян А.,*** Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан. // «Советская археология», 1957, № 2, с. 146-154, 1960, № 2, с. 139-153, «Краткие сообщения института археологии», 1961, вып. 85, с. 66-73:

[12] ***Есаян С.,*** Об одной неправильной реконструкции // ԱՀՊՊԹ, հ. V, Երևան, 1959, էջ 95-103, նույնի՝ Из истории колесного транспорта

Նա հատկապես անդրադարձել է մ.թ.ա. XV-XIII դարերի անիվավոր փոխադրամիջոցների պատմությանը. հետազոտման նյութերը վերաբերում են պեղածո երկանիվ և քառանիվ բեռնատար սայլերին, երկանիվ կառքերին, ռազմակառքերին: Դրանց նախնական տիպերը բնութագրող պատկերներ են պարունակում Սյունիքի և Գեղարքունյաց ժայռապատկերները, որոնց ակունքները հասնում են մ.թ.ա.V-IV հազարամյակները[13]: Հնագիտական, մատենագրական, մասնավորապես ազգագրական նյութերի հիման վրա փոխադրամիջոցներին է նվիրված Լևոն Պետրոսյանի[14] մենագրությունը: Նա առավել հանգամանորեն է անդրադաձել հայոց հաղորդակցության երթուղիներին, փոխադրամիջոցների տեսակներին, հարմարանքներին ու եղանակներին: Հեղինակն առանձին հոդվածներով նաև անդրադարձել է ազդանշանային հաղորդակցության միջոցներին, հատկապես հայ ժողովրդի կենցաղում ու ռազմական պայմաններում լայնորեն կիրառություն գտած հնչյունային և տեսողական ազդանշանային համակարգին[15]:

Ուսումնասիրվել և շարունակվում են հետազոտվել հայկական չափ ու կշիռների համակարգերը: Շատ արժեքավոր են կշիռների, երկարության և մակերեսների, չափական համակարգերի վերաբերյալ Ռ. Վարդանյանի հետազոտությունները[16]: Վերջինս այս բնագավառում թարմություն է հաղորդում Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի հնագույն ձեռագրերի շնորհիվ, որոնք պահպանում են ճշգրիտ ու չուսումնասիրված տվյալներ: Այս և իր գրառած տվյալների հիման վրա նա հետազոտել է չափման միավորները:

Կենսապահովման մշակույթ: Կենսապահովման մշակույթի

Древней Армении // ИФЖ, 1960, № 3, с. 141-151, նույնի՝ Оружие и военное дело Древней Армении (III-I тыс. до н. э.), Ереван, 1966:

[13] Տե՛ս ***Կարախանյան Գ., Սաֆյան Պ.***, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970, էջ 31-35, ***Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.***, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971, էջ 13-14, 25-26:

[14] Տե՛ս ***Պետրոսյան Լ.***, Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ: Հետիոտն և գրաստային փոխադրամիջոցներ (պատմաազգագրական ուսումնասիրություն) // ՀԱԲ, հ. 6, էջ 93-158:

[15] Տե՛ս ***Պետրոսյան Լ.***, Հաղորդակցության ազդանշանային կամ պայմանական միջոցները հայերի մեջ // ՊԲՀ, 1968, № 3, էջ 191-198:

[16] Տե՛ս ***Վարդանյան Ռ.***, Երկարության և հողի մակերեսի չափական համակարգերը Հայաստանում, Երևան, 1969:

կարևոր ոլորտներ են հայկական բնակավայրերն ու կառույցները: Համառոտ գծերով հայկական բնակավայրի ու բնակարանի համալիրների ուսումնասիրությունը տրված է «Народы мира» մատենաշարի «Народы Кавказа», II հատորում (էջ 504-513): XX դարի 60-80-ական թթ. հրատարակվեցին դրանց վերաբերյալ մի շարք ուսումնասիրություններ, որոնք, սակայն, հիմնականում ճարտարապետական ուղղվածության էին: Առավել հիշատակելի է Ս. Մնացականյանի[17] աշխատությունը, որում տրված են խորհրդային շրջանում հայկական ավանդական բնակավայրերի վերափոխման օրինաչափությունները: Այստեղ վերջինս շեշտը դրել է կոլեկտիվացման տարիների գյուղական բնակավայրերի հատակագծման ու կառուցապատման, կոլտնտեսային արտադրական կառուցվածքների, գյուղական բնակելի տան և գյուղական բնակավայրերի, հասարակական կառուցվածքների վերափոխումների վրա:

Ազգագրական առումով փոխադարձ ազդեցություններով պայմանավորված՝ հայկական և վրացական տների համանման կողմերին է անդրադարձել Ռ. Աղաբաբյանը[18]: Ճարտարապետական, ինչ-որ չափով նաև ազգագրական առումով հանգամանալի հետազոտություն է կատարված Ս. Վարդանյանի կողմից[19]: Վերջինս ներկայացրել է ժողովրդական բնակելի տների աստիճանական զարգացման պատմությունը՝ սկսած պարզագույն օթևանից մինչև բարդ հատակագծային բնակելի տները: Հանգամանորեն շարադրված է բնակելի տների էվոլյուցիան՝ կապված հայ ժողովրդի նյութական ու մշակութային կյանքի զարգացման, երկրի աշխարհագրական առանձնահատուկ պայմանների, տեղական շինանյութերի առկայության հետ և այլն: Աշտարակի ժողովրդական տան կառուցման սկզբունքներին են նվիրված Է. Հակոբյանի[20], Սյունի-

[17] Տե՛ս ***Մնացականյան Ս.,*** Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Երևան, 1956:

[18] Տե՛ս ***Агабабян Р. А.,*** Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950:

[19] Տե՛ս***Վարդանյան Ս.,*** Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, Երևան, 1959:

[20] Տե՛ս ***Հակոբյան Է.,*** Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը, Երևան, 1964:

քի ժողովրդական տան ճարտարապետությանը Ն. Պապուխյանի[21], Գյումրիի ժողովրդական ճարտարապետությանը՝ Ս. Մաթևոսյանի[22] և մյուսների աշխատությունները: Դրանցում հեղինակները բնութագրել են տարածաշրջաններին բնորոշ ժողովրդական ինքնատիպ ճարտարապետական լուծումները: Հազարամյակների խորքից եկող այդ ժառանգության նյութական մնացորդները նրանց կողմից չափագրվել, լուսանկարվել և վերլուծության են ենթարկվել: Շոշափվել են հին քաղաքների, ավանների և գյուղերի կառուցապատման, տարբեր բնույթի շենքերի ու շինությունների կառուցվածքային, համադրվածքային և գեղարվեստական առանձնահատկությունները: Այդ նույն սկզբունքով Հայաստանի արտադրական կառույցների՝ ձիթհանների, ջրաղացների և հնձանների ուսումնասիրությանն է նվիրված Հ. Խալփախչյանի[23] մենագրությունը: Աշխատության մեջ շարադրվում են ինչպես անցյալում, այնպես էլ խորհրդային տարիներին լայնորեն տարածված արտադրական կառուցվածքների կոմպոզիցիոն ու կառուցողական առանձնահատկությունները, նաև դրանց ճարտարապետական ձևերի զարգացման պատմական փուլերի ընդհանրությունը: Նույն հեղինակը հանգամանալի ուսումնասիրություն է նվիրել նաև Հայաստանի քաղաքացիական ճարտարապետությանը[24]: Գիտնականն անդրադարձել է Հայաստանի ժողովրդական վարպետների շինարարական ավանդույթներին, միջնադարյան Ռուսիայի ու Հայաստանի շինարարական մշակութային կապերին, Հայկական լեռնաշխարհի հնագույն շինարարական մշակույթին[25]:

---

[21] Տե՛ս ***Պապուխյան Ն.,*** Սյունիքի ժողովրդական բնակարանի ճարտարապետություն, Երևան, 1972:

[22] Տե՛ս ***Մաթևոսյան Ս.***, Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1965:

[23] Տե՛ս ***Խալփախչյան Հ.,*** Հայաստանի արտադրական կառուցվածքները, Երևան, 1961:

[24] Տե՛ս ***Халпахчьян О.,*** Гражданское зодчество Армении (жилые и общественные здания), Москва, 1971:

[25] Տե՛ս ***Халпахчьян О.,*** Строительные традиции народных мастеров Армении (Материалы к истории строительного искусства на примере памятников Санаина) // «Архитектурное наследство» (Москва), 1953, № 3, с. 36-78, նույնի՝ Культурные связи Владимиро-Суздальской Руси

Հայկական ժողովրդական կառույցների ուսումնասիրման որոշ հարցեր է շոշափում նաև վրացի ազգագրագետ Թ. Ա. Չիկովանին[26], որը հիմնականում անդրադարձել է հայոց ավանդական բնակարանի հիմնական տիպի՝ գլխատան և վրաց «դարբազիների» ծագումնաբանական ու կառուցվածքային առնչակցության հարցերին:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժինը, մի կողմից, հայկական ժողովրդական շենքերին նվիրված ատլասը կազմելու, մյուս կողմից՝ հիմնախնդիրը ազգագրական համալիր ուսումնասիրության ենթարկելու անհրաժեշտությունից մղված, 1950-ական թվականներից հաջորդաբար կազմակերպել է գիտարշավներ Հայաստանում և նրանից դուրս գտնվող հայաշատ վայրերում՝ հնամենի կառույցների մնացորդներն ու նորերը նկարագրելու և չափագրություններ անելու նպատակով: Գիտարշավների միջոցով հարուստ նյութ կուտակվեց ապագա ուսումնասիրության համար: Դրանց մի մասի հիման վրա Դ. Վարդումյանը 1956 թ. հրատարակած աշխատության մեջ[27] ներկայացրել է Լոռու պատմաազգագրական շրջանի շենքերի ժամանակակից տեսակների հետ նաև հին շենքերի տիպերը: Գրեթե նույն ժամանակ Վ. Բդոյանն էլ հրատարակեց «Հայկական կոլտնտեսային տունն ազգագրական տեսակետից» հոդվածը[28] անդրադառնալով 1950-ական թվականների բնակելի և տնտեսական շենքերին ու դրանց զարգացման ընթացքին:

Հայ կոլտնտեսականների բնակարաններին նվիրված բաժին

и Армении. Москва, 1977, նույնի՝ Строительная культура Армянского нагорья с древнейших времен по VII в. до н.э. // «Архитектурное наследство», 1983, № 31, с. 98-132:

[26] Տե՛ս ***Чиковани Т. А.,*** Классификация и генезис закавказского жилища со ступенчато венцеобразным перекрытием // Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX-XX вв., вып. I. Москва, 1971, с. 33-37:

[27] Տե՛ս ***Վարդումյան Դ.,*** Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956, էջ 100-146, *նույնի՝* Характеристика основных этнографических районов Армении в XIX веке, Москва, 1964:

[28] Տե՛ս ***Բդոյան Վ.***, Հայկական կոլտնտեսային տունը ազգագրական տեսանկյունից // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 4, էջ 37-54, նույնի՝ Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 66-95:

ունի Դ. Վարդումյանի և Է. Կարապետյանի համատեղ աշխատությունը[29]: Հայկական տան առանձին բաժանմունքներին է անդրադարձել նաև ռուս ազգագրագետ Մ. Իլյինան[30]: Մեկ այլ խորհրդային հետազոտող՝ Վ. Վիտովը, առաջ քաշեց բնակավայրերի և բնակարանների դասակարգման չափանիշներ, որոնք հետագայում դարձան խորհրդային մյուս հետազոտողների համար մեթոդական ուղենիշներ[31]: Ռուս մեկ այլ հետազոտող Վ. Պ. Կոբիչևը նյութերի բարեխիղճ ուսումնասիրությամբ կարողացել է ճշգրտորեն որոշել հայկական լեռնավայրային տիպի բնակարանի՝ «գլխատան» տարածման շրջանները Արևելյան Անդրկովկասում[32]:

Հիմնախնդրի ուսումնասիրության շրջանակներում հայ գիտական ազգաբանության մեջ նոր երևույթ էր Է. Մարգարյանի (ղեկավար), Ս. Հարությունովի, Ի. Բարսեղյանի, Ս. Ենգիբարյանի, Է. Մելքոնյանի, Յ. Մկրտումյանի, Կ. Սարինգուլյանի «Կենսապահովման մշակույթը և էթնոսը» խորագրով համատեղ էթնոմշակութաբանական հետազոտությունը[33]: Այստեղ բնակավայրերի ու բնակարանների էթնոմշակութաբանական հետազոտության ուշադրավ փորձ են կատարել Է. Մելքոնյանը և Յ. Մկրտումյանը: Է. Մելքոնյանը Հայաստանի լեռնային (Սյունիք), նախալեռնային (Շիրակ), հովտային (Արարատյան դաշտավայր) արեալների ավանդական և ժամանակակից բնակավայրերի համահայկական տիպերի բնութագրության փորձ է կատարել՝ կախված դրանց ձևավորման վրա ազդող բնաէկոլոգիական, սոցիալ-տնտեսական գործոններից

---

[29] Տե՛ս ***Վարդումյան Դ.***, ***Կարապետյան Է.***, Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, 1963, էջ 29-48:

[30] Տե՛ս ***Ильина М.***, Древнейшие типы жилищ Закавказья. Москва, 1964:

[31] Տե՛ս ***Витов В.***, О классификации поселений // «Советская этнография» (*այսուհետև՝* СЭ), 1953, № 3, с. 27-38:

[32] Տե՛ս ***Кобычев В. П.***, Жилище народов Восточного Закавказья в XIX веке // СЭ, 1957, № 3:

[33] Տե՛ս Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры). Ереван, 1983, Տե՛ս նաև ***Арутюнов С. А., Мкртумян Ю. И.,*** Сельские поселения Армении. Введение // Культура жизнеобеспечения и этнос, с. 110-117:

ու ազգային ավանդույթներից[34]: Յ. Մկրտումյանը, ըստ Հայաստանի երեք խոշոր պատմաազգագրական շրջանների դաշտային ազգագրական առկա նյութերի համեմատման սկզբունքի, ներկայացրել է համահայկական բնակարանային տիպերի ձևավորման գործառութային գործունեության և զարգացման հիմնական առանձնահատկություններն ու ուղղությունները[35]: Այս հարցում հեղինակը շատ է կարևորել բնակարանների տիպերի պայմանավորվածությունն ընտանիքների կազմով ու կառուցվածքով, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով:

1980-ական թթ. ազգագրագետներից Հ. Մարությանը կենցաղամշակութային առումով առավել հանգամանորեն է ուսումնասիրել հայ ժողովրդական բնակարանի ներսույթը[36]: Նա, հայկական ժողովրդական ավանդական բնակարանի գործառութային հակիրճ բնութագրությունը տալուց զատ, ներկայացրել է ժողովրդական բնակարանի ավանդական ջեռուցման և լուսավորության, կահույքի ու կարասու կիրառական և տիպաբանական բնութագրությունը, ներսույթի դեկորատիվ կիրառական տարրերի գեղարվեստական, ճարտարապետական յուրահատկությունները: Այսուհանդերձ, թե՛ հայկական, թե՛ կովկասագիտական ու ընդհանուր ազգագրական գրականության մեջ դեռևս չմշակվեցին բնակարանի՝ որպես սոցիալական ֆենոմենի համալիրի հետազոտման համընդհանուր ճանաչման արժանացած սկզբունքներ: Դրանով հնարավորություն կընձեռվեր պատմահամեմատական խոր վերլուծության հիման վրա կատարելու կենսապահովման մշա-

[34] Տե՛ս ***Мелконян Э.,*** Сельские поселения Армении // Культура жизнеобеспечения и этнос, с. 110-149:

[35] Տե՛ս ***Мкртумян Ю.,*** Сельское жилище армян // Культура жизнеобеспечения и этнос, с. 150-188:

[36] Տե՛ս ***Марутян А. Т.,*** Армянские традиционные зернохранилища (по этнографическим материалам) // «Вестник общественных наук» АН Арм. ССР, 1987, № 7, с. 65-76, նույնի՝ Интерьер армянского народного жилища (вторая половина XIX-начало XX в.). Материалы к «Кавказскому историко-этнографическому атласу» // Армянская этнография и фольклор (материалы и исследования), т. 17, Ереван, 1989, с. 63-142:

կուլթի այդ բաղադրիչի լրիվ և հանգամանալի ուսումնասիրություն: Ցավոք, ինչպես բնակավայրի, այնպես էլ բնակարանի վերաբերյալ առ այսօր հայագիտության մեջ չկա համալիր, ամբողջական հետազոտություն: Եղածներն առանձին հրապարակումներ են ու հոդվածներ: Հայ ազգագրական գիտության խնդիրն է ունենալ հիմնարար, հայկական ավանդական և ժամանակակից բնակավայրին ու բնակարանին նվիրված ամփոփ և ամբողջական մենագրական աշխատություններ:

Կենսապահովման մշակույթի հաջորդ կարևոր ոլորտը հայ ժողովրդական տարազն ու զարդերն են: Այս համալիրն անհամեմատ լավ է ուսումնասիրված, քան նախորդը: Միջնադարյան տարազը, ըստ հայ և օտար մատենագիրների տեղեկությունների, ուսումնասիրել է Վ. Հացունին: Նա միաժամանակ հետազոտել է բուն ազգային տարազը և փոխառված օտար տեսակները: Ազգային տարազի վերաբերյալ նրա գրքի տեղեկություններն ու նկարները ներկայացնում են աշխարհիկ զգեստները և եկեղեցական ծիսական տարազը, իսկ փոփոխվածը՝ արքունի-պալատական, նախարարական և զինվորական հագուստ[37]: Հայաստանի պատմության պետական թանգարանի երկարամյա աշխատող Ա. Պատրիկը իր «Հայկական տարազ» գրքում տվել է հայկական տարազի բազմադարյան պատմության ուրվագիծը վաղնջական ժամանակներից մինչև XX դարի կեսերը՝ ներառելով հայկական ժողովրդական պատմաազգագրական շրջանների տարազաձևերի քարտեզը, նկարների հարուստ ալբոմը՝ 82 տախտակ, ինչպես նաև՝ օտար փոխառված տարազանմուշները[38]: Այս գրքի գիտաճանաչողական արժեքը բացառիկ է, քանզի Վ. Հացունու ուսումնասիրությունն ընդգրկում է միայն մինչև XVI դարը, մինչդեռ Պատրիկը ոչ միայն հնի վրա ավելացրել է նորը, այլև շարունակել է այն մինչև իր ապրած ժամանակներն ու կարողացել է տալ հայ ժողովրդի տարազի ընդհանուր պատկերը: Եվ ամենակարևորը. հեղինակը ջանացել է կորստից փրկել բնաջնջման ենթարկված արևմտահայության զանազան գավառների հատուկ տարազաձևերը, նաև հայրենադարձներից հավաքել հին լուսանկարներ ու սփյուռքում լույս տեսած հայրենակցական և ազգագրական հրատարակություններից քաղել համապա-

[37] Տե՛ս ***Հացունի Վ.***, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1924:
[38] Տե՛ս ***Պատրիկ Ա.***, Հայկական տարազ, Երևան, 1967:

տասխան նյութեր:

1965 թ. Ֆ. Գրիգորյանը հրատարակեց «Հայկական տարազներ» ալբոմը: Հայկական տարազի, ագանելիքների, գլխի հարդարանքների հանգամանալի ուսումնասիրություն է կատարել իր գրառած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա Ն. Ավագյանը[39]: Նա հանգամանորեն ներկայացրել է Հայաստանի պատմա-ազգագրական տարբեր շրջաններին բնորոշ տարազային համալիրների նկարագիրն ու բնութագրությունը: Ն. Ավագյանի գրքում ներկայացված են հայկական տարազի համալիրների բաղկացուցիչ մասերը, նրա տարածման շրջանակները: Տրված են ձևվածքը, օգտագործված կարերի տեսակները, նաև հագուստի զարդարման եղանակները[40]: Այս ուսումնասիրությունը յուրատեսակ, անփոխարինելի ձեռնարկ է և՛ ազգագրագետների, և՛ տարազի մասնագետների, և՛ թատերական, երգի ու պարի համույթների տարազը բեմականացնողների համար: Ուշագրավ է նաև Արցախի հայ բնակչության ժողովրդական հագուստի վերաբերյալ նրա մյուս հետազոտությունը[41]: Հայկական տարազի պատմագրությանն ու պատմաազգագրական շրջանների տարազային յուրահատկություններին է անդրադարձել նաև Վ. Բդոյանը[42]: Ուրարտական զգեստին են անդրադարձել Ս. Եսայանն ու Ս. Հմայակյանը[43], իսկ հելլենիստական դարաշրջանի հայկական տարազին՝ Գ. Տիրացյանը[44], Պոնտոսի հայության տարազի վերաբերյալ ուշագրավ է

[39] Տե՛ս ***Ավագյան Ն.,*** Հայկական ժողովրդական տարազ (XIX դ.-XX դ. սկիզբ), Երևան, 1983:

[40] Տե՛ս ***Авакян Н.,*** Способы орнаментации традиционной одежды армян в XIX-XX вв. // СЭ, 1972, № 4, с. 108-117, նույնի՝ Об ареалах народного костюма армян (XIX-начало XX в.) // «Кавказский этнографический сборник» (այսուհետ՝ КЭС), т. VI, Москва, 1976, с. 188-200:

[41] Տե՛ս ***Авакян Н.,*** Народная одежда армян Арцаха в XIX-начале XX в. // Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX-XX вв., вып. I, Москва, 1971, с. 209-223:

[42] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրություն, էջ 95-112:

[43] Տե՛ս ***Եսայան Ս., Հմայակյան Ս.,*** Ուրարտական զգեստ // ՊԲՀ, 1980, № 3, էջ 203-215:

[44] Տե՛ս ***Տիրացյան Գ.***. Դիտողություններ հելլենիստական դարաշրջանի հայկական տարազի մասին // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1959, № 11-12, էջ 97-101:

Ի. Կուզնեցովի աշխատությունը[45]: Պարագետ Սրբուհի Լիսիցյանը, պարարվեստի հետ ունեցած անմիջական առնչությունները նկատի ունենալով, իր «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները»[46] երկհատոր աշխատության մեջ զետեղել է տասնյակ տարազաձևեր:

Կենսապահովման մշակույթի կարևոր բաղադրամասերից մեկն էլ ուտեստի և ըմպելիքների համակարգն է: Միջնադարյան ուտեստը մատենագիրների տեղեկությունների հիման վրա հանգամանորեն ուսումնասիրել է Վ. Հացունին[47]: Ցավոք, առ այսօր այս հիմնախնդիրն ազգագրական առումով անբավարար է ուսումնասիրված: 1960 թ. ռուսերեն, իսկ 1963 թ. հայերեն լույս է տեսել «Հայկական խոհանոց» գիրքը: Ուշագրավ են Լ. Հարությունյանի[48] և Ս. Երեմյանի[49] վերոնշյալ գրքում զետեղած ուսումնասիրությունները: Ուտեստի վերաբերյալ առատ նյութ է զետեղված Վ. Բդոյանի «Երկրագործական մշակույթը Հայաստանում» աշխատության մեջ: Հայկական ուտեստի և հացկերույթների վերաբերյալ տեսական ընդհանրացնող ուսումնասիրություն է կատարված 1983 թ. Երևանում լույս տեսած «Культура жизнеобеспечения и этнос» գրքի երրորդ՝ «Система питания» գլխում Ս. Հարությունովի, Յ. Մկրտումյանի հեղինակությամբ (էջ 189-253): Ուշագրավ է ուտեստի համալիրի վերաբերյալ Ս. Հարությունովի ընդհանուր եզրահանգումների վերաբերյալ բաժինը[50]:

Սոցիոնորմատիվ մշակույթ: Այս հիմնահարցերի վերաբերյալ 1950-ական թթ. իրենց ներդրումն ունեցան հայ ազգագրության երիտասարդ սերնդի ներկայացուցիչները՝ Վ. Բդոյանը, Է. Կարապետյանը, Դ. Վարդումյանը և այլք: Հայկական գյուղական ըն-

[45] Տե՛ս ***Кузнецов И.***, Одежда народов Понта, Москва, 1955:

[46] Տե՛ս ***Лисицян С. С.,*** Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван, 1958, т. II, Ереван, 1972:

[47] ***Հացունի Վ.,*** Ճաշեր և խնջույք հին Հայաստանի մեջ, Վենետիկ, 1912:

[48] Տե՛ս ***Арутюнян Л.,*** О некоторых особенностях питания армянского народа // Армянская кулинария, Москва, 1960, с. 29-36:

[49] Տե՛ս ***Еремян С.,*** Естественно-исторические основы питания армянского народа // Армянская кулинария, с. 21-28:

[50] Տե՛ս ***Арутюнов С. А.,*** Система питания. Общие выводы // Культура жизнеобеспечения и этнос, с. 254-270:

տանիքի ձևերի, դրանց կառուցվածքի, ներընտանեկան հարաբերությունների, նոր երևույթ դարձած սովորույթների, հայոց հարսանեկան ծեսերի և ազգ-արենակցական խմբերի վերաբերյալ ուշագրավ հոդվածներ հրատարակեց նաև Վ. Բդոյանը[51]: Հայաստանի պատմության պետական թանգարանի գիտաշխատող Է. Կարապետյանն էլ հրատարակեց «Գլխագինը հայոց հարսանեկան սովորույթների մեջ և նրա սոցիալ-տնտեսական արմատները» ռուսերեն թեկնածուական ատենախոսության սեղմագիրը[52]: Այդ տարիներին Դ. Վարդումյանն ի մի բերեց իր կատարած դաշտային հետազոտությունների արդյունքները և հրատարակեց շատ արժեքավոր, համընդգրկուն ուսումնասիրություն՝ «Լոռեցիների նոր կենցաղը»[53] վերնագրով: Այստեղ համառոտ ներկայացված են խորհրդային հասարակարգում լոռեցիների կենցաղում տեղի ունեցած արմատական փոփոխությունները: Ըստ էության, սա հայերի հին ու նոր կենցաղի հիմնական և բնորոշ կողմերի համեմատական ուսումնասիրության մի փորձ է:

1960-80-ական թթ. հայ ազգագրական գիտության մեջ կարևոր ուշադրություն է դարձվել ընտանեկան և ազգակցական հարաբերություններին ու համայնքային կազմակերպություններին: Հայերի գերդաստանին, ազգակցական համակարգին է անդրադարձել Մ. Օ. Կոսվեն իր աշխատություններում[54]: Կովկասի ժողովուրդների ազգագրության տարբեր հարցերին նվիրված իր թեմա-

[51] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Կոլտնտեսային ընտանեկան հարաբերություններ.- ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, № 7, էջ 25-39, նույնի՝ Հարսանեկան ծեսերի ու սովորույթների նկարագիր, գրանցված 14-րդ դարում //«Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 53-56, նույնի՝ Кровнородственный «азг» и родственные отношения у армян // СЭ, 1952, № 1, с. 189-192:

[52] Տե՛ս ***Карапетян Э.,*** Выкуп в свадебных обрядах армян и его социально-экономические корни // Труды государственного исторического музея Армении, т. 3, Ереван, 1950, с. 73-146:

[53] Տե՛ս ***Վարդումյան Դ.,*** Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956:

[54] Տե՛ս ***Косвен О.,*** Очерки по этнографии Кавказа // СЭ, 1946, № 2, նույնի՝ Семейная община и патрономия. Москва, 1963, նույնի՝ История и этнография Кавказа (исследования и материалы). М., 1961, նույնի՝ Կովկասի ժողովուրդների պատրոնոմիան // ՊԲՀ, 1963, № 1, էջ 93-107:

տիկ ուսումնասիրություններում Կոսվենը խիստ ուշագրավ ընդ-հանրացումներ է կատարել՝ հմտորեն օգտագործելով նաև հայ ժողովրդի կենցաղին ու սովորույթներին վերաբերող նյութերը: Նրա ղեկավարությամբ առավել հանգամանորեն առանձին մենա-գրություններով հանդես է եկել Է. Կարապետյանը: Նա իբրև դոկ-տորական ատենախոսություն հրատարակել է երկու ուշագրավ աշ-խատություն, որոնք նոր խոսք էին հայ գիտական ազգագրու-թյան մեջ[55]: Գոյություն ունեցող գրավոր աղբյուրների և իր իսկ հավաքած դաշտային ազգագրական նյութերի համեմատական քննությամբ հեղինակը խոր ու մանրազնին վերլուծության է են-թարկել հայ նահապետական գերդաստանը: «Հայերի ընտանեկան համայնքը» աշխատության մեջ դիտարկվել ու, ըստ ամենայնի, մեկնաբանվել են հայ ընտանեական համայնքի տնտեսական բա-զայի, կազմի ու կառուցվածքի, անդամների աշխատանքային և գույքային-իրավական փոխհարաբերությունների ուշագրավ բազում հարցեր: Հայտնի է, որ ընտանեական համայնքի զարգաց-ման ներքին օրինաչափությունների համակարգում, նահապետա-կան-հայրիրավական սկզբունքների դրսևորման զանազան ձևե-րում կարևոր տեղ են զբաղեցնում նաև ազգակցական հարաբերու-թյունները, որոնց ուսումնասիրությանն է նվիրված Է. Կարա-պետյանի «Ազգ-արենակցական խումբը հայերի մեջ» աշխատու-թյունը: Դ. Վարդումյանը և Է. Կարապետյանը համատեղ հրատա-րակել են «Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտա-նեկան կենցաղը» աշխատությունը (1963): Գրքի հեղինակները խորհրդային ընտանիքի կենցաղը և ներընտանեական հարաբերու-թյունները առավել ամբողջական ներկայացնելու համար կիրառել են պատմահամեմատական մեթոդը թե՛ ժամանակագրական, թե՛ տարածական առումներով:

Առավել հանգամանալի հրատարակությունների հեղինակ է ԽՍՀՄ ԳԱ կովկասագիտության ինստիտուտի գիտքարտուղար Ա. Տեր-Սարգսյանցը: Նա համահայկական դաշտային ազգագրա-կան հետազոտությունների շնորհիվ բազմաթիվ ուսումնասիրու-թյուններ կատարեց հայոց ընտանիքի, ներընտանեական կյանքի, խուսափման սովորույթների, ամուսնահարսանեական և այլ ծիսա-

[55] Տե՛ս ***Карапетян Э.,*** Армянская семейная община. Ереван, 1958, նույնի՝ Родственная группа «азг» у армян, Ереван, 1966:

կարգերի վերաբերյալ, որոնք գիտնականը քննում է ԽՍՀՄ ժողովուրդների ազգային մշակույթների համատեքստում[56]: Այդ նույն մեթոդաբանությամբ հայկական ընտանիքի վերաբերյալ ուշագրավ ուսումնասիրություն է հրատարակել Զ. Խառատյանը[57]: Հայոց ամուսնաընտանեկան հարաբերությունների զարգացման ու փոփոխման, դրանց սովորութային և իրավական հիմքերի վերհանման ու լուսաբանման ընագավառում պատշաճ տեղ ունի Ս. Հովհաննիսյանի հետազոտությունը[58], իսկ ազգակցական խմբի վերաբերյալ ուշագրավ աշխատություններ հրատարակեցին Ա. Ասմանգուլյանը[59] և Տ. Ավետիսյանը[60]: Առաջ քաշվեց հայկական կենցաղում լայն տարածում ունեցած հասակային դասերի ինստիտուտի վերապրուկների ուսումնասիրության հարցը: «Հայ ժողովրդական խաղեր» գրքում դրանց անդրադարձել է նաև Վ. Բդոյանը[61]: Նոր Նախիջևանի կտրիճների դասի համանման սովորությունների

[56] Տե՛ս ***Тер-Саркисянц Е.,*** Обычай избегания у армян и его изживание за годы Советской власти (по материалам сельских районов Армянской ССР) // ИФЖ, 1968, № 2, с. 211-218, նույնի՝ Современная семья у армян (по материалам сельских районов Армянской ССР), Москва, 1972, նույնի՝ О национальном аспекте браков в Армянской ССР (по материалам загсов) // СЭ, 1973, № 4, с. 89-95, նույնի՝ Современные этнические процессы на Кавказе. М., 1978, с. 62-117, նույնի՝ Современная семья у армян Нагорного Карабаха // КЭС, т. VI, с. 11-46, նույնի՝ Основные тенденции развития современной сельской семьи у армян // КЭС, т. VII, 1980, с. 162-192, նույնի՝ Брак и свадебный цикл у армян (вторая половина XIX-начало XX в) // КЭС, т. IX, 1989, с. 246-284, նույնի՝ Армяне. Семейный быт народов СССР, М., 1990, с. 402-420:

[57] Տե՛ս ***Харатян З. В..*** Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян // Армянская этнография и фольклор (материалы и исследования), т. 17, с. 7-61:

[58] Տե՛ս ***Հովհաննիսյան Ս.,*** Ամուսնաընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան, 1976:

[59] Տե՛ս ***Асмангулян А.,*** История армянских терминов родства. Ереван, 1983:

[60] Տե՛ս ***Ավետիսյան Տ.,*** Հայկական ազգանուն, Երևան, 1987:

[61] Տե՛ս ***Բդոյան Վ.***, Հայ ժողովրդական խաղեր, հ. I, Երևան, 1963, էջ 23-42:

հետքեր է արձանագրել Խ. Փորքշեյանը[62], իսկ Ջավախքի տղամարդկանց ու կանանց միությունների մասին ուսումնասիրություն է կատարել Ժ. Խաչատրյանը[63]: Հայաստանի տարբեր շրջաններում և հայաշատ գաղութներում տղամարդկանց ու կանանց հասակակիցների միությունների գոյությունն է արձանագրել նաև Վ. Գրիգորյանը[64]: Առավել հանգամանորեն այս մասին գրել է Լ. Վարդանյանը: Նրա «Տղամարդկանց տարիքային խմբերի ավանդույթները հայերի մեջ (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ)» աշխատությունն առաջին ամբողջական հետազոտությունն է՝ նվիրատվական այս ծեսերի վերաբերյալ[65]:

Ազգագրության ավանդութային թեմաներից է նաև գյուղական համայնքը: Արևելահայ գյուղական համայնքին է նվիրված Մ. Հակոբյանի մենագրությունը[66]: Հայկական գյուղական կամ հարևանական համայնքին նվիրված ուշագրավ հոդվածներով են հանդես եկել անվանի պատմաբաններ՝ Լ. Խաչիկյանը, Ս. Հակոբյանը, Ա. Հակոբյանը, Ա. Համբարյանը, Պ. Հովհաննիսյանը[67]: Այս

---

[62] Տե՛ս ***Փորքշեյան Խ.***, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1965, նույնի՝ Նոր Նախիջևանի հայ գյուղերի «Կտրիճների միությունների» մասին // ՊԲՀ, 1966, № 3, էջ 184-192:

[63] Տե՛ս ***Խաչատրյան Ժ.***, Հասակակիցների միությունները Ջավախքում // ՊԲՀ, 1968, № 1, էջ 203-212:

[64] Տե՛ս ***Գրիգորյան Վ.***, Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների «Կտրիճվորաց եղբայրությունների» մասին // ՊԲՀ, 1963, № 2, էջ 115-127:

[65] Տե՛ս ***Варданян Л.***, Традиции мужских возрастных групп у армян в конце XIX - начале XX в. (историко-этнографическое исследование) // Армянская этнография и фольклор (материалы и исследования), т. 12. Ереван, 1981, с. 85-142:

[66] Տե՛ս ***Акопян М.***, Сельская община в Восточной Армении во II пол. XIX - нач. XX вв., Ереван, 1988:

[67] ***Խաչիկյան Լ.***, XIV-XV դդ. հայկական գյուղական համայնքի մասին // ՊԲՀ, 1958, № 1, ***Հակոբյան Ս.***, Գյուղական համայնքը Հայաստանում վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում // ՊԲՀ, 1965, №1, նույնի՝ Գյուղական համայնքը Հայաստանում 15-18-րդ դդ. // ՊԲՀ, 1973, № 2, ***Հակոբյան Ա.***, Գյուղական համայնքը Կարսի մարզում (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ) // ՊԲՀ, 1987, № 1, ***Համբարյան Ա.***, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965, ***Հովհան-***

հիմնախնդրին է անդրադարձել նաև տողերիս հեղինակը[68]:

1980-ական թվականներից սկիզբ դրվեց նաև էթնոժողովրդագրությանն առնչվող հարցերի ուսումնասիրությանը[69]:

Հումանիտար մշակույթ: Հայոց հոգևոր-հումանիտար մշակույթի առանձին ոլորտները ևս հանգամանալի հետազոտման են ենթարկվել Կ. Մելիք-Փաշայանի[70], Ա. Օդաբաշյանի[71], Լ. Աբրահամյանի[72], Զ. Խառատյանի[73], Գ. Վարդումյանի[74], Վ. Բդոյանի[75], Կ. Աթոյանի[76], Ս. Լիսիցյանի[77], Ժ. Խաչատրյանի[78], Է. Պետրոսյա-

---

Նիսյան Պ., Գյուղական համայնքի պրոբլեմի ուսումնասիրությունը ակադ. Հ. Մանանդյանի աշխատություններում // ԲԵՀ, 1985, № 1:

[68] ***Նահապետյան Ռ.***, Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ // ԲԵՀ, 1979, № 1, *նույնի՝* Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբերի մեջ XIX դ. և XX դ. սկզբին // «Երևանի համալսարան», գիտական լրատու, 1977, № 2:

[69] Տե՛ս Население Еревана (этносоциологическое исследование), ред. ***Арутюнов Ю., Карапетян Э.,*** Ереван, 1986:

[70] Տե՛ս ***Մելիք-Փաշայան Կ.,*** Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963:

[71] Տե՛ս ***Օդաբաշյան Ա.,*** Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում // ՀԱԲ, հ. 9, Երևան, 1978, էջ 7-72, *նույնի՝* Народные верования армян // КЭС, т. VI, с. 107-130:

[72] Տե՛ս ***Абрамян Л.,*** Первобытный праздник и мифология. Ереван, 1983:

[73] Տե՛ս ***Харатян З.,*** Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян // ՀԱԲ, հ. 17, էջ 7-61:

[74] Տե՛ս ***Вардумян Г.,*** Дохристианские культы армян // ՀԱԲ, հ. 18, Երևան, 1991, էջ 65-146:

[75] Տե՛ս ***Բդոյան Վ.***, Հայ ժողովրդական խաղեր, հ. 1, Երևան, 1963, հ. 2, Երևան, 1980, հ. 3, Երևան, 1983:

[76] Տե՛ս ***Աթոյան Կ.,*** Ռազմա-սպորտային մենամարտերը Հայաստանում, Երևան, 1965:

[77] Տե՛ս ***Лисицян С.,*** Старинные пляски и театральные представления армянского народа, т. I. Ереван, 1958, т. II, 1972, նույնի՝ Армянские старинные пляски, Ереван, 1983:

[78] Տե՛ս ***Խաչատրյան Ժ.,*** Ջավախքի հայ ժողովրդական պարերը // ՀԱԲ, հ. 7, Երևան, 1975, էջ 7-124: Տե՛ս նաև ***Петросяни Э., Хачатрян Ж.,*** Армянский народный танец, Москва, 1980:

նի[79] կողմից: Հայ ժողովրդական մինչ այդ անտեսված խաղերին նվիրված եռահատոր ընդարձակածավալ աշխատության մեջ Վ. Բդոյանը հնարավոր բոլոր աղբյուրներից՝ դաշտային ազգագրական, մատենագրական, գեղարվեստական գրականության և այլն, բծախնդիր մանրակրկիտությամբ գրեթե սպառիչ կերպով հավաքել է հայ ժողովրդական խաղերը՝ հնարավոր տարբերակներով, գիտականորեն մշակել դրանք՝ ենթարկելով անհրաժեշտ դասակարգումների և տվել որպես բնագրեր՝ կցելով նաև ծավալուն ուսումնասիրություն:

1950-1980-ական թթ. ազգագրական նշանակալի հետազոտություններ կատարվեցին հայոց կիրառական արվեստի ոլորտում: 1955 թ. լույս տեսավ Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստը» ծավալուն մենագրությունը, որն առ այսօր ունի աղբյուրագիտական կարևոր նշանակություն: Նշելի են Վ. Թեմուրճյանի[80], Մ. Ղազարյանի[81] և Վ. Բդոյանի[82] գորգագործության վերաբերյալ անչափ հետաքրքիր հետազոտությունները, որոնցում ընդարձակ ակնարկներ կան պատմական անցյալի և խորհրդային տարիներին կազմակերպված գորգերի արտադրության մասին: Վ. Բդոյանի «Հայկական աղամանները» աշխատության մեջ արծարծված են Անահիտ դիցուհուն խորհրդանշող հայկական կանացիակերպ աղամանների կիրառության, նրան աղերսվող աղի պաշտամունքի, քրիստոնեության շրջանում դիցուհու ծպտվելու հանգամանքներին առնչվող հարցեր: Ուշագրավ են նաև Ս. Դավթյանի՝ հայկական ժանյակի, ասեղնագործության, կարպետի, միջնադարյան կիրառական արվեստների պատմության վերաբերյալ

[79] Տե՛ս ***Петросяни Э.,*** Театральные черты в средневековых армянских миниатюрах // ՀԱԲ, հ. 7, էջ 127-194, *նույնի՝* Сюжеты и образы народного драматического творчества армян // Фольклорный театр народов СССР, Москва, 1985, с. 171-190:

[80] Տե՛ս ***Թեմուրճան Վ.,*** Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1956:

[81] Տե՛ս ***Ղազարյան Մ.,*** Հայկական գորգը (պատկերազարդ), Լոս Անջելես, 1988:

[82] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Հայկական աղամաններ: Անահիտ դիցուհուն խորհրդանշող կանացիակերպ աղամաններ, Երևան, 1986:

ուսումնասիրությունները[83]: Դրանցում քննության են առնված ասեղնագործ արվեստների տեսակները, դրանց կատարման հնարները, աշխարհագրական տարածման, ազգագրական ու գեղարվեստական առանձնահատկություններին վերաբերող բազմաթիվ և բազմազան հարցեր: Նրա գրքերը լույս են սփռում կիրառական արվեստի հանիրավի մոռացված մի քանի ասպարեզների վրա: Այս առումով դրանք բացառիկ արժեք են ներկայացնում հայագիտության մեջ: Նշելի են նաև Ա. Պատրիկի[84], Ա. Գևորգյանի[85] ուսումնասիրությունները:

Կիրառական արվեստի բնագավառում տեսական բնույթի ուսումնասիրություն է կատարել ակադեմիկոս Բ. Առաքելյանը: Նա 1949 թ. հրատարակել է «Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում» աշխատությունը, որում մանրամասնորեն ուսումնասիրել է աշխարհիկ և կրոնական բովանդակություն ունեցող քարե հուշարձանները: 1969 թ. հրատարակված նրա հոդվածը[86] գրվել է Քրիստոսից առաջ VI դարից մինչև Քրիստոսից հետո III դարի նյութերի հիման վրա: 1976 թ. Բ. Առաքելյանը հրատարակեց հին Հայաստանի արվեստի վերաբերյալ ընդհանրացնող մի աշխատություն, որի գիտական նշանակությունը բացառիկ է[87]: Գրքում քննարկված են ինչպես մոնումենտալ, այնպես էլ կիրառական արվեստի հուշարձանները՝ քանդակները, խճանկարը, գեղարվեստական ստեղծագործությունները՝ մետաղից, քարից, կավից, ապակուց, հայ թագավորների հատած դրամների, ինչպես նաև դեմքերի ու կնիքների պատկերագրությունը: Հեղինակը լուսաբանում է հին հայկական արվեստի ձևավորումն ու նրա զարգացման փուլերը վաղ հայկական (Քրիստոսից առաջ VI-IV դդ.), հելլենիստական (Քրիստոսից առաջ III-I դդ.), ինչպես նաև I-III դարաշրջաններում, իսկ փայտի գեղարվեստա-

[83] Տե՛ս ***Դավթյան Ս.,*** Հայկական ժանյակ, Երևան, 1966, *նույնի՝* Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972, *նույնի՝* Հայկական կարպետ, Երևան, 1975, *նույնի՝* Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստների պատմության, Երևան, 1982:

[84] Տե՛ս ***Պատրիկ Ա.,*** Ուրֆայի ասեղնագործությունը, Երևան, 1985:

[85] Տե՛ս ***Գևորգյան Ա.,*** Արհեստները ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, 1978:

[86] Տե՛ս ***Առաքելյան Բ.,*** Քանդակագործությունը Հին Հայաստանում // ՊԲՀ, 1969, № 1, էջ 43-69:

[87] Տե՛ս ***Առաքելյան Բ.,*** Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության (մ. թ. ա. VI դ. - մ. թ. III դ.), Երևան, 1976:

կան փորագրության արվեստին է անդրադարձել Հ. Ազատյանը՝ Վ. Բդոյանի ընդարձակ ներածական խոսքով[88]:

Թեմատիկ ուսումնասիրություններին զուգընթաց հրատարակվել են նաև պատմաազգագրական առանձին շրջանների վերաբերյալ ուսումնասիրություններ, որոնցից առավել կարևորներից են Դ. Վարդումյանի[89], Վ. Պետոյանի[90], Ե. Կարապետյանի[91], Վ. Թեմուրճյանի[92], Ե. Տեր-Մկրտչյանի[93], Գ. Հալաջյանի[94], Բ. Թոռլաքյանի[95], Հովսեփ Օրբելու[96], Ս. Պատրիկի[97], Ս. Ավագյանի[98], Ռ. Գրիգորյանի[99], Կ. Զերքեզյանի[100] մենագրությունները: Երկար սպասումից հետո հետմահու հրատարակվեց նաև Վ. Բդոյանի ծավալուն ուսումնասիրությունը[101]: Սրանք մեծարժեք ներդրում են հայ ազգագրական գիտության համակարգում:

Առանձին հոդվածներ են նվիրվել հայ ազգագրության պատմությանը[102]: Ցավոք, մինչ օրս չկա հայ ազգագրության պատմու-

---

[88] Տե՛ս ***Ազատյան Հ.,*** Փայտի գեղարվեստական փորագրություն, ձեռնարկ, Երևան, 1961:

[89] ***Վարդումյան Դ.,*** Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956:

[90] Տե՛ս ***Պետոյան Վ.,*** Սասնա ազգագրությունը, Երևան, 1965:

[91] Տե՛ս ***Կարապետյան Ե.,*** Սասուն (ազգագրական նյութեր), Երևան, 1962:

[92] Տե՛ս ***Թեմուրճյան Վ.,*** Գամիրքի հայերը (պատմաազգագրական ուսումնասիրություն) // ՀԱԲ, հ. 1, Երևան, 1970, էջ 9-142:

[93] Տե՛ս ***Տերբի-Մկրտչյան Ե.,*** Վանեցոց հարսանիքը (կենցաղագրական պատկերներ) // ՀԱԲ, հ. 1, Երևան, 1970, էջ 143-202:

[94] Տե՛ս ***Հալաջյան Գ.,*** Դերսիմի հայերի ազգագրությունը (նյութեր և ուսումնասիրություններ), մասն Ա // ՀԱԲ, հ. 5, Երևան, 1973, էջ 5-300:

[95] Տե՛ս ***Թոռլաքյան Բ.,*** Համշենահայերի ազգագրությունը // ՀԱԲ, հ. 13, Երևան, 1981, էջ 5-154:

[96] Տե՛ս ***Орбели И.,*** Фольклор и быт Мокса, Москва, 1982.

[97] Տե՛ս ***Պատրիկ Ս.,*** Պատմագիրք հուշամատեան Սեբաստիոյ և գավառի հայութեան, հ. Ա, Պեյրութ, 1974, հ. Բ, Նյու Ճըրզի, 1983:

[98] Տե՛ս ***Ավագյան Ս.,*** Արճակի ազգագրությունն ու բանահյուսությունը // ՀԱԲ, հ. 8, Երևան, 1978, էջ 5-186:

[99] Տե՛ս ***Գրիգորյան Ռ.,*** Գեղարքունիք (նյութեր և ուսումնասիրություններ) // ՀԱԲ, հ. 14, Երևան, 1983, էջ 5-263:

[100] Տե՛ս ***Զերքեզյան Կ.,*** Աֆիոն-Կարահիսարի գաղթօջախը, Երևան, 1986:

[101] ***Բդոյան Վ.,*** Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, Երևան, 2014:

[102] Այս առումով թերևս կարելի է առանձնացնել հետևյալները. ***Вардумян Д.,*** Этнографическая работа в Армении 5-6 пятилетиях // СЭ, 1956, N 3, նույնի՝ Армянская этнография за годы советской власти //

թյան ամբողջական ուսումնասիրություն: Հրատարակվել են Գ. Սրվանձտյանցի երկերի երկհատորյակը (1978, 1982), Ե. Լալայանի երկերի հինգհատորյակից 1-3-ը (1983, 1988, 2004): Հայ ժողովրդի ազգագրությանը այլևայլ առիթներով անդրադարձել են նաև սփյուռքահայ գրասերները, ըստ որում՝ զբաղվելով բացառապես պատմական ազգագրությամբ: Սակայն սփյուռքահայերը, եթե նկատի չունենանք առանձին բացառությունները, մասնագիտորեն չեն զբաղվել ազգագրությամբ: Այդուհանդերձ զգալի չափով եզակի տեղեկություններ են հաղորդում արևմտահայերի այս կամ այն հատվածի կենցաղի ու սովորությունների վերաբերյալ:

Ազգագրական հետազոտություններ են նաև կատարվել Հայաստանում ապրող քրդերի[103], ռուսների[104], հույների[105] ազգագրության վերաբերյալ: Այս շրջափուլի ձեռքբերումներից մեկն էլ բանագիտության և մարդաբանության շոշափելի հաջողություններն են, որոնք առանձին հետազոտության նյութեր են: Սովետահայ բանագիտությունը նույնպես զարգացել է անցյալի հայ

СЭ, 1962, № 4-5, с. 111-116; *նույնի՝* Ազգագրություն // Գիտությունը Հայաստանում 50 տարում, Երևան, 1973, էջ 65-70, նույնի՝ Ազգագրություն // ՊԲՀ, 1970, № 4, էջ 135-145, ***Карапетян Э., Вардумян Д.***, О некоторых задачах армянской советской этнографии // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1952, N 1, էջ 67-79, ***Բդոյան Վ.,*** Ազգագրություն // Հայագիտությունը 50 տարում, Երևան, 1971, էջ 195-229, ***Մելիք-Փաշայան Կ.,*** Սովետահայ ազգագրության անցած ուղին // ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1968, № 11, էջ 54-67:

[103] Տե՛ս ***Ավդալ Ա.,*** Քուրդ կինը նահապետական ընտանիքում ըստ ազգագրական և ֆոլկլորային նյութերի // Աշխատություններ, Հայաստանի պատմության թանգարանի, Երևան, 1948, № 1, նույնի՝ Արյան վրիժառությունը քրդերի մեջ և նրա մնացուկների վերացումը սովետական պայմաններում // նույն տեղում, 1952, № 2, նույնի՝ Курдская этнография и фолкльор и их изучение в советской Армении // Вопросы этнографии Кавказа, Тбилиси, 1952, նույնի՝ Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957: Տե՛ս նաև ***Дарвешян М.,*** Скотоводческое хозяйство курдов Восточной Армении. Ереван, 1986.

[104] Տե՛ս ***Долженко И.,*** Хозяйственный и общественный быт русских крестьян Восточной Армении (кон. XIX-нач. XX вв.), Ереван, 1985:

[105] Տե՛ս ***Харацидис Э.,*** Хозяйственный быт и материальная культура греческого населения Восточной Армении во второй пол. XIX-нач. XX вв. (историко-этнографическое исследование), Ереван, 1990:

դասական բանագիտության ավանդույթների հիման վրա: 1930-ական թվականներից սկսած մինչև օրս գիտական արշավախմբերի, անհատական դաշտային գործուղումների և սիրող բանահավաքների ջանքերով Հայաստանի շրջաններում և Հայաստանից դուրս հայաբնակ վայրերում գրի են առնվել բանահյուսական բազմաժանր և հարուստ նյութեր, որոնք հրատարակվեցին ինչպես «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարում, այնպես էլ առանձին մենագրություններում: Նշանավոր բանագետ Սարգիս Հարությունյանը շուրջ վեց տասնամյակ անխոնջ նվիրումով ծառայել է հայագիտությանը: Նրա բանագիտական բոլոր աշխատությունները որքանով որ բանագիտական մեծարժեք գործեր են, նույնքանով էլ ազգագրական տեսական բնույթի հետազոտություններ: Այսպես, Մոսկվայում «Мифы народов мира» երկհատորյակում (1981 թ., 1982 թ.), այնուհետև «Мифологический словарь»-ում (1990 թ.) լույս տեսավ նրա ռուսերեն հոդվածաշարը հայոց առասպելների մասին: Հայ առասպելների քննությանը նվիրված նրա հիմնարար աշխատությունը «Հայ առասպելաբանություն» վերնագրով մենագրությունն է (Բեյրութ, 2000 թ.): Ս. Հարությունյանի բանագիտական գործունեության մյուս կարևոր բնագավառն ընդգրկում է հմայական բանահյուսության գրեթե բոլոր կարևոր ժանրերը: 1975 թ. հրապարակի վրա է հմայական բանահյուսության ուրույն ժանրերին նվիրված մենագրությունը՝ «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ», իսկ դեռ 1960 թ. հրատարակվել էր նրա «Հայ ժողովրդական հանելուկներ» մենագրական հետազոտությունը, 1965 թ.՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» համահավաք հրատարակությունը, որոնցով հիմք դրվեց հայկական հանելուկների, անեծք-օրհնանքների և առհասարակ հմայական հայ բանահյուսության գիտական ուսումնասիրությանը: Մենք գիտնականին ենք պարտական ազգային հերոսավեպի Գ (1979 թ.) և Դ (1999 թ.) հատորների պատումների հավաքման, խմբագրման, հարուստ ծանոթագրություններով հրատարակության համար: 1977 թ. լույս է տեսնել Ս. Հարությունյանի կազմած՝ վեպի տասը ընտիր պատումներից բաղկացած ժողովածու՝ օժտված գիտական անհրաժեշտ ապարատով՝ «Կուլտուր-պատմական ակնարկով»: Տարիներ շարունակ ԵՊՀ պատմության ֆակուլտետում հնագիտության և ազգա-

գրության գծով մասնագիտացող ավարտական կուրսերում և մագիստրատուրայում դասախոսել է «Հայ բանահյուսություն» հատուկ դասընթացը:

Թեև ուշացումով Հայաստանում ևս պատրաստվել են տարբեր մասնագիտության մարդաբաններ, որոնք դեմքի պլաստիկ վերականգնման և հնեամարդաբանությանը զուգընթաց զբաղվում են էթնիկ մարդաբանության որոշ հարցերի հետազոտությամբ: Առաջին արդյունքները եղել են հուսադրող. հստակվել են արմենոիդ տիպի հատկանիշները, փորձ է արվել պարզելու Հայկական բարձրավանդակի հնագույն և այժմյան բնակիչների ֆիզիոլոգիական տիպի հաջորդության հարցը և այլ հարցեր[106]:

Նկատենք, որ այս ձեռքբերումներին զուգահեռ ուսումնասիրվող ժամանակաշրջանում կար գաղափարախոսական այն խոչընդոտը, որը կաշկանդում էր մի կողմից անցյալի ժառանգության ամբողջական օգտագործմանն ու արտասահմանյան գործընկերների հետ մասնագիտական փոխառնչումներին, մյուս կողմից՝ աշխարհասփյուռ հայերին որպես էթնիկ ամբողջություն դիտելուն, և նրանց պատմաազգագրական ուսումնասիրությանը, խնդիր չէր դրվում դաշտային հետազոտություններ իրականացնելու համապարփակ ձևով՝ բոլոր թեմաների վերաբերյալ նյութերը գրի առնելու նպատակով: «Ազգագրական հանդեսում» և «Ազգագրություն և բանահյուսություն» (նյութեր և ուսումնասիրություններ) մատենաշարում վիթխարի նյութեր են գրառված, բայց Հայաստանի բոլոր տարածաշրջանները և բոլոր թեմաները չեն, որոնք հետազոտված են, ինչպես նաև շատ շրջաններ ու կենցաղի կարևոր բնագավառներ: Առ այսօր դեռևս չկան համալիր հետազոտություններ ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Հայաստանի Հանրապետության շատ մարզերի, ինչպես, օրինակ, Տավուշի, Արագածոտնի, Շիրակի, Կոտայքի, Արարատի, Լոռու, Գեղարքունիքի մասին:

[106] Տե՛ս ***Վարդումյան Դ., Նազինյան Ա.,*** 1978-1979 թթ. ազգագրական և բանահյուսական դաշտային հետազոտությունների արդյունքներ // Զեկուցումների թեզիսներ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980, էջ 3-4:

3. ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ԱԲԳԱՐԻ ՕՐԲԵԼԻ

(Երախտավոր հայորդու ծննդյան 130-ամյակի առթիվ)

Հայրենական պատմության մեջ ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելին ճանաչված է որպես նշանավոր արևելագետ, հնագետ, վիմագրագետ, բանագետ, թանգարանագետ, բանասեր, պատմաբան, հուշարձանագետ, գիտության հմուտ կազմակերպիչ, ՀԽՍՀ և ՍՍՀՄ ԳԱՍ ակադեմիկոս: Նա ոչ միայն նշանավոր գիտնական էր, գիտության հմուտ կազմակերպիչ, այլև ակտիվ հասարակական գործիչ: Լինելով հայտնի Էրմիտաժի տնօրենը՝ նրա ղեկավարությամբ այն դարձել էր գիտական խոշոր օջախ: Հովսեփ Օրբելին Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադիրն ու առաջին նախագահն էր, ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի հիմնադիրը:

Հովսեփ Օրբելին ծնվել է տոհմիկ մտավորականների ընտանիքում: Նրա պապը՝ Հովսեփ Հովակիմի Օրբելին, ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը: Հեղինակ է տպագիր մի շարք աստվածաբանական աշխատությունների: Վախճանվել է 1891 թվականին: Հովսեփ Օրբելի ավագը ունեցել է երեք տղա և երկու աղջիկ: Ավագ որդին՝ Դավիթը, ավարտել է Խարկովի համալսարանը և դարձել բժիշկ-հոգեբույժ, երկրորդ որդին՝ Համազասպը, Թիֆլիսում հայտնի բժիշկ-ատամնաբույժ էր, երրորդը՝ Աբգարը, ուսանել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և ստացել իրավագիտության թեկնածուի աստիճան: Աբգար Օրբելին ցանկացել է մնալ Պետերբուրգում, սակայն հոր պահանջով վերադարձել է հայրենիք և իբրև հաշտարար դատավոր պաշտոնավարել է Նախիջևանում, ապա՝ Ծաղկաձորում, Քութայիսում: Թիֆլիս տեղափոխվելուց հետո նա մի քանի տարի աշխատել է որպես դատական պալատի դատախազի օգնական, ապա՝ դարձել փաստաբան: Ընտանիքում նրա ազդեցությունը մեծ էր, հեղինակությունը՝ անառարկելի: Աբգար Օրբելու կինը՝ Վարվառան, Արղության իշխանական տոհմից էր՝ Մովսես Արղության-Երկայնաբազուկի դուստրը: Աբգար Օրբելու ավագ որդին՝ Ռուբենը (1880-1943), ավարտել էր Պետերբուրգի համալսարանի իրավա-

բանական ֆակուլտետը, ստացել առաջին կարգի դիպլոմ: 1906 թ. արժանացել է իրավագիտության մագիստրոսի աստիճանի, ստաժավորվել է նաև Գերմանիայում՝ Ենայի համալսարանում, ճանաչվել այդ համալսարանի դոկտոր: Հետագայում նա տարվեց ջրասուզական գործով, որի պատմությանը մի շարք կարևոր ուսումնասիրություններ նվիրեց: Ռուբեն Օրբելին ստորջրյա հնագիտության հիմնադիրներից մեկն է եղել մեր երկրում:

Միջնեկ որդու՝ Լևոն Օրբելու (1887-1958) անունը հայտնի է բոլորին: Իբրև Ի. Պ. Պավլովի ուսմունքի զարգացնող՝ նա ֆիզիոլոգիայի բնագավառում կանգնած է գիտական մի շարք ուղղությունների սկզբնավորողի տեղում: Լևոն Օրբելու գաղափարների զարգացմամբ այժմ զբաղված են գիտահետազոտական ամբողջ հաստատություններ: Օրբելիների գերդաստանը աչքի էր ընկնում մի շարք այնպիսի գործիչներով, որոնք հատուկ էին XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ մտավորականությանը: Ծաղկաձորում բացված է Օրբելի եղբայրների թանգարան՝ որի ցուցանմուշները հստակ պատկերացում են տալիս այդ զարմանալի ընտանիքի մասին: Երևանում և Լենինգրադում կան «Օրբելի» կամ «Օրբելի եղբայրների» անունը կրող գիտական օջախներ ու փողոցներ:

Աբգար Օրբելու կրտսեր որդին՝ Հովսեփը, ծնվել է 1887 թ. մարտի 8(20)-ին Քութայիսում: Հաջորդ տարին ընտանիքը վերահաստատվեց Թիֆլիսում՝ Անդրկովկասի մշակութային ամենախոշոր կենտրոններից մեկում: Հովսեփ Օրբելին 1896 թ. ընդունվել է 3-րդ արական գիմնազիան: Այստեղ նա ձեռք է բերել դասական լեզուների՝ հունարենի և լատիներենի լավ գիտելիքներ: Հարևան երեխաների հետ շփվելով, հայերենից և ռուսերենից բացի, սովորեց վրացերեն, աղրբեջաներեն: 1904 թ. նա ավարտեց գիմնազիան: 1911 թ. ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, զուգահեռ նաև արևելագիտական ֆակուլտետի հայ-վրաց-պարսկական բաժանմունքը: Արևելագիտական առարկաներից Հովսեփ Օրբելուն գրավեց հայագիտությունը, նա գտավ ժամանակի հայտնի գիտնական մի բարեկամ, ուսուցիչ Նիկողայոս Մառին (1864-1934): Հովսեփ Օրբելին եկավ Պետերբուրգ, երբ Մառն արդեն ճանաչված էր որպես Ռուսաստանի խոշորագույն արևելագետներից մեկը: Նրա անվան հետ է կապված հայրենական կովկասագիտության մի ամբողջ դարաշրջան:

Հովսեփ Օրբելի գիտնականի կայացման գործում մեծ դեր խաղաց նաև Յակով Իվանովիչ Սմիռնովը (1869-1918): Նա արտասովոր լայն գիտելիքների տեր մարդ էր, շատ էր հետաքրքրվում նաև հայկական հնություններով: Մառի հետ Յա. Ի. Սմիռնովը մասնակցեց Գառնիի հեթանոսական տաճարի պեղումներին, ուսումնասիրեց այն ժամանակ այնքան խորհրդավոր թվացող Գեղամա լեռների վիշապ-կոթողները: 1892 և 1903 թթ. Նիկողայոս Մառը ձեռնարկեց երկու գիտական արշավ դեպի Անի, ապա 1904 թ. պեղումները վերսկսվեցին և շարունակվեցին մինչև 1917 թվականը: Այսպիսով՝ 16 անգամ հեռավոր Պետերբուրգից Անի են ժամանել գիտնականներ, նրանց թվում՝ նաև Հովսեփ Օրբելին և 16 ամառ անցկացրել ավերակ քաղաքում:

Մառի ղեկավարությամբ Անիում հիմնադրվեց պաշտոնական հաստատում չստացած իբական հնագիտական ինստիտուտ: Մասնակիցների համար Անիի պեղումները հնագիտական հիանալի դպրոց են եղել: Այդ արշավներից Հովսեփ Օրբելին ստացավ և՛ նյութի, և՛ նրա վերլուծության խոր գիտելիքներ: Այլ պարտականությունների հետ միասին Օրբելին տնօրինում էր Անիի հնադաբանը: Վերջինս հիմնվել էր մասնավոր միջոցների շնորհիվ:

Անիի այցելուների թիվը մեծ էր: Այցելուների մի զգալի մասը կազմում էին օտարերկրացիներ: Հովսեփ Օրբելուն հարկ էր լինում տալ ընդարձակ բացատրություններ, որոնք հաճախակի վեր էին ածվում իսկական դասախոսությունների, որոնց արդյունքում հրատարակվեց «Անվո ավերակները» հանրամատչելի մի գրքույկ:

1909 թ. Հովսեփ Օրբելին ձեռնարկեց մի ինքնուրույն ճանապարհորդություն դեպի պատմական Հայաստանի գավառներից մեկը՝ Խաչեն (ԼՂՀ-ում): Բոլոր վայրերում պատճենահանում է 220 արձանագրություններ, ընդ որում՝ նրանց մի մասը մինչև օրս անհայտ են եղել: Այդ համեմատաբար կարճատև ինքնուրույն գիտական ճանապարհորդությանը հաջորդեց մեկ ուրիշը՝ այս անգամ բոլոր առումներով ավելի բարդ, խոսքը դեպի Մոկս ձեռնարկած ուղևորության մասին է: Մինչև կյանքի վերջը Հովսեփ Օրբելին մնաց Մոկսում տեսածի ու լսածի տպավորության տակ: Նա Արևելյան ֆակուլտետի վերջին կուրսում էր, երբ 1910 թ. սեպտեմբերի 22-ին Գիտությունների ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքի նիստում Նիկողայոս Մառը առաջարկեց Վան

ուղարկել մի մասնագետի, որը կզբաղվեր այնտեղի հնություն-ներով և ձեռնամուխ կլինի բարբառագիտական և ազգագրական նյութերի հավաքմանը: Զեկուցողի կարծիքով այդպիսի աշխա-տանք կարող էր կատարել Հովսեփ Օրբելին:

1911-1912 թթ. Օրբելին Մոկսում հավաքեց չափազանց հետա-քրքիր թե՛ բանահյուսական, թե՛ բարբառագիտական, և թե՛ ազգա-գրական նյութ: Նա եղել է միակ եվրոպացի գիտնականը, որն աշ-խատանքը կատարել է հենց տեղում: Հնարավորություն ունեցավ ուսումնասիրելու նաև Աղթամար կղզին, նրա հնությունները, հատկապես հռչակավոր տաճարը: Հետագայում Հ. Օրբելին մեծ աշխատություն գրեց այդ մասին, որը լույս տեսավ հետմահու:

Երիտասարդ գիտնականի վրա Մոկսում մեծ տպավորություն էր թողել տեղի Մուրթուլա բեգը, որը հայկական կոտորածի ժամա-նակ հայերի պաշտպաններից մեկն էր, հայասեր և ռուսասեր մի մարդ: Օրբելին գրում է, թե ինչպես Մոկսում հասկացավ, որ ոչ թե քուրդ ժողովուրդն է հայերի ոխերիմ թշնամին, այլ քրդերին հայերի դեմ սադրող թուրքական վարչակազմը: Ավարտելով Մոկ-սին նվիրված աշխատությունը՝ գիտնականը ցավով նշել է, որ 1915 թ. եղեռնից փրկվեց միայն մի քանի հայ ընտանիք, բնակ-չության մի մասը բնաջնջվեց, մյուս մասը փախուստի դիմեց, Մոկսն ամայացավ: Նա ուսումնասիրել է Մոկսի հայերի և քրդերի բարբառն ու բանահյուսությունը, Էրզրումի, Բայսպետի, Վանի, Աղթամարի, Բագավանի հուշարձանները, հնագիտական պեղում-ներ կատարել Թոփրակկալեում և Հայկաբերդում:

1912 թ. Օրբելին ընտրվեց Ռուսաստանի հնագիտական ընկե-րության անդամ: 1914 թվականից արդեն դասախոսում էր Պետեր-բուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետում՝ դասա-վանդելով հնագիտություն, Հայաստանի պատմություն, հայկա-կան արձանագրագիտություն, քրդերեն: 1916 թ. Նիկողայոս Մա-ռի հետ Վանում պեղումների ժամանակ հայտնաբերել է Սարդու-րի Բ ուրարտական թագավորի մեծածավալ սեպագիր արձանագրու-թյունը: 1917-1918 թթ. նա դասավանդում էր նաև Մոսկվայի Լա-զարյան ճեմարանում, Պետական հնագիտական հանձնաժողովի խորհրդի անդամն էր, իսկ 1919 թ.՝ Խորհրդային Ռուսաստանի լուսժողկոմատի՝ թանգարանների գործերով կոլեգիայի գիտական քարտուղարը, եղել է Նյութական մշակույթի պատմության ռու-

սաստանյան ակադեմիայի հիմնադիրներից մեկը, 1920 թ. նշանակվել է Պետրոգրադի էրմիտաժի ավանդապահ: 1926 թ. հիմնադրել և գլխավորել է Էրմիտաժի Արևելքի բաժինը, 1934-1951 թթ. նրա տնօրենն էր:

Հովսեփ Օրբելին երկար տարիներ կապված էր Անդրկովկասի, հատկապես Հայաստանի գիտական հաստատությունների հետ: 1935 թ. ընտրվել է ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս: 1936 թ. գլխավորել է Անբերդի, Արագածի հնագիտական պեղումները: 1938 թ. Հովսեփ Օրբելին ընտրվել է ՍՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի նախագահության նախագահ: Իբրև մասնաճյուղի նախագահ՝ Օրբելին գլխավորեց «Սասունցի Դավիթ» դյուցազներգության 1000-ամյա հոբելյանի նախապատրաստական աշխատանքները, որոնք ընթանում էին Երևանում և Լենինգրադում (Էրմիտաժում): Բնագիրը հրատարակվեց 1939 թ. Օրբելու խմբագրությամբ ու նրա առաջաբանով, որն ընդունվեց որպես գիտական-մշակութային խոշոր նվաճում: Սկսվեց Հայրենական պատերազմը: Օրբելին օր ու գիշեր ղեկավարում էր Էրմիտաժի էվակուացման աշխատանքները: Նրա ջանքերով պատերազմի ահեղ տարիներին կազմակերպվեց Էրմիտաժի գեղարվեստի արժեքների տարհանումը Սվերդլովսկ (այժմ՝ Եկատերինբուրգ): Այնուհետև մնալով պաշարված Լենինգրադում՝ նա ապահովեց Էրմիտաժի մի շարք այլ հավաքածուների՝ քաղաքում գտնվող թանգարանային նմուշների պահպանումը: Գիտությունների ակադեմիայի հավաքածուների տարհանման համար Հովսեփ Օրբելին 1944 թ. պարգևատրվեց «Լենինի շքանշանով»: 1945 թ. նրա գիտությամբ բացվեց Էրմիտաժի 60 դահլիճ, իսկ 1946 թ. Նյուրնբերգի դատավարությանը մասնակցեց որպես մեղադրող կողմի վկա:

Հովսեփ Օրբելու գիտական կյանքն ու գործունեությունը անխզելիորեն կապված էր հայրենի գիտության, պատմության ու մշակույթի զարգացման հետ: 1943 թ. նոյեմբերի 10-ին Հայաստանի ժողովրդական կոմիսարների սովետը հատուկ որոշում ընդունեց ՍՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հիման վրա Երևանում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմավորման մասին: Նոյեմբերի 25-ին հաստատվեց ակադեմիայի առաջին կազմը՝ 23 հոգի, իսկ նոյեմբերի 29-ին կայացավ նորածնունդ ակադեմիայի իսկական անդամների առաջին ընդհանուր ժողովը: Այդ ժողովում

Հովսեփ Օրբելին, որը 1935 թվականից ՍՍՀՄ ԳԱ իսկական անդամ էր, ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ նախագահ և պաշտոնավարեց մինչև 1947 թվականը: Գիտությունների ակադեմիայի հիմնադրմամբ սկիզբ դրվեց մի շարք գիտությունների զարգացմանը, որոնք մինչև այդ սաղմնային վիճակում էին: Ազգային գիտությունների ակադեմիայի ստեղծումը հասարակական մեծ նշանակություն ունեցող իրադարձություն էր:

Հովսեփ Օրբելին 1944 թ. վերադարձավ Լենինգրադ: Էրմիտաժը սարսափելի վիճակում էր: Թանգարանին հսկայական վնաս էր հասցվել: Մշակեց Էրմիտաժի վերականգնման ընդհանուր նախագիծը և սկսեց միջոցներ հայթայթել այդ աշխատանքների իրականացման համար: Այդ տարիներին նրա գիտական ծառայությունները նորից միջազգային ճանաչում գտան. 1944 թ. նա ընտրվեց Լոնդոնի հնագիտական ընկերության, իսկ 1945 թ.՝ Իրանի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, 1955 թ.՝ Լենինգրադի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, իսկ 1956 թ.՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմության ամբիոնի վարիչ, գլխավորել է նաև ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի նորաստեղծ Լենինգրադյան բաժանմունքը: 1957 թ. մարտի 20-ին՝ ծննդյան յոթանասունամյակի օրը, նա երկրորդ անգամ պարգևատրվել է Լենինի շքանշանով: «Աշխատանքային կարմիր դրոշի» կրկնակի շքանշանակիր Հովսեփ Օրբելին նաև ԽՍՀՄ ԳԱ կովկասագիտության մասնաճյուղի ղեկավարն էր:

Հայ ժողովրդին պատիվ բերող աշխարհահռչակ գիտնականը վախճանվեց 1961 թ. փետրվարի 2-ին: Մարմինը հողին հանձնվեց Լենինգրադի Բոգոսլավսկոյե գերեզմանատանը՝ իր եղբոր՝ Լևոն Օրբելու և վերջինիս դստեր կողքին: Տապանաքարը հայկական վարդագույն տուֆից է՝ Հայաստանի կառավարության կողմից ուղարկված, վրան գրված է հայերեն և ռուսերեն՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելի. 1887-1961: Գերեզմանի վրա դրված է Լևոն Լազարեի քանդակած կիսանդրին:

Հովսեփ Օրբելու վայելած հսկայական հեղինակությունը գործունեության տարիներին էլ, հետմահու էլ ամենուրեք զուգորդվել է նրա գիտական բազմաբեղուն վաստակի հետ:

4. ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

Հովսեփ Օրբելին (1887-1961 թթ.) XX դարի խոշորագույն հայագետներից է: Հայրենական գիտության մեջ նա ճանաչված է նաև որպես նշանավոր արևելագետ, հնագետ, վիմագրագետ, թանգարանագետ, բանագետ, աղբյուրագետ, պատմաբան, հուշարձանագետ, արվեստաբան: ՀԽՍՀ և ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս է: Օրբելին ոչ միայն ականավոր գիտնական էր, գիտության հմուտ կազմակերպիչ, այլև ակտիվ հասարակական գործիչ[1]:

Համառոտակի բնութագրենք Օրբելու գիտակազմակերպչական գործունեության որոշ կողմեր:

Բազմաբեղուն ու դարակազմիկ է եղել գիտնականի հնագիտական, վիմագրական, թանգարանաստեղծ գործունեությունը 1906-1917 թվականներին: 1906-1910 թթ. նրա մասնակցությամբ իրականացվել են Անի քաղաքի՝ Ն. Մառի ղեկավարությամբ պեղումները, մասնակցություն է ունեցել Անիի քաղաքատեղի և նրա հուշարձանների ուսումնասիրությանը, Անիի հնադարանի՝ թանգարանի հիմնմանն ու տնօրինմանը: Անիի պեղումների արդյունքների հիման վրա 1910 թ. հրատարակվել է Օրբելու կազմած «Каталог Анийского музея древностей» (СПб., 1910), իսկ ամ-

[1] Տե՛ս ***Юзбашян К. Н.,*** Академик Иосиф Абгарович Орбели, Москва, 1964, с. 15-19. ***Тарле Е. В.,*** Историк-патриот // В кн: ***Орбели И. А.,*** Избранные труды, Ереван, 1963, с. XVIII-XXII. ***Ղաֆադարյան Կ. Գ.,*** Հովսեփ Օրբելի // Հայագիտական հետազոտություններ, Ա, Երևան, 1974, էջ 6-19: ***Ցուզբաշյան Կ. Ն.,*** Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի, Երևան, 1987: ***Պետրոսյան Ցու. Ի.,*** Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի (Ծննդյան 100-ամյակի առթիվ) // ՊԲՀ, № 1, 1987, էջ 3-10: ***Мегрелидзе И. В.,*** Иосиф Орбели, Тбилиси, 1983. ***Пиотровский Б. Б.,*** Академик Иосиф Абгарович Орбели. Биографикческий очерк // В кн: Исследования по истории культуры народов Востока // Сборник в честь академика И. А. Орбели, Москва-Ленинград, 1960. ***Якубовский А. Ю.,*** Академик И. А. Орбели (к 60-летию со дня рождения) // «Вестник древней истории», 1947, № 4 և այլն):

բողջությամբ՝ «Ընտիր երկերում» (И.А. Орбели. Избранные труды, Ереван, 1963, стр. 23-128): 1911 թ. հրատարակվում է «Անվո ավերակները» գրքույկը ռուսերեն՝ «Развалины Ани. История. Современное состояние. Раскопки» («Избранные труды», էջ 1-23): Հայտնի է, որ 1918 թ. պեղումների մասնակից Աշխարհբեկ Քալանթարի և ուսուցիչ Հովսեփ Գալստյանի միջոցով պեղված նյութերի մի մասը բազմաթիվ դժվարությունների հաղթահարման գնով տեղափոխվում է Սանահինի վանքը՝ թուրքական վանդալների թալանից այն փրկելու համար: Այդ նյութերը հետագայում իրենց արժանի տեղն են գտնում Հայաստանի պատմության թանգարանում:

Ուշագրավ են գիտնականի Թոփրակ-կալեում և Հայկաբերդում, 1916 թ. նաև Ն. Մառի հետ Վանում կատարած հնագիտական պեղումների արդյունքները: Վանում Հ. Օրբելին հայտնաբերեց ուրարտական թագավոր Սարդուրի II-ի կոթողային՝ 400 տողանոց տարեգրությունը, որը մինչև օրս գտնված մի քանի հարյուր սեպագիր արձանագրությունների մեջ ամենամեծն է և Ուրարտուի պատմության համար բացառիկ արժեքավորը: Հնագիտական գործունեության հաշվառմամբ 1912 թ. Օրբելին ընտրվեց Սանկտ Պետերբուրգի Ռուսաստանի հնագիտական ընկերության անդամ:

1936 թ. Հովսեփ Օրբելին գլխավորեց Ամբերդի պեղումները նշանավոր գիտնականների ընդգրկմամբ[2]:

Օրբելու՝ ականավոր գիտնականի բազմակողմանի գիտական գործունեության ոլորտներից մեկն էլ ԽՍՀՄ արևելագիտության ասպարեզում ծավալած գործունեությունն էր: Նրա գիտական աշխատությունները՝ նվիրված հայկական, վրացական և Իրանի մշակույթի հուշարձաններին, ինչպես նաև քրդերենի վերաբերյալ

[2] Օրբելու գլխավորությամբ պեղումներին մասնակցում էին հետագայում ճանաչված գիտնականներ դարձած Վալենտինա Աբրահամյանը, Եվգենի Բայբուրդյանը, Սեդրակ Բարխուդարյանը, Հովսեփ Եղիազարյանը, Սուրեն Երեմյանը, Կարո Ղաֆադարյանը, Արտաշես Վրույրը, Սմբատ Տեր-Ավետիսյանը, Լևոն Քալանթարը, Էրմիտաժից՝ Ալիսա Բանկը, Անդրեյ Բորիսովը, Հայկ Գուլումիրյանը, Իգոր և Միխայիլ Դյակոնովները, Տատյանա Իզմայլովան, Անտոն Հաջյանը, Անատոլի Յակոբսոնը, Բորիս Պիոտրովսկին, Նիկոլայ Տոկարսկին (տեղակալ), Կամիլլա Տրևերը և այլք (տե՛ս ***Կ. Գ. Ղաֆադարյան,*** Հովսեփ Օրբելի, էջ 13):

ուսումնասիրությունները մեծ հռչակ բերեցին ականավոր գիտնականին: ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի քրդագիտության կաբինետի կազմակերպիչն ու ղեկավարն էր, տարիներ շարունակ եղել է սովետական քրդաբանների մի քանի սերունդների գիտական ղեկավարը: Դեռևս Մոկսում եղած տարիներին Հ. Օրբելին իր առջև նպատակ էր դրել կատարել տեղական լեզուներով՝ հայերեն և քրդերեն բարբառագիտական հետազոտություններ, կազմել հայերեն-ռուսերեն և քրդերեն-ռուսերեն բարբառագիտական բառարաններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով թե՛ իմաստաբանությանը և թե՛ հնչյունաբանությանը: Այս գործերը հրատարակվեցին Հ. Օրբելու ընտիր երկերի երկրորդ հատորում (Избранные труды, т. II, Ереван, 2002, էջ 185-358):

Մեծ է գիտնականի վաստակը Իրանի մշակույթի պատմության ուսումնասիրության ասպարեզում: Այն ուսումնասիրվում է առավել լայն ընդգրկման՝ Առաջավոր Ասիայի, Իրանի և Անդրկովկասի ժողովուրդների մշակութային փոխազդեցությունների համատեքստում: Նրա «Սասանյան արվեստը» (1924), «Սասանյան արծաթը» և «Շահնամեն» (1944), «Սասանյան մետաղը. գեղարվեստական առարկաներ ոսկուց, արծաթից, բրոնզից» (1935) և այլ աշխատությունները արևելագիտության հիմնարար ուսումնասիրություններից են:

Հովսեփ Օրբելին զգալի ավանդ է ներդրել վրացագիտության, մասնավորապես վրաց արվեստի և գրականության ուսումնասիրության մեջ[3]:

Հովսեփ Օրբելին համարվում է հայկական պատմամշակութային հուշարձանների առաջին գիտական հետազոտողը, հուշարձանագետը: Գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա՝ Էրզրումի, Բայազետի, Վանի, Բագավանի, Աղթամար կղզու ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության և չափագրումների արդյունքները: 1921, 1939, 1948, 1950 թթ. նա զեկուցումներ է կարդացել Աղթամար կղզու ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ[4]: 1929 թ. Հովսեփ Օրբելիու գլխավո-

[3] Տե՛ս ***Мгрелидзе И. В.,*** նշվ. աշխ., էջ 80-107:

[4] Տե՛ս ***Орбели И. А.,*** Из истории культуры и искусства Армении X-XIII вв. // «Избранные труды», т. 1, Москва, 1968, էջ 17-204, 389-419:

րությամբ իրականացվում են Գառնիի, Պտղնիի, Փարպիի, Աշտարակի, Ամբերդի պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությունները: Նրա հնագիտական, ճարտարապետական, վիմագրական հետազոտությունները Անիում, Վանում, Աղթամարում, Խաչենում, Մարմաշենում և այլուր հայագիտությունը հարստացրին առաջնակարգ նշանակություն ունեցող շատ հուշարձանների մասին արժեքավոր տվյալներով, որոնցով ուղղորդվեցին հետագա ուսումնասիրողները:

1914-1917 թթ. Պետերբուրգի համալսարանում դասախոսական գործունեությանը զուգահեռ Հ. Օրբելին ծավալում է վիմագրական բեղմնավոր գործունեություն: «Քրիստոնյա Արևելք» ռուսական հանդեսում տպագրվում են Անիի, Մարմաշենի, Լեռնային Ղարաբաղի և այլ հուշարձանների արձանագրությունների իր ուսումնասիրությունները (յոթ գիտական հոդված): Դեռ 1909 թ. Լեռնային Ղարաբաղի պատմական Խաչեն գավառում ընդօրինակվեց 220 արձանագրություն: Նրա վիմագրական ուսումնասիրությունները հետագայում հրատարակվեցին «Դիվան հայ վիմագրության» (Երևան, 1966) I պրակում (Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի):

Հովսեփ Օրբելին տաղանդավոր թանգարանագետ էր: Անիի փոքրիկ հնադարանից հետո նրա տաղանդը փայլեց համաշխարհային գլուխգործոց թանգարաններից մեկում՝ Լենինգրադի պետական Էրմիտաժում, որտեղ նա աշխատեց ավելի քան 30 տարի, նախ՝ որպես բաժնի վարիչ ապա՝ տնօրեն: Օրբելու օրոք ստեղծվեց և ընդլայնվեց անգերազանցելի Արևելքի բաժինը: Գիտնականի ջանքերով Էրմիտաժը պատկերասրահից վերածվեց արվեստի և մշակույթի համաշխարհային թանգարանի, պատրաստեց թանգարանային գործի միջազգային ճանաչում ստացած նշանավոր մասնագետներ: Բացառիկ է եղել նրա ավանդը պաշարված Լենինգրադում Էրմիտաժի անգին հավաքածուների տարհանումը, անվտանգության կազմակերպումը և վերաբացումը կազմակերպելու գործում: 1945 թ. վերաբացվեց 60 դահլիճ: Բացառիկ այս գործունեության համար Օրբելին պարգևատրվեց Լենինի շքանշանով[5]:

[5] Տե՛ս ***Նահապետյան Ռ. Ա.,*** Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջանում (1920-1940-ական թթ.) // «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2(16), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, ԵՊՀ հրատ., 2017, էջ 5-29:

Օրբելին մեղվաջան աշխատանք է կատարել հայ միջնադարյան մշակույթի լավագույն նմուշները գրաբարից ռուսերեն թարգմանելու և գիտական լայն շրջանառության մեջ դնելու ուղղությամբ: Նրա թարգմանությամբ լույս են տեսել Մխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու «Առակները»[6], Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատությունը[7] և շատ այլ հուշարձաններ: Ա. Գ. Աբրահամյանն էլ առանձին հոդվածով անդրադարձել է Օրբելու կողմից Անանիա Շիրակացու «Խնդրագրքի» ռուսերեն թարգմանությանը[8] և այդ առթիվ նրա առաջ քաշած մի շարք հարցերին, որոնք մեծ արժեք ունեն Հայաստանում[9] բնական գիտությունների պատմության ուսումնասիրության համար:

Հ. Օրբելին միաժամանակ նշանակալի ներդրում է ունեցել նաև հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտության կայացման և զարգացման գործում: Ցավոք, առ այսօր, գիտնականի ազգագրական գործունեության վերաբերյալ մեկ հաղորդումից[10] զատ, այլ ուսումնասիրություններ դեռևս արված չեն:

Գիտնականը դեռ Պետերբուրգի համալսարանում ուսանելու տարիներին մի քանի հոդված է գրել հայերի, վրացիների և մահմեդական ժողովուրդների արվեստի վերաբերյալ, որոնք զետեղվել են Բրոկհաուզի և Էֆրոնի նոր հանրագիտական բառարանում: 1909 թ. Հ. Օրբելին Պետերբուրգի պատմաբանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո պաշտպանել է թեկնածուական ատենա-

---

[6] Տե՛ս ***Орбели Иосиф,*** Басни средневековой Армении, Москва-Ленинград, 1956: Տե՛ս նաև ***Орбели И. А.,*** Из истории культуры и искусства Армении X-XIII вв., т. 1, Москва, 1968, էջ 207-388:

[7] Տե՛ս ***Егише,*** О Вардане и воине армянской, перевод с древнеармянского акад. И. А., Орбели, Ереван, 1971.

[8] Вопросы и решения вардапета армянского математика VII века, издал и перевел И. А. Орбели, Петроград, 1918: Աշխատության վերահրատարակությունը տե՛ս ***Орбели И. А.,*** Избранные труды, Ереван, 1963, էջ 512-537:

[9] ***Աբրահամյան Ա. Գ.,*** Հ. Օրբելին Շիրակացու «Խնդրագրքի» թարգմանիչ և մեկնաբան // Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա., Երևան, 1974, էջ 20-29:

[10] ***Վարդումյան Դ.,*** Հ. Օրբելու ազգագրական հետազոտությունները Մոսկում // «Նոր ազգագրական հանդես», 2005, № Ա., էջ 122-123:

խոսություն՝ «Կովկասի ազգագրությունը՝ ըստ դասական (հունական և հռոմեական) հեղինակների տեղեկությունների»: Նրա ազգագրական դիտարկումները հիմնականում վերաբերում են Արևմտյան Հայաստանի Մոկս գավառին, որտեղ նա Ն. Մառի խորհրդով 1911-1912 թթ. գործուղվում է Պետերբուրգի կայսերական գիտությունների ակադեմիայի կողմից: Այստեղ էլ նա գրի է առնում ազգագրական, բանահյուսական ու բարբառագիտական եզակի նյութեր: Նրա Մոկսում կատարած գրառումները առաջինն ու միակն են, որոնք իրականացվել են դաշտային ուսումնասիրությունների պայմաններում: Ըստ որում՝ գիտնականը շատ էր կարևորում նյութերի բնագրային արժեքի պահպանումը:

Մոկսում կատարած գիտական հետազոտությունների արդյունքները իր կենդանության օրոք լույս չտեսան: 1982 թ. հրատարակվեց միայն դրանց մի փոքր մասը[11], որն ընդգրկում էր Մոկսի մասին ազգագրական ակնարկը և գրառված բնագրերի ռուսերեն թարգմանությունները: Ազգագրական ուսումնասիրությունները (Մոկսը և նրա բնակիչները, գավառի 1911-1912 թթ. բնակավայրերի ցուցակը) լույս տեսան միայն հետագայում՝ 2002 թ., հրատարակված «Ընտիր երկերի» 2-րդ հատորի առաջին բաժնում[12]:

Մոկսի աշխարհագրական պայմանները, բնակչությունը և բնակավայրերը. Մոկսում գիտնականը նյութերը գրառել է 23 հայ և 1 քուրդ՝ հայերենին, արաբերենին, պարսկերենին, թուրքերենին տիրապետող բանասացներից: Նրանք հիմնականում տղամարդիկ էին, հիշատակված է նաև կին բանասաց՝ Նազե Շահամիրյան անվամբ, որից Հ. Օրբելին գրառել է զվարճախոսություններ:

Ըստ Օրբելու՝ Մոկսը XX դարի սկզբին գավառակ էր (կազա) Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Վանի գավառում՝ Վանա լճի հարավային կողմում, որը հայտնի էր նաև որպես Մեուքուզ, Մյոքուզ, Մոգս, Մոկաց գավառ, Մոկյուս, Մոկսայե, Մոկուս, Մոկք, Մուքուս: Տարածքը մոտավորապես համապատասխանում էր պատմական Մեծ Հայքի Մոկք աշխարհի Մոկք-Առանձնակ գավառին: Կենտրոնը Մոկս գյուղաքաղաքն էր: Գավառի Մոկս (Մոգք, Մոգս) անվանման ժողովրդական ստուգաբանության վե-

[11] Տե՛ս ***Орбели И. А.,*** Фольклор и быт Мокса, Москва, 1982:

[12] Տե՛ս ***Орбели И. А.,*** Избранные труды в двух томах, т. II, Ереван, 2002 (այսուհետ՝ ԸԵ, էջը):

բաբերյալ Օրբելին բերում է հետևյալ ավանդությունը. «Մանուկ Քրիստոսին խոնարհվելուց հետո երեք մոգերը վերադառնում են Բեթղեհեմից: Նրանցից մեկը՝ Գասպարը, ճանապարհին հիվանդանում, մահանում ու թաղվում է այնտեղ: Այդ վայրում հետագայում (1408 թ.) կառուցվում է Սուրբ Գրիգոր Ամենափրկիչ եկեղեցին, իսկ երկիրը կոչվում է Մոգք (Մոգս)» (ԸԵ, 8): Ունի խիստ լեռնային ռելիեֆ, խմելու և ոռոգելու առատ ջուր, զով ու առողջարար կլիմա, սաղարթախիտ անտառներ, փարթամ արոտավայրեր, բուսական ու կենդանական հարուստ աշխարհ: Գավառակի երկարությունը մոտ 30 կմ է, լայնությունը՝ 25 կմ: Նրան եզերում են հյուսիսից Եղերովի, արևելքից՝ Կոռաչապահի և Առնոսի, արևմուտքից՝ Կառկառի, իսկ հարավից՝ Բարվարի լեռները: Բաժանված էր յոթ գլխավոր գյուղախմբերի՝ Բառագյալին, Հառնջուգյալին, Հառնանցգյալին, Տալանից ձոր, Տինիսգյալին, Տուրկագյալին, Փութկուգյալին: Խիտ լեռնային այս գավառակը ներկայանում է տեղ-տեղ գետերի ընթացքով ձգվող հովիտներով:

Մոկս գյուղաքաղաքը Մոկս գավառի կենտրոնն է, ընկած է Վան քաղաքից հարավ-արևմուտք՝ 60 կմ հեռավորության վրա՝ Մոկս կամ Մոկաց ջուր գետի աջ և ձախ ափերին, լեռան ստորոտում՝ 1650 մ բարձրության վրա: Իսկ շրջակա լեռները 3-4 հազար մետր բարձրություն ունեն, գագաթները կլոր տարին սառցապատ են, շուրջբոլորը անդնդախոր կիրճեր են, անանցանելի թավ անտառներ, տարվա 5-6 ամիսը կտրված է «աշխարհից», ասես փակ ամրոց լինի:

Հ. Օրբելին Մոկս գյուղաքաղաքը նկարագրել է իր դիրքով, շրջակա միջավայրով, բնակչության կենցաղամշակութային պատկերով: Ըստ այդմ՝ գյուղաքաղաքը բաղկացած էր հինգ թաղամասից՝ **Քյաղքը** թաղ (Քաղաքի թաղ), **Անջղոնց** (Անճղոնց) թաղ, **Ապըրխամանց** (Աբրահամենց) թաղ, **Տյաշտը** (Դաշտ) թաղ և **Մանդականց** (Մատկունց)՝ հայ և քուրդ բնակչությամբ: Դժվար չէ նկատել, որ քաղաքի 3 թաղամասերը կրում են ազգակցական, տոհմական անվանումներ, ինչը խորհրդանշում է նրանց բնակիչների ազգակից ընտանիքներով համատեղ բնակվելու սովորույթի մասին, իսկ երկու թաղամասերի անվանումները պայմանավորված են եղել տեղանքի աշխարհագրական դիրքով:

Մոկսի կենտրոնական Քյաղքի թաղում էին շուկան, խանութ-

ների շարքը, դայֆախանաները (սրճարան), կառավարական տունը, որը «կունախ» էին անվանում: Բնակվում էին 20 տուն հայեր և 4-5 տուն թուրք պաշտոնյաներ: Այստեղ էր գտնվում Սուրբ Հովհաննես եկեղեցին:

Անջղոնց թաղում էին գտնվում արհեստանոցներն ու իջևանատունը (խանը): Թաղում կար 15 տուն, բնակիչները հիմնականում արհեստավորներ էին (սոլկար, դարբին, պայտար), 4 ընտանիք զբաղվում էր առևտրով: Նրանից վերև՝ Ջերմուկ կոչված աղբյուրի մոտ, 1908 թ. կառուցվել է կենտրոնական հայկական դպրոցը: Թաղի եկեղեցին կոչվում էր Սուրբ Աստվածածին:

Տյաշտի թաղի բնակչությունը կազմված էր 42 տնտեսությունից: Նրանց զբաղմունքն էր շալագործությունը, հողագործությունը և անասնապահությունը: Թաղի եկեղեցին կոչվում էր Սուրբ Հակոբ: Այն գտնվում էր քաղաքից դուրս՝ գերեզմանոցի հարևանությամբ:

Ապըրխամանց թաղում կար 20-25 տուն: Բնակչությունը զբաղվում էր արհեստագործությամբ (շալագործություն, կտավագործություն), առևտրով, անասնապահությամբ և հողագործությամբ: Այն ևս ուներ եկեղեցի:

Մանդականցը առանձին թաղ էր կազմում Մոկս գետակի ձախ ափին՝ սարալանջի վրա, ընդամենը 7 տուն, որտեղ ապրում էին ջրաղացպանների ընտանիքները: Գետափին, կողք կողքի կային 5 ջրաղաց և 1 ձիթհանք[13]:

Մոկաց ջուր գետի ստորին հոսանքի աջ կողմում՝ Դալան և Մարմախ կոչվող կիրճերի միջև, ևս 4 գյուղ կար, իսկ մնացած գյուղերն ու ագարակները տեղաբաշխված էին հարևան կիրճերի ուղղությամբ: Ընդհանուր առմամբ Մոկս գավառի խոշոր բնակավայրերը 75-ն էին, ևս 5 ագարակներ ունեին 2-3 տնտեսություններ: Գյուղերը գտնվում էին 8 առանձին ձորակներում (կիրճերում): Նրանցից 3-ը մոտ էին Մոկս գյուղաքաղաքին և մասնակցում էին քաղաքի տնտեսական և առևտրական կյանքին: Հայա-

[13] Մոկսի մասին այս տեղեկությունները քաղել ենք Ա. Դարբինյանի «Մոկսի ազգագրական և բանահյուսական նյութեր» ձեռագիր աշխատությունից (VII և VIII մաս), տե՛ս ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, ՀԱԻ ԱԲԱ, թղթ. № 24, գործ № 26, 27:

բնակ այդ գյուղերից մեկի մոտ գտնվում էին միջնադարյան բերդի ավերակները: Մոկաց ջուր գետի վրա դեռ XVI դարում (1553 թ.) կամուրջ էր կառուցվել առևտրով զբաղվող երկու եղբայրների՝ Խոջա Մուրադի և Խոջա Կարապետի (Քերապետ) կողմից, որոնք այդ մասին կամրջի պատին թողել են արձանագրություն (ԸԵ, Мокс и его обитатели, էջ 1-34): Ընդ որում, դրանում հիշատակված է նաև, որ այն կառուցվել է Մոկսի դաժան կառավարիչ Ավդալի ժամանակներում:

Մոկս գյուղաքաղաքի 5 թաղամասերը, ինչպես ասվեց, ունեին իրենց եկեղեցիները, որոնցից կանգուն էին մնացել Անջղոնց Ս. Աստվածածինը (XIII դ., վերանորոգված 1676 թ.), Տյաշտ (Դաշտ) թաղամասի Ս. Հակոբը (XIV դ.), որը ուշ միջնադարում եղել է գրչության նշանավոր կենտրոն: Մոկաց Ս. Խաչ վանքը, որը կոչվել է նաև Ս. Կանանց վանք (ըստ ավանդության հիմնել է Հռիփսիմեն), հիշատակվում է X դարից: Այն մշակութային կարևոր կենտրոն է եղել XIV-XVI դարերում: Վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, ըստ արձանագրության, կառուցվել է 1408 թ., ուներ սրբատաշ բազալտից կառուցված XVII դարի ժամատուն: Դրանք միանման կառուցված եկեղեցիներ էին: Մոկս գյուղաքաղաքի մոտ էին գտնվում նաև Մոկաց Ս. Գևորգ, ավելի գործածական՝ Փուլթկու Ս. Գևորգ և Մոկաց Ամենափրկիչ վանքերը: Փուլթկու Ս. Գևորգ վանքը կառուցվել է 1887 թվականին: Ս. Գևորգի գերեզմանը քրդերը կոչում էին Միր-Խասանի: Ջմռանը եկեղեցու համալիրի մի տեղից մյուսի գնալը հնարավոր էր միայն՝ ձյան տակով մարդաբոյ երկար թունել բացելով[14]:

Մոկաց Ամենափրկիչ վանքը, որը հիշատակվել է XIII դարից,

[14] «Փուլթկի Սուրբ Գևորգ» – ըստ ժողովրդական-եկեղեցական ավանդության՝ այսպես է կոչվել սուրբ Գևորգի գլուխը պուտուկի (կճուճի) մեջ դրած բերելու և այդ սրբավայրի հիմքում թաղելու պատճառով: Սրբավայրը նվիրական է եղել ու սիրելի տեղի թե՛ հայ և թե՛ քուրդ բնակչության շրջանում: Այն, ըստ ավանդության, կառուցվել է Միր Հասան անունով իշխանի կողմից, որը որսի է դուրս եկել Մոկաց լեռներում՝ մոլորվելով խիտ և թավուտ անտառներում: Նա օգնության է կանչել սուրբ Գևորգին, որը օգնել և փրկել է նրան: Իշխանը նրա պատվին այդ վայրում կառուցել է սրբատեղի, որը հետագայում վերածվել է վանական համալիրի և մանավանդ ձմռանը Մոկաց լեռներում դարձել մոլորված ուխտավորների և ճանապարհորդների համար պատսպարան ու ժամանակավոր կացարան:

կառուցվել է Մոկս գյուղաքաղաքից արևելք՝ Առնջո ձորում, լեռան լանջին: Այն XIII-XVI դարերում եղել է Վասպուրականի նշանավոր գրչության կենտրոններից մեկը: Նրա գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցին վերակառուցվել է 1570 թ. Հովսեփ ճարտարապետի ձեռքով: Մոկսի մոտ՝ բարձր լեռան գագաթին, ինչպես ասվեց, պահպանված են հին բերդի ավերակները՝ իր աշտարակով: Գյուղաքաղաքի հարավային կողմում կար մի քարաժայռ՝ Արծվաքար անվամբ, որտեղ իբր բնակվում են երկնային էակներ: Մոկս գավառի Առնոս լեռան ստորոտին է գտնվում Ս. Վարդանի կամ Ս. Վարդանանց վանքը (ԸԵ, էջ 7-8):

Գիտնականը «Մոկսի բանահյուսությունը և կենցաղը» գրքի հավելվածում զետեղել է 19 լուսանկար, պատկերել է բնական տեսարաններ, շինություններ, տարազների նմուշներ, տապանաքարեր, նաև մանուկների հետ հայուհիների լուսանկարներ, ապա Մուրթուլա բեկին՝ իր վարչակազմով:

Տնտեսական կենցաղը և նյութական մշակույթը: Երկրագործություն. Մոկս գավառակի նստակյաց երկրագործական կյանք վարող հայ բնակչությունը, ըստ Հ. Օրբելու գրառումների, կազմել է 672 տուն[15], իսկ քրդերը, որոնք սուննի մահմեդականներ էին, 640, բացի դրանից, 1-2 թաղամասերում ապրում էին նաև գնչու-բոշաների (լճան) 4-5 ընտանիք և ամբողջ գավառում՝ 4-5 թուրք աստիճանավորների ընտանիքներ (ԸԵ, Мокс..., 7-9):

Մոկս գյուղաքաղաքը XX դարի սկզբին ուներ 2000 բնակիչ, որի գերակշիռ մասը հայեր էին: Մոկսի հայաբնակ 49 բնակավայրերի ավելի քան 900 ընտանիք տեղահանվել է 1915 թվականին: Նրանց մեծ մասը զոհվել է բռնագաղթի ճանապարհին: Փրկվածները հիմնականում անցել են Արևելյան Հայաստան և բնակություն հաստատել Թալինի, Աշտարակի շրջաններում, Սևանի ավազանում և այլուր: Տեղացի հայերին քրդերն անվանում էին հոռոմներ կաթոլիկ դավանանքի պատճառով, իսկ հայերը քրդերին՝ կարմրագլուխներ՝ կարմիր գլխարկ կրելու համար:

Գիտնականը նկարագրել է հայ բնակչության՝ որպես նստակ-

[15] XX դարի սկզբներին Մոկսի 49 բնակավայրերի հայ բնակչությունը կազմված է եղել ավելի քան 900 ընտանիքից (տե՛ս ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 697):

յաց երկրագործների և քրդերի՝ որպես անասնապահների զբաղմունքները՝ հողագործություն, անասնապահություն, տնայնագործություն, արհեստները, փոխադրամիջոցները, բնակավայրերն ու բնակարանները, կենցաղը, տարազը և այլն: Նստակյաց կյանք վարող հայ և քուրդ բնակչությունը համատեղ ապրում էին Մոկսի գյուղերում և ագարակներում՝ առանձին թաղամասերով: Համատեղ կյանքը շատ նմանություններ էր առաջացրել բնակարանի, հագուստի, կյանքի այլ կողմերի վերաբերյալ (ԸԵ, Мокс..., 10):

Բնակլիմայական բացառիկ դժվարին պայմաններում հայ բնակչությունը վարում էր աշխատատար երկրագործական-անասնապահական համալիր տնտեսաձև: Լեռնային անտառածածկ շրջաններում ձմռան 5-6 ամիս տևողության պայմաններում հիմնականում մշակում էին այնպիսի հացաբույսեր, որոնք կարող էին ապահովել բարձր բերք: Դրանցից էին կորեկը՝ իր բազմաթիվ՝ կարմիր, սև, ճերմակ տեսակներով, տարեկանը, հաճարը, գարին, ցորենը: Մշակում էին նաև խաղող, բամբակ, տեսակ-տեսակ պտղատու ծառեր, ձիթատու բույսերից՝ կտավատ, նաև բոստանային կուլտուրաներ: Յուրաքանչյուր տուն ձմեռը դահուկ-սահնակներով, գարնանը՝ շալակի կողովներով, իր ունեցած գոմաղբը տեղափոխում էր արտերը՝ որպես պարարտանյութ: Գարնանը նախքան վարուցանքը անասուններին արոտ էին հանում արտերի վրայով: Ոչխարի մեզը, անասունների գոմաղբը հողի պարարտացման ամենաուժեղ միջոցն էին համարում, ուստի այստեղ և շրջակա վայրերում այդ եղանակը գործածում էին գրեթե բոլոր ընտանիքները:

Մոկսում լեռնային տեղանքի պատճառով մշակաբույսերը պահանջում էին մեծ խնամք, լարված ու դժվարին աշխատանք: Սակավահողության պատճառով լանջային տեղանքներում ստեղծում էին դարավանդային արտեր, իսկ անտառածածկ հատվածներում կիրառում էին անտառահատահրկիզային համակարգը, որը բնորոշ էր դարձել լեռնային հայ բնակչության տնտեսական կենցաղում: Այս առումով Մոկս գավառի բնական պայմանների և տնտեսական կյանքի շատ կողմեր նման էին լեռնային Սասունին[16]: Հովսեփ Օրբելին իր դիտարկումներում չի անդրադարձել երկրագործական աշխատանքային գործիքներին, վարման եղա-

[16] ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ), Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, 2004, էջ 30-34:

նակներին (ԸԵ, Мокс..., 9-35): Այստեղ, ինչպես և Հարևան Աղձնիքում և այլուր, ցանքը կատարել են միայն արորով և մի զույգ եզով: Ըստ Վ. Բդոյանի հետազոտությունների՝ Միջագետքին հարող հայկական բոլոր ազգագրական շրջաններում՝ Ծոփք-Աղձնիքում, դուցե նաև Կորճայքում (այդ թվում նաև՝ Մոկքում – Ռ. Ն.) գութան չի օգտագործվել[17]: Մոկսի տարածաշրջանում գյուղատնտեսական տեխնիկան չափազանց պարզունակ է եղել. վարը կատարվել է պարզունակ արորով, հունձը կատարվել է մանգաղով, գերանդի գործածելու սովորություն չկար, կալսումը՝ անասուններին ոտքերի տրորման՝ գոռի կամ կոռի համակարգով: Աշխատանքը կատարելիս 3-5, երբեմն էլ 6-10 եզ ու արջառ կողք կողքի պահած, վզները հյուսում, միացնում էին երկար պարանով կամ թե գոռի կոչված հատուկ շղթայով, անասունների բերանները կապում էին ուռենու թարմ ճյուղերով: Կողք կողքի, միմյանց կապված, շարքով պտտեցում էին կալում՝ կենտրոնում կանգնած կամ տեղում պտտվող եզան շուրջը: Կենտրոնինը, որը միայն առանցքի շուրջն էր պտտվում, կոչվում էր **բնդոր**, ծայրերին լծվածը՝ **սարդորի եզ**, որոնք ամենից ավելի արագ էին պտտվում: Կոռը քշողը օրվա մեջ մի քանի անգամ անասունների խումբը մինչև կալման ավարտը աջից ձախ, ձախից աջ էր դարձնում և անասունների դիրքն ու տեղն էր փոխում՝ չհոգնեցնելու համար: Այստեղ **կամը** որպես կալսող գործիք չէր գործածվում: Կոռիով կալսումը կատարվում էր յուրաքանչյուր տան բակում: Ամեն տան կալատեղը տան առջև եղած հարթ հրապարակն էր կամ ներքևի հարևանի կտուրը: Նրան կից կառուցված էր կալտունը՝ երեք պատերով, թեք ծածկով, առջևը բաց, որտեղ լցնում էին հարդը կալսումը ավարտվելուց հետո, իսկ անձրևի դեպքում՝ ամբողջ կալը: Կալտունը կալը նայող կողմն էր՝ բաց երեսով, իսկ հատակը կալի մակերեսին էր հավասար: Բերքահավաքի ժամանակ օրանը (կալսվելու համար հնձած հացահատիկ) խուրձ-խուրձ արված շալակով էին տեղափոխում կալատեղ, որը պետք է լավ պնդացրած հատակ ունենար: Կալսումը վերջանալուց հետո եղաններով՝ **հորսելիներով** և փայտե թիերով բոլոր կողմերից ծեծած օրանը հավաքում, կիտում էին կալի կենտրոնում, դարձնում թեղ (կալսված հարդախառն հացահատիկի կույտ) և ձեռնամուխ լինում հատիկն ու հարդը

[17] Տե՛ս ***Բդոյան Վ.,*** Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 212:

էրնելուն՝ քամուն տալուն՝ հարդը հացահատիկից առանձնացնելու համար, որովհետև քամհար մեքենան այստեղ մուտք չէր գործել (ԸԵ, Мокс..., 12): Հարդը առանձնացնում և լցնում էին կից կառույցի՝ կալատան մեջ, իսկ կորեկը, գարին կամ ցորենը, առանձնացնելով հարդից, մաղում էին տարբեր մեծության անցքեր ունեցող մաղերով: Նախ ծանծախառն հատիկը մաղում էին անցքերը մեծ՝ **սրուատ** մաղով, ապա՝ ավելի փոքր անցքերով **քարմաղով** և քարից ու հարդից մաքրվածը մաղում էին **փոքեմաղով**, այնուհետև՝ պահեստավորում այծի մազից հյուսված պարկերում՝ **ջվալներում**: Այս նույն եղանակը գրեթե նույնությամբ կատարվում էր նաև Սասունում[18]:

Ուշագրավ են վարուցանքը հաջողությամբ իրագործելուն ուղղված ժողովրդական հավատալիքների վերաբերյալ գիտնականի գրառումները: Այսպես, տևական ոչ անձրևային եղանակի դեպքում կանայք ավանակին տանում էին աղբյուրի կամ գետակի մոտ, լողացնում, հետո կանացից մեկը հրացանը ձեռքին հեծնում էր ավանակին՝ դեմքով դեպի պոչը և այն ձեռքն առած՝ քշում էր դեպի վարատեղ, որտեղ էլ օդ էր կրակում՝ կենդանի և անկենդան էակներին՝ չարքերին վախեցնելու ու փախցնելու համար: Այդպես ակնկալում էին եղանակի փոփոխություն և անձրև: Մեկ այլ հավատալիքի համաձայն՝ գիշերը հայ տղամարդիկ գնում էին քրդերի, քրդերը՝ հայերի դերեզմանները, իրենց խոնջանները՝ գոտիները, կապում էին գերեզմանաքարին, հայկական գերեզման-խաչքարին և ապա գոտին գլորում էին մոտակա գետակը: Այդ պահին նրանցից մեկն անպայման պետք է չան նման հաչեր (ԸԵ, Мокс..., 33):

Գյուղատնտեսական տեխնիկայի պարզունակությունը, արտադրողական ուժերի զարգացման ցածր աստիճանը մարդուն կախման մեջ էին պահում նաև բնությունից, շրջապատող աշխարհագրական միջավայրից: Ուստի, այստեղ ևս, ինչպես հայկական մյուս պատմական գավառներում, բավարար քանակությամբ կենսամթերքների արտադրությունը, բնակարանային ու արտադրական կառույցների չինարարությունը, բնության տարերքի դեմ պայքարելն անհնար կլիներ առանց համայնքի անդամների և ըն-

[18] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիք. պատմաազգագրական ակնարկ // Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, էջ 162-177 և հավելվածը:

տանիքների կոլեկտիվ փոխադարձ օգնության կազմակերպման: Կիրառվում էին աշխատանքային համագործակցության տարբեր ձևեր. հայ գյուղացիական ընտանիքները համախմբում էին աշխատուժը և արտադրամիջոցները: Խմբային աշխատանքները իրականացնում էին հերթականությամբ:

Իրողություն է, որ Մոկսում քրդերի որոշ մասն անցել էր նստակեցության, այդուհանդերձ, բացառապես երկրագործությամբ զբաղվողները հայերն էին: Սակավաթիվ թուրք բնակչությունը բնակվում էր Մոկս գյուղաքաղաքում, իսկ քրդերը հիմնականում զբաղվում էին խաշնարածությամբ: Նրանց հիմնական զանգվածները սեզոնային վրանաբնակ վաչկատուններ էին:

Անասնապահություն. Ալպիական հարուստ մարգագետիններին առկայությունը նպաստում էր արոտային անասնապահության, հատկապես խաշնարածության զարգացմանը: Այստեղ կիրառվում էր անասնապահության նստակյաց համակարգը՝ ձմռանը մսուրային, ամռանը՝ արոտավայրային խնամքով: Ձմռան երկարատևության պատճառով անասունները ենթարկվում էին մսուրային խնամքի շուրջ 5-6 ամիս տևողությամբ:

Անասնապահությունը գավառի հիմնական զբաղմունքն էր: Գիտնականի գրառումների համաձայն՝ անասնապահության մեջ գերակշռում էր ոչխարաբուծությունը, այծաբուծությունը, դրանցով պայմանավորված՝ կաթնատնտեսությունը, բրդամշակությունը, ջուլհակությունը, շալագործությունը, գզրարարությունը, որոնք Մոկս գավառի հայ բնակչության հիմնական զբաղմունքներն էին: Մոկսի հայությունը կաթնատու խոշոր եղջերավոր անասուններին պահում էր ուշադրության կենտրոնում, նրանց նկատմամբ ցուցաբերում մշտական խնամք և հոգատարություն: Գիտնականը գրառել է նաև անասնապահությանն առնչվող հավատալիքներ: Դրանցից մեկի համաձայն՝ տանտիրուհուն չհնազանդվող կովին հնազանդեցնելու նպատակով նրա մեջքին բարձում էին հաց թխելու գործածական պարագաներ՝ դրտնակ, բաթաթ, ակիշ և այլն, և քշում արոտավայր: Երեկոյան կովի ետևից գնում էր հարևանը՝ տուն վերադարձնելու համար: Հաց թխելու պարագաները, ըստ տեղացիների պատկերացումների, կովին «խելքի էին բերում» (ԸԵ, Мокс..., 17-18): Մեկ այլ հավատալիքի համաձայն՝ հավին թուխս դնելիս ածան հավերի գլխաքանակը ապա-

հովելու համար երկու աղջիկ թխսին նստեցնում էին 11 ձվերի վրա, թխսի մի կողմում նստում էր մեկ տղա երեխա, մյուս կողմում՝ 10 աղջիկ երեխա, որպեսզի 11 ձվից մեկը լիներ որձակ, մնացած տասը՝ ածան հավ (ԸԵ, Мокс..., 17-18):

Հ. Օրբելին ակնարկներ ունի Մոկսի վաչկատուն կյանք վարող քրդերի վերաբերյալ: Ըստ նրա՝ նստակյաց կյանք վարող քրդերից վաչկատունները տարբերվում էին թե՛ կյանքի պայմաններով, վարքով, սովորույթներով և թե՛ բարբառով: Մոկսի հարավային վաչկատուն Բոհտանի Ջեզիրեի քրդերի 200 ընտանիք Մոկսի արոտավայրերն էին բարձրանում մայիս ամսից իրենց անասունների հոտերով՝ 40.000 ոչխար, 6.000 խոշոր եղջերավոր անասուն, 1000 ջորի, 200 ձի և այլն: Այստեղ էին հաստատվում նաև Սղերդի քրդերի 300 ընտանիք՝ իրենց բազմաքանակ հոտերով (ԸԵ, Мокс..., 9):

Արհեստագործություն. Մոկաց լեռնաշխարհի հայ բնակչության հիմնական արհեստներն էին շալագործությունը, գզրարությունը, թաղիքագործությունը, ջուլհակությունը: Մոկսի և նրա հարևան գավառների՝ Շատախի, Գավաշի հայ բնակչության կենցաղում լայն տարածում ունեին բրդի մշակումը, բուրդ գզելու՝ գզրության և բրդի մնացորդներից թաղիք (քեչա) գցելու արհեստները՝ թաղիքագործությունը: Մոկացի թափառաշրջիկ գզրարներն ու թաղիքագործները հայրենի եզերքից դուրս էին գալիս արտագնա աշխատանքի՝ աշնան սկզբներին խմբեր կազմած՝ տարածվելով Թուրքիայի, Կովկասի, Հարավային Ռուսաստանի հայաբնակ շրջաններում: Սովորաբար Մոկացի գզրարներն ու թաղիքագործներն արտագնա աշխատանքի էին մեկնում մինչև առաջին ձյան գալը՝ հոկտեմբեր ամսին և վերադառնում էին ապրիլին, որովհետև ձմռանը ճանապարհները փակվում էին և լեռնանցքներում մոլեգնում էր փոթորիկը: Մոկսի և շրջակա գավառների աշխարհագրական դիրքն ու տնտեսական զբաղմունքները նկարագրել է նաև Գարեգին Սրվանձտյանցն իր «Համովհոտով» աշխատության մեջ[19]:

Ընկույզի կեղևից ստանում էին ներկ, որով ներկում էին բրդյա գործվածքները (ԸԵ, Материалы экспедиции 1911-1912 гг. по этнографии и фольклору Мокса, 3): Մոկսում շատ գնահատե-

[19] Տե՛ս ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 402:

լի էին նախշազարդ շալե գոտիները: Ըստ Օրբելու՝ այստեղ բրդյա գործվածքեղենը աչքի էր ընկնում որակով, նախշազարդման բարձր արվեստով, վարպետությամբ: Տարածված էին նաև հարավային հարևան գավառներից ներկրվող բամբակի հումքով իրականացվող կտավագործությունը և քաթանի արտադրությունը: Տղամարդու զգեստեղենի մեջ գերակշռում էին շալից պատրաստված շալվարը, վերնազգեստները:

Հաղորդակցության միջոցներ. Բնակչությունը կտրված էր արտաքին աշխարհից ճանապարհների բացակայության, տեղադիրքի պատճառով: Ամենուրեք բարձրաբերձ լեռներ էին, կիրճեր, ձորեր, ինչի հետևանքով անհնար էր անիվավոր փոխադրամիջոցների կիրառումը, ուստի բեռներն ու բերքը տեղափոխում էին մարդիկ՝ իրենց ուսերին բարձած կամ շալակով, որոշ դեպքերում՝ ձեռքի մանր անիվավոր քարշակներով: Սայլը կամ կառքը անծանոթ փոխադրամիջոց էր այն կիրառելու անհնարինության պատճառով:

Հաղորդակցությունը այստեղ իրագործվում էր նեղ արահետներով, որոնք ձգվում էին նեղ կիրճերի եզրով, հետևաբար բեռները մեծ մասամբ տեղափոխում էին ոչ թե դրաստներով, այլ շալակով, որովհետև, ինչպես վկայում են մատենագիրները, «...լերինս բարձրաբերձս և փապարս անտառախիտ ունի[20]»: Վերոհիշյալ փաստը հիմք է ծառայել, որ մոկացիները նորածին տղայի օրորոցում պարանի կտոր դնեին և մաղթեին, որ լավ բեռնակիր լինի (ԸԵ, նշվ. աշխ, էջ 7):

Մոկսն արտաքին աշխարհի հետ կապվում էր Շատախի, Առնոսի, Նեմրանի և Եղերովի լեռնանցքներով: Վերջինիս ամենաբարձր կետում՝ Մոկս գյուղաքաղաքի շրջակա երկու կիրճերի միջև, մի հարթության վրա գտնվում էր հռչակավոր Փութկու Սուրբ Գևորգ սրբավայրը՝ ճանապարհորդների օթևանը, որտեղ նրանց անվճար սնունդ և ապրելու պայմաններ էին տրամադրվում: Երբեմն ճանապարհորդներն օրերով մնում էին արգելափակված՝ մինչև Սուրբ Գևորգի հռչակավոր սև աքաղաղի կանչը: Աքաղաղի կանչը գուշակում էր լավ եղանակ, ու գրավական էր, որ մարդիկ անփորձանք կհաղթահարեն լեռնանցքը (ԸԵ, Материалы..., 6-7)[21]:

Ձյան վրայով անվտանգ քայլելու համար հագնում էին թաղիքե,

[20] ***Թովմա Արծրունի,*** Պատմութիւն Արծրունեաց, Երևան, 1978, էջ 314:
[21] Տե՛ս նաև ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ. 1, էջ 402:

կաշվե տրեխներ, գործածում լական՝ ուլթաձև մի շրջանագծով տախտակ՝ 3-4 սմ լայնությամբ, որը դրսից հյուսված էր կաշվե կամ կանեփի ամուր թելերով, հագնում էին տրեխի տակից (ԸԵ, Материалы..., 7) և ազատ քայլում թարմ ձյան վրայով՝ առանց խրվելու:

Նյութական մշակույթ: Բնակավայր, բնակարան. Մոկս գավառակի գյուղերը մեծ մասամբ տեղավորված էին լեռնալանջերին, որոնց տների պատերից մեկը խրված էր լեռնալանջի մեջ, և բնական պայմանների թելադրանքով դրանք բազմահարկ էին ու դարավանդային պատկեր էին ներկայացնում. մի տան կտուրը մյուսի համար բակ էր ծառայում, ինչը, գիտնականի բնութագրմամբ, բնորոշ էր Դաղստանին: Տները հիմնականում երկհարկ, երբեմն էլ եռահարկ էին: Առաջին հարկը կիսագետնափոր էր, որտեղ տեղավորված էին գոմը, թոնրատունը, տնտեսական նշանակության այլ կառույցներ: Պատերը կավե ամուր աղյուսներից էր շարվում: Թոնրատունը կոչվում էր **տան-տուն**, իսկ քրդերեն՝ **մալե-մալե**: Հայկական տան-տուն հարկաբաժնում երկու թոնիր էր տեղադրվում՝ մեկը հաց թխելու, որտեղ էլ կատարվում էին նաև ծիսական արարողակարգերը, մյուսը՝ ամենօրյա կենցաղային նպատակներով, այդ թվում՝ ճաշ պատրաստելու համար: Երբեմն նաև երկրորդ հարկում էին տեղադրում թոնիր՝ փայտե քառակուսի կարկասի մեջ, ներսից և դրսից կավե շաղախով երեսպատված: Դրանք կավե հաստ շուրթերով թոնիրներ էին: Բացի թոնիրներից՝ գոյություն ուներ նաև բաց կրակարան-օջախ՝ **հանգուլթ** անվամբ: Այն սալե պատերով և ծածկով կրակարան էր, որ Սասունում կոչվում էր թվեք: Օրբելին այցելության ժամանակ հայկական տներում նկատել է ռուսական երկաթե վառարաններ, որոնց ծուխը խողովակներով դուրս էին հանում: Դրանք պատրաստվում էին Վանում կամ էլ արտագնա աշխատողները բերում էին Ռուսաստանից: Երկրորդ հարկը ջեռուցվում էր հիմնականում հանգուլթով, թոնրի կրակով: Երկրորդ հարկում էին տեղավորված հյուրասենյակն ու ննջարանները: Բնակելի և օժանդակ կառույցները հարմարեցված էին այնպես, որ ձմռանը, հատկապես տղամարդկանց արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով կանայք և երեխաները հեշտությամբ օգտվեին թե՛ վառելիքից, թե՛ մառաններից ու անասնակերով լեցուն մարագներից և թե՛ հոգային անասունների մասին (ԸԵ, Мокс..., 11):

Մոկսի գավառում ազգակիցների տները հնարավորինս միմ-

յանց կից էին կառուցվում՝ տնտեսական փոխօգնության և ինքնապաշտպանության կազմակերպման անհրաժեշտությամբ պայմանավորված: Արյունակից ազգականների դրկից տները միմյանց մեջ արագ հաղորդակցվելու նպատակով **ակնատ**՝ փոքրիկ պատուհաններ կամ նեղլիկ դռներ են ունեցել: Դրանց միջոցով միմյանց էին փոխանցում կրակը՝ թոնիրը վառելու համար, կամ էլ ուրախառիթ և բոթաբեր լուրեր[22]:

Տների ծածկը հարթ էր, գերանակապ, վրան բարակ հեծաններով (մարթակ) շարվածքով, սրանց վրա՝ ծղոտի և ծառի ճյուղերի փռվածքով, իսկ սրանց վրա՝ տերև, կորեկի փուք, վրան ցեխ, ապա կավե հաստ շերտով, որն ամրացնում, պնդացնում էին կաղնու փայտի ծանր գլանով կամ **լողքարով**: Ամեն տարի այն պնդացվում, ամրացվում էր լողքարով, աղաջրով: Պատերը պետք է ունենային **ցվիք**՝ ջրհորդան:

Բնակարանի ներսույթը. Այստեղ բնակարանների ծածկը, հատակը, սյուները, դուռն ու պատուհանները թանկարժեք ընկույզի փայտից էին: Տները ներսից ընկույզի հաստ տախտակներով էին երեսպատվում: Սպիտակեղենի և անկողնու համար հիմնական կահույք էին ծառայում պատամիջի պահարանները, պատերի երկայնքով արված թարեքները, իսկ արտահագուստ զգեստեղենը տեղավորում էին սնդուկներում (ԸԵ, Мокс..., 12):

Տան ընդհանուր մուտքը մեկ դռնից էր: Այն ընկույզի փայտից էր՝ հաստ, ու ամուր, երկաթե կախովի կողպեքով կամ էլ առավել տարածված փայտե շարժական փականով: Փայտե փականները կոչվում էին **գրիբա**, որն ուներ կրիայի ձև:

Տան ծածկը հենվում էր սյուների վրա. խոյակներն ամրացվում էին հորիզոնական գերաններով, որոնք հենվում էին քարե ամուր խարիսխների վրա: Կթու, լծկան, մանր եղջերավոր անասունները միմյանցից առանձնացվում էին ճիպոտահյուս կամ տախտակե միջնորմ պատերով, նաև մսուրքներով՝ անասունների գլուխները տան մեջ ուղղված դասավորությամբ: Տան առաջին հարկի ներսից երկրորդ հարկ բարձրանում էին փայտե աստիճաններով: Բնակարանն այստեղ ներկայանում էր իբրև յուրատեսակ ամրոց: Դրանք բնակելի և տնտեսական նշանակության համակա-

[22] Այս մասին տե՛ս նաև ***Բարսեղյան Ա.,*** Մոկաց ազգագրական նյութեր, մաս 1 (ձեռագիր), էջ 119-121 (տե՛ս ՀԱԻ ԱԲԱ, թղթ. 8, գործ. 14):

ռուլյոններ էին, որոնց առաջին հարկը, ինչպես ասվեց, կթու և լծկան անասուններին էր հատկացվում, երկրորդը մարդկանց բնակեցման համար էր, երրորդ հարկը, որը կոչվում էր վերնահարկ, հյուրասենյակ օդան էր, որի մուտքը դրսից էր՝ լեռան լանջով բարձրացող աստիճաններով: Լուսավորությունը ապահովում էին կամ կտուրից բացվող երդիկով կամ էլ երկրորդ և երրորդ հարկերում փոքրիկ **շբակ** կոչված պատուհաններով, որոնք ծածկվում էին ընկույզի յուղով պատված թղթով: Հարձակման ենթարկվելիս շբակ-պատուհաններից դուրս էին հանվում հրացանների փողերը (ԸԵ, Мокс..., 11-12): Նման շենքերը՝ շբակ-պատուհաններով և վերնահարկով, բնորոշ են եղել նաև Սասունին[23]: Ե՛վ Մոկս գավառում, և՛ Սասունում նման երկհարկ կամ եռահարկ շենքերը կոչվում էին **քոշկ՝** «պալատ» նշանակությամբ: Գիշերային լուսավորությունը ապահովվում էր կավե ձեթաճրագներով, որոնք ամրացվում էին պատերին կամ կենտրոնական սյանը: Շարժական լապտեր էին ծառայում տնային արտադրության մոմե ճրագները՝ բրդյա թելից գործված, մոմով երեսպատված պատրույգներով՝ ավելի քան 2 մետր երկարությամբ:

Ուտեստ. Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացած լինելու շնորհիվ ուտեստի համալիրում գերակշռել են կաթը և կաթնամթերքը, հատկապես սարերի համեմունքներով պատրաստված պանիրը: Այն գործածում էին թարմ և կճուճներում հորած՝ պահածոյացված ձևով: Այդ համալիրում մեծ տարածում ուներ յուղով պահածոյացված խաշած միսը՝ **ղավուրման**: Շատ էր ընկույզի և նրանից քամված ձեթի կիրառությունը ավանդական ուտեստում: Այն անգամ գործածում էին պանրի մեջ: Բացառիկ էր նրա ձեթի առողջարար նշանակությունը (ԸԵ, Материалы..., 3):

Պտուղներից առավել առատ էր ընկույզը, որը գործածվում էր ոչ միայն որպես ընդեղեն և ուտեստի ու խմորեղենի մեջ, այլև դրանից ձեթ էին ստանում: Գիտնականը ընկույզի ձեթի ստացման՝ հսկա զանգվածով քարե անիվով աշխատող ձիթհան է արձանագրել Մոկս գյուղաքաղաքի մոտ՝ Ջնեստան գյուղում: Այսպես, Մոկս գյուղաքաղաքում նկարագրել է ահագին սալերից կառուց-

[23] Տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ), էջ 47:

ված շինություններ, որոնք ձիթհաններ էին՝ կարծր քարից տաշած հսկայական անիվներ, որոնք միևնույն ժամանակ ծառայում էին որպես **դինգ**: Այդպիսիք հայտնաբերվել են միայն միջնադարյան բնակավայրերում՝ Անիում, Մրենում, Ամբերդում պեղումների ժամանակ, իսկ Մոկսում դեռևս գործածվում էին (ԸԵ, Мокс..., 8):

Զգեստ. Տղամարդու հագուստների մեջ գերակշռել է շալից պատրաստված զգեստեղենը՝ շալվարը, վերնազգեստները: Ջուլ-հակներին հումք մատակարարողները կանայք էին, որոնք բրդե և բամբակե թել էին հասցնում: Ըստ գիտնականի հաղորդումների՝ հյուսում էին նախշազարդ գորգեր, շալե գոտիներ, որոնք աչքի էին ընկնում բարձր որակով և նախշազարդման արվեստով:

Սոցիոնորմատիվ մշակույթ. Ուշագրավ են գիտնականի գրառումները Մոկսի հայության ամուսնության և հարսանեկան սովորույթների վերաբերյալ, որոնք, ցավոք, շատ կցկտուր և շատ հակիրճ են ներկայացված: Նա առավել մեծ ուշադրություն է դարձրել հարսանիքներին երգվող երգերին, լեզվին: Սակայն և միաժամանակ հայտնում է, որ այն հայկական հարսանիքներին, որին ինքը անձամբ է մասնակցել, հարսը եղել է 11 տարեկան, փեսան՝ 19 (ԸԵ, Мокс..., 29): Ըստ տեղական սովորույթի՝ աղջիկներին ամուսնացնում էին դեռահաս տարիքում, անգամ 6 տարեկանից սկսած: Գիտնականը բացահայտում է նաև, որ այստեղ, բարեբախտաբար, չէր պահանջվում տեղական քուրդ աղաների՝ հայ հարսի առաջին գիշերվա իրավունքին տիրանալու ավանդական սովորույթի վերածված գարշելի երևույթը, ինչպես դա արվում էր Արևմտյան Հայաստանի հարավային քրդահպատակ այլ շրջաններում: Այդուհանդերձ, սրանով էր պայմանավորված հայ աղջիկների մանկական շրջանում ամուսնացնելու սովորույթը՝ տիրողների նման բարբարոսությունից խույս տալու համար:

Աղջկա ընտրության հարցում հետևում էին մի հավատալիքի, ըստ որի՝ տղայի մերձավոր 2-3 տղամարդ աղջկա տուն գնալիս երեկոյան իրենց հետ տանում էին հավի ձու ու դնում ոչխարի փարախում: Եթե այն անվնաս մնար մինչև առավոտ, կհամարվեր հաջող և իրականալի ընտրություն, հակառակ պարագայում տղայի կողմը խուսափում էր նման ընտրությունից՝ այն անհաջող համարելով (ԸԵ, Мокс..., 29-30):

Օրբելին նշում է նաև հայ ընտանիքում սեռերի խտրական

վերաբերմունքի մասին: Օրինակ՝ Մոկսում սովորույթ չկար աղջկա ծնունդը շնորհավորելու, այլ կարեկցում էին՝ ասելով՝ «աղջիկ բերողը տղա էլ կունենա» (ԸԵ, Материалы..., 7):

Ուշադրության արժանի են նաև տոների, մասնավորապես Վարդավառի և Տյառնընդառաջի տեղական սովորույթների վերաբերյալ գրառումները (ԸԵ, Мокс..., 32): Այսպես՝ ըստ Օրբելու գրառումների՝ Մոկսի եկեղեցու բակում Տյառնընդառաջին վառվող խարույկի փայտը հավաքում էին ողջ գյուղի բնակիչներից: Ցրդենու (խարույկի փայտ) ճարճատուն բոցերի հետ միասին սկսում էին խարույկի շուրջը պտտվել, խարույկի միջով անցնել կամ վրայով ցատկել. որոշ վայրերում հավատում էին, որ, ով ***Տրնդեզի*** կրակի միջով բոլորովին անվնաս անցնի կամ վրայով ցատկի, ապա կազատվի օձի, կարիճի խայթոցներից, կայծակի հարվածից և պատահական վտանգներից: Նա գրում է, որ Մոկսում սովորություն կար կատակով «պատժել» գյուղում այդ տարի ամուսնացած կամ տղա երեխա ունեցած մարդուն, եթե նա մինչև Տյառնընդառաջ «բանկուտ» չէին արել, այսինքն՝ բոլորին հյուրասիրելու նպատակով քաղցրավենիով ու մրգերով «բաց սեղան» չէին դրել: Տյառնընդառաջին այդպիսի մարդկանց կատակով հրում և կրակն էին գցում: Այնուհետև սկսվում էին երգերով շուրջպարերը և խաղերը: Խաղացողները միմյանց շալակում էին ու յոթ անգամ պտտվում կրակի շուրջը, միայն թե տղամարդիկ տղամարդկանց էին շալակում, կանայք՝ կանանց, անչափահասները՝ միմյանց: Մոկսում այդ նույն ժամանակ եկեղեցու մոտից վառվող ջահերով գնում էին գերեզմանները և այդ խարույկի կրակը կամ լույսը տանում իրենց հանգուցյալներին: Նույն Մոկսում, սովորույթի համաձայն, այդ ջահերով յոթ անգամ հարվածում էին իրենց գյուղի պառավների հետույքներին[24]:

Առանձնակի հետաքրքիր են ներկայացնում ժողովրդական բժշկության վերաբերյալ գրառումները: Մոկսում բժշկական պետական օգնության լրիվ բացակայության պայմաններում, բնականաբար, կարևորություն էր տրվում ժողովրդական բժշկության դարավոր հմտություններին: Ըստ Օրբելու հիշատակման՝ մանգա-

[24] Տե՛ս նաև ***Орбели И. А.,*** Фольклор и быт Мокса, Москва, 1982, с. 53-54:

ղով կամ որևէ այլ գործիքով կամ սուր քարով ձեռքը կամ ոտքը վնասելու դեպքում վերքի վրա կանաչ ջրիմուռի[25] (խոնավ տեղերում քարերի մակերեսը ծածկող բորբոս) թրջոց էին դնում, իսկ մրսածության, թոքերի հիվանդության կամ մեջքացավի ժամանակ թիակներին էին փաթաթում տաքացրած թաղիք (քեչա): Շատ հիվանդությունների բուժման միջոց են համարել հիվանդ մասերը տաքացած երկաթով այրելու եղանակը: Մեծ տարածում է ունեցել բուժիչ խոտաբույսերի օգտագործումը որպես սպեղանի, իսկ հատկապես տուբերկուլյոզի դեպքում գործածում էին կովի կաթի խիժից կամ էլ կովի կաթնախիժ շատ կերած նորածին հորթի տաք արտաթորանքից՝ որպես մերանից պատրաստված մածուն կերցնելով: Սրանք հնագույն ժողովրդական բժշկության հնարներն էին, որոնք կիրառվում էին անգամ XX դարի սկզբներին:

Հ. Օրբելին «Մոկաց տեքստերում» անդրադարձել է նաև մանկական խաղերին:

Ուշագրավ է Մոկսի Մուրթուլա բեկի տանը գիտնականի դիտարկած հյուրընկալման արարողակարգը: Հ. Օրբելին ուշադրություն է դարձնում նրա՝ պատուհանի գոգին դիզված քառակուսի հարթ բարձերին: Երբ երեկոյան տանտիրոջն այցելում էին հյուրեր՝ քրդեր և հայեր, այդ բարձերը դրվում էին հատակին, և պատվավոր հյուրերը նստում էին դրանց վրա: Առավել մեծանունը կարող էր ստանալ նաև երկրորդ բարձը: Բարձերը դարսում էր «մեհմանդարը» (հյուրընկալը – Ռ. Ն.), ընդ որում՝ մի դեպքում տան տերն էր բերելու նշան տալիս, մյուս դեպքում մեհմանդարը բարձը բերում էր՝ չսպասելով նշանի: Հյուրերը նստում էին հատակին՝ ըստ ավագության և անվանիության, ճիշտ այնպես, ինչպես տեղավորվում էին հին Պարսկաստանում և հին Հայաստանում պալատ հրավիրված ազնվականները: «Բարձը», ինչպես և «գահը», խորհրդանշում էր հասարակական սանդուղքի վրա նախարարի գրաված աստիճանը: Հետագայում Հ. Օրբելին կռահեց, որ Էրմիտաժում պահվող մի սկուտեղի վրա պատկերված են հենց այդպիսի բարձեր, իսկ նրանց կույտի վրա հենված գահին նստած

[25] Ջրիմուռ – ջրամամուռ, ծովաքոս, լոռ, գորտնխալի, գորտնգորգ (բեղմնիկավոր-սպորավոր) ջրային բույս (***Սուքիասյան Ա. Մ.,*** Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, հ. 2, Երևան, 2009, էջ 962):

է Խոսրով Անուշիրվան արքան (ԸԵ, Мокс..., 5, 10, 14-15):

Ազգագրական երևույթներից բացի՝ գիտնականը Մոկսում կարողացավ կազմել տեղական բարբառի հոլովման և խոնարհման հատուկ աղյուսակներ, ազգագրական նյութը հաճախ համեմվում էր բանահյուսական տվյալներով՝ գրի առնելով նաև երգեր ու պարերգեր, զվարճալի պատմություններ, որոնցում «քաղաքացի» հեղինակները հումորով, երբեմն էլ բավականին կծու արտահայտվում էին գյուղացիների բարքերի մասին: Նրա ընտրած բանասացները այն մարդիկ էին, որոնք երբեք դուրս չէին եկել իրենց ծննդավայրից, ուստի լեզուն, արտասանությունը անարատ էին պահպանվել: Հ. Օրբելին եղել է միակ եվրոպացի գիտնականը, որը հետազոտություն է կատարել հենց տեղում: Գավառի բնակչության շատ սովորույթներ, կենցաղային առարկաներ պահպանվել էին վաղնջական ժամանակներից:

Ուշագրավ են մեծանուն գիտնականի ազգագրությանը սերտորեն առնչվող հայ բանագիտական հետազոտությունները: Արժեքավոր է գիտնականի «Մոկաց տեքստեր» ընդհանուր խորագրով ծավալուն աշխատությունը, որն ամփոփում է հեղինակի 1911-1912 թթ. Մոկս գավառում կատարած ոչ միայն բարբառագիտական և ազգագրական հետազոտությունների արդյունքները, այլև իր իսկ գրի առած բանահյուսական նյութերը: Դրանցում առանձին խումբ են կազմում ժողովրդական հեքիաթները, մանրապատում զրույցները, վեպերն ու առակները, վիպական երգերն ու բալլադները, աշխատանքի և ծիսական, երգիծական և մանկական երգերը, առածներն ու ասացվածքները, հանելուկներն ու շուտասելուկները: Բարեբախտաբար, սրանք ներառվեցին գիտնականի «Избранные труды» (т. 2) ժողովածուում (էջ 129-185):

Հ. Օրբելին մեծ ներդրում ունի նաև հայ ժողովրդական էպոսի ուսումնասիրման, այն ժողովրդական լայն շրջաններին ճանաչելի դարձնելու գործում: Դեռ Մոկսում և Վանում եղած ժամանակ՝ 1911-1912 թթ., նա մոտիկից շփվում է Մոկաց գզրարների հետ, ծանոթանում «Սասնա ծռերի» մասին նրանց ավանդած պատումներին, իսկ Վանի մոտ Մհերի դռան սեպագրերն ուսումնասիրելիս լսում է Դավթի որդի Մհերի ավանդազրույցը: 1939 թ. «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարության մի-

ջոցառումները հանձնարարված էր գլխավորել Հ. Օրբելուն: Նա մեծ դեր ունեցավ «Սասունցի Դավիթ» համահավաք ժողովածուի հայերեն և ռուսերեն հրատարակման գործում (1939 թ.): Գիտնականի «Հայկական հերոսական էպոսը» (1956 թ.) աշխատությունը էպոսագիտության բնագավառի խոշոր նվաճումներից է: Նրա նախաձեռնությամբ նույն թվականին Լենինգրադում տպագրվեց «Սասունցի Դավիթ» էպոսի ռուսերեն թարգմանությունը[26]: Նրա ջանքերով էր, որ մեր դյուցազներգությունը, դուրս գալով ազգային սահմաններից, դարձավ համամարդկային մշակույթի սեփականություն: «Հայ հերոսական էպոսը» աշխատության և «Սասունցի Դավիթ էպոսը» («Խորհրդային գրականություն» ամսագիր, Երևան, 1939, № 8-9) ուսումնասիրության մեջ Օրբելին հանգամանորեն անդրադարձել է էպոսի բովանդակությանը, կերպարներին, վեր է հանել էպոսի պատմական կորիզն ու ձևավորման ընթացքը, բացահայտել համանման այլ գործերի միջև ընդհանրությունները, մատնանշել էպոսի պատմամշակութային ու գեղարվեստական արժեքները, ընդգծել նրանում մարմնավորված ազատասիրական, հերոսական, խաղաղասիրական, մարդասիրական գաղափարները:

Հ. Օրբելին ինքնատիպ դիտարկումներ է կատարել նաև ժողովրդական առակների ժանրային առանձնահատկությունների սոցիալական որոշակի ուղղվածության վերաբերյալ: Ա. Ղանալանյանի խմբագրությամբ լույս է ընծայվել Հ. Օրբելու կազմած միջնադարյան առակների («Басни средневековой Армении») ժողովածուն: Հ. Օրբելու խմբագրությամբ 1959-1962 թթ. լույս են տեսել «Հայկական ժողովրդական հեքիաթների» I, II, III հատորները: Նրա՝ Մոսկվում գրառած 6 միավոր հեքիաթները հրատարակվել են «Հայ ժողովրդական հեքիաթների» (Մոսկ) XVII հատորում[27]:

Այսպիսով՝ Հ. Օրբելին թողել է աղբյուրագիտական և տեսական իսկապես ընդհանրացնող հարուստ ժառանգություն:

---

[26] Տե՛ս ***Давид Сасунский.*** Армянский народный эпос, Москва-Ленинград, 1939:

[27] Հ. Օրբելու բանագիտական գործունեությանը առավել հանգամանալի անդրադարձել է բանագետ Արամ Ղանալանյանը (տե՛ս ***Ղանալանյան Ա.,*** Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, 1985, էջ 159-175):

5. ԱՆԽՈՆՋ ԱԶԳԱԳՐԱԳԵՏՆ ՈՒ ԲԱՆԱՀԱՎԱՔԸ
(Վարդ Բդոյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Վարդ Բդոյանը ծնվել է 1910 թ. մարտի 4-ին Ջավախքի Փոքր Խանչալի գյուղում, երկրագործի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ախալքալաքի մանկավարժական տեխնիկումում (1932 թ.), որից հետո հինգ տարի զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Ուսումնառությունը շարունակել է Երևանի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնում, որն ավարտել է 1943 թվականին:

Ազգագրական գործունեությունը սկսել է 1938 թ.՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի պատմության և գրականության բաժնում՝ որպես բանահավաք, որտեղ նա շարունակել է աշխատել նաև 40-ական թթ.՝ համատեղության կարգով: 1939-1944 թթ. աշխատել է Մատենադարանում՝ որպես գրադարանապետ և մատենագետ: 1944-1949 թթ. եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի գիտական աշխատակից, իսկ 1949-1959 թթ.՝ բաժնի վարիչ: Թանգարանում եղած 15 տարիների ընթացքում նա մեծ աշխատանք է ծավալել թանգարանային արժեքների ձևավորման, հատկապես երկրագործական տեխնիկայի հավաքման, ցուցադրման, ինչպես նաև ֆոնդերի վերահաշվառման գործում: «Հողաբերքի և տղաբերքի պաշտամունքը Հայոց մեջ» թեկնածուական ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանել է 1948 թվականին: 1959 թվականից մինչև օրս աշխատում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: 1969 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Երկրագործական մշակույթը Հայաստանում» թեմայով:

Վ. Բդոյանն իր գիտական գործունեությանը համատեղել է դասախոսական-մանկավարժական աշխատանքը Համալսարանի պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության բաժնում՝ դասավանդելով «Հայ ազգագրություն» և «Ազգագրության հետազոտման մեթոդիկա» առարկաները: Նրա ղեկավարությամբ պատմության ֆակուլտետի ուսանողները և հասարակական հիմունքներով մեկ տասնյակ բանահավաքներ հսկայական նյութեր են գրի առել Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջանների մշակույթի վերաբերյալ:

Վ. Բդոյանի հետազոտությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հատկապես հայկական երկրագործական մշակույթի և նրա տեխնիկայի ընդարձակ պատմությունը, որին նա անդրադարձել է «Երկրագործական մշակույթը Հայաստանում» մենագրությամբ (1972 թ.) և մի շարք հոդվածներով:

Նշված մենագրությունը եզակի երևույթ է հայ ազգագրության պատմության մեջ: Այն ընդգրկում է ամբողջ պատմական Հայաստանի երկրագործական երկու խոշոր բնագավառների՝ բրիչային և արորագութանային երկրագործության ամբողջ նյութը, գիտական դասակարգումն ու հետազոտությունը:

Մենագրության մեջ ներկայացված են վարող տեխնիկայի ազգագրական շրջանների առանձնահատկությունները, ըստ որում՝ յոթ ազգագրական շրջանի արորներն ունեն բոլորովին տարբեր կառուցվածք, թեև ըստ գործառույթի նույնն են:

Բացի Աղձնիքից և Ծոփքից՝ մնացած բոլոր ազգագրական շրջաններում (Բարձ Հայք, Վասպուրական, Այրարատ, Սյունիք, Համշեն) գոյություն ունեին ազգային մեծ ու փոքր գութաններ, որոնց XIX դարի վերջերին փոխարինեցին գործարանային գութանները: Հեղինակը հանգամանորեն կանգ է առել այդ բոլորի ծագումնաբանական հարցերի վրա՝ ցույց տալով պատմաաշխարհագրական և բնակլիմայական գործոնների դերը: Արորագութանային տեխնիկայի անմիջական մասն էր կազմում Վանա լճի ավազանում և Կոգովիտում մինչև 1915 թ. հարատևող շարացան երկրագործական համակարգը, որին հեղինակը հակված է վերագրել ուրարտական ծագում: Բացի տեխնիկայի նկարագրությունից և ուսումնասիրությունից՝ հեղինակը կանգ է առել աշխատանքի նախնական կոոպերատիվ ձևերի մնացուկների ուսումնասիրության վրա, որոնք տարբեր պատմաազգագրական շրջաններում հայտնի էին ***հարակաշ***, ***համկալություն***, ***կիսարարություն***, ***համփա***, ***աղսընկերություն***, ***խոչկամու***, ***փոռնակ*** և այլ տարբերակներով: Հարակաշ-համկալության կոոպերատիվ ձևերում նա հանգամանորեն ցույց է տվել ընկերակցողների իրավունքներն ու պարտականությունները, փոխադարձ կապերն ու իրավահարաբերությունները, ինչպես նաև գութանավարի համակարգը՝ իր ներքին ավանդական և սովորութային կարգ ու կանոններով: Հեղինակի տքնաջան աշխատանքով հավաքված ու մշակված նյութերն ընդգրկող սույն մենագրությունը ազգագրության և գյուղատնտեսության մասնագետների համար անփոխարինելի աղբյուր է:

Վ. Բդոյանը կարևոր ծառայություն ունի նյութական մշակույթի ուսումնասիրության բնագավառում: Նրա գրչին են պատկանում տպագիր մի շարք աշխատություններ, որոնք նվիրված են հայ ժողովրդական ճարտարապետությանը և կիրառական արվեստին: Արդեն տպագրության պատրաստ Վ. Բդոյանի «Հայկական կանացիակերպ աղամանները՝ որպես Անահիտ դիցուհու արձաններ» մենագրությունը, որով ներկայացվում են խեցեգործական կիրառական արվեստի XIX-XX դարերի աչքի ընկնող նմուշները: Այդ գծով արդեն տպագրության պատրաստվող «Գոմասենյակները պատմական Հայաստանում» աշխատությունն աննախադեպ գործ է, որին կցված ալբոմում ի մի են բերված ճարտարապետական չափագրություններ, ներկայացվում է մեր ժողովրդի շինարարական արվեստի ուշագրավ ստեղծագործություններից մեկի ամբողջական պատկերը:

Վ. Բդոյանի կարևոր ծառայություններից են հայկական ժողովրդական խաղերի եռահատոր ժողովածուի կազմումը և ուսումնասիրումը, որոնց առաջին և երկրորդ հատորները «Հայ ժողովրդական խաղեր» խորագրով արդեն հրապարակի վրա են: Ժողովածուն ներկայացվում է հայ ժողովրդի ֆիզիկական կուլտուրայի ժառանգության ամբողջական պատկերը՝ սկսած V դարից մինչև XX դարի կեսերը: Օգտագործված են վկայություններ, արխիվային նյութեր, ժամանակակից բանահավաքների հավաքածուներ և այլն: Հեղինակը ժողովածուի հատորները ներկայացրել է մասնագիտական ուսումնասիրությամբ, որտեղ հայ ազգագրության մեջ առաջին անգամ շոշափվել են հասակակիցների միությունների ինստիտուտի հետքերը, նախնադարյան դուալիզմի, ֆրատրիալ պայքարի ձևերի հետքերը և այլն, որոնք առանձնապես արտահայտված են ծիսական խաղերի մեջ: Խաղերում հետազոտողը գտել և ներկայացրել է հայ ժողովրդի մղած քաղաքական պայքարի ձևերը ընդդեմ պարսկա-օսմանյան զավթիչների, ինչպես նաև սոցիալ-դասակարգային պայքարը երկրի ներքին կյանքում: Նա հատուկ ուշադրությամբ է ուսումնասիրել ռազմասպորտային խաղերը, որոնք մեծ արձագանք են գտել հայ ժողովրդի բանահյուսության մեջ:

Գիտնականն իր հավաքած բազմաբնույթ ազգագրական ու բանահյուսական նյութերի, ինչպես նաև պետական համալսարանի ազգագրության բաժնում կարդացած դասախոսությունների շարքի հիման վրա գրել և 1974 թ. հրատարակել է բուհական ձեռնարկ՝ «Հայ ազգագրություն. Համառոտ ուրվագիծ» խորագրով:

Վ. Բդոյանը հայ ազգագրության հիմնախնդիրներին անդրադարձել է բազմակողմանիորեն: Նա հատկապես նշված բուհական ձեռնարկում անդրադարձել է բազմաթիվ երևույթների արծարծմանը, ինչպես նաև հակիրճ ներկայացրել է հայ ազգագրության պատմությունը՝ այս գիտության սկզբնավորման միջնադարյան ակունքները, ինչպես և XIX դարում այդ գիտության աստիճանական ձևավորման խնդիրները: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է հայ ազգագրության անցած ճանապարհը՝ ցույց տալով Խ. Աբովյանի և Մ. Բժշկյանի դերը XIX դարի առաջին կեսին, Գ. Սրվանձտյանցի և իր հետևորդների ծառայությունները XIX դարի 60-70-ական թթ. և Ե. Լալայանի ու իր հետևորդների եռանդուն գործունեությունը նույն դարի վերջին և XX դարի սկզբին: Այստեղ տեղին է ասել, որ նա Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցի» առաջին մասը դիտում է որպես ազգագրության առաջին հարցարան:

Հայ ազգագրության պատմության և սոցիալական հարաբերությունների հարցերին Վ. Բդոյանն անդրադարձել է առանձին հոդվածներով: Նրա փայփայած բնագավառներից է ազգային դիցաբանության պատմությունը: Հայկական դիցաբանությունն առհասարակ լի է առեղծվածներով և դեռևս համակողմանի չուսումնասիրված բնագավառներից մեկն է: XIX դարի գրեթե բոլոր դիցաբանները հայկական դիցաբանին վերաբերող հարցերին անդրադարձել են միջին դարերի պատմագրության հաղորդումների սահմաններում: Վ. Բդոյանը դիցաբանական հարցերի քննությանն անդրադարձել է 1940-ական թվականներից սկսած՝ ազգագրական ու բանահյուսական նյութերի վրա հենվելով: Սրանով նա հայ ազգագրությանը միաժամանակ մի շարք կարևոր ծառայություն է մատուցել. հայտնաբերել է բազմաթիվ և բազմապիսի հարուստ նյութեր, որոնք վերաբերում են արդեն հայտնի աստվածություններին՝ Անահիտ դիցուհուն, Նանեին, Վանատուրին և այլն:

Վ. Բդոյանը բացահայտել է հայոց դպրության Տիր աստվածության մի անհայտ գործառույթ՝ դաշտամշակութային շարացան համակարգի հովանավոր աստված լինելը Վանա լճի ավազանում: Նա բացահայտել է մինչև այժմ անհայտ աստվածություններ, ինչպիսիք են՝ ա) Շղթա կտրող արական աստվածությունը՝ որպես հայոց վարող գործիքների ստեղծողն ու հովանավորողը, որը, ըստ հեղինակի, համապատասխանում է ազգային վեպի Ջենով Հովհանի գործունեությանը, բ) Ակլատիզը՝ որպես բնության մեռնող և հարու-

թյուն առնող աստվածություն, որը հաջորդել է Նար դիցուհուն հայրիրավական տոհմային շրջանում և նախորդել է Արա Գեղեցիկին: գ) Ամանորը՝ որպես Վանատուրի զուգակիցը, և նրա կինը՝ այգեգործության ու դաշտամշակության հովանավորման դերով: Նա ճշտել է մի շարք դիցաբանական երևույթներ, որոնք քրիստոնեության ճնշման տակ հեթանոսական աստվածության ծպտված վիճակն են ներկայացրել: Այսպես, Վանատուրի և Ամանորի ծպտված պատկերներն էին ներկայացնում արական և իգական կերպարներով օժտված Լոչ և Վասիլ կոչված կուռքերը, արական ու իգական սեռերով պատկերացվող Լոչտակ կոչված բուսարմատի դիցաբանական առումները, երկու սեռի պատկերով Նուրին-Պուրպատիկ արձանները, երկու սեռով ներկայացվող էրկթե-էրկթե մարդիկ, էրկթե -էրկթե կնանիք և փետե -փետե մարդիկ, փետե-փետե կնանիք կոչված արձանները, ինչպես նաև Գողթան գավառի խնդում Դոքը կրող պառավն ու Խլվլիկ կոչված աներևույթացող ոգին: Իսկ Անահիտ դիցուհու ծպտյալ պատկերն է համարում մեր բանահյուսության, այդ թվում՝ «Սասնա ծռեր» էպոսում հայտնի Պառավը և հայոց կենցաղում լայնորեն տարածված կանացիակերպ կավե աղաման արձանները: Այդ նվաճումների հիմքը հեղինակի կողմից 1960-ական թթ. բացահայտված ծպտումի տեսությունն է՝ պայմանավորված ագրարային պաշտամունքով և հիշյալ աղամանների էության առեղծվածներով: Ըստ այս տեսության՝ միմյանց հաջորդող կրոններից մերժվածի պաշտամունքը հալածանքների պատճառով ենթարկվում է ծպտումի՝ ընդհատակի, այսինքն՝ նոր կրոնի մեջ ծպտված պաշտվում է հինը: Այսպես, Մարիամ Աստվածածնի պաշտամունքի անվան տակ հեթանոս հայերը շարունակել են աղոթել Անահիտ դիցուհուն, մոնոթեիստական աստծո անվան տակ ծպտվել են Վանատուրն ու Ամանորը և այլն:

Հայ ազգագրության անխոնջ մշակը, որը մեծանուն Ե. Լալայանի ավանդների շարունակողն ու ուղղությունների զարգացողն է, իր պատկառելի տարիքում ստեղծագործական ավյունով ստեղծել է տակավին անտիպ մի շարք աշխատություններ, որոնք նվիրված են Արարատյան հովտի, Ջավախքի ազգագրությանն ու հայկական երկրագործական մշակույթի ատլասի մշակմանը:

Առանձին ազգագրական շրջանների նյութերի հավաքումով նա հայրենասիրական մեծ գործ է կատարել՝ փրկելով մոտ ժամանակներում արագորեն կորստյան մատնվող գանձերը:

6. ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹԱՅԱՆ ԵՒ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Վարդ Բդոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Լրացավ հայ նշանավոր ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր Վարդ Հարությունի Բդոյանի 100-ամյակը: Մեծանուն գիտնականն այն ազգագրագետներից է, որը թողել է գիտական ծանրակշիռ ժառանգություն, կուտակել է վիթխարի քանակությամբ կորստից փրկված ազգագրական գրավոր և թանգարանային նյութ, որը ներկա և ապագա ազգագրագետների համար կծառայի գիտական ուսումնասիրությունների անփոխարինելի աղբյուր:

Վարդ Բդոյանը ծնվել է 1910 թ. մարտի 4-ին Ջավախքի Փոքր Խանչալի գյուղում՝ հողագործի ընտանիքում: Տարրական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, իսկ միջնակարգը՝ 1932 թ. Ախալքալաքի մանկավարժական տեխնիկումում: Դրան հաջորդել է մանկավարժական և միաժամանակ հասարակական, կուլտուր-լուսավորական հնգամյա գործունեությունը միջնակարգ դպրոցներում (1933-1937): Ուսումնառությունը շարունակել է Երևանի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնում, որն ավարտել է 1943 թվականին:

Ազգագրական գործունեությունը սկսել է 1938 թ. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի պատմության և գրականության ինստիտուտի բանահյուսության բաժնում որպես բանահավաք: Այդ աշխատանքը համատեղությամբ շարունակել է 1944-1946 թվականներին: Նրա անձնական արխիվում ներկայումս պահպանվում է շուրջ 130 մամուլ ծավալով տարբեր թեմաների վերաբերող, հրատարակության արժանի նյութ, որից մոտ 20 մամուլը, որը վերաբերում է Ջավախքի բանահյուսությանը, 1986 թ.՝ դեռ իր կենդանության օրոք, հանձնվել է «Հայաստան» հրատարակչությունն: Ցավալի է, սակայն, որ առ այսօր այն չի հրատարակվել, թեև առանձին հատվածներ լույս են տեսել «Հայ ժողովրդական հեքիաթներ» շարքում և պարբերականներում[1]: Բանահյուսական հրատա-

[1] Տե՛ս «Գրական թերթ», 1938, թ. 18, «Հայ ժողովրդական հեքիաթներ», Երևան, 1950, էջ 413-417, 419-420, 427-428, 433-434, 449-450,

բակված նյութերը կազմում են ավելի քան 10 մամուլ, իսկ նրա կազմած հայ բանահավաքչությանը և բանահյուսությանը նվիրված մատենագիտությունը՝ 6 մամուլ:

1939-1944 թթ. Վ. Բդոյանը աշխատել է Մատենադարանում որպես գրադարանապետ և մատենագետ, 1944-1949 թթ. եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի գիտական աշխատակից, իսկ 1949-1959 թթ.՝ բաժնի վարիչ: Թանգարանում աշխատած 15 տարիների ընթացքում նա մեծ աշխատանք է ծավալել թանգարանային արժեքների ձևավորման, հատկապես երկրագործական տեխնիկայի հավաքման, ցուցադրման, ֆոնդերի վերահաշվառման գործում:

Թանգարանում աշխատելու տարիներին Բդոյանը ազգագրություն մասնագիտության մեջ խորացել է պրոֆ. Ս. Լիսիցյանի ղեկավարությամբ և հետևել ակադեմիայի ասպիրանտուրայի դասընթացներին, որոնց արդյունքը եղավ «Հողաբերքի և տղաբերքի պաշտամունքը հայոց մեջ» թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը (1948) և դրա մի մասի հրատարակումը (1950)[2]: Կազմակերպել է ազգագրական նյութերի հավաքման գործը և անձամբ զբաղվել Արարատյան հովտի, Վասպուրականի ու Սասունի երկրագործական գործիքների համալիրների վերականգնման հարցերով, ղեկավարել է ազգագրական արշավախմբեր, որոնց գործունեության հետևանքով հարստացել են ոչ միայն պատմության պետական թանգարանի ազգագրության ֆոնդերը, այլև գավառագիտական թանգարանների ազգագրական հավաքածուները: Այսպես, նրա անմիջական ջանքերով 1959 թ. Գյումրիի (Լենինական) գավառագիտական թանգարանի համար ձեռք է բերվել 320 իր՝ լուսանկարներ, նեգատիվներ, գյուղատնտեսական գործիքներ, պղնձագործի, մաշկակարի և սանրագործի գործիքներ: Նույնը արել է Դիլիջանի (1957), Վանաձորի (1959), Ստեփանակերտի (1960), Ախալքալաքի (1961) գավառագիտական թանգա-

465-467, 555-558, «Սասնա ծռեր», հ. Բ, մ. Բ, Երևան, 1951, էջ 641-703, Երևան, էջ 80-814, «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. I, Երևան, 1959, էջ 512-532, 561-612:

[2] ***Բդոյան Վ.,*** Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայոց մեջ // «Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի», հ. 3, Երևան, 1950, էջ 3-68:

բանների համար, որոնց հանձնվել է ավելի քան 400 առարկա, միայն Ախալքալաքի գավառագիտական թանգարանին՝ 300 առարկա: Գավառագիտական գործունեության վերաբերյալ 1957-1961 թթ. Վ. Բդոյանը հրատարակել է բազմաթիվ հոդվածներ: Թվարկենք դրանք՝ «Մի կարևոր նախաձեռնության մասին. թղթակցություն ժողովրդական գույքը հավաքելու վերաբերյալ»[3], «Ազգագրական թանգարան ունենալը անհրաժեշտություն է»[4], «Արարատյան հովտում գավառագիտական թանգարան հիմնելու մասին»[5], «Գավառագիտական թանգարանի ստեղծումը հասունացած հարց է Ջավախքում»[6], «Թանգարանային նյութեր Ստեփանակերտի գավառի թանգարանի մասին»[7], «Գավառագիտական թանգարան Ախալքալաքում»[8]:

1959 թ. թանգարանից Վ. Բդոյանը տեղափոխվել է նորաստեղծ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժին՝ ավագ գիտական աշխատողի պաշտոնով, որտեղ աշխատել է մինչև իր կյանքի ավարտը: 1969 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Երկրագործական մշակույթը Հայաստանում» թեմայով:

1964-1972 թթ. Վ. Բդոյանը գիտական գործունեությունը համատեղել է դասախոսական-մանկավարժական աշխատանքի հետ՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության բաժնում դասավանդելով «Հայ ազգագրություն» և «Ազգագրության հետազոտման մեթոդներ» առարկաները: Նրա ղեկավարությամբ պատմության ֆակուլտետի ուսանողները և հասարակական հիմունքներով մեկ տասնյակ բանահավաքներ հսկայական նյութեր են գրի առել Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջանների մշակույթի վերաբերյալ:

1949-1971 թթ. զեկուցումներով հանդես է եկել միութենական ազգագրական նստաշրջաններում:

---

[3] Տե՛ս «Էջմիածին», 1947, Է-Ը, էջ 47-52: *Նույնի՝* «Բանվոր» օրաթերթ, 1948, մայիսի 28:
[4] Տե՛ս «Ստալինյան ուղի» օրաթերթ, 1957, թ. 96:
[5] Տե՛ս «Էջմիածնի կոլտնտեսական», 1958, հունիսի 25:
[6] Տե՛ս «Խորհրդային Վրաստան», 1959, մարտի 10:
[7] Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 1960, հունիսի 22:
[8] Տե՛ս «Կարմիր դրոշակ», 1961, նոյեմբերի 7:

Գիտական երկարամյա աշխատանքի ընթացքում գրեթե բոլոր տարիներին եղել է գործուղումների, արշավների ու գիտական ուղևորությունների մեջ՝ հայ ազգագրական և բանահյուսական նյութեր գրի առնելու նպատակով: Այդ առիթներով քանիցս մեկնել է մեր հանրապետության բոլոր շրջանները, նաև՝ Վրաստան, Ադրբեջան, Աջարիա, Աբխազիա և Ռուսաստանի հայաբնակ վայրեր, որի արդյունքը եղել է ավելի քան 200 մամուլ նյութերի կուտակումը:

Փաստական հարուստ նյութերի և ազգագրական գիտության ընձեռնած հնարավորությունների հիման վրա ստեղծվել են ավելի քան հինգ տասնյակ գիտական հոդվածներ, հրատարակել ու հրատարակության է պատրաստել 14 մենագրություն, խմբագրել է բազմաթիվ գրքեր, հրատարակել առանձին հեղինակների գործեր՝ հարուստ ծանոթագրություններով ու առաջաբանով:

Գիտահետազոտական աշխատանքների ամենակարևոր մասը նվիրված է հայ ժողովրդի երկրագործական մշակույթի և նրա տեխնիկայի պատմությանը: Հրատարակվել է նաև «Երկրագործական մշակույթը Հայաստանում» 48 մամուլ ծավալով մենագրությունը (1972), որի համառոտագրությունը նույն թվականին Հունգարիայում լույս է տեսել նաև գերմաներեն: Այս տվյալների հիման վրա նա ստեղծել է «Հայ երկրագործության պատմաազգագրական ատլաս»՝ 40 մամուլ ծավալով, որը, ցավոք, դեռևս անտիպ է:

Գիտնականը ստեղծել է մի քանի պրակներից կազմված «Արարատյան հովիտը ազգագրական տեսակետով» դեռևս անտիպ աշխատությունը: Բացառիկ արժեքավոր այս ծավալուն աշխատությունն ընդգրկում է «Դաշտամշակությունը և այգեգործությունը Արարատյան հովտում ԺԹ-Ի դդ.» (10 մամուլ), «Գյուղատնտեսական մանր տնտեսությունները Արարատյան հովտում ԺԹ-Ի դդ.» (20 մամուլ), «Ժողովրդական ճարտարապետությունը Արարատյան հովտում ԺԹ-Ի դդ.» (12 մամուլ), «Զգեստները և կահկարասին Արարատյան հովտում ԺԹ-Ի դդ.» (12 մամուլ), «Ընտանեկան, ազգակցական և հարևանական հարաբերություններ Արարատյան հովտում ԺԹ-Ի դդ.» (17 մամուլ), «Հավատալիքները և ժողովրդական տոները Արարատյան հովտում ԺԹ-Ի դդ.» (8 մամուլ) մենագրությունները: Նշված աշխատությունները արժեքավոր են այնքանով, որ առ այսօր Արարատյան հովտի վերաբերյալ գիտական հրապարակի վրա չկա ազգագրական ոչ մի ուսումնասիրություն, և հեղինակի կողմից նյու-

թերը գրառվել են 1960-1970-ական թթ., այսօր այլևս հնարավոր չէր լինի դրանք գրանցել ու դնել գիտական շրջանառության մեջ: Բացի «Արարատյան հովտի ազգագրությունից»՝ նա թողել է նաև «Ջավախքի ազգագրությունը» և «Ջավախքի բանահյուսությունը» ծավալուն, դարձյալ անտիպ մենագրությունները:

Վ. Բդոյանի աշխատությունների մեջ մեծ տեղ են գրավում հայ ժողովրդի նյութական մշակույթի՝ բնակավայրերի, ժողովրդական ճարտարապետության, զգեստների ու զարդերի և կիրառական արվեստի հետազոտությունները, որոնց շարքում կարևոր տեղ ունի «Գոմասենյակները պատմական Հայաստանում» (20 մամուլ) անտիպ ուսումնասիրությունը, աննախադեպ մի գործ, որտեղ ի մի են բերված ճարտարապետական չափագրությունները, ներկայացնում է մեր ժողովրդի շինարարական արվեստի ուշագրավ ստեղծագործություններից մեկի ամբողջական պատկերը:

Վ. Բդոյանի հետազոտությունների զգալի մասը վերաբերում է հայ հոգևոր մշակույթի տարբեր բնագավառներին՝ բնությանն ու երկրագործական պաշտամունքներին, հայ հեթանոսական դիցաբանությանը, ժողովրդական տոներին և, վերջապես, հայ ժողովրդական խաղերին: Նրա ջանքերով հայ ազգագրական գիտությունը հարստացել է ժողովրդական խաղերին նվիրված 70 մամուլանոց ուսումնասիրությամբ (1963-1983):

Գիտնականի գործունեությունը ամբողջական ներկայացնելու առումով հարկ է անդրադառնալ նաև նրա հրատարակած աշխատություն-հոդվածներին, որոնք ընդգրկում են հայ ազգագրության գրեթե բոլոր բնագավառները՝ հայ ազգագրության պատմության երախտավորների գործունեությունը, հայոց տնտեսական կենցաղը, նյութական մշակույթը, հասարակական-ընտանեկան կենցաղը և հոգևոր մշակույթը: Առավել հիշատակելի են՝ 1. «Հայրենասիրությունը Գ. Սրվանձտյանի երկերում» («Էջմիածին», 1944, Բ-Ե), 2. «Գ. Սրվանձտյանը որպես ազգագրագետ» («Էջմիածին», 1946, Ա.), 3. «Кровнородственный «азг» и родственные отношения у армян» («Советская этнография», 1952, № 1), 4. «Հայկական կոլտնտեսային տունն ազգագրական տեսակետից» («Տեղեկագիր», հաս. գիտ., 1955, թ. 4), 5. «Կոլտնտեսային ընտանեկան հարաբերությունները» («Տեղեկագիր», հաս. գիտ., 1956,

թ. 7), 6. «Հարսանեկան ծեսերի ու սովորույթների նկարագիր՝ գրանցված ԺԴ դարում» («Բանբեր Մատենադարանի», 1956, թ. 3), 7. Քաղաքական և սոցիալական անցքերի արձագանքները հայկական մի քանի խաղերում («Տեղեկագիր», հաս. գիտ., 1958, թ. 2), 8. «Շարացան սիստեմը Վանա լճի ավազանում» («Պատմաբանասիրական հանդես», 1964, թ. 1), 9. «Հայկական բրիչները և վարող գործիքները ԺԹ դարում» («Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության», 1, Եր., 1964), 10. «Հայկական հողուրագների պատմությունից» («Տեղեկագիր», հաս. գիտ., 1965, թ. 2), 11. «Հնձի գործիքները Հայաստանում» («Պատմաբանասիրական հանդես», 1968, թ. 1), 12. «Պոնտոսի հայոց վարող տեխնիկան Ժ-Թ դարում» («Պատմա-բանասիրական հանդես», 1971, թ. 1), 13. «Սովետահայ ազգագրության հիսնամյակը» («Հայագիտությունը 50 տարում», Եր., 1971), 14. «Տեղափոխման մոռացված ձևեր» («Լրաբեր», հաս. գիտ., 1972, թ. 10), 15. «Ընտրության և ամուսնության ձևերը «Սասունցի Դավիթ» էպոսում» («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, թ. 1) , 16. «Վանատուր և Ամանոր ծպտյալ պաշտամունքների հարցի շուրջը» («Լրաբեր», հաս. գիտ., 1976, թ. 12), 17. «Պատառիկներ Վանատուր և Ամանոր աստվածությունների ծպտյալ պաշտամունքներից» («Բանբեր Երևանի համալսարանի», 1977, թ. 2), 18. «Ակնարկ հայկական փորագրության (արվեստի) մասին» («Հ. Ազատյան, «Փայտի գեղարվեստական փորագրություն» գրքի ներածությունը, Եր., 1961») և այլն:

Վ. Բդոյանի հետազոտությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հատկապես հայկական երկրագործական մշակույթի և նրա տեխնիկայի ընդարձակ պատմությունը, որին նա անդրադարձել է «Երկրագործական մշակույթը Հայաստանում» մենագրությունում և մի շարք հոդվածներում:

«Երկրագործական մշակույթը Հայաստանում» մենագրությունը եզակի երևույթ է հայ ազգագրության պատմության մեջ: Հեղինակն այս թեման մշակել է համահայաստանյան մասշտաբով, ազգագրական, հնագիտական, պատմագրական և լեզվագիտական նյութերի համադրումով՝ ընդգծելով նախնադարից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանները: Դրա մեջ մտնում են երկրագործական նախահիմքը ներկայացնող բուսահավաքչությունն իր

տեխնիկայով, ապա՝ ձեռքի ճնշմամբ, հարվածային և ոտքի ճնշմամբ գործող բրիչային տեխնիկայի տարատեսակներն իրենց հատուկ աշխատաեղանակներով: Բդոյանը գրել է նաև բուսահավաքչության ու այգեգործության համառոտ պատմությունը:

Մենագրությունն ընդգրկում է պատմական Հայաստանի երկրագործական երկու խոշոր բնագավառների՝ բրիչային և արորագուլթանային երկրագործության ամբողջ նյութը, գիտական դասակարգումն ու հետազոտությունը: Ներկայացված են վարող տեխնիկայի ազգագրական շրջանների առանձնահատկությունները, ըստ որում՝ յոթ ազգագրական շրջանի արորներն ունեն բոլորովին տարբեր կառուցվածք, թեև ըստ գործառույթի նույնն են: Բացի Աղձնիքից և Ծոփքից՝ մնացած բոլոր ազգագրական շրջաններում (Բարձր Հայք, Վասպուրական, Այրարատ, Սյունիք, Համշեն) գոյություն ունեին ազգային մեծ ու փոքր գուլթաններ, որոնց ԺԹ դարի վերջերին փոխարինեցին գործարանային գուլթանները: Հեղինակը հանգամանորեն կանգ է առել այդ բոլորի ծագումնաբանական հարցերի վրա՝ ցույց տալով պատմաաշխարհագրական և բնակլիմայական գործոնների դերը: Արորագուլթանային տեխնիկայի անմիջական մաս էր կազմում Վանա լճի ավազանում և Կոգովիտում մինչև 1915 թ. հարատևող շարացան երկրագործական համակարգը, որին հեղինակը հակված է վերագրել ուրարտական ծագում: Բացի տեխնիկայի նկարագրությունից՝ հեղինակը կանգ է առել աշխատանքի նախնական կոոպերատիվ ձևերի մնացուկների ուսումնասիրության վրա, որոնք տարբեր պատմաազգագրական շրջաններում հայտնի էին **հարակաշ, համկալություն, կիսարարություն, համփա, աղսընկերություն, խոչկամու, փոռնակ** և այլ տարբերակներով: Հարակաշ-համկալության կոոպերատիվ ձևերի մեջ նա հանգամանորեն ցույց է տվել ընկերակցողների իրավունքներն ու պարտականությունները, փոխադարձ կապերն ու իրավահարաբերությունները, ինչպես նաև գուլթանավարության համակարգը՝ իր ներքին ավանդական և սովորութային կարգ ու կանոններով:

Վարող, փխրեցնող ու հարթող արտադրամիջոցների հետ մանրամասնորեն ուսումնասիրված են լծասարքերը, բերքահավաքի գործիքները, կալսելու միջոցները, երկրագործության բնագավառի աշխատաեղանակները և աշխատանքը կազմակերպելու հա-

մայնքային ձևերը:

Հատուկ ուսումնասիրության նյութ է դարձրել երկրագործական պաշտամունքը Հայաստանում, որի մեջ հեղինակը դիտարկել է հողագործության ամենանախնական շերտերը: Տքնաջան աշխատանքով հավաքված ու մշակված այդ նյութերն ընդգրկող սույն մենագրությունը ազգագրության և գյուղատնտեսության մասնագետների համար անփոխարինելի, յուրատեսակ շտեմարան է:

Վ. Բդոյանը կարևոր ծառայություն ունի նաև նյութական մշակույթի ուսումնասիրության բնագավառում: Նրա գրչին են պատկանում տպագիր մի շարք աշխատություններ, որոնք նվիրված են հայ ժողովրդական ճարտարապետությանը, ազգային զգեստների ուսումնասիրությանը և կիրառական արվեստին:

«Հայկական աղամանները» վերնագիրը կրող մենագրությունը (1986) նվիրված է ազգագրության մեջ պատմամշակութային տեսանկյունից չափազանց հետաքրքիր և քիչ ուսումնասիրված խնդիրներից մեկին՝ հայկական կավե կանացիակերպ աղամանների իմաստավորմանը, դրանց էության լուսաբանմանը: Աղի պաշտամունքը սերտորեն կապված է պտղաբերության գաղափարի հետ: Աղը Անահիտ դիցուհուց անբաժանելի է. այդ երկուսը միասնաբար հովանավորում են մորն ու մանկանը: Դա արտահայտվում էր նրանով, որ աղը պահվում էր Անահիտ դիցուհուն պատկերող կանացիակերպ կավե աղամանների մեջ: Ամենայն հավանականությամբ հին հայերը աղը համարել են Անահիտի պարգևը, որով և պետք է բացատրել նորածին մանկան վրա աղ ցանելու, ինչպես նաև մարդկանց և տան անմաքրությունն աղով մաքրելու սովորությունները:

Վեր հանելով Հայաստանում հնագույն ժամանակներից աղամանների նշանակությունը՝ հեղինակը դրանք բաժանում է ոճական հինգ խմբի, մանրակրկիտ վերլուծում է դրանք՝ ըստ կերպավորման, բնութագրում հիմնական և արտաքին այլ հատկանիշները, բերում դրանց վերաձևավորված, փոխակերպված օրինակները, բացատրում այդ երևույթի պատճառները: Աղամանների համակողմանի և խոր վերլուծությունը հեղինակին ի վերջո հանգեցնում է այն կարևոր հետևությանը, որ դրանք առնչվում են հեթանոսության շրջանի Անահիտ դիցուհու պաշտամունքին և նրա հետ կապված պաշտամունքային երևույթներին: Հիմնական հետևություններից մեկն այն է, որ քրիստոնեության շրջանում Անահի-

տի պաշտամունքը շարունակվել է, տարբեր հանգամանքներում հանդես է եկել քողարկված, ծպտված ձևով: Նա գտնում է, որ քրիստոնեության ընդունման, հայկական աստվածներին նվիրված մեհյանների ավերման պայմաններում լիովին արմատախիլ չէին կարող լինել հին հավատքի արմատները: Դրանք երկար ժամանակ արտահայտվել են կյանքում և կենցաղում, ծպտյալ վերարտադրվել ու վերակերպարանափոխվել են սրբացված իրերի և էակների մեջ: Հեղինակը համոզիչ է դարձնում այն միտքը, որ Անահիտի պաշտամունքը արտահայտվել է ոչ միայն զոհաբերվող կենդանիների, բույսերի և տարբեր առարկաների մեջ, այլ նաև նրա պատկերը խորհրդանշող կանացիակերպ աղամանների մեջ: Վ. Բդոյանը լուսաբանել է Անահիտ դիցուհու հետ աղերսվող մի շարք երևույթներ, որոնք դիցաբանության մեջ դեռ չեն դիտարկված: Պտղաբերության աստվածուհի Անահիտի պաշտամունքը միջնադարում և ավելի ուշ արտահայտվել է կենդանի և անկենդան բնության ու կերպարների մեջ, տարբեր անձնավորումների, նաև Մարիամի կերպարի մեջ, որին հաճախ չգիտակցված ձևով, վերագրվել են, փաստորեն, Անահիտ դիցուհուն խորհրդանշող աղամանների կանացիակերպությունն ու այլ հատկանիշներ:

Մենագրության հինգ գլուխներում և կից բերվող նկարների հարուստ ալբոմի բացատրագրերում պարզաբանված է ինչպես խնդրո առարկա հարցը, այնպես էլ՝ դրան անմիջականորեն առնչվող, գիտաճանաչողական մեծ նշանակություն ունեցող այլ հարցեր: Աշխատությունը, այսպիսով, Վ. Հ. Բդոյանի հերթական ներդրումներից է ժողովրդագիտության մեջ և ազգագրական բարձր արժանիքների հետ մեկտեղ ունի նաև գեղարվեստական ու ճանաչողական մեծ արժեք:

Վ. Բդոյանի կարևոր ծառայություններից են «Հայկական ժողովրդական խաղերի» (1963, 1980, 1983 թթ.) եռահատոր ժողովածուի կազմումը և ուսումնասիրումը: Ժողովածուն ներկայացնում է հայ ժողովրդի ֆիզիկական կուլտուրայի ժառանգության ամբողջական պատկերը՝ սկսած Ե դարից մինչև Ի դարի կեսերը: Օգտագործված են գրավոր վկայություններ, արխիվային նյութեր, ժամանակակից բանահավաքների հավաքածուներ և այլն: Նա ժողովածուի ատաղձը ենթարկել է մասնագիտական ուսումնասիրության: Հայ ազգագրության մեջ առաջին անգամ նա շոշափել է

երիտասարդական միությունների ինստիտուտի հետքերը, որոնք առանձնապես արտահայտված են ծիսական խաղերում: Խաղերում գտել և ներկայացրել է հայ ժողովրդի մղած քաղաքական պայքարի ձևերն ընդդեմ պարսկա-օսմանյան զավթիչների, ինչպես նաև սոցիալ-դասակարգային պայքարի ձևերը երկրի ներքին կյանքում: Նա հատուկ ուշադրությամբ է ուսումնասիրել ռազմամարզական խաղերը, որոնք մեծ արձագանք են գտել հայ ժողովրդական բանահյուսության մեջ:

Մենագրության առաջին հատորն ընդգրկում է հիմնականում հասարակական երևույթներ արտացոլող խաղատեսակները՝ ժողովրդական տոներին կատարվող ծիսական-դրամատիկական խաղերը, լարախաղերը, արտադրական ու ընտանեկան կենցաղը ներկայացնող խաղաձևերը և այլն:

Սույն ժողովածուն ընդգրկում է հետևյալ թեմաները՝ 1. Մանկական խաղերն ու խաղերգերը, որոնցով մեծերն էին փոքրերին զբաղեցնում, և այն խաղերը, որոնք սկսում են խաղալ ու զբաղվել մանուկները: 2. Խաղեր, որոնք կատարվում են մինչև 5-6 տարեկան երեխաների ձեռքով և հիմնականում ներկայացնում են չինարարական աշխատանքի գործընթացներ: 3. Սպորտի վերաբերյալ այն բոլորը, ինչ որ պահպանվել է հայ պատմագրության ու միջնադարյան անտիպ գրականության մեջ: 4. Ամբողջ շարժական և սպորտային խաղատեսակները: 5. Այն խաղերը, որոնք ներկայացնում են խաղի ու պարի միջանկյալ ձևեր կամ մեկից մյուսին անցնելու ընթացքը: 6. Դրամատիկական կարգի այն խաղերը, որոնք ներկայացնում են հասարակական կյանքի բավական ճշգրիտ պատկերը: 7. Այն մտավարժական խաղերը, որոնք կապվում են մասնավորապես մտավոր վարժությունների հետ: 8. Կենդանակռիվները՝ որպես ժողովրդական զվարճանքի միջոցներ և ազգային կրկեսային խաղերի սովորույթների վերապրուկներ: 9. Ծիսական խաղեր, որոնք առասպելական կամ դիցաբանական պատրանքի տակ վերարտադրում են աշխարհի կյանքի որևէ պատկեր՝ աշխատանք, բնության դեմ մղվող պայքար, ընկերային երևույթներ, ռազմի որոշ վարժություններ, բնության զարթոնքի և գարնանային օրերը դիմավորելու կապակցությամբ մարդու նախապատրաստություններն ու վարժությունները և այլն: 10. Այն ծիսական խաղ-զվարճանքները, որոնք երևան էին գալիս հարսա-

նեկան հանդեսների ժամանակ և իրենց արարողությամբ անմիջական կապ ունեին սպորտի հետ: 11. Այն սակավաթիվ խաղերը, որոնք դարերի ընթացքում արտացոլել են հայ ժողովրդի քաղաքական պայքարը օտար զավթիչների դեմ:

Հաջորդ գրքերում տեղ են գտել հետևյալ խաղատեսակները՝ ա) մարմնամարզական խաղեր (մանկան լոգանք, քայլել սովորեցնելու և խաղացնելու ձևեր, մանկան սկզբնական ինքնուրույն խաղեր՝ պատանեկան պահմտուկային ակնատիկ, հետապնդիչ, գործիքային, նմանողական, հեռավորության, բարձրության և խորության ցատկեր, հեծնոցիկ, ճկունության, հավասարակշռության և այլ տեսակի խաղեր ու զվարճություններ), բ) ռազմական և մրցակցական խաղեր (նշանառություն և լախտախաղեր, «պատերազմ» ներկայացնող խաղատեսակներ՝ բերդախաղեր, «պատերազմներ», թաղակռիվներ, գերեվարումներ, ուժային վարժություններ՝ ծանրություն բարձրացնել, նետել, շալակել, քաշել, սրահարել, շրջոցիկներ, նետոցիկներ, ըմբշամարտեր կենդանիների հետ, զինախաղեր՝ պարսատիկային խաղեր ու կռիվներ, նետաղեղային խաղեր, լող, լեռնային սպորտ, մականախաղեր՝ հետիոտն և ձիերով, ձիախաղեր-ձիարշավներ, օղապարանով որսախաղեր և այլն), գ) զվաճախաղեր (անակնկալային, աչքակապուկ, գուշակողական, պարի, երաժշտական և այլ խաղեր): դ) Սեղանախաղեր (սեղանի գնդակներ՝ մատներով խաղալու, քարկտիկային և այլն), ե) մտավարժական խաղեր (հանելուկաձև համրախաղեր, գրավախաղեր և այլն):

Ժողովածուն ունի խաղերի ձևերը բացահայտող նկարներ ու սխեմաներ, որոնք կատարված են տվյալ խաղի նկարագրի հիման վրա, ինչպես նաև հավելված, որի առաջին բաժնում զետեղված են նշանավոր մենամարտիկների կյանքի և գործունեության հակիրճ բնութագրերը, իսկ երկրորդ բաժնում՝ միջնադարյան այն օրենքները, որոնք վերաբերում են խաղացողների իրավահարաբերություններին:

Գիտնականն իր հավաքած բազմաբնույթ ազգագրական ու բանահյուսական նյութերի, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի ազգագրության բաժնում կարդացած դասախոսությունների շարքի հիման վրա գրել և 1974 թ. հրատարակել է բուհական ձեռնարկ՝ «Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ» խորագրով: Նման ձեռնարկի հրատարակումը վաղուց դարձել էր

անհրաժեշտություն, որովհետև գոյություն չուներ հայ ազգագրության որևէ դասագիրք կամ ձեռնարկ: Ձեռնարկի հրատարակությունը արժանի էր ամենայն խրախուսանքի ու գնահատության, քանզի իր թերություններով, բացթողումներով և երբեմն էլ սխալ եզրահանգումներով հանդերձ՝ ավելի քան երեք ու կես տասնամյակ մնաց որպես միակ բուհական ուսումնական ձեռնարկը: Դա անվանի ազգագրագետի երկարամյա գիտական գործունեության արդասիքն է, որտեղ գիտական շրջանառության մեջ է մտցված Հայաստանի տարբեր շրջաններում իր իսկ հավաքած ազգագրական, բանահյուսական, մատենագրական հարուստ նյութը:

Հեղինակը ձգտել է համառոտ քննարկել հայ ազգագրության բոլոր բնագավառները՝ տնտեսական կենցաղը, նյութական մշակույթը, հասարակական կենցաղը, հոգևոր մշակույթը և այլն: Համառոտակի ներկայացված են հայ ազգագրության հակիրճ պատմությունը և աղբյուրների ու գրականության տեսությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում Գ. Սրվանձտյանցի և Ե. Լալայանի բեղմնավոր գործունեությանը:

Հայ ժողովրդի տնտեսական կենցաղի առնչությամբ բնութագրվում են երկրագործությունը, անասնապահությունը, որսորդությունն ու ձկնորսությունը, տնային արդյունագործությունն ու արհեստները, հաղորդակցության և կապի միջոցները: Վ. Բդոյանը, որպես սկզբունք, սկսում է հնագույն ժամանակներից և հասնում մինչև Ի դարի կեսերը: Դրա համար նա հնարավորության սահմաններում ԺԹ-Ի դարերի ազգագրական նյութերը համապատասխան տեղերում լրացնում է անտիկ շրջանի և միջնադարյան տվյալներով, որով ընթերցողի համար նյութական և հոգևոր մշակույթները, տնտեսական զբաղմունքները ներկայանում են իրենց զարգացման տարբեր աստիճաններով: Երկրագործության վերաբերյալ նյութերը քննելիս հեղինակը խոր վերլուծությամբ տարբերակում է երկու խոշոր ճյուղեր՝ բրիչային և արորա-գութանային:

Նրան հաջողվել է առանձնացնել վարող գործիքների յոթ համալիր և ապացուցել, որ մինչև Ի դարի սկիզբը վարող գործիքների բացարձակ ընդհանրացում Հայաստանում տեղի չի ունեցել:

Արորա-գութանային տեխնիկայի հետ հեղինակը ներկայացրել է հողամշակման օժանդակ արտադրամիջոցների տեսակները,

որոնց հաջորդում են բերքահավաքի, կալսելու և ամբարելու գործիքներն ու միջոցները՝ աշխատանքային գործընթացներով հանդերձ: Երկրագործությունը՝ իբրև զբաղմունք, Վ. Բդոյանը Հայաստանի համար համարում է ամենաբնորոշը, որին զուգակցվել է անասնապահությունը, թեև առանձին լեռնային շրջաններ, ելնելով աշխարհագրական, բնակլիմայական պայմաններից, առաջնությունը տվել են անասնապահությանը: Փաստական նյութի հիման վրա հեղինակը աշխատել է ուրվագծել անասնապահական ձևերը նախնական շրջանից մինչև մեր օրերը:

Տնտեսական զբաղմունքների մեջ առանձին տեղ են գրավում տնայնագործությունը, արհեստները, հաղորդակցության ու կապի միջոցները և այլն:

Վ. Բդոյանը հատուկ ուշադրություն է դարձրել գյուղական և քաղաքային աշխատավորական շրջաններում աշխատանքի գոյություն ունեցող խմբային ձևերին՝ համքարություններին, հարակաշությունններին, համկալությունններին ու փոխօգնության ձևերին՝ իբրև համայնքային հարաբերությունների արդասիքներ:

Անդրադառնալով նյութական մշակույթին՝ Վ. Բդոյանը ընդհանուր հետազոտման առարկա է դարձրել հայկական լեռնաշխարհի գյուղական բնակավայրերը, ժողովրդական ճարտարապետությունը, ազգային տարազաձևերը, կահկարասին, սնունդն ու զենքերի տարատեսակները:

Նյութական մշակույթը ուսումնասիրելիս նա հավատարիմ է մնացել հետազոտման իր մեթոդներին, մշակույթի քննարկմանը մոտեցել է պատմական տեսանկյունից: Այսպես, փաստական նյութերի հիման վրա հայ ժողովրդական տարազը բաժանել է մի քանի ազգագրական շրջանների, որոնց ձևերը կապել է հայկական բնաշխարհում հանդես եկած հնագույն ցեղերի պատմության հետ: Նրա համոզմամբ «չկա ժողովուրդ, որը տարազի ուշ շրջանի արվեստով անմիջականորեն կապված չլինի իր նախնիների արվեստի հետ»: Ցույց տալով առանձին ազգագրական շրջանների տարազաձևերը, որոնք իրար երբեք չեն կրկնում, հեղինակը մերժել է ուսումնասիրողների այն տեսակետը, թե իբր հայկական տարազը փոխառություն է հարևան իրանական ու թեսալական տարազներից: Նա տեղական անխառն ձևվածքներ է համարել արարատյան, սյունիք-արցախյան, Բարձր Տայքի և Վասպուրականի տարազնե-

ը, իսկ կիլիկյան տարազները՝ դիտել իբրև Արևմտյան Հայաստանի համար համընդհանուր դարձած, մասնավորապես Բարձր Հայքի և Վասպուրականի տարազների համադրություն:

Հին Հայաստանի բնակավայրերն ու կառույցները ներկայացնելիս հեղինակը հիմնական ուշադրության առարկա է դարձրել ԺԹ-Ի դարերի ազգագրական տվյալների հանրագումարը: Նա գտնում է, որ մինչև Ի դար հասած կցաթաղերով ու միմյանց կպած տներով գյուղատիպերի ձևերը, մի կողմից, տոհմային ավանդների, մյուս կողմից՝ համայնքային ինքնապաշտպանության հետևանք են եղել տարբեր բռնապետությունների միջավայրերում:

Շենքերի համալիրները Վ. Բդոյանը ներկայացրել է զարգացման ընթացքը՝ հաշվի առնելով ընկերային խնդիրները: Հենվելով Քսենոփոնի տվյալների և մինչև Ի դարի սկզբները հարատևած շինարարական հին ավանդների վրա՝ նա ցույց է տալիս, որ հայկական հնագույն գյուղը լեռնային մասերում հաճախ ժայռափոր, լեռքարերից կառուցված ամրոցատիպ, իսկ հովտային շրջաններում գետնափոր շենքերից էր լինում: Վառելիքի պակասության պատճառով մարդկանց և անասունների ձմեռումը համատեղվում էր միևնույն շենքերում: Լուսավորությունը երդիկներից էր: Միջին դարերում շենքերի որոշ տեսակներ ունեին փոքրիկ ու բարձրադիր պատուհաններ: Բացի բնակարաններից, տնտեսական և անասնապահական շենքերից՝ նա առանձին ակնարկներով ներկայացրել է արտադրական շենքերը՝ ջրաղացները, ձիթհանները և հնձանները:

Գրքում մեծ տեղ է հատկացված հասարակական կենցաղի ուսումնասիրմանը՝ ընտանեկան կենցաղին, ամուսնական սովորություններին, ազգակցական հարաբերություններին, հայկական ծիսական կարգերին և հուղարկավորությանն ուղեկցող սովորություններին: Նա նշում է բանավոր օրենքների՝ սովորութական իրավունքների կարևորությունը, որոնք, սկիզբ առնելով տոհմացեղային շրջանից, կարգավորել են ընտանեկան հարաբերությունները ոչ միայն անգիր, այլև գրավոր շրջանում՝ զգալի չափով մուտք գործելով ազգային, կրոնական գրականության մեջ՝ որոշ փոփոխություններ կրելով քրիստոնեության ազդեցությամբ:

Նահապետական գերդաստանը, փոքր ընտանիքները և ընտանեկան հարաբերությունները հիմնականում ուսումնասիրված են

ԺԹ-Ի դարերի ազգագրական նյութերի հիման վրա: Անդրադառնալով գերդաստանական ընտանեձևին՝ իբրև տոհմային հասարակությանը բնորոշ երևույթի՝ Բդոյանը ցույց է տվել դրա կենսունակությունն ու վերապրուկների հարատևումը հետագա դարերում՝ գոյատևման տնտեսական պատմաքաղաքական գործոններով պայմանավորված, որոնք վերջնականապես քայքայվում ու վերանում են ԺԹ դարի վերջերին և Ի դարի սկզբներին:

Ամուսնության սովորույթներին ևս հեղինակն անդրադառնում է հին ու նոր շրջանները ներկայացնող հարուստ նյութերի հիման վրա, որոնց մեջ կարևոր տեղ ունեն հայոց կանոնագրքերի պահպանած նորմերը: Ըստ այդ տվյալների՝ նա հավաստում է, թե երկարուձիգ դարեր հայկական ամուսնական սովորույթները ֆեոդալական կարգերի պայմաններում ունեցել են նահապետական բնույթ: Նա ժխտում է հայ ազգագրության մեջ տեղ գտած այն կարծիքը, թե իբր Հայաստանում ԺԹ-Ի դարերում շարունակվել են աղջկա համար գլխագին վճարելու, նաև առևանգմամբ ամուսնանալու հնագույն սովորույթները:

Ազգակցական հարաբերությունների ուսումնասիրության բաժնում հեղինակը լայնորեն օգտագործել է ժողովրդական եզրաբանությունը: Ազգակցական խումբը ցույց տվող *արյունառու* և *ցեղ* եզրույթները նա իրավացիորեն համարում է տեղական, իսկ *ազգ, տոհմ, թախում* և այլ եզրույթները՝ փոխառություն պահլավերենից ու պարսկերենից: Եզրույթների հետքերով գիտնականը թափանցել է պատմական անցյալի մեջ և կապեր նշմարել ազգատոհմի ու տոհմի միջև:

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի տարատեսակներին՝ ժողովրդական բանահյուսությանը, պարերին, խաղերին, բնապաշտությանը, կենդանապաշտությանը, երկրագործական պաշտամունքին և հեթանոսական աստվածների դիցարանին նվիրված էջերը նույնպես արժեքավոր են: Բանահյուսությունը, պարերն ու խաղերը՝ իբրև ազգագրության հետ կապված քույր գիտությունների հիմքեր, ներկայացված են համառոտ:

Հավատքի բաժնում ուսումնասիրված է երկրային տարրերի ու երևույթների՝ հողի, քարի, ջրի, կրակի և հողմի պաշտամունքը: Լուսատուների պաշտամունքի հետ կապվում են արևը, լուսինը, աստղերը և առանձին աստղախմբեր (Օրիոն, Կշեռք, Ծիր Կաթին

և այլն): Գրքում որոշ տեղ է հատկացված տոտեմիզմին և դրա հետագա փոփոխված պաշտամունքներին՝ կապված նախ հեթանոսության, ապա՝ քրիստոնեության հետ: Հաշող են ներկայացված հողի պաշտամունքը, վարուցանքի հմայական գործողությունները, խաղողագործական գործիքների ծագմանն աղերսվող առասպելները, անձրևաբերության հետ կապված հավատալիքները և համապատասխան աստվածությունների պաշտամունքը:

Ըստ սույն ուսումնասիրության՝ հայկական դիցարանն ուներ ինը աստվածություն՝ Արամազդը, Անահիտը, Նանեն, Վահագնը, Աստղիկը, Վանատուրը, Միհրը, Տիրը և Սպանդարամետը:

Դժվար է, սակայն, ընդունել Բդոյանի այն դրույթը, թե ազգագրության հիմնական աղբյուր են «գրավոր հիշատակարանները»: Դա ճիշտ է միայն պատմական ազգագրության համար, որի ուսումնասիրության օբյեկտ են հին և անհետացած ժողովուրդները, իսկ առհասարակ ազգագրության հիմնական և կարևորագույն աղբյուր են ազգագրական դաշտային նյութերը, որոնք հավաքվում են անմիջական դիտումների և հարցումների միջոցով: Ճիշտ չէ, թերևս, հեղինակի այն տեսակետը, ըստ որի՝ ազգագրությունը՝ որպես գիտություն, Հայաստանում ձևավորվել է ԺԹ դարի սկզբներին: Իրողությունն այն է, որ Գ. Սրվանձտյանցի, Գ. Խալաթյանի և Ե. Լալայանի գործունեության շնորհիվ միայն ԺԹ դարի 70-90-ական թվականներից մինչև Ի դարի սկզբները հայ ազգագրությունը ձևավորվեց իբրև գիտություն, որը մեծապես կապված էր Գ. Խալաթյանի՝ 1887 թ. Մոսկվայում հրատարակված «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» գիտական առաջին հարցարանի, դրա հիման վրա նյութերի գիտական հավաքումն իրագործելու և «Ազգագրական հանդեսի» (1895/1896-1916) հրատարակության հետ:

Հեղինակի ուշադրությունից վրիպել է երկրագործական համակարգերի բնութագրությունը, որին չափազանց մեծ նշանակություն է տրվում ժամանակակից ազգագրության մեջ: Բացի դրանից՝ երկրագործական մշակույթին վերաբերող որոշ դրույթներ համոզիչ չեն թվում: Ցանկալի կլիներ, որ հեղինակը ավելի մեծ տեղ հատկացներ բնակավայրերի էվոլյուցիային, բնակելի կառույցների բազմազանությանը: Հստակ չի նշված, թե ի վերջո բնակարանի ինչպիսի տիպ է առավել տարածված և բնորոշ եղել

հայերին, զարգացման ինչ փուլեր է անցել այն: Ցանկալի կլիներ՝ ավելի հստակ և բնորոշ կողմերով ներկայացվեին հայ ժողովրդական բնակարանի ներույթը, կահույքը, կարասին, դրանց կիրառության ձևերն ու ժամանակը:

Աշխատությունը կշահեր, եթե արտացոլվեին միևնույն տոնների տարբերակները և դրանց պահպանման աստիճանը ազգագրական տարբեր շրջաններում, ինչպես դա կատարվել է վարող գործիքների, տարազի բաժիններում:

Հասարակական կենցաղի բաժնում հեղինակը շրջանցել է այնպիսի մի կարևորագույն բնագավառ, ինչպիսին է գյուղական համայնքը, որի վերապրուկները, ընդհուպ մինչև խորհրդային շրջանը, գոյատևում էին: Եվ հայկական գյուղին հենց հնագույն շրջանից բնորոշ են եղել համայնական ավանդույթները:

Հայ ազգագրության պատմության և ընկերային հարաբերությունների հարցերին Վ. Բդոյանը անդրադարձել է առանձին հոդվածներով: Նրա փայփայած բնագավառներից է ազգային դիցաբանության պատմությունը: Հայկական դիցաբանությունն առհասարակ լի է առեղծվածներով և դեռևս համակողմանի չուսումնասիրված բնագավառներից է: ԺԹ դարի գրեթե բոլոր դիցաբանները հայկական դիցարանին վերաբերող հարցերին են անդրադարձել միջին դարերի պատմագրության հաղորդումների սահմաններում: Վ. Բդոյանը դիցաբանական հարցերի քննությանը անդրադարձել է 1940-ական թվականներից՝ ազգագրական ու բանահյուսական նյութերի վրա հենվելով: Դրանով նա հայ ազգագրությանը մի շարք կարևոր ծառայություններ է մատուցել. հայտնաբերել է բազմաթիվ ու բազմապիսի հարուստ նյութեր, որոնք վերաբերում են արդեն հայտնի աստվածություններին՝ Անահիտ դիցուհուն, Նարին, Վանատուրին և այլոց: Նա բացահայտել է հայոց դպրության Տիր աստվածության մի անհայտ գործառույթ՝ դաշտամշակության շարացան համակարգի հովանավոր աստված լինելը Վանա լճի ավազանում: Վ. Բդոյանը հայտնաբերել է մինչ այժմ անհայտ աստվածություններ, ինչպիսիք են՝ ա) շղթա կտրող արական աստվածությունը՝ հայոց վարող գործիքների ստեղծողն ու հովանավորը, որը, ըստ հեղինակի, համապատասխանում է ազգային վեպի Ջենով Հովհանի գործունեությանը, բ) Ակլատիզը՝ որպես բնության մեռնող և հարություն առնող աստվածություն, որը

հաջորդել է Նար դիցուհուն և նախորդել է Արա Գեղեցիկին, գ) Ամանորը՝ որպես Վանատուրի զուգակիցը, և նրա կնոջը՝ այգեգործության ու դաշտամշակության հովանավորին:

Վ. Բդոյանը ճշտել է մի շարք դիցաբանական երևույթներ, որոնք քրիստոնեության շրջանում հեթանոսական աստվածության ծպտված վիճակն են ներկայացրել: Այսպես, Վանատուրի և Ամանորի ծպտված պատկերներն էին ներկայացնում արական և իգական կերպարներով օժտված Լոշ և Վասիլ կոչված կուռքերը, արական և իգական սեռերով լոշտակ կոչված բուսարմատի դիցաբանական առումները, երկու սեռով պատկերվող Նուրին-պուրապատիկ արձանները, երկու սեռով ներկայացվող էրկթե-էրկթե տղամարդիկ, էրկթե-էրկթե կնանիք և փետե-փետե մարդիկ, փետե-փետե կնանիք կոչված արձանները, ինչպես նաև Գողթն գավառի Խնդում Դոքը կրող պառավն ու Խլվլիկ կոչված աներևութացող ոգին: Իսկ Անահիտ դիցուհու ծպտյալ պատկեր է համարում մեր բանահյուսության մեջ, այդ թվում՝ «Սասնա ծռեր» էպոսում հայտնի Պառավը և հայոց կենցաղում լայնորեն տարածված կանացիակերպ կավե աղաման արձանները: Այդ նվաճումների հիմքը հեղինակի՝ 1960-ական թթ. բացահայտած ծպտումի տեսությունն է՝ կապված ագրարային պաշտամունքի և հիշյալ աղամանների էության առեղծվածների հետ:

Վ. Բդոյանը այն մեղվաջան գիտնականներից էր, որն իր վաստառողջ կյանքի պայմաններում կարողացել է պտղունց-պտղունց հավաքել ու անդարձ կորստից փրկել այնպիսի արժեքավոր դաշտային ազգագրական նյութ, որն անգնահատելի է հայ ազգագրական գիտության համար: Վերջապես, Ս. Լիսիցյանի մահից հետո թանգարանի ազգագրական ֆոնդերի համալրման և մշակման գործում մեծ ջանքեր է թափել Վ. Բդոյանը: Նա է համալրել ու հարստացրել ոչ միայն պատմության, այլև Սարդարապատի, Հայաստանի դավառագիտական թանգարանների ազգագրական հավաքածուները: Նա է համալրել հատկապես երկրագործական գործիքների ֆոնդերը:

Հայ ազգագրության անխոնջ մշակը, որը մեծանուն Ե. Լալայանի ավանդների շարունակողն ու զարգացնողն է, ստեղծել է նաև տակավին անտիպ մի շարք աշխատություններ, որոնք նվիրված են Արարատյան հովտի, Ջավախքի ազգագրությանն ու հայ-

կական երկրագործական մշակույթի ատլասի մշակմանը:

Առանձին ազգագրական շրջանների նյութերի հավաքումով նա հայրենասիրական մեծ գործ է կատարել՝ փրկելով մեր ժամանակներում արագորեն կորստյան մատնվող մշակութային գանձերը: Անուրանալի է նրա թողած ազգագրական և բանահյուսական հսկայական տպագիր ու անտիպ ժառանգությունը, որը վերաբերում է հայոց ավանդական և ժամանակակից կենցաղի ու մշակույթի ամենաբազմազան բնագավառներին: Վ. Բդոյանը, հիրավի, եզակի հետազոտող ու գիտության մշակ է: Ինչքան մեծանում է Վ. Բդոյանից մեզ բաժանող ժամանակահատվածը, այնքան ավելի է ընդգծվում նրա արածի արժեքը: Իմ սերնդակիցներին բախտ է վիճակվել աշխատել նրա հետ, լսել նրա օգտակար խորհուրդները, դասեր քաղել նրանից:

ՎԵՐՋԱԲԱՆ

Գրքի նպատակն է անդրադառնալ հայ ազգագրական գիտության կայացման, անցած ուղու համալիր պատմությանը: Հայաստանում ազգագրությունը որպես գիտության ուրույն ճյուղ ձևավորվեց XVIII դարի երկրորդ կեսից ընդհուպ XX դարասկիզբը: Գիտության ձևավորումն ու կայացումն ընթացել են երեք շրջափուլով՝ 1) XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի 50-60-ական թթ.՝ ազգագրական բանահավաքչության առավել արդյունավետ, հատուկ նպատակադրմամբ, 2) XIX դարի 70-80-ական թթ.՝ ազգագրական բանահավաքչության ծրագիր-հարցարանների ստեղծման փուլ, և 3) XIX դարի 90-ական թվականներից մինչև XX դարի սկզբները՝ ազգագրության՝ որպես հայագիտության ուրույն ընագավառի կայացման ժամանակահատված:

Գիրքը ներառում է երկու բաժին՝ 1) Հայ ազգագրական գիտության ձևավորման և կայացման երախտավորների ազգագրական գործունեության վերաբերյալ ուսումնասիրություններ և 2) խորհրդային հայ անվանի ազգագրագետների գիտակազմակերպչական, ուսումնական և թանգարանային հաստատությունների գործունեությանը նվիրված ուսումնասիրություններ: Առաջին բաժնում ուսումնասիրությունները շարադրված են ըստ գիտության կայացման վերոնշյալ երեք պարբերաշրջանների:

«Հայ ազգագրության ձևավորման առաջին պարբերաշրջանը (XVIII դ. երկրորդ կես - XIX դ. 50-60-ական թթ.)» խորագրով ենթաբաժնում ժամանակաշրջանը բնութագրվում է հայագիտական հրատարակությունների առատությամբ, հայ մտավորականության ազգագրական գործունեության վրա եվրոպական ու ռուսական միջավայրի բարերար ազդեցությամբ: Ազգագրական նյութը այս շրջանում հիմնովին ուղղված էր հայոց տնտեսական ու ազգային զարթոնքին: Այդ նպատակին էին ծառայեցվում նաև ժամանակի հայ անդրանիկ պարբերականներում («Արշալույս Արարատյան», «Բազմավեպ», «Եվրոպա», «Մասիս» և այլն) զետեղված ազգագրական ու բանահյուսական նյութերը: Այս շրջանի գրականությանը շատ բնորոշ էին ազգային և համամարդկային սովո-

րությունների, անխառն բարքերի, տնտեսական զբաղմունքների, նյութական ու հոգևոր մշակույթների, ամուսնաընտանեկան անաղարտ սովորույթների ու ծիսակատարությունների, ժամանցի ձևերի, սպորտի ու խաղերի տեսակների նկարագրությունները: Այստեղ առաջին անգամ թեև հակիրճ, բայց ամբողջականորեն ներկայացվում է հայ ազգաբանական գիտության անցած ուղին՝ սկզբնաղբյուրներն ու պատմությունը, յուրաքանչյուր պարբերաշրջանում ազգագրական գիտության ձեռքբերումներն ու համալիր բնութագրությունը: Ըստ այդմ՝ գիտականորեն վերլուծվում է ազգային ինքնաճանաչման գործում նշանակալից ավանդ ներդրած Մխիթարյան միաբանության այրեր Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի, արևելահայ իրականության մեջ Մ. Թաղիադյանի և Խ. Աբովյանի և այլ հեղինակների գործունեությունը:

Մեծ է եղել Եվրոպայում կրթություն ստացած գիտնականների, մասնավորապես Վենետիկում հաստատված Մխիթարյան միաբանության անդամների դերը հայ ազգագրության՝ իբրև գիտության կայացման գործում: Նրանք են, որ լծվեցին հայ մատենագրության հարուստ ժառանգության հետազոտությանն ու ու հրատարակությանը, այն օտարներին թարգմանաբար ներկայացնելու, ինչպես նաև հին թարգմանությունների լավագույն նմուշների, այդ թվում՝ Աստվածաշնչի և անտիկ գրականության լույս ընծայման, դժվարին, բայց և շնորհակալ գործին: Բացի դրանից՝ ծավալեցին բառարանագրական, կրթական-մանկավարժական, մամուլի ստեղծման բեղմնավոր գործունեություն: Հայ մշակույթի ու լեզվի ուսումնասիրությանը զուգընթաց առաջինը ուշադրություն դարձրին հայ ժողովրդի տարբեր հատվածների ազգային կյանքի ու կենցաղի, նրա հոգևոր ու նյութական մշակութային երևույթներին:

XIX դարի առաջին կեսին առավելապես ուշադրության արժանի են Ղ. Ինճիճյանի և Մ. Բժշկյանի հնախոսական, տեղագրական-աշխարհագրական, ճանապարհորդական, ուղեգրական աշխատությունները: Ի դեպ, այս երկու հեղինակների ազգագրական գործունեությունը առաջին անգամ է գիտական լուրջ քննության արժանանում: Ղ. Ինճիճյանն առաջինն էր հայագետներից, որ «Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» մեծածավալ եռահատոր աշխատության մեջ ներառել է հայ մատե-

նագրության մեջ հաստատագրված տվյալները՝ դրանք խմբավո-
րելով ըստ թեմաների: «Դրոշք և նշանք» խորագրի ներքո ներ-
կայացրել է միջին դարերի հայկական պետական-զինվորական
դրոշները, դրանց նշանները (նախ արծիվն է եղել, ապա դրան
ավելացել է առյուծը), զինանշան են համարվել արծիվն ու նետը
(Արշակ Բ արքայի օրոք): «Զինուորութիւն Հայաստանեայց»
խորագրի ներքո ներկայացվում են հայոց միջնադարյան ռազ-
մական հանդերձանքը, զինվորների զգեստները, պաշտպանական
զենքերի տեսակները, վրաններն ու ազդարարիչ եղջերափողերը,
իսկ «Սովորութիւն Հայաստանեայց» գլխում՝ թագադրության
արարողակարգը, օծումը, պալատականների սովորույթները, միջ-
նադարյան հայոց ամուսնական արարողակարգերը, բարքերը, պե-
տական-նախարարական իրավական նորմերը, հուղարկավորման
ծեսերը:

Հայ կենցաղավարության մեջ առաջավոր ձևեր մտցնելու, ազ-
գային ինքնաճանաչողության ոգին բարձրացնելու նպատակին է
ուղղված գիտնականի «Ազգասեր» աշխատությունը: Տարբեր ժո-
ղովուրդների ազգագրական նկարագրին է նվիրված Ղ. Ին-
ճիճյանի «Դարապատում»-ի 8-հատորյակը:

Նշված ենթաբաժնում խոսվում է նաև Մխիթարյան միաբա-
նության հաջորդ նշանավոր բանահավաք և ազգագրագետ
Մ. Բժշկյանի գործունեության մասին: Մ. Բժշկյանը արևմտա-
հայոց մեջ առաջինն էր, որ հայ և այլ ժողովուրդների կենցաղի ու
մշակույթի վերաբերյալ արժեքավոր ազգագրական նյութեր գրա-
ռեց՝ այդ նպատակով հատուկ ճամփորդություններ կատարելով:
Նա առաջինն էր, որ գիտակցեց՝ ազգագրության բուն աղբյուրը
ժողովրդի բանավոր ժառանգությունն է, այսինքն՝ հույժ անհրա-
ժեշտ է փրկել դրանք մոռացության մատնվելուց՝ հավաքելով և
խմբավորելով դաշտային ազգագրական նյութերը: Այդպես է վար-
վել Մ. Բժշկյանը «Պատմութիւն Պոնտոսի» և «Ճանապարհոր-
դութիւն ի Լեհաստան» բացառիկ արժեքավոր աշխատություննե-
րում: Ազգագրական նյութեր գրի առնելու նպատակով ճանա-
պարհորդելով (1817-1819 թթ.) Սև ծովի ափերով՝ ազգագրական
եզակի նյութեր է հաստատագրել ոչ միայն այնտեղ ապրող հա-
յերի, այլև հույների, թուրքերի, մեգրելների, վրացիների, աբխազ-
ների, աբազների, Դոնի կազակների, լազերի, աջարների, չերքեզ-

ների, օսերի, ինգուշների և այլոց վերաբերյալ: Դրանք կարող են դառնալ այդ ժողովուրդների պատմության ու մշակույթի ուսումնասիրության հույժ կարևոր սկզբնաղբյուր, նամանավանդ վերջիններիս մի զգալի մասը ձուլվել է թուրքերի հետ: Անչափ արժեքավոր ու բացառիկ են դեպի Լեհաստան կատարած ուղևորության ընթացքում գրառված նյութերը, մասնավորաբար՝ հայերի ամուսնության ձևերի, ժառանգության կտակման կարգի, կրոնական համոզմունքների, արհեստների ու արհեստավորական միությունների, ժողովրդական տոների, զբաղմունքների, նյութական մշակույթի վերաբերյալ: Ի դեպ, Մ. Բժշկյանը իր անցած վայրերի վերաբերյալ գրի է առել նաև աշխարհագրական, պատմական, հնախոսական, ճարտարապետական և այլ կարգի տեղեկություններ:

Մ. Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» և քառահատոր «Հմտություն մանկանց» գրքերը ընդհանուր ազգագրության վերաբերյալ դասագիրք-աշխատություններ են:

Նշված ենթաբաժնում հակիրճ անդրադարձ է արված XIX դարի առաջին կեսի հայ նշանավոր լուսավորիչներ, գրողներ, մանկավարժներ, հրապարակախոսներ Մեսրոպ Թաղիադյանի և Խաչատուր Աբովյանի ազգագրական գործունեությանը, որոնք թողել են գրական հարուստ ժառանգություն, որը, սակայն, ցավոք, ազգագրական առումով դեռևս համալիր ուսումնասիրված չէ: Թաղիադյանը պատանեկության տարիներից գրի է առել և՛ տեսած ու լսած պատմական իրադարձություններ, և՛ ազգագրական ու հնագիտական նյութեր, ժողովրդական զրույցներ ու երգեր, առակներ ու ասացվածքներ, տպագրության է պատրաստել «Պսակ» խորագրով մի ժողովածու, ուր ամփոփված են եղել հայկական հարսանեկան երգեր, ծեսերի, սովորույթների նկարագրություններ: Հավաքած նյութերի հիման վրա հետագայում կազմել է նաև «Ծիսարան» և «Մաշտոց» խորագրերով ժողովածուներ: Սեղմ ներկայացվել է Մ. Թաղիադյանի «Ճանապարհորդություն ի Հայս» և «Դիցաբանություն» աշխատությունների բնույթը, նշանակությունը, ավանդը հայագիտության, առանձնապես հայ ազգագրության մեջ: «Ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ Թաղիադյանը գրի է առել և գիտական շրջանառության մեջ է դրել բազմաթիվ բնակավայրերի՝ Քանաքեռի, Օշականի, Կարբիի, նաև Մեղրիի և այլ վայրերի այգեգործության, ոռոգման

համակարգերի, Էջմիածնի վանքի կալվածքների և տնտեսության, մասնավորապես՝ վարուցանքի, բերքահավաքի, գյուղգործիքների, Ջրվեժում ընտիր ձեթ ստանալու միջոցների, եղանակների, Նորքում կավե անոթների արտադրության, Արարատյան հովտում բամբակամշակության, Սյունիքում երկաթամշակության և հայ բնակչության տնտեսության այլ զբաղմունքների վերաբերյալ սկզբնաղբյուրի նշանակության ազգագրական տեղեկություններ: Ուշագրավ նյութեր են հաղորդվում նաև Հայաստանում բնակվող վաչկատուն կյանք վարող քրդերի կենցաղի, զբաղմունքների, կացարանների ու տարազի վերաբերյալ:

Մ. Թաղիադյանը արևելահայ իրականության մեջ առաջիններից է, որն առաջարկում էր Հայաստանում գետերը նավարկելի դարձնելու, առևտրական նպատակներին ծառայեցնելու, երկրի ընդերքը հետազոտելու, խոպանացած դաշտերը բերքատու դարձնելու, արհեստները զարգացնելու, կապիտալ ներդրումներ իրականացնելու, հովանավորչական ընկերություններ ստեղծելու, արևմտահայության և գաղութահայության հետ կապերը ամրապնդելու, ազգային լուսավորության և մշակութային շինարարության, հայրենիքի հոգևոր զարթոնքի և վերածնության, տնտեսական բարեփոխումների մի ընդարձակ ծրագիր:

Խ. Աբովյանի ազգագրական ժառանգությունն ամբողջովին ուսումնասիրված ու պատշաճ գնահատված չէ: Մինչդեռ նա Արևելյան Հայաստանի ազգագրության առաջին գիտական նկարագրողն ու հայ ազգագրության սկզբնավորողն է: Հանձին Աբովյանի՝ XIX դարի առաջին կեսին գեղարվեստական գրականությունը սկսեց փոխել իր ուղղությունը՝ ստեղծագործության նյութ դարձնելով ազգային սովորություններն ու բարքերը: Այդ նոր գրական ուղղությանն անհրաժեշտաբար պետք էր աշխարհիկ լեզու, որով միայն կարելի էր ազգային ոգին արտացոլել գեղարվեստական գործերի մեջ: Այդ դարակազմիկ գործը վիճակված էր մեծ գրողին ու լուսավորչին:

Ազգագրությամբ զբաղվելը պայմանավորված էր Դորպատի համալսարանում Աբովյանի ուսումնառությամբ, երբ շփվեց ռուսական և եվրոպական ազգագրական գիտության հետ, իսկ մյուս խթանը նույն համալսարանի պրոֆեսոր Պարրոտի և նրա խմբում

ընդգրկված եվրոպական այլ գիտնականների այցն էր Արևելյան Հայաստան:

Աբովյանի գրառած ազգագրական նյութերը հաղորդվել են երկու ճանապարհով՝ գրական ստեղծագործությունների միջոցով, քանզի նրա ցանկացած գործ ազգագրական անսպառ նյութ է պարունակում («Վերք Հայաստանի», «Առաջին սեր», «Թուրքի աղջիկը») և երկրորդ՝ հատուկ նպատակադրմամբ ուսումնասիրություններ կատարելով: Դրանցից կարելի է առանձնացնել՝ «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին», «Գյուղական տների կառուցվածքը», «Քրդեր և եզդիներ», «Թիֆլիզու հայոց հանգստարանը», «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին», «Համառոտ ակնարկ հայերի մասին», «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը», «Ռուսական իշևանատների մասին» և այլն, որոնք հիմնականում գրվել են եվրոպացի ճանապարհորդ գիտնականների խնդրանքով և հորդորով: Գերմաներեն լույս ընծայված և շուրջ մեկ դար չհրատարակված լինելու պատճառով նրա ազգագրական գործերի մի զգալի մասը մնացել էր անհայտության մեջ: Միայն 1940-1950-ական թթ. ձեռնարկվեց Աբովյանի երկերի տասհատորյակի հրատարակումը, և ազգագրական աշխատություններն առաջին անգամ թարգմանվեցին հայերեն ու հրատարակվեցին: Վերջին մեկուկես տասնամյակում սույն գրքի հեղինակը լուրջ ուշադրություն է դարձրել Խ. Աբովյանի ազգագրական ժառանգությանը: Գրքում զետեղված են նրա «Խաչատուր Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ», «Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում», «Աբովյանը՝ հայ ազգաբանական գիտության սկզբնավորող», «Խ. Աբովյանը՝ քրդերի ազգագրության հետազոտող» ուսումնասիրությունները: Սրանցից երևում է, որ Խ. Աբովյանը ոչ միայն ազգագրական նյութերի գրառող է, այլև լուրջ հետազոտող: Նրա ազգագրական գործերում շոշափվում են հայ ազգագրության գրեթե բոլոր կողմերը: Հայ ազգագրության մեջ շատ քիչ բնագավառներ կարելի է մատնանշել, որոնց վերաբերյալ շատ թե քիչ, նպատակադրված թե հարևանցիորեն Աբովյանը նյութեր չգրանցեր: Գրողը առանձնապես

շատ է կարևորել հայոց ընտանիքին ու ամուսնությանը առնչվող սովորությունների ու ծեսերի, սոցիալ-հասարակական փոխհարաբերությունների և առհասարակ տվյալ ժամանակաշրջանի ավանդույթային արժեհամակարգի բացահայտումը:

Խ. Աբովյանը հետազոտման նյութ դարձրեց ժողովրդական բնակարանի և նրա օժանդակ կառույցների ուսումնասիրությունը, որն այսօր շատ օգտակար է ժողովրդական ճարտարապետությամբ զբաղվողների համար:

Աբովյանը հատուկ ուսումնասիրություններ ունի Հայաստանում բնակվող քրդերի և եզդիների վերաբերյալ՝ իրավացիորեն համարվելով Հայաստանում քրդագիտության հիմնադիրը: Ուշադրավ նկարագրություններ է թողել ռուսների, ռուսական իշևանատների նիստուկացի, հյուրեր ընդունելու և ճանապարհելու եղանակների, իշևանատների բարքերի, փոխհարաբերությունների վերաբերյալ:

Խ. Աբովյանը ազգագրական հետաքրքիր տեղեկություններ է թողել նաև իր հիշատակումներում և դորպատյան օրագրերում: Նա հայ և օտար ժողովուրդների ազգագրությամբ զբաղվել է եվրոպական տիպի գիտնականի մակարդակով ու բարեխղճությամբ:

Միաժամանակ, Խ. Աբովյանը ճշմարիտ ու հայրենասեր մտավորական էր. առաջինն էր, որ Արևելյան Հայաստանի տնտեսական, մշակութային դրության բարելավմանը հասնելու համար ցարական կառավարությանն ուղղված դիմում-գրության մեջ առաջարկների, տնտեսական ու մշակութային բարեփոխումների ծրագրերի մի համալիր փաթեթ էր ներկայացրել, որի պատճառով էլ ենթարկվել էր իշխանությունների հալածանքներին:

Տարերային բանահավաքչության հաղթահարումը մասամբ նկատելի է դառնում XIX դարի առաջին կեսի մամուլում («Ազգաբար Բյուզանդյան», «Արշալույս Արարատյան», «Հայրենասեր» (ապա՝ «Ազգասեր»), «Հայաստան», «Եվրոպա», «Բանասեր», «Ուսումնասեր» և այլն): Այստեղ նույնպես, ազգային ինքնագիտակցության արթնացման գաղափարական ազդեցությամբ պայմանավորված, սկզբնավորվեց նպատակային բանահավաքչությունը:

Տարերային բանահավաքչության հաղթահարումը հիմնականում պայմանավորված էր ազգագրական հարցարանի ստեղծմամբ: Այդ գործի նախաձեռնողը եղավ Գ. Սրվանձտյանցը, իրականաց-

նողը՝ Գ. Խալաթյանցը: Նրանց գործունեության շնորհիվ հայ ազգագրության պատմությունը թևակոխեց 1870-1880-ական թվականներ՝ մասնագիտական ծրագիր հարցարանների ստեղծման, ազգագրությունը սիրողական լինելուց գիտական հիմքերի վրա դնելու, հավաքչական բուռն գործունեության ծավալման շրջափուլը:

Ազգագրական հարցարանի, ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման վերելքի նախաձեռնողն ու կազմակերպիչը դարձավ արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ, հայ մշակույթի անխոնջ մշակ Գարեգին Սրվանձտյանցը (1840-1892):

Թուրքական հարստահարությունների և քաղաքական հալածանքների դեմ մաքառելու տարիներին Գ. Սրվանձտյանցը բացահայտեց ազգագրությունն ու բանահյուսությունը, դրանք առաջադրեց որպես հոգևոր զենքեր ու դրանցով ազգային զարթոնքի գործը հասցրեց նոր մակարդակի: «Ծանի՛ր զքեզ»-ի գաղափարով էր տոգորված Սրվանձտյանցի յուրաքանչյուր տող: Մ. Խրիմյանի հետ ճանապարհորդելով Անդրկովկասում՝ գրեց ազգագրական տվյալներով հագեցած «Երևան քաղաք», «Տփղիս քաղաք», «Սյունյաց աշխարհ» և «Շուշի քաղաք» հոդվածները: Ազգագրական բնույթի հոդվածներ է տպագրում նաև իր հրատարակած «Լրաբեր Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթում: 1870-ական թթ. նա ծավալեց հավաքչական բուռն գործունեություն՝ ընդգրկելով պատմական Հայաստանի ազգագրական հիմնական շրջանները: Նրա «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գիրքը իրավամբ համարվում է երկու կարևորագույն բացահայտումների՝ ազգագրական հարցարանի և հայոց ազգային էպոսի համահավաք ժողովածու: «Գրոց ու բրոց» յուրօրինակ ծրագիրը՝ որպես հայ իրականության մեջ առաջին, նախադեպը չունեցող ծրագիր-հարցարան, ինչ խոսք, պարզ էր ու հասարակ, նախնական: Երկար ժամանակ այն ծրագիր չի համարվել, որովհետև հեղինակը հարցերը արդի իմաստով չի համակարգել, թեմատիկ խմբավորման չի ենթարկել ու չի համակարգել, առաջադրված հարցերը չաղկապվել են պատասխան նկարագրերի հետ: Ընթերցողները և գիտնականները բոլոր պարագաներում ընդունել են «Գրոց ու բրոց»-ի բարերար և վարակիչ ազդեցությունը, բայց չեն նկատել, որ

հեղինակն այն ներկայացրել է իբրև «Հուշարար և ծրագիր»: Սույն ուսումնասիրության մեջ ցույց է տրված, որ «Գրոցն» այն է, ինչ հեղինակը գրի է առել իբրև ազգագրական և բանահյուսական հում նյութեր, իսկ «բրոց»-ն ակնհայտորեն խորհրդանշական է՝ «բրել, պեղել, պատմել տալ և գրի առնել» նշանակությամբ: Նա թվարկում է հայ ազգագրական գրեթե բոլոր թեմաները և ընթերցողին մղում է դրանց իրականացմանը: Արձանագրված է նաև, որ Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը» գիտակցական բանահավաքչության առաջին օրինակն էր, որին հետևեց գավառաբնակ մտավորականության մի ամբողջ սերնդի գործունեությունն: Գ. Սրվանձտյանցի մյուս երկերը ևս («Մանանա», «Համով-հոտով», «Թորոս աղբար», «Հնոց-նորոց») մեծ ներգործություն ունեցան ժամանակի հայ գավառական մտավորականության շրջանում: Նրանց ջանքերով ազգագրական և բանահյուսական մեծաքանակ նյութեր փրկվեցին կորստից, մոռացության մատնվելուց, հրապարակ եկան բազմաթիվ բանահավաքներ, որոնք սկսեցին նկարագրել հայրենի բնակավայրերն ու գավառները: Սփյուռքի հայության համար սրվանձտյանական գրանցման հայրենաբաղձ ոճն այժմ էլ իշխող ձև է, քանի որ ծառայում է ազգային ոգու պահպանմանը: Սրվանձտյանցը իր հայտնաբերած հարուստ նյութերով նպաստեց հայ ազգագրության, բանագիտության, գրականության ու հնագիտության զարգացմանը:

Գ. Սրվանձտյանցի երկրորդ մեծագույն ծառայությունը «Սասնա ծռեր» դյուցազնավեպի հայտնաբերումը, գրառումը և հրապարակումն էր (1874): Բացառիկ է նաև նրա բանագիտական գործունեությունը, որի նշանակությունը արժևորվում է սույն ուսումնասիրության մեջ:

Հայ ազգաբանական գիտության 1870-1880-ական թթ. արդյունքների, Գ. Սրվանձտյանցի և նրա հետևորդ բանասերների ու բանահավաքների աշխատությունների հիման վրա Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, եվրոպական և ռուսական ազգագրական գիտության սկզբունքներին քաջատեղյակ Գ. Խալաթյանցը (1858-1912) կազմեց գիտական հիմունքներով համակողմանի շարադրված ազգագրական մի նոր հարցարան՝ «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» վերտառությամբ (Մոսկվա, 1887), որի գիտական կառուցվածքն ու

նշանակությունը հանգամանալի վերլուծությանն է ենթարկված գրքում: «Ծրագիրը» էական դեր խաղաց ազգագրական գործը հայ իրականության մեջ գիտական սկզբունքներով առաջ մղելու հարցում: Այն արտացոլվեց թե՛ գեղարվեստական գրականության մեջ՝ Ռաֆֆի, Պ. Պռոշյան, Ռ. Պատկանյան, Մուրացան, Հ. Թումանյան, Մ. Նալբանդյան, և թե՛ արվեստի այլ ճյուղերում՝ Վ. Սուրենյանցի, Լանսերների, Ֆեթվաճյանի, Գ. Բաշինջաղյանի, Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Ռ. Մելիքյանի, Թ. Թորամանյանի և ուրիշների գործերում:

Հայ ազգագրական նյութի մատուցման ու մեկնաբանման գործում նշանակալի ներդրում կատարեցին Ս. Ամատունին («Հայոց բառ ու բան»), Ա. Ղլտչյանը («Հայոց հին իրավունքը»), Մ. Միրախորյան («Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի»), Ս. Հայկունին («Բագրևանդ, ջրաբաշխ գավառ») և այլք:

Մի շարք հանդեսներ՝ «Արաքս», «Բյուրակն», «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Մշակ» և այլն, նվիրվեցին հայ ազգաբանական գործունեությանը:

Գ. Խալաթյանցի երկրորդ գիտական սխրանքը նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինի նյութական միջոցներով 1901-1913 թթ. 9 ծավալուն հատորներով «Էմինյան ազգագրական ժողովածուն» հիմնելն էր: 1-8-րդ հատորների անփոփոխ խմբագիրն էր, իսկ 9-րդ հատորը (նրա մահից հետո) խմբագրել է հայագետ Կ. Կոստանյանը:

Գրքի այս բաժնում ներկայացված է մեծանուն գիտնական Ղևոնդ Ալիշանի (1820-1901) աշխատությունների պատմագիտական և մասնավորապես ազգաբանական նշանակությունը: Նրա «Տեղագիր Հայոց Մեծաց», «Այրարատ», «Շիրակ», «Սիսական», «Սիսուան», «Նշմարք հայկականք», «Հայաստան-Վենետիկ», «Բանախոսություն Հայաստանի», «Հայապատում», «Հայ բուսակ կամ հայկական բուսականություն», «Հայոց երգք ռամկականք» մեծածավալ աշխատությունները պատմական, աշխարհագրական, տեղագրական, ազգագրական, հնագիտական, մշակութային անհամար փաստերի համահավաք շտեմարաններ են: Նրա աշխատությունների յուրաքանչյուրը պատմաազգագրական հատուկ ուսումնասիրության գործեր են: Իսկ «Հին հավատք կամ հեթանո-

սական կրոնք հայոց» արժեքավոր աշխատությունը հայոց հեթանոսական հավատալիքների, պաշտամունքի, դիցաբանության գրեթե ամբողջական համակարգի համալիր ուսումնասիրություն է:

Գրքում տրված է նաև Մկրտիչ Խրիմյանի՝ Խրիմյան Հայրիկի երկերի ազգագրական և բանահավաքչական համառոտ բնութագիրը: Նա ներկայացվում է ոչ միայն իբրև հայ ժողովրդի մեծ երախտավոր, հասարակական-քաղաքական և կրոնական խոշոր գործիչ, գրող, այլև նշանավոր բանահավաք-ազգագրագետ: Նրա «Պապիկ և Թոռնիկ», «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամուել», «Վանգույժ», «Հայգույժ» աշխատությունները ազգաբանական, աղբյուրագիտական կարևոր արժեք ունեն:

Հայ ազգագրական նյութի գիտական ուսումնասիրության առումով նախահեղափոխական շրջանում շատ են կարևորվում նաև Ն. Ադոնցի «Армения в эпоху Юстиниана», Ս. Եղիազարովի «Сельская община», «Городские цехи» աշխատությունները: XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հրապարակված ռուսական մի շարք մատենաշարների ու պարբերականների կուտակած ազգագրական գիտելիքների հիմքի վրա ծավալվեցին ազգագրության՝ որպես պատմական գիտության ուրույն բնագավառի ձևավորման ու զարգացման գործընթացներ:

Հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտական ոլորտի վերջնական կայացման՝ XIX դարի 90-ական թթ. մինչև XX դարի սկզբների շրջափուլին են վերաբերում «Ե. Լալայանի և «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում» և «Ե. Լալայանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող» ուսումնասիրությունները:

Ներկայացվում է Ե. Լալայանի (1864-1931) բազմահարուստ ու բազմաբովանդակ գործունեությունը, այդ թվում՝ իր իսկ կողմից հիմնված և խմբագրված «Ազգագրական հանդեսի» 26 գրքերում և այլուր պատմական Հայաստանի մեծ մասի վերաբերյալ ազգագրական ու բանահյուսական նյութերի հրատարակմամբ վերջնականապես գիտական ազգաբանության կայացման և դրա զարգացմանը միտված ջանքերը: Վեր են հանվում ցարդ նմանը չունեցող ազգագրական մասնագիտական պարբերականի՝ «Ազ-

գագրական հանդեսի» հիմնման շարժառիթները և պատմական նշանակությունը հայ ազգագրական գիտության զարգացման գործում: Այն նշանակալից երևույթ էր հայ ժողովրդագիտության բնագավառում: Անդրանիկ համարը լույս տեսավ Շուշիում՝ 1895-1896 թթ., իսկ երկրորդ համարը տպագրվեց Թիֆլիսում, ապա պարբերաբար հրատարակվեց շուրջ քսան տարի՝ մինչև 1916 թվականը:

Հիմնադրելով ու խմբագրելով «Ազգագրական հանդեսը»՝ նա ստանձնեց մեր ազգային դարավոր մշակութային արժեքները գրառելու, կորստից փրկելու և դրանք հետագա սերունդներին հանձնելու առաքելությունը:

Ե. Լալայանի գիտական ջանքերի ու քարոզչական աշխատանքի շնորհիվ հանդեսի շուրջը համախմբված ականավոր մտավորականների ու դավառական դրագետների (Մ. Աբեղյան, Թ. Թորամանյան, Հ. Աճառյան, Լեո, Մելիքսեթ-Բեկ, Ե. Շահազիզ, Խ. Սամուելյան, Ա. Զելինսկի, Կարա-Մուրզա, Բենսե (Սահակ Մովսիսյան), Ս. Լիսիցյան և ուրիշներ) բանահավաքչական համակարգված գործունեություն ծավալվեց: Շուրջ 50 բանահավաքներ «Ազգագրական հանդեսին» նյութեր էին առաքում: Հանդեսի համարներում տպագրվում են ինչպես ազգագրական ու բանահյուսական հարուստ նյութեր, այնպես էլ տեսական աշխատություններ, հնագիտական ուսումնասիրություններ, մարդաբանությանը վերաբերող հետազոտություններ և այլն: Այս առումով կարևորվել են նաև «Ազգագրական հանդեսի» հրատարակությունը դյուրացնելու ուղղությամբ Ե. Լալայանի աշխատանքները: Նա գրքեր, քարտեզներ տպագրելու, տպարաններ ու գրավաճառանոցներ, թանգարան ու գրադարան բացելու, Կովկասը, հայկական գաղթօջախները ազգագրական, մարդաբանական գիտությունների տեսանկյունից ուսումնասիրելու, պեղումներ կատարելու, դասախոսություններ կազմակերպելու, լուսավորչական-հասարակական գործունեություն ծավալելու աշխատանքները աշխուժացնելու նպատակով նախ հիմնեց «Հայոց ազգագրական հրատարակչական ընկերությունը» (1900 թ.), ապա՝ «Հայոց ազգագրական ընկերությունը» (1906): Քննվում է նաև Ե. Լալայանի հրատարակչական, թարգմանչական գործունեությունը, որոնց շնորհիվ «Ազգագրա-

կան հանդեսը» դարձել էր հայ կյանքի մի յուրօրինակ հանրագիտարան:

Անդրադարձ է կատարվել Հայաստանի պատմաազգագրական շրջանների համալիր և բազմակողմանի հետազոտման՝ Ե. Լալայանի հիմք դրած մեթոդին, որի արդյունքը գիտնականի «Ջավախք», «Վարանդա», «Գանձակի գավառ», «Բորչալուի գավառ», «Վայոց ձոր», «Զանգեզուր», «Նոր Բայազետի գավառ», «Նախիջևանի գավառ», «Վասպուրական», «Մուշ-Տարոն» և այլ աշխատություններն են: Յուրաքանչյուր ազգագրական շրջանի հետազոտություն Ե. Լալայանը սկսում է պատմական համառոտ տեսությամբ, ապա ներկայացնում է տվյալ տարածքի տեղագրությունը, բնութագրությունը, նշանավոր քաղաքներն ու գյուղերը, պատմական ու ճարտարապետական հուշարձանները, բնակչության կազմն ու տեղաշարժերը: Տնտեսական զբաղմունքներին զուգընթաց ներկայացնում է նաև հոգևոր-մշակութային կյանքի պատկերը: Առավել հանգամանորեն է լուսաբանում ընտանեկան բարքերն ու ծեսերը, տոներն ու հավատալիքները: Ե. Լալայանի գիտական ժառանգությունը, մասնավորապես՝ Հայաստանի պատմաազգագրական շրջաններին նվիրված նյութերն ու հետազոտությունները, մինչև այսօր պահպանել են իրենց այժմեականությունն ու գիտական թարմությունը:

Գրքում առանձին բաժնով տրվում են խորհրդային շրջափուլի հայ անվանի ազգագրագետների ազգագրական, գիտակազմակերպչական, ուսումնական հաստատությունների և թանգարանների գործունեությանը վերաբերող ուսումնասիրությունները:

Այն, ինչ նախկինում ինքնուրույն պետականության բացակայության պատճառով մեզանում կատարվում էր առանձին անհատների և ազգագրական, գավառագիտական ու նման ընկերությունների նախաձեռնությամբ ու ջանքերով, այս շրջափուլում սկսեց իրականացվել պետական հոգածությունը վայելող համապատասխան հիմնարկների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրային հետևողական գործունեությամբ: Չնայած գաղափարական որոշ պարտադրանքներին՝ հայ ազգագրական գիտության ձեռքբերումները խորհրդային տարիներին ակնառու էին:

Բաժնի առաջին ուսումնասիրությունը նվիրված է հայ ազգագրական գիտության զարգացմանը խորհրդային շրջանում՝ 1920-1940 թվականներին: Այստեղ արձանագրվում է երկրի տնտեսական ծանր վիճակի և կադրերի պակասի պայմաններում նախորդ սերնդի անբասիր աշխատանքի շնորհիվ ազգագրական գիտության ձեռքբերումները խորհրդային Հայաստանում: Այս շրջափուլում ևս անուրանալի է անվանի ազգագրագետ Ե. Լալայանի վաստակը: Պատմաազգագրական շրջանացման նրա մշակած սկզբունքով շարունակվեցին հետազոտությունները նաև խորհրդային շրջանում: Նա 1920-ական թթ. ազգագրորեն, տեղագրորեն և հնագիտորեն հետազոտեց Կոտայքի շրջանը, ստանձնեց նորաստեղծ պատմության թանգարանի, հատկապես ազգագրության բաժնի ստեղծման հոգսերը, հրատարակեց «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից», «Տղաբերքի սովորություններ զարգացումը Հայոց մեջ», «Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում» հոդվածները, «Դամբանների պեղումները խորհրդային Հայաստանում» մենագրությունը:

Բավարար չափով ներկայացվում է գիտական հաստատությունների ստեղծման պատմությունը: 1920-1930-ական թթ. ձեռքբերումներից մեկը մայր թանգարանի, ապա նրա հիմքի վրա ինքնուրույն այլ թանգարանների ստեղծումն էր, որոնք ծավալեցին թանգարանային արժեքներ ձեռքբերելու, ցուցադրություն կազմակերպելու, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու գործընթացներ: Հաջորդը գիտական առաջին հիմնարկի՝ Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի հիմնումն էր Էջմիածնում, որը 1931 թ. փոխարինվեց Հայաստանի կուլտուրայի պատմության, 1934-1939 թթ.՝ պատմության և գրականության ինստիտուտով: 1920-ական թթ. կեսերին կարևոր դեր էր խաղում նաև Թիֆլիսում գործող Կովկասի պատմահնագիտական ինստիտուտը, որտեղ աշխատում էին Ս. Լիսիցյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, 1943 թ. հիմնվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Ազգագրական գիտության զարգացման, մասնագետ կադրերի պատրաստման տեսանկյունից նշանակալի դեր է խաղացել Երևանի պետական համալսարանը: Այնուհետև փորձ է արվում հավուր պատշաճի ներկայացնել Խ. Սամուելյանի (1873-1940) գործունեու-

թյունը: Նրա «Հին Հայաստանի մշակույթը» եռահատոր աշխատությունը այսօր էլ չի կորցրել գիտական արժեքը: Մեծ է եղել նրա դերը նաև իրավագիտության պատմության և բանահյուսության ուսումնասիրության գործում: Նաև արխիվային գործի հմուտ կազմակերպիչ էր, 1924-1934 թթ. եղել է պետական կենտրոնական արխիվի վարիչը:

Հաջորդը Ստեփան Լիսիցյանի (1865-1947) ազգագրական գործունեության լուսաբանումն է: Նա ներկայացվել է որպես խորհրդահայ ազգագրության հիմնադիր: Նրա գործունեության երեք ուղղություններն են՝ ա) ազգագրական նյութերի հավաքչություն, բ) գիտահետազոտական, գ) գիտակազմակերպչական: Նա առաջինն էր, որ հանգամանալի ներկայացրեց Հայաստանի գյուղական բնակավայրերի, բնակարանների հիմնական տիպը՝ «գլխատունը», «նրա ճարտարապետական հորինվածքը», ուշագրավ են «Շատախի պատմաազգագրական ուրվագիծը», «Եղբայրական միությունները», «Սրբավայրերը լեռնանցքներում», «Զանգեզուրի հայերը», «Լեռնային Ղարաբաղի հայերը», «Очерки этнографии дореволюционной Армении», «Армянская этнография за 15 лет» և այլ ուսումնասիրություններ:

Նրան ենք պարտական մինչև օրս գործող՝ թվով երրորդ «Ազգագրական հարցարանի» ստեղծման համար:

Անգնահատելի են նրա ծառայությունները Հայաստանի պատմության պետական թանգարանի աշխատանքների ծավալման, ֆոնդերի հարստացման, ցուցադրությունների կազմակերպման բնագավառում, նա եղավ ազգագրական թանգարանային գործի հիմնադիրն ու անխոնջ զարգացնողը խորհրդային Հայաստանում: Նրա գլխավորությամբ երկրի տարբեր շրջաններում կազմակերպված գիտարշավների ժամանակ հայթայթվել է շուրջ 1000 ցուցանմուշ, հատկապես կարևոր են Շատախին, Մոկսին, Սասունին վերաբերող արժեքավոր հավաքածուները: Նրա նախապատրաստած ազգագրագետ կադրերը՝ Վ. Բդոյանը, Դ. Վարդումյանը, Կ. Մելիք-Փաշայանը, Է. Կարապետյանը, Ա. Օդաբաշյանը և այլք դարձան Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնական կորիզը:

Գրքում լուսաբանվում է նաև Մ. Աբեղյանի, Հ. Օրբելու, Ե. Շահազիզի, Գ. Ղափանցյանի, Գ. Զուբսինի, Լ. Մելիքսեթ-Բեկի,

Կ. Մելիք-Օհանյանի և ուրիշների ազգագրական գործունեությունը: Իրենց բազմամյա գիտելիքներով և փորձառությամբ նրանք ծավալեցին հավաքչական և հետազոտական արդյունավետ աշխատանքներ՝ որոշակի ներդրում ունենալով խորհրդահայ ազգագրության զարգացման գործում:

Այս բաժնի երկրորդ ուսումնասիրությունը կրում է «Հայաստանի ազգագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունները և գիտահետազոտական հաստատությունները (1950-1980-ական թթ.)» խորագիրը: Այստեղ ուշադրություն է դարձվում 1950-1980-ական թթ. սերնդին փոխարինելու եկած երիտասարդ մասնագետների՝ ԽՍՀՄ ազգաբանական հաստատությունների հետ ունեցած շփումների բարերար արդյունքներին, միութենական ազգաբանական հաստատություններում մասնագետ կադրերի պատրաստման, գիտական հետազոտությունների նոր հայեցակարգերի մշակման, ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից կենցաղի ու մշակույթի ուսումնասիրության նոր մեթոդների իրականացման հարցերին: Ներկայացվում է 1953 թ. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում ազգագրական խմբի, ապա 1959 թ. այդ նույն համակարգում ինքնուրույն՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և դրա կազմում Հնագիտության, ազգագրության և բանահյուսության՝ 1981 թ. հիմնված էթնոսոցիոլոգիայի բաժինների կազմավորման, դրանց ծավալած եռանդուն գործունեության, մասնագետ կադրեր պատաստելու, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու, հանրապետության և արտերկրի հարակից շրջանների հայաշատ բնակավայրերում գիտարշավներ կազմակերպելու, ազգագրական ու բանահյուսական նյութեր հավաքելու, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի ստեղծման և այլնի վերաբերյալ:

Ուսումնասիրության մեջ զգալի տեղ է հատկացված Հայաստանի պատմության պետական թանգարանի, Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանի, ԵՊՀ պատմության ֆակուլտետի համակարգում հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության բաժնի, ապա դրա հիմքի վրա՝ հնագիտության և ազգագրության ամբիոնի ստեղծմանը, մասնագետ կադրերի պատրաստմանը, գիտահետազոտական, դաշտային բանահավաքչական գործունեության ծավալ-

մանը: Ազգագրագետ կադրերի պատրաստման գործում ակնառու գործունեություն է ծավալել Ազգագրության ամբիոնի վարիչ Յու. Մկրտումյանը:

Համալիր քննության է առնվում 1950-1980-ական թթ. հայ ազգագրական առանձին բնագավառների գործունեությունը: Երկրագործական մշակույթի վերաբերյալ հիմնարար հետազոտություններ է իրականացրել Վ. Բդոյանը, անասնապահական մշակույթի վերաբերյալ՝ Յու. Մկրտումյանը, օժանդակ տնտեսաձևերից չերամապահության վերաբերյալ՝ Ա. Պետրոսյանը, մեղվապահության վերաբերյալ՝ Ա. Գասպարյանը, արհեստների և արհեստավորական համքարությունների վերաբերյալ՝ Վ. Աբրահամյանը, Բ. Առաքելյանը, Կ. Սեղբոսյանը, Ե. Սարգսյանը և այլք: Արտադրական մշակույթի կարևոր ոլորտներից մեկն էլ ժողովրդական փոխադրամիջոցներն են, որոնց հնագիտական նյութերի հիման վրա անդրադարձել են Բ. Պիոտրովսկին, Ս. Եսայանը, Հ. Մնացականյանը, իսկ ազգագրական նյութերի մեկնաբանությամբ՝ Լ. Պետրոսյանը: Հայկական չափ ու կշիռների համակարգը հետազոտել է Ռ. Վարդանյանը:

Կենսապահովման մշակույթի առավել կարևոր ոլորտներից են բնակավայրը և ժողովրդական բնակարանը: Գրքում ներկայացված են այդ համակարգերի ազգաբանական և ճարտարապետական ուսումնասիրությունների արդյունքները, մասնավորապես՝ ճարտարապետներ Ռ. Աղաբաբյանի, Ս. Վարդանյանի, Է. Հակոբյանի, Ն. Պապուխյանի, Ս. Մաթևոսյանի, Հ. Խալփախչյանի, ազգագրագետներ Ս. Լիսիցյանի, Վ. Բդոյանի, Դ. Վարդումյանի, Զիկովանու, Մ. Իլյինայի, Վ. Վիտովի, Վ. Կոբիչևի, Է. Մելքումյանի, Յու. Մկրտումյանի, Հ. Մարությանի հետազոտությունները: Արձանագրվել է, որ, այդուհանդերձ, առ այսօր բնակավայրի և բնակարանի համալիր ավարտական ուսումնասիրություն արված չէ: Նույնը կարելի է ասել ուտեստի համալիրի վերաբերյալ՝ բացառությամբ մատենագրական նյութի հիման վրա Վ. Հացունու և Ս. Հարությունովի, Յու. Մկրտումյանի և այլոց՝ 1983 թ. հրատարակված «Культура жизнеобеспечения и этнос» ժողովածուում տեղ գտած ուսումնասիրությունների: Եթե բնակավայրի և բնակարանի, ուտեստի վերաբերյալ ազգագրական ուսումնասիրությունները անբավարար են, ապա ժողովրդական տարազի, հագու-

կապի վերաբերյալ հետազոտությունները՝ հանձինս Վ. Հացունու, Ն. Ավագյանի, Ա. Պատրիկի և մի շարք այլ հեղինակների, շատ հանգամանալի են:

Վերլուծված են նաև սոցիոնորմատիվ մշակույթի վերաբերյալ Մ. Կոսվենի, Է. Կարապետյանի, Դ. Վարդումյանի, Վ. Բդոյանի, Ա. Տեր-Սարգսյանցի, Զ. Խառատյանի, Ս. Հովհաննիսյանի հետազոտությունները, որոնք նվիրված են ընտանիքին, ամուսնությանն ու հարսանիքին, ազգակցական համակարգին: Հարցերի առանձին խումբ են կազմում նաև հասակային դասերի ինստիտուտի վերապրուկները, որին անդրադարձել են Վ. Վարդանյանը, Վ. Բդոյանը, Խ. Փորքշեյանը և այլք: Ուշադրություն է դարձվել հայ գյուղական համայնքի ուսումնասիրության հիմնախնդրին, որին անդրադարձել են Ս. Եղիազարյանը, Լ. Խաչիկյանը, Ս. Հակոբյանը, Մ. Հակոբյանը, Ռ. Նահապետյանը և այլք:

Հայոց հոգևոր-հումանիտար մշակույթի առանձին ոլորտներ՝ հավատալիքները, պաշտամունքային դրսևորումները, ժողովրդական տոները, կիրառական արվեստը ևս հանգամանալի հետազոտման են ենթարկվել Կ. Մելիք-Փաշայանի («Անահիտ դիցուհու պաշտամունքը»), Ա. Օդաբաշյանի («Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում», «Народные верования армян»), Լ. Աբրահամյանի («Первобытные праздники и мифология»), Զ. Խառատյանի («Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян»), Գ. Վարդումյանի («Дохристянские культы армян»), Վ. Բդոյանի («Հայ ժողովրդական խաղեր»), Կ. Աթոյանի («Ռազմասպորտային մենամարտերը Հայաստանում»), Ս. Լիսիցյանի («Старинные пляски и театральные представления армянского народа»), Ժ. Խաչատրյանի («Ջավախքի հայ ժողովրդական պարերը»), Է. Պետրոսյանի և Ժ. Խաչատրյանի («Армянский народный танец»), Է. Պետրոսյանի («Театральные черты в средневековых армянских миниатюрах»), Վ. Թեմուրճյանի («Գորգագործությունը Հայաստանում»), Մ. Ղազարյանի («Հայկական գորգը»), Վ. Բդոյանի («Հայկական աղամաններ. Անահիտ դիցուհուն խորհրդանշող կանացիակերպ աղամաններ»), Ս. Դավթյանի («Հայկական ժանյակ», «Հայկական ասեղնագործություն», «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի

պատմության»), Ա. Պատրիկի («Ուրֆայի ասեղնագործությունը»), Ա. Գևորգյանի (Արհեստները ու կենցաղը հայկական մանրանկարներում»), Բ. Առաքելյանի («Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության»), Հ. Ազատյանի («Փայտի գեղարվեստական փորագրություն») ուշագրավ աշխատություններում:

Գրքում ընդհանուր գծերով ներկայացված են 1950-1980-ական թթ. կատարված պատմաազգագրական առանձին շրջանների վերաբերյալ ուսումնասիրությունները, որոնցից առավել կարևորներից են՝ Դ. Վարդումյանի, («Լոռեցիների նոր կենցաղը»), Վ. Պետոյանի («Սասնա ազգագրություն»), Ե. Կարապետյանի («Սասուն. ազգագրական նյութեր»), Վ. Թեմուրճյանի («Գամիրքի հայերը»), Գ. Հալաջյանի («Դերսիմի հայերի ազգագրությունը»), Բ. Թոռլաքյանի («Համշենահայերի ազգագրությունը»), Ս. Ավագյանի («Արճակի ազգագրությունն ու բանահյուսությունը»), Վ. Բդոյանի («Ջավախքի հայոց ազգագրությունը և բանահյուսությունը») մենագրությունները:

Գրքում, ըստ էության, առաջին անգամ է ծավալուն անդրադարձ կատարվում հայ ազգագրության երախտավորներ, անխոնջ գիտնականներ Հովսեփ Օրբելու (ծննդյան 130-ամյակի առթիվ) և Վարդ Բդոյանի (ծննդյան 100-ամյակի առթիվ) ազգագրական և բանահավաքչական գործունեությանը:

Ուշադրության են արժանացել նաև հայ ազգագրության պատմության, Հայաստանում ապրող քրդերի, ռուսների, հույների ազգագրության վերաբերյալ ուսումնասիրությունները: Հեղինակը հատուկ ընդգծել է, որ այս շրջափուլում ազգագրական ձեռքբերումներն ավելի նշանակալից կլինեին, եթե չլիներ գաղափարախոսական այն խոչընդոտը, որ կաշկանդում էր, մի կողմից, անցյալի ժառանգության ամբողջական օգտագործումն ու արտասահմանյան գործընկերների հետ մասնագիտական փոխառնչությունները, մյուս կողմից՝ աշխարհասփյուռ հայերին որպես էթնիկ ամբողջություն դիտելն ու նրանց պատմաազգագրական ուսումնասիրությունը, խնդիր չէր դրվում դաշտային հետազոտություններ իրականացնելու համապարփակ ձևով՝ բոլոր թեմաներով նյութեր գրառելով:

CONCLUSION

The purpose of the book is to speak about the development of the Armenian ethnographic science and the complex history of the passed way. In Armenia ethnography as a unique branch of science was formed from the second half of the XVIII century up to the beginning of the XX century. The formation and development of the science has passed three stages:

1) From the second half of the XVIII century to the 50-60s of the XIX century: with more effective and specific targeting of ethnographic folklore.

2) the 70s - 80s of the XIX century – a stage of the creation of programs-questionnaires of the ethnographic folklore

3) From the 90s of the XIX century to the beginning of the XX century, a period of the development of ethnography as a unique field of the Armenian studies.

The book includes two sections: 1) Studies on the Ethnographic Activities of the deserved ethnographers in the formation and development of the Armenian Ethnographic Science; 2) Studies dedicated to the activities of scientific-organizational, educational and museum institutions of the samous Soviet ethnographers.

In the first section, the studies are categorized according to the three abovementioned periods of the development of science.

In the subsection entitled “The First Period of the Formation of Armenian Ethnography (Second Half of the XVIII Century – the 50-60s of the XIX Century)" the period is characterized by an abundance of Armenological publications, by the beneficial influence of the European and Russian environment on the ethnographic activities of the Armenian intelligentsia. The ethnographic material during this period was completely aimed at the Armenian economic and national awakening.

Ethnographic and folklore materials in the first Armenian periodicals of the time (“Arshaluys of Ararat”, “Multi-Novel”,

“Europe”, “Masis”, etc.) were also used for this purpose. The descriptions of national and universal customs, impeccable morals, economic pursuits, material and spiritual cultures, pure marital customs and rituals, forms of entertainment, sports and games were very typical for the literature of this period.

The passed path of the Armenian ethnological science is presented here for the first time, though it is presented briefly but comprehensively, i.e. its origins and history, the achievements and complex characteristics of the ethnographic science in each period. Accordingly, the activities of Gh. Inchichyan, M. Bzhshkyan from the Mekhitarist Congregation, who have greatly contributed to the national self-recognition, the activities of M. Taghiadyan and Kh. Abovyan, who have greatly contributed to the Eastern Armenian reality, as well as the activities of other authors have been scientifically analyzed.

The scholars who received education in Europe, particularly, members of the Mekhitarist Congregation established in Venice, have played a major role in the development of the Armenian ethnography as a science. It is they who have been engaged in the research and publication of rich heritage of the Armenian manuscripts for presenting their translation to foreigners, as well as it is they who have been engaged in the difficult but thankful work on the publication of the ancient literature, as well as the best samples of the ancient translations, including the Bible. In addition, they have carried out fruitful activities in the lexicographic, educational-pedagogical area and media.

In parallel with the study of the Armenian culture and language, they first paid attention to the national life and lifestyle of different sectors of the Armenian people, their spiritual and material cultural phenomena.

In the first half of the nineteenth century, the archeological, topographical-geographical, travel, guide works of Gh. Inchichyan and M. Bzhshkyan were greatly worthy of attention. By the way, the ethnographic activities of these two authors have been seriously scientifically studied for the first time. Gh. Inchichyan was the first among the Armenologists, who included the data recorded in the

Armenian cronicles scripture in a large-scale three-volume work entitled “Archeology in the Armenian Geographical World” grouping them by topics.

Under the "Flags and Signs" («Դրոշք և նշանք») headline he represented the Armenian medieval state-military flags, their signs (first it was an eagle, then a lion), and an eagle and an arrow (under King Arshak B) were considered as coat of arms. The Armenian medieval military outfit, soldiers' wears, types of defensive weapons, tents and belligerents were presented under the "Armenian Military" («Զինուորութիւն Հայաստանեայց») headline, and the rite of the coronation, the consecration, the traditions of courtiers, the Armenian medieval marital rites, the habits, state-ministerial legal norms, funeral rituals were presented in the "Armenian Habit" («Սովորութիւն Հայաստանեայց») chapter.

The work of the scientist entitled "Patriot" is aimed at the introduction of the advanced forms of the Armenian mode of life and the raise of the spirit of national self-recognition. Gh. Inchichyan's 8-volume book entitled "Darapatum" is dedicated to the ethnographic description of different peoples.

This section also discusses the activities of the next prominent folklorist and ethnographer of the Mekhitarist Congregation M.Bzhshkyan. M.Bzhshkyan was the first among the Western Armenians to record valuable ethnographic materials on the life and culture of the Armenian and other peoples, making special trips for this purpose.

He was the first to realize that the real source of ethnography is the oral heritage of the people, that is to say, it is urgently needed to save them from being forgotten by collecting and grouping field ethnographic materials. This is how M.Bzhshkyan acted in extremely valuable works entitled “History of Pontus” and “Trip to Poland”. Traveling on the Black Sea coast with the purpose of writing ethnographic materials (1817-1819), he recorded exceptional ethnographic materials not only of the Armenians living there, but also of the Greeks, Turks, Megrels, Georgians, Abkhazians, Abbas, Don Cossacks, Laz people, Adjarians, Circassians, Ossetians,

Ingushes and others. They can become an extremely important source for the study of the history and culture of these peoples, especially since most of them have been assimilated with the Turks. The materials recorded during the trip to Poland were extremely valuable and unique, in particular, the materials related to the forms of marriage of the Armenians, the order of inheritance, religious beliefs, trade unions and crafts, folk holidays, occupations, material culture. By the way, M. Bzhshkyan has also written geographical, historical, archeological, architectural and other information about the areas visited by him.

M. Bzhshkyan's works entitled “The College of Knowledge" («Ճեմարան գիտելեաց») and the four-volume " Kids Skill " are textbooks on the general ethnography.

This section briefly touches upon the ethnographic activities of Mesrop Taghiadyan and Khachatur Abovyan, the Armenian prominent enlighteners, writers, pedagogues, publicists of the first half of the 19th century, who have left rich literary heritage, which unfortunately has not been ethnographically studied yet.

From his youth Taghiadyan wrote both historical, ethnographical and archaeological materials (both seen and heard), folk conversations and songs, proverbs and sayings, prepared for publication the collection entitled "Crown", which summarizes the Armenian wedding songs, the descriptions of rituals and customs. On the basis of the collected materials he has also compiled the collections entitled "Tsisaran" and "Mashtots" later.

The author briefly introduced the nature and significance of M. Taghiadyan’s works "Trip to Armenians" («Ճանապարհորդություն ի Հայս») and "Mythology" («Դիցաբանություն»), as well as contribution to the Armenian studies, particularly in the Armenian ethnography.

In his work "Trip to Armenians" («Ճանապարհորդություն ի Հայս») Taghiadyan has written and put into scientific circulation the ethnographic information on the following: gardening and irrigation systems of numerous settlements, including Kanaker, Oshakan, Karbi, Meghri and other areas; the estates and economy of

the Echmiadzin Monastery, in particular, plowing and sowing, harvesting, agricultural tools; means and ways of getting selected oil in Jrvezh, the clay vessels production in Nork, cotton farming in the Ararat Valley, iron ore farming in Syunik, and other occupations of the Armenian population. Interesting materials are also presented on the lifestyle, occupations, shelters and costumes of the Kurds living in Armenia.

M. Taghiadyan is one of the first in the Eastern Armenian reality to offer a wide-ranging program of economic reforms in Armenia, i.e. to make rivers navigable, serve commercial purposes, explore the country's subsoil, make fertile fields, develop trades, make capital investments, create charities and sponsor companies, strengthen relations with Western Armenians and colonial Armenians, national enlightenment and cultural construction, spiritual awakening and rebirth of the homeland.

Kh. Abovyan's ethnographic heritage has not been fully studied and properly valued. Meanwhile, he is the first scientific descriptor of the Eastern Armenian ethnography and the originator of the Armenian ethnography. In the first half of the 19th century in the person of Abovyan, fiction began changing its direction, making national customs and morals a creative material. This new literary direction needed a secular language that could only reflect the national spirit in works of art. This epochal work was destined to the great writer and enlightener.

The practice of ethnography was conditioned by Abovyan's study at the Dorpate University, when he interacted with the Russian and European ethnographic science, and the other impetus was the visit of PhD. Parrott and other European scientists included in his group to the Eastern Armenia.

Abovyan's ethnographic materials have been transferred in two ways: through the literary works, as each of his works contains endless ethnographic material ("Wound of Armenia" («Վերք Հայաստանի»), "First Love" («Առաջին սեր»), "Turkish Girl" («Թուրքի աղջիկը»)) and the second, with special purposeful studies.

The following can be separated from them: "Overview of the life of the Armenians living in Tiflis and especially their wedding customs", "The structure of rural houses", "Kurds and Yezids", "the Armenian Resort of Tiflis", "On ways for the improvement of the economic and cultural state of Armenia and the Armenian people" , "A Brief Overview of Armenians," "The Armenian Church and Folk Music," "On the Russian Hostels," etc., which were mainly written at the request and exhortation of the European travelling scholars.

Considerable part of his ethnographic works remained obscure because of being released in Germany and unpublished for about a century. The publication of Abovyan's 10- volume work was initiated, and the ethnographic works were first translated into Armenian and published only in 1940s-1950s. During the last one and a half decade the author has paid serious attention to Kh. Abovyan's ethnographic heritage.

This book contains the following researches: "On the Issue of Khachatur Abovyan's Literary Heritage", "Characteristics of Armenian Family-Marriage Habits and Rituals in Kh. Abovyan's works, "Abovyan as the Originator of the Armenian Ethnological Science", "Kh. Abovyan as a Researcher of the Kurdish Ethnography". It can be seen from this that Kh. Abovyan is not only a writer of ethnographic materials, but also a serious researcher. His ethnographic works touch on almost all the aspects of the Armenian ethnography.

Very few spheres can be mentioned in the Armenian ethnography, about which Abovyan did not record materials, more or less intentionally or neighboring. The writer has particularly emphasized the discovery of customs and rituals related to the Armenian family and marriage, social and public relations and, in general, the exposure of traditional value system of the given period.

Kh. Abovyan made the study of people's dwelling and their auxiliary structures the material for his research, which is very useful today for those being engaged in folk architecture.

Abovyan has special studies about the Kurds and Yezids living in Armenia, being rightly considered as the founder of the Kurdish studies in Armenia. He left remarkable descriptions about the

Russians, the Russian hostels, the ways of receiving and serving of guests, the morals of the hostels and the relationship.

Kh. Abovyan has also left interesting ethnographic information in his memoirs and Dorpate diaries. He has been engaged in the ethnography of the Armenian and foreign peoples at the level and conscience of a European-type scholar.

At the same time, Kh. Abovyan was a true and patriotic intellectual: he was the first to submit a comprehensive package of programs on proposals, economic and cultural reforms to the Tsar's government in order to reach the improvement of the economic, cultural status of the Eastern Armenia, which resulted in the persecution by the authorities.

The overcoming of sponatneous folklore becomes partially noticeable in the press of the half of the nineteenth century: “Visantian Alert" («Ազդարար Բյուզանդյան»), “Ararat Sunrise” («Արշալույս Արարատյան»), “Patriot” («Հայրենասեր» (later «Ազգասեր»), “Armenia” («Հայաստան»), “Europe” («Եվրոպա»), “Philologist” («Բանասեր»), “Educator” («Ուսումնասեր»). The purporseful folklore also started here, due to the ideological influence of the awakening of the national self-consciousness.

The overcoming of sponatneous folklore was mainly conditioned by the creation of an ethnographic questionnaire. G. Srvandztiants became the initiator of this case, whose performer was G. Khalatyants. Due to their activities, the history of the Armenian ethnography enters the 1870s-1880s, a period of the creation of professional programs-questionnaires, the transference of ethnography from amateurism to a scientific basis, and a period of unfolding of boosting collection activities.

Garegin Srvandztiants (1840-1892), a prominent figure of the Western Armenian national-liberation struggle, the tireless cultivator of the Armenian culture, became an initiator and organizer of the raise of collection of ethnographic and folklore materials, the creation of questionnaire.

During the years of struggle against the Turkish oppression and political persecution G. Srvandztiants discovered ethnography and folklore, nominated them as spiritual weapons and brought them to a new level of national revival. Each line of Srvandztiants was inspired by the idea of «Ծանի՛ր զքեզ».

Traveling with M. Khrimyan in the Transcaucasus, he wrote the following articles full of demographic data: "Yerevan City", "Tpghis City", "Syunyats World" and "Shushi City". He is also publishing ethnographic articles in his bi-weekly newspaper «Լրաբեր Արծուիկ Տարօնոյ». In the 1870s he carried out intense collecting activities, covering the main ethnographic regions of historical Armenia.

His book entitled "Grots and Brots and David of Sasun or Door of Mher" («Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ») is rightly regarded as the collection of two most important discoveries: the ethnographic questionnaire and the Armenian national epos. "Grots and Brots" is a unique program, it is considered as the first, unprecedented program-questionnaire in the Armenian reality, of course, it was simple, exact and preliminary. It has not been considered as a program for a long time, because the author has not coordinated the questions in the modern sense, has not coordinated and subjected to thematical grouping, and the nominated questions have been linked to the answer descriptions.

Readers and scholars have accepted the benevolent and contagious influence of "Grots and Brots" in all the cases, but they have not noticed that the author presented it as a "reminder and program." According to the researches of PhD Nahapetyan, "Grots and Brots" is what the author recorded as ethnographic and folklore raw materials, and "brots" is obviously symbolic with the meaning of "to send, excavate, tell and write". He enumerates almost all the topics of the Armenian ethnography and urges the reader to implement them.

It is also recorded that G. Srvandziants's "Grots and Brots" was the first example of the conscious folklore, followed by the activities of the whole generation of provincial intellectuals. Other works of

G. Srvandztiants ("Manana" «Մանանա», "Tasty and with Smell" («Համով-հոտով»), “Aghbar Toros" («Թորոս աղբար»), "Old-New" («Հնոց-նորոց») also had great influence on the Armenian provincial intellectuals of the time.

A large number of ethnographic and folklore materials have been saved from loss and oblivion due to their efforts, numerous folklorists appeared, which began describing their native settlements and provinces. The homogenous style of writing of Srvandztiants became a leading form for the Diasporan Armenians, as it serves to the preservation of the national spirit. Srvandztiants contributed to the development of the Armenian ethnography, philology, literature and archeology with the rich materials discovered by him.

The second major service of G. Srvandztiants was the discovery, recording and publication of the “Sasna Tsrer” epic novel (1874). His scholarly activities is also exceptional, whose importance is highlighted in this study.

Based on the results of the Armenian ethnological science of the 1870-1880s, the works of G. Srvandztiants and his following philologists and folklorists, Ph.D of the Lazarian Seminary of Moscow G. Khalatyants (1858-1912), being well aware of the principles of the European and Russian ethnographic science, compiled a new ethnographic questionnaire versatilly written on the scientific principles, which was entitled "A Program on Armenian Ethnography and National Legal Habits" (Moscow, 1887), whose scientific structure and significance are analyzed in detail in the book.

The "Program" played an important role in pushing the ethnographic case in the Armenian reality on scientific principles. It was reflected both in fiction (Raffi, P. Proshyan, R. Patkanyan, Muratsan, H. Tumanyan, M. Nalbandyan) and other branches of art (the works of Surenyants, Lancers, Fetvachyan, G. Bashinjaghyan, Komitas, Kara-Murza, R. Melikyan, T. Toramanyan and others).

Significant contribution was made to the provision and interpretation of the Armenian ethnographic material by S. Amatuni ("The Armenian Word and Something" / «Հայոց բառ ու բան»,)

A. Ghltchyan ("Armenian Ancient Law"), M. Mirakhoryan ("A Descriptive Journey to the Armenian-populated Province of Eastern Tachkastan"/«Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի»), S. Haikuni ("Bagrevand, Watershed Province"/«Բագրևանդ, ջրաբաշխ գավառ») and others.

A number of journals, i.e. “Araks”, “Byurakn”, “Bazmavep”, “Journal Monthly” («Հանդես ամսօրյա»), “Mshak”, etc. have been devoted to the Armenian ethnological activities.

G. Khalatyants’s second scientific feat was the creation of the 9-volume “Eminian Ethnographic Collection” owing to the material resources of the famous Armenologist Mkrtich Emin (1901-1913). He was the unchanging editor of 1-8 volumes, and the 9th volume (after his death) was edited by Armenologist K. Kostanyan.

This section of the book presents the historical and, in particular, ethnological significance of the works of the great scholar Ghevond Alishan (1820-1901). His large-scale works, i.e. "Topography of Armenian Prominent People" («Տեղագիր Հայոց Մեծաց»), "Ayrarat", "Shirak", "Sisakan", "Sisuan", "Armenian Nshmark", "Armenia-Venice", "Folklore of Armenia", "Hayapatum", "Armenian vegetation or Armenian fauna" , "Armenian Ramkakank Song" («Հայոց երգք ռամկականք») are the collection of historical, geographical, topographical, ethnographic, archeological and cultural facts.

Each of his works are works of special historical and ethnographic study. And the valuable work entitled "Old Faith or Pagan Religion of Armenia" is a complex study of almost the complete system of the Armenian pagan beliefs, worship and mythology.

The collection also gives ethnographic and folklore brief description of the works of Mkrtich Khrimyan (Father Khrimyan). He is presented not only as a great appreciative, socio-political and religious figure and writer, but also as a prominent folklorist-

ethnographer of the Armenian people. His works "Grandfather and Grandson", "Paradise Family", "Sirak and Samuel", "Vanguizh", "Hayguizh" have important ethnological and sourceological value.

The following works are also very important in terms of the scientific study of the Armenian ethnographic material in the pre-revolutionary period: N Adonts's “Armenia in the Epoch of Justinian”, S. Yeghiazarov's “Rural Community” and “Urban Workshops”. The processes of developing and forming ethnography as a unique field of historical science began on the basis of ethnographic knowledge accumulated in a number of Russian manuscripts and periodicals published in the late 19th and the early 20th centuries.

The studies of PhD Nahapetyan's “The Role of E. Lalayan’s and "Ethnographic Journal" in the Formation and Development of the Armenian Ethnographic Science "and "E. Lalayan as the Beginner of the historical and ethnographic bypass method of the study of the Armenian ethnography” refer to the Armenian ethnography as the final development of a unique scientific field of the 90s of the XIX century up to the beginning of the XX century.

It presented E. Lalayan's (1864-1931) rich and comprehensive activities, including the efforts aimed at the establishment and development of the scientific ethnology with the publication of ethnographic and folklore materials related to great part of historical Armenia in 26 books of the “Ethnographic Journal” and elsewhere.

The motives and the historical significance of the development of the Armenian ethnographic professional journal (“Ethnographic Journal”) in the matter of the establishment of the Armenian enthographic science have been revealed. It was a significant phenomenon in the field of Armenian demography. The first issue was released in Shushi in 1895-1896, and the second issue was published in Tiflis, then it was published periodically for about twenty years until 1916.

Founding and editing the “Ethnographic Journal”, he took on the mission of recording and saving from loss our centuries-old national cultural values and passing them on to the future generations.

Due to E. Lalayan's scientific efforts and propaganda work, prominent intellectuals and provincial writers united around the journal (M. Abeghyan, T. Toramanyan, H. Acharyan, Leo, Melikset-Bek, E. Shahaziz, Kh. Samuelyan, A. Zelinsky, Kara-Murzam, Bense (Sahak Movsisyan, St. Lisitsyan and others). About 50 folklorists delivered materials to the “Ethnographic Journal”. The journal published both rich ethnographic and folklore materials, as well as theoretical papers, archaeological studies, anthropological studies, and so on.

In this regard, it became important to publish “the Ethnographical Journal” in the direction of facilitating E. Lalayan's works. With the purpose of publication of books and maps, opening of museums and libraries, printing houses and bookstores, the study of the the Caucasus and the Armenian settlements from the viewpoint of ethnography and anthropology, making of excavations, organizing of lectures, unfolding of enlightenment and public activities, he first of all founded “The Armenian Publishing Company (1900) and then the "Armenian Ethnographic Company" (1906). E Lalayan's publishing and translating activities have been also studied, thanks to which the "Ethnographic Journal" has become a unique encyclopedia of the Armenian life.

Reference was made to the complex and comprehensive research of the historical-ethnographic regions of Armenia, to E. Lalayan’s method which resulted in the creation of the following works of the scientist: "Javakhk", "Varanda", "Gandzak Povince", "Borchalu Province", "Vayots Dzor", "Zangezur", "New Bayazet Province", "Nakhichevan Province", "Vaspurakan", "Mush-Taron" and others.

The survey of each ethnographic region E. Lalayan starts with a brief historical overview, then he presents the topography, characteristics of the given area, prominent cities and villages, historical and architectural monuments, the population composition and displacement.

Along with the economic activities, he also presents the image of spiritual-cultural life. He covers the family morals and rituals, holidays and beliefs in more detail. E. Lalayan's scientific heritage,

in particular, the materials and researches dedicated to the historical ethnographic regions of Armenia, have preserved their topicality and scientific freshness up to this day.

The book provides a separate section on the studies of ethnographic, scientific-organizational, educational institutions and museums of the prominent Armenian ethnographers of the Soviet era.

What has been previously done upon the initiative and efforts of individuals and ethnographic, provincial and similar companies due to the lack of independent statehood, in this period began to be implemented through the consistent planned activities of the relevant institutions and higher schools. Despite some ideological obligations, the achievements of the Armenian ethnographic science during the Soviet years were very notable.

The first study of this section is devoted to the development of the Armenian ethnographic science in the Soviet period of 1920-1940. It records the achievements of ethnographic science in the Soviet Armenia under the conditions of the difficult economic situation of the country and the shortage of the personnel due to the impeccable work of the previous generation.

In this period the contribution of the famous ethnographer E. Lalayan is also unforgettable. Researches also continued in the Soviet period by the principle of historical ethnographical transition elaborated by him. In 1920, he studied the Kotayk region ethnographically, topographically and archeologically, he took charge of the creation of the Museum of New History, especially the Department of Ethnography, published the articles entitled “Nizh and Vardashen from Enthnographical Viewpoint, "Development of Tghaberk Habits among the Armenians", "The Development of Funerals and Cemetries in Armenia", as well as the Monography “Dambas Excavations in the Soviet Armenia ".

The history of the creation of scientific institutions is sufficiently presented. The creation of a Mother museum was one of achievements of 1920-1930, then it was the creation of other independent museums on its basis, which launched the processes for

acquiring museum values, organizing exhibitions, and conducting research activities.

The next was the foundation of the first scientific institution, i.e. the Institute of Science and Art of Armenia in Echmiadzin, which was changed into the Institute of History of Armenian Culture in 1931 and then into the Institute of History and Literature in 1934-1939. The Caucasus Historical-Archaeological Institute in Tiflis played an important role in the middle of the 1920s, where S. Lisitsyan, L. Melikset-Beck worked. The Academy of Sciences of Armenia was founded in 1943. The Yerevan State University has played a significant role in the development of ethnographic science and the preparation of specialists.

Then an attempt has been made to properly present Kh. Samuelian's activites (1873-1940). His three-volume work "The Culture of Ancient Armenia" has not lost its scientific value even today. He has also played a major role in the study of the history of law and folklore. He has also been a skilled organizer of archives work. He was the head of the State Central Archives in 1924-1934.

Next is the coverage of Stepan Lisitsyan's (1865-1947) ethnographic activities. He was presented as the founder of the Soviet Armenian ethnography. The three directions of his activities are the following: a) the collection of ethnographic materials, b) scientific research, c) scientific-organizational. He was the first to describe in detail the main type of dwellings in the rural areas of Armenia, i.e. the "headquarters", "its architectural composition", notable is "Shatakh Historical and Ethnographic Sketches", "Brother Unions", "Sanctuaries in the Mountains", "Zangezur Armenians", "The Armenians of Nagorno Karabakh", "Eseys on the Ethnography of Pre-Revolutionary Armenia", "The Armenian Ethnography for 15 Years"and other studies.

We are obliged to him for the createaion of the third "Ethnographic Questionnaire" operating up to now.

His services are invaluable in the sphere of unfolding of work of the State History Museum of Armenia, in enriching funds and in

organizing exhibitions. He was the founder and tireless developer of the ethnographic museum business in the Soviet Armenia.

During his scientific expeditions organized by him around the country approximately 1000 exhibits have been collected, especially valuable are the collections related to Shatakh, Moks and Sasun. The ethnographers prepared by him, i.e. V. Bdoyan, D. Vardumyan, K. Melik-Pashayan, E. Karapetyan, A. Odabashyan and others became the core of the Institute of Archeology and Ethnography.

The book also covers the ethnographic activities of M.Abeghyan, H. Orbeli, E. Shahaziz, Gr. Ghapantsyan, G. Chursin, L. Melikset-Beck, K. Melik-Ohanyan and others. Due to their knowledge and experience of many years they have undertaken effective collecting and research work, having some contribution to the development of the Soviet Armenian ethnography.

The second study of this section is entitled "Main directions of the development of ethnographic science of Armenia and research institutions" (1950s-1980s). Here, attention is paid to the positive results of contacts of the young specialists replacing the generation of the 1950s-1980s with the USSR ethnographic institutions, the preparation of specialists in the united ethnographic institutions, the elaboration of new concepts in scientific researches, and the issues of implementation of new methods of the study of both traditional and modern life and culture.

The following is presented here: information on the activities within the ethnograohic group at the Institute of History of the Academy of Sciences of the Armenian SSR in 1953, in the same system independently at the Institute of Archeology and Ethnography and the Institute of Ethnography and Folklore (being its part) in 1959, based on the formation of ethno-sociology departments in 1981, the boosting activities unfolded by them, the preparation of specialists, implementation of research works, the organization of expeditions in the Armenian-populated areas in the republic and in the adjacent regions abroad, the collection of ethnographic and folklore materials, the creation of "Armenian Ethnography and Folklore" work and others.

The study also includes considerable information on the State Museum of History of Armenia, the State Museum of Ethnography and National Liberation Struggle of Armenia, the Unit of Archeology, Ethnography and Source Studies in the system of the Faculty of History of the Yerevan State University, then on its basis the creation of the Chair of Archeology and Ethnography, the preparation of specialists, the unfolding of activities on scientific researches and field folklore.

The activities of separate spheres of Armenian ethnography are subjected to complex examination in the 1950s-1980s. V. Bdoyan has conducted fundamental researches on the agricultural culture, Yu. Mkrtumyan has conducted researches on cattle-breeding culture, A. Petrosyan - on silkworm breeding, one of the auxiliary economic forms, A. Gasparyan – on bee-keeping, V. Abrahamyan, B. Arakelyan, K. Seghbosyan, E. Sargsyan and others - on the trades and craftsmanship.

People's transport means are one of the most important areas of the industrial culture, which are based on the archaeological materials of B. Piotrovsky, S. Yesayan, H. Mnatsakanyan. L. Petrosyan commented on ethnological materials. R. Vardanyan researched the Armenian size and weight system.

The settlement and the dwelling is one of the most important areas of the livelihood culture. The book presents the results of the ethnological and architectural studies of these systems, in particular, the resesarches of architects R. Aghababyan, S. Vardanyan, E. Hakobyan, N. Papukhian, S. Matevosyan, H. Khalpakhchyan, as well as the researches of ethnographers S. Lisitsyan, V. Bdoyan, D. Vardumyan, Chikovani, M. Ilyina, V. Vitov, V. Kobichev, E. Melkumyan, Yu. Mkrtumyan, H. Mkrtumyan. It has been recorded, however, that no comprehensive final study of the settlement and dwelling has been carried out up to now.

The same can be said about the complex of meals, with the exception of the studies of S. Harutyunov, Yu. Mkrtumyan and others which found their place in the collection "Life Sustenance Culture and Ethnos " published on the basis of the bibliographical material of V. Hatsuni and published in 1983. If the ethnographic

studies on the settlement and dwelling and meals are insufficient, the researches on the folk costumes and the clothes are sufficient in the person of V. Hatsuni, N. Avagyan, A. Patrick and a number of other authors.

The studies of the following authors on social normative culture have been also analyzed in the book: M. Kosven, E. Karapetyan, D. Vardumyan, V. Bdoyan, A. Ter-Sargsiants, Z. Kharatyan, S. Hovhannisyan. They are dedicated to family, marriage and wedding, as well as the kinship system. Hangovers of the Institute of Adult Classes are also a separate group of questions. V. Vardanyan, V. Bdoyan, Kh. Porksheyan and others spoke about them. Special attention was paid to the issue of the study of the Armenian rural community, which was covered by S. Yeghiazaryan, L. Khachikyan, S. Hakobyan, M. Hakobyan, R. Nahapetyan and others.

Separate spheres of the Armenian spiritual-humanitarian culture have also been subjected to comprehensive study, i.e. beliefs, cult manifestations, folk holidays, applied arts have also been thoroughly examined in the remarkable works of the following authors: K. Melik-Pashayan ("Anahit Goddess Worship"), A. Odabashyan ("New Year in the Armenian People's Calendar", "Folk Faiths of Armenians"), L. Abrahamyan ("Primitive Holidays and Mythology"), Z. Kharatyan ("The Worship Motifs of the Family Customs and Rituals of the Armenians"), G. Vardumyan ("The Pre-christian Worships of Armenians"); V. Bdoyan ("Armenian Folk Games"), K. Atoyan ("Military-Sport Fights in Armenia"), S. Lisitsyan ("The Ancient Dances and Theatrical Performances of the Armenian People"), Zh, Khachatryan ("Armenian Folk Dances of Javakhk"), E. Petrosyan and Zh. Khachatryan ("Armenian Folk Dance") E. Petrosyan ("Theatrical Features in the Medieval Armenian Miniatures"), V. Temurchyan ("Carpet Weaving in Armenia"), M. Ghazaryan ("The Armenian Carpet"), V. Bdoyan ("Armenian Salt Cellars: Female Salt Cellars Symbolizing Anahit Goddess"), S. Davtyan ("Armenian Lace", "Armenian Needlework", "Episodes of the Armenian Medieval Applied Arts History"), A. Patrick ("Urfa Needlework "), A. Gevorgyan ("Crafts and Life in

Armenian Miniature), B. Arakelyan ("Cues of the History of Art of Ancient Armenia"), H. Azatyan ("Wood Art Carving").

The book outlines, in general, the studies on separate historical-ethnographic areas of the 1950s-1980s, the most important of which are the studes of the following authors: D. Vardumyan ("The New Life of the Lori people"), V. Petoyan ("Sasun Ethnography"), E. Karapetyan ("Sasun: Ethnographic Materials"), V. Temurchyan ("The Armenians of Gamirq"), G. Halajyan ("The Ethnography of the Armenians of Dersim"), B. Torlakian ("The Ethnography of the Hamshen Armenians"), S. Avagyan ("The Ethnography and Folklore of Archak"), V. Bdoyan ("Armenian Ethnography and Folklore of Javakhk").

For the first time, in essence, the book included information on the ethnographic and folklore activities of the Armenian deserved ethnographers and tireless scholars Hovsep Orbeli (on the occasion of his 130th anniversary) and Vard Bdoyan (on the occasion of his 100th anniversary).

The studies on the history of the Armenian ethnography, the ethnography of the Kurds, Russians and Greeks living in Armenia were also worthy of attention. The author specifically emphasized that the ethnographic achievements at this stage would have been more significant if there was no ideological obstacle that hindered, on the one hand, the full use of the heritage of the past and the professional mutual relations with the foreign partners, on the other hand, the consideration of the world-spread Armenians as an ethnic integral and their historical-ethnographic study, the task was not put to conduct the comprehensive field studies, by recording materials on all the topics.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀ – Ազգագրական հանդես

ԱՀՊՊԹ – Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի

ԲՎՊ – Բազմավէպ

ԴԱՆ – Դաշտային ազգագրական նյութեր

ԷԱԺ – Էմինյան ազգագրական ժողովածու

ԿՊՀԻ – Կովկասի պատմահնագիտական ինստիտուտ

ՀԱ – Հանդէս ամսօրեայ

ՀԱԲ – Հայ ազգագրություն և բանահյուսություն

ՀԱԻ – Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀԱԱՊՊԹ – Հայաստանի ազգագրության, ազգային-ազգագրական պայքարի պետական թանգարան

ՀԱՊԹ – Հայաստանի ազգագրության պետական թանգարան

ՀԳԱԻ – ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտ

ՀԳՄ – Հայ գրողների միություն

ՀՀ ԳԱԱ – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա

ՀՊՄՀ – Հայաստանի պետական մանկավարժական համալսարան

ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես

АЭФ – Армянская этнография и фольклор. Материалы и исследования, Ереван

ИКИАИ – Известия Кавказского историко-археологоческого института

ИФЖ – Историко-филологический журнал

ПИИЭ – Полевие исследования института этнографии

КЭС – Кавказский этнографический сборник, Москва

СЭ – Советская этнография, Москва

СМОМПК – Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԺԻՆ I

ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՅ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

«Պատմա-բանասիրական հանդես», 2011, 3 (188), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, էջ 132-148:

2. ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԸ (XVIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ - 1850-1860-ԱԿԱՆ ԹԹ.)

«Պատմություն և հասարակագիտություն», Տարեգիրք № 1 (Գիտական հոդվածների ժողովածու), Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետ, Երևան, 2015, էջ 121-143:

3. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ՝ ԱԶԳԱԳՐԱԳԵՏ

Աբովյանագիտական հոդվածների հատընտիր ժողովածու, Երևան, «Արտագերս» հրատ., 2007, էջ 123-130:

4. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

«Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Հունվար (Ա), 2007, էջ 88-94:

5. ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԵԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԾԵՍԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ VIII, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Գյումրի, 2005, էջ 53-59:

6. Խ. ԱԲՈՎՅԱՆԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՂ

«Աբովյանագիտական» 5, Խ. Աբովյանի տուն թանգարան, Հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 111-119:

7. **Խ. ԱԲՈՎՅԱՆԸ՝ ՔՐԴԵՐԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՂ**

«Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2011, Ա, էջ 76-90:

8. **ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԺԹ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ (ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆ, ՄԻՆԱՍ ԲԺՇԿՅԱՆ)**

«Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2016, Գ, էջ 85-104:

9. **ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀԱՎԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

«Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Հոկտեմբեր (Ժ), 2007, էջ 110-123:

10. **ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

«Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, ԵՊՀ հրատ., 2016, 1(13), էջ 116-138:

11. **ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ ԵՎ «ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԴԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**
(«Ազգագրական հանդեսի» 120-ամյակի առթիվ)

«Պատմութիւն և մշակոյթ», Հայագիտական հանդես, ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական հոդվածների ժողովածու, 2016, էջ 373-385:

12. **Ե. ԼԱԼԱՅԱՆԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՂ**

«ԱԿՈՒՆՔ», Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (18), Երևան, 2018, ԵՊՀ հրատ., էջ 5-19, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ:

ԲԱԺԻՆ II

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԻ ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920-1940-ԱԿԱՆ ԹԹ.)**

   «ԱԿՈՒՆՔ», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, թիվ 2, (16), Երևան, 2017, էջ 5-28:

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1950-1980-ական թթ.)**

   «Պատմաբանասիրական հանդես», № 3 (206), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, էջ 111-134:

3. **ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ԱԲԳԱՐԻ ՕՐԲԵԼԻ (Երախտավոր հայորդու ծննդյան 130-ամյակի առթիվ)**

   «Մաշտոց», Հասարակական կրթամշակութային, հայագիտական հանդես, № 5, թիվ 67, 2017, էջ Ծ-Կ:

4. **ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ**

   «Արագածի թիկունքում», հնագիտական հետազոտություններ՝ նվիրված Տելեմակ Խաչատրյան հիշատակին, ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., Երևան, 2018, էջ 281-294:

5. **ԱՆԽՈՆՋ ԱԶԳԱԳՐԱԳԵՏՆ ՈՒ ԲԱՆԱՀԱՎԱՔԸ (Վարդ Բդոյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)**

   «Երևանի համալսարան», գիտահանրամատչելի հանդես, թիվ 1 (39), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1981, էջ 23-26:

6. **ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ (Վարդ Բդոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)**

   «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2010, Ժ, էջ 58-69:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԲԱԺԻՆ I

ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5

ա) XVIII դարի երկրորդ կես - 1850-1860-ական թթ.՝ սեփական նախաձեռնությամբ, առանց համալիր ծրագիր-հարցարանների դաշտային ազգագրական նյութեր գրառելու շրջափուլ

1. Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը 6
2. Հայ ազգագրական գիտության ձևավորման առաջին պարբերաշրջանը (XVIII դ. երկրորդ կես - 1850-1860-ական թթ.) 28
3. Խաչատուր Աբովյանը՝ ազգագրագետ 50
4. Խաչատուր Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ 60
5. Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում 71
6. Խ. Աբովյանը՝ հայ ազգաբանական գիտության սկզբնավորող 83
7. Խ. Աբովյանը՝ քրդերի ազգագրության հետազոտող 92
8. Վենետիկի Մխիթարյանների դերը հայ ազգագրության ձևավորման գործում ԺԹ դարի առաջին կեսին (Ղուկաս Ինճիճյան, Մինաս Բժշկյան) 113

բ) 1870-1880-ական թվականները՝ մասնագիտական ծրագիր հարցարանների հանդես գալու, ազգագրությունը սիրողականից գիտական հիմքերի վրա դնելու շրջափուլ (Գ. Սրվանձտյանց, Գ. Խալաթյանց և նրանց հետևորդները)

1. Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը 136
2. Հայ ազգագրությունը XIX դարի 70-80-ական թվականներին. 157

գ) 1890-ական թվականներից մինչև XX դարի սկզբները՝ հայ ազգագրությունն իբրև ուրույն գիտական ոլորտի

վերջնական կայացման շրջափուլ (Ե. Լալայան և այլք)
1. Երվանդ Լալայանի և «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում («Ազգագրական հանդեսի» 120-ամյակի առթիվ) 192
2. Ե. Լալայանը՝ հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող .. 214

ԲԱԺԻՆ II

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԻ ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 235
1. Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջանում (1920-1940-ական թթ.) 236
2. Հայաստանի ազգագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունները և գիտահետազոտական հաստատությունները (1950-1980-ական թթ.) 275
3. Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի (Երախտավոր հայորդու ծննդյան 130-ամյակի առթիվ) 306
4. Ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գիտական և գիտակազմակերպչական գործունեության էջերից 312
5. Անխոնջ ազգագրագետն ու բանահավաքը (Վարդ Բդոյանի ծննդյան 70-ամյակի առթիվ) 336
6. Հայ ազգագրության և բանագիտության մեծ երախտավորը (Վարդ Բդոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ) 341

ՎԵՐՋԱԲԱՆ 360

CONCLUSION 379

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 397

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 398

ՌԱՖԻԿ ԱՍՔԱՆԱԶԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – 2

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(XVIII դ. երկրորդ կես - 1980-ական թթ.)

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Պողոսյանի, Կ. Զալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Նար-Դոս 1 նրբ., 16 տուն

Ստորագրված է տպագրության՝ 10.12.2019:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 25.25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019
publishing.ysu.am